BSB Bayerische StaatsBibliothek
MDZ Münchener DigitalisierungsZentrum Digitale Bibliothek

Ališan, Ġewond

Yowšikk' hayreneac hayoc'

Bd.: 1

Venedig 1869
A.or. 1974 n-1
urn:nbn:de:bvb:12-bsb10249928-8

10249926

[redacted] 2.

1974 n (1

Alisham

10249926

Alishan Abbé Ghuk. Sn

...Mkhitarean...

# ՅՈՒՇԻԿՔ

## ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ


Ի Հ. ՂԵՒՈՆԴԷ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

---

ՀԱՏՈՐ Ա.

---



Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ

—

1869

10249926

# ՅՈՒՇԻԿՔ

## ՀԱՑՐԵՆԵԱՑ ՀԱՑՈՑ

10249926

10249926

# ՅՈՒՇԻԿՔ

# ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

Ի Հ. ՊԵԽՈՆԴՔ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

---

ՀԱՏՈՐ Ա.

---



Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՑ

—

1869



10249926

10249920



ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԼԵՐԻՆՔ ԵՒ ԳԱՒԱՌ

10249926

# ՅՈՒՇԻԿՔ

# ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

---

## Ա.

## ՆԱԽԱԲԱՆ

### Ա ՈՒ ՀԱՅԿԱԿ

*Հայրենի՛ք... Այն քիչ անուններէն մէկն է այս՝ զոր գրեթէ ամօթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը, թէ և չըլլայ շատոնց կամ քանի՛ քառն. գրեթէ մոռքէն առաջ սկրան կու հասնի, կ՚ըմբռնէ, կ՚իմանայ զայթ. կ՚իմանայ զոյն նաև երբ չկրնար քիչ բառով կամ իսկքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական և բարոյական առումներ՝ աստ իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան:*

*Արարածց մէջ՝ որոնց հետ կ՚ապրի՝ մարդուս առնէն յատուկ միանգամայն և ամենէ ձիրքն է միտք կամ բանականութիւն. որ կ՚ուզէ ըմբռնել, ճանչնալ, գտնել. իր ծանօթութեանց գլխաւոր առարկայն այլ է նախ ինքն և իր նմանները. — մարդկութիւնը: Եւ ինչպէս շատով մը կ՚իմանայ որ ինքն իբրև մարդ ամեն մարդու հաւասարակից է, բայց ամենքն այլ իրմէ զատ զատ մարդիկ են, այս*

10249926



պէս այլ շատ մը կու ձանչնայ կ'ընտրէ կ'որոշէ անոնցմէ բազմութիւն մը մարդկան՝ որք նման են իրեն այն ամէն բաներով՝ որով որ ուրիշներու չեն նմանիր: Եւ սա կու ձանչնայ զազգս. և այնոնց մէջ իր համազգին. և երկրին բնակութեան վըրայ ատոր բնած տեղն այլ՝ Հայրենիք: Բնական է մարդուս փնտռել և սիրել զՀայրենիս:

Ո՞ւր է հայրենիքն: Կայ ազգ որ՝ի սկզբանէ պատմական ժամանակաց՝ երկրիս նոյն կողմը ձիացեր կեցեր է. այսինքն իր հարքն և նախահաւքն որդիէ որդի միշտ նոյն երկրին վրայ ծներ աներ մեռեր են. անոնց ձեռագործ յիշատակաց մէջ և մատենից նշխարացը քով կու բնակին մինչև ցայսօր իրենց վերջին ծնունդքն այլ. – կան այ՝ որ ուրիշ տեղ ծներ են, և հիմայ ուրիշ տեղ կ'ապրին, և գուցէ ուրիշ տեղ մ'այլ պիտի մեռնին. իրենց որբանքն և գերեզմանքն հեռաւոր լերանց և դաշտաց վրայ ձգուած են, որոց միջոց՝ ուրիշ ազգաց աւելի իրարու մօտիկ որորոցք և գերեզմանք կան. նման մեր Եփրատ գետոյն՝ որ Սեւ ծովէն հազիւ տասիձան մը հեռու Բարձր Հայոց պոպաթինէրէն կու բղխէ, դէպ յարևմուտք և հարաւ վազելով՝ գրեթէ նոյնչափ կու մօտենայ Միջերկրական ծովուն Հայոց ծոցը, և դարձեալ անկից այլ ձամբան փոխելով՝ դէպ յարևելս հարաւախառն՝ կ'երթայ կու Թափի՝ ի հեռաւոր ծոցն Պարսից՝ ի ծով Հնդկաց: Գուցէ այսպիսի ազգաց դժար ըլլայ հայրենիքը ձշդելը:

Սակայն մի՛ կայ՝ որ որչափ այլ պանդուխտ տարտագիր և Թափառական ըլլայ՝ ջունեցայ իր սկզբանը հաստատուն կէտ մը: Երկրիս ծայրէն՝ի ծայրը սեղափոխիկ օդաչու և ծովագնաց Թըռչուն անգամ, տրտագիրն և կառունկ և ծիծառունք և տագք, ունեցեր են տեղիկ մը բոյնիկ մը, Թէ աշատարակի մը ծայր, Թէ էրդիքի մէկ խորշը, Թէ

պատի մը ձիւղէն մէջ, թէ բարձրացած ծառոյ մը պագաթ, և թէ վազուկ կամ անշարժ ջրի մը ե-
զերք. այն է իրենց հայրենիքն. ուր՝ յետ աշխատու-
հաշխիկ և օգտակարիկ տարագնացութենանց՝ կու
գառնան նորածին ընտանեօք, և իրենց սիրուժելի
եղանակին մէջ երկրորդ անգամ ուրախ կեանք մը
կ'անցընեն: Մարդս ալ՝ որ չկրնար իր կենաց
վերջին կէտը, ուր գագրիլն և ուր ընկնալն, գիտէ
գոնէ իր ակզբնաւորութիւնը: Կան որք գժբաղ-
գաբար ծնողք ձանչցած չըլլան, բայց կու ձանչ-
նան ծննելական տեղը, քաղաքը, գեղը. այն է ի-
րենց հայրենիքը, և անոր հետ՝ նոյն օրէնքով վա-
րուած տեղուանքն, եթէ ընդարձակ և եթէ ոչ:
Կան, ո՛ւ խեղճութիւն մարդկութեան, կան որ
չեն իմացեր չեն զգացեր ի՞նչ է ծնողի մը ծոց, համ-
բոյր և գգուանք, չեն անուծ անոր կաթով՝ որով
արեամբն ծնած են, չեն ձաշակած մօր մը քաղ-
ցրութիւն. եղբայր մը իրենց չեղքէն չէ բռնած,
և քոյր մը զիրենք չէ գրկած. սակայն և այնպիսիք
ձանչցած և զգացած են զանր և զքաղցրութիւն
հայրենեաց՝ ոլ համատարած և անխիչաչար ծնողաց
պէս ի՛ընդունի կու գգուէ ամեն համազգի և համա-
լեզու: Տեսեր եմ իրեն ծագման անծանօթ երի-
տասարդն այլ՝ որ իրեն փառք և հաճոյք կու սե-
պէր պաշտպանել և մեռնիլ իսկ պաշտպանելով
այն երկիրը՝ ուր ծներ ուր սներ էր, և ուր իրեն
լեզուակից և կրօնակից նմանեաց հետ ի՛ապրէր:

Ո՛հ, ի՞նչպէս քաղցր եղած է անոր դարձը՝ յետ
բազմամեայ պինուորութեան, հետի և տարբեր
քաղաքաց և բերդից մէջ, և երբեմն յետ օտար
աշխարհներ այլ մնալու բանակաց և պատերազ-
մաց մէջ, յետ զանազան դիպուածներէ և վը-
տանգներէ անցնելու. — կամ անոր՝ որ աւելի խա-
զաղական բազդի հանդիպելով՝ կամ ուսմանց կամ
վաճառաշահութեան կամ ծառայութեան պատ-

10249926



Ջատաս, կ'ելլայ հեռաւոր աշխարհներ և քա-
ղաքներ, զանազան սովորութիւններ, բարքեր, լե-
զուներ կու տեսնէ և կու տառնայ, և թէ այսպի-
սի թէ նախնական շահերու ծրարները կու բեր
այն քաղքին կամ գեղին մէջ՝ ուր իր կենաց ամե-
նէն առջի տարիները և դիպուածները անցած են։
Ի՛նչ սքանչելի կ'երևին այն քաղքին այն գեղին
հին և մեծ շէնքերը. իր զուարճութեան դաշտե-
րը և բլուրները. իր խաղողց և իր փոքրիկ հասա-
կակցաց ընկերութեան տեղւանքը. այն արբա-
զան և հասարակաց ժողովարանները՝ ուր իր ծա-
նօթից և ընկերաց հետ կ'ելլար՝ եկեղեցւոյ կամ
քաղաքային ոճն մը, հանդէս մը, պարտք մը կա-
տարելու, և զուարճութեամբ ու մխիթարու-
թեամբ դառնալու։ Ի՛նչ ծանրագին շէնք է այն
շէնքը, այն տունը՝ ուր անոր ու մեծցեր էր, և
մանաւանդ այն՝ ուր որ ծներ էր։... Ո՛հ, աշ-
խարհիս մէջ անկէ ցանկալի անկիւն կրնայ բլլալ.
— ևս առաւել՝ եթէ ճանչցած այլ բլլայ հոն իրեն
ծնողք և հարազատներ. — և ևս առաւել՝ եթէ
դեռ յոյս ունենայ զանոնք նորէն տեսնելու. —
հապա թէ և դեռ տունը չգտած՝ գոնէ այն հա-
րազատները, այն ծնողքը՝ որ երբ զինքը դիմա-
տրելու եկեր են, և իբրև զերար գրկերնուն վրայ
առած՝ կու բերեն իրենց ընտանեկան վառարա-
նին կամ տեղանին եզերքը։... Հոս միայն ընտանե-
կան և խնամեկան քաղցրութիւն մը կէ. հայրե-
նեաց զգացումն և սէրը այլ կայ հոս, որ գրեթէ
ոչ պակաս զգալի և ախորժ կ'ըլլայ՝ նաև եթէ
կենդանի յիշատակաց տէր՝ միայն անկենդան յի-
շատակարաններ գտնէր. մանաւանդ եթէ անոնց
մէջ ըլլայ և այն յիշատակարանը՝ որ միջոց մ'է
կենաց և մահու և անմահութեան. — Գերեզման
մը։ — Անշուշտ, եթէ կորսուած կամ պահուած
ըլլայ, բայց և կարելի ըլլայ տղմկով գտնելու և

գնելու, բարեկիրթ սիրտն՝ ի պանդխտութենէ դարձած՝ ստացուածքին կէսն այլ կու տար ստանալու համար սիրելւոյն և ընտանւոյն գերեզմանը:... Կրնա՞ր արդեօք այնպէս անկիրք անկրօնք կարծրակուռ սիրտ մը գտուիլ՝ որ ըսէ. Ի՞նչ կ'ընես, ծվ երիտասարդ, մինչդեռ քաղդ աշխարհիս իր զարմանալեաց և ակնկալեաց դուռը կու բանայ քեզի, դու այդ քաղդին օժանդակ ստակդ այդպէս զուր կու վատնես, երկու կանդուն կոշտ հող մը, և քանի մը չոր ու պժգալի ոսկորներ գնելու, որոց վրայ չնկրնար մէկն նայիլ առանց զզուանաց:... Ալօթենք, Հայկակ, որ այդպիսի ձայն մը քու և նմանեացդ ակընկլին երբեք չհասնի: — Եղած անցած մարդկութեան ամենէն խըզճալի թօղած յիշատակին և նշխարն՝ արդարև իր մարմնոյն մնացորդն է. ստակն և քան զայն անպին, ցանկալի և արքայական բան չկայ երկրիս վրայ՝ այն մարմնոյն հալորդակից կամ արեանակից նեղկայ մարդու մը համար. և որչափ սիրելի են այն նշխարքն՝ այնքան և զանոնք պահօղ աեղն, հողավայրն, գերեզմանն. ըլլայ հոյակապ մահարձանօք հերիւմ մը, ըլլայ պարզ քար մը, կամ թէ բնաւ անքար տափակ հողն, քանի մը ծաղկով, կամ լուկ կանաչ խոտով պատած, և երկնքաւրինակ փայտով՝ ան ևս խաչով մը նշանուած: — Ծննդեան տեղն կամ անկն, և նախնեաց գերեզմանն՝ մարդուս երկու հաստիկ կէտերն են, որոց մէկուն վրայ պէտք է կեցընէ կարկինը՝ այն սիրան՝ որ կ'ուզէ ծրագրել սահման մը իրեն հայրենեացը, եթէ չիգիտեր ուրիշ սահման:

Կեանքերնիս արդարև կարճ ընթացք մ'է երկու կնաւ իջևանատանց միջոց. առջինն՝ օրոց, երկրորդն հողոց. կամ թէ կրնայ ըսուիլ՝ ծնարան և գնացան: Սակայն մարդ միթէ միայն ծնանելնե և մեռնելու համար եկած է յաշխարհ: — Ոչ. մարդս

10249926



խոհուն և գործուն էակ է. Թէ և քիչ բան կըր-
նայ ընել և քիչ միջոցի մէջ, միևնոյն մը ըն-
թանալու չափ. – բայց այդ միջոցն, այդ ընթաց-
քըն, և մանաւանդ այդ գործքն է զՏայրենիս բո-
վանդակող: Եթէ գործն չըլլար՝ ոչ ծննդեան և ոչ
մահու յիշատակք այնպէս սիրելի և արտալի կ'ըլ-
լային մարդկան. կամ ըրած գործքերնուն կամ
յոռետգուած ընելի գործոցն համար է՝ որ այն-
պէս սիրելի և ցանկալի են մեզ յիշատակք և գե-
րեզմանք հանգուցելոց: Ուրեմն Թէ և Տայրե-
նեաց կէտք և կենդրոնք կ'երևին այդ ծնարանքն և
քնարանքն, սակայն անոնցմով կ'ենթադրուի գոր-
ծոց յիշատակն, որ է բարոյական կեանք և մար-
դոս և ազգի, որով և Տայրենեաց խակ: Ուրեմն
աւելի կերպով մը Տոն են Տայրենիք՝ ուր որ մեր
արեւնակից և լեզուակից գործեր են. եթէ
ծննդեան և մահուան՝ դիպուածական և կերպով
մ'ակամայ յիշատակարանք խակ այնքան սիրելի
կ'ըլլան, որքան աւելի քննելի և փնտուելի են կե-
նաց յիշատակարանք՝ ուր ալ որ գործուած ըլ-
լան, եթէ 'ի սեփական և եթէ յօտար երկրի:
Վան զի կրնայ ըլլալ որ մէկն քաղքի մը մէջ
ծնած և մէկէն փոխադրուած ըլլայ ուրիշ տեղ
մը, Տոն ապրած և գործած. յետոյ ուրիշ քա-
ղաք մ'երթալով՝ Տոն այլ մեռած. այսպէս այլ
կրնան պատմել ժողովուրդք՝ որ երկրէ մը ծագեր
են, հինայ ուրիշ երկրի մէջ կոչ բնակին. բայց
երեսից և երեսից նահապետաց միջին սերունդքն
այլ շատ երկայն տաեն՝ ուրիշ երկիր մը բնակած
ըլլան. այս միջին երկիրս կրնայ աւելի իրաւամբք
մ'երեսից Տայրենիք ըսուիլ, կամ ինչպէս սովորու-
թիւն է տասնկ տարիէց մէջ անուանել՝ էնիւոէ
Տայրենիք: Սոյպ է որ ուր երկրորդ և երրորդ
Տայրենիք ըլլան՝ կրնայ սիրոն տարակուսիլ և
տարուբերիլ. սակայն և այն տաեն Տոն կոչ Տանդ-
չի՝ ուր որ աւելի գործոց յիշատակ գտնէ:

10249926



Ո՛րչափ փափագելի, որչափ բարեբաստիկ և անունց վիճակն՝ որ մեկ աչքով կուռ սեռանեն իրենց իջևանին երկուռ հանգոյցնեըն ալ, ծնարանը և քնարանը, հանդերձ մկնցումն՝ որ կրնար ըսուիլ Գործարան: Ո՛րչափ բարեբաղդ է, կ՛ըսեմ, այն ազգն՝ որ 'ի սկզբանէ 'ի վեր իր համալեզուռ նախնեաց երկրին մեջն է կեցեր. անկէց դուրս սեղ չկրնար իր նահապետաց ծնարանը, և հոն կուռ սեռանէ անունց քնարանը. ինչպէս սատանային մարդը՝ որ բնակի այն տունը՝ ուր իր հարքն և պապքն այլ բնակեր են, և պատրաստէ իր մարմնոյն վերջին հանգստարանը հոն՝ ուր որ այն հայրերն և պապերն այլ կուռ հանգչին գարերով. ուր իրենց վայ հովանացեալ ծառոյն փոքրիկ սերմեց նման՝ որդիք զորդիս փոխանակելով՝ քանի մը կամ շատ ցեղեր իրարու եռանէ ընկեր մնացեր են: Կրնանք նախանձելի սեռել երկրիս վայ այդպիսի ազգի մը բաղդը, որ կուռ յայտնէ Թէ կամ օտար բունուռ Թիւններէ ազատ է մնացեր, կամ մանաւանդ՝ կրցեր է զինքը պաշտպանել անոնցմէ. իրեն նախնեաց աւանդը պահեր է անոնց նշխարացը քովհայրենեաց զգացումն ալէտք է որ շատ զօրաւոր ըլլայ այն ազգին վայ, ինչուռ որ աչքոնէն այլ կուռ սեռանէ անոնց յիշատակարանները, կուռ պատկեր անոնց չափած սապարիզին մէջ, կուռ գործէ հոն՝ ուր անոնք գործեցին.—իր կենդրոնն և սահմանքն յայտնի են. հայրենեաց սէրն սեռակ իմաստքն այլ սահմանին մէջ. փոխուած են մէկ գծով բոլորած սահմանի մէջ. գիծ մը՝ որ եռանկեան մը պէս կուռ միացընէ իր և իր նախնեաց ծնարանին, քնարանին և գործարանին կէտերը: Կրնայ այնպիսին չգիտնալ իր ազգաբանութիւնը, իր հարց կարգաւ յաջորդութիւնը. բայց գիտէ որ հազար տարիով այլ առաջ իր նախահայրն՝ այն երկրին մէջ բնակեր է. հոն է եղեր իր բոլոր ազգատոհմին նահապետն կամ ազ-

10249926



գատեան այլ. և ինչպէս չիմայ իր համազգի ընկերներն են՝ որ այդ գեաւինը կու մշակեն, այսպէս երկայն գարերով այլ առաջ՝ նոյն արիւն և նոյն լեզուն ունող ընկերակիցքն՝ նոյն հողէն նոյնպէս իրենց անուանդ կու հանեն և՝ ի նոյն հող կու դառնան եղեր. – գիտէ որ այն մեծամեծ ծառերն՝ որոնց տակ քանի մը հատակ գիրար յաջորդելով նստեր են, իրեն նախահարց տնկածներն են, որոնք նոյնպէս իրենց նախնեաց հինաւուրց ձեռամբնկոց տակ խոպեր և հանգչեր են. – այն ապառաժ լեռներն՝ իրենց կողերէն ընծայեր են իր քաղքին և աշխարհին ամենէն հին շէնքերուն նիւթին, Թըն այլ, որոց ձարտարապետական ձևն և արձանագրութիւնք՝ դեռ իր հիմակուան ոճն և լեզուն կու յիշեցընեն. – այն հին կամուրջը՝ վայրենի ձորակի մը վրայ ձգուած՝ իր գեղին քանի մը երկնանիկ նահապետաց ձգածն է. – այն մեծամեծ և հաստարակաց կրօնիկ շէնքերն՝ իր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան յիշատակներն են. – այն բարձր և քանդակազարդ կամարքն և կոթողքն՝ իրեն նախնեաց քաջութեան ցուցակքն են և կարդացուին այլ ազգաց ալ. – այն գաշտերն՝ ուր երբեմն պատերազմաց դրօշք բարձրացան և երբեմն ընկան իրենց դրօշակրաց և առնոց եռանդն գացուցաց հետ, ուր երբեմն յաղթութեան թմբուկքն բոմբեցին, երբեմն յաղթուելու և ետք գաշտելու սրատակաւ փողն հնչեց, այն ամենն այլ իր նախնեաց թէ արեամբք թէ քրտամբք ոռոգուեր են: Եթէ խնամ չեն և եթէ լայ՝ անցեալ յիշատակաց համեմատ, խնամուն այլ՝ լացն այլ՝ ոչ միայն սիրով են, այլ և փառօք. վասն զի քաջութեամբ կուռնչին և պաշտպանելն աւելի արժանաւոր է՝ քան յաղթող գառնալն. միշտ փառք ու պարծանք է իր երկիրն և իր ազգը սեփական լեզուաւ և օրինօք պահելն. – ու-

նեննալ յատուկ և քնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն մը, ծէս մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել Ձերը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս ծր կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ:

## Բ

Այս վերջին անդրադարձ մտածութիւնս այլ ըրի, Հայկակ, յիշեցնելու համար մեծ ինդիր մը համ խնդաստ մը, որ կու զանազանէ զհայրենիս, որով և զհայրենասէրս, ըստ բնական դրից երկրին: Իրաւ է որ ով որ վերը յիշած յատկութեանց համար կրնայ ինքզինքն ըսել երկրին, անոր համար միշտ գեղեցիկ է հայրենիքն. սակայն երբ մէկն, մանաւանդ երբորդ անձ մը, երկու երկիր իրարու հետ բաղդատէ իբրև բնաշխին և բանաքնին, ՚ի հարկէ կերպ կերպ զանազանութիւններ կու գըտնէ անոնց մէջ, և ըստ այնմ անոնց բնակչաց բնաւորութիւնն այլ յարմարած. իրենց բնական կազմուածքէն սկսեալ մինչև ՚ի բարոյական բերմունս. և ըստ կերպարանաց ու հանգամանաց երկրին՝ անոր վրայ ունեցած սէրն կամ համարումն այլ կը կերպաւորուին: Ցայտնի է ամենուն թէ ինչ ազդեցութիւն ունին կլիմայք՝ տեղացեաց վրայ. ինչպէս՝ սառնիկ տաք կամ ցուրտ երկրի բնակիչք՝ տկար և ջլատեալ կ՚ըլլան. ինչպէս՝ բարեխառն կլիմայից բնակիչք՝ աւելի բարեկեցիկք, բարեբնոյթք և կիրթք. չափաւոր ցրտութեան տակ եղողք՝ աւելի ժիր կ՚ըլլան. չափաւոր տաքութեան տակ եղողքն այլ՝ աւելի վտարթ և ըզբօսասէր, ինչպէս Գաղղիացին. միջամած երկրի բնակիչք՝ իրենց վարուց վրայ այլ միջային քօղ

մը կ'երևցընեն, մեղմասղձ և ծանրաբարոյ կ'ըլլան, ինչպէս Անգլիացին և Հոլանտացին: Ախորժակ և գուցէ այլ աւելի, երկրին կազմուածքն և գիրքն ունին ոտքաւորութիւն՝ ի վերոյ բնակչացն: Թաթարստանի ծովանման չոր անապատաց բնակիչքն, և Եւրոպիոյ կամ Ամերիկոյ հարաւային կողմանց բարեբոյս դաշտաց բնակիչքն՝ հարկ է որ տարբեր բնաւորութիւն ունենան. մէկն միշտ գեանը փորելով հոն կենայ, մէկայլն անդադար լերկ ու մերկ երկրին վրայ սահելով անցնի կամ նման գայ իր հօտերով և երամակներով անոնց ճարակ գտնելու համար. մէկն անասուն և չինաւոր, մէկայլն անասուն և չինաւոր: — Չուկեղոյց լեռնաշատ և ձմեռնակեր զարմանց և հովատաց բնակիչն՝ ի հարկէ պէտք է զմայլի իր հայրենեաց բնական գեղեցկութեան վրայ, որ ամենէն տխուր եղանակի մէջ այլ իր շնորհքն ունի, ծրջապտ և աւելի լաւ եղանակին մէջ. զարմանք չէ ուրեմն որ երջ օտարութեան մէջ իր ապրելին երգը լսէ և հայրենեաց պատկերը իր վառվռուն գոյներովը նկարուի մտացն առջև, բոլոր արտով Թումպ եղնէ և գրեթէ հիւանդանայ և հալի հայրենեացը կարօտով: Յունաց և Իտալացւոց այնչափ գերազանցութեան՝ ի գեղարուեստս՝ առաջին վարպետ եղած է իրենց հայրենի երկրին բնութիւնն. բարեխառն կլիմային, գալար բուսաբերութիւնն, զանազանութիւն կամ եղևէջք գրեթէ, և ծովն. — ծո՛վն, այն ծեր և ակնապարդ մեծ վարժապետն՝ որ իր ահեղ ձայներէն աւելի՝ իր կերպ ու կերպ ափանց և ծոցից վրայ, շատ զարմանալի բաներ ազդած է և կ'ազդէ Յունի մը, Վենետկեցւոյ մը, Անգլիացւոյ մը, Բրետոնի մը, և ո՛ր և է ազգի՝ որոյ երկիրն բաղդատաբար եղերք է գոնէ իր եզերաց չափ. աւր մեռ մը մնահկաձև կամ ակնոնաձև տարա-

---

ծեալս՝ ի խալվ՝ ի կռիս կատուտակ կոհակներուն։ Ժողովուրդ մը որ ունի հրուանդաններ՝ դիտելու այն անապատ աչեաց զբօսանքը, և անոնց երեսէն հովով կամ հրով հրուած ելլոլ և գացող քալուկ տուները՝ (նաւերը) աշխարհէ աշխարհ հեռաւոր կողմերու լուրեր և բեռներ տարուբերելով, այնպիսի ժողովուրդ՝ չինչնար ապուշ մէկ մ՚ըլլալ։ Բայց եթէ ծուխն բոլորովին ծրագրելով զԱնգղիա՝ կու տայ անոր բնակչաց ծովասէրութեան պատիւն և գոռոզութիւն, կամ Յունաստանի կղզեաց մէջ կորտուելով՝ կու տայ անոր բնակչաց աշխոյժ և ժրութիւն, միանգամայն և պարծիլ մը իրենց ափանց վրայ. գեղեցիկ և հովանաւոր դաշտեր՝ սար բարձր բարձր և զով լեռներն այլ՝ կու տան իրենց բնակչաց ոչ պակաս զուարճութիւն և պարծանք։ Ինչուան ժայռոտ տեղերու բնակիչքն՝ այն քնութեան ամենէն անարուեստ կերպարանաց վրայ այլ կու գտնեն զարմանալի ձևեր և տեսքեր, որով կու զմայլին և կու պարծին իրենց հայրենեաց վրայ։... Բայց գուցէ չեն այլ կրնար ծածկել՝ այն ջոր ու խոժոռ արարածոց առթած կերպ մը ջոր տպաւորութիւնն այլ՝ որ իրենց բարուց և շարժմանց վրայ կ՚ազդուի։

Եթէ այսպիսի դիրք երկրի՝ զոր քնութիւնն միայն իր անզգայ ձեռքերով ձևացուցեր է, այսքան ազդեցութիւն ունին ազգաց բարուց և ըզգացման վրայ, ո՞րքան ևս առաւել զօրաւոր և զանազան կ՚ըլլան հայրենեաց ազդեցութիւնք՝ ի ժողովուրդս՝ որոց երկրին վրայ քնականին հետ ձեռագործ և պատմական յիշատակարանք այլ եւս ևս ցեղուցեղ։ Երբոր մէկն օրերով քալելով համապգեաց երկրի մը սահմանաց մէջ՝ առանձ լեռանց և ձորոց վրայ հնացեալ և երբեմն կիսաւեր բերդեր և դղեակներ, հաստատուր պարսպով քաղաքներ, հին և մեծ պալատներ, բանուկ ճամ-

բանել և կամուրջներ, մեծամեծ հասարակաց շէնքեր, փայլուն կամ մանուածապատ կամարներ, լուսնց տակ թատրոնացուն պէս հնացեալ պեղումներ, հանգերձ նոր և պայծառ շէնքերով, և ժամանակին զարգացման համեմատ օգտակար և շահաւէտ գործարանները, կրթարանները, ժողովարանները, հանդիսի և զբօսանաց տեղերը, քաղաքական և զինուորական հրապարակները, և այլն, և այլն. և այս ամենուն համար կարենայ ըսել թէ ՝ի համարիւն և համաչեզուս նախնեացս ձեռագործք են, որոց ոմանց վրայէն երկայն գարեր այլ անցեր են, և գուցէ հազարաւոր տարիներու յիշատակարանք այլ կան անոնց մէջ. ի՞նչ պէս սիրան կ'ուզէ կ'ընդլայնի, կու զարձրանայ, կու խաղայ և կու հանդչի ծոցին մէջ. ի՞նչ օրինաւոր պարծանօք և գրեթէ հպարտութեամբ մը կրնայ ըսել՝ թէ ատոնք իմ հայրենեացս են, ասկայ իմ հայրենիքս է. և թէ յանյիշատակ ժամանակաց հետէ միշտ մեր ազգն այս երկրին և այս շէնքերուս տակ բնակեր է. ասիկայ մեր հայրենական կալուածն է, զոր սեփական օրինօք և քաղաքավարութեամբ պահեր են նախնիքս իր հինաւհինգ մէջ, ՝ի միչի ուրիշ տահմանաց և ազգ։ գաց։ — Ո՛հ, արդարև ասիկայ կատարեալ և նահանջեալ հայրենիք է. ասիկայ ընդարձակ հասարակաց ննիկ տուն մ'է, որ ամեն համազգի մարդու մանաւանդ տուները իր մէջ կու գովանդակէ. ասիկայ ամեն կերպ զօրաւոր սէր և զմայլուածն կ'ազդէ բնակչին վրայ. այդ է որ զգացուցեր և ազգեր է այն ամենայն հրաշալի հայրենասիրութեան կրքերը, այն աշխատութիւնները, համբերութիւնները, քաջութիւնները, և ինչուան կեանքերնէն զոհերը, երբեմն միայնակ, երբեմն ընկերակցօք և երբեմն գովանդակ բանակներով. զոր հռչակեր են պատմիչք, քերդողք և Ճարտար ա-

*լուեսատուրք. և որոց վայ կու զարմանան ընթերցուլք և լսուլք՝ նաև յեա երկար դարուց անցնելու, և կու պարծին անոնց յետին համազգի Թուանց Թուումնքն այլ։... Աշխարհք չկրնալ այսուհետև մնալ 3000 տարուան Տրոյեյ առման գէպքը, և ոչ 2400 տարուան Սալամինայ և Թերմոպիլէի յիշատակները, որոց վրայ միշտ պիտի պարծի ուրչափ տեն որ գոյուի Յոյն մը։ Այսպիսի յիշատակք երկրաւոր յաւիտենականութիւն մ'են, ազգու և սիրուն։ Անոց նման քիչ շատ ուրիշ ազգեր այլ ունին երեսց սեփական և սիրուն յիշատակներ, որ երեսց աւետարանութեան հետ պիտի հնանան, և աւելի քան զգինի և զբաղեկամութիւն հնացեալ՝ հին ախորժ յիշատակքն զօրաւոր և քաղցր են մարդկան, և հատարակաց հաւասար վայելելի ամեն ժամանակ։... Ո՛հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի գրիչն, չկըրնար գոնէ կայծեր չցատքեցընել. պատմիչն յանկարծ վիպասան կ'ըլլայ, բանաստան՝ բանաստեղծ։ Հայրենեաց հրեղէն հոսանքէն չհալոյ սիրան՝ շատ ապառաժ շատ ապառաժ շատ այլանդակ և այլանդութ պիտի ըլլայ։... Վայ այդպիսի հրէշին. երկիր կու հալածէ զանիկայ, երկինք չկրնար ընդունիլ սիրտ մը՝ որ այնքան կարծր գոյուած ըլլայ երկրի վրայ. անհնար է որ հայրենատեաց մը և լոկ անհայրենատեր մը՝ առաքինի ըլլայ, թող թէ տուրբ։ Երկնից պատդամ է՝ թէ ընկերը չսիրողն՝ չկրնար զԱստուած սիրել. հապա քոյր ընկերները, նեղը բովանդակող հայրենիքը չսիրողն՝ ինչպէս սիրէ ամեն սիրոյ կենդրան և շուեմարան հանդերձեալ բնակարանն մաքուր հոգւոց։...

10249926



# Գ

Բայց բաւական պարտեցանք կարծեմ, Հայկակ, հայրենիք քննելու և սեանելու. գառնանք փլուտւելիք մեր սեփական հայրենիքն այլ: — Մինչ եւ կայ մեկ Հայ հայրենիք մ՚այլ. միթէ ջուրի Հայն իր Հայաստանը:... Ո՞ւր է այս հայրենիքս, ո՞ւր է այն աշխարհն:... Ի՞նչ դիւրին և ինչ գժար պատասխանել. ուրչափ քաղցր և ուրչափ գառն յիշատակք: Եթէ առաջին սեռութեամբ ամեն մարդու ծնած, սնած, ապրած սեղն իրեն հայրենիք սեպելիք, ուրչափ օտար և իրարմէ հեռու տեղուանք պիտի ըլլան Հայոց հայրենիքն: Եւրոպայի արևելեան եզերքներէն մինչև յովկիական ձեաւա կըղզին, Նեղոսի ափունքներէն մինչև ի Վոլկայի բերանը, անձաւեան Միջագետաց խորերէն մինչև յանամատն Ֆինլանտիոյ գաշտերը՝ կու գառնին, կու բնակին Հայ ընտանիք և ընկերութիւնք: — Ո՞ւր է անոնց հայրենիքն. միթէ ամեն մէկուն իր ծնընդեան աւրն է՝ ու այնքան կու տարբերի մէկալնեբոն ծննդեան տեղէն՝ ուրչափ ամենէն աննման աշխարհք իրարմէ. ինչպէս կրնան Հայք մեկ հայրենիք մ՚ունենալ:... Պէտք է որ այդքան ցրուած և ցանուած համազգիքը միայն գաղթական սեպնիք, օտարատունկ բոյսեր և ոչ բնիկ: Ազգին հայրենիքը փնտռելու է այն տեղուանքը՝ ուր աբելի բազմութիւն և իրարու մօտ կու բնակին. Թէպէտ այս այլ մեր ազգին համար շատ դիւրին ձամբայ չէ. որովհետև բաւական մօտիկ բնակութեամբ այլ՝ դեռ շատ ընդարձակ և անհուն երկրի երես ափռած կու տեսնեմք մեր ազգը, որ չէր կրնար այնքան աւղ բռնել իր համալեզու և համարիւն անհատներովը, բայց եթէ ըստ Զինայ

պէս բազմածին ամեցեալ ազգ մը՝ վան ալ դրե-
թէ Պարսից ծոցէն սկսեալ՝ ի հարաւոյ արեւելից՝
10–20 ասթիճան աշխարհագրական լայնութեամբ
ինչուան յԱդրիական ծով ձգուած երկիրներուս
մէջ դէպ՝ ի հիւսիս արեւմտից՝ ցանցառ կամ խիտ
բնակութեամբ կ՚երևին մեր հայազգիք, երբեմն
նեղ և երբեմն լայն՝ բայց գրեթէ անընդհատ գօտ-
ւոյ մը պէս: Սակայն այս դեռ շատ ընդարձակ
միջոցին երկու ծայրերն այլ թուրքով, (ուր աւե-
լի ցանցառ և ցրուած է հայութիւնն), պէտք է
մէջտեղուանքն՝ (ուր աւելի խիտ և մօտիկ է բը-
նակութիւններն) փնտռենք մեր հայրենիքը. և յի-
րաւի կու տեսնենք որ ազգերնուս բազմութիւնն
կու բնակի վերին Եփրատ գետոյն երկու կողմե-
րը. այ՝ կամ արևմտեան կողմէն՝ մինչև Սելիս
(Գըզըլըրմաք) գետոյն եղերքը, ձախ կողմէն՝ կամ
արևելքէն՝ մինչև՝ ի Կուր գետ, կամ այլ անդին
մինչև՝ ի Կասպից ծով. հիւսիսէն այլ մինչև՝ ի Կով-
կաս, հարաւէն մինչև յանապատն Մեզոգետայ:
Այս վերջի միջոցս այլ դեռ բաւական ընդարձակ
է մեր ազգին համար, ոչ միայն ըստ հիմակուան
վիճակին, այլ և ըստ հինաւուրց. ուրեմն եթէ ա-
ւար այլ ջուրս սահմաններն ամփոփեմք՝ կրնանք
տեսնել ջախաւուր երկիր մը՝ յիշեալ գետոյն
(Եփրատայ) երկու կողմը, որոյ մէկն (արևմուտ-
քեանն) ըլլայ Փոքր Հայք, միւսն Մեծ Հայք. ասոնք,
և մանաւանդ եսքինս այս է բուն Հայաստան. հոն
է մեր հայրենիքն. եթէ և այսօրուան օրս, աւերել, ա-
ւեն աշխարհացոյցք այս մեզի ցանկալի անուամբ
չեն նշանակեր այն երկիրը, այլ անոր քանի մը
նահանգաց և գաւառաց անուամբք, կամ նոր և
օտար անուններով:

Թուրքով պատճառները և պէտքերը քննելու
համ յիշեալ, վկայենք որ ազգերնուս մէկ մեծ
մաս մը հիմայ կը բնակի և ոչխարական հայրենից

*ահմանեն, զոր ասել կու բնակի կամ հաստատած է. բայց զեռ մեծագոյն մաս մ'իր նախնեաց բնիկ երկրին մէջ է, որ է Մեծ Հայք, կամ անոր շատ մօտ ասիլ, ինչպէս են Փոքր Հայք, Կովկաս և Կիւլիկիա. այս եօթինա թէ և հեռագոյն քան զբուն Փոքր Հայս, բայց սակայն Հայկական հայրենի երկիր դարձեր է. վասն զի հոս սակայն կեդրոնացեր է Հայութիւնն իր սեփական օրինօքն, սիրութեամբն, լեզուաւ և սեփական յատկութեամբք, որոց նշանք կու մնան իր ձեռագործ և ձեռագիր պզտիկ յիշատակարանք:*

## Դ

*Պզտիկ յիշատակարանք. սոսկ են բնիկ նշանք հայրենեաց. սոսկ են իւրաքանչիւր պզտիկ հայրենեաց ամենէն յայտնի, ամենէն պզտիկ և զօրաւոր արձանագրութիւնք, միանգամայն և ամենէն սիրելի և սրտառուչ բաներ երկրիս վրայ: Կրնամք ուրեմն մենք Հայքս այլ, չեմ սրտակսկիծ ասելու մեր անցեալ կամ կորուսեալ երկրին ինքնակացութեանն և բազմակերպ յիշատակաց վրայ, (որք 3000 տարի մը հանդիպեցան այն մի և նոյն երկրին վրայ՝ զոր բնիկք և օտարք միշտ կ'անուանէին Հայաստան և Արմենիա), կրնամք, կ'ըսեմ, զեռ հիմայ այլ մխիթարուիլ՝ որ այս ցան և ցիր պզտիկներուս գոնէ կէսն զեռ իր հին և ամենահին հարանց հողուն վրայ կու բնակի, կու բանի, և կու հանգչի, անոնց նշխարեալ ոսկերաց քով իրենները այլ ասանդելով. – և կրնայ զեռ յեռ այնքան առատաձեռնութեանց և սէրանաց՝ որ Թեւրեա ամեն աշխարհէ սէրն իր երկրին վրայ եղան, կրնայ զեռ իր նախնի սիրտերուն նախնեաց հնացեալ և կիսաքանդ յիշատակարանները սեանել. – կրնայ Հանչնալ այն սեղանքը՝ ուր*

իր համարին և համալեզու առաքինեաց և քա-
ջաց գործք և արդիւնքն կատարեցան, որք ՚ի գիր
անցան և դարուց ՚ի դար կու պատմին և պիտի
պատմին: Կրնամք և մենք հեռաւորքս և մերձա-
ւորք՝ մխիթարուիլ և օգտուիլ այն յիշատակա-
րաններով և յիշատակներով, զոր եթէ ժամա-
նակն մեկ կողմէն կու ջանայ աւերլի հնացընել և
մոռացընել, մեկ այլ կողմէն դիւրութիւնք նոյն
ժամանակի, արուեստք, գիտութիւնք, ջանք և
կրթութիւն՝ աւերլի կու յայտնեն, կու նորոգեն,
կենդանացընեն: Զանոնք փնտռելով և քննելով՝
կու ստիպուինք անգամ մ՚այլ վկայել մեր ան-
ցեալ պատմահօր հետ (Խորեն. Ա. գ.), որ թէ-
պէտ և հինայ փոքր ազգ մ՚ենք, ոսկեր և օտարին
իշխանութեան տակ ընկած, «սակայն բազում
» գործք արութեան գոյանին գործեալ և ՚ի մե-
» րում աշխարհիս»: Գործք արութեան են՝ քա-
ջութիւն հոգւոյ և սրտի և ձեռաց. արդիւնք ա-
ռաքինութեան և կորճութեան:

Այո, այո. հայրենեաց սմենէն հզօր հրապոյր-
քըն են այսպիսի գործոց յիշատակք, եթէ անոնց
նիւթական յուշարարքն կամ արձանքն մնացած
ըլլան և եթէ չըլլան. սոսկ են սեւագրանին գըլ-
խաւոր պատակերքն: Եւ եթէ այն պատկերաց հետ
ենթակայքն և շրջանակքն այլ համեմատ և գե-
ղեցիկ ըլլան՝ ՚ի հարկէ բոլոր սեւագրանն այլ աւերլի
գեղեցիկ կ՚երևի. այսինքն, եթէ այն գործոց հետ՝
սեղն ու գիրքն այլ ՚ի բնէ վայելուչ ըլլան՝ հայ-
րենիք կրկին քաղցր և ցանկալի կ՚ըլլայ: — Արդ
այս սեւագրութեամբ այլ՝ մեր հայրենիքն Հայաս-
տան՝ կրնայ շատ հնախանձելի ուրիշ աշխարհաց, այլ
և շատերուս նախանձելի ըլլալ. վասն զի բնութիւնն
կամ տէրն բնութեան՝ շատ գեղեցկութեամբ և
հարստութեամբ զարդարեր է զայն. զոր օր մը
յատուկ համառօտ բնագրութեամբ մը կ՚ուզենք

քեզի նկատողութիւն, Հայկակ: Իսկ եթէ այս բնական և ազգային տեսարանաց հետ նկատենք մեր հայրենեաց վրայ համաշխարհական երևոյթներ այլ, այսինքն անանուն գեղքեր, որ կամ բոլոր աշխարհիս կամ շատ ազգաց պատմութեանն այլ կու վերաբերին, կարծեմ թէ քիչ երկիր կրնայ մեր հայրենեաց հետ բաղդատուիլ, և կամ ոչ մէկն այլ հաւասարիլ այն երկրին, ուր հատարակաց կամ հաւանագոյն ծանօթութիւնն՝ կ'ընդունի զդրախտն, այսինքն մարդկութեան ծագումը. — սպանին հանգստեան տեղը, այսինքն երկրորդ անգամ մարդկութեան ծագիլ և ծաւալիլը. — աճեցեալ մարդկութեան առաջին անգամ ցրուիլն անկէց, և գարձեալ՝ի Բաբելոնէ ցրուելոց շատերուն նորէն կամ բնակարան կամ անցարան և իբրև կարաւանատուն մ'ըլլալն. կրնանք ըսել թէ հիմակուան զարմանալի Եւրոպիոյ մեծ մասն այլ Հայաստանէն անցեր է. անոր ազգաց շատ նահապետքն կամ գալթականաց գլխաւորք՝ մեր աշխարհքէն ելեր կամ անցեր են յարեւմուտս և ոմանք գէպ՝ի հիւսիս: Այո՛, Հայկակ, գարձեալ կու կրկնեմ, որ թէ բնական, թէ ազգային և թէ համաշխարհական տեսութեամբք՝ շատ նշանաւոր երկիր մ'է Հայաստան. և ըստ այսմ տեսութեան՝ կերպով մ'եռապատիկ կ'ընդարձակի մեր հայրենիքն, որ արդէն իսկ բաւական ընդարձակ էր թէ իր սահմանութեամբն և թէ մեր պատմական տեսութեանէն, որ կու սկզբան առնէն հին ազգաց պատմութեան հետ. և իր ինքնագլխութիւնը կամ երկրապետութիւնը կորուսանելու երկար միջոցն այլ՝ դեռ փոքրագոյն մաս մ'է հայութեան կենաց՝ի վերայ երկրի: Եւ արդ այս առնա՝ անդամ մ'այլ կու հաստատեն՝ թէ շատ գործք եղած են՝ի Հայաստան, շատ յիշատակներ պետք ուսնելոց մեր հայրենիքն: . . .

10249926



# Ե

Արդ ինչ պիտի ըլլայ ուրեմն, ով Հայկակ, այնքան գործոց և յիշատակաց դիմաց այս իմ քեզի ընծայածս – ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ: Եթէ դիպուածոց բազմութեան հետ համեմատեմք, արդարև հազարէն մէկ բիւրէն երկուք են. եթէ գործոց գերազանցութեան հետ, կու փութամ վկայելու՝ որ և յայսմ մասին ամենէն ընտիր կամ ցանկալի բաներն չեն այս քանի մը տասնեակ պատմածքս, զոր ըստ դիպաց իմն կամ ըստ աւուր պատշաճի՝ յիշեր եմ. և եթէ զրուցածս ծխա ոճոյն և ձևոյն նայիս, այն այլ շատ հեղ ըստ զանազան աւուրց կրկից կամ ախորժից ըսած եմ, առանց աւելի արժանաւոր ոճի և ձևի մը մտցընելու ըսածս. մանաւանդ որ՝ ի սկզբան չէի մտածեր առանձին դրքով մ՝ամփոփելու և հրատարակելու. և այս առաւել որ մեր ազգային լեզուով խօսած եմ, որ թէ և քեզի աւելի դիւրահասկանալի և ախորժելի է, Հայկակ, քայց ինծի՝ որ աւելի խոր զգացեր եմ հայրենեացս կիրքը՝ քան թէ բացատրեր, – ինծի՝ որ զպատմութիւն հնութեան մէջ յուզելով՝ մեր նախնիքը մեզմէ շատ աւելի մեծահասակ տեսեր եմ, – ինծի, իմ զգացմանս՝ արդարև այս աշխարհիկ լեզուս՝ շատ պզտիկ շատ ցած շատ անբաւական եկած է. ըսեմ նաև՝ թէ և շատ օտարացեալ և այլայլացեալ ի քնիկ հայկական ոճոյ, որ ամենէն աւելի հաճոյն էր ինծի. այնպէս կ՝երևի ինծի՝ թէ մեծ կրակ մը փոտած քուրջերով ծրարել կ՝ուզեմ, երբ այն իմ հին և արքայական հայրենեացս հրեղէն յիշատակները՝ այսպիսի խեղճուկ լեզուով կ՝աւանդեմ, Թողլով իր վեհմանկան գրոց լեզուն:

10249926



Սակայն այս իօսքերս իսկ կու յայտնէն՝ որ իմ արտիս զուարճութենէն աւելի քու և քու նմանեցդ օգուտը դիտեր եմ, Հայկակ. եթէ կարենայի և ուզենայի Նարեկացւոյ Թուղթին և հրատարակութեան մը վիպատանել, գուցէ քիչ մ'աւելի սիրտս կու զովանար կու հանգչէր. բայց անշուշտ աւ այժմ քիչերու հասկանալի պիտի ըլլայի, և շատերու անօգուտ. եթէ կրնամ դեռ յուսալ՝ որ գոնէ քիչերու այլ օգտակար ըլլամ, ինչպէս որ փափագեցայ այս քանի մը պարապոյ ժամերուս զբոսյքը հրատարակելով. որով երբեմն ուզեր էի այն հայրենեաց արբշռան զգացման մեծ վառարանէն մէկ երկու կայծեր թափել՝ ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց: Եւ սատր համար՝ որպէս զի չկարծուիմ թէ մեր հին և մեծ հայրենեաց զանազան անցքերը ուզած ըլլամ բովանդակել գլխուկով մը, չհամարձակեցայ զանունք յիշատակք անգամ անուանել, այլ միայն Յուշիկք: Յուշիկք միայն են ասոնք՝ համեմատութեամբ յիշատակաց շատութեան և մեծութեան. Յուշիկք են նաև նկատմամբ այն յուսոյ և փափագանաց՝ որ կու պահանջէին երկար և ձոխաբար իսօսիլ և լսել անոնց վրայօք, որոցմէ՝ ժամանակն անատոյգ՝ և ինձի համար արդէն յառաջացեալ՝ թերևս պիտի չթողու որ քեզի կարենամ աւանդել աւելի կատարեալ բան մը՝ քան սոյն այս անկատար ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ:

10249926

# ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

## ՀԱՑԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Աւրդ որովհետեւ կ'ուզես, Հայկակ, որ երբեմն ձմերուան իրիկուններըը ախորժաբեր կարծիր կրակարանին քով, և երբեմն լաւ եղանակին՝ ցորեկը ժուռ գալով բաց օդոյ և բնութեան մէջ, մեր Հայ հայրենեաց պիպուածոց և հանգամանաց մէկ քանին յիշենք. երբեմն ըստ աւուր պատշաճի, այնինքն օրուան տարեդարձ յիշատակը պատմելով, և երբեմն ըստ կամաց և հաճոյից ընթերցողաց նիւթ մը. հարկաւոր կու սեպեմ այս առաջին անգամ մեր հայրենեաց բնախօսութիւնն մ'ընել. 'ի հարկէ մեր երեկոյեան ժամերուն հաճեմա՝ համառօտելով և ամփոփելով անանկ նկարագիր մը՝ որ կրնար շատ յերկարիլ, եթէ մենք այլ աւելի երկար ժամանակ ունենայինք՝ մեր աշխարհին անցեալ պատմութիւնը և ներկայ բնութիւնը քննելու:

10249926



# Ա.

Մեր Հայաստան աշխարհին ընդհանուր կեր-
պարանքը շատ նշանաւոր երեւոյթներ կ'ընծայեն
մեզի, Հայկակ. և մեկ խօսքով ըսելով, Հայաստան
ընդդիմակներու երկիր մ'է պերազանց աստիճա-
նի, ուր քիչ ազգեցութիւն չեն ըներ իր բնակչաց
բարուցը վրայ: Աշխարհագրական դիրքը պատ-
ճառ՝ Հայաստանի կլիման է ամենաբարեխառն,
ամենաքաղցր, հաւասար Իտալիոյ, Յունաստա-
նի, Սպանիոյ, Ասորեան կղզեաց. բայց ունի իրա-
րաշրջուն ցուրտ՝ բևեռային շրջանակաց նման, և
հեղձուցիչ տաք՝ արեւադարձից: Եւ այս հակա-
ռակաց պատճառն է իր դրից բարձրութիւնը ծո-
վոյ երեսէն: Վասն զի մինչ մեկ կողմանէ Եւրո-
պիոյ շատ լերանց բարձրաբերձ գագաթունքն չեն
հասնիր այն բազմամարդ ու մշակեալ տափից
բարձրութեանը, ուսկից Եփրատ, Տիգրիս, Կուր
և Արածանի սկիզբն կ'առնուն իրենց արծաթա-
փայլ ջուրը. և մինչ Սեմբլանի, Կենիսոսի, Ս.
Կոթարտոսի համբաւաւոր լեռնանցքն ատրև են
Սևանայ լճին ջրոց կապուտակ երեսէն, որուն
շրջակայքն հարիւրաւոր գիւղօրէք միշտ բազմա-
մարդ բնակչօք լի են. մեա կողմանէ քանի մը մա-
սունք մեր հայրենեաց՝ ոչ միայն կ'իջնեն հարթ
հաւասար մինչև ծովեզն մակերևոյթը, այլ նաև
ատրև են քան զայն. ինչպէս Կասպից ծովեզն
ափունքն, ուր կը իատնուի Հայաստանի բնական
մակարդակն՝ 25 մեդր ցած են քան զմակերևոյթ
Սեաւ ծովու և Ովկիանոս: Ակն առաջ կու գան
այն հակադիմութիւնքն և այն փոխադարձ իա-
զերն երկու հակառակ եղանակաց. որոնց մէկին
երեսն կը հաչեցուանէ, կ'ըսեն, իր հրացայտ ձա-

առագայթներովը Տիգրանակերտի գմբեթաց կապարը, մինչեւ մէկալն վեց ամիս կը սփռէ իր ապիտակ պատանքը երկրին մեծագոյն մասին երեսը, և կ'իջեցուանէ զօրագախտանութիւնը 26° Ռ. զոյէն վար: Ա յսպիսի տաւն կարաւաններն հետերնին կ'առնուն Թանձր մուշտակներ, կարելու անցնելու համար ձեան ու սառուցի խաւերուն տակ ալեզգած լճերը ու գետերը, որով չեն զանազանուիր ձորն 'ի դաշտէն: Երկնանիկ են այն յանդուգն Հանապարհորդներն՝ եթէ կարենան ազատիլ հիւսերէն և ձեան փոթորիկներէն, որ շատ անգամ կը Թաղեն ամբողջ կարաւաններ: Ա յսպիսի դիպաց մէջ փրկութեան վերջին յոյսն, ըստ վկայութեան Սորաբոնի, էր երկայն ձող մը, զոր ձեան տակ Թաղուած Թշուառն կը ջանար ցցել իր տաճնեղէն բանաին կամարէն դուրս՝ իբրև նշան բաբախուն կենացը, որ ազատարարի մը կը սպասէր: Ա յս կերպով ազատեցաւ արքայն Սանատրուկ երեխայութեան տաեն, յետ մնալու երեք օր տանուին գիրկը կապուած ձիւնեղէն բանաին մէջ. իր Թոռն, Տիրան, Թշուառագոյն քան զինքն, հոն կորընցուց կեանքը յետ Թագաւորելու 20 տարի: Օգտակար ձիգն էր և պատուաւոր պաշտօն մը՝ մեր արշակունի Թագաւորաց տաեն՝ արքունի տասիկանութիւնն ձեանց, յորմէ կ'առնուր իր անունը մեր ազնուական ընտանեացը և կամ նախարարութեանց մէկն, և կ'ըսուէր Ձիւնական: Ճանապարհորդաց ապահովութեան համար պանդոկներ կամ կայանք կը տասպատուէին յաձախեալ և վտանգաւոր Ճանապարհաց և անցից վրայ. ինչպէս են, բաց յայլոց, Ախվալի ձորոյն խաները, ընդ մէջ Բալիշու և Խլաթայ: Ա յս հայկական ȝՂեռն, ինչպէս կ'առնուանէ մեծն Ոսկեբերան, որ անձամբ փորձեց այսր խաութիւնը, շատ անգամ ան տուաւ աշ-

*խարխափելոյ. և առակ եղած է հին պատմչաց և քերդողաց մէջ, Քաւենափանէն սկսեալ մինչև՛ ի բիւզանդացի ժամանակագիրներն։ Մեր օրերն գնապատում Հանապարհորդք առաւգեցին որ էր. զնաւեմի ձմեռն սկսելն նաւազ խիստ չէ՝ քան մեծին Ս. Բեռնարդոսի լերան ձմեռը, Թէպէտ և առաջնոյն աշխարհագրական լայնութիւնն 5 աստիճան նաւազ է, և բացարձակ բարձրութիւնն ալ 500 մեդր նուազ է քան զհռչակաւոր վանքն Ալպեայց։ Գարձեալ Ակոռւոյ ձմեռն, 39 աստիճան լայնութեան տակ, և 1760 մեդր բարձրութեամբ, հաւասար է Հիւսիսային–Գլխոյն ձմերան՝ առաւգեալ գօտւոյն տակ՝ Եւրոպայի ծայրը։ Երևան, մայրաքաղաքն Ռուս Հայաստանի՝ ամառն տաքերի մէջ ջերմութիւնն եղեր է 30° Ռ. ձմեռն իջեր է անգամ մ՚ինչուան 40° Ռ. զըրոյն վար. այսպիսի տարբերութիւն մը մը հաւիւ թէ առաւգեալ գօտւոյն մէջ, Կրէնլանտի կղզին կը տեսնուի. ընդդիմակ մը որ գրեթէ ուրիշ տեղ չտեսնուիր։*

*Այս ընդդիմակութիւնս առէլի զգալի կ՚ըլլայ երբ նկատենք մեր հայրենեաց երկրին տարած երեսը՝ տարւոյն այն ժամանակը, երբ այն լեռներն անդին՝ որ զինքը կը բաժնեն Պոնտոսէն, նաև ընդհանրութեան անուշահոտութեամբ կը բուրեն բաց օդուն մէջ՝ ի Տրապիզոն, զոր արդէն ողջուներ է ծիծառնուկն, Հայաստանի վրայէն անցնելով՝ առանց հոն տոք կոխելու. մինչդեռ ուրիշ կողմ մը՝ ցածագոյն լերանց տաքը, Մուսուլ, տաւրոյց կը ծախին, տաղտկացուցիչ ջերմութիւնը բարեխառնելու համար։ Եւ սակայն Պոնտոսի մայրաքաղաքէն մինչև Ասորեստանի մայրաքաղաքը, Հայաստանի տարածութիւնն՝ ուղիղ գծով՝ չառաւելեր քան զ6-700 հազարամեդր. այնպէս որ շոգեկառք մը կրնայ կտրել այս միջոցս արևուան ծա-*

գուռքեն մինչև մուտքը, և կ'ուներնայ Ճամբորդն առաւօտ մը գարնան, միջօրէ մը ձմեռան և երեկոյ մ'ամառան: Հաւանօրէն գուն այս գբօսական Ճանապարհորդութեանս ձեռք չես զարներ, Հայկակ. չես ուզեր մի և նոյն օրուան մէջ երեք սյլ և այլ եղանակ ունենալ, մանաւանդ երկրորդը: Այդ ինչ խատաշուանչ երկիր է, պիտի ըսես, այդ ինչ Թշուառ հայրենիք է եղեր մեր Հայաստանն: Ա՛հ, երբ սիրելի ըլլան հայրենիք, ամեն եղանակներն ալ գեղեցիկ կ'ըլլան, և վայրենագոյն բնութիւնն անգամ կը քաղցրանայ բարեկիրթ սրտի մը: Ի վերայ այսր ամենայնի ես շատ եւրոպացի կը Ճանչնամ՝ Բարիզու և Լոնտրայի բնակիչներէն, վաճառականներ և հիւպատաններ, որ գժուարաւ կը Թոյլատուին էրզիւռումի բնակութիւննին յերեքտպա վերադառնալու համար. Թէպէտ և կը տեսնեն որ ջուրը կը սառի հոն նոյն իսկ իւեցգեառնի արևադարձին գիշերը. բայց այն չորս կամ հինգ ամիսները, որ երկու ձմեռանց մէջ կ'ընկնին, վերադտպա կը համարին քան զերկար տարին ուրիշ կլիմայի տակ:

Օդոյն առաձգութիւնն ու զսուութիւնն և անոր հոսանաց զովութիւնն, ջրոց յատակութիւնն, քաւաքերուութե առուգութիւնն ու պայծառութիւն, և այս կերպով մը օդապարիկ երկրիս արգասեաց համեղութիւնն, կազմեցին զՀայաստան տեղի զբօսանաց և ամարաստուն աշխարհականացն Ասիոյ և երեն մերձաւոր Թագաւորաց, սկսեալ 'ի Շամիրամայ մինչև ցկուսակալս անդրակովկասային գաւառաց Ռուսաց: Վանայ բերդն, որ սեպագեալ ժայռի մը գլուխը կանգնուած է, հարիւրաւոր ոտք բարձր է ատրակայ լեռնադաշտակէն, ան ալ աւելի քան զ5100 ոտք բարձր է ծովու երեսէն, այն բնութեան և արուեստից հրաշալեաց, — առաջին Ֆանդրուան հաձոյից և ա-

մարտաւոն եղաւ այն աշխարհակալ Թագուհին, որուն անունը ինչուան այս օրս կը կրէ, այն անունը [1] որ չատոնց մուտացութեան մէջ Թաղուած է Բաբելոնի և Նկատանայ աւերակաց տակ:

Իսկ մեր Թագաւորներն պէտք չունէին իրենց ձմերոցն օտարներու քով փնտռելու: Մուշան նայ ընդարձակ դաշտն կամ անապատը, զոր կը կարեն ու կ'անցնին Երասխ և Կուր, իրարու հետ խառնուելէն Թէ առաջ և Թէ ետև, ամեն ժամանակ ձմեռը մեր հայրենեաց կենդանիներուն ապաստանարան եղեր է: Ամառն խոպան անապատ մ'է, և արևէն այրած խոտերուն տակ կը պահէ խորամանկ օձերը, որոնցմէ Պոմպէի բանակն աւելի նեղութիւն կրեց՝ քան Թէ Ասիոյ բոլոր Թշնամիներէն. ամառուընէ դէպ'ի ձմեռն՝ արօտատելի և ճշմարիտ ապաստան կը փոխուի: Ան վերջին եղանակին մէջ՝ հազիւ Թէ Թափանցիկ բարակ ձիւն մը կը նաւի, Մուշան կը շէննայ օդոց այն գեղեցիկ եպիկուրեաններէն, (Թուշուաններէ), որոնց տարւոյ տեղափոխութիւնքն կը հիացուընեն զերկրագործ և վնասատուաէր: Ասյ խաղաղասէր Թռչնոց ցեղին բոլորովին տարբեր և օտար ցեղ մը՝ ժիլին գարնան՝ այս ընդարձակ միայնութեանց տիրելով, ծածկեց զանոնք պատերազմասէր հրոսանքով, որ եկեր էին Ջինսանէ և Եաքսարտէ անդին եղած անապատներէն. Մողոլաց անհամար բանակներն, առաջնորդ ունենալով զՁուրմաղուն և Հուլաղուն, հոն ձմեռն իրենց ձիերը ու բանակները կը վարժեցնէին արիւնհեղութեան և աւարառութեան, զոր'ի գործ կը գնէին գարնան, բոլոր շրջակայ երկիրներուն մէջ: Անոնց արիւնարբու գլխաւորներն, երբ տա-

1 Շամիրամակերտ ալ.կ'ըսուի Վանն:

*քերը կը հանէին, Ալաւաղի զովացիկ բարձրերը կ'ապաւինէին, որ Արարատայ պարուձն լեռ մ'է, և վրան Ապուլա-ղան մեծաձախ դլեակ մը կ'ինեց, քալաքի մը չափ ընդարձակ, որուն աւերակներն ինչուան հիմա անայցելու մնացեր են Հանապարհորդներէն, ինչպէս դիրքն ալ անծանօթ է հիմա հուան անուանի արևելագէտներէն՝ որք Մոլտկեայ պատմութիւնը գրեցին:*

## Բ

*Արարատայ այն լերանց պարն՝ զոր հիմա Յէյլ, բոլոր Հայաստանը երկու կը բաժնէ, Թափելով իր ջուրը մէկ կողմէն Եփրատայ և Կասպիական ծովերուն, միւս կողմէն՝ Միջերկրական ծովը ու պարսկային ծոցը: Այս շրթային – կցուելով լերանց այն ընդարձակ գօտւոյն հետ՝ որ ծայրէ ծայր կը շրջապատէ հորիզոնաբար գբուանդային Ասիա, սկսեալ Չինաց և Հնդկաց եզերքէն մինչև փոքր Ասիոյ եզերքը, ու կը ձգուի մինչև արևելեան Եւրոպա, – այս հայկական պարը կամ շրթային, հանդերձ իր լեռնամոյթներովը, նոր ժամանակաց առաջին բնապատուճն Հուանպոլթ կու տեսէ իբր կեդրոն ծանրութեան բոլոր հին աշխարհի: Սակայն այս շրթային, ինչպէս ուրիշ Հայաստանի շրթաններն ալ, որոշ ջիծրագրութիւր նման անթափանցելի պատուարացն Կովկասու, շարունակ կատարացն Անտեայց, Հիմալայայ, և Ապենինեանց. և ոչ իսկ Տաւրոսի վեհ տեսքն ունի: Հայաստան ունէ շատ մը երկրորդական շրթաններ ձիւղելոյն Կովկասու, Տաւրոսի և Արարատայ, որ կ'ընդհատին շատ հեղ լեռնակոյտներէ, ցցուեալ առանձնակ սարերէ, որք շատ տարբեր կերպով վեհ են իրենց ձևովը, բացարձակ բարձրու-*

Թեամբն և իրենց տարածմամբը. և իրաւամբ է որ նոր աշխարհագրաց հայրն, Ռիդդէր, կը կոչէ մեր հայրենիքը Լեռնակղզի[1]: Արդարև ուրիշ կերպ չերևար Հայաստան եթէ դիտուի ընդ մէջ դաշտացն Միջագետաց, Աղուանից և Վրաց, ընդ մէջ Սեաւ ծովուն և Կասպիական ծովուն. ուր լեռնադաշտն կ'ամբառնայ աւելի քան զ'2000 մեդր հանդերձ լեռներով, որոնց բացարձակ բարձրութիւնն է մինչև 5000 մեդր: Այս լեռնադաշտս բարձրագոյն կէտն Մասիս, կամ Մեծն Արարատ, կ'առաւելու բարձրութեամբ իբր 500 մեդր քան զՕպիտակ լեառն[2], և երեք կոմմանէ աւանձնացեալ՝ կը բարձրանայ իբրև հսկայ լերանց 4000 մեդր Երասխայ դաշտէն վեր, ցուցընելով փառաւորապէս ինչուան 50 փարսախ հեռուն իր աւևտր գլուխը. սպիտակ քօղն՝ որ միանգամայն կը ծածկէ զայն, ընդդիմակ երևոյթ մը կը ներկայացնէ իր սև կողերուն հետ՝ երբոր անոնք իրենց ձմեռնային ծածկոյթը ձգեն:

Դիտելու արժանի զարմանալիքներէն մէկն է դարձեալ մեր երկրին մէջ միանգամայտր ձեանց բարձրութիւնն, որ բաց ՚ի Մասիսէն և ուրիշ քանի մը բարձունքներէ, ամբողջ տարին չեն դիմանար: Այդ սառնագին գիծն հայկական լերանց աւանձնակ տարերքն վրայ չինչնար ՚ի վայր քան զ4000 մեդր, և գօտիներուն վրայ քան զ3500: Իրաւունք ունէր ուրեմն լատին բանաստեղծն (Ո. րատիոս) զարմանալու որ

Եւ ոչ ՚ի տարս լերանց Հայոց
... Պաղ Թանձրամած կայ միշտ անլոյծ
Ձհամաբոլոր ընթացս ամաց: —

Ինչպիսի զարմանալի ընդդիմակ երևոյթ կ'ըն.

1 Գերմ. Berg-insel. 2 Mont-Blanc.

ծայեն ուրեմն մեր հայրենիքն ընդ մէջ տարածեալ երկու ծայրերուն ու միջին ամիաներուն. իր նչ զանազանութիւն ընդ մէջ համատարած սպիտակութեան և ալեպիսագոյն կանաչութեան՝ որ շուտով մը առջինին տեղ կը փուռի:

Բայց ինչպես կ'անհետանան արդեօք այդ ձեան և սառուցի տարածութիւնը կոյտերն. ոչ արդեօք կ'ամբարին այնքան անբաւ ջուրեր: Անտարակոյս պէտք էին քոլոր մեր երկրին երեսը ողողել, աւերել ու փճացընել, եթէ նախախնամութիւնն առջուց անոր կորնթարդ դիրք մը տուած չըլլար, կմբրաձև վահանի մը պէս զետեղելով ջրոս մէջերկրական ծովուց միջոց. ուր կը թափին այդ ջրոց մեծամեծ քամուքն՝ և կը ձևացընեն առաջկողմեան Ասիոյ մեծագոյն գետերը: Բայց՝ եթէ երկրին պզալի կորութիւնն՝ գետոց յատակքն ալ շատ խոր են, և ոմանք ինչուան հարիւրաւոր ոտք բարձր ափունք ունին իրենց թոռիս ալիքներուն վերև. այս պատճառաւս է որ շատ մեծ ու փոքր գետեր Սև կը կոչուին: Բայց այդ տարւոյ ջրհեղեղը չէր բաւեր երկրին արբուցմանը, եթէ միշտ ողողաց երկայնաձիա վաստակն բազմաթիւ ջրանցքներ և ջրոց ընդունարաններ չբանար, և շարժուն ցանց մը չձևացուներ իր մարդացն ու անդաստանացը եզերք: Պէտք է ձանչնանք ուրեմն որ մեր նախնիքն, առանց ներկայ դարուս դիւրութիւններն ունենալու՝ շատ ձարտար էին ջրաբաշխական արուեստի մէջ: Ջրոց խուռներուն մէջ թմրած ջուրն՝ ոչ միայն նեղ ժայռերու մէջէն ձամբայ բանալով կ'ընթանար անխոնջ երկրագործին քըրտանց ձեռնաւու ըլլալու, այլ և երբեմն աւելի դժուարին և օձապտոյտ ձամբաներով՝ տուր և սեպաձև ըլուրներու և ժայռերու գագաթը կը բարձրանար, ձևացընելու աւազան մը ժայռերու մէջ փորուած՝ բռնաւորի և կամ բռնաւորէ մը

ընկճուած հպատակի մը ամրոցին մէջ։ Ուրիշ տեղ ալ տարբեր վախճանի համար խոր գետե-
րու տակէն գետնափոր ուղիներ կը բանային. օ-
րինակի համար Անի, բուն Հայաստանի եռաքի մայ-
րաքաղաքն, Լոնտրայէն 800 տարի առաջ ալ ու-
նէր տարտղեւեայ ջրանցքը։ Այդ ջրաբաշխական
մեծագործութիւնքն հաւասարիք մ'են թէ կարող
էին ուրեմն զանոնք շինողներն նաև մեծամեծ ջրոց
հոսանքները քարաշէն կամարներով ալ սանձել,
կ'ուզեմ ըսել կամուրջներով. այնչափ բազմա-
թիւ էին կամուրջներն՝ որ միջին դարու մեր ազ-
գային երգիչներէն մէկն կ'երդնուր, «Ա՛յ քարա-
շէն կամուրջնի»։ Բայց սակայն շատ դիւրին
գործ մը չէր ձարտարապետին՝ մէկմէկու միացը-
նել անանկ երկու ափունք, որոնց մէջէն կ'արշա-
ւէին սրընթաց և զայրագին գետեր. վկայ է Վի-
գիլեայ գեղեցիկ տողն,

Ի կամըրջոց ըմբոստան Եբրախ։

Փուճ տեղը չանացին Ալեքսանդր և Օգոստոս ինք-
նակալներն սանձահարել այդ ամեհի գետը. ու-
րիշ ինքնակալ մը աւելի երջանիկ սեռէց գինքը՝
անոր վրայ գէթ առժամանակեայ կամուրջ մը
ձգելով. և ահա մէկէն ուրիշ շողքորդ բանա-
ստեղծ մ'ալ (Ստապիոս) երգեց.

Լատինական կամըրջոց արդ հըլու Եբրախ։

Բայց այդ զայրագին գետն, արհամարհելով կայ-
սերական ձեռագործներն՝ իր ափացը ներքև ընկ-
ճեց զանոնք, մինչդեռ հեզիկ և ուժաթափ եօթ-
նակամար մեծ կամրջի մը կամարաց տակէն կ'անց-
նի, որոյ հիմունքը համեատ հովիւ մը ձգեց։ Հո-
վուի կամուրջն (Ջօպան-փէօփրի-սի) Հայաստանի
և անոր ջրջակայքը մէջ առած եղած է։ Թողլով
ուրիշները, յիշեմ մէկ կամուրջ մ'ալ միայն,

Զարմիրը գաւառին մէջ, մանկամարտ քարաշէն. զոր այրի Թագուհի մը իր ծախիկ հասակին մէջ կանգնել տուաւ ՚ի յիշատակ իւր Թագաշուք վախճանեալ ամուսնոյն Աբասայ, իսոր հեղեղատի մը վրայ ձգեալով, եբերև խորհրդաւոր նշան միութեան երկուց սրտից, երկուց աչխարհաց և երկուց հանդիսապակաց կենաց. կամրջին տարրոտը խաչարձանի մը վրայ դրոշմել տալով իր սիրոյն և կենդանի հաւատոց նշանակը: Չի կրնար հայրենասէր մը յանցանելն այս (կը համարձակիմ ըսել) հրաշակերտ կամրջէն, ջուալ տխուր աչք մը թէ այն սրարշաւ ալեացը վրայ՝ որ միշտ կը թողուն և միշտ կը ծածկեն իրենց հունը, թէ այդ արձանագրութեանը վրայ՝ որ քրիստոնէական յուսոյ նշանին տակ անեղծ պահուած է, և թէ այն մերձաւոր կրկին վանքերուն վրայ, Հաղբատայ և Սանահնի, Հայաստանին միջին դարուց Ս. Դիոնեսիոսն ու Ս. Պօղոսը[1], ուր կը հանդէին աւելի քան զ40 պատկառելի դրութիք ընդ պարկեշտասուն Թագուհւոյն Նանայի, որ է հիմնադիրն կամրջիս. բարեբաղդաբար ժամանակին, որ մարդէս աւելի խնայել գիտէ, անարատ պահած է մեզի 700 տարուընէ ՚ի վեր՝ այդ միանգամայն հայրենական և կրօնական յիշատակարանը[2]:... Բայց այս ինչ է, միթէ այդ փրփրադէզ

1 Saint-Denis Բարիզու և Saint-Paul Լոնտրայի:

2 Այս է արձանագիրն. «Կամաւն Աստուծոյ ես Նանա »՚ի յազգէ Բագրատունեաց դուստր մեծին Սարգսի, քոյր »Զաքարէի և Իվանէի, կին Աբասայ Թագաւորին՝ որ »վախճանեցաւ կիսաւարեայ, խաւարեցոյց զիս. կանգնե»ցի զխաչս, ընծայ զկամուրջս. յիշատակ նմա և միխ»թար ինձ, ծնողաց և եղբարց իմոց: Ոբք երկրպագէք՝ »յիշեցէք ՚ի Քրիստոս»:

Խաչին վերևն այլ գրած էր. «Նշան Քրիստոսի, լեր »բարեխաւս իշխանաց յազգէ Բագրատունեաց»: Աբասա

աչեաց նեղքև ծածկուած յուշկապարիկ մը կայ՝ որ կը հրապուրէ զիս նիւթէս դուրս արշաւելու: Ահ, Հայկակ, քինչ աւելի զօրաւոր, աւելի յաղթական և աւելի սրբանուէր բան կայ, քան քնութեան և կրօնից զուգայարմամբ ներդաշնակութիւնն, հանդերձ հայրենեաց յիշատակներուն և ցաւերուն:...

Հայաստանեայց ջրաքաշխութեան վրայ խօսքս չկնքած՝ անշուշտ անդրադարձումն մ'ըրեր, որ երկրին զառիվայր դիրքն, լերանց բարձրութիւնն, ուղղից և հեղեղաց առատութիւնն, և համեմատաբար անոնց ընթացից կարճութիւնն՝ պէտք էին որ ջուվէժներ և հոսանքներ գործէին. և յիրաւի մեր գետոց անուններն իսկ, ինչպէս Եփրատ, Տիգրիս, Ճորոխ՝ իրենց երագ ընթացքէն առնուած են. առաջինն՝ անուանի է իր վեհամեծ քարավազ թափուածքովն՝ ընթացիցը վերջերը, որ հիմայ Ռուսիոյ ինքնակալութեան հարաւագոյն մասին վրայ է, և անոր ամենամեծ գետերն իսկ այդպիսի աքանչելի և միանգամայն զարհուրելի երևոյթ մը չունին. վասն զի այդ վիհերուն և մեծամեծ ժայռերուն մէջէն իրեն անցք մը բանալու համար, պէտք եղած է որ երկրաշարժն ամբողջ Մեծ լեռը հիմն'ի վեր տապալէ, և Թոլու մեր ազգային գետոյն Թաւալիլ գահավիժաբար, իբրև փրփրեցրախ և սանձարձակ երիվար մը: Այդ ժայռերուն յամառ դիմակալութիւնը ընդդէմ երասխայ զայրագին յորձանաց՝ տեսանելով մեծն Շահ-Աբաս, կ'ըսէր քովինները. Ահա ձեզի օրինակ Թշնամեաց դիմակալե-

այս Թափառաւոր Հայաստանի արևելեան հիւսիսային կողման գաւառի մը վրայ՝ մեռաւ 19 տարուան, երբախայ զաւակ մը Թողլով'ի Ղանպէ, որ իր տեղ Թափառութեց յիւոտյ, և կոչուեր Աղասրթան:

լու. որուն՝ Ակի, պատասխանեցին, սէր ալքայ, երբոր այգպիսի զօրաւոր նեցուկներ ըլլան. ցուցընելով իրեն տպաւորած գեղափոնքը՝ զոր ջուրն կը ծեծէր։ — Եփրատէս, սուրբ գրոց գետերուն պարապմունքը, որուն սկսունքը 9000 ոտք բարձր են, կարնոյ Ծաղկի լեռնէն սկսելով, 300էն աւելի քարավազ ունի, 12 փարսախ միջոց Մեծ և Փոքր Հայոց մէջտեղ։ Ասոր արևելեան օժանդակին՝ Արածանի, Մշոյ անուամբ Ս. Կարապետ ուխտատեղւոյն մօտ՝ բոլորովին միաձոյլ կը Թափի բարձրէն, և անկմանը ձայնէն տեղն ալ կուրկուտ կը կոչուի։ — Վերջապէս Ճորոխ Հայաստանի գետ, քան զառաջինները աւելի կարճ և երագ ընթացքով, լիճ մը կազմելով անցնելով՝ կատարեալ ջրվէժ մը կը ձևանայ, և ինչպէս կը վկայէ գերմանացի բնագէնին մը, որ աշխարհիս երեք գլխաւոր մասերուն յայց եղած և զարմանալիքը դիտած է, բաց՝ ի Նիագարայի ջրվէժէն՝ գեղեցկութեան կողմանէ ուրիշ մը մերինին չի հասներ։ — Կ'ուզեմ հիմա այդպիսի գետոց մը վրայ նաւարկութիւն փորձել. մեր նաւակ մը Արդուինէն, որ Լազիստանի սահմանակից քաղաք է, ինչուան գետոյն բերանները՝ ի Պաթում, 6 կամ 7 ժամուան մէջ կրնաս իջնել. կ'ուզեմ դարձեալ Պաթումէն Արդուին դառնալ. նոյն եղանակով 6 կամ 7 օրուան մէջ կը հասնիս. — կը տեսնաս որ գետոյն յատակն շատ զառիվայր է, իսկ հոսանքն աւելի շատ երագ։ Ուսոյ մեծ բան մը պէտք չէ յուսալ Հայաստանի գետոց նաւարկութենէն. Թէպէտ և բաւական մեծութեամբ նաւակներ՝ կուրը և Եփրատը կտրելով անոնց խառնուրդէն վեր ալ կ'անցնին։

Սակայն Ճոնաց պատմահայրն մեզի կը ծանուցանէ, Թէ իր ժամանակն Հայք՝ Եփրատայ վրայ կէս բարբարոս՝ բայց հանճարեղ նաւարկու-

Թիւն մը կ'ընէին. իրենց երկրին և օտարին քեր-
քերը կը տանէին, մանաւանդ տեսակ մը արմա-
ւի գինի, զոլորաձև նաւակներով, որոնց կմախքը
կամ ներսի կողմը ուռենւոյ ճիւղերով և դուրսը
մորթով պատած էր, և ինչուան 5000 տալանդ[1]
կրնային վերցընել: Գետոյն հոսանքը Թոզլով՝
շատակ Բաբելոն կը հասնէին. իսկ դարձը ցամա-
քով կ'ընէին, ոչխ կերպով. նաւակաց հաստա-
տուն մասերը կը ծախէին, իսկ մորթը՝ հետերը-
նին նաւակով բերած իշոց վրայ դնելով, կը դա-
նային իրենց նաւահանգիստը, որ անշուշտ չէր
նմանէր Մարսիլիոյ: Թերևս քեզի ծիծաղելի ե-
րևի այս բանս, բայց աղուաբանն Երոդոտ՝ այդ
նաւարկութիւնը՝ Ասորեստանի մայրաքաղաքէն
եաև՝ բոլոր այն աշխարհին զարմանալիքներէն վեր
կը համարէր:

## Գ

Հիմա ջրերը մեկդի Թոզլով՝ մօտենանք հոլուն,
փութանք հասնիլ անգործարան արարածոց. և
երկրաբանական կազմութեանց քազմամանուած
պատկերը ձգելով՝ չանանք աւելի նշանաւոր ու
օգտակարապոյն նիւթերը քննել. և
նախ սկսինք՝ ի վաղուց ծանուցեալ ներկական ու
հոլային հանքերէն: Ո՞ր գեղապուծ էյարգեր Հայ-
հաը, որ կարմրագոյն հող մ'է, Լեմնոսի կաւուտ
հոլուն նման. և երկուքն ալ հիմա իր անուանքն
կը կոչուին. որոյ նման կաւ մը կայ և՝ ի Գաղղիա
Լուսաւ գետոյն երկու ափանցը վրայ, ՝ի Պլուա և
՝ի Սոմիւր: Ո՞ր պատկերահանին ծանօթ չէ Հայոց
հողը, այն կարմիր ներկը՝ որ որմնանկարուց խառ-
նըրդոց մէջ կը մտնէ: Թէ նկարիչք և թէ գեղա-

[1] Իւր 100,000 քիլոգրամ:

գործք կը յարգեն Հայոց փառը՝ թէոփրաստեայ օրերէն՝ իր գեղեցիկ կապոյտ գոյնովը Հանջցուած, և երբեմն գոձազմի հետ շփոթուած. որ և երբեմն խաղտա և չիկակարմիր կ'ըլլայ: Դարձեալ հռովմայեցի նկարչաց ծանօթ էր Արմենիա-Տասած հայկեան կապոյտ և Ներսէն, որով իրենց պալատներուն պատերը կը զարդարէին, և որոյ լիտրն վեց Ֆրանգ կ'արժէր: Իրենց անուանի քանդակագործքն՝ Սուսերամարտիկը ու Պետվեհերէի Ապոլոնը յղկելու համար, Նաքսոսցին աւելի Հայաստանի յղկաքարը (cotes) կը գործածէին, որ նաև մարգարիտներն ու ադնիւ քարերը յղկելու կը ծառայէր: Իսկ միւս կողմէն, այսինքն Յեսանաքարն Հայոց՝ Նաքսոսինէն առորին կը սեպուէր: — Հինեւրուն ծանօթ էր Հայաստանի ուրիշ կարծր քար մ'ալ, որ երկաթէն աւելի զօրաւոր նիւթերով՝ հնդոյ գրոշմը կ'ընդունէր: — Նախնիք կը գործածէին նաև հայկական Ոսկեմածոյը Crysocolla armeniaca, որ Մակեդոնիոյ ու Կիպրոսի մէջ եւս ալ ծնունդ կ'առնէ. բայց ափսոս որ հիմա անհետացած է, և չգիտցուիր ուր գանուիլը. բայց կարծեմ թէ տեսակ մը արջասպ էր, և նոյնն՝ ինչ որ Արաբացիք մեր աշխարհին անուամբը Պուրէի-էրմինէ կ'ըսէին: Դարձեալ ուրիշ տեսակ մ'ալ կը հանէին, Պուրա-էլ-էրմանի անուամբ, զոր մեր բժիշկներն հիմակուան Օլթիի վիճակին մէջ կը դասեն, (Ոսկեդէղի արջասպ): Մեր երկիրն այս տեսակ բերրց զանազանութեամբ այնչափ հարուստ է, որ շատ երկայն կ'ըլլայ մանրամասն խօսիլ անոնց վրայ. այս միայն բաւական կը սեպեմ ըսել որ Հայաստան ճոխ է նաև ամեն տզգ կաւերով, մետաղներով ու պայլեթով, որ Դիոսկորիտեայ [1] ալ ծա-

1 Բժիշկ և բնագէտ Անազարզեցի՝ քիչ առաջ քան զԺամանակ Քրիստոսի:

նօթ էլ. մանաւանդ ամեն տեսակ ու ամեն չեռով ալ խնամ առած կը գտնուի: Կոլքայ և Նախիջևանու ազահանքն՝ Նոյի որդւոց ժամանակէն՝ վեր կը բանին: Բարձր Հայոց երկու գաւառներն՝ ալի անունը կը կրեն, Դարան-ալի ու Մանան-ալի, որոնց ազահանքն ամենուն ծանօթ են: Ուրիշ մերձակայ նահանգաց գաւառները ալ նոյնպէս ալի անունովը կ'ըսուին Մարդ-ալի, Աղօրի, Աղտից ձոր և Աղնովիտ, ուր աղբեղք, վտակները և ալի լճերը բազմաթիւ են: Բայց թէ արդեօք ասանք ոլորիչ կամ սկզբնաւոր ծովու մը քաշուելէն, եթէ երկրիս հին կազմուածենէ կամ հրաբուխներէ ձևացած են. ասոր լուծումը կը թողում երկրաբանից:

Դիւրաւոր հանքաց մէջ ծանօթագոյնն է Ծը ծոմբը որ գետ Արագածու ծայրերը ոսկեգոյն կու փայլեցընէ. սև և ձերմակ նօսրը, կոպոչիներն կամ քարածխերը. որոնց հետ պէտք է յիշատակել նաև վանայ մօտ եկեղեցեաց մեկուն մէջ քարէ մը եղած եղը, որ հաւասարի սառեցուած բան է: — Հանքային ածխոյ նշաններ ուեանուած են ընդ մէջ լերանց Բարձր Հայոց և Արարատայ. և յայտնի գտուած Տայոց Ռշտունիք (Ծլերի) գաւառին մէջ: Մեր նախնի աշխարհագիրք կը յիշատակեն այս լերանց մեկուն մէջ, Էրզիսուսայ հարաւային արևելեան կողմը, նաւթի հետ մեկտեղ ուրիշ երկու նիւթեր ալ, որք մեզի անծանօթ են, բայց կարծեմ թէ հրային հանքեր են. կը յանձնեմ մեր հայրենակցաց քննել այն տեղերն և մեզի ծանօթացնել թէ ինչ են Զիղին ու Սալիկը. որոց մեկին գործէ ըլլայ նոյն ինքն հանքային ածուխն: Անոնց իմաստով կ'աւանդեմ նաև որոշել վանայինը, զոր շատք ժայռի լնելուելի տեղ կ'առնուն:

Իսկ ազնիւ քարանց նկատմամբ, մեր նախնիք

Ս.Լուսաւորիչները յարդի կը հաճարկին, առանց ո-
րոշ աւելորը նշանակելու. այլք կը յիշատակեն
յոպիոը, Թորգոմ գետոյն եզերքն, որ Կասպից ծո-
վը կը Թափէր: Մովսէս՝ սուտակն և ակն գահա-
նակը կը յիշէ Եւիլատայ եդեմական երկիրը, Փի-
սոնի եզերքը, որ ըստ մեզ է Ճորոխ, և Եւիլատն՝
Խալտիք մեր, ըստ Յունաց ընտիր մատենագրաց՝
Խաչէէ: Ձմռունանք նաև Արտածանուոյ աղբերա-
կանց մօտիկ Տիտոնի վտակաց ձևացուցած գե-
ղեցիկ և բոլորաձև ուրուագիծն այլ:

Իսկ հատարակ քարանց կողմանէ Հայոց լե-
րինքն անսպառելի հանքք են. նոյն իսկ լինքն մեծն
Մասիս միակտուր սև պորփիւրը քար մ'է, կա-
տարը ճերմակ փանթեթ պատած, որ անշուշտ իր
հինգ հազարմեդր ուղղահայեաց բարձրութեամբ
բոլն շատ աւելի վսեմութիւն մ'ունի, քան Շամի-
րամայ մեր լեռներէն կտրած կոթողը, զոր Ասիոյ
մայրաքաղաքին կեդրոնը կանգնեց, իբրև հին
եօթն հրաշալեաց մեկը: Այս քարանց քանի մի
կտոր կրնան տեսնուիլ և՛ Բարիզ Լուվրի գետ-
նայարկ սրահներուն մէջ, զարմանալի քանդակ-
ներով և աւելի զարմանալի արձանագրութեամբք
ծածկուած: Բաբելոն և Նինուէ մեծաւ մասամբ
մեր երկրին բնիկ հարստութիւններովն կանգ-
նուեցան ու զարդարուեցան. յայտ է թէ լինքն
ալ զուրկ չէր այդպիսի հինուածներէ: Թէ և ու-
րիշներէն աւելի աւերշտկուած ալ է, սակայն
դեռ ինչուան երէք հազար մեդր բարձր լերանց
գագաթան վրայ ալ բևեռագիր արձաններ ունի:
Խօսքս՝ մեր երկրին քարահատից երկարատա-
ւոմ ցուցակովը չծանրաբեռնելու համար, այս-
չափ միայն ըսեմ որ հոն հոլուն տիրող քարերն
են պորփիւր և պազալտ: Այս յետինս Սևանայ
լճին մատերը Գառնոյ խորաձորին մէջ հարիւր
մեդր բարձրութեամբ կոթողներ ձևացուցած է,

որ իրաւացընէ մոգական և վսեմ տեսարան մը կ'ընծայեն, արժանաւոր մեծոգի ախտրժակաց հակառակ Թագաւորին Տրդատայ, որ վախէց և անդընդոց վայ երկընցած սարսափի մը ծայրը շքեղ հովանոց մը կանգնեց, 'ի վայել Հայոց Օրմիզդին, իր սիրական քրոջը, «Ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխոյ»[1]. վրան տասնւրեք դար անցնելէն եաև գեանաշարժով մը կործանեցաւ. բայց իր մնացորդներն, գրեթէ ամբողջ կեցած՝ կը հաւատան մեզի՝ որ այդ դաստակերան Յունաստանի և Հռովմայ ընտիր կերտուածոց վերջինն էր: — Ա յս բնութեան և միանգամայն ա րուեստի կառուցած հոյակապ արձաններուն ան միջապէս մօտ՝ ուրիշ մ'ալ կայ, որ առջիններուն այդ երկու գերազանց առաւելութիւններէն զատ, կրօնից յիշատակարան ալ ունի վրան. և է մեկ, համ թէ լաւ ևս ըսել եօթն եկեղեցի և նեղքատփոր քարակուռ մատուռներ. որոց խոր միջնութեան մէջ ծածկուած մնաց երկար դարեր այն յանդուգն գեղարդն, որ մեր Փրկչին կողը պատուեց[2]:

Կը գտնուին 'ի Հայաստան նաև, թէ և քիչ ատեղ, մարմարիոն, ալաբաստրը և բիւրեղ: Բայց իր քարահատից բազմակերպ տեսակներն իր հրաբղխից բերքերն են, որոնք Արարատայ հազարաւոր եկեղեցեաց շինութեանը գործածուած են, և որոնցմէ դեռ կանգուն են մնացած քանի մը հարիւր, ոմանք ամբողջ ոմանք կիսակործան, սան, տանեւերեք գարերէ 'ի վեր. ժամանակ՝ փոխանակ մաշելու այս գեղին, ան, գորշ և դոյն զգոյն քարերը, կարծես թէ աւ աւելի կարծրացուցեր է: Բոլոր Աղթի և իրեն շրջակայքը մեծա-

1 Խոսրենայէ Բ. Ղ:
2 Աւոր համար կ'ըսուի Գեղարդայ կամ Արրի վանք:

10249926



մեծ չէնքերը այս քարերէն շինուած են. կան այնպիսի եկեղեցիք, որոնց շինուելեան մէջ ամբ մը միայն գործածուած չէ. թէպէտ և դիւրին էր այնքան կրային լեռներէն շաղախ շինել, բայց այսպիսի շինուածոց քարերը իրարու կապելու համար՝ երկաթի կամ կապարեայ ճանկեր և թիթեղներ կը գործածէին, և երբեմն գաւոնք ալ զանց կ'ընէին:

Այս տեսակ քարերն բնականաբար իրենց ծըննդոցը մոքերնիս կը բերեն. այն սարսափելի տիտաններըը որոնք երկրիս կողերը պատուելով մէկմէկ ծխաշունչ լեռ ձևանալով կանգնեցան կեցան: Այն մարած հրաբուխներուն համար կ'ըսեմ, որոնց մնացորդներն, ինչպէս նաև հանքային ջրոց առատութիւնն, մեր երկրին բնական կազմուածքին մէկ նշանաւոր կերպարանքը կ'ընծայեն. և չեմ գիտեր թէ կայ արդեօք ուրիշ աշխարհ մը՝ որ մերոյն պէս տակն ու վրայ հերկուած ըլլայ այն պղտուտնական ուժէն՝ որ այդ վիթխարի և տհաւոր եղելքները դրոշմած է իր վրայ: Գաղղիոյ Օվէռնեի մէջ Տօմի մարած հրաբուխները, գագաճներ են այն երեք ջորս հազար մեդր բարձրութեամբ հսկաներուն քով, որոնք թէ և շնջած են՝ բայց զօրութիւննին աւելի թարմած է քան թէ կորած բոլորովին. և իրենց ըրած աւերմանց հետքը, որ շատ երկար տեւնուան բան չեն, անարատ պահած են: Մեր աշխարհիքին մէկ զարմանալի ընդհմերևոյթն ալ այս է, որ եթէ պատմագրաբար նայելու ըլլանք՝ երկրիս ամենէն հինման է, և մարդուն բնիկ գաւառն. իսկ թէ որ երկրաբանօրէն քննենք՝ նորագոյն կազմուածներն մէկն է. և վերջի ժամանակներուն մէջ շատ մեծ խլրտմունք և փոփոխութիւն կրած է: Հրաբուխներէն բազմաց բունկիլը պատմական դարէ վերջը հանդիպած է, ինչուան կան ոմանք որ հա-

զար հինգ հարիւրէն, երկու հազար տարիէ վեր
չեն եկեր. և մինչև ցարդ յայտնի կը տեսնուին
լաւայի գոնդագոյն հեղեղներն, որոնք անձռնի
օձերու պէս ոլորուած են այն հրաբխէից բերդանա-
ցեալ վհին բոլորտիքը ու տորոնին: Նոյն իսկ
իրենց վրայի Թեփը, (եթէ ներքեն ինծի երկրա-
բանք այսպէս ըսելու), ամենևին կորուսած չէ
իրեն հին փայլմունքը, և մամուռն դեռ վրան քոս
չէ կապած: Մեր նախնիք աւանդութեամբ գի-
տէին Մեծ լերան փլչիլը, և Նոյ Մասեաց կո-
ղը մղոնաչափ մը երկայն բացուած իսոր պատա-
ռուածքը: Այն դժոխաձև վիհն չէ թէ միայն մեր
ազգային քերթողները ապշեցուցեր էր իր ահար-
կուելիքովը, հապա Պայրընի և Սուվէի նման-
ներն ալ. վասն զի այս Նոյեան տապանի որդւոց աչքերն,
որ քան զերկրաբանից աւելի Թափանցանց ու
հեռատես են, գուշակեցին թէ Մասեաց ծոցը
դեռ մեծ եռացմունք կան. որ և յիրաւի նոյն
1840ին յանկարծ դուրս պոռթկաց արձակելով
ծուխի սև ալիքներ, շաղախ, քարեր ու ջուր, և
բոլոր Արարատայ դաշտը դողացընելով: Այն-
չուշ այդ միջոցին այն սրբազան գագաթանց վը-
րայէն հեռացեր էր հրեշտակին Քնոյ, ուր որ մեր
գարուս արձակաբանից հոմերոսն, Արտիւրո-
սաց երգիչն (Շատոպրիան) աղուաքար հաներ
կեցուցեր էր զնա: Վանայ լճին արևմտեան դին
եղող լերանց մէկուն վերջին հրդեհումը 1441ին
կը յիշատակուի. նոյնպէս Սիփան, որ նոյն լճին հիւ-
սիսակողմը վեմ կոնաձևով գրեթէ չորս հազար
մեդրէ աւելի բարձր ցցուած է, դեռ ծծմբահոտն
Թեթև ջոգի մը կ'արձակէ. — արևելեան կողմը՝
Վարագ, օտար չէ պղտուտնական կազմուածքէ.
նոյնպէս Հարուսակողմը դեռ այս տեսակ նշան-
ներ ստուգուած չեն՝ ի ձանապարհորդաց. բայց
ի դարուն վերջերը այդ կողմերը քնակող Հրդ-

նաւուր մը, Գրիգոր Նարեկացին, Հայաստանի Ս. Բեռնարդոսը, իր տաղերէն մէկուն մէջ հրաբըղխային բոլբոջման աղօտ նկարագրութիւն մը կ'ընէ. « Լերինս ահին խոր վիհ 'ի վեր, ծափին » 'ի նոյն ջուսպ յորձանից. Հրակոծ լերանց անձկին 'ի տապ բոցն 'ի ծաւալ ծով խոր հեղձաւ. » Ձապաղ ձեռով դարձ նոյն 'ի դարձ խաղայր » փուխայր 'ի տեսանել »[1]: Արդէն մեր նախնիք Քրիստոսի Թուականին առաջին տարիները այս լերանց մէկուն վրայ կը ճանչնային « տուն կրա- » կի, անյագ հրոյ, անդադար այրման աստուա- » ծոյն, և քարինս հոսեալ յանկն յորդաբուղխ » աղբերն... քանզի վառեին զկրակն՝ քոյրն, և » զաղբիւրն՝ եղբայրն ». Թերևս վասն պայծառութեան կրակը այլաբանելով 'ի քոյր: Ուրիշ կողմանէ գիտենք որ աս ծովակին ջուրերը աւելի լեղի են քան թէ աղի. մանաւանդ եզերքները աննանկ խառնուած են բորակային բաղադրութեամբ՝ որ կաւաններըը լուալու կը գործածեն: Իսկ Սեւանայ լճին՝ քնաւ տարակոյս չկայ հրաբղխային կազմութեանը վրայ. կրնանք ըսել թէ հրաբղխի խառնարանաց մեծագոյնն է, սեպաձեւ և կոնաձև քարաւեղներով շրջապատած, որոնցմէ տաստուերկուքէն աւելին իրենց առանձին բաժանմունքներն ունին ջրով լեցուած կամ պարապ: Ասոնց եռին կը բարձրանայ դէպ 'ի արևմուտք վիթխարին Արագած (ռամկօրէն Ալագէզ), բոլորովին զատ առանձնակ, և Հայաստանի լեռներուն ամենէն լայնանիստը և ստոյգ չափուածներուն մէջ բարձրագոյնն՝ Մասիսէն վերը, որուն հետ, ըստ Ախդերայ աշխարհագրին դեղեցիկ մտածութեանը, կը ձևացընէ մեծ դրան մը երկու կամարակալները, ուսկից կ'անցնին գան-

[1] Տաղ Հրոտհեւաց:

գնախ եզերքներէն դէպ՝ի Պոնտոս ու Կովկաս ձգ-
նապարհորդել ամենայն կարեւորանք: Արագածու
կատարը ջրոս գագաթ ձկքուած ու ցցուած է,
որոնք իր խառնարանին եզերքը գիտակ կեցած
են, և այնծառ ծծումբ ունին կոզերնուն վրայ:
Կ՚երևի թէ Քրիստոսի Թուականին առջի դարե-
րուն մէջ դեռ ասոր պատուածքներէն ծուխ
կը ցնդէր. վասն զի ծդ դարու դիւրահաւատ մա-
տենագիրներէն ոմանք կը պատմեն թէ լերան խո-
րը քարանձաւ մը կայ, ուր մեր Լուսաւորիչն
մատուռ մը շիներ ու կանթեղ մը կախած է, որ
ինքնուրեան՝ի կատարած աշխարհիս վառ պիտի մը-
նայ: — Մօտերս բրուսիացի ճանապարհորդ մը
Հայաստան հիւսիսէն հարաւ քալելու առեներ,
երեք գիշեր եռուզ եռուզ տեսեր է Արարատայ
լերանց վրայ ցոլացեալ լոյս մը. տեղացիք ան-
կայ սեպեր են հաւատալ նշան մը գեռնաշարժի
Պարսկահայոց մէջ, և յիրաւի նոյն օրերը Դա-
վրէժ շարժ կ՚ըլլայ: Ան նահանգը որուն շահա-
ստանն է այս քաղաքս, միշտ Արտաւտական ա-
նունը կրած է, որ կը նշանակէ փեղի կամ ան-
հոյ, և ունի, ուրիշ լեռներէն զատ, Սաւալանի
հրաբխային սեպուհը, որ գրեթէ Սպիտակ-լերան
չափ բարձր է: — Բայց Հայաստանի և բոլոր յա-
ռաջակոյնն Ասիոյ մէջ ամենէն կենդանի հրաբըղ-
խի զօրութիւն և նշան ունեցող լեռն է Թանդըրէկ
(գուցէ Թոնրակ կամ Թոնդրակ ըսած նախնեաց)
իբր 10,000 ոտք բարձր, Պայէզիտ քաղքէն երեք
կամ չորս փարսախ հեռի դէպ՝ի Վանայ ծովը.
որուն գագաթը ամենևին նման է Վեսուվի, բա-
ժակը շատ ընդարձակ և խոր, յատակը մեծամեծ
քարինք և բիւրեղացեալ ծծումբ, և շատ տեղէն
անդադար ջրային և ծծմբային գոլորշիք կ՚ելլան:
Լերան մէկ կողմը կայ ուրիշ բաժակ մ՚այլ ջրա-
լից. և անոր մօտ տեղ մը մեծ շրշմամբ պղպիւ-

10249926



ըաբար շոգի կ'ելնէ, ուր կ'երթան թժշկութեան համար: Աւելի զարմանալի յատկութիւն մ'ալ է (Նարեկացւոյն բառով ըսելով) ընդհանրին որոտմունքը, որ լերան փորէն կու գար երբեմն երբեմն, և Ամերիկայի Անտեսյց հրաբղխից (պրոֆիպոս, պոռոչիւն) ըսուած ձայներուն կու նմանի: Ուռւսք և Օամանեանք երեսից վերջին պատերազմին առեն՝ Պայէզիտու երկու կողմը բանակած, գիշեր մը յանկարծ որոտմունք լսելով՝ կարծեցին Թնդանօթից ձայն, և մէկէն զինուած իրարու դէմ ելան. ինչուան որ խնացան բնութեան գաղտնիքը:

Քանի վեմ և ահաւոր պէտք էր ըլլար Հայաստանի երևոյթը քանի մը հազար տարի առաջ, երբ նեղքին ծովերով ակօսեալ, յաւաջակոյսեան Ասիոյ բարձրագոյն տափարակին վրայ անկուած հարիւրաւոր հսկայ հրաբուղխներէն, իրարև բնութեան լապտերներէ, բարկաձայթ բոցեր կը ծաւալէր այն նորածին ժողովուրդներու վրայ, որ դեռ անատոյգ քայլերնին չարժել կու սկսէին դէպ 'ի անծանօթ երկիրներ:

## Դ

Անցնինք հիմա այս կինճառտ կերպարանքներէն՝ անոնց բուն ծոցը. բայց ես չեմ ուզեր, Հայկակ, Պիսիդոնի երեքժանուոյն հարուածներովը քեզի Պլուտոնի մէնինգաղանիքները ցուցընել. չեմ ուզեր և ոչ իսկ կրնամ դիմացդ դնել ինչ որ բնութիւնն ծածկած է իրեն աշխատանքի մէջ, ուսկից աշխատասէր իմաստուն՝ հաւատար համբերութեամբ և ճարտարութեամբ ճոխացած՝ խղճմտակի մը ձեռքով խաւարային անդունդներէն գուրս կը հանէ կը մէկ պիտանի ջուրը: Միայն Հայաստանի վե-

10249926



առաջական հարաւութեանը վրայ քիչ մը կ'ուզեմ խօսիլ, և հոս ալ նշանաւոր երևոյթ մը պիտի տեսանեմ: Սկսինք ամենէն յարգի հրահանգէն:

Զարմանալի բան մ'է որ ամեն մեռած առաջ յիշատակուած է ոսկին աշխարհիս առաջին մետաղն ալ: Աստուածաշունչ գիրք Եւրատայ ափնիւ ոսկին Փիսոնի ափանցը վրայ կը ցուցընեն, որ է Եդեմայ առաջին գետը, զոր կ'անուանենք Ճորոխ. այս գետոյս պատած երկիրն է, ինչպէս առաջ յիշեցի, մեր Խաղտիքն և Ցուռնայ Խալիբացածը. և թէ որ հիմա չի գտուիր հոն ոսկի, մի զարմանար. վասն զի Մովսեսի և մեր օրերուն մէջ 3400 տարիէն աւելի անցեր է. բայց անտարակոյս կը յիշեա Արգոնաւորդները՝ որ Մովսեսէն երեք կամ չորս դար եռքը այս կողմերս եկան ոսկի գեղմը յափշտակելու, զոր ես ալ կը հաստատեմ նամ ոսկեհանք. կը յիշեա նաև որ քանի մը դար վերջը բանաստեղծներուն հայրն՝ արծաթաճոխ Աւխեբեայ Աւկսոնները մէջ կը բերէ, զոր հիմա կուան հեղինակք կ'իմանան Արգինոխոէէ (Ճանիկ) և բուն Խուէէը (Խաղտիք). այս բառս յունարէն կը նշանակէ հանք (երկաթի) և հանքեղուն վրայ աշխատողները: Մինչև հիմա գետս արծաթ կը հանեն հոն Կիւմիւշխանէի (Արծաթահանք) և Խափերայ մէջ, որ է մեր Սպերը և Սորբոնի Սէոբէրտէան: Ա, յս երկերս իր ոսկեհանքովը ծանօթ էր նաև մեծին Աղեքսանդրի ժամանակ, որ մարդ ղրկեց հոն ոսկւոյն համար, բայց տեղւոյն բնակիչներն վրանին վազելով ապաննեցին: Նմանապէս ջ գարուն մէջ այն կողմերը Փառանգի ոսկեհանքը հակառակութեան առիթ էր Սասանեանց և Բիւզանդեանց մէջ: Ի՛ գարուն Ճահատարհորդներէն մէկն կ'աւանդէ մեզի, որ նոյն իսկ օսմանեան կառավարութեան ատեն ալ, Սպեր

րի ոսկեհանքն կը բանէին, և եռքը ջրով լցուելուն համար՝ հարկեցան թողլու։ Նոր ատենները քանի մը երկրաբաններ ստուգեցին որ կարնոյ լեռներուն կազմուածքն նման են Ալտայի լերանց, և յաւարակուսեցան որ հանքեր ալ պիտի ունենային, բայց աւելի չհնտռեցին։ Ցիշելու է որ կարնոյ գլխաւոր գեղերէն մէկն Ալծաւնէ կ'ըսուի։ — Մեր հինգերորդ գարու ազգային պատմիչք կը խօսին Արտաշատայ ոսկեհանքերուն վրայ, առանց տեղը ցուցընելու։ — Հայաստանի Կուր գետով ոռոգուած հիւսիսային արևելեան կողմը, գոր են Ռուս վերակացուք Թէ հանքաց և Թէ գետոց մէջ ոսկւոյ քանակներ։ Ա.յս տեղերուն աշխարհագրական անուանց մէջ ալ շատ կան ոսկի նշանակողք։ Նոյնը հաստատեցին նաև արևմտեան Հայաստանի հանքերն. զոր օրինակ, անցեալ դարուն սկիզբը, Ոդզերի Ճանապարհորդութեան ժամանակ, Արղանայի մէջ ոսկի ալ կը հանէին։ — Արդէն յիշած արծաթահանքներնուս վրայ աւելցընենք Ատրպատականի և Քիւրտիստանի մէջ յայտնուած հանքերը, որոնք քանուած չեն։ Մահադի խալիֆային առէն (775-785), ժամանակակից պատմագիր մը կը վկայէ որ Հայաստանի մէջ զուտ արծաթի լեռներ գանուած են, բայց որոշ տեղը չի նշանակեր։ — Աւտա են՝ի Հայս պղնձի հանքերն, մանաւանդ Գուգարաց աշխարհին մէջ, որ Գոգայ և Մագոգայ նախնական երկիրն է, վերին Կուրի հոսանաց վրայ. բովանդակ լերանց շարք մը Պղնձահանք անուանը կը կրեն, և գործաւորներ միշտ կը բանին. նոյնպէս կը գրտնուի պղնձի՝ի Գարապապաղ, Արղնի, Սպեր, և Մոկաց գաւառը՝ի հարաւակողմն Վանայ լճին։ Երկաթն աւելի առատ է և գանազան տեսակ, մանաւանդ հարաւային Հայաստանի մէջ. յիշեալ լճին արևմտեան հարաւակողմը կայ Երնխոհոպ և կո-

պարահապտ ըսուած լեռն : — Կապարէն վար Հայաստան կ՚ընծայէ կամ կ՚ընծայէր ցինկ, Ջնդեղ, պաոիկ, անագ, և այլն :

## Ե

Դառնանք հիմայ քննելու մեր երկրին երեսը և գործարանաւոր արտադնելը : Երկրին ձևակերպութիւնն և կլիմայն, ինչպէս որ առանք, մեզի բարգաւաճ բուսաբերութեան մը յոյս չեն տար, մանաւանդ մեծամեծ և թաւ ծառերու : Պոնտոսէն՝ Պարսկաստան գնացողն ճամբուն վրայ գրեթէ բնաւ չի տեսներ անտառ մը կամ բարձր ծառեր, այլ թուփեր, մացառներ և հազիւ ուրեք քանի մը ծառ մէկտեղ : Բաւեն՝ Արարատայ մեծագոյն դաշտն՝ ուր Երասխ կը սկսի իր ընթացքը, ի հնուց Անթայպ կ՚անուանէր. քնակիչք երկրին՝ փայտն աւել նրբենց սան վառելիքը անասնոց աւելորդքը կը հոգան. քայց տուներնին ալ սովորաբար կէս սառներկրեայ ըլլալով՝ բլրի մը կամ բարձրադիր գետնի մը կող թաղուած, ցըրտէն կ՚ապահովին : Գաւեռափոնի տուած նկարագրութիւնն այս աներոյն վրայ՝ յետ 23 դարուց հիմա ալ կը տեսնուի : Շրջակը խոտովանելով, փայտի պակասութիւնն ոչ այնքան քնութեան՝ որքան քնակչաց անհոգութենէն է. վասն զի նոյն հեղինակն և Կ. Կուրտիոս և այլք կը յիշեն ծառառս լեռներ և տափեր՝ նոյն Երասխայ գետեզեկ հովտին մէջ, զոր Հռովմայեցիք հասնելով կը կոչէին Երասխեան դաշտեր (Campi Araxeni) և անկէ բարեբոյս էին գտներ Աթոյ մէջ. այնչափ մըշակութիւնն մեր նախնեաց տուեն կրնար կոկել շակել զանհարթութենա քնութեան, եթէ այս գեղեցիկ դուստրս Արարչին՝ կրնայ անհարթու-

Թիւն մ՚ունենալ: Հիմա ալ կը գտնուին անոնք ՚ի Հայաստան. և այդ Անփայտ Բաւեղոյ մօտ՝ Սօղանլուս լեռներն 20-25 փարսախ երկայն տեղ ծածկուած են պէս պէս տեսակ եղևնեօք, տաշեաց և Թեղջնուք, յորոց ոչ միայն բնակիչք կոլմանցն, այլ և պետութիւնք Օսմանեանց և Ռուսաց փայտ կը կտրեն ՚ի պէտս շինուածեան ամրոցաց, որ Հայաստանի մէջ իրարու դէմ կանգնած են. (վան զի դ գարէն ՚ի վեր աշխարհնիս ոչքան լի բազդ մը ունեցեր է՝ ըլլալու միջասահման, կռուատեղի և որս երկու նախանձորդ և դիմամարտ սիրապետաց): Այս լեռներէն կտրեց Հուլաղանի որդին իր Ապաղա բերդին հիմնարկութեան նիւթերը: — Սօղանլուի արևմտեան կոլմին են մայրևղը լերինք Տայոց, (Դաոէ Հեղլենաց) ոչք կռուեցան ընդ. գնդին տան հազար Յունաց, որոց առաջնորդ էր Սուկրատոյ բարեկամն Քսենոփոն: — Արևելեան կոլմին, ուր Սիւնեաց և Արցախ աշխարհներն մայրուտ և մացառուտ են, որոյ համար ալ հիմա Գոլա-պաղ կ՚ըսուին. (լճերև Աղ-ցախ ալ նոյնպէս իմաստ մ՚ընծայէ): Արևմտեան կոլմին՝ Բարձր Հայոց և Ծոփաց միջոց շատ անտառներ կան, նաև կաղնեաց և ընկուզենեաց: Իսկ հարաւակոլմին ուր երկրին, Տիգրիսի հովտին և Վանայ պարտատափին միջոց, մանաւանդ այս եալքինիս հարաւային և արևմտեան կոլմերն, այնքան անտառուտ է, մինչև ուր նախնիք փայտ-աշխարհ կ՚անուանէին Տիգրիսի և Վանայ անջրպետող լեռնավայր սահմանը: Նոր Ճանապարհորդք այդ անտառաց մէջ գտան տեսակ տեսակ կաղնի ծառեր, որ ինչուան հիմայ անծանօթ էին Եւրոպէացւոց, և ուրկէ իրենց երկիրը տնկելու: Այս անտառներէն կու գայ ալնուապոյն Գալնոն և Գոպալէն, զոր օդոց մեկը կ՚անուանեն կամ՝ մանանայ. և անկէ՝ Տարօնոյ երկիրն, որ է այժմեան

Մշոյ գաւառն, Մեղրաբուղիս կ'ըսուէր։ — Ա-
րարատեան լերանց վրայ Թխտենեաց պուրակնե-
կան ինչուան 7800 ոտք բարձր տեղը, և գԻՀի
ծառեր ինչուան 8200 ոտք բարձրութեան վրայ.
նակ Թխտեաւոյ ծառեր՝ ալ աւելի բարձր կը գըտ-
նուին. մինչդեռ յԵրասխ ոչ և է սահմանի
տակ՝ այդչափ բարձր տեղ սովնևին ծառ չգըտ-
նուիր։ — Գուգարաց երկիրն մեր նահանգաց ա-
մենէն հիւսիսագոյնն, ամենէն ալ ծառատ և շա-
տաբոյն է, իր խորանիստ գրկին համար, Կուրոյ
գեղեցիկ պարահովտին մէջ. կարմիր և ձերմակ
կնճնիք կ'աճեն հոն ընդ կաղնի, հացի, պտղի, և
ուխտիէս եղևին ծառոց։ Մեր ե գարուս օրինակա-
գիր հեղինակն աշխարհագրութեան՝ կը յիշէ հոն
ոտտախի ծառն և հաճարատծառ ալ։ Նոյն հեղի-
նակն (Մովսէս Խորենացի) կը յիշէ Արարատոյ
մայրաքաղաքին, Արմաւիրոյ, վեմական ասկինե-
րը, որոց աերևոց ոսոտիւնն՝ հմայից ազգութիւն
էր մեր նախահարց. մեր աստիներս կարծուեցաւ
Թէ այդ ծառերուն մեծամեծ կոճղերը յայտնուե-
ցան հողուն տակ՝ այն տեղուանք, ուր երբեմն կը
մտեներ Երասխ, որ տեսնել կեղեքուկ քան զը-
ժամանակին՝ յետ քառասուն դարուց փոխեր է
իր ալեաց ընթացքը և հեռացեր 'ի բնակարանէ
տղոցն Հայկայ։ Ա.յս տեսակ ասկինեերէն դեռ
հատ մը կենդանի է և ամբողջ հրապարակի մը
կէս կը ծածկէ յՈրդուատ, հին քաղաք՝ մօտ քա-
րավանին Երասխոյ. քանի գեռնէն երկու մեդր
վեր տան մեդր շրջատատ ունի։ Արդ կարծուիլ
Թէ արևելեան ասկին տեսակն էրայ Հայաստա-
նի. յայտնի է որ Հռոմայեցիք մտուցին այս ծա-
ռը յարևմուտս։

Ա.յս աշխարհակալ ազգին վրայ ընկնալով խօս-
քերնիս, յարմար կը տեսնեմ յիշել հոս, որ ի-
րենց աշխարհակալութեան ատենները ասացուած-

*ներքեն մեկն էր օտար երկրի բերքեն ընտանեցը-նել: Հայաստան ընծայեց անոնց ուրիշ բոյսերէ զատ գՕՒէրանն, որ դեռ Իտալիոյ մէջ իր անուշամբն ապրենիճգա կ'ըսուի. և լատիներէն* malus armeniaca (*մալուս արմենիճգա*), *այսինքն հայկական խնձոր. որ կ'երևայ թէ նոյնն է զոր Պլինիոս սա-լորոց մէջ կը դասէ, և անուշահոտութեանը համար նախագաս 'ի սալորս: Ի՞նչ ըսենք Հայոց խնձորոյն համար, որ այնպէս անուշանի էր Աբրա-քացւոց մէջ, մինչև իրենց բանաստեղծներէն մէկն՝ արշալուսոյ մեկհատիկ նմանութեւն կը գտնէր օլիմպոսի մը՝ հայկական խնձոր խածած: — Ընդ-հանրապէս ամերիկական համել պտուղք առատ են մեր երկիրը, և ամեն տեսակն ալ կը գտնուի, բայց 'ի Թիֆլիս և 'ի Քիթապտղոյ. ասկայն ամենք այլ հարաւային և ցած կողմեր անծանօթ չեն:*

*Իսկ մահացուաց ամերոսեան օշարակ առնուլ ծաղն. — որմէն՝ առաւել քան զհատարակաց կարծիս կը յայտնի 'ի Հայաստան. որովհետև բու-սաբերութեան ահմանագիծն շատ բարձր է 'ի Հայս, երկիրն կը բերէ ալէկ խաղող, որոյ և ա-ռաջին հայրենիքն ալ եղաւ յետս ջնհեղեղին: Ե-րախայ պարտհովանին մէջ ընտիր այգիներ կան. և Երևանայ գինին նարինջագոյն, քաղցր և մշկա-հոտ՝ Սպանիոյ, Ունկարիոյ և Պուրկունեայ լաւա-գոյն գինեաց հաւասար կը սեպուի: Անվարժից խրատ կու տամ գանձակայ գինին շատ չփոխել, որ թէ և անուշահամ՝ սասանիկ զօրաւոր և գըլ-խահար է. խակ Գարապաղլի գինիներն անոյշ և գրեթէ եղտա են: Տապանակիր լերան վրայ, յԱ-կուռի 4000 ոտք բարձր տեղ մը, յանյիշատակ ժա-մանակաց՝ այգի կը մշակէին 'ի յիշատակ այգե-գործութեան Նոյի. այն լերան բլրոց մէկին հին առեն գինոյ բլուր կ'անուանէր, վասկ մ'ալ Գի-նեգոյն գետ: Վանայ ալաբատաւին ալ ինչուան 1700*

Մեզը բարձրութեան վրայ դեռ այգինեը ուշի ուշ եւրկայնութեայզ իսաղալ կու տան, բայց չեն հասնիր ինչպէս Արարատեան: Կարնոյ բարձրաւանդակին ոչ այգի ունի և ոչ պտուղ. որոնց պակասութիւնը կը լեցնէ իրեն Ճորոխայ հովտին Թորթում վիճակին. բայց անոնց փոխարէն կը բերէ ազնիւ արմանիք. իսկ Սևանայ պարտեզային աւելի բարձրագոյն ըլլալով՝ ասոնցմէ ալ զուրկ է: — Ցորենն ընդհանրապէս ընտիր է, և կայ մեծահատ տեսակ մը, որ և շատ կպչուն կամ տուաձիգ կըսուի կու տայ: Որ ազգային պատմագէտ չի յիշեր «արգաւանդ և բերրի... Շիրակայ ամբարքն»: Ուրիշ տեսակ արմանիք ալ լաւ և առատ են: Իսկ բանջարեղէնք և խաւարտք, Թերևս ամեն տեղէ աւելի պատուական և բազմատեսակ. 300 տեսակէն աւելի կը համրուին բնիկ տեզական անուամբք:

Հայկական Փլորայն շատ հոգ ջոնեենալով պարտիզաց և ջերմանոցաց, աւելի վայրենի ու իսպան տեղուանք կը սիրէ. իր լեռնային բուսաբերութիւնն պէտք է բուսասիրաց համար շատ հետաքնելի ըլլայ: Վերջին սահմանի բուսաբերութեան՝ի Հայս 4000 մեդրէն աւելի վեր է. անկէց ալ բարձր՝ միայն մեծին Մասեաց վրայ կը գըտնուին գեղասատիկ (aster pulchellus), մկնասիրտ քնքոյշ (astragalus mollis), կանթեղնիկ քարաբոյս (campanula saxatilis) և այլն: Հըրաշակառոյ բուսասէրն Բիդոն Դուռնըֆոր՝ որ անցեալ դարուն սկիզբները կը ճանապարհորդէր՝ի Հայաստան, չէր դժուարեր դրախտին նշանները տեսնել՝ի կարին և յԷջմիածին. այնքան զմայլած էր այն կողմերուն հարուստ և գեղեցիկ բուսաբերութեան վրայ: Հիմակուան բուսասէրք և ջրլապայիկք Թէպէտ և այդչափ չեն զմայլիր, բայց ուժգոհ ալ չեն: Ասոնց նշանած ծաղկանց

մէջ, էեմ գիտեր ծր ցեղին մէջ գտաեըս է Աղբէ-
բաց-ալէն ըստաած գեղեցիկ ծաղիկն փոքը և վար-
դաձև, և այնպիսի վառվռուն Թանձր կարմիր
գոնոով՝ որուն նման մը չեն գտած ականատես
վկայք. Թերևս աւելի դիւրին հնարք մը գտած է
ձեր միջին դարու գուսանաց մէկն, իր սիրեւլոյն
նմանցընելով այդ ծաղիկը.

« Ա՛յ աղբեւրաց արուն՝
Որ բուսար մէջ քարերուն,
Աչուիդ՝ ի նարկիզ նըման,
Մէկն՝ ի քուն ու մէկն արթուն »:

Ինչպէս անուն և երգիչն կը յայտնեն՝ այս ծաղիկս սովորաբար կը գտնուի աղբեւրաց եզերք քարերու տորեր. և անշուշտ եթէ ծանօթ ըլլար հին-ներուն՝ Ովիդիոսի այլասիրպուԹեանց գեղեցկագոյն նիւԹ մը կ'աւելցընէր:

Պէտք չէ մոռնալ նաև խոտերը և բժշկական բոյսերը, զոր Հայաստան կ'ընծայէ, և հին տաեն աւելի ալ առատապէս կ'ընծայէր գեղագործ-ագ. գրեԹէ բոլոր Գալիենոսի և Դիոսկորիդայի գործոց մէջ յիշուած և հայերէն Թարգմանուած բոյսերն՝ իրենց բնիկ ազգային անուններն ունին մեր լե-զուին մէջ. ըսել է որ մեր երկրին մէջ ալ ծանօթ էին: Ի գբօսանս բանասիրաց յիշենք զՄանրագորն և զՓէնոանա, որոնց՝ հայկական եակոբլասպետ հե-տևողքն՝ զարմանալի յատկուԹիւններ և կիրառ-բանք կ'ընծայեն: Ջմռուռնանք հոչակաւոր Համա-ոպրամն կամ Համաոփիոռն ալ[1], որոյ ցօղունն 12

1 Ըստ բժշկարանաց՝ Համասփիւռն կը գտնուի 'ի Բա-սեն՝ Հասանգալէի մօտ, և 'ի Սուրմառի: Հուն ամսոյն 23ին կը բուսանի և կԹոց (քաղոց) ամսոյն 27ին կ'անցնի. որ ըստ անչարժ տարւոյ աշնան և ձմրան միջոց է. բայց որով-հետև ցուրի տանուտէրուԹեան տաեն փնտռել կը հրա-մայէ, մայիսի մէջ պիտի ըլլայ ծաղկելն:

ձիւղ կը բաժնուի ի՛րարէն. և ծաղիկները զանազան գոյն ունին միկմիկ պայծառ. այս բոյս քարոտ լերանց տորերը ծածկուիլ կը սիրէր, և ոտքէ մը օր մը կը յայտնուէր գիշերանց լուսնի լուսով. շատ սեաւակ զօրութիւն ունէր, ինչուան որ բամուռութիւն ալ կը պարզևէր. և հեղինակ մը վկայեր է պարզմտութեամբ թէ այս բոյս «գըտայ, և չայն փորձեցի. երանի՛ է նմա որ գբայրին գործէ»: — Հռովմայեցիք Հայաստանէն և Պարսկաստանէն մեծ փափագով և տակաւ կշխուքով կը գնէին լաչէրբէյոմ կոչած բոյսը, որ հաւանօրէն է ոպան ըստ մեզ, և անոր խէժին՝ անգոնթափ, թէ և չարահոտ. գուցէ և հայկական ազնիւ խոնդբէղն ըլլայ:

Մեր երկրին անուանի և անծանօթ բուսոց մէջ յիշենք ազգայնոց՝ փնտռելու հայկական ընկոյզը. ստացը, որուն կուրքը Վիտինեբուն օրսյուցին մէջ նշանակուած էր յունիս ամսուն, և կ'ըսուէր թէ Հիթապտոլոս նման է. (միթէ փշաւոին է, որ շատ հասարակ և սեփհական է Հայաստանի, համ ծուսոլենին): — Ցեսին կարգ բուսեղինաց Խոփ և Սէպէտ անուանի են՝ ի Հայս վան ընդարձակ մարգաց և արօտից, որ տարուէ տարի կը անուցանեն միլիոնաւոր ոչխարներ, և կը սկսին սեբելի դէպ՝ ի հարաւ և յարևմուտս մինչև՝ ի Սատմալ: Այս մարմանդքս և արօտքս հազարաւոր տարիներէ՝ ի վեր կը քաղեն կը բերեն՝ ի Հայաստան բազմութիւն հովուաց ջրջակայ կողմերու և վրանաբնակ տոհմեր շատ հեռու աշխարհքներէն: — Խոտերու մէջ գտանիք սեաւակ մը սէզ հայկական (բիմբինելլա, pimprenelle), համ մանուածանգ ձաղձաց-մատնիկ (dactylus litoralis) որ կը սնուցանէ ամենէն ընտիր և ամենէն հին ճանչցուած ոչխն կորմրոյ, հռչակեալ իր շատակեալ գոնութեն, որով Թագաւորաց ծիրա-

նիք և հրովարտակք կը ներկուէին, զոր կը յիշէ և Դիոսկորիտէս: Արաբացիք իրենց տիրապետութեան ատեն այս որդը կամ կարմիրը մուծին յԵւրոպա. հիմա Ռուսք անկէ շահ կը քաղեն. և դեռ Էջմիածնի կաթուղիկոսաց կոնդակներն կը գրուին այս Արարատայ նշանաւոր բերքով, որուն նմանը յԵւրոպա կը գտնուի միայն Իսպահան, և յԱմերիկա՝ Մեխիկոյ. ուրիշ ամեն ցեղ որդերն կարմրոյ (որոց յիսունն չափ տեսակ կայ) շատ արժէք չունին:

## Զ

Այս պզտիկ որդը մեզի առաջնորդ առնելով՝ բուսական ցեղատեսութենէն անցնելու Իկենդանականն, բնականապէս նախ իր կարգին կուգայք. և անտարակոյս կրնայք գտնել Հայաստանի մէջ քանի մը նորատեսակ միջատներ և մանաւանդ պատենաթև ցեղէն: Գերմանացի բնագէտ Ֆաբրիսիոր[1] մը հազարաւորներ ժողոված է ատոնցմէ և իր աշխարհին զանազան բնատարածութեան հաւաքատանիներուն բաժներ է: Իր հայրենակցաց մէկն այլ[2] Հայոց արևելեան նահանգաց մէջ կը նշանակէ տեսակ մը մեծ Ճպուռ, որ իր Ճուռոլմամբը կրնար մրցիլ Թէոկրիտեայ արնգափոլից հետ: — Այս կարգի կենդանեկաց Թագուհին Մեղուն, կ'ընծայէ մանաւանդ յԱյրարատ և Իգրաւակողման գաւառս՝ իր պատուական վատակը, որ մեր երկրին գլխաւոր վաՃառց Թուականց է: — Շերամ որդոյ գործմանն

1 Վ. Կներ:
2 Գոլեհնադէ:

շատ հին չէ մեր երկրին մէջ. հիմա կը յաջողի Կազբիսականին մօտ գտածուց մէջ:

Ուրիշ և բարձրագոյն կարգ մը կենդանեաց, Ձկանց, արժանի է մասագրութեան, թէ և մեր աշխարհն շատ քիչ կամ թէ բնաւ չունի ծովեզերք: Լոդէն ( Saumon ) մարդաչափ մեծութեամբ՝ Կազբից ծովէն գալով վեր կ'ելլէ Երասխայ և Կուրի մէջ, և այնքան առատ՝ որ միայն ձուերը կը հանեն ազնիւ աղկիթ ( խավիար ) շինելու համար, և մնացը կը թափեն: Հայաստանի ամենէն հատարակ և ծանօթ ձուկն է Կարմրախայտ, որ ամեն գետոց աղբերականց մէջ կը վխտայ, և ինչուան Եփրատայ 9000 ոտք բարձր ականց մէջ, 'ի Կարին: Երասխ կը բերէ երկայնաձև ձանաձը, և Թանձրամարմին Լոխը, որ Եփրատայ և մանաւանդ Արածանւոյ մէջ շատ վիթխարի մեծութեամբ կը գտուի և նմանպէս կ'անուանի, իբրև կէտ ձուկն: Նոյն տեսակէն կարծուի թէ գտուին Հատջախայ փոքր լճին մէջ, որ շատ ձկնատ է. մինչդեռ անոր մօտ՝ Վանայ ալի ծովին՝ որ մեծագոյն է քան զամենայն ծովակս յատաջակողմեան Ասիոյ, և անոր համար կոչուի Ծով Աղթամարայ ( յանուն պէնատոր կղզւոյն ), միայն մէկ տեսակ բնակիչ ունի, ազգի ձուկ մը, փաթէխ. որ պատուական սեղանոյ կ'ըլլայ և շահաբեր վաճառ մը, վասն զի աղած և չորցուցած կը ղրկեն չորս կողմի գաւառները, 'ի Ջրդաստան և 'ի Պարսկաստան [1]: Սևանայ անոյշ ծովակն որ փոքր է քան զԱղթամարայն և բարձր քան զայն (6500 ոտք յերեսաց ծովու), ըստ աբանդուԹեան բնակչաց եզերացն՝ 12 տեսակ ձուկն ունի: — Ուրիշ լճակ մը այրա-

1 Նշանաւելի է որ Յոյնք աղած ձկան (և մսի ալ) փաթէխ անունը կու տան. τάριχος, փաթիխոս. ուր և է աղածն ալ փաթիխան կոչեն:

10249926



բաժեան լերանց պարուրն առորոտը, կոգայովեսի
շամբն, որ հիմա Պուլգ-կէօլ կը կոչուի Ձկանց ա-
ռատութեամբն, տարեկան միլիոն մը ֆրանգի
շահ կրնայ տալ. անոր համար Ռուսաց և Օսմա-
նեանց յետին սահմանագատութեան առեն՝ վիճի
առիթ մը եղաւ:

Հիմա Թողլով ձկնաախրաց քննել Հայաստանի
գետերուն մէջ այն մահահամ սև ձուկը՝ զոր կը
յիշէ հին պատմիչն Կաեսիաս, կ'ուզէի որ մեր
տեղացիներէ աչք մը տային 'ի վերայ բովանդակ
ջրոց՝ որ Հայաստանի մեծ և փոքր լճերը կը ձևա-
ցընեն, և իրեն նշանաւոր կերպարանք մ'այլ կու-
տան: Ալթամարայ ծովէն չհեռացած՝ պէտք է
դիտել Ոստեայ էին համար կատարան ծովը, որ առա-
ջինէն աւելի երկայն է, Թերևս աւելի այլ ընդար-
ձակ: Ահա երեք յիշեալ մեծամեծ լճաց հետ ջոր-
ջորդ մ'այլ՝ Ծովին Հիւսիսոյ՝ որ հիմա Զայդը-կէօլ
կ'ըսուի, յարևմտեան հիւսիսակողմն Հայոց, մեր
երկրին երեսաց վրայ՝ տրամանկիւն մը կը ձևա-
ցընէ, և կենդրոնին կան երկոտանեակ մը մանր
լճակաց: Յարևմտահակողմն հարաւոյ՝ քաց 'ի Ծով
(կէօլճիւկ) լճէն, կայ քազմութիւն լճակաց այն
լեռներուն վրայ՝ որ ստոյց պատճառաւ Պին-կէօլ
կը կոչուին: — Հայոց մեծ ու փոքր քառանիւ
չափ լճերուն մինչառուն տարածութիւնն կըր-
նայ 10,000 հեկտար հաշուիլ: Ընդհանրապէս այս
լճերուն ափունքն նուազեալ բուսաբերութեամբ,
գրեթէ զանազանութեամբն և վսեմական տեսա-
րաններով գերազանցեն քան զլինչս Չուխցերեաց.
բայց ամենէն գեղեցիկ և վառվռուն տեսարանն
երեքէն Թևաւոր բնակիչներն են:

Թերևս չկայ երկիր մը որ այնքան բազմա-
թիւ և բազմազան չրային Թռչուններ ունենայ,
քանչափ Հայոց լճերն և մօրերն: Այս եռակի
տեսակ չրջեղչից մէջ անուանի է Կարնոյ շամբն

10249926



կամ մօր և ծով (սուլէփ). որոյ թռչնոց հաւկիթներն բաւական էին ջոջական գեղերու ընակիչները կերակրելու, ըստ վկայութեան մեծի պատմչին մերոյ, որ կարծեմ քեզի չափազանցութիւն մը կ'երևնայ. բայց ինչ պիտի ըսես տեղւոյն անդլիական հիւպատոսարանին և վաճառականի գործատանց գլխաւորը պարոններուն վկայութեանը, որք կը հաստատեն թէ տարւոյն կէս դանաքեր եղանակին մէջ շամբին բոլորտիքն մինչև բաւական հեռու միջոց՝ գրեթէ անընդհատ կը ծածկուին հաւեղինաց երամներով. մինչև համարձակ ձիասդնացութեան արգել ըլլալ: Այս գաշտս մէջ (կարնոյ) համրած են աւելի քան 200 տեսակ թռչնոց, շատն ջրային: Գրեթէ բովանդակ թռչնական ցեղից ջրային երկիք ձանչցուած են՝ ի Հայս, մանաւանդ բարձրաւորունք, մաշկոտունք, ձնձղկաց ցեղքն, և գիշատիչք. այս եօթ ցեղից մէջ արժանի են յիշման լաչիաւն, որ է գառնակերը մեծ անգղն (գռնոռ), և Սպերոյ տե Արարատայ բազմայք, որ շատ ձարտար են յորսալ երկնից դասակիցները. ամէկ վարժածներն ինչուան 200 ֆրանգ կ'արժեն:

Որոյ կամ վայրի հաւուց մէջ նշանաւոր են մեծ կաքաւն՝ նման հնդկայնոյն, և ուրիշ տեսակք կաքաւուց. սարսարեկք (bécasse, ւէկմնոփէկ), աքար (bécassine), աքլոր (râle), թանձր (outarde), սալամք (francolin), հաստրակ փասիան և լոր: Ձրահաւուց մէջ զանազան տեսակք վայրենի սագի, բադի և կարապի, հաւասլուան կամ չխմռնան, արօր (morillon), հոզամուղ (harle), ուրոր (mouette), և ջնորոր, լուղիկ (plongeon), տեսակ տեսակ տատրակաց (héron) և ծիծառանց ջրայնոց. ցեծ կամ քաչահաւ կանաչ և սեաւ (ibis). և երկու աշխարհածանօթ պանդոխտքն, կռունկ և արագիլ, որք ինչպէս առ օ-

ատրա՝ այսպէս և՛ ի Հայս մանաւանդ պատիւ ունէին [1]։

Մեր հին Թագաւորք քան յլինդհանուր որսապետն (Որսապետաց պետն) ունէին և հաւատոց վերակացուս և Թուչնապահս, և Թերևս ատունք էին Հաւնունք. ոչ սակաւ տոհմք և ցեղապետք Թուչուններէ առած էին իրենց անունն, ինչպէս Արծրունք, Բազէակալք, Կարապունք, Աղաւնունք, Կռունք, և այլն. և այս Թուչուններըը կամ ոչ և կամ պատկերնին դրօշներու վրայ կրէին ազգային ռնդից մէջ, որոց սկիզբն շատ հին է, Թերևս ոմանցը ելնէ մինչև՛ ի ջրհեղեղ։ Այս մեծ պատահարս երկրիս ուրիշ կողմը այնքան զգալի այլայլութիւն և պատմութեան մէջ չիւնասակ չէ Թողած՝ ինչպէս մեր աշխարհը. և արդեօք այս Թուչնոց հեղուկ բնակարաններէն ոմանք՝ զոր յիշեցինք, մնացորդ չեն այն մեծ հեղեղման, որ քիչ շատ հոլապնային օրէնքները այլափոխեց։ Սատրին Կուրայ ողողակքն, Երասխայ հովտին մրրանիստ հողակարգքն՝ բաւականապէս չեն ցուցներ Թէ առեն մը (որ երկրաբանօրէն շատ հին է) ներկիդաց [2] իշխանութեան տակ էին. և իրենց բրածոյ ժամակաց մնացորդքն, որոց կենդանի նմանիքն դեռ գտուին կասպիական ծովու մէջ, չեն կարծեցներ արդեօք Թէ երբեմն ծով մը կ՚երկրնցներ իր ծաւալծփիկ բազուկները առուրիշ ծով մը՝ այն երկրին վրայէն, որ յետոյ եղաւ խանձարուրք մարդկութեան և հայրենիք

1 Քանի մը հայ ջրհաւուց անուանք ալ յիշենք և խընդրենք որ գիտունք մեզի ծանուցանեն. Շեախ, Կկասուկ, Արտաւազդահաւ, Յոհաննահաւ. ուրիշ ցեղերէ, Դեզհուկ, Պարկօշ, Սանդրայոպոպ, Զիական, Խիւ, Ճղարդ, Կաոօտ, Դառուն, Ապռնիկ, կուռաբ, կասաբ, կատակ, և այլն։

2 Որոց պահապան չաստուածք, կամ Քուրք։

Հայոցն Թեան : Հայկակ , եա ոչ երկրագէտ եմ և ոչ հաւատդէտ , բայց կը հաւանիմ Թէ այդքան բազմութիւն եւսակէնցալ կենդանեացդ ( Թռչնոց ) ոչք մեր երկրին բարձրանդակ աւազանաց վրայ սփռեալ են , ոչ միայն բնութեամբ ուտելոյ նախատեսեալ են , այլ և յիշեցուցիչք ջրհեղեղի և առեղծագործութեան :

## Է

Գառնանք առ ուրիշ գոյս մը կենդանեաց : Սեաք հայկական քառոտանեաց նախայիշեալ գոյին այս բանս կ'ըմացընէ : Բայց այնպէս ըլլալով՝ դեռ ոչ շատ հին ժամանակ գոյութիւն ի Հայս ամենէն կատարի գազանք ալ. ոմ ոչ յիշէ Վիրգիլեան գեղեցիկ տողը [1] ,

« Եւ վագերըս հայկական՝ ուստից Դաճինեա
լըծել կառաց » :

կամ Սիդոնիոսի բանը [2] .

« Ընդ վագրաբեր Նըպատայ կապարձաւոր
արտորայս » :

Դառնըքեալ այլ Մասին լերանց պատառուածք-

1 Ե. Հովուերգութիւն :
2 Բ. Եպգ. Սիդոնիոսի եպիսկոպոսի Գլերմոնայ ի Ե գարու : — Ըստ յոյն և լատին հեղինակաց Նպատ լեռն ոչ է մեր ընիկ Նպատն Բագրեւանդայ , այլ կամ Պինկէօլ լերինք և կամ Հայկական Տաւրոսի պարն . որոց բնակիչք ըստ մեզ Սիդոնիոսի քաջ աղեղնաւորք՝ միշտ կապարճներն ուսերնին զարկած կը պտըտէին :

*Նէրսէն մէջ տեսեր ես վկայը: Իսկ կենդանեաց Թագաւորը, ասէ՛ծը կու յիշէ՛ի Հայս Ասէտիս[3], և մեր պատմիչքն ալ և ես գարուց, և ուրիշ մ՚այլ որ ծ գարուն սկիզբներէն կ՚ապրէր: Ընդասէ՛ծն և չուկն լինչուան հիմա կը գտնուին: Թռչունք յիշեմ ուրիշ գազաններէն, և գազանամարտ գազանը, այսինքն ըռնը, որուն ցեղէն կան մեծամեծ և ուժով տեսակք. Ջմռանդ միայն երկայնամազ կոպտեն վանայ, որ Անկիւրիոյ կատուէն վար չի մնար, և Ձերմակ ու սեաստուան ոչխարը, զոր Լատինք ասինք ասկնիոս կոչէին (փոստանկք էրմին, hérmine, Իտալք՝ արմելլինա), և այդու կոչմամբ կ՚իմացընէին թէ որ երկրէ առնին ու մատուցին Յեսրոպա:*

*Ընտանի անասունք բարեբաղդաբար շատ քազմաթիւ են՝ի Հայս. վերը յիշեցինք ոչխարաց առատութիւնը. նախրէից ցեղին մէջ գոյէն քանիկ կ՚երևի Հայաստանի, որովհետև իր էգը յատկապէս մորթի կ՚ըսուի, որ ամենայն չորքոտանեաց էգը կու նշանակէ հասարակօրէն: — Ընդվայրին կամ որոյ կենդանիք աւելի առատ են. հնագոյն գարերէ՝ի վեր՝ շրջաբնակ իշխանք և ազնուականք կու գային ասվեն տարի՝ի Հայաստան՝ի կրթուելիւն և՝ի զբօսանս որոյ, ուր գտնուին տեսակ տեսակ վիճք, այծեմուկք և եղջերուք. որոց կարօտով կու քաղաձայր նաև մահուան անկողնին մէջ Արտաշէս, մեր հէթանոս Թագաւորաց մէկն, և հառաչէր. «Ո՞ » տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտան նաւա» տարդի, զվազելն էղանոյ և զվազելն էղջերուոյ. » ձեր փող հարուածք և Թմբկի հարկանէաք»: Ցիշենք զվարսն այլ, որ լինչուան հիմա Արարատայ մէջ և նոյն իսկ Մասեաց սարերուն կը գտնուի, Թաթարաց մշակած բրնձի անդերը աւերելով. և երազավազ ջրոը (իշավայրն) որ հա-

3 Ամգացի բժիշկ Ցոյն կամ Հայ, ի վերջ Դ Դարու:

ըածեալ յԱրտաւազդայ՝ յորդւոյն Արտաշէսի, զինքը եաւէն ձգեց ինչուան նոյն աշխարհածաւնօթ լերան վիհը. ուր, ըստ առասպելեաց, Թըշուառ Թագաւորն՝ ֆոլյաց ձեռքով կապկպած, կու ջանայ կոտրելու իր երկաթի շղթաները, զոր անդադար լիզելով մաշեցընեն իր հաւատարիմ շուներն. մազ կու մնայ որ բարկաձայն Թագաւորն ազատած ցատքէ այդ մեծագին քարայրէն դուրս՝ բոլոր աշխարհքս աւերելու. բայց դարբնաց կառաններուն և ուրիշ գործաւորաց գործեաց ձայնն՝ նորէն կու հաստոցընեն իր մաշած շղթաները:

Պրոմաթէոսն կենդանիք հոչակուած են նաև մարդարէի մը բերնով, իր Տիւրոսի դէմ ըրած սպառնալից ձայնարկութեանը մէջ. «ի տանէ » Թորգոմայ ձիով և հեծելով և ջորւով լցին » զվաճառս քո»: Եզեկիէլ (ԻԷ. 14) չի յիշեր ուրիշ ցեղակից գրաստ մ'ալ, աւելի պզտիկ և աւելի անպարծ, բայց ոչ պակաս ակնանի, մանաւանդ 'ի լեռնոտ երկիրներ, ինչպէս է մեր Մոկաց աշխարհն, որոյ երեք գաւառք Իշոց անուամբ կը կոչուին: Իսկ մեկալ կէս արուեստահնար կենդանին, ջորին՝ բնականապէս աւելի յորդի էր. մանաւանդ Ձերմակ ջորին, զոր արևու զոհ ընելու և Թագաւորաց ծառայութեան համար կ'ընտրէին. ինչուան նաև Թագաւորաց յուղարկաւորութեան համար այլ գործածէին. մեծին Տրդատայ ոսկեզօծ դագաղը կրող կառքն՝ Ձերմակ ջորիներէ լծուած էր: (Ձերմակին, գերազոյն գունոց սեպուած, մեր Թագաւորաց մահուան հանդիսին մէջ այլ մնէր. այս հանդէսներուն վերջինը տեսաւ Բարիզ՝ յամին 1393ին յետին Հայոց Թագաւորին, Ղևոնին մահուամբ և Թաղմամբ. իր դագաղաց մահիճն այլ Ձերմակ բեհեզ էր, իր ծառանէրն ալ Ձերմակ հագուած,

տարին լինլուցին զնա կենդանեանց եկեղեցւոյն ներքնայատակ տապանատունը):

Բայց ահաւադիկ գրաստական ցեղին Թագաւորն, զոր ամենեքին պերճախօս բնապատում[1] անուանեց «գեղեցկագոյն 'ի տաց[illegible]ածս մարդկան», և զոր մեր պարակային արուեստին կամ Վաստակոց գլուց հեղինակն կոչէ, «Աթոռ Թագաւորաց և պարիսպ ամրութեան հեծելոց, յաղթահարող Թշնամեաց և նաւահանգիստ գիտաց Ճանապարհորդաց, հալածիչ գաւառաց, դղրդեցուցիչ քաղաքաց և լայնացուցիչ սինուաց»: Բայց մի է առաջին կարիճն՝ որ այդ գեղեցիկ տաց[illegible]ածն ըրաւ: Չեմ հարցներ ցովբայ, եթէ «Ինձ ապուցեր ձիոյ զօրութիւն, և զգեցուցեր զահ ընդ պարանոցաւ նորա»· այլ կու հարցնեմ, ոչ առանց քիչ մի պարծենալու· մի է որ ամենէն առաջ կրցաւ տանձ անցընել այն կենդանւոյն, որ երբեմն փորատուղ հրաբուխ կու գառնայ, երբեմն քծնող ընկերակից: — Մեր պատմութիւնն, (եթէ կ'ուզես աւանդութիւն սեպել, եթէ կ'ուզես խորհրդաբանութիւն, ինչ այլ կ'ուզես սեպէ), մեր պատմութիւնն կ'ըսէ, թէ աշխարհքիս առաջին պատերազմին մէջ, յետ խառնակութեան լեզուաց, մեր ազգին նահապետն և զօրավարն, Հայկն, ձիաւոր պատերազմող այլ ոանէր ընդդէմ Բէլայ· ասկայ այլ յաղթուած և մեռած՝ յաղթողին ձեռքը թողուց ձիոց, ջրեաց և ուղտուց երամակները: Զին եղած է և է նաև հիմա ալ Հայաստանի ամենէն նշանաւոր բերց մէկն, և իր վաստաց գործիք մը· մեր ազգային զինուորութեան ոյժն գլխաւորապէս հեծելոցը վրայ էր· Արամ Հայկայ սերնդոց մէջ ամենէն հզօրն, ժամանակակից Նինոսի, 40,000 հետևա-

1 Պիէռն:

կաց հետ 2000 ձիաւոր ունէր. ժամանակին փո-
խեց այս համեմատութիւնը. 12 կամ 14 դար
վերջը՝ Հայաստան կրնար, ըստ վկայութեան ե-
կեկիէլի, իր պէտքը լեցնելէն զատ՝ ինչուան Տիւ-
րոսի վաճառքներուն ալ ղրկել ձի և ձիաւոր,
երկուքն ալ անուանի՛ւ ի հին ժամանակս: Նոյն
մարգարէն ուրիշ խօսքով մը գրեթէ զմեզ կ'ա-
պահովէ թէ Աստուածաշունչ բանակը յաղթու-
թեան առնողը Հայոց հեծելազունդն էր: Հայ
ձիաւորք Ճակատեցան Տրովայ դաշտերուն մէջ
ծերունւոյն Պրիամու վերջին օրդւոց հետ՝ ընդ-
դէմ հռովերական քաջաց Յունաստանի: Ա-քեմե-
նեան (Պարսից) տիեզերակալութեան առեն՝
Հայաստան կու ղրկէր Թագաւորաց Թագաւորին
առեն տարի միհրական առնին 20,000 ձի, որ ընտ-
րելագոյն սեպուհէրն էին քան զՊարսից և զՄա-
րաց. և 50,000էն առելի նժոյգք տարւոյն յար-
մար եղանակին կը ժողովէին Մուղանու դաշտե-
րուն մէջ: Մեր Թագաւորաց մէջ առենէն աշխար-
հակալն և առենէն գոռոզն և հպարտ, Տիգրան,
ըստ բանից օտար պատմչաց ինչուան 150,000
ձիաւոր ունէր, զոր 17,000 բոլոր ապտապէննե-
րէ, այսինքն ձի և ձիաւոր բոլորովին զրահով
ծածկեալ, զոր պատմիչ մը կը նմանեցընէ զոյա-
հատորեի կոկորդիլոսի: Արձակ դաշտի մէջ՝ այս
ապառազէնից Հարտար առաջնորդի մը ձեռք՝ գրե-
թէ անյաղթելիք էին, բայց նեղ տեղւանք՝ թէ լ-
բենք լերանց արգելք և թէ լերանց եռանը շարուած
գնդերուն. այսպէս Տիգրանայ բնաբարերն ըն-
կերակեցան զարնուեցան Լուկուլլոսի լեգէոներէն,
որ հնարագիտութեամբ զանոնք Թերմոպիլեան
նեղուցի մը մէջ փակեց: Հիմա Քիւրտերն որ
Հայոց ժառանգութիւնը կը վայելեն և կը վար-
նեն, տարեկ տարի 50,000էն առելի ձի կը վա-
ճառեն Պարսից և Օսմանեանց: — Հայկական ե-

*լիվային, հին ատեն ամենէն աւելի ծանօթ եղած կ'երևի, յետ տաճիկ (արաբացի) ձիոյ. մեկ հին և անանուշ յոյն հեղինակ մը՝ նկարագրութիւն մը ընելով ձիոց՝ ըստ աշխարհաց, նախ և առաջ կը յիշէ հայկական երիվարը, և կը ձանչնայ զայն բաւական յաղթանդամ և շատ ուժով, ոլնալային և պնդակող, և ցուվթայ ձիոյն պէս աստիկ իսըր. խընջացող: Հայկական երիվարին հետ կը յիշէ զէրեխզացին. և այս երկու ձիոց սզգէն սերած կը համարի դալմատացի երիվարը: Ինչուան հիմա այլ հայկական ձին Թեսալոնիկեան է յետ արաբացի և անգլիացի ձիոց. յիրաւի ջունի ոչ աստոց հասակը և ոչ վայելուչ ձևը, աւելի պըզտիկ և աւելի թանձրամիս է, բայց երագութեամբ անոնցմէ վար չի մնար, և անոնցմէ աւելի ապատուական է վարժութեամբն ելլելու և իջնելու լեռնոտ և անհարթ երկիրներ. պատերազմական դաշտին վրայ ուր և է ցեղ ձիու դէմ կրնայ ելնել. և իր աչքերէն ցասքած կըպրանման ան կրակը տեսնողն՝ կարծէ Թէ կուտուղ կենդանեաց մէջ գազանագոյնն է: Բնիկ հայկական ցեղից մէջ ինուսի ձին ամենէն գեղեցիկն է. կը կարծուի այլ որ Նիկէա անուանն, որով կ'անուանէին Յոյնք լաւ ձիաբեր երկիր մը, այս տեղւոյս անունէն ծագած է, կամ Նժոյգ անուանէն: — Հիւսիսային Հայոց երիվարքն ալ լաւ, ուժով և աղուոր են. այնպէս որ անոնց ամենէն հասարակներն այլ, կ'ըսէ գերմանոյն բնագէտ Հանսալարհորդ մը, կրնան Շղուզկարաի արքունի սխուռց լաւագոյն ձիերուն կարգը դրուիլ, և իրաւ այլ կուտայ Յերուսալէմ մտցընելու էրզրումի, Տրապիզոնի և և Դրեսաի Համբով:*

*Բնութիւնն որ այսպիսի գեղեցիկ կենդանի մը ընծայեր էր երկրին, անոր ատացուլին այլ Հանձար տուաւ զանիկայ աւէկ վարժեցընելու և ա-*

*եւ լի ապէկ այլ ՚ի գործ ածելու. ձիապարսպանու-
Թեան արուեստն շատ կատարելագործած էր
մեր նախնեաց օրերը. որուն կրնան վկայ ըլլալ
քանի մը լաւին հեղինակաց բանք, և մնացորդք
ազգային ձիապարսպանութեան գրուածոց, որոց
մէջ մանրաման անդամաբանութիւն կայ ձիոյ:
Իսկ ձիոյ գործածութիւնն, Հայոց պնուաւակա-
նաց և պատանեաց զբօսանք, ցուցանք և պար-
ծանք մ'էր. մեր իշխանաց կարիճ զօրավարաց
մէկն, քաջակորովն Մուշեղ, հացկերութի մը ա-
ւեն դաւաճանութեամբ սպաննուելով, վերջի
շունչը տալու ատեն կը ցաւէր կ'ողբար որ չկըր-
ցաւ մեռնելու իր ձերմակ երիվարին վրայ, որ
այնքան անգամ տարեր էր զինքը յաղթութեան.
գոռոզ Թագաւորն Շապուհ որ այս կարիճ զօրա-
վարին ձեռքէն այլ սրտէն այլ յաղթուեր էր,
հրամեր էր որ քարի վրայ քանդակեն անոր
պատկերը ձերմակին վրայ հեծած, և իր ինչպէս
տաճարին մէջ կանգնեն, զոր տեսնալով՝ արևուն
գինի խմեր, Ասորի ձերմակաձին, ըսելով: Շատ
տեն չէ որ գտնուեցաւ ուրիշ քանդակ մ'այլ
մեր երկրին վերջին տահմանները՝ վրայ, նոյն
քաջակորովը կերպարանելով իր ձերմակին վրայ,
Թէ և գտնուլ ձանապարհորդն չիճանչցաւ իր գի-
տը:... Բայց մեր ձերմակին, մեր պիգասոսքն[1] ըզ-
մեզ շատ հեռու կը Թողացընեն. բաւական ըլլայ
այսչափ տեղեկութիւն Թէ իրենց համար և Թէ
բոլոր մեր երկրին գործարանաւոր և անգործա-
րան արարածոց:*

1 Ըստ առասպելաց Յունաց Թեւաւոր ձի Պեգասի դիցազին:

10249926



# Ը

Շնորհակալ ըլլանք ուրեմն բնութեան, որ այսքան պարգևներով հարստացուցեր է մեր երկիրը. և առաւել փառք տանք միրոյն բնութեան, որ այդ պարգևները վայելել և յարգել տուաւ երկրին հանճարտիտ բնակչին, որ ի սկզբանց ժամանակի գիտցաւ ճարտարութեամբ օգուտ հանել անոնցմէ, և օտարաց այլ ափռել, հեռաւոր աշխարհքներու բերքերը նրարուս պահելով: Հայն ամեն առեն եղած է վաստակաւոր մըշակ իր երկրին մէջ, ժիր վաճառական դուրսի երկիրներ, զգօն գործակալ ազգաց՝ որ գիրար չէին ճանչնար. և փոխանակեր է գրնական և զարուեստական բերս աշխարհաց՝ որ իրարմէ հեռու էին շատ միջօրէական ժամերով: Հայն բոլոր երկրիս երեսը կը պարէր, կը տովէր զիեզուս ժողովրդոց՝ որոց Թարգման կ'ըլլար, և ամեն առեղ միտ դնելով կը տովէր շահ և ճարտարութիւն: Իրեն համար օտար երկիր չկար և չկայ. և ամենայն ազգք իրմէ յիշատակ մ'ուզին: Թէ որ լաւ մտադրութեամբ քննուի ազգաց հուց կամ բաժանման պատմութիւնն, ինչպէս որ Ս. Գիրք մեզի կը ներկայացընէն, յայտնապէս կ'երևի որ Ասիոյ հիւսիսային և արևմտեան կողմերն և բոլոր Եւրոպա իրենց բնակիչքն առած են այն գաղթականներէն որ ելան կամ անցան ի Հայաստանէ, յառաջ և յետ իր Հայաստան կոչուելուն: Թէպէտ և հիմակուան քննադատութիւնն տարբեր կարծիք ունի լեզուաց ծագման և ածանցման վերայօք, սակայն արժան է յիշելու, որ թէ ժողովրդեանը համար, թէ անոր լեզուին համար չկայ երկիր մը՝ որ մեր երկրին հաւասար այնքան

10249926



բազդատուԹեանց և նմանուԹեանց առԹի եղած ըլլայ: Սկսեալ յԵրոդոսէ, 'ի Մորաքանէ և յԵսաաեայ՝ հարցուր ամեն լեզուագիտաց և բանասիրաց, որոնք են Ա.քսոլուԹոս, Շուարց, Պոշար, Կալմէդ, Հերվաս, Լոպրոզ, Վիսդն, Լայպնից, Լըպլինկան, Շրէտէր, Հէրլըն, Ճ. Ոէվլինէմ, Անգլդիլ, Բալլաս, ԳլոբրոԹ, Ասէլունկ, Պոբ, Բոդ, Բեդէլման, Վինտիշման, Կադդէրը, Նիպուր, և այլն, Թէ մի լեզուին նմանակից է հայերէնն: Ամենքն մէկմէկ կերպ պատասխան կու տան, հայերէնին վերձաւոր և ազգակից սեպելով զփոխադացին, աստրին, բաբելոնացին, քաղդէացին, հրեայն, ԹաԹարը, կովկասեանԹուրքը, խազախը, պարԹևը, փհլէվին, զանդիկը, հնդկա-գերմանացին, մարտպարտացին, հին յոյնը կամ պելասգեանը, եգիպտացին և պարսին, կելտը և ոէլլը, ինչուան պինպայացին, ֆինը և սկաերիացին: Արդ 'ի վերայ այս ամենայն խառնափնդորուԹեան վհին՝ ոմանք կ'ուզեն հանել զհայերէնը, մանաւանդ ԹէԹ հայերենէն հանել այս վիսը, 'ի վերայ այս ամենայն սէլլի կամ պահաս ծուռ կարծեաց, պէտք է որ այդ վհին խորը ճշմարիտ և սկզբնական բան մ'ըլլայ, ապա ԹէԹ ոչ անկարելի կ'ըլլայ հասկընալ՝ ԹէԹ ինչ՞ և ինչպէս այդքան ծանր և գիտուն անձանց գլուխք պատրաստր են այդ վհին վրայ: Ահա այլ պէտք է լաւ գիտնալ, որ եԹէ Ս. Գիրք, պատմուԹիւնք և աւանդուԹիւնք կու ցուցընեն մեզի զՀայաստան իբրև սերմնարան մը ազգաց և ցեղից, նոյն Հայաստան զարմանալի ընդդիմակուԹեամբ մը հերքընկալ և օԹևան եղած է զանազան ազգաց գաղԹականներու, ինչպէս են սորեատանեայն, քաղդէացին, հնդիկն, հրեայն, քանանացի, սկիԹացի, կովկասեան, Թեսալացի, յոյն, մար, պարթիկ, և ինչուան էին այլ: Ահա ամեն տոհմք

10249926



նախ քիչ կամ շատ առեն մը իրենց օրէնքը և լե-
զուն զուտ պահելով, յետ քան և հինգ դարուց
խառնուելեցան և ընկղմելեցան սիրող ազգին և լե-
զուին մէջ, այսինքն հայերէնին, որ 'ի հարկէ ինչ-
ալ անոնցմէ փոփոխութիւն կրեց և անոնց բեր-
քերուն հարստացաւ:

Քրիստոնէական կրօնքն արբուզան և անդրժեքի
ըրաւ երկրին դարուց աշխատանքը. և այդքան
տարբեր տարերքներէ ձևացուց մեկ ազգ մը, որ
'ի սկիզբն դ դարու կը պարունակէր անընդմէջ
երկիր մը հիմակուան Փռանկաստանի սահմաննե-
րէն ընդարձակ, և բաժանեալ 'ի 20 նահարարու-
թիւնս կամ պետազատական աշխարհս, որք բա-
ժանէին 'ի 620 գաւառս, և աստնք այլ 'ի հարկէ
40,000 գեղ մ'ունէին, որոց պահպանութեան
համար սովորաբար 120,000 զօրականք կային, և
հոգևոր հակոտնութեան համար աւելի քան 200
եպիսկոպոս: Այս դարէս ետև՝ 1500 տարուան
միջոց մը բոլորովին այլափոխեց մեր երկրին օրէն-
քը և երևոյթը, որ կրեց բոլորին ամեն հարուած-
քը և խաղերը: Նոր ժողովուրդք եկան գրաւե-
ցին զՀայաստան, ուր հիմա այլ կ'երևան որոշա-
կի. վան զի կրօնքն և լեզուն անթափանցելի պա-
րսպ մը ձգելով մէջերնին՝ օտարականին թողու-
ցին Հայաստանին գետինը, պահելով միշտ ան-
զացուն՝ իր սիրելի հայրենիքը: Ասանկով, թէ և
հեռացեալ, թէ և հալածեալ իր բնիկ երկրէն,
Հայն իրեն հետ կրէ իր թերափքը. և կը մշակէ
զհայրենիս իր հարուստ լեզուին մէջ, կը յարգէ
զայն իր կրօնիս մէջ, կ'ուսանի՝ անոր յիշատակաց
մէջ, և կը պաշտէ զայն իր սրտին մէջ: Այս հայ-
րենասիրութեանս, 'ի զոց թողլով ոմանց մոլորիլը
և ոմանց անհոգութեանը, առաջնորդեց անցուց
Հայոց ազգը 44 դարու միջոց՝ ամեն տեսակ դի-
պուածէ, բնութեան և քաղաքականութեան յե-

զախտախուԹիւններէ, ընդ մէջ ազգաց՝ որ իրմէ վերջը ծնան և իրմէ առաջ մեռան:

Դարձուր դարձեալ անգամ մ՚այլ աչքդ այդ լեռնակղզի երկրին վրայ, որ կը բարձրանայ՚ի միջոյ Եւքսինեան և Կասպիական ծովուց, Պարսկային ծոցոյն և Միջերկրականին, որոց մէջ Թափէ զալիս Փիսոնի, Աւլիւսեայ և Իւխայ, Կուբի և Երասխայ, Տիգրիսի և Եփրատայ, Պիւռամոսի և Կիւդնոսի. փնտռէ առանց ամօթի աւերակ ափանց վրայ ազգաց և ազանց գտուոյ մայրաքաղաքները, և ըսէ ինձ. ո՞ւր են Նինուէ և Բաբելոն, Սեւևկիա և Տիզբոն և Սամոսատ. մանաւանդ Թէ ըսէ, ո՞ւր են առանց կանգնողքն, այն հզօր և անուանի ժողովուրդքն հին գարերու, Քաղդէացիք, Ասորեստանեայք, Մարք, ՊարԹևք, Կապադովկեցիք, Կլիկիացիք, Լիւդացիք, Կարքեդոնացիք և ուրիշ շատեր: Հարցու մէկ հինաւուրց մարդու մը, որ անոնց ամենէն ուժով, ծաղկեալ և յաջող ժամանակը ապրելով, կը նշմարէր անոնց կործանումն այլ. հարցու Եզեկիէլի, ո՞ւր են այդ ազգերն «որք արկանէին զահ իւր» րեանց՚ի վերայ երկրին կենդանութեան»: Ան՚ւայլ. ահա կը ցուցընէ մեզի երկրիս խորը, անդունդը, ահաւոր լիճ մը, ոչնչութեան տեղ մը և կ՚ըսէ. «Անդ Ասուր և ամենայն ժողովք նորա, » ամենեքին վիրաւորք... շուրջ զչիրմօք նորա... » Անդ Ելամ և ամենայն զօրութիւն նորա շուրջ » զգերեզմանաւ նորա... անդ տուան Մոսոք և » Թոբէլ և ամենայն զօրութիւնք նոցա շուրջ զգե» րեզմանաւ նորա... անդ Եգովմ և ամենայն Թա» գաւորք իւր և ամենայն իշխանք նորա... և նո» ք՚ա ընդ վիրաւորս նահեցին ընդ իջեալսն՚ի խոր» » խորատ»:... Դադրէ՚ի ապառնալեացդ, գուշակ մարդուկէ. միԹէ պիտի յանդգնիս ըսել այլ, Թէ «Անդ ամենայն իշխանք հիւսիսոյ,

» և ամենևքեաննոքա զօրավարքն Ասորեստանեայն,
» իջեալք վերաւորքն հանդերձ ահիւն զօրուն Թեգեամբ
» իւրեանց... և տարան զտանջանս իւրեանց ընդ
» իջեալսն 'ի խորխորատս »: Զե՞ս տեսանես, որ ինչ-
պէս այն ալիքներն՝ որ տեսան այդ ազգերը իրենց
ափանց վրայ, կը կորսուին խառնուին անկուշտ
ծովուն մէջ, մինչդեռ իրենց աղբիւրներն անդա-
դար կը բղխեն նոյն բարձրաւանդակներէն, այս-
պէս և ազգն Հայոց, որ ունէր իր երկիրը այդ աղ-
բերականց մէջ, հոն կու կենայ դեռ, մինչդեռ մեկ-
այլ ազգերն ոչնչացեր են 'ի վերուայն ժամանա-
կէ: Հիմա տակաւ մեզմէ, ոմ մարդարէ, վասն զի
մենք առանց քօղոյ կը տեսնանք ինչ որ դու 24
դարու Թանձրութենէն կը տեսնէիր. մեզմէ տա-
կաւ. այդ իշխանքդ հիւսիսոյ և արևելից, այդ զօ-
րավարքդ Ասորեստանեայն ո՛չ մեռան ինչպէս Ա-
սուրն և Ելամ. այլ ողջացան, ապրեցան սրոյ հա-
րուածներէն. գերեզմանն չկրցաւ կլանել իր ա-
մեն փափագածը. և Հայն մինակ մնացած քու
համրած ժամանակակից ազգերէդ, ինքնին կը
հակէ իր նախնեաց գերեզմանին և իր յետնոց ո-
րորոցին քով: Հայն՝ ժողովուրդ ամնուասկրա,
ժողովուրդ հիւրընկալ, ժողովուրդ հաւատացեալ,
շատ ժողովրդոց օգտակար եղաւ. և եթէ երբեմն
իբրև պատերազմող՝ նիզակակից եղաւ Փուլայ և
Սաղմանասարայ 'ի դերուեթիէն քշեց վիրայէլ,
գոնէ պաշտպանեց այլ ազգներ իր գետափանց
վրայ և 'ի բարձունս Սամոնայ (կամ Ռեմոնայ [1]).
և Թէ գաշնակից ըլլալով Նաբուքոդոնոսորի, գե-
րի վարեց զԵհոյական Յուդայ, սակայն պատուեց
այլ ազգներ իր իշխաններէն աւելի. վասն զի Ճանչ-
ցաւ Թէ անոնք Դաւթի և Սողոմոնի որդիք են, և
անոնց ձեռքով կ'ընդունէր գլխին Ճառագայթա-

1 Սոմա, գ. 3:

Ձև Թագը, զոր յետոյ նոյն իսկ իր գերբոյն գլուխը դրաւ. և եթէ սոխակեց երբեմն (ինքն այլ ըսոխակաալ ըլլալով) զորդիս և զդստերս Սալեմայ՝ բաբելական ուռենեաց ներքև արտասուաթաց քնարներուս վրայ երգել Սիոնի սաղմոսները, սակայն խուռ չեղաւ Աստուծոյ ձայնին՝ որ ուրիշ մարգարէի մը բերնով կ'ըսէր իրեն. «Պատուէր » տուք յինէն այրարատեան թագաւորութեան» ցըն և ապգանազեան գնդին. կանգնեցէք գնովաւ » (զԲաբելոնիս) նետակալս, ելէք ՚ի վերայ... » երիվարիք, իբրև զբազմութիւն մարախոյ [1]». և փութաց վազեց Աստուծոյ օծեալին, և իր նիզակակցին հետ (Կիւրոսի), և յետ եօթանասուն տարուոյ՝ իր գերեաց չլթանները քակելով, ինքնին առաջնորդեց տարաւ զՍալաթիէլ և անոր ժողովուրդը և անցուց Հայաստանի և Միջագետաց սահմաններէն, և ոչ անիկաս պահելով Թշնամի ժողովրդոց միջէն հատուց ՚ի Պաղեստին [2]:

Հայաստան ինքնինն նախախնամեալ երկիր մ'էր, և սիրելի բարձրեալին, ուր շատ կանուխ յայտնեցաւ. և պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը փնտռէ՝ դառնայ այդ երկրին նայի: Եգեմայ հետքը գտնելու ապահովագոյն ճամբայն է Հայաստան: Ինքն ընծայեց Աստուծոյ իր օրհնեալ կաւը, և ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն և զմայրը մարդկութեան. ինքն ընծայեց աստնց այլ ինչ որ պէտք էր իրենց պահպանութեան, իրենց սիրոյն և զղջմանը համար. ինքն եղաւ իսանձարուրք առաջին ծնածին և գերեզման առաջին մեռնողին. ինքն բարձրացաւ Արարատայ գագաթը միանգամ ընդունելու ջրհեղեղէն ազատած մարդկութեան մէկ հատիկ տոհմը. և այդ

1 Երեմիա, ԾԱ, 27:
2 Թովմա Արծրունի ըստ Մար Իբասայ:

Երեն հիւր եղած մեկիկ ընտանեքով երկրորդ անգամ բոլոր երկիրս մարդաբնակ ըրաւ: Ինքն կեբակրեց առաջին նահապետները, և անոնց հաւատքը անխաւն պահեց երկար առեն. Աբրահամ ինքնին նոր հայրն հաւատոց՝ իրմէ ծագած է, վան զի իր հայրենիքն՝ Ուր Քաղդէացւոց՝ հին մա կը ձանչցուի Հայոց յետին պատուարնեբուն մէջ, լերանցն Կորդուաց, որ Մեծ Հայոց տան եհինգ աշխարհաց մեկն է: Վերջապէս, ինքն, ըստ բարեպաշտիկ աւանդութեան, կ'աղաչէր զՅհոուա՝ առաքելոց գլխաւորին հետ՝ որ զգուշանայ ի նենգութենէ Հրէից, և գայ իր Թագաւորին, Աբգարու հետ՝ սպասաւանի յԵգեսիա: Ինքն ընդունեցաւ ուրիշներէ աւելի առաքեալներ և աշակերտներ և ընծայեց անոնց զառաջին կոյս վկայուհին, նոյն իսկ իր Թագաւորին դուստրը, զոր կ'ախորժեմ անուանել քոյր Աբեղի. վան զի սոքա են նախավկայք, մեկն նախնական աշխարհի, մեկայլն նորաստեղծեալ աշխարհի. մեկն զոհեալ իր եղբօրմէն՝ մեկայլն իւր հօրմէն. ոմն աստուածային ողբերգութենէն: Նոյն ինքն Հայաստան յետ երեք դար տնանալու, դարձեալ յառաջ քան զուրիշ ազգեր՝ բոլոր ժողովուրդովը ընդունեցաւ զքրիստոնէական կրօնս և պահեց միշտ. և որ զարմանալին է և ծանր ընդդիմբևոյթ մը, քրիստոնէութեան առաջին պատուարն ըլլալով՝ ամենէն եռքն պատուարն այլ է երկրիս արևելակողմը. վան զի այդ կողմէն՝ Հայաստանի միջօրէէն անդին քրիստոնեայ երկիր չկայ, բայց՝ ի գաղթականներէ կամ քարոզչաց ձեռքով նորադարձներէ, որք կրնան նորատունկք ըսուիլ՝ ի մէջ հեթանոսաց: Ասեն մը երբև կղզի մ'էր, հին մայ երբև Թեբաիկզի մը քրիստոնէութեան այլա-

հաւատ կրօնիւ մէջ:

Ա. յս ձշմարիտ կրօնիւ զգացմամբ, այս գերա-

պոյն զգացմանցն է՝ որ Հայաստան ոչ միայն կըրցաւ մնալ և դիմանալ իր ինքնագլխաւորութեանը կորընցընելէն վերչն այլ, հապա նաև կրցաւ ամենէն գժուարագործ մ՚այլ գործել. այսինքն համաձայնել իրարու զյահանդրուժիւն երկուց աշխարհաց՝ որոց մէջ դրեր է զինքը նախախնամութիւնն. և եթէ երբեմն այս բարակ և գժուարին պարտուց մէջ պակասած է, աւելի ինքզինքը խաբած է քան զուրիշները: Ապա և ոչ առանց արդեանց վաստկեր է զյարգ և համարմունք և վստահութիւն աիրող և սահմանակից տզգերուն. ինքն տուեր է զօրք և կարիճ զօրավարներ Սասանեանց և Բիւզանդացւոց. և իր ձարտարագոյն որդիքները բազմեցուցեր է երբեմն գահուն վրայ, և փոխարկեալ Եգիպտոսի և Հնդկաստանի աիրապետաց քով. զանազան հնարքներով Արաբացւոյն տուրը բծախնդիր է, և իրեն տվլեցուցեր քանի մը օգտակար արուեստներ. որոնց հետ ձարտարապետութեան ոճ մ՚այլ, որ քիչ մը ձևավոխեալ ուրիշ հեռաւոր աշխարհաց մէջ այլ մնաւ. Եւրոպա անգամ առանց խմանալու առեր է զայն: Հայաստան կոփրետոսի Խաչակրաց նիզակակից եալած զԵրուսաղէմ առաւ. Հուլաղուին Նեստոլաց գաշնակից՝ զՊաղտատ առաւ: Ոչ սակաւ պաշտօնեաներ և քաղքանչան զօրավարներ ընծայեց օսմանեան, ուսա և պարսիկ աէրութեանց, որոց իշխանութեան տակ հինայ բաժնուած է երկիրն: Իր ձարտարուեստ գալթականաց ձեռօք շատ օգտակար ծառայութիւն ըրած է Ռուսաց, Լեհաց, Սաւառիոյ և Դանուբեան իշխանութեանց, և իր վաճառականներուն՝ միչեւ գարս Խուաիոյ աժեն աէրութեանց, Սպանիոյ, Հոլանտիոյ և քանի մը աէրութեանց այլ՝ որ հինա Փռանկաց մեծ աէրութեան մասն են: Այս եոլինիս մայրաքա-

ղաքն էսկ, արևմըտից Բաբէլոնն, մէկ Հայու մը էրախտապարտ է իր ամենէն շատ յաձախած ընկերութեան տեղւոյն ակզբնաւորութեանը համար. Բարիզու մէջ առաջին քաֆէարանը բացուեցաւ յամին 1672 Սէն-Ժերմէնի ծօնավաճառին մէջ և Դպրոցի ըսուած գետատափին վրայ (Quai de l'Ecole), 'ի ձեռն Յարութիւն կամ Բաստալ անուան, երկրորդն ալ Սուեփան անուն մէկէ մը, որք երկուքն այլ Հայ էին. անշուշտ ի բնէ չէին նախատեսած թէ իրենց ձեռնարկութիւնն զարգանալով՝ ծրչափ բարիք կամ չարիք կարենայ պիտի բերել. բայց մենք կրնանք յուսալ՝ որ այդ նորութեան համար իրենց շնորհակալութեան յիշատակարան մը ընծայեն զբօսասէրք:

Իսկ ինձի աւելի նախամեծար և ախորժելի է նկատել այն լուսաւոր նշանները՝ զորս Հայասան իր հորիզոնէն դուրս այլ ափռած և գրած էր երկնից այն կողմերը՝ որոնց տակ իր որդիքն ապաստանարան մը կու գնտրուէին. և կու սկսեմ պատուել Օռլէանի սահմանին մէջ զՍ. Գրիգոր արքեպիսկոպոս Հայոց Նիկոպօլսոյ 'ի ծ դարու, հմայ պաշտպան Բիթիվիէի. – 'ի Գոմին՝ (Commines) զՍ. Խրիսոլ (Ոսկի, Chryseuil), առաջնոյ պաշտպանը, զոր աւանդութիւնն սեպէ աշակերտ Բարիզու Ս. Դիոնիսիոսին և կու ձանչնայ Հայ. – 'ի Ֆոնդէն՝ 'ի հայրենիս Ս. Բեռնարդոսի՝ պաշտպան առեղւոյն զՍ. Ամբրոսիանոս. – 'ի Կանա՝ (Պէլ ձիոյ) զՍ. Մակար, պաշտպան առեղւոյն և Հայ եպիսկոպոս ծ դարու. – 'ի Մանգուա՝ զՍ. Սէմէոն, վերնոյն ժամանակակից. – 'ի Լուգգա՝ զՍ. Ջաւէն կամ Դաւիթ (S. Davino). – ՅԱնգոնա՝ զՍ. Կիրակոս. – 'ի Պատուա՝ զՍ. Փիլեոնիոս եպիսկոպոս յ'Ե դարու, և այլն. որոց ամենքն այլ Հայազգի կու ձանչնուին: ... Բայց, ափսո՛ս, որ

հոս չէ յարմար տեղ՝ հայկական Ոչխարապահի արբա-
զան քարձունքը Թուչքաւելու:

Փոքր առթիւ, Հայկակ, քովանդակելու այս հայկական քնաբրուխթեան համառօտ պատկերը. յուսամ որ այս չափով այլ իմացուի, որ մեր ազգն եթէ և քաղաքական պատմուխթեան մէջ առաջին գործերը չէ գործած, բայց և շատ մեծ գործ մանաւանդ եղած է. ազգ մը՝ որ սկսեալ՝ի Նոյէ գրեթէ անընդհատ ինչուան հիմայ կը համրէ 250 ազգապետ, իբրև նախարարք, Թագաւորք կամ կաթողիկոս, որոց հետ կապուած են իւր ազանդուխթիւնները, և անով նաև բոլոր ժամանակագրուխթեան յիշատակք. այսպիսի ազգ՝ արժանի է մատաղրուխթեան և քննուխթեան, թէ իր բնիկ որդւոցն և թէ ամեն մարդու՝ որ բարեկամ է ճըշմարիտ փիլիսոփայուխթեան: Ես չեմ վախնար ըսելու, թէ Հայաստան մէկ որոշեալ վիճակ կամ նպատակ մը ունեցեր է յառաջ քան զայլ ազգեր. և որ աւելի հարկաւոր է գիտնալու, դեռ այդ վիճակն լմնցած չէ: Գաղանիք մը չէ բաւծա, և ոչ խորհրդաւոր բան մը, այլ հնացեալ հաւատնուխթիւն մը Հայ մասց, թէ դեռ գործ մ'ունի կատարելու երկրիս վրայ. բարեբաստիկ գործ մը: Ամեն բան լմնցած չէ իրեն համար. դուռ մը ալ ու բացուի իրեն համար տաեն մը... որ շատ այլ հեռու չէ, ինչպէս որ կարծեմ. այդ դուռն երկար ժամանակ կրկին կրկին կղպած փակած չմնայ ալ ու. արդէն զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, և համարձակուխթեամբ կ'ուզեմ ցուցընել. ջրլայ թէ վախնաս,... մեր եկեղեցուխթեան ապագայ բանալիքն, այդ այնքան երկար ժամանակէ վեր բաղձացեալ բանալիքն, այդ բանալիքն՝ է դաստիարակուխթիւն: Դաստիարակուխթիւն հայրենական. հայրենասիրուխթիւն յեցեալ՝ի վերայ իմաստասիրուխթեան, և սա հիմնեալ՝ի վերայ

*սուրբ կրօնիդ։ Առանց այս կապակցութեան չկայ կատարեալ կրթութիւն, չկայ քաղաքականութիւն, չկայ մարդ կատարեալ։ Ընկերական պարտքերը լաւ կատարելու համար՝ մարդս կարօտ է հայրենական նեղշնչման մը. և որպէս զի հայրենասիրութիւնն ջմռլորի և յետ չմնայ, պէտք է որ առաջնորդ ունենայ զինմատուցութիւն, նեցուկ՝ ըզհաւատս, և պատկ՝ զյաւիտենականն ճշմարտութիւն։*

## Թ

*Ո՛վ Հայկակ, ո՛վ Հայ պատանիք, ազէկ քաղաքացի ըլլալու համար՝ պէտք է քննել և տեսնել զհայրենիս։ Այս է առաջին ուսումն յետ ուսման հանդերձեալ կենաց։ Քննեցէք և տեսէք ուրեմն այդ ազնիւ և բարեբեր Հայաստանը, եթէ հայրենիք ձեր և դայեակ ամենայն աշխարհի. — քննեցէք այդտղ բնաւորութիւնը, քննեցէք այդտղ բարոյականը. քննեցէք այդտղ բարգաւաճումը ՚ի հարուստ լեզուին, որ ապահով գրականի մ՚է բազմատեսակ արուեստներով հընձաւած գրականութեանը. — քննեցէք զայն վերջապէս՝ իր կրօնից զերութեանը, և իր ծիսից վայելչութիւնը մէջ։ Այդ քննութիւնքդ, այդ ուսմունքդ յորդոր ըլլան ձեզի սէրն աւելի քան զսէրն յարգելու զհայրենիս և մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակութեան բանիս։ Վասն զի այս իսկ է առաջին պատուէրը Աւրարչին՝ որուած առ հայրն մարդկութեան, և որուած բուն իսկ մեր երկրին մէջ.* ԳՈՐԾԵԼ ՋՆԱ ԵՒ ՊԱՀԵԼ[1]։

1 Ծննդ. Բ. 15։

10249926

# ՀԱՅԿԱՅ ԾՐՋԱՆ

## ՏՕՄԱՐ ԵՒ ԹՈՒԱԿԱՆ ՀԻՆ ՀԱՅՈՑ

## ՀԱՅԱԴԻՐ

### Ա.

Աեր հայրենեաց համառօտ բնախօսութիւնն ըրած աաենս՝ յիշեցի, Հայկակ, որ ամեն քննողն բնական և ախորժելի է գիտնալ ազատութեանց հանդիսարանը, այսինքն հանդիպած կամ ազատուած բաներուն ուր տեղ եղած ըլլալն. որ է ըսել՝ աշխարհագրական տեղեկութիւն մը, թէ բնական և թէ քաղաքական: Բանտարկեալին առաջին բնառածն է ինքը, ինչ եղած ըլլալը, որ է լոկ Ազատութիւն. երկրորդ բնառածն է իւրը, որ տեղ, աշխարհիս որ կողմն եղած ըլլալն, և այս է Աշխարհագրութիւն. երրորդ բնառելիքն այլ է ընէը, այսինքն ազատելոց որ տաեն, որ տարի հանդիպած ըլլալն. և այս է ժամանակագրութիւն, զոր և ալ պարտաւորեան լ'անուանեն գիտութիւն: Եթէ երկրաբանութիւն և աշխարհագրութիւն կարևոր են պատմութեան նկատուց՝

10249926



իբրև ենթակայ և յատուկ մը, ժամանակագրու-
թիւնն այլ իբրև լոյս և պայծառութիւն տեսա-
րանին՝ հարկաւոր է։ — Մեր ամենէն ցանկալի և
պիտանի պատմիչն՝ Մովսէս Խորենացի՝ իրաւամբք
կ'ըսէ. «Ոչ է պատմութիւն ճշմարիտ՝ առանց
» ժամանակագրութեան ». բայց դժբաղդաբար
ոչ ինքն և ոչ շատք 'ի պատմչէից մերոց, մանա-
ւանդ հիներն, հատուած և յայտնի ժամանակա-
գրութիւն մը բռնած և յիշած չեն իրենց պատ-
մութեան մէջ. միայն երբեմն այս կամ այն թա-
գաւորի և կայսեր տէրութեան տարիներուն կու
յարմարցընեն իրենց պատմած դիպուածները. և
որովհետև այն թագաւորութեանց սկիզբն այլ
ծանօթ Թուականի մը վրայ չեն դրած՝ դարձեալ
տարակուսելի կու մնայ բանն. մանաւանդ որ
թագաւորաց տէրութեան սկիզբն՝ շատ կու զա-
նազանի ըստ այլեայլ հաշուոյ պատմչէից. մին
բանիւ բարեկարգ և հատուածուն ժամանակա-
գրութիւն մը չկայ մեր հին պատմչէից մէջ, որով
պատմութեան դիպուածներն այլ անհատուա
կու մնան։

Ժամանակագրութեան պակասութիւնն կու
յայտնէ տուեալն այլ պակասութիւն կամ խաթ-
նակութիւն. և յիրաւի, ազգերնիս եթէ հնուց
'ի վեր ունեցած է իրեն յատուկ տուեալ՝ որով
և ժամանակաչափութիւնն մը, (ինչպէս վերջը պի-
տի տեսանես), սակայն դրացի և տիրող և զանազան
ազգաց օրինաց և վարչութեան տակ ընկնալով,
կամ գոնէ անոնց հետ սերտ յարաբերութիւն
ունենալով՝ ստիպուեր է իր տուեալը և տարի-
ները անոնց յարմարցընել. երբեմն Բաբելացւոց
կամ Նաբոնասարայ Թուականը վարեցով, եր-
բեմն Յունաց կամ Ալէքսանդրի կամ Սարբոց
ըսուածը, երբեմն Պարսից, երբեմն Հռովմայե-
ցւոց, յետոյ Կ.Պօլսի կամ եկեղեցական Թուա-

10249926



կանը, և այլն. մինչև որ այս ամեն ազգաց մեջ ձաւղ և հարկաւոր ազգ.ցուԹիւնէն քիչ շատ ազատելով, և բարեբաղդուԹեամբ յառաջ քան զծագումն Հապարտացւոց Թուականին (հիճրէԹ), ՚ի կէս ջ դարու՝ եկեղեցական ծնից կարգը Նաստաեղու սխալուած՝ կարգաւորեց իր բնիկ տուքմարը, և անոր հետ մէկտեղ ժամանակաչափուԹիւնն ալ. տօմարին նորոգած տարիէն, կամ Քրիստոսի 552 տարիէն՝ ակսելով Թուական մը, որ կ՚ըսուի Հայոց նաւական կամ Մեծ նաւական, և ս նաւրուայ նաւական կամ Պարսից. այս Թուականս է որ անկէ ետև ՚ի պատմչաց և ՚ի բոլոր ազգէն գործածուելով՝ կու շարունակուի մինչև հիմայ: Բայց այս այլ յայտնի է որ եալքի երկու դարուս մէջ՝ ազգերնիս ԹէՀ բնակուԹեամբ և ԹէՀ ծանօԹուԹեամբ աւելի մօտենալով արևմտեան ազգաց, ըստ հաստատակաց սովորուԹեան՝ Քրիստոսի Թուականը և յունէան տուքմարը կու բանեցընէ, առանց Թողլու իր եկեղեցական տուքմարը, և Թուականին շարունակուԹիւնը յօրտոյցս, ՚ի ձախատս գրոց և ՚ի կոնդակս, և առանց նման աւելցնելու մէջ: Այս Թուականիս սկիզբը գիտնալէն ետև՝ դիւրին է անոր տարիներով պատմուած դէպ.քերը համեմատել Քրիստոսի կամ ուրիշ Թուականի հետ: Միայն ԹէՀ Քրիստոսի ԹուականիՀ յունէան տուքմարուս է յարևելս, յարևմուտս՝ անոր նորոգուԹեամբն՝ որ կ՚ըսուի Գրէգորեան կամ Նոր պոմարը. հիմայ ասոնց զանազանուԹիւնն այս է՝ որ նորն (որ և Լատինաց կ՚ըսուի) 12 օր կու կանխէ քան զյունէանն (որ և հին կ՚ըսուի). ասոր յանուարի մէկն՝ Լատինաց կամ նորոյն 13 է:

Արդէն գիտես, Հայկակ, որ մեր Հայոց ԹուականիՀ ոչ նոր և ոչ հին տուքմարին տարին ունի (ոչ գրիգորեան և ոչ յունէան), որ ամբողջ

10249926



արեգակնային տարիով են, այսինքն 365 օր 5 ժամ, 49'. ըսել է որ 365 օրէ զատ՝ տարւոյն վրայ վեց ժամի չափ յաւելուածն ալ՝ ի հաշիւ կ'առնուն, որ և վերջէ վերջ՝ չորս տարւոյ մէջէն 24 ժամի կու մօտենայ, որով օր մ'ալ կ'ու ձեւանայ. և ահա յուլեան և նոր տումարն՝ իրենց թըւականին ամեն չորրորդ տարին 366 օր կու հաստրեն, և նահանջ տարի կ'անուանեն, մեկալ երեք տարիներն ալ 365 օր և հասարակ տարի: Իսկ Հայոց Թուականն նահանջ չունի, այլ ամեն տարիներն ալ հասարակ տարի են, բնական օրուան չափով, այսինքն տարին միշտ 365 օր կը համրէ. որով յայտնապէս ուրիշ հին ազգացնման՝ սխալ և շարժական է իր տարին և Թուականն ալ: Սխալ է, վասն զի արեւուն կամ երկրիս շրջաններուն չի յարմարիր, պակաս կու գայ. ամեն տարիէն 5 ժամ 49' պակաս հաշուելով՝ դարերու մէջ արեգակնային շրջանը մեծապէս կարձեցուցած կ'ըլլայ. անանկ որ երբոր երկիրս 1460 անգամ արեւուն վրայ կու պտտի տուգիս՝ ըստ յուլեան և նոր տումարի, հինն կամ հայն՝ 1461 պիտի համրէ. կամ թէ ուրիշ կերպով ըսեմ, երբ հայն և լատինն այս տարիս մէկտեղ սկսելու ըլլան՝ իրենց տարեգլուխը նոյն ամսոյն նոյն օրը սեպելով, յետ 1460 անգամ երկրիս շրջապտտութեան զարեգակամբ՝ լատինն կամ նոր տումարն նոյնքան տարի կ'ունենայ, իսկ հայն մէկ տարի մ'աւելի. որովհետեւ երեն տարին քանի մը ժամ կարճ է. իրաքանչիւր տարիէ թողուած ժամերն՝ ամեն չորս տարւոան մէջ օր մը կու կազմեն, 1460 տարւոան մէջ ամբողջ 365 օր կու գումարուին. հայն այս 365 օրն ալ՝ (որ իր տարւոյն սովորական չափն է) կ'աւելցնէ Թուականին վրայ նոր Թուով մը. իսկ լատինացին այս 365 օրը չգրուած ըլլալով ամեն չորս տարւոան վրայ (փետրուարի եւսը օր մ'ա-

ա.ելցընելով ) ՝ի հարկէ 1461 համրելոս աեպ՝ 1460 պիտի համրէ : — Արդ յայտնի է որ այս հին տա֊ րեմոյն կարճաւթիւնն՝ Թոռւսականին շարժը կ՝աւելցընէ. որուն աւելի պայծառ օրինակ է մահմե֊ տականաց տարին՝ որ ամբ աւելի կարճ է, լուսնա֊ կան ընթացով, այսինքն լուսնի 12 անգամ փոփոխա֊ թիւնն համրելով, որ կու գումարեն 355 օր, և արեգակնային շրջանէն 10 կամ 11 օր պակաս տա֊ րի մը կ՝ունենան, որով իրենց Թոռւսականն (հիճ֊ րէթն) շուտով կ՝ածի. մեր 97 տարուան ծերն՝ ըստ Տաճկաց լման 100 տարուան կ՝ընկայ, և ի֊ րենց երկարակեացներն՝ մեր չափով քիչ մը կու կարճնան : — Արդ ինչպես որ այս լուսնական տարին պակաս և յայտնի սխալ է՝ եթէ հաս֊ մատեք երկրին բոլորմանը տալ ցօրուան վրայօք, այս֊ պէս այլ Հայոց տումարին տարին (թէ և պա֊ կաս սխալ), վասն զի կ՝ընդունի արեգակնային տարի՝ բայց ճիշդ չափովը չընդունիր, պակաս կու հաշուէ :

Ոչ միայն սխալ ըսի այլ և շարժական կ՝ընկայ տա֊ րին : Ամեն քիչ շատ երկինքը և երկիրը գիտալ ալիք և մրրիկ, երկրաշարժք անգամ, և մահա֊ ւանդ ատոնք, հնուց ՝ի վեր ճանչցեր են արեւուն տարեկան շրջանը, և անոր երկու անգամ գիշե֊ րահաւասարը և երկու անգամ կայքը կամ դարձ֊ քը, ցորեկուան և գիշերուան ժամուց երկարու֊ թեամբը և կարճութեամբը. երբոր այս բաներս՝ որոնց հետ կ՝ըսեմք ուսումնական լեզուաւ՝ ուզե֊ նամք հասատատել ամսոյ օրերուն վրայ (ինչպէս որ՝ ի սկզբան հաստատուած են՝ ի գիտոցց կամ յաստղաբաշխից), յուլեան կամ նոր տումար բա֊ նեցընողին՝ միշտ նոյն ամսոյն նոյն օրը կու հանդի֊ պին այն կէսերն, իսկ Հայոց տումարին՝ շուտ տա֊ րին հետ մը օր մ՝առաջ կու հանդիպին. ինչպէս, եթէ յամին Քրիստոսի (1870) գարնանամուտն

10249926



*կամ գարնանային գիշերահաւասարն իր մեհեկան ամսոյն 26ին կու հանդիպէր, ինչպէս որ նաև 1868ի, 1869ի, 1871ին, յամին 1872 մեհեկանի 25ին կը հանդիպի, 1876ին մեհեկանի 24ին, և այսպէս կարգաւ. վասն զի ջրոյ տարին հեղ մը նահանջ չընելով, օր մը չաւելցնելով, իր ամիսներուն օրերն առաջ կ'անցնին, և չեն միաբանիր արեգակնային կէտերուն. այնպէս որ 1460 տարուան մէջ այս կէտերը Հայոց տարուոյն ամսոյ ամեն մէկ օրերուն ալ հանդիպած կ'ըլլան կարգաւ. կէտերն տեղերնին կու մնան, բայց ամսոցն օրերն անոնց վրայ կու փոփոխուին: Ահա այս է ջրգնական ըսածին մեր առումարին. և որովհետև մեր ամիսներն և տարին միշտ (ջրոյ տարին հեղ մը) առաջ կ'անցնին քան զյուլեան կամ նոր տումարը, անոր համար այլ մեր տումարն կամ տարին կ'ըսուի չտաւղխաղաց:*

*Բայց եթէ միայն այս փոփոխութիւնս ըլլար մեր և նոր տումարին տարբերութիւնն՝ ինձ կամ պակասութիւն մը չէր ըսելն, թէ գարնանամուտն մեհեկանի 25ին է կամ 30ին, կամ նաւասարդի 5ին, և այլն. անունն կը փոխուէր, իրն նոյն կու մնար: Սակայն մեծ ինձ և չփոթութիւն կ'ըլլայ այդով. վասն զի ամեն տումար հաստատուած է երկու մեծ և գլխաւոր բանի համար. մէկն երկիս կու վերաբերի, մէկայլն երկնից. առիկայ մարդուս կրօնից կամ ապագայ կենաց, անիկայ երկրաւոր կենաց և տարուանին համար. մէկով երկրագործութիւն կու կանոնաւորի, մէկայլով կրօնական պարտք և կարգք: Երկրագործին համար հարկ չէ որ ամիսն այսպէս կամ այնպէս անուանի, կամ այսչափ և այնչափ թուով օրեր ունենայ, այլ հարկաւոր է որ այն օրերն, կամ թէ տարուոյն ներքանչիւր օր այլ արեգակնային շրջանին մէկ որոշ կէտն ի վրայ հաստատուած ըլ-*

10249926



լայ. վարուցանի, նաւարկութեան, և ուրիշ շատ բանի համար՝ հարկաւոր է արեւուն շրջանը գիտենալ, թէ ո՛ր ամսոյն ո՛ր օրը կ'ըլլայ գարնանամուտ, երբ հովից և ձեան եղանակները, երբ զով օրեր, և այլն. որ ըստ այնմ իւրաքանչիւր բնական արուեստաւոր իրենց գործը չափեն, և կատարուի կենցաղական անհեաւթիւնն՝ իր յարմար և հարկաւոր ժամանակին. և ինչպէս մէկ օրուան գործ անհեաւթիւնն կու չափուի ժամացոյցի մը վրայ, այսպէս այլ ամբողջ տարեկան ժամացոյց համ օրացոյց պէտք է: Արդ այս ժամուց և ժամանակաց կէտերը՝ միայն երկինք նայելով էն կրնան գտնել ամեն արուեստաւոր. շատ քիչերն կան որ կարենան արեգականային շրջանին փոփոխութիւնները չափել և ճշդել. հարկ էր որ հասարակաց համար այն փոփոխութիւնները, այն կէտերն՝ տումարի վրայ առնուին, այնինքն քաղաքական տարւոյ ամսոց օրերուն վրայ համրուին. և ըսուի թէ այս ամսոյս այս օրս՝ արեգականն՝ երկնից (համ կենդանակամարին) շրջանակին այս որոշեալ կէտն է, այն օր՝ այն կէտը. և թէ՝ երբ արևն այն կէտին վրայն է՝ այն օր գորեկն այսչափ ժամ, գիշերն այսչափ ժամ կ'ըլլայ, և տաքութիւնն ու ցրտութիւնն (ընդհանրապէս) այսչափ աւելի համ պակաս: Արդ այսպէս ճանչնալու և ըսելու համար՝ հարկ է անշուշտ որ այս օրս համ այն օրն այլ՝ իրենց յատուկ անուններն ունենան. և ասոնք են ամիսն և իրենց (աւուրց) քանիերորդքն. — ուրեմն հարկ ալ է որ ինչպէս իր արեգականային շրջանին կէտերն հաստատուն են (՝ի կենդանակամարին)՝ նոյնպէս տումարին վրայ ալ հաստատուն ըլլան. այսինքն տումարին համ ամսոց ամեն մէկ օրն՝ արևու շրջանին մէկ մէկ կէտին հետ հաստատ կապուած ըլլայ. և այն ամեն հաստատուն և անշարժ կ'ըլլայ և կ'ըսուի տու-

մարն և օրերուն երկայնութիւնն. ապա թէ ոչ՝ ոչ միայն շարժուն այլ և չփոթ. եղանակք տա- րւոյ և օրերուն չափն (կարճութիւն կամ եր- կայնութիւն) որոշ անուն և նշանակ մը չեն ու- նենար. կամ աւելի պարզ լսելով, ամիսներն և երեսից օրերն ամենևին գան մը չեն նշանակեր, բայ՝ ի Թուէն. վասն զի գարնանամուտն՝ որ հի- մայ մեհեկանի կամ արեգի մէջ կու գայ, առեն մ՚ալ ահկի ամիսը կու գայ, առեն մը քաղցի, և այլն. ամեն կէտ ամեն առնոյ ամեն օրուան կու հանդիպին զանազան տարիներ: Ասով երկրա- գործաց և նմանեաց արուեստից չփոթութիւն կ՚ըլլայ, որ օր ընելնին չեն գիտնար. և ինքն իրեն հարկ կ՚ըլլայ որ հաստատուն տումար կամ օրացոյց մը քնաւեն:

Նոյնպէս եկեղեցական տարին այլ հաստատուն տումար մը կ՚ուզէ անհրաժեշտ. վասն զի ինքն այլ երկրագործի և աստեղաբաշխի պէս, և այլ աւելի, տարւոյն ամեն մէկ օրը իմանալի երկնից մէկ մէկ կէտին՝ այսինքն յիշատակի հետ՝ կապած է. և գարձեալ կ՚ուզէ որ այն կէտերն այլ արե- գականին կէտերուն յարմարցընէ, որպէս զի ան- մոռաց և անչփոթ կարգաւ կատարէ իր գործը: Ասոր գլխաւոր պատճառն այլ բնական և յայտ- նի է. որովհետև իր յիշատակներն ըստ մեծի մա- սին երկրիս վրայ և որոշեալ օր մը հանդիպած են, կ՚ուզէ որ ամեն տարի նոյն արեգականային հաս- տատուն օրուան մէջ հանդիպածը՝ գարձեալ նոյն օրը՝ նոյն կէտին անփոփոխ կատարէ: Օրինակի համար. տեսան մեծով Քրիստոսի մարդեղութե- օրը, կամ Ծնունդը, կամ Քառասնօրեայ՝ ի տա- ճար գալը, կամ Տիրամօր ծնունդը, Ընծայումը, Վերափոխումը, կամ Առաքելոց և Հրեշտակապետի նահատակութեան և մահուան օրերը՝ ձիշդ նոյն եղանակին նոյն օրերուն կատարէ: Այդ եթէ այս

10249926



յիշատակները մեր Հայոց անհատատ ոսմանքին օրերուն վրայ հատատեր և ըստ այնմ ոսնէր, ինչ կ'ըլլար. — օր մը Փնուռդը ձմեռուան խորը կու ուներինք, օր մ'այլ ամառուան տաքերուն: Վերափոխումը՝ մէկ մը ընկան օրերը, մէկ մը ձիւնե- ներու մէջ. ըստ այսմ ամեն ոսներ և յիշատակներ այլ անդադար և անպատճառ կու փոփոխէին:

Ոչ ոք յանձն կ'առնու այս բանս. սեղ մը և ե- կեղեցի մ'այլ չկայ՝ որ յանձն առած ըլլան: Ըսել է որ շարժուն և անհատատ տուման ունեցողք այլ՝ այս բանիս համար հատատատուն կերպ մը տուման մը բնատած և ընդունած են. նոյնպէս այլ երկրագործութեան և ուրիշ կարևոր արուես- տից և քաղաքական կարգաց և հանդիսից համար՝ պէտք է որ հատատատուն տուման մ'այլ ունեցած ըլլան այն ամեն ազգք և ժողովուրդք՝ որք չափա- ւոր քաղաքականութիւն և կրթութիւն մ'ունե- ցեր են, ինչպէս մեր Հայոց ազգն այլ՝ շատ պա- րերէ առաջ: Ուրեմն մեր ազգն այլ իր շարժուն քաղաքական տումարէն զատ՝ անշարժ, հաստա- տուն և հին տումար մ'ունեցեր է. տումար մը կրօնական, երկրագործական և քաղաքավարա- կան, որով և հաստատ ժամանակագրութիւն մը:

Ահա այս տումարս և մատր սկիզբը, և մեր ժա- մանակաչափութեան կամ թուականին հատա- տուն և հին կէտը՝ կ'ուզեմ գտնել և ցուցընել քեզի այսօր, Հայկակ:

## Բ

Եկեղեցական կարգաց նկատմամբ՝ հատատուն ոսմարկ պէտքն միանգամայն հատատատութենն՝ սրդէն ծանօթ էր քեզի, և պիտէր որ մենք մեր շարժական տարիէն զատ՝ եկեղեցւոյ համար ու- նինք անշարժ յուլեան ոսմար մ'այլ՝ որ Յոյնք

ասուածոյ կ'ըսուի, այս ամենական կամ արքապէր գրոց մէջ գործածուած ըլլալուն համար. հոն տա-րուոյն ամեն մէկ օրուան վրայ հատուածուած են ամէն արբոց և տէրունականք, ըստ օրինակի Յու-նաց և Լատինաց, և միշտ անշարժ կուծնան ամէն, նահանջ այլ ընելով, աւելեաց 5 օրերուն վրայ վեցերորդ մ'այլ դնելով ամեն չորս տարի, (փո-խանակ փետրուարի վերջը): Ահա ուրեմն ունինք եղեր հատուածուն տարի մ'այլ. սակայն այս Յայսմաւուրքս կարգաւորութիւնն շատ հին չէ-րևիր. ձգ դարուն մէջ չինուած են մեր հիմայ ու-նեցած Յայսմաւուրքն: Բայց ամենը այսպէս հատուածուն աւուրց վրայ բաժնող և կարգաւո-րողն՝ դար և կէս այլ առաջ եղած է, մեծ գիտ-նական և սոփեստէան Յովհաննէս Սարկաւագ վար-դապետն. որ յամին 1116 նորոգեց տումարը, և այս հատուած կերպը դրաւ. նոր Թուականի մ'այլ սկսելով Քրիստոսի 1084 տարիէն, որ ըսուէցաւ Փոքր կամ Սփոյռ, և էր Հայոց Թուականին 533 տարին. վասն զի այն տարի՝ լմընցեր էր հինգհա-րիւրեակ ըսուած 532 տարուան շրջանն, սկսուած մեր մեծ Թուականին հետ (յամին Քրիստոսի 552). և երբ նորէն ամենց շփոթութիւն կ'ըլլար, Սարկաւագ՝ մանր և յատակ քննութեամբ տա-րի մը գրեց, ցուցուց սխալմանց պատճառը և հարկաւորութիւնը նոր և անփոփոխ դասաւո-րութեան ամենց, զոր և ըրաւ. և այնուհետև գործածելի եղաւ, և իր անուամբ կոչեցաւ Սար-կաւագապէր կոչ: Իր, կամ Յայսմաւուրքս հատ-ուածուն տարին կուսկսի ՚ի 11 օգոստոսի (ըստ հին տումարի, ըստ նոր տումարի հիմայ 23ին). այս տարեդլխին օրուան պատճառը քիչ մը վեր-ջը կուտեսնենք:

Յառաջ քան զՍարկաւագ ինչպէս կուվարէին եկեղեցականք. – յայտնի է որ հինգհարիւրեակ

*կամ 532 տարուան շրջանով, որով ամեն եկեղեցիք այլ կու վարէին.— տակաւին դիւրութեան համար, միշտ կու վայլէր պարզ հաստատուն տուեալ մը ունենալը, զոր մեր առաջին տումարագիրքն՝ Ներսէս կաթուղիկոսի առեն, յամին 553, էին դրած. բայց անկարելի էր որ իրենք այլ չունենային՝ թէ և անկատար՝ մէկ որոշ կանոն մը, կամ քանի մը հաստատուն օրներ. անկարելի էր որ իրենցմէ դար մ'առաջ եղած թարգմանիչք մեր և անոնց աստուածաշնորհ առաջնորդքն Սահակ և Մեսրովպ, ամեն ազգաց գիտութեամբ հմտացեալքն՝ կարգաւոր տումար մը չունենային, գոնէ եկեղեցւոյ մէջ: Եւ յիրաւի կու գանեմք որ, ա. կան հին օրնացոյցներ կամ հին կարգաւորութենէն օրէն՝ զոր Ս. Սահակ գատաւորած է, ըստ վկայութեան նախնեաց, որոց մէջ երկու կերպ գատաւորութիւն կայ. մէկ մը ըստ ամսոց Յունաց կամ Լատինացւոց, այսինքն մեան մի օրէն՝ յուլեան տումարին ամսոց վրայ հաստատուած, մաս մ'այլ հին Հայոց ամսոց վրայ. և ինչպէս առաջինք՝ այսպէս սոքա այլ անշարժ են, և առանց տարեգլուխն (կամ առաջին ամին նաւասարդ) այլ Սարկաւագայ պէս օգտուողն կու սկսի. ըսել է որ Սարկաւագ այլ Ս. Սահակայ հետևեր է:— Բ. Ս. Սահակայ աշակերտաց Թարգմանած գրոց մէջ քանի մը տեղ յոյն կամ եբրայեցի հաստատուն օրերուն դիմաց՝ Հայոց ամսոց օրեր գրուած են, ըսելով, «որ է հայերէն» այսինչ ամիս և այս քանիներորդ օր ամսոյն: Արդ եթէ հաստատուն հայ տարի մը չենթադրէին՝ չէին կրնար այնպէս ըսել. և հաստատուն տարի մ'ենթադրելնին յայտնի է անով՝ որ այն յուլեան տումարի պատշաճեցուցած օրերնին՝ կամ Հիշդ Սարկաւագադիր կարգին, կամ Յայտնութեան գրոց մէջ քանի մը տեղ յոյն կամ եբրայեցի հաստատուն օրերուն կու համաձայնին, կամ*

անանց մօտ: Անանց մօտ լսածս այս է. մեր նախնիք երբեմն Յունաց կամ Ասորւոց գրքեր թարգմանելու առեն՝ ամսոց օրերուն համեմատութիւնը թիւնը դիւրացընելու համար ուրիշ ձար չեն գտած, բայց եթէ միացընել մեր և անոնց ամսոց սկիզբները, այսինքն առջի օրերը. այսպէս, արեգի, մարտի և նիսանի մէկերը մէկտեղ սկսելով, նաւասարդի, օգոստոսի և իլուլի մէկերը մէկտեղ. և այլն [1]: — գ. Երբեմն ալ մեր նախնիք փոխանակ արեգի՝ նաւասարդը զուգած են ընդ մարտի և նիսանի: Կսել է ուրեմն՝ որ Սարկաւագին 700 տարի առաջ այլ՝ մեր գրոց թարգմանութեան առեն՝ նոյն օրինակով հաստատուն հայ տարի մը կու ձանչցուէր՝ շաբաթականէն կամ քաղաքականէն զատ:

Կու մնայ գիտնալ թէ հատա յառաջ քան զՍ. Սահակ՝ իր նախորդ և համարիւն հայրապետքն, մինչև ի Ս. Լուսաւորիչն, ինչ տումար կու բանեցընէին եկեղեցւոյ ծնից. կամ անկէ առաջ՝ Տրդատ հայրենասէր մեծ թագաւորն, իր Սրշակունի նախնիքն, և անոնցմէ առաջ մեր բնիկ Հայկազունքն՝ ինչպէս կու ծնէին իրենց գայլն ծնեալը, զոր ի հարկէ ունէին. և արդէն պիտեւմք անոնց մէկ քանին, ինչպէս Նաւասարդաց կամ Ամանորայ (նոր տարւոյ) ծնեալը, Աստղկան ծնեալը, Վարդավառի ծնեալը, և այլն. որոնք իրենց առաջին ամսոյն (նաւասարդի) մէջ կու կատարուէին, ծառոց ծաղկանց և ջուր ցանելու

1 Օրինակ մը. Յառաջաբանն Ասաքելական կանոնաց կ'ըսէ. «Յամին 339 իշխանութեան Յունաց.. որ օր չորս » էր մարգաց ամսոյ, յաւուր միաշաբաթոջ, որ է կատա» րումն Պենտակոստէից»: Թուականն է Աղեքսանդրի, կամ Սելևկիացւոց 311 տարին, Քրիստոսի 30 թուականն. Հոգեգալստեան կիրակին չորս յունիսի:

*կամ ջուց մէջ լողալու խաղերով. – պիտենք այլ որ Հայաստանի մէջ այսպիսի խաղեր՝ տարւոյն միայն քանի մ՝ամսոց մէջ կրնան կատարուիլ, եւ կրկին եւ կրկնապատիկ ցրտութեանը համար. – անկարելի էր որ այն ոտներն շարժական տարւոյ օրերու վրայ կապուէին, և յայտնի այլ է հատատուն օրերու վրայ դրուած ըլլալնին. երեկոյ ատենգլուխն և նաւատարդն այլ՝ յունւոյ տարւոյ օգոստոսի 11ին էր: Եւ որովհետև անտարակոյս պիտենք որ քաղաքական շարժուն տարին այլ մի և նոյն հայկական 12 ամիսներով և աւելցաց հինգ օրերով կու բաներ, հարկ է ըսել թէ ուրիշ հին գիտուն ազգաց պէս երկու տարի ունէին, մէկն քաղաքական, միւսն ոչխարին՝ որ էր հատատուն. և անտարակոյս տարեմուտը էր հինգ ամսով մ՝առաջ, ուր ամէն ակսելով, որուն անուններ կու նշանակէ գարնի. և կու սկսի քուն արեգականն ըսուելու վայելուչ օրէն, այսինքն գարնանամուտէն (յ'9–21 մարտի). և սով այլ նաւատարդին գլուխն կամ քաղաքական տարեմուտն՝ նոյնպէս ձիւղ օգոստոսի 11ին (23ի) կու հանդիպի:*

## Գ

*Տարին գարնանամուտին օրը սկսեր (ինչպէս որ Հրեայք և Պարսիկք այլ կ'ընէին երեկոյ կրօնական կարգաց համար՝) շատ վայելուչ և բնական է, և մեծ պատիւ կ'ընէ անոր՝ որ զայս նախ գըտաւ և դրաւ. եթէ ըլլայ Մովսէս մարգարէն՝ ըստ Հրէից, և եթէ ըլլայ երկու ալ հին մէկը՝ զոր Հայք երեկոյ ազգին այլ, տուժարին այլ, աւետարանոց այլ հեղինակ և նահատակ կու ճանչնան: Բայց ինչպէս քաղաքական օրինօք նաւատարդն՝ օգոստոսի 11ին ըլլայ գլուխ տարւոյ և աշխարհահռչակ ոճիռ. անանկ օր մը՝ յորում արեգակ.*

նույն շրջանին մէջ նշանաւոր կէտ և հանդիպում մը չկայ։ Ո՞վ էր գրած այս կարգը, զոր մեր Ս. Թարգմանիչք այլ բառեր են, Սարկաւագն այլ, Յայտնաւորքք այլ պահեր են. և որ մեծն է՝ Հայոց մեծ Թուականը հաստատողքն այլ նոյնպէս անփոփոխ Թուղեր են. վասն զի իրենց տումարը նորոգելուն և Թուականը կարգելու տարին՝ ամենևին չգիտան տարեգլխոյն, որ այն տարի յունվար 11ին կու հանդիպէր, այսինքն Հայոց քաղաքական շարժուն տարւոյ գլուխն կամ նաւասարդն՝ Քրիստոսի 552 Թուականին՝ կու սկսէր ՚ի 11 յունվար։ — Արդ Թէ որ իրենցմէ, և նաև մեր Թարգմանիչներէն առաջ Հայ տումարատիր մը բնաւեներ, ատոնցմէ 300 տարի վեր եկնելու է, մեր բազմահանդէս ե Արտաշիսի օրերը. վասն զի Թէպէտ մեր Արշակունեաց նախահայրն Վաղարշակ՝ շատ գեղեցիկ կարգեր և սովորութիւններ հաստատեր էր ՚ի Հայս, կ'ըսէ Խորենացին (Բ. ծթ.) բայց չէր գրած «զջաբաթէից և զամսոց » և զտարեաց բոլորմանց » պիտանական և օրինաւոր կարգ մը. այլ «այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի »։ Աստր Թուն այլ Վաղարշ կարգեց նաւասարդին նոր տարւոյ ծնեները աշխարհահռչակ հանդիսիւ կատարել ՚ի Բագրեւանդ, իր հօրեղբօր Մաժան քրմապետին գերեզմանին և բակին քովերը [1]. բայց ոչ սա և ոչ իր պատմիչ Արտաշէս՝ չեն Հայոց բնիկ տումարը և ազգային ծանը կարգադրողքն. մանաւանդ Թէ Արտաշէս կերպով մը խափանած կ'երևի Հայկազանց կարգադրութիւնը, Թէ և աւելի կանոնաւոր տումար մը մացընելով. որ էր անշուշտ յունական տումարը, առնըլով ՚ի Հռովմայեցւոց. վասն զի պիտեմք ՚ի պատմութենէ՝ որ առաջին ինքն եղաւ Հռով-

1 Խորեն. Բ. կգ։

10249926



մայեցաց Հարկատու. իր աաեն կայսրն Տրայեանոս՝ զՀայաստան Հռովմայեցաց ինքնակալեաև գաւառ սեպեց. (Թէ և քանի մը տարի եաքը Ադրիանոս կայսր՝ նորէն կէս ազատ Թոլոց). այն աաեննեըը նաև Կապադովկացիք՝ (որոնց հին ժօմարն և ամաց անուանքն մօտաւոր են Պարսից և Հայոց) ընդուներ էին Հռովմայեցաց տուեմաըը. ըսել է որ Աւգուսթոսի ըրած տուեմարի կարգադրութեանն պես, ի 122 Թուին Քրիստոսի, էր Հռովմայեցաց տուեմարին համաձայնութեան մը, Թոլով ըստ մասին հին Հայկազանց կարգը և ժամանակաչափութեանը: Այս բանիս վկայ կ'ըլլայ հնախոյզ և բազմահմուտ Սարկաւագն մեր, որ կ'ըսէ, Թէ « հաւատամք ի ձիւն ամ Քրիստոսի » աւարտ առ Թոռնեանն Հայկայ ». Թուականին ատրանին՝ ոչ ըմբռնալ՝ պէտ ի հարկէ դադրիլ իմանալու է. իսկ Հայկայ Թուականն այն է՝ զոր աեղի յարմարապէս յետոյ կ'անուանէ ՀԱՅԿԱՅ ՇՐՋԱՆ. որ և մեր անշարժ և շարժուն տարինեըն և հին և հնագոյն տուեմարին ծանօթութեան պատճառ և առիթ պիտի ըլլայ հոս:

Վերը յիշեցի որ մեր Թէ շարժուն և Թէ անշարժ տարուան սկիզբն կամ նաւասարդի գլուխն կ'ընկնայ յունիան տուեմարին օգոստոսի 11ին (նոր տուեմարի 23). այս բանս մեկէն կ'իմացընէ որ աաեն մ'եղած է որ երկու տեսակ տարինեըն պէտք նոյն մեկ օրն սկսած են, երկուքին նաւասարդքն պէտ ի 11 օգոստոսի են եղեր, և երեք տարի միաբան երթալով՝ երրորդ տարին շարժուն կամ քաղդէական տարին՝ սկսեր է ի 10 օգոստ. յետոյ երկու տարուայ պէտ չ'9 օգոստ. և այսպէս ամեն չորս տարի օր մ'առաջ սկսելով՝ հեռացեր և կանխեր է քան զանշարժ տարին: Արդ ըսինք որ Հայոց տուեմարին սկզբնաւորութեան տարին (552 Քրիստոսի) նաւասարդի մեկն ի յունիսի 11ին էր, ձիշդ

ամիս մը կամ 31 օր առաջ քան զանշարժ տա-
րին. ըսել է որ 31 անգամ նահանջ ընելով հարս
տարին հեղ մը՝ այսպէս յառաջացեր էր քաղա-
քական տարին. արդ 4 անգամ 31 տարին կու
գումարեն 124 տարի. ըսել է թէ տումարին նո-
րոգութենէն 124 տարի առաջ թէ կրօնական և
թէ քաղաքական տարին նոյն օգոստոսի 11ին սկը-
սած են, որ էր Քրիստոսի 428 տարին. (վասն զի
124—552=428):

Ա՛լ աւելի վերը յիշեցի որ մի և նոյն ամսոյն օրն՝
արեգակնային կամ երկնից նոյն և մի որոշ կէ-
տին հանդիպելու համար՝ պէտք է 1461 անհա-
տատ և 1460 հաստատ տարի. ուրեմն որպէս զի
Հայոց երկու նաւատարդքն՝ կամ երկու տարե-
գլուխքն այլ իրարու հանդիպին, մի և նոյն օրը
ակաին, պէտք է որ 1460 նահանջաւոր կամ 1461
աննահանջ տարի անցնի. կամ աւելի ուղղութիւ-
պէս ըսելով 1460 տարեկան շրջան մը: Արդ ինչ-
պէս քիչ մ'առաջ տեսանք՝ մեր այս երկու տե-
սակ տարիներուն զուգաւորութենէն եղած էր 'ի
Թուին Քրիստոսի 428 (11 օգոստ.). անկէ եաև
դեռ չէ հանդիպած, բայց մօտ է հանդիպելու՝ յա-
մին 1888. որով կու լրանայ շրջան մ'այլ (1460
ամաց) մեր Թարգմանչաց օրէն մինչև 'ի մեզ. եակ
անկէ (428էն) առջի 1460 ամաց շրջանն սկսած
էր յամին 1032 նախ քան զԹուականն Քրիստո-
սի. անկէ առջի շրջանն այլ բնականապէս (1460
տարի ալ առաջ) յամին 2492 նախ քան զթիւ
Քրիստոսի: Ահա այս շրջանս է ՇՐՋԱՆ ՀԱՅԿԱՑ,
և այն Քրիստոսի Թուականէն առաջ 2492 տա-
րին՝ է ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅԿԱՑ, որ և կրնայ ըսուիլ
արժանապէս՝ տոմարագրոյն և վիճակագրոյն
Հին ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ, և սկիզբն ժամանակագրու-
Թեան. որոյ սկիզբէն մինչև հիմայ (Քրիստոսի
1870 Թուականին) կ'ըլլայ 4362 տարի: Ահա է

տարիք Հայոց ազգիս մինչև հիմայ, որուն նման հատատառ Թուականով՝ բայց՝ ի Հրէից, Զինաց և՝ ի Հնդկաց՝ հիմայ չկայ ուրիշ հին ազգ մը:

## Դ

Բայց այս պարծանքս կամ գիտուԹիւնս ապահովելու համար նաև օտարաց առջև, պէտք է հաւատաւնք քանի մը փաստերով և աւանդաւԹեամբք այլ, ՚ի վերայ երկու փաստիցն զոր հիմայ յիշեցի. այսինքն, մեկ մ՚որ մեր երկու աեղական տարիներուն զուգաւորուԹեան սկիզբն՝ կոր հանդիպէր ՚ի 1032 աին նախ քան զԿրիստոս. և զի ազգերնուս հնուԹիւնն՝ յայտնի է Թէ Կրիստոսէ 1032 տարիէն աւելի առաջ է, ապա անկէ առջի հանդիպուԹեանը տանելու է, որ է 2492ն: Եւ երկրորդ՝ որ յայտնապէս Սարկաւագ վարդապետ հին տումարներէ և պատմուԹիւններէ քննելով Հանչցեր, վկայեր և յայտնի էր այս Հայիս Շրջանս:

Ուրեմն մեր Թուականին և շրջանին սկիզբը գտնելու համար, քննենք Թէ ինչո՞ւ արդեօք Հայոց նոր տարին 11–23 օգոստոսի հաստատուած է. և ինչո՞ւ Հայկայ շրջանն սկսաւ 2492 տարի Կրիստոսէ առաջ. ևան զի ոչ աստեղաբաշխական պարագայ մը և ոչ նոր եղանակ մը կոր հանդիպին տարուան այն օրուանը վրայ. պէտք է ուրեմն տարի պատճառը բնաւէր պատմական դիպաց մէջ: Եւ նախ օտարազգեաց մէջ բնտրուելով ՚ի հին պատմուԹեան, կոր գտնենք իրաւցընէ Եգիպտացւոց մէջ (որ և մինակ կրնան հնուԹեամբ Հայոց հետ մրցիլ, և որոնց հետ դեռ ուրիշ շատ նմանուԹիւններ ունին՝ որ դեռ լաւ ապացուցուած չեն), կոր գտնենք որ այն Նեղոսի ափանց բնակիչքն՝

*Իրենց այն քարեբուռլիս գեաղն Հարսանեաց տա-
րեկան հանդէսը՝ արդարև աշնանային գիշերահա-
ւասարէն ամիս մը առաջ կու կատարէին, որ է
Հիւդ 11–23 օգոստոսի, Հայոց տարեգլխին օրը:
Մեր ազգն ալ այս տարեգլխին հանդէսներուն
մէջ, կու տօնախմբէր Հեթանոսութեան գարե-
րուն մէջ ըսհեղեղին յիշատակը, ինչպէս ինչուան
մեր օրերն ալ կու կատարուին՝ ջուի խաղերով և
ալաւնի Թռցընելով՝ ի տօնի Վարդավառին կամ
այլակերպութեան Քրիստոսի. վասն զի մեր տուրբ
Հարք օգոստոս ամսոյն 6ին հաստատած էին այս
տօնը, նոր տարիէն հինգ օր եաւ. և նայն օրը մեր
Հեթանոս նախնիք նուիրած էին իրենց Անահիտ
դիցուհւոյն. իսկ տարւոյն սկիզբն՝ ունէր իր առ-
անձին աստուածը: Բայց Թէպէտ և այս երկու
տօներն՝ եգիպտական և Հայկական՝ Թէ օրերուն
յարմարութեամբը և Թէ յիշատակաց՝ յարաբե-
րութեան մ'ունէին երբարու հետ, ի վերոյ այսր
ամենայնի այս երկու հին ազգաց ջրյաններն մէկ-
մէկու չէին Համեմատիր, այսինքն նոյն օրը չէին
սկսիր ու լմընար: Սակէ զատ՝ այն հանդիսից տօ-
նախմբութիւններն չեն ապացուցաներ օրուան ըն-
տրութեան պատճառը. վասն զի այն օրն չէ միա-
բանիր ոչ ըսհեղեղին սկզբանը և ոչ վերջնաբերն
հետ, և ոչ Նեղոսին ջրոցն ածմանը կամ նուազ-
մանը, և ոչ Շնիկ աստեղ արեգակնային ամբարձ-
մանը հետ. ապա ուրեմն ուրիշ պատճառ պէտք
է բնաւեր, Թէ մեր Հայկայ ջրյանին և Թէ իր առ-
ջի օրուան Համար:*

*Բայց նախ կարճ մը պարզեմ, Հայկակ, այս աս-
տեղաբաշխական յիշատակութիւնս. վասն զի ա-
մեն տոյգ տուման և ժամանակի չափ՝ աստեղաց
շարժմամբք և ջրյանօք կ'ըլլայ, Հայկայ ջրյանն
այլ ծանօթ նաև ուրիշ ազգաց՝ ուսումնասէր կ'ը-
սուի Շնհան ջրյան, կամ ըստ Եգիպտացւոց Սոթիս-*

հան չորյան. իրենք Սոթիս կ'անուանէին Շնիկ աստղը, որ Շուն համաստեղութեանց մէջ է և Փոքր Շուն այլ կ'ըսուի, և քան զամենայն աստեղս պայծառագոյն է: Իրենց երկրագործութեան համար ամենահարկաւոր էր գիտնալ նեղոս գետոյն աճելու և նուազելու օրերը, սկիզբը և վերջը. և դիտելով գտան՝ որ աճման սկիզբն կ'ըլլար ամառնային արևադարձին առեն, և գտած առենին Շնիկ աստեղ երևնալն այլ արևուն ելնելէն առաջ, (որ ուսումնասէր արեփռնայն ամբաշխօհ կ'ըսուի) նոյն օրերուն Հանդիպեցաւ. ուրեմն այն օրն իրենց տարեգլուխ դրին. բայց որովհետև իրենք այլ մեզի պէս քաղաքականօրէն շարժուն տարի կու գործածէին, որով ամենայն ծնունք և երկրագործութեան կարգեր կու փոփոխուին. հաստատ կրօնական և գիտնական տարի մ'այլ դրին աստեղաբաշխական քննութեամբք, և Հանչեցան 1460 տարուան չրջանը. իրենց երկու տեսակ տարինեերուն սկիզբն այլ կու զուգաւորէր Շնկան երևնալուն, արևադարձին և Նեղոսի ամբարձման Հանդիպած մի և նոյն օրը: Այս է Սոթիական կամ Շնկան չրջանն: — Դառնանք հիմայ մեր յիշատակաց:

Մեր հին ծօմարարքն և ծայամաւորք կ'ըսեն, Թէ յետ խառնակութեան լեզուաց ամեն նահապետ կամ ազգապետ Բաբելոնէն գառնալով այն երկիրը ուսկից ելեր էր, կամ ուր որ կ'երթար գրաւելու, պատուիրեց իր հետևողացը որ ծոնդխրեն հայրենիքը մոռնալնուն տարեգարձը: Մեր Հայկ նահապետն ալ, կ'ըսեն, մտաւ Այրարատ աշխարհքը կամ իր Թորգոմայ հօրը քնած կած երկիրը՝ օգոստոսի 11–23ին, և հրամայեց որ նոյն օրը տարւոյն սկիզբն առնուի: Կու հասաւեն գարձեալ, Թէ այս գիւցազնա առաջին եղաւ տարեցոյց տալու իր նուրածին ազգին, զոր

10249926



և կու պահէ մեր ազգն մասամբ անփոփոխ, ինչ- պէս որ իրեն աւանդուեցաւ այն նախնական դա- րերուն մէջ:

Այս է ահա մեր մէջը օգոստոսի 11ին տօնին պատճառն: Երկրորդ և աւելի տոյգ պատճառն է՝ Հայկայ դարձէն քիչ տարի վերջը՝ Բելայ յաղ- թուելն և սպանուիլն (որ եղաւ յամի 2492 Քրիս- տոսէ առաջ), ինչպէս որ ցուցուց հասարակ հայ- կական թուականին անընդհատ յաջորդութիւնն: Մեր պատմութեան ժամանակագրութիւնն ալ (որ դժբաղդաբար բաւական ճոխ չէ այս հին ժա- մանակաց վրայօք), կ'ընծայէ մեզի թուական մը՝ Հայկայ թուականին ցուցածին մօտ: Յովհաննէս կաթուղիկոս՝ ի Հայկայ ցվատլարշակ 2295 տարի կու դնէ. անկէ այլ մինչև՝ ի Քրիստոս 149 տարի. գումարն է 2444, որով միայն 48 տարի պակաս կ'ըլլայ քան զմեր թուականս (2492). բայց եթէ Հայկայ մահը սեպենք կաթուղիկոսին յիշածը՝ կրնայ մերինին հետ ճիշդ համաձայնիլ: Մեր խըն- դրոյն համար աւելի պիտանին այս է, որ հին օտար ժամանակագրուներն ալ ամենայն ճշդութեամբ կու համաձայնի Հայկայ թուականին հետ. վասն զի Ափրիկանոս և Եւսեբիոս իրենց մանրամասն թիւերովը Բելայ թագաւորութեան վերջը կու նշանակեն վերոյիշեալ 2492 տարին Քրիստոսէ ա- ռաջ[1]: Այս համաձայնութիւնքս Հայկական թը- ւականին՝ օտար ժամանակագրաց տուած թը-

1 Ասոնք Նինոսի թագաւորութեան տարին կու դնեն յ'2058նախ քան զՔրիստոս. անկէ այլ առաջ մինչև՝ ի մահ Բելայ երկու շար թագաւորաց կու դնեն՝ Ակրաբացւոց և Քաղդէացւոց, 440 տարի և 8 ամիս թագաւորած, իրենց տարիովը՝ որ էր 360 օր. որով 440 տարի և ութ ամիսն՝ կ'ըլլայ 435 տարի և 5 ամիս. արդ 435 + 2057 = 2492. որ է մեր Հայկայ թուականն:

10249926



*ականին հետ, և վկայութիւնք մեր ծովարափցոց և Յայսմաւուրցս, կարծեմ բաւականապէս իրա-*
*ւունք կու տան մեզի առանց տարակուսի ընդու-*
*նելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզ-*
*բը՝ Քրիստոսէ առաջ 2492 տարին. և մեր ազ-*
*գային գերագոյն ծանին համար՝ օգոստոսի 11-23ը.*
*որ այդ Հայկայ Թուականին առաջին տարին՝ կու*
*հանդիպի շաբաթշաբթի օր մը. որ և հաւանօրէն*
*տարուէ տարի ծանելի օր մ'եղաւ Հայկազանց. և*
*կընայինք ընդունիլ մեր պատմչաց երկիւղած ա-*
*նանդութիւնը, որք Հայկայ գործոց մէջ դիւցազ-*
*նական քաջութենէ վեր բան մ'ալ կու գիտեն, –*
*կրօնական դիմադրութիւն մը, ազատութիւն մը*
*'ի բռնութենէ առաջին կատարչին, կամ անոր՝*
*որ Աստուծոյ վայրաց պատիւը և պաշտօնն՝ իր ան-*
*ձին կու սեփականէր: Ատոր համար այս ծանական*
*օրս և հանդէսս պէտք է մեզի կրկնապատիկ սըր-*
*բազան և սիրելի ըլլայ:*

Առաջին շրջանն Հայկայ լրացաւ Դաւիթ մար-
գարէի Թագաւորութեան և մեր Պերճ (ը) հայ-
կազին ազգապետութեանը ժամանակ, յամին
(1032 նախ քան զԲրիստոս): Իսկ երկրորդ շըր-
ջանն լրացաւ՝ զարմանալի հանդիպութեամբ՝ այն
մեզի համար շատ ցաւալի տարին, յորում կեր-
պով մը նաև ազգերնուս միանձնաբար ինքնակա-
ցութենէն այլ լրացաւ լինցաւ, – յամին Քրիստո-
սի 428, – ուրբաթ օր մը: Այն սև տարին (428)
էր որ մեր վերջին Թագաւորն Արտաշէս Արշակու-
նի՝ Թագէն զրկուեցաւ, և Հայք իրենց ազգային
միապետէն. այն տարիէն 'ի վեր Հայաստան եր-
կու մեծ տէրութենց մէջ բաժնուեցաւ (Յու-
նաց և Պարսից), և ազգն երկու տէրանց ծառայ
կամ հպատակ եղաւ. և որ աւելի շատ զարմա-
նալի է, անկէ վերջը ամբողջ գ շրջան մ'այլ լրա-
նալու մօտ է (վասն զի 1442 տարին անցեր է), և

տղգերնիս միշտ նոյնպէս մնացեր է՝ երկու կամ
երեք մեծ տէրութեանց մէջ բաժնուած, թէպէտ
և հազար ու մէկ քաղաքական փոփոխութիւնք
և տիրապետութիւնք եղած են այս երկրին 14 ու
կէս դարուց մէջ թէ՛ի Հայաստան, և թէ իր մօտ
աշխարհաց մէջ: Ահա դ ջրջանս՝ յորում եմք, սկը-
սած է շաբաթ օր մը. և պիտի լրանայ քիչ տա-
րիներէ ետև՝ յամին 1888. յորում օգոստոսի 11–
23ն հինդշաբթի օր մը պիտի սկսի դ ջրջանն. զոր
ամենայն սրտով կու մաղթեմ քեզի, Հայկակ, և
ամենայն քու ժամանակակից ազգայնոց՝ որ եր-
ջանիկ սկզբնաւորութեամբ ըլլայ, և օգտակար
միաւորութեամբ մը բոլոր Հայազգեացս:

Յետ այսչափ վկայութեանց աւանդութեան և
պատմութեան և ազգային և օտար ժամանակա-
գրութեան, զոր 40 դարէ՛ի վեր ամբողջ ազգ մը
ընդուներ է, և հաստատեր են վեր հռչակաւոր
մատենագիրներն և եկեղեցական Հայրք, ալեաք
չէ վայելուչ սեպել, ընդունիլ և ծանախմբել այս-
պիսի յիշատակ մը, ծօն մը, որ է Հայկայ. կամ
յանդգնութիւն և անհեղութիւն չէ առասպել
սեպել այն ամեն բանը՝ որ պատմական ժամանա-
կաց սովորական ջրջանէն վեր կ՛ելլէ. մանաւանդ
երբ այնպիսի հին ժողովրդեան մը վրայ է խնդիրն՝
որուն պէտք է դիմել ամեն ժողովուրդ որ իր ծա-
գումը քնաւէ, այսինքն մարդկութեան հայրե-
նիքը, Եդեմայ երկիրը: Ծխաբէնն, չհաւանելէն
դիւրին բան չկայ. բայց կայ նաև աւելի դժուա-
րին բան մը՝ քան զերազանքք ծխաբէնն: Ինչ եա
կու հաւանիմ ուսանել, (նաև յանձն առնլով ա-
մենէն անաչառ քննութիւնն ալ) վեր հայրենեաց
մէջ յետ Ադամայ և յետ Նոյի՝ Հայկ մը, և կ՛ու-
զեմ նախանձիմ իր հանդիսին վրայ, որուն չեմ ալ
վախնար հրաւիրելու բոլոր յաբեթական ցեղին
սերունդները, որոնք այն հին ժամանակը չուներին

այնպիսի երևելի գլուխ մը կամ նեկայացուցչէ մը՝ ինչպէս էր մեր Հայկն:

Սակայն մի՛ կարծեր, Հայկակ, թէ ինչ որ պատմութեան կամ աւանդութեան կու գայեն մեր Հայկայ վրայ, ամենն ալ ի՛ուզեմ հաւատալի սեպել: Անտարակոյս է որ Հայոց ազգն ունէր գլուխ մը կամ նահապետ մը՝ ժամանակակից Բելայ, Բաբելոնի աշտարակին շինութեան առեն, և այս շէնքին կործանմանէն վերջը՝ եկաւ ապաւինեցաւ Այրարատայ երկիրը, որ անկէ ետև իր անուամբ կոչուեցաւ: Իր անունը, ըստ վրաց Հաոն, մեր մէջ կ՛ըսուի Հայկ, որ ըստ քերականական կանոնի լեզուաց՝ Հա միավանկ բառին նուազական կրնայ սեպուիլ. այս անուամբ կը ճանչնամք մենք մեր ազգը, և ոչ Արմէն կամ Արամեան, ինչպէս որ օտարազգիք կ՛ըսեն: Երբեմն մեր նահապետին անուն վերջապէս յոգնամբ կը գրուի Հայկն, մանաւանդ երբոր զՈրիոն նշանակէ, վասն զի այսպէս կոչուած է այս համաստեղութեան՝ մեր սուրբ Գրոց և եկեղեցւոյ սուրբ և խմաստուն հարց գրուածոց մէջ. որք հարկաւ ասով ազգային հին աւանդութեան մը կու հետևեան, ուսկից հաւանական է որ Յոյնք հնարած ըլլան իրենց Որիոնի առասպելները, եթէ հարկ սեպելու ըլլանք որ այս երկու ազգերէն (Հայք և Յոյնք) մէկը մէկալէն առած ըլլայ այդ աւանդութիւնը: Եթէ կարծիք ժողովրդեան և եթէ Հայաստանի վիպասանից ջոլտերդութիւն, այս համաստեղութեան լայն նոր պայծառութիւն մը կու տայ Հայկայ իրական էութեանը վրայ. այս էութիւնս հաստատապէս կու ստուգուի շատ մը աչխարհագրական անուններով ալ, որոնց ակիզբն և պատմութենէ և յաւանդութենէ կ՛ընծայուին մեր գիւղացին:

Մանաւորապէս Վանայ հովտակաւոր բարձրա-

Հանդակին վրայ կը գտնուին այս հին տեղուանքը, պայծառացած Հայոց նահապետէն, որուն գաւակները պահեցին երկայն ժամանակ, գրե- թէ 120 ծնունդ որդւոց որդի յաջորդելով՝ այն անուանները, և նաև երկրին առաջին շէնքերուն մնացորդները, որոնց մէջ հաստատած են ինչուան հիմայ իրենց ընտանի բնակութիւնները: Այս բարէբաստանդակ տրտնեստով և բնութեամբ զար- մանալի, աւելի գեղեցկացած է յաւերժ յիշա- տակաց արժանի Հայկայ գործքերով, որ դեռ կը հնչեն պատմութեամբ և աւանդութեամբ անուա- նի եղած շէնքերու մնացորդաց մէջ. ինչպէս են նախ և առաջ ամբողջ գաւառներ՝ որք լման հիւ- սիսային և արեւմտեան կողմը կը պատեն, որոց մէկն կ'անուանի Հայկայ մէկ որդւոյն անուամբը (Խոռ) Խորխոռունիք, և միւսն իր Թոռանը ա- նուամբ (Բազ) Բզնունիք, ուսկից և լման կո- չուեցաւ ծով Բզնունեաց: Ետքը՝ Նէբրովնայ լեռն. տեղացիք կ'աւանդեն թէ Նեբրովթ ուզեր է լե- րան գագաթը պալատ մը շինել, որ կործաններ է վրէժխնդիր կայծակներով, և ընկղմեր է լերան վրայ բացուած վիհերու մէջ: Այս լերան ոտքէն դէպ 'ի հարաւային կողմը կը տեսնուի երկայն շարք մը մեծամեծ ժայռերու զոր ռամիկն կ'ա- նուանէ Ո-ղտու- Քարեր. վասն զի կ'ըսեն թէ Նե- բրովթայ ուղտերն են ասոնք, որ լման եզերքէն աւազ կը կրէին պալատին կամ բերդին շինու- թեանը համար, և Աստուծոյ բարկութիւնն զա- նոնք 'ի քար դարձուց. և հաւանօրէն լերան հրա- բուխին աստուածեներէն փրթած կամ ժայթքած քարեր են: Լման հարաւային կողմը Կապո-փ- հող բարձր լեռը կայ ջրերուն մէջ երկնցած, հին աւերակ 'ի վեր ձանչցուած իբր երկաթէ և կա- պարի հանքերուն. ասոր հարաւային կողմը մին- չև հիմայ Բեըս-, այսինքն Բելայ (որ է Նեբրովթ)

անուամբ գեղ մը կայ. աւանդութիւնն կ'ըսէ թէ այս հակային դիակը հոն իջուցին: Ձին նոյն կողմը, բայց աւելի դէպ յարևելք Տըղ գեղը կայ, ուր ըստ աւելական աւանդութեան, հակային մարմնոյն մէջէն Հայկայ արձակած նետը քաշեցին, և բացուած ծակէն արևուն ճառագայթները կողմէ կողմ շուլալով կը թափանցէին: Քառասունէն աւելի ջուրեր, առաւել կամ պակաս երկայն ընթացքով՝ կը թափին Ճին մէջ. ասոնց ամենէն մեծն է Հոլպոմայ գետը, որ հինայ Խոշապ կամ Ինգլիս գետ (Ինգլի-ջայ) կ'ըսուի, որուն ակունքներն Թէպէտ և գանուած չեն, սակայն յայտնի է որ արևելեան կողմէն կու գայ և Ճին հարաւային արևելեան անկիւնը կը թափի, գետի մը քովէն՝ ուսկից իր անուանը կ'առնու՝ Հոլգոմ: Այս գետայս լայն և ընդարձակ ձորը (որուն մէջ գետ 40էն աւելի հայաբնակ գեղեր կան՝ հին Հայկական անուններնին պահած են. և քանի մը հասին վրայ կ'երևան իսոր հնութեան նշանք Հայկայ ժամանակէն՝ ի վեր), այս ձորս կը կրէ ամենէն սիրելի և ամենէն սրբազան անուանը բոլոր աշխարհի մը՝ որ գրեթէ Գասպիոյ ջուր ընդարձակ է, և կը կոչուի ՀԱՅՈՑ ՁՈՐ. անուն պարզ, միանգամայն և այնչափ վսեմ՝ ուսկից աւելին չէր կրնար տալ նորածին ազգի մը առաջնորդն և հայրն, որ տեսաւ այն հեռաւոր սահմաններուն մէջ իր կրելիք ճակատագիրները և թողնելը պատերազմիլ իր քովը, աշխարհիս ամենէն ահարկու թշնամւոյն դէմ, պատնէշ ինա և վաստակիլ առաջին յաղթութիւնը, որ և միանգամայն ամենէն օրհնաւոր, ամենէն փառաւոր և ամենէն պիտանին եղաւ: Այս ըստ հայկական ձորն ի վեր երթալով՝ պատերազմական դաշտին կեդրոնը կը հանդիպիք, և ամենէն պատուաբեր յիշատակարաններուն՝ որ են իրենք տակաւին կամ իրենք շէնք ժամանակակիցք և հաստա-

նունք՝ հանգիստած գեպքերուն. նախ Հայք (Խէք) գեղն՝ ուսկից որ ձորն ալ իր անունը կ'առնու, մեր յաղթող զինեալն չինեց, նոյն իսկ պատերազմի ճակատին վրայ: Անկից քիչ մը հեռու, գեպ 'ի հարաւ՝ Ախտաձաղին գեղը, ուրուն հռամայր աւանդութիւնն կ'ըսէ, Թէ հոս աեղս Ախաուսած երեցաւ Հայկայ, օրհնեց անոր ալեզը՝ որ եղաւ նրան գործիք փառաց, իսկ նր հակառակորդին համար՝ զէնք մահու: Պատմութիւնն կը ճանչնայ զՀայկ առաջին և ամենէն քաջ ալեհնաւորս: Ախ երկու գեղերուն մէջ կը գտնուի գերագոյնն յիշատակարանաց, այսինքն ՀԱՅԿԱՑ ԲԵՐԴՆ. ամեն կողմէ զատուած բլուրի մը գագաթան վրայ, և նրբ հրաշքով մը գաշտին մէջէն բարձրացած. այս բլրոյն բոլոր կատարին երկայնութեան վրայ կը տեսնուի կործանած բերդի մը պարիսպ, որուն գեռ իրեք կամ չորս կարգ մեծամեծ քարերն կը մնան, կիկլոպեան շինութեամբ մը, Թէպէտ և կը գտնուին ասչառոյ քարեր այլ: Շրջապատին մէջտեղը քարաժայռին մէջ խոռոչ մը կու տեսնուի, որ հաւանաբար չըհորի տեղ փորուած է: Եւրոպացի ճանապարհորդներէն գեռ ոչ ոք մօտեցեր է այս հեռաւոր աւանդին տեղւոյն՝ որ մարդկային յիշատակարանաց աւաջին էրեսին վրայ նշանուած է. օտարական մը չէ լսած այն խորհրդաւոր արձագանգէն՝ որ կը հնչէ Հայկայ գերեզմանական ձայնը վինչև յերկին որդւոցը ականջը: Մարդ կը կարծէ Թէ աստուածային արհաւիրք մը կը սարսռեցնէ հոն նախասահմանեալ ազգի մը արեւային ծագմանը վրայ, և հանդարտ հոգի մը կու պարտի՝ այն ազգին նախահարցը ուրացականներուէն հովանացեալ հովին մէջ: Բայց ինչ են այդ օրօրոցին և այդ ալնիւ և կարիճ ժողովրդեան ալեբերականց քով. — ԳԵՐԵԶՄԱՆՔ. և կրնամ ըսել մեռաք և կորուսաք խաւարտար և

անգութ ժողովրդեան մ՚ալ։ Ան ըլլուրին ոտքը, ուր ինկաւ Բէլ իր ահեղ պատերազմողներուն, իր 60 հակառակուն, հոն Հայկն իրենց վերջի բնակութիւնը փորեց, և անուանեց Գերեզմանք։

Իսկ ինչն կը կարծուի որ քիչ մը ժամանակ ալ բնակած ըլլայ Վան քաղքին քով. վասն զի այս քաղաքիս ընդարձակ պարտէզներուն և այգեստաններուն մէջ, որ դէպ 'ի արեւելեան կողմը կը տարածուին, Հայկազնի անուամբ տեղ մը կայ, մօտ այն քարաժայռ բլրին՝ ուր շատոնց գտուած էին ձեռագործ այրեր և բևեռագրանդակ արձանագրութիւններ. իսկ նորերս այս բլուրին ոտքը փորելով գտան մեծայարդ հնութիւններ, մեռելք ամաններ՝ նոյնպէս բևեռագիր ձևերով, ոսկեզօծ կուռքեր, և նաև ձոյլ ոսկիէ գործուածներ, խեցեղէն անօթներ՝ անտուելոյ բազադրութեամբ, որոնց մէջ գտնուեցան սերմանիք սովորականէն աւելի մեծ հատերով, որոնց գոչելով փոշի դարձան։ Վանայ բարձրաւանդակին ծայրը, և իր արեւելեան կողմը ձևացընող լերանց պատուարին մէջ՝ որ հին աւեն Չարատապ կամ Չակրոս լերինք կ՚ըսուէին, կայ և Ջեւդէն լեռը, որ պարսկերէն ըսել է կապոյտ սիւն կամ արձան, և 9,000 ոտք բարձր է, որուն գովքն հին ժամանակէ 'ի վեր ձամբայ մը բացուած է Հայաստանէն Պարսկաստան անցնելու. լերան գագաթը յիշատակարան մ՚ալ կայ բևեռագրանդակ գրերով, և իր ոտքը կամ գովը գեղ մը՝ Հայկ անուամբ, զոր ատրպ մատենագիրք այլ յիշած են։

Բայց այս ամենուն տեղերա՝ որ մեր Ինքնագիրն անունը կը կրեն, չէին իր հաստատուն բնակութիւնն, կամ սիրայօժար տեղերը և իր տիրական աթոռը. այս եանքին ուրիշ բարձրաւանդակ երկրի մը վրայ հաստատեց Հայաստանի կեդրոնին մօտ, և ոչ հեռու Արածանիէն (այսինքն հիմա-

*կուան Մուրատ չայ գետոյն աղբիւրներէն, որ է արևելեան Եփրատ). Հայկ այս գաշտին այնպիսի անուն մը տուաւ, որ մեկալնց պէս լաւ յայտնած է, այսինքն անուանեց Հարց. որպէս զի ցուցնէ թէ հոն հաստատեցան անոնք, որք Հայոց ազգին հայր եղան. հոն առեղս աւան մ'ալ չինեց, որուն հարկաւ իր անունը տուաւ, այսինքն է Հաւկաշէն: Քոխ գերմանացի ճանապարհորդը կը յիշէ այս գաշտիս մէջ (որ հիմայ Խնուս կը կոչուի) գեղ մը Հայկ կամ Փայտ անուամբ:*

## Ե

*Կարծեմ, թէ այսչափ նիւթական յիշատակարաններ բաւական են հաստատելու Հայկայ էութիւնը, և հաւատալու իր չրջանը և թուականը, հանդերձ աւելչ բան պատճառներով. որոնք մեր մեկ հին հեղինակ մը կու համարձակի զՀայկն հնագոյն քան զՄովսէս մարդարէ՝ տուած մարգարէը անուանել. աւանդութիւնն այլ կ'ապացուցնէ թէ Հայոց ամուց անուանքն իր որդւոց և դասերաց անուանքն ըլլան. – գուցէ ըլլան ոմանք, բայց յայտնապէս բոլորն այլ չեն: Սակայն պարզ ան է երեւն, կամ երեւն յաջորդաց՝ և այդ Հայկայ Շրջանը և թուականը ճանչնալ, դնել և պահելը. – պարծանք և պատիւ է մեր իմաստասէր Սարկաւագայ՝ այս հին յիշատակս յարուցանելը Հայկէն 3600 տարի ետև, և ցուցընել որ մեզի ծանօթագոյն Հայոց տուամբ և թուական բառաձեն առաջ՝ կար հնագոյն տուամբ մը և հաստատ տարի մը Հայոց, որ կ'ըսուի հին փառաւոր Հայոց. և այս բանիս համար Յովհաննէս Գառնեցի՝ մերձաւոր ժամանակաւ Սարկաւագայ՝ կ'ըսէ առ վերջոյ. «Ահն՝ որ զփառաւորն երևեցոյց զհին Հայն»:*

Ահա այս էին Հայկեն տոհմարին հատուած ամուսը վայ էր որ շարեց մեր առաջին ծնողակարգն՝ անմահանուն Ս. Ծահակ՝ Հայոց եկեղեցւոյն սեփական ծնեալը, զոր ի Յոհնաց առածնեալին՝ զոր ըստ լսելին ամուոց օրերուն դրաւ, անոր հաւատը մեր ազգային ամուսք շարած ծնեալն ըստ եւցան Հայկազունք: Ահա անուն է որ երբեմն եւ այլ կու բանեցընեմ քեզի պատմելու առնս մեր հին յիշատակները, զանոնք դնելով իրենց հանդիսաւոր օրը ըստ հատուածոյն տուսմարի: Ահա հին հայ տուսմարս կամ Հայադէրն անշուշտ պահուած էր ազգերնուս կրօնական և գիտնական գործոց մէջ. բայց ժողովուրդն քաղաքականօրէն շարժուն հատակ տարիով կ'երթար. զոր մեր Թարգմանչաց ալ ի հարկէ չէին կրնար փոխել. բայց նորոգողքն տուսմարի յամին 552 կրնային գոնէ եկեղեցւոյ ծնեալը անշարժ տուսմարի վրայ հաստատել, և ըլլին, անոր համար յոմանց շատ կու մեղադրեն: Վերջապէս Սարկաւագ վարդապետ, ինչպէս ի սկզբան ըսի, այս հատուածոյն կանոնը դրաւ սըրբոց ծնեալց համար, գոնէ յիշելու զանոնք այն օրերը՝ յորում հատուածոյն տուսմար ունող ազգք կու յիշեն. այս իր Սուխա-ագաթէր կոչած տարեգրքին 1116, Թէ և անկէ առաջ այլ տուսմարի վրայ քանիներ գրեր էր:

Արդ այս է, Հայկակ, մեր նախապէտին առնուամբ յիշեալ և յիշելի Հայկայ Երջանն, և Թառանն Հայկայ, զոր Թերևս արժանի էր մեզի գործածել՝ առնելի քան զաւրականն պատասաւոր Թըւականին մեր. որով և ամեն ազգաց ժամանակագրութիւնն այլ գնաբաս կրնայինք ջոկել և համեմատել մեր ազգին ժամանակաց հետ:

10249926

# Դ.

## ՅԱՆՈՒԱՐԻ 6 Ի ՀԱՅՏ

Տարւոյն առաջին ամիսն՝ մեր կիսագնահին վը-
րայ, գրեթէ ամեն տեղ ըստ կերպարանաց բնու-
թեան տիւրար է, քիչ շատ ձմեռն ըլլալով. զոր
միայն քաղաքական և եկեղեցական ծնունք կու մխի-
թարեն և յիշատակք անցելոց կու զբօսեցընեն:
Ահա ամիս մեր Հայաստան աշխարհին երեան այլ
ամենէն ապահերաց և ծանր երևոյթներէն մեկը
կ'ընծայէ, գրեթէ բոլորովին ձիւնով և սառամա-
նեօք ծածկուած. ձմեռն հոն իր աթոռոյն վրայ
անշարժ կ'երևի. կամ բուքերով երկինք երկիր
մրրկելով, կամ թէ և պարզ ընէ՝ անանկ ջրր և
բարակ ցուրտ մը կու տարածէ օդուն մէջ, որ
կարծես թէ սրև՝ իր պայծառութիւնը միայն պա-
հելը և կրակը մարելը է: Հաճախ գիշերը. երբ
ջրցած սառնապատ ծառոց միջէն սարսռալի
օձաձեւութիւն պախրցին կամ արևելեան հողմն, գո-
գաւոր ձորակներու մէջ որոտալով այն երկայն
վայերը վուայերը լսեցընէ:.. Գոցեցէք գոցեցէք
դուռն ու երդիք, ամեն ձեղք ու ծակութիք: Ո՛հ,
ի՛նչ քաղցր է, Հայկակ, շարունել նահել ամրա-
ծածուկ ձեղուան մը տակ, լմէ և հողէ ըլլայ,
կարմրաթոց փուռն կամ Թոնրի մը եզերք, և 14-15

ամսոյն նոյնաթիւ օրերուն մէջ հանդիպած բա-
ները զուցեելով վիպասանելով անցընել: Ո՛րչափ
ցանկալի էր մեզի այլ եկեղեցականին հետ քաղա-
քական և ազգային Յայտաբուրփ կամ Հայոտքէր մ՛ու-
նենալ. առաւօտը զայն կարդալ, իրիկունը առաւ
զբօսանուլ կրակին բոլորտիքը:

Յանուսար ամսոյս մէջ գիշեր մը և օր մը կայ,
զոր Հայն գրեթէ ամեն ազգէ աւելի մեծահան-
դէս կ՛անցընէ, և չի կրնար սոյն մէջ արգիլեալ
ինալ. այն օր ձմեռ չկայ. փոթորիկը կու թողու,
ձիւն բուք կ՛արհամարհէ, դուրս կ՛ելլէ, կու փու-
թայ յեկեղեցի, Աստուածայայտնութեան ծոնը կա-
տարելու. և եռանդեամբ ցաւքըտեելով Թզուչքի
Թանձր սառերն անդամ կու կոտրտէ, Թմրած
պաղած ջուրը կ՛արթընցընէ, մեզը կու մանէ՝
քրնատոսանիլ խաչին կնքահայր ըլլալու:

Այդ մեծ ծոնին օրը սովորական հանդէսներէն
զատ՝ շատ նշանաւոր դէպք այլ հանդիպած են
մեր նախնեաց առեն. որոց մէկ քանին յիշենք
այս իրիկուն մեր ընտանի կրակարանին եղելքը
բոլորած, Թոլլով վիպասանից զանոնք բանապար-
դելու, և գուսանաց՝ երգելու: Յիշելու դէպքե-
րէս շատն հանդիպած է մեզմէ 800 և աւելի տա-
րի առաջ, ձև գարուն երկրորդ քառորդին, մեր
Պետրոս կաթողիկոսին օրերը. որ այն դէպքե-
րուն գլխաւորին պատճառաւ՝ Գէորգոյ ըսուե-
ցաւ. և Թէպէտ քիչ մը ջախէն աւելի ազգատեղք
և ջախէն պակաս յոռնատեղք այլայլեր են եղա-
ծին պատմութիւնը, բայց անհիմն չերևիլը իր
պարզ և հին վկայութեանը մէջ: Եթէ Պետրոս
կաթողիկոսի այն հրաշագործ չէր, իր ձեռքը ե-
ղած խաչն իրմէ առաջ այլ շատ հրաշքներ ցու-
ցեր էր. մենք կու սիրեմք Պետրոսի պերճախօսիկ
ջարտականները, բայց չեմք կրնար գովել իր պե-
ճատէր հնարքները, որովք եկեղեցիէն աւելի քա-

ազգական տեսութեանց մէջ անուն թողած է։ Իր քառամեայ հոգևոր ակրութեան առաջին տարինեըը՝ Անի Թագաւորանիստ քաղաքին մէջ կոնատէր, և երկրորդ Թագաւորի մը պէս փառօք կու փայլէր, 500 մեծ գեղերու տէր ըլլով, և Հայրապետանոցին մէջ կամ իր հետ քանի մը վարդապետ, 12 եպիսկոպոս, 60 կրօնաւոր քահանայ և 500 աշխարհիկ երէց պահելով. իսկ իշխանութեանը տակ կային 500 եպիսկոպոս կամ Թեմ, որ Թէ և չափազանց երևի, գոնէ եղածին կրկինէն աւելի չէ։ Ընդհանակ բանն այս է, որ որչափ այն Հայոց կաթուղիկոսն իշխանասէր կ'ե րևար, ժամանակակից Թագաւորն այլ՝ Յովհաննէս-Սմբատ՝ խնամասէր էր. երկուքն այլ խոտագէտ, որով երբեմն համաձայն՝ երբեմն հակառակք իրարու։... Բայց ինչ պէտք է մեզի հին մա ծաղկած և վաճառաշահ մայրաքաղաքի մը մեծերուն քաղաքական գաղտնիքը քննել. մինչդեռ չորս դին համբաւ կու հնչէ՝ Թէ մեծազօր կայսրն Վասիլ Կ. Պօլսէն ելեր և շատ զօրօք կու գայ ի Պոնտոս. կ'անցնի ի Տայս, Վրաց Թագաւորէն պահանջելու այն երկիրները՝ զոր Դաւիթ կիւրապաղատան Տայոց՝ Թողեր էր կայսեր, և Վրացին կորզեր էր։ Շրջակայ Թագաւորք և ազատապետք իշխանք վախով կամ պատուով կու փութան կայսեր առջև. մեր բագրատունի Թագաւորն Յովհաննէս-Սմբատ, ոչ այնքան Թանձրամտութեանն համար կու դանդաղի և չի շարժիր, որչափ մեծամտութեամբն չուզեր Հայոց իշխանութենէն մէկ իր նախնապատիւ աթոռը նուաստացընել, և իր գրացի մանրիկ Թագաւորաց նմանիլ. բայց՝ անոնցմէ, և ինչուան իր ելքօրմէն, և այլ աւելի կայսեր սպառնալեաց յօնին համբաւէն կասկածելով, իր տեղ անոր երեսը պատուելու կ'ուղարկէ զՊետրոս կաթուղիկոս։ Սա իբ-

*կեսրեցական հետևողաց և ապաստարաց հետ՝ ար-
քունի գրան մարդիկ և զինուորական գունդ ա-
ռած, էրզրև երկիապետան իշխանապետ մը՝ կ'երթ-
կայսեր գիմաց, անոր ձմեռոցը՝ ի Պոնտոս. և ըստ
սրժանության պատուելով և պատուբերելով, կու
հրաւիրուի մերձակայ Սատուածայայանութեան
տանին օր չըօրհնեաց հանդէսը կատարել. ըստ ո-
մանց Ձորոն գետոյն վրայ, այլ հաւանօրէն ըստ
այլոց՝ Տրապիզոնի գետակին վրայ: Յետ սպօթից
և օրհնութեանց՝ երբ միւռոնը կու թափէ ի ջուրն՝
և մէջը կու ձգէ այն իսաչը՝ որ մոան ունէր ի քուն
փրկչական իսաչէն, և ի Ս. Սեղբեատրոսէ ընծա-
յուած էր ու Հռաւաւորին մեր, յանկարծ չրէն
լուսոյ ցնցուղք կու ծագեն, ի զարմանս ամենե-
ցուն և ի մանաւանդ պարծանս Հայոց: Ահա է
պարզ և առաւգապոյն պատմութիւնն՝ զոր ժամա-
նակակից Արիստակէս Լաստիվերտեցի պատմէ,
և իւմէ առած Վարդան և այլք. որք ոչ քա՛ղ-
քը յիշեն և ոչ գետոյն անունը, և ոչ աստր ջրոց
յետս ի վեր գառնալը, ինչպէս կ'ըսեն Կիրակոս
և այլք: Վանայ Վարագոյ վանքը պարսպող ա-
ստծ է Հոն Պետրոս կաթողիկոսի գերեզմանը ա-
ստ սրճանագրութեամբ. « Թ.ին ԴՃՀԱ: ԱՑՍ Է
» ՀԱՆԳԻՍՏ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ. ՈՐ
» Ի ՏՐԱՊԻԶՈՆ ՋԳՆԵՑՆ ՃՐՈՒ ԱՐԳԵԼԱՑ ԱՌԱՋԻ ՎԱ-
» ՍԻԼ ԱՐՔԱՑԻՆ »: Ահա արճանագիրս կաթողի-
կոսին մահուան ժամանակակից է. վասն զի ինքն
այդ Թուականէն շատ տարի վերջը վախճանեցաւ
ի Սեբաստիա, և հոն այլ ի Ս. Նշան վանս կայ
անոր գերեզմանն. ըսել է որ նշխարաց մէկ մասն
փոխադրուեր է ի Վարագ, ուր երբեմն նստէր,
և գերեզմանին վրայ գրուեր է ջրօրհնեաց հրա-
շից Թուականն, որ և է տուեալս 471 (ԴՃՀԱ)
Հայոց Թուականն (1022-23 առ Քրիստոսի). Թը-
ուականը այսպէս կու համեմատի, բայց Ձրոն*

(կարգաւ Ճարտախ) պէտք էր ինձ կրնար Տրապիզոնի մօտեցընել, վասն զի լեռներով զատուած և շատ հեռու են իրարմէ. ուրեմն յայտնի սխալ կայ տառը մէջ, և վերջին ժամանակի արձանագրութիւն մ'է: Զայն այլ թուղով հանգերձ յօդուածոյ պատմութեամբք, կարդամք գլխաւոր դիպուածին մէկ ձոխաբան գրուած նկարագրութիւնը, որոյ հեղինակն մեր ծանօթ պատմիչներէն չէ, և քիչ մը ճամարտակով և հակասամարտող է:

« Եւ գնացեալ կաթուղիկոսն առ կայսրն 'ի
» Տրապիկոն, ուսնելով ընդ իւր եպիսկոպոսաւնս
» Երկոտասան և եօթանասուն քահանայս յաթե-
» ղայից. և երկու բանիբուն վարդապետս, զբազմ-
» իմաստն զՅովհէփ Հրնծուցն, և զքաչէն և զան-
» յալեցն զՎռազեան Յովհաննէս. այլ և 'ի զինուո-
» րական դասէն և յատուգաց արս երեք հարիւր:
» Եւ առեալ 'ի թագաւորական տանէն գանձս
» ոսկւոյ և արծաթոյ, չխա և ջորիս: Զոր տեսեալ
» ինքնակալն Վասիլ զՏէր Պետրոս հայրապետն՝
» յոյժ ուրախացաւ. քանզի համբաւ առաքի-
» նութեան նորա և վարուց սրբութեան՝ հասեալ
» էր յատակացն աս թագաւորն: Վասն զի էր
» աքանչելի այր, լի ամենայն բարի մասամբ, և ու-
» նէր շնորհ ինն աստուածական բժշկելոյ զան-
» ամաչէսս և հալածելոյ զդևս: Վասն որոյ և Վա-
» սիլ գերագոյն մեծարեաց զնա քան զամենայն
» պատրիարքսն Յունաց. և լսելութեամբ ըն-
» կալաւ զբերեալ ընծայս նորա. և մեծաշուք
» փառօք պատիւ արարեալ եպիսկոպոսացն և
» ազատացն՝ որ ընդ նմա էին:... Եւ 'ի նոյն ա-
» ւուրսն եհաս ոճն ծննդեանն և յայտնութեն
» Քրիստոսի. և էլ ամենայն զօրօքն իւրովք և քա-
» հանայիւք յօրհնել զԱստուն: Կոչեաց և զկաթո-
» ղիկոսն Հայոց իւրայնոք 'ի յեկեղեցեացն. և հրա-

» մայեաց զի նախ Տէր Պետրոս օրհնեսցէ զՋուրն ,
» և ապա Յոյնք : Եւ յորժամ օրհնեաց և էարկ
» Տէր Պետրոսն զվեռոնն 'ի Ջուրն , և զկնի սուրբ
» խաչին հարկանէր երեք անգամ զսուրբ խաչն 'ի
» գետն . և ահա հուր սաստկապէս բոցապոյն ծխ-
» րանաճաւալ փայլատակեաց 'ի խաչէն , և ի-
» բրև զալեղն որ յամպս գնի ցոլացեալ՝ խորան
» առնոյր 'ի վերայ գետոյն . և որպէս զարհամա-
» տաձար Աստուծոյ 'ի մէջ առեալ ունէր զամե-
» նեսեան զարս և զկանայս . և շուրջ լուսոյն բակ
» առեալ պարփակէր զբազմութիւն ամբոխին
» ընդ ինքեամբ : Եւ լուսաւորչեցան դէմք մարդ-
» կան առ հասարակ որպէս զվարդ կարմիր . և
» լոյս ելանէր 'ի խաչէն իբրև զյորդահոս ջուրս
» որ բղխեն յաղբերաց : Իսկ սուրբ խաչն երևէր
» 'ի ձեռն կաթողիկոսին որպէս բոց վառեալ լու-
» սով . և 'ի լուսոյ անտի երկին երկին հատանէր
» խաչաձև լոյս չափոյ խաչին , և խաղայր 'ի վե-
» րայ Ջուրցն իբրև զթռչուն սլացեալ որիշ որիշ
» 'ի միմեանց . և հոտ անուշութեան ընդոյր զամե-
» նեսեան : Իսկ բազմութեան ժողովոյն զահի հա-
» րեալ կային և ապաշխէին և ասէին , Տէր ողոր-
» մեա : Եւ մինչդեռ նոքա աղօթէին , ժողովեցաւ
» լոյն միագունդ , և երկից անգամ եհար զՋուր
» գետոյն և ամփոփեցաւ լոյն 'ի ծոց խաչին . և
» Ջուր գետոյն զեռռեալ 'ի կրունկն գառնայր և
» զառ 'ի կոյս արգելաւ վայր մի : Յայնժամ զար-
» հուրեալ ամբոխին և բազմութիւնն անպեալ
» յերկիր գոչային : Եւ սուրբ խաչիս սեառնա-
» պրեաց կաթողիկոսն երից անգամ զգետն և ա-
» ստ . Տեսին զքեզ Ջուրք Աստուած , տեսին զք-
» քեզ Ջուրք և երկեան , խորք խռովեցան . և սե-
» սին ամենայն ծագք երկրի զփրկութիւն քո , և
» ժողովուրդք զպանչելիս սուրբ նշանի քո : Եւ
» արդ որպէս 'ի ձեռն սուրբ խաչիս քո եկաց

» ջուր գետոյս կանգուն, գնասցէ դարձեալ յլին-
» թացս իւր որպէս յառաջն: Եւ ապա դարձաւ
» գետն 'ի սեղն իւր, և խաղացեալ գնայր որպէս
» յերկին և յեռանդն: Յայնժամ Թագաւորն վա-
» սիլ և ամենայն զօրք նորա անկան առ ոտս երա-
» նելի տուրբ կաթողիկոսին Պետրոսի. և մեծա-
» գոչ հառաչանօք համբուրէին զտուրբ նշանն և
» արկանէին զօրհնեալ ջուրն 'ի վերայ գլխոց
» Թանց իւրեանց: Իսկ Թագաւորն Վասիլ գնէր
» զԹագն 'ի գետինն. և հրամայէր Տէր Պետրոսին
» արկանել ափովն իւրով զջուրն օրհնեալ 'ի վե-
» րայ գլխոյն իւրոյ: Եւ առեալ կայսրն զգետար-
» գել տուրբ նշանն 'ի ձեռս իւր և անյապաղար
» համբուրէր զնա, և նովաւ կնքէր զամենայն ըզ-
» գայարանս իւր. նոյնպէս և մեծատօհմեան և ա-
» մենայն ժողովուրդքն՝ եռափափաք համբուրիւ-
» ողջագուրէին զամենայնալիճ տուրբ նշանն և զայլ
» կաթողիկոսին. և 'ի համբուրելն զտուրբ նշանն՝
» բազմաց լինէր առողջութիւն: Եւ մինչև օրն տա-
» րաժամեցաւ՝ ոչ աւարտեցաւ համբոյրն ժողո-
» վրդեանն 'ի բազմութենէ ամբոխին »:

Պետրոս կաթուղիկոս այս հանդէսը և գեղապա-
նութիւնը կատարելէն ետև՝ դարձաւ յԱնի. բայց
երկար առեն հոն չմնաց. Թագաւորին և իր մէջ
տարաձայնութիւն ընկաւ. Յովհաննէս մերժեց
զնա 'ի կաթողիկոսական աթոռոյն, և առեր դրաւ
զԴէոսկորոս Յանահնի վանաց և Թեմին արքե-
պիսկոպոս առաջնորդը. որ հարկաւ քիչերուն
ընդունելի եղաւ. անոր համար ստիպեցաւ Թա-
գաւորն նորէն զՊետրոս դարձընել տալ յա-
թոռը, մինչդորդութեամբ Յովսեփայ Աղուանից
կաթողիկոսի. որուն հետ 4000 եկեղեցականք այլ
ժողովք եկան յԱնի, և Թագաւորն ու կաթո-
ղիկոս հաշտեցան: Այս հանդէսն այլ մասամբ
Ատուածայայտնութեան տօնին եղաւ. և երբ

հակաթոռ կամ բռնապատեաւ կաթողիկոսն Դէսպ-
կորա՝ աւուր պատշաճ ոծնը կու կատարէր, քա-
նի մը յանդուգն անձինք գլխէն քօղը պատռեցին,
որ կաթողիկոսութեան նշան էր, և գարձուցին
զինքը իր վանքը, ուր և յօժարութեամբ գնաց.
բայց այդ անարգանաց հարուածը շատ ծանր էր
նրեն. քիչ աւեղն արատած մեռաւ. յոմանց
նրան բռնաբարող՝ գատափետեալ, և յոմանց նր-
րև ակամայ յանձնառու՝արդարացեալ, և իր ձըգ-
նաստր բարուցը և գիտութեանը համար պա-
տուեալ:

Գարձեալ յետ ինն տարւոյ (1045) նոյն ինքն
Պետրոս կաթողիկոս՝ Ջրօրհնեաց հանդէսը կա-
տարեց ուրիշ խառն տեսարաններով՝ ի կարին
գաւառի. որ հիմակուան Էրզրում քաղաքն
ղաս՝ անուանի և հարուստ քաղաքաւան մ՝այլ
ունէր, Արծն լուսաժ, Կարնոյ գաշտին մէջէն
անցնող եփրատական Ա և ջրոյն ալ կողմը, շամ-
քին (Ասպնջգ) մօտ, որ հարիւրաւոր եկեղեցինե-
ունէր և վաճառականութեան բարեօք լցեալ էր.
և մեր պատմելու դիպուածէն իրեք ջորս տարի
եաև այրելով և աւրելով՝ ի Թուրքաց՝ հիմա թո-
ղած է իր անուան և նշխարաց յիշատակ՝ Գարա-
արզ և Վաղաւեր գեղերը. ուր Թերևս հնախոյզք
գեռ կարենան գտնել հետաքննութեան արժանի
բաներ: Պետրոսի երկրորդ անգամ կաթողիկոս
նատելէն մինչև այս նոր հանդիսին տակաւաթիւ
տարիներուն միջոց՝ Հայաստան շատ յեղափո-
խութիւններ տեսեր էր. Յովհաննէս Թաղաւորն
մեռած, որդին Գագիկ Թագաւորութենէ զրկած,
Անի մայրաքաղաքն՝ ի ձեռս Յունաց անցեր, Թա-
գաւորազունք եղեր՝ ի Փոքր Հայս գացեր էին.
նաև ինքն Պետրոս որ Անոյ վաճառման կամակից
էր՝ նստեր էր հոն առաջին փառօքն, և քաղքին
նոր յոյն քաղաքապետէն այլ պատիւ կ՝ընդու-

նէր: Սակայ քան քաղաքացեաց այնչափ հաճոյ էր ըլլալ. քիչ առեներն Յունաց այլ կասկածելի եպաս. և երբ նոր քաղաքապետ եկաս՝ կոյսեր հրամանաս զինքը քշեց անկէ և հրամեց երթալու նատելու յԱրծն Կարնոյ. ուր և վերը յիշեալ սարին մեծաս հանդիսիս կատարեց Զրօրհնեաց հանդէսը Եփրատայ նորընծայ վտակաց մէջ: Երբ խաչելուսայ ընելու պահն հասաս և կորիճք պատրաստէին նետուելու ՚ի ջուր, տակին մ՚այլ ուզեց անոնց հետևիլ. կաթուղիկոսն հատկցընել տուաս անոր՝ թէ այդ քանը քրիստոնէից վիայն կու պատշաճի ընել կրօնական հանդէս մը. տակին այլ իմացուց որ ինքն այլ քրիստոնեայ ըլլալու և մկրտուելու համար կ՚ուզէր մտնել ՚ի ջուրն. և հաւանութեամբ կաթուղիկոսին մտաս: Ան առեն միւռոնակիր փոքրուերն՝ ապակեայ չիշը ձեռացը վայ զարնելով կոտրեց և թափեց թէ ջրին և թէ նորահաւատին վայ, երկուքը մէկէն ինքեելով. բայց չիշը կոտրելու առեն ապակեայ կտոր մը ձեռքը վիրաւորելով իւղը, ջուրը և արիւնը մէկտեղ խառնեց: Ահա քանս, կ՚ըսէ Ժամանակագիրն, անյայտ դիպուածն մը գուշակութեան սեպեց հանդիսատես ժողովուրդն. մանաւանդ երբ երջ այլ հանդիպեցաս: Վասն զի երբ յետ հանդիսին կաթուղիկոսն նատեր էր ՚ի աթոռն, յանկարծ կայսերական հրամանաս մարդիկ եկան զինքը վերուցին, տարին Խալտոյ-առինճ լուսած գիւղին բերդը, որ հինա Գաղատուիճ կ՚ըսուի, և երկու գեղ է, մեծ և փոքր, Կարնոյ և Խալտեաց միջասահման: Նոյնպէս քիչ առենէն Պետրոսի քեռորդին և յաջորդը, Խաչիկն այլ՝ բռնեցին և ուրիշ բերդ մ՚արգիլեցին. յետոյ զերկուքն ալ ՚ի Կոստանդնուպոլիս խաբեցին:

Ահա դիպուածէս եօթն կամ ութ տարի եաև (1052)՝ նոյն կաթուղիկոսին օրը, քայց ոչ իր

*Ներկայութեանը, նոյն մեծ ատենին իմացան գիշեր ցաւալի գիպուած մը հանդիպեցաւ՝ի կարս քաղաքի, որ Արծին նման վաճառականութեամբ հարստացեր էր, և Անիի պէս առանձին թագաւորաց մայրաքաղաք էր քիչ մ՚առաջ. մինչդեռ պաշտօնատէրք գիշերային ժամերգութիւնը կատարէին, և ամենևին Թշնամոյ կասկած մը չկար, և անոր համար քաղաքապահ զօրքն այլ անզգոյշ էին, ատեն գլուխած, Թուրքաց Տօղրուլ-բէկ սուլտանին հօրեղբօրորդւոյն ապստամբ Գուդուբմուշին Թափառական ասպետականերն՝ ձմերային սովալլուկ գայլոց պէս մտան՝ի քաղաք, և սրբազան ու ազգային հանդէսները յարգանք և յարիւն գարձուցին. սուն և եկեղեցի ոչխոց և մահու տեղ եղան. ով որ կրցաւ քաղքին ամուր բերդը փախչիլ՝ ազատեցաւ. մնացեալոց շատն կարդուեցաւ, ամենքն կոտոպտեցան իրենց ստացուածքներէն. հարստութեամբ լցուած քաղաքն աւեր գարձաւ. վասն զի անզգամ կողոպտիչքն ինչպէս աւազակոբէն մատն՝ այնպէս եղբեն այլ բաւական չտեսնելով՝ կրակ այլ տուին, և եառնէն սև ծուխը վկայ Թոլուցին իրենց գազանութեանը: Բայց կարս իր ամուր բերդին պատճառաւ քաղդաւոր գրանուեցաւ քան զԱրծն, նորէն նորոգուելով. սակայն նոյն պատճառաւն այլ աւելի շատ անգամ պատերազմի հարուածներ և մեծ նեղութիւններ կրեց, ինչպան մեր օրերը, (1855):*

*Թշնամիք գիտենալով և գիտնալով որ Հայք յանուարի վեցին մեծ տօնախմբութեան պատճառաւ տուներնին տեղերնին կը հեռանան, շատ անգամ նոյն օրը վազած են անոնց վրայ, և ազգերնուս մեծագոյն տօնն՝ի սուգ գարձուցեր են, օրհնեալ Ջուրն այլ յարիւն. մինչև ազգային առակ եղեր է ըսել. «Սատուած պահէ*

*Յայտնութիւնի հեծելէն,*
*Վարդավառի հեղեղէն»:*

Բայց մենք Թողլով հիմա այս տխուր տեսարանները, քիչ մ'այլ ուրախ դիպուածներ տեսանենք. փոխադրինք ուրիշ հայ աշխարհք մը, անցնինք դարուկէս ժամանակ, երթանք 'ի Կիլիկիա, ուր վերջի Թագաւորէն հանդէսներուն ներկայ ըլլալու, նոյն այս արքայական օրը, զոր Թերևս աւելի քան զԲագրատուհիս պայծառապէս ծանէին Ռուբինեանք. վասն զի առջիններուն կորուսած Թագը՝ երեսից գլուխը դրուեցաւ յետ երբ 160 ամաց՝ յայտնութեան ծնին օր, յամին 1198, 'ի ներկայութեան նուիրակաց զանազան ազգաց: Ա յս ազգաշունք փառաց նորոգութիւնն՝ արդիւնք է քաջութեան, Ճարտարութեան, նաև արդար փառասիրութեան Լեւոնի, որ լսած կարգի պատճառաց՝ ի է այդ անուանէ, և լսած կարգի Թագաւորաց ա կ'լսուի: Իր նախորդքը սովորաբար Պարոն և երբեմն սեբաստոս կամ մարգիզ կ'լսուէին, կամ մեծ իշխանք, և Երանց իշխեցող. որովհետև առաջ Փռնգիոյ և Իսաւրիոյ Երանց, յետոյ Կիլիկիոյ Երանց և գաշտաց սկսան տիրել. Լեւոնի պապուն եղբօր և նախորդին՝ քաջին ի Թորոսի անուամբ այլ՝ Թորոսէ էրկիր կոչուեցաւ իր վիճակին. իսկ այս Լեւոնս իր պապուն՝ ա Լեւոնի կործանած անունը կանգնելով՝ իր սիրած երկիրն ալ Լեւոնէ էրկիր անուանել տուաւ: Քաջութեամբ և խորամանկութեամբ շրջակայ իշխանաց ահաւոր և պատկառելի ըլլալով և եւրոպացի մերձաւոր իշխանաց սիրելի և օգնական, համարձակեցաւ Անգլիանաց Փրետերիկոս կայսրէն Թագաւորութեան Թագ ուզել, երբ կայսրն իր երկիրը եկաւ 'ի Սեվկիա քալաք, ուր փութացաւ Լեւոն խաբել ընդ առաջ նորա զկաթողիկոսն և զՍ. Ներսէս Լամբրոնացին. զժբաղդաբար ծերունի կայսրն հոն անզգուշաբար գետոյն մէջ լուացուելով խեղդեցաւ, և Թագադրութեան խոստումը անկատար մնաց:

Բայց Լևոն դարձեալ խնդրեց զնոյն անօր յաջողել, որպէս, յԵնրիկոս կայսերէ, և նաև՝ ի սրբազան պատգէն կեչեսաոինոսէ. որք քանի մը պայմանս պահանջելով՝ ի Լևոնէ (՝ի նշան հաւատարմութեան և միաբանութեան՝) խաբեցին իրեն փոփոգած պերճախոյզ Թագը, և առնուլիչ դրօշ մը, յամին 1197, ՝ի ձեռն Կոնրադոսի ծիրանազգեաց արքեպիսկոպոսին Մայենցայ. որոյ ընդ առաջ խաբեց Լևոն՝ իր ինամին և քարոզուելորը՝ Յովհաննէս Սոյ արքեպիսկոպոսը: Յաջորդ նոր տարին՝ ի յոնի Աստուածայայտնութեան՝ Ժողովեցան՝ ի Ս. Սոփիա եկեղեցի Տարսոնի, և մեծաւ հանդիսիւ Թագաւորեցուցին զԼևոն՝ ի վերայ Հայոց. օծողն էր Գրիգոր Սարկաւագապետ կաթողիկոսն, Թագաբերն՝ վերոյիշեալ Լամբրոնի եպիսկոպոսն՝ իսկ Հանդիսաւորեալն՝ դեսպանք կամ պայլք արևմտեան տէրութենէ և վաճառականէ Հասարակապետութենէ, կրօնակարգ տապետք, պատրիարքն Ասորոց Անտիոքայ, վերապօլեան Յունաց, Երուսաղէմի Հայոց եպիսկոպոսապետն, վեց մեծաթոռ արքեպիսկոպոսք, տասն եպիսկոպոսք Կիւլիկիոյ, բազմաթիւ վանահայրք, վարդապետք և քահանայք. իսկ յաշխարհականաց յիսունի չափ բերդապետք հայ իշխանք (որոնց անունը և բերդերը կու համրէ Սըմբատ գունդստապլ պատմիչ՝ Լևոնի քեռւան որպին), և. ուրիշ լատինացի իշխանք Անտիոքայ և Կիպրոսի տէրութենէն: Հանդիսին փառքն Լևոնի համբաւն ընդարձակեց. Պալատապետ խալիֆային և Կոստանդնուպօլսոյ կայսրն իրենց կողմանէ այլ Թագ խաբեցին. իսկ Լևոնի երկրին ջրա կողմը եղող իշխանք, զատ քանի Սմբատայ գունդստապլի՝ «ամուսին Ճանապարհաց հետաքննութեան» յիշեին զանուն Թագաւորին Լևոնի, և անուն՝ «պայլին»:

Մեծին Լևոնի Թոռն ե Լևոն Թագաւորն այլ, յետ 74 ամաց, նոյն քաղքին և նոյն եկեղեցւոյն մէջ նոյն ատենին օրը յանձն առաւ Թագաւոր օծանել ծռաբերս. և հանդիսին հռչակոյ առենաբան եղաւ իր քարտուղարն Վահրամ Րաբուն վարդապետ: Թագաւորք մեր և ժողովուրդք՝ իրենց մեծագոյն հանդիսի օր սեպհին այն օրը՝ յորում Քրիստոսի երեք անօրինական մեծ և փառաւոր յիշատակները տօնէին, Թէ՛ արքայի Թէ՛ արուսքին հանդիսիս:

Անշուշտ ախորժելի պիտի ըլլայ այս հանդիսից մէկ նկարագիրը լսել ականատես օտարազգիէ մը, որ ս. Լևոնի Թագաւորութեան երեքտասաներորդ տարին հանդիսեցաւ իրեն և տօնին. այս անձն է Վիլլեպրանտ օլմէնպուրկեան, Հաննովերի Հիւպատէսական քաղաքին կանոնիկոս վարդապետն, որ 1211 Թուականին Հանապարհորդելով յարևելս՝ եկաւ ՚ի Կիլիկիա, և երկու ամսոյ չափ հիւրընկալութեան գաւառ մեր Թագաւորէն, զոր նախ տեսաւ ՚ի Տարսոն, և յետոյ ՚ի Սիս. որոյ համար կ՚ըսէ. « Սյս քաղաքս մեր Թագաւորին » մայրաքաղաքն է. բնակիչքն անԹիւ և հարուստ, » բայց պարիսպ չունի, զոր համար կրնայի ա» ւեղի քաղաքաւան կոչել քան Թէ բուն քա» ղաք, Թէ որ Հայոց արքեպիսկոպոսարանը չու» նենալ. նաև ցոյնք հոն պատրիարք ունին: Ա» կայն ունի ամուր բերդ մը լերան գագաԹը, ո» րոյ ոտքէն կուսկի քաղաքը աստիճանաբար » գար ՚ի վայր տարածուէլ...: Ջրօրհնեաց հան» դէսը Հայք այս կերպով կատարեն. տօնէն 12 » օր առաջ, զոր մեռք (լատինք) խնամոմով և կե» րսխոմով կ՚անցուներք, անոնք ՚ի պատիւ տօ» նին՝ ապաշխարուԹեամբ և պահօք անցուցին, » հրաժարելով ՚ի ձկանէ, ՚ի գինւոյ և ՚ի ձի» Թոյ. իսկ բուն խնԹամեան օրը բոլորովին ծոմապա»

10249926



» ՀուԹևամբ կեցան, որպէս զի յետ վերջալու-
» սոյն պատարագը մատուցանեն. և բոլոր այն
» գիշերը աստուածային պաշտամամբք անցու-
» ցին: Իսկ երկրորդ օրը Քրիստոսի Ծննդեան տօ-
» նը կու կատարեն, ըսելով Թէ Քրիստոս նոյն
» օրը ծնաւ, և յետ 30 տարուոյ գարձեալ նոյն
» օրը մկրտեցաւ: Առաւօտուն ամենքն փութային
» քաղքին մօտ գետոյն եզերքը երթալու, ուր որ
» Թագաւոր ամէն այլ կ'երթար, այսպիսի կար-
» գաւ: Ինքն Թագաւորն բարձրահասակ ձիու մը
» վրայ հեծած էր. իր քովէն կ'երթային Ալեման
» ասպետաց կարգապետան, Սերևկիոյ Հիւբրնկալ
» ասպետաց բերդապետան, իրենց կրօնակից հա-
» զար ընկերներով. յետոյ գայր ամէն Ռուբէն,
» փոքր Թագաւորն, (Լևոնի եղբօր գաւեր որ-
» դին), զոր ինքնակալն Ոշին՝ 'ի ինդրոյ մեծ
» Թագաւորին՝Թագով պսակել տուեր էր: ասոր
» ետևէն կու գային իր երկրին աղնուականներն,
» և բազմաԹիւն զօրականաց գեղեցկազարդ հա-
» գուած. որոց ձորտերն ամեն մէկուն դրօշնե-
» րը և վառերը ձեռուընին բարձրացուցած, և
» անոնց սարած ձիերուն սանձէն բռնած՝ մեծ
» Թագաւորին առջևէն կ'երթային: Իրեն և ա-
» ռանց խառնելին միջէն կու վազվռտէին բազմա-
» Թիւն զինակիր փոյեկաց, իբրև անձնապահք
» Թագաւորին. իսկ բազմաԹիւն ժողովրդեանն
» չորս կողմէն կ'ողջունէր զինա ստաւկաձայն ա-
» ղաղակաւ, ՍՈ՛ՒՐԲ ԹԱԳԱՒՈՐ: Այսպիսի մեծ
» հանդիսիւ Թագաւորն կու գար իջնելու իրեն
» համար գետոյն եզերքը կանգնած վրանին տակ:
» Իրմէ ետև կու գային Ցոյնք և իրենց պատրիար-
» քըն՝ հետևակք, շատ սրբազան սպասներով. և
» այնչափ փողերու և ուրիշ երաժշտական նուա-
» գարանաց ձայն ձգեր էին, որ աւելի հանդէս
» մը՝ քան Թափօր մը կու ձևանար: Ասոնք այլ

» իրենց որոշուած տեղը՝ գետեզերքը կու սպա-
» սէին ուրիշներուն: Ցետոյ գային Հայոց եկեղե-
» ցւոյն ուխտը, մկրտելու իսաչը բերելով և վայել-
» չապէս յառաջելով՝ իրենց արքեպիսկոպոսին
» հետ. որոնց խոնարհական կերպը և վայելչա-
» կարգ Թափօրը՝ շատ աւելի պիտի գովէի, եթէ
» մէկ երկայնամօրուք քահանայ մը (առավ՝ նը-
» ման ուրիշներուն), դժբաղդաբար չիոթուԹեան
» պատճառ չըլլար. վասն զի ասիկայ վերոյիշեալ
» գետոյն խառնուտոյ ազտիկ վտակէ մը անցնելու
» առեն՝ ոտքին մէկ հօշիկը կորսընցուց, և չկրնա-
» Թացքէն ազատելու համար անզգուշուԹեամբ
» աշխատելովը՝ եպիսկոպոսին և ուրիշներուն անց-
» նելուն արգելք եղաւ. Թէ որ մէկին այսպիսի
» անհոգուԹիւն մ'ընէր ի Հիւսէսայայ Թափօրի
» առեն, ստստիկ յանդիմանուԹիւն կ'առնուր:
» Ասոնք այլ վերոյիշեալ գետոյն եզերքը՝ իրենց
» տեղը բռնեցին կեցան: Երբոր բոլոր Թափօրն
» մէկտեղ եկաւ, սկսան ստղիէն երգել. և ին-
» ծուան կուրծքերնին իջած օդուտոյց կծկի [1] նը-
» ման երկայն մօրուքներնուն շարժելէն կ'իմա-
» ցուէր՝ որ ալէկ ոյժ կու տային յուսարկէն և
» հայերէն աւետարաններ և ընԹերցուածներ
» կարդալու առեն. և այն կերպարանեալ Յոր-
» դանանը օրհնելով՝ բերած իսաչերնին մէջը մկըր-
» տեցին, և այ կողմէն աղաւնի մը Թռուցին:
» Ան առեն մէկն՝ իշու վրայ հեծած՝ գետոյն մէջ
» մտնալով և կանգուն կենալով՝ շուքարտաձայն [2]

1 Այս արևելեան երկայն մօրուաց վրայ զարմացող անմօրուս վարդապետն՝ նմանեցընէ զանոնք plenaria բուսած բանի մը, զոր ստուգիւ չեմ հասկընար ինչ է:

2 Հեղինակն կ'ըսէ՝ շաքարացեալ կոկորդով, zuccherato gurgite: Մեր միջինդարեան գուսանաց մէկն կ'երգէ.

Բլբուլն եհաս ըսփոքբէրտեն: — Տես երես 200:

» կոկորդով կանչէց, կէսդէ ետագառը մը չուխպեան.
» և դարձեալ, Օրհնէսդէ ե նախանձամէալ պահէսդէ ա-
» մէնայն ախտ փրխոմանէէց. և երբ ամէնքն միաբե-
» րան անոր պատասխանելով՝ Ամէն կու կանչէին,
» ինքն երգապետան ջրին մէջ կու թապըլտըկէր.
» որ և ծիծաղելու պատճառ եղաւ շատերու: Ե-
» ոյ թագաւորն և ուրիշներն այլ այն ջրով ի-
» րենք զիրենք ցօղէցին. իսկ Ասորիք մերկացած
» կու լուացուէին անոր մէջ:

» Ահա արարողութիւնս լմննալէն ետև՝ եկե-
» ղեցականք իրենց վանքը քաշուեցան, իսկ թա-
» գաւորն և զինուորականք փուխացան դէպ՚ի
» դաշտերը. և պալարակապ երիվարները վազը-
» նելով և նիզակներ նետելով՝ զինուորական խա-
» ղեր ըրին. և ետքը օրը մեծ ուրախութեամբ
» անցուցին: Երկրորդ օրը ամէնքն իրենց տեղը
» գարձան:

» Ահա այլ գիտցէք, որ տէր թագաւորն՝ այդ
» (Սխա) քաղքին քով իրեն զբօսանաց պարտէզ
» մը պատրաստեր է, որուն աքանչելի փափկու-
» թիւններըը նկարագրեն՝ կու խոստովանիմ որ
» կարողութենէս վեր է: Տօնը կատարելէն և տէր
» թագաւորն հրաման առնելէն ետև, որ զմեզ
» շատ մեծապէս պատուեց, եկանք Նաւարզա
» (Անաւարզա) ամուր բերդը... որոյ անուամբ
» թագաւորն իր նշանը Նաւարզա կու հաչակէ»...:

Ահագին հանդէսներ՝ եթէ չկարենան այլ ամե-
նուան սառամանիքը բոլորովին հաւերջնել, գոնէ
գունագոյն ծիածաններ կու ձգեն վրանին:

10249926

# Ը

## ՉԱՊԵԼ

† 22 *Յանուարի*, 1252.

*Եւ դու զաչըս տակաւին, մատաղ բամբիշն, առ քեզ գերես,*
*Նազելիդ Չապէլ, միայն Թագաւորեալ Հայոց դչխոյդ,*
*Ոչ գերկրի տակ եւեթ, այլ եւ գերկնից աչս եւ ըզսիրտ,*
*Խլատալեալ ի գեղ ոգւոյդ եւ գկրպ մարմնոյդ.*
*եւ գքոյսըդ դու*
*Յերկրի՝ Հեթմոյ միայն, եւ ի յերկինս՝ Աստուածոյ տուս:*
ՀԱՑԿ. ԺԶ. 1069–73:

Չապել անուն՝ որ հիմայ շատ մերազգի ընտանեաց մէջ անուշութեամբ կու լսուի, աւելի անոյշ յիշատակներէ առաջ եկած է, և Թերևս աւելի քան ուրիշ ազգաց՝ մեզի նուիրական եղած. կան անոնց մէջ այլ Իլատպել Թագուհիք, բայց գուցէ ոչ մի այնքան սիրելի և պաշտելի՝ որքան մեր Չապել, ժամանակակից և նման մաքրութեամբ վարուց՝ իր անուանակցին Ս. Իլատպէլի՝ զոր Ս. Լուդվիկ Թագաւորին Փառանիաց:

10249926



պէլ առաջին Էսայա անուամբ[1] ի մէջ ազգակցային. առաջին բարձր Թագաւորական պատուոյն, և առաջին պեղեցիկ վարուքն և սրբութեամբ. հրաշակառ՝ նաև քաղաքական կենաց դիպուածովք: Եւ ինչպէս մէկ հատիկ Տիգրանուհի ի մէջ հայկազուն Թագուհեաց մերոց, մէկ հատիկ Սաթինիկ կամ Ս. Աշխէն Արշակուհեաց մէջ, կամ Կատրամիդէ և Խոսրովանոյշ ի Բագրատունիս, Ռուբինեան հարսանութեան մէջ այլ մէկ հատիկ Ջաքէլ Թագուհի. մանաւանդ թէ բոլոր մեր ազգին պայազատաց մէջ սա մէկիկ Թագաժառանգ աշխարհհատիկին եղաւ. ոչ Թագաւորի կին ըլլալուն՝ կոչեցաւ Թագուհի, այլ իր առաքինութեամբ կոչեցաւ Թագաւոր: Իրմէ առաջ՝ օտար պատմիչք կու յիշեն, (և գրածն այլ կու վկայէ) որ Երասոյ անուամբ Հայոց իշխեցող Թագուհի մը եղած է, Փլխատոսի յաշխարհս գալուն տարիները, իբրև կին և քոյր Տիգրանի, բայց անուն և համբաւն իսկ անծանօթ է մնացեր իր ազգին:

## Ա.

Ջաքէլ իր տիրոջ տեսով, փափուկ հասակաւն, հեզուկ սրտովն, նոր Թագաւորութեամբ ձևացեալ ազգի մը՝ կէս ինքնապլուխ և պայազատօրէն վարող բերդատէր իշխանները միացնելու, և Հայոց, մանաւանդ այնպիսի ժամանակի Հայոց ազգավար ըլլալու, գրեթէ անկարելի անձ մը և բան մը կ'երևէր. և տակայն վերին ազգախնամ առաջնութենն, փորձ և կարիճ իշխանի մը (կա-

1 Կայ մեր և ԲՋաքէլ Թագուհի, կին Օշնի Թագաւորի, քոյր Ամաւրեայ Լիւզինեան (Կիպրոսի Թագաւորին), որ վախճանեցաւ յամի 1510:

տանդնի) քաղաքագիտութիւն, և մեծ ու հա-
ստակաց էրախտաւոր ու պատկառելի թագա-
ւորն մը (Լևոն) կամք, որ նր գեւաբոյս դասրն-
կը կատակաբ տիկին կարգեց իր 34 տարի արեան
քրտամբք ինամեալ ազգին և քանամեայ պայ-
ծառացեալ թագաւորութեանն, կարողացուցին
այս բանս. և եղաբ Ջապել առիթ հանգստեան
Հայոց նորաթագ հայրենասիրութեանը, որպէս և իր
անարատ վարքովն՝ ըստ անուանն տուգաբանու-
թեան՝ Աստուծոյ հանգիստ (Էլի-սաբէթ՝ հրէարէն):
Մեր պատմութեան, և մանաւանդ Ռուբէ-
նեանց միջոց, Ջապել ազնիւ և գեղեցիկ գոհար
մ'երևեցաբ, բարձր գլխոյ և բարձր բազկի մը տէ-
մանուածծ. և իբրև այսպիսի գոհար, (եթէ կըր-
նամ բսել, լուսափայլ՝ դեռ չբանուածծ իսկ, դեռ
նոր գտուածծ) անկարելի այլ էր որ բազմոց բաղ-
ձալի, ակնուանելի և հակառակելի չըլլար. և կըր-
նայ քաղաքական մօք յարմարուիլ Ջապելի վը-
րայ՝ ինչ որ թէ նոյն թէ արբազան մօք բաւ-
մեր հոգեբոյս հայրապետն՝ Հաւիսիմէի համար.

«Ի վերայ միոյ պատուական մարգարտի
Խաչացին ցընծալով ամենայն (հեթանոսք).
Արեւմուտք՝ յարեւելս ընթացեալ հասին
Քարոզել յայնոսիկս ըղձքնալ տեսութիւնն:
Լըսան թագաւորք եւ լըցան խնդութեամբ.
Որսալ յանձն առին ըզգալանի վեծութիւնն.
Պարգեւել իրեւցայ խոստանային բանիւք,
Եւ ծածուկ հընարիւք՝ գողանալ ի միմեանց»:

Ջապելի այսպիսի բարդի ննթակայ ըլլալը հմա-
նալու համար՝ բաւական չէ գիտնալն որ Հայոց
առաջին և անուանի թագաւորի մը դուստր է, և
ոչ թէ միայն դուստր այլ, կամ հրատարակեալ
ժառանգ Լևոնի. այլ հարկաւոր է և գիտնալն
թէ ինչպէս այսպիսի մեծ ժառանգութեան ան-

մանեցաւ, և ինչպէս հասաւ 'ի նոյն: Իր մեծաւ սիրտ հեռատես և խորագէտ հօրն գլխաւոր հոգոց և գործոց մէկն էր այս. Լևոն՝ ոչ միայն Ռուբինեան թագաւորութեան հեղինակն եղաւ, այլ և պահող, զօրացընող ու հռչակող հայրենի տէրութեանը. յորում և յաջողեցաւ անհուն չանքով, կարճաւթեամբ, երկայնմտութեամբ և բազում քաղաքագիտութեամբ մը, որով գերազանցեց քան զամենայն Հայպետս. և քան զչատս յազգապետաց օտարաց: Գիտես, Հայկակ, որ էր նախորդքն ամբողջ դար մը ջրչափ աշխատեցան իրենց բոյնը հաստատելու Տրտոսի ժայռերուն վրայ, պաշտպանելով 'ի Յունաց և 'ի Մահմետականց. ջրչափ կռուեցան՝ յաղթուելով այլ յաղթելով այլ. գիտես, որ իր հայրն՝ Սահփազնէ՝ Յունաց կրտսով եռացուցած կատապի մը մէջ խաշեցաւ (յամի 1164-1165). գիտես, որ իր հօրեղբօր (Թորոսի) որդին՝ Ռ. Ռուբէն մանուկը, տէրութեան օրինաւոր ժառանգը՝ չարաչար սպաննուցին՝ Հայոց տունը քանդել փափագողք. գիտես, որ իր միւս հօրեղբայրն Մլէհ՝ Հայոց նախնիք և աննման անպատմ մ'էր և բանութեամբ յանիրաւի տիրեց կամ նուաճեց աշխարհքը, իբրև տան տուրն. մինչև յետ անոր մահուն կրցաւ Լևոնի անդրանիկ եղբայրն՝ Ռուբէն Գ. պայազատել Հայոց պարոնութիւնը (1175). բայց ապահով մնալու համար կարօտ էր եղբօրը (Լևոնի) օգնականութեան: Սա ազատեց զՌուբէն Անտիոքայ դքսին ձեռքէն, որ խաբէութեամբ բռներ և բանտեր էր զինա. անոր համար Ռուբէն կրկին երախտապարտ առ Լևոն, իր տարաժամ հիւանդութեամբ ծանրացած առեն՝ կրօնաւորելով, անոր Թորոս տիրական աթոռը (1186), և անոր հետ՝ արժանաւոր իրաւունքը տուաւ՝ չվատահանալու մեծամտութեամբ իր քաջութեանը և հան-

Ճարտին վրայ, այլ և մեծ խոհեմութեամբ և քա-
րեպաշտութեամբ քաղաքավարելու: Զանազ
Վահան այս ամեն ձիրքերը յարմարցընելու իրարու.
և գժուար պարագայից մէջ շատ անգամ յաջո-
ղեցաւ քան թէ սխալեցաւ:

## Բ

Առաջին գժուարութիւնն՝ ի սկզբան աէրու-
թեանն և գրեթէ մինչև՝ ի վերջն այլ, իր գրակից
և համազօր Անտիոքայ դքսին կռիւն էր, որ ինչ-
պէս իր եղբայրը դաւաճանեց՝ այսպէս իրեն այլ
կու դարանէր. երկայն խաղեր խաղաց Վահա
անոր հետ. և եթէ Եւրոպացւոց գաշնակցու-
թեան ու երախտեաց պարտքը չունենար, և
մանաւանդ պատկառանքն՝ ի սրբազան գահէն
Հռովմայ, որոյ միչնորդութեամբ այլ իր թագը
և իր գրօշն ընդուներ էր, թերևս բոլորովին զի-
նուորական ուժովը վարուէր Անտիոքացւոց հետ.
բայց հարկ էր երբեմն ուժէն աւելի խորագիտու-
թեամբ վարուիլ: Այսու մօտ Վահայի առաջին
խաղն կամ հնարքն եղաւ ինամեցնալն իր նախան-
ձորդին կամ թշնամւոյն հետ, որ էր գուքան Պե-
մոնդ գ. որոյ աներձադին գուստրը՝ Իզապելլը՝
առաւ՝ ի կնութիւն (1189). իսկ անոր (Պեմոնդ
դի) անդրանիկ որդւոյն Ռայմոնդի կամ Ռե-
մոնդի՝ կին առաւ (1195) իր եղբօր (Ռուբինի)
գուստրը՝ Աւլիծ, (որ այրի մնացեր էր՝ ի Հեթ-
մոյ Սասնեցւոյ), և ատոնցմէ (յԱվլիծայ և՝ ի Ռե-
մոնդէ) ծնաւ (1196) Ռեմոնդա-Ռուբէն Բր-
րինձն, որ պիտի ըլլար օրինաւորապէս ժառանգ
գքսութեան Անտիոքայ. և մայրենի արեամբն՝ ան-
կասկած և բարեկամ պիտի պահէր զՀայաստան:
Բայց երբ ատոր հայրն Ռայմոնդ տարաժամ մե-

10249926



ռաբ (1200) և իր հնգամեայ որդին անուանեցաբ կոմս, անոր հօրեղբայրն Պեմոնդ Դ. յափշտակեց՝ ոչ միայն անոր իշխանութիւնը, այլ և իր խռիճած և տպշած հօրը աթոռը. (ապշութեանն համար le Bambe կ'անուանէին զինա): Բայց Լուսինեան և Լեւոն՝ վռնտեցին զՅայրանեմոդ գաղտաբերը, և գարձուցին ծերը յաթոռն. իսկ երբ սակաւ աւելցան քնական մաղձութեամբ մեռաբ (1201), որդին (Պեմոնդ Դ) նորէն իշխանութիւնը ձեռք ձգեց ընդդէմ իրաւանց Ռուբինեան-Ռեմոնեայ: Ահա այս բանիս համար գրեթէ քան տարի հակառակութիւն և կռիւ էր Լեւոնի և Պեմոնդի մէջ, և Անտիոքայ դքսութիւնն տակին ու վայր եղաբ. իրիք չորս անգամ առաբ Լեւոն զԱնտիոք և նստաւ էր եղբօր Թռոը. Անտիոքացիք երկպառակած՝ ոմանք Լեւոնի՝ ոմանք Պեմոնդի կռանակից կ'ըլլային. Լաւնիք քնականապէս աւելի այս եաքինիս կողմն էին, վախնալով որ չըլլայ Թէ քոյրը երկիրն այլ Հայոց Թագաւորին իշխանութեան տակ անցնի. մանաւանդ որ Լեւոն արտ զաւակ չունելով՝ զՌուբէն անուաներ էր իրեն յաջորդ, և Թագով այլ պատիւր էր զինա (1210): Լաւնիք մեծ օգնութիւն գտան իրենց Հռովմայ արքային քահանայապետը. և Թէ անոր նամակով ու նուիրակով, Թէ պատրիարգով Անտիոքայ և Երուսաղեմի, Թէ ժողովքով Անտիոք, և Թէ բանադրանօք կոբ բանադատէին զԼեւոն Թողուլ զԱնտիոք՝ ի Պեմոնդ. Լեւոն այլ դեսպաններով և նամակներով և իշխանական ուժով երկար տարիներ դիմացաբ, իր իրաւունքը և դաշնադրութիւնը պաշտպանելով. ինչբան որ ուրիշներն այլ Ճանչցան զՌուբէն օրինաւոր ժառանգ գքսութեան, և բանադրանքը վերուցին՝ ի Լեւոն: Այս բաներս գոնէ համառօտիւ Տարկ է գիտնալ, բաբ հասկընալու Տամար Ջաքելի ապագայ բաղ-

դը, որ կերպով մը այս անախոհեան խնդիրներէն ծագեցաւ:

Լևոն թէ իր ըրած ամուսնութեամբն և թէ Ռուբէնը որդեգրելովը՝ որչափ որ Անախոջայ մեր ձառնեցաւ, այնչափ այլ եռքի տարիները իրեն զղուելի եղաւ այս մերձաւորութիւնը. և ամենէն աւելի իր կինն եղաւ իր արտին վիշտ, զոր թերևս աւելի քաղաքական սեռութեամբ՝ քան արտին փափագանօքն առեր էր. և չէր այլ ուներ իրմէ իրեն նման կարիճ զաւակ մը, ժառանգ իր այնքան աշխատանօք գտած և պահած թագին. քայց դեռ նախախնամութեան կամօք վարելով, և Ռուբէնը իրեն յաջորդ ընտրելով՝ գոհութեամբ կ'ապրէր: Սակայն երբ յետ իր քան տարուց (1206) կենակցութեան՝ ծանր ախտութիւն լսեց Թագուհւոյն վրայօք հաստատրիմ անձէ, թերևս իր ախնուական չափէն այլ աւելի գութ եընելով և պատժելով վիճին՝ բանտարկել ըրաւ ի Վահկա բերդի. և անկէ ունեցած մատղաշ աղջիկը՝ յանձնեց իր մօրը՝ Ռիլեա անկնոջ, որ գեռ ողջ էր, և որոյ անուամբ կոչեր էր գուսարն այլ: Մեր պատմչէք զուա միայն յիշեն զաւակ Լևոնէ. քայց օտարք անուանեն նաև զՍտեփանիա՝ կամ Եպե-Ֆեմի (Estéphémie) գուսարն այլ զոր տուաւ ի կնութիւն քաջին Յովհաննու Պրիեննայ՝ Երուսաղեմի Թագապահին կամ Թագաւորին: Իզաբէլ էն վերջն ինչ եղաւ՝ անյայտ է. հաւանօրէն քանի մը տարիէն մեռաւ յաղթելանին. և Լևոն երկրորդ ամուսնութիւն ըրաւ, երթալով ի Կիպրոս առ (Թագաւորն Հիւկ՝) որդին Ամաւրեայ, և առնըլով (1210) ի կնութիւն, հաւանութեամբ Ս. Պապին [1] առ մատաղ օրիորդը՝ Սիսիլ, որ էր

1 Բայեալտի: Յորմէ յայտ է որ առաջին կինն մեռած էր, և ոչ որպէս մէկն ի մերայոց կ'ըսէ, զայն թողլով՝ կամ առաւ:

ըստ մեր ժամանակագրին (Սմբատայ) «կին է՝ մատաւն և համեատ»: Ակէ՝ Լևոնի ծերութեան ծիրանի ծաղիկ ընծայեցաւ մեկհատիկ աղջիկ մը, Ջապել, յամի 1216:

## Գ

Ջապել իր ծերուն հօրը խոնարհած արևուն յանկարծափայլ լոյս մը, նոր յոյս մը բերաւ: Լևոն նոյն տարին արդէն անգամ մ'այլ Անտիոքայ տէրերը և հատատաւերը էր հոն զՈւբքէն. բայց երբ նա նորէն հալածուած 'ի Պեմոնդայ՝ դիմեց առ հայրապիրը և պաշտպանն իւր, Լևոն՝ արդէն ձանձրացեալ, ծերացեալ և հիւանդ, յայտնի առնելով որ եթէ Ռուբքէն ինքն իրեն կարող չէ աթոռը պահելու, անով Հայոց գահուն այլ ինչ աւաքեր պիտի ըլլայ, ոչ միայն վերջին անգամ (1219) ջօգնեց անոր, այլ և մերժեց իր աթոռոյն յաջորդութենէն այլ. կտակը փոխեց, և իր տատցուածոց ու թագին ժառանգ անուանեց, (եւրոպական օրինաց հետևելով) իր նորընծայ Ջապէլ դստրիկը, երբև նախախնամութենէ պարգևեալ պայազատ մը: Իր վերջի տարիները՝ երբ ձեռքի և ոտքի յօդացաւութեամբ տանջուելով՝ չէր կրնար կատարել իր քառատուն տարի ըրած առիւծական արշաւանքները, և ոչ արծուի պէս ճանկերը ձգել լեռնէ լեռ, բերդէ բերդ, իր ընդարձակած երկրին սահմանակից հակառակորդաց վրայ, դեռ երբեմն մունչալովը կը վախցնէր զանոնք. զօրքն ու զօրավարները կու գային կամ յօգնութիւն նեղելոց և կարօտելոց, կամ 'ի հալածել զթշնամին. և եթէ սա զօրացեալ՝ զիրենները քշէր ու վանդէր, Լևոն երկաթի տեղ տակի ափեալով՝ կու հետացընէր վտանգաւոր մերձաւորը և կ'ա-

զաուէր իր գերեալ զօրքն և իշխանները։ Այսպէս այլ ըրաւ յամի 1217, երբ Իկոնիոնի Ազղէտին Քէյքաուս սուլտանն պաշարեց զԿապան բերդն, և գերեց Լևոնի գլխաւոր զօրավարները, որ էին մեծ իշխանն և պայլն Սիր Ատան, և Կոստանդին պռունդատապլ (սպարապետ), իր (Լևոնի) քեռւոյն որդին՝ Պապեռոն բերդին տէրն, 'ի ցեղէ Հեթմեանց [1]։ Լևոն գերեվարի ընելով զԱտան և զԿոստանդին՝ բոլորովին երախտապարտ և անձնանուէր ըրաւ զանոնք. «զի լաւ է Թագաւորին » աղէկ ձուլտ պահել՝ քան զայլ հարստութիւն» [2]։

Այսպիսի աղէկ և հաւատարիմ ձորտեւրու վրայ վատահացեալ և զանոնք իր զաւկին խնամակալ կարգելով՝ իր դեռատիպ դաեր լոյսը պայծառացեալ կու տեսանէր. և իր ծանրացած աչքացած Թևերուն վրայ Թրթռացընելով այն ձերմակ փափուկ ձագը՝ կու յուսար Թէ անով նորոգուի իր արծուային մանկութիւնն այլ. անով կարենայ կամ նոր օրսեր ընել կամ հինները պահել։ Միայն կու ճնար անոր արժանաւոր վարուժնեակ մը գտնել, արժանաւոր լծակից մը. որ Թէ իր, Թէ անոր. և Թէ Հայոց բաղդը հաստատէ։ Բայց Զապել շատ դեռաբուսիկ էր. Լևոնի յօդացաւն այլ չէր յուսացըներ զանիկա չափահաս տեսնելու. սակայն անոր համար այլ աւելի կու հոգար կու մտածէր. և իր անդին գոհարը (դուստրը) գգուելով, միտքը պալատէ պալատ, արքունիքէ արքունիք կ'ելլար, Զապելի փեսայ

1 Առաջին Հեթում Սևաստոսի որդին Սմբատ՝ պապ էր Թէ Լևոնի Թէ այս Կոստանդնիս, մէկուն՝ (Լևոնի) իր Ռիթա աղջկան, մէկայլին՝ (Կոստանդնի) իր վաւակ որդւոյն. ուրեմն Լևոն և Կոստանդին համշէրակք էին, իրենց զաւակքն այլ (Զապել և Հեթում) լծակից եղան յետոյ։

2 Սմբատ Պատմիչ։

մը, Հայոց իշխան և իրեն պահակալ մը դանելու. մինչդեռ այն հոպած մատց վրայ և յօդնած ձեռաց մէջ Ջոպել անհոգ և անդէտ կու ծաղկեր կու ծիծաղէր, կու բացուէր գոցուէր, ժայռերու և հեղեղաց եզերք բուսած նուռնուֆարի մը նման:

Սուլտանին 'ի Կիւլնիկիա ատենակած տարին (1217) յԵւրոպիոյ բազմութիւն խաչակիր զօրաց եկան նորէն ջնրուսաղէմ ազատելու, յետ երեանամեայ գերութեան 'ի Սալահէտտինայ. Լևոն անձամբ չկարենալով երթալ՝ զօրք տուաւ իր անեղբաղին՝ Կիպրոսի Հիւք Թագաւորին, որ և գնաց 'ի Թաքոր և 'ի Պաղեստինա, և խաչակրաց կանուխ հասած գնդից հետ քաջութեամբ գործ տեսաւ: Ան յաւաչապահ գնդից գլխաւորն և ամենէն կարկառ իշխանն՝ էր Մաճառաց Թագաւորն Անդրէաս Բ. որ մեծ համբաւ այլ հանէց. բայց իր երկրին շահութեանը համար՝ սակաւուեցաւ շուտով հոն փութալու. 'ի դարձին եկաւ յԱնտիոք, (որ այս առենս այլ Ռուբինի ձեռքն եկած կ'երևի): Լևոն՝ որ ամեն բան կու գիտէր կ'իմանար, հաւատարիմ դեսպան մը խաւրեց առ Անդրէաս, և գաշանիք խօսեցան որ անոր համանուն որդին Անդրէասը՝ պատկեն Զաքելի հետ. Թէպէտ և գեռ երկուքն այլ բաւական տարիք չունէին. վասն զի Անդրէաս այլ հազիւ 8 տարուան կրնար ըլլալ: Ուշկարաց հին արևելեան արիւնը յարմարագոյն սեպեց Լևոն իրենին հետ խառնել. անոնց Թագաւորին այլ սակէ հաճոյ անակնկալ օժիտ չէր կրնար ըլլալ իր որդւոյն համար, զոր յանկարծ Հայոց Թագաւոր պիտի սեպէր: Այս բանիս համար Անդրէաս գոհութեամբ Թուղթ մը գրեց ('ի մարտի 1219 տարւոյ) առ պատն Ոնորիոս, խնդրելով Լևոնի հետ ըրած խնամեխաուութիւնը, և անօրի-

նուիրն ինդրելով որդւոյն Հաճար, միանգամայն և աղաչելով որ ինքն քահանայապետան յանձնէ զնա Տաճարական և Հիւրընկալ տապետոյ՝ խընամակալ ըլլալու տզային՝ յետ մահուան Լեւոնի:

Բայց այս գործս չյաջողեցաւ. վասն զի Լեւոն շուտով մեռաւ նոյն տարին (1219). և Անդրէասի Թագաւորն զբաղած էր ի Կալիցիա՝ հոն Թագաւորեցընելու իր երկրորդ որդին. և ինչուան որ հոս բաները ըսպրէց, Հայք ուրիշ ընկեր գտան Զապելի. մանաւանդ Անդրէաս այլ վէնեւիկցի օրիորդ մ՝առնելու բաղդ ունեցաւ: Այսպէս զուր եղաւ Զապելի առաջին փափագողին ակնկալութիւնը. Թիւնը. Թէպէտ և կ՝երևի՝ Թէ Լեւոն այլ նոյնուշով մեռաւ, նորէն յանձնելով զՋապէլ՝ կամ Թուղնկոսին և իր հաւատարիմ իշխանաց, և գըլխաւորապէս Առանին, զոր և այլ գրեր էր. այսինքն նըզր խնամակալ տէրութեանն և հայրապետին (աթաբէկ) իր զեռահասակ Թառանգին:

## Դ

Զապելի խնամակալութեան տակ եղած Թագաւորութեանն տակ եղած Թագաւորութեանն տակ եղած Թագաւորութեանն

Հայոց անուն առել հաւանեցան սպայլ Ճանչնալուս Լևոնի համբերակը, զԿոստանդին գուշդատապլն, զոր արդէն երկրորդ խնամակալ դրեր էր Լևոն. այս անձս որ 50 տարուց ջոկ Ռուբինեան ազգութեան նեցուկ և դրեթէ կառավար եղաւ, այս ժամանակիս ամենէն նշանաւոր անձն էր, ամենայն բարեմասնութեամբք. և յետ Լևոնի մեծի՝ առաջին մեծ մարդ կրնայ ըսուիլ բոլոր միջոցեալ աէրութեան ժամանակին. ցեղով, ինչպէս առաջ յիշեցի, 'ի Հեթմեանց էր, որ թշնամիք էին Ռուբինեան տանը. բայց սա ցեղին կրսեր Ճիւղէն էր, որոյ անդրանիկն՝ Տարսոնի և Լամբրոնի աէր ըլլալով՝ հակառակ էր Ռուբինեանց. իսկ այս Ճիւղս Պապերոնի և ուրիշ բերդերու ժառանգ՝ Լևոնի հօր հետ իննամութեամբ՝ միաբան և հաւատարիմ եղաւ Ռուբինեանց. Կոստանդնի անձնական արդիւնքն սպայլ հասուց զինքը այս բարձր աստիճանին, ուր կրցաւ սպայլ ամուր և փառաւոր կեանալ հնարագէտ խելքովն, զօրութեամբն և բարեկրթ որդւոց օգնութեամբ: Այսպիսի զօրաւոր և բանգէտ անձի մը դէմ կենալ կամ հնարել՝ շատ գժուար էր. և ով որ փորձեց՝ մեծապէս ձեռաեցաւ. և նախ Բրինձն Ռուբէն–Ռեմոնա:

Սա հալածուած յԱնտիոքայ, մերժուած իր քաղաքեալ մեծ քեռէն, մինչդեռ տարակուսեալ կու մտածէր՝ վրայ հասաւ Լևոնի և յետոյ Աստանայ մահն. Ռուբէն՝ մեկ իշխանութենէ զըրկուած՝ աչքը երկուքի գարձուց, որոց առեւնք իրաւամբ սպայլ կրնար յուսալ. իսկ հիմայ թէ ոչ զօրութեամբ հին կատակին Լևոնի՝ գոնէ ազգակցութեամբն և իննամութեամբ, (վասն զի Զապելի մօրքոյրն էր իր կինն սպայլ) և Հայոց ու Լատինացց լեզուին և սովորութեան վարժութեամբն՝ վատահացաւ իննդրելու Հայոց թագաւորութիւնը: Բայց Լևոնի կամքն և Կոստանդնի վախն հե-

ռացուցին զնա. սակայն տարաբաղդ երիտասարդն՝ չէր կրնար շուտով մոռնալ որ ատեն առաջ Լևոնի հետ Թագավից և Չիսկից՝ Հայոց հանգիստական ծոմից հաղորդ կ'ըլլար. և շատեր կային՝ որ ոչ միայն զինքը ճանչցեր էին յաչըրդ Լևոնի, այլ Թերևս և հիմայ այլ չհակատակէին. այն ատեն՝ դեռ պատանեակ, հիմայ իբր 25 տարուան կտրիճ առպետ մը, Հայոց և Անտիոքայ և Խաչակրաց նշաններով զարդարուած, էր ամենէն վառվռուն և յոտապին կենաց ատեն, չէր կրնար այնպիսի մեծ փափագէ մը յետ դարձընել սիրտը. ինդրանօք չկրցածը՝ ուզեց փորձել ուրիշ հնարքով, նաև զինուց զօրութեամբ:

Ան ատեն (1219–20) Խաչակիրք առաջնորդութեամբ Յովհաննու Պրիեննայ՝ Երուսաղեմի Թագաւորին՝ եկեր պաշարեր և առեր էին զՏաժիատ. հոն էր Պապին նուիրակն այլ՝ Պելագիոս ծերանաւորն, որ իբրև փոխանորդ քահանայապետին՝ կ'ուզէր Խաչակրաց գլուխ այլ սեպուիլ և հրամայել: Սաոր դիմեց Ռուբէն, և գաւառ օգնութեան ատակի և զօրաց. Խաչակիրք Տամիատայ առմամբ հպարտացած և շիտացած անհոգ կեցեր էին. դիւրին էր ատոնցմէ ժողովել գունդ մը բալդախինդրաց, և նոր տեղի մը ձեռք ձգել: Այսպէս այլ եղաւ. Ռուբէն յանկարծուց գնդուն եկաւ 'ի Կիւբլիկիա, մնաւ 'ի Տարսոն, և առանց ընդդիմութեան գանելու հոն, (ուր որ միշտ Լևոնի ցեղին հետ սերտ բարեկամութեան չէր եղած), իշխեց ինքզինքը Հայոց Թագաժառանգ անուանել, և գաւաւ կուսակից այլ զինքն այնպէս ճանչցընելու: Ասկէ քաջալերուած՝ առաջ անցաւ՝ ձեռք ձգելու ուրիշ քաղաքաց և Լևոնի Թագին վայ. բայց զգաստ Կոստանդին հաւատարիմ գնդով մը յանկարծ վրան հասաւ՝ Մամեստիոյ կոլմերը. անոր կուսակիցները ջարդեց ցրուեց,

ինքն այլ բանից բերաւ իրեն ապաստան կոչ-
ծաց Տարսոն քաղաքը, և շրջապատակապ բանտարկ-
պել ըրաւ: Թշուառ երիտասարդն անոյշ՝ ի Հա-
յոց և յԱնտիոքայ, գեռ կու յուսար Թագաւորաց
և Քաղաքապետին օգնութեանը. և սա յիրա-
ւի հայրաբար խնամելով և ճանչնալով զնա օրի-
նաւոր տէր Անտիոքայ՝ գրով յանձնեց առնա-
խայիշեալ նուիրակին, որ հոգ տանի անոր ազա-
տութեան, և անօգնական չթողու անոր կինը և
երկու աղջիկները. նուիրակն կրցած չանքն ը-
րաւ, նզովեց զԱնտիոքայ բռնաւոր դուքսը, և
Տաճարական ասպետաց յանձնեց առնուլ քա-
ղաքը. որով Թէոնա յոյժ ըլլար Ռուբենի գոնէ
նորէն հոն դառնալու. բայց նա ոչ թագաւո-
վախճան մ'ունեցաւ. բանտին, և աւելի սրտին
նեղութենէն՝ երկու իրեք տարիէն՝ իր գալար ա-
րևուէն ու ամեն յոյսերուէն մարեցաւ, մեռաւ[1]:—
Հայոց Թագն իրեն համար չէր, և ոչ այլ իրեն
պէս ուրիշ մերձաժառանգ ալինկաւրեի մը, Թէ և
աւելի այլ արժանաւոր անձն:

Ահա երկրորդ կամ երրորդ (կեա Անդրէի և
Ռուբենի) ալինկաւրեն՝ եղաւ նախայիշեալ Թա-
գաւորն Երուսաղէմի Յովհաննէս Պրիէն, պատ-
ճառաւ կնոջն իսաբելեան. այս կարիճ, ըզ-
գօն և արդէն տարիքն առած մարդն, որ մեծ
անուն ունէր Երուսաղեմ տակի, և գեռ նոր
Տաճիտն առնելով՝ այլ աւելի հռչակուած էր,
իր ժառանգակին բաղդատմամբ, նաև բաղդակո-
րոյս և բաղդապիտ գլխաւոր անձն այլ կրնայ
ըսուիլ. և ըստ այսմ՝ քաջութիւնն և ուրիշ չէր.
քերն կու մնան: Անելով Լևոնի մահը և Ռու-

1 Ըստ ոմանց պատերազմի մէջ բռնուած աստեն՝ ի Տար-
սոն բերուելով՝ սպաննուեցաւ, կամ՝ ի Բարձրբերդ բան-
տեալ մեռաւ:

բենի հանգիստածը, իրեն յարմար սեպեց ժառանգութիւնը. այս մտքով եկաւ Տամիատէն եկաւ՝ի Պաղտայիս (Աքքեա), ու պահանջեց Հայոց Թագը: Այսախան մեծ և զօրաւոր անձն գէմ կենալն դիւրին չէր. բայց որովհետև կնոջն իրաւամբք պահանջեց իրմէ՝ որ զևինը՝ (որ էր համահայր քոյր Ջապելի) հետը բերէ: Յովհաննէս դարձաւ իր կարծեցեալ Թագաժառանգին, և հիւանդ գտաւ զնա, որ և քիչ ատենէ մեռաւ. 15 օր վերջը իր մեկհատիկ էրկս տարօրեայ մանչ զաւակն այլ մեռաւ: Սրբազան քահանայապետն Ոնորիոս այլ իրատ և բանադրանք գրեց Յովհաննու՝ եթէ Հայոց հետ պատերազմի անոնց Թագաւոր ըլլալուն համար: Ամեն կողմէ Յովհաննէսի հայկական ակընկալութիւնն վհատցաւ. անոր վրայ շատ չանցած՝ Երուսաղէմի Թագաւորութիւնն այլ կորաւ, և անոնց տեղ գտաւ Կոստանդնուպոլսոյ կայսրութիւնը (1231), ու յունական Թագով մինչև մեծ Ֆրեդերիկոսի մեռած մեռաւ (1237):

## Ե

Ջապել՝ առանց իր գիտնալուն այս յափշտակիչներէն ազատելով, սկսաք էր որ շուտով ապահովեր նոր ակնկալուններէ. և թէպէտ Կոստանդին ամենայն սրտմտութեամբ կու հսկէր, բայց երկար տարիներ այլ անխռով մնալու չէր յուսար. ուստի Ջապելի չափահաս տարիքին էկարեւնալով ապատել, գոնէ խնդրահատութիւնը տեսնելով, երբ եօթն տարեկան եղաւ՝ի ժողով կանչեց ազգին գլխաւոր իշխանները, պատուոնաչքը, զօրականները և եկեղեցականքը, և ըսաւ, (ըստ պատմելոյ իր որդւոյն՝ Սմբատայ տպարտոմոն

և ժամանակագրի) «Պարոնայք, դուք պիտէք թէ
» յինչ նեղութեան գոն զաշխարհս, ու զմեր
» Պարոնին (Լևոնի) յետաձնացքն. ու Աստու-
» ծով ինչու՛ի յայս բերի. ու մեր Պարոնի դուստ-
» րըն՝ կարգման եղաւ. ամենդ Թատիրուեցէք
» (պատրաստուեցէք) որ մեզ Պարոն բերեմք.
» զի ես ուզեմ որ իմ տան և իմ որդւոցն անդոր-
» րութիւն առնեմ». այսինքն, Չապելի փեսայ
մը բերեմք՝ որ ես պայրութեան հոգէն ազատած՝
իմ տուննս հոգամ: «Նա ամենն Թատպիրուեցան
» շատ օրեր. և հայոց պատեհեցին (պատշաճաե-
» ան՝) որ քան յայլ տեղւոց՝ բերեն պարոն Ա-
» լոզին զԱնտաքայ Իրնձին որդին՝ զՖիլիպն. զի՛ ի
» մօտս է, և լաւ կարէ օգնել մեզ՛ի մեր ամեն
» կարիք»: — Այս Անտիոքայ Իրինձն կամ Իշ-
խանն էր Ծանօթ Պեմունդ (կամ ըստ ոմանց Բե-
մունդ) Դ. Շիլ կամ միականի կոչուած [1] (Le
Borgne), որ այնչափ վիճից պատճառ եղաւ ընդ
Լևոնի և իր եղբօր Թոռին Ռուբենի. ՚ի վերայ այսր
ամենայնի մեր պարոնայքն շատ օրեր մատծելով՝
քան զամենքն պատեհ գտան իրենց պարոն բեր-
լու անոր երրորդ որդին՝ Փիլիպպոսը, որ իբրև 17
տարուան պատանի մ՚էր. և արդէն մօր կողմանէ
հնաժի էր Հայոց և տեղեակ անոնց սովորութեց.
ինչ յատկին որ իր հօր և հանգուցեալ աներջ
մէջ անցածները գիտենալով՝ իրենց վրայ երախտա-
պարտ ըլլայ, և հրու հատատարիմ մնայ իր նոր
հայրենեաց օրինաց: Այս բանս ապահովելու հա-
մար՝ հաւատարմութեան խոսք և երդումն այլ
պահանջեցին իրմէ. «Բերին ՚ի ատման (պայման)
» որ հայենակ ինայը, ու ղէնղէցին և պտղանն հայե-
» նակ փանէը. և զամեն մարդ յիւր իրաւունքն

1 Արդիօք այս նշանակութեամբ Ալուզ կամ Ալօզ կո-
չէ զնա մեր պատմիչն, թէ այլ պատճառաւ՝ չեմ գիտեր:

10249926



» պահէր » : Այսինքն, եկեղեցական և արքունական հանդէսները՝ հայկական ծիսով վարէ, և զանձն իրեն իշխանութեան և իրաւանց մէջ պահէ : Ապա (1222) մեծ հանդիսիւ պսակեցին առնոր հետ զդրիտրդն Զապէլ, որ իբրև քոյրահարսն փեսային և Թագուհի Հայոց և միամիտ սլաւնի՝ ջորս տարի այլ հօրը արքունի դարպասին և առագաստին մէջ կու ձեմէր, դեռ իր ինամակալ և հայրանախանձ Հայ իշխանաց հակոլութեան տակ. և շատ բարեբաղդ եղաւ ընտիր դաստիարակներ ունենալու թէ՛ յիւրոցն և թէ՝ի Փրանկաց, միաքը և հոգին կրթելու. և իր բարձր վիճակին յարմար տացաւ՝ի կուսական հասակին՝ սիրտ մայրենի, աղքատաց և կարօտելոց համար, ճաշակ և սէր իմաստութեան և գիտութեանց, և ամենէն աւելի՝ բարեպաշտութիւն, համեստութիւն և տառապածակրութիւն : Աշխարհն՝ իրեն ակնութեան, փեսայն՝ հարանութեան, երկինք՝ ազգին մայրութեան կու պատրաստէին զնա. ինքն դեռ արտաքին փառաց անհմուտ՝ միայն պարկեշտութիւնը գիտէր գեղեցկագոյն զարդ. և կարծէր թէ այնպէս կուսախառն կենակցութեամբ ապահով պիտի ճոխ իր պսակակցին հետ :

Բայց թէ իր և թէ հասարակաց կարծիքն խաբեաւ : Փեսայն Փիլիպ յառաջ քան զհարանն՝ անարժան գտաւ աշխարհն՝ որոյ Թագուհին պսակաւէր էր : Առջի երեք տարին վախով և զգուշութեամբ քաղաքավարելով՝ երբ ուժովցաւ քանանեան եռանդով և համարձակութեամբ, սկսաւ ինքն իր խելքով վարուիլ, մանաւանդ թէ հօրը խելքովն. որ ոչ այնքան որդեսիրութեամբ՝ որքան շահասիրութեամբ՝ պղտորեց անոր միքը. և սկսաւ սա պաղիլ Հայոց սովորութենէն, և « իւր հօրն Թագուհով կ'ուզէր որ ձգէր զՀայոց » զամէն իշխանքն, և յիւրոցն դնէր » . Հայ պաշ-

ածնէից աւել՝ Փրանկ մայընեալ, եկեալ վիցաւոյն և աւերանին ծէսը փոխել, Սխէն աւելի Անտիոքայ մոռանալ: Իշխանք իրատեցին զնա, քայց նա իր հօրմէն մնալոյած՝ ոչ միայն ձամբէն չդարձաւ, այլ և գաղտուկ հօրը խաւրեց Հայոց ալքաունի զարդերը, և մանաւանդ Լևոնի մեծածախ չինած պալատանն վանքը, զոր մեծ հանդիսի օրեր կու կանգնէին: Եւ ոչ այնքան երդմունքէն՝ ալքան Հայոց վրէժխնդրութենէն վախեալով՝ ուզեց ինք զինքն այլ փախցընել իր հայրենիքը: Գաղտուկ զՋապել հեռու առած ձամբայ եկեր և հասեր էր՝ի Թիլ Համալնոյ՝ Ջահան կամ Ճինոան գետոյն քով: Կատանդին կարիճ զինուորներով հասաւ եանէն. գիշերանոց դարանելով պաշարեց զբերդը, և նեղ մասաւ անկարծելի տանէն. մինչդեռ յօգնութիւն, քան և սէր մեծագոյն խաղաղութեան և երջանկութեան մէջ կու կարծեցնէին ծաղկահասակ աղուհնքը, յանկարծ զամէնն այլ ընդհատեց, խռովեց, հալածեց.—և ինչ անդարձական հալածանք.—երկաթեղէն ձեռօք առապատին միջէն յափշտակեց զՓիլիպ, երբ զարհուրեալ և կիսամեռիկ լծակից Ջապել՝ գողդողալով լալով, և երեանները ցրտելով՝ հազիւ կրցաւ կանչել «Վայ » սէր, վայ սէր». ձեռուընեերը դէպ՝ի գրկէն փրթած փեսային կարկառելով. մինչդեռ անգութ յափշտակողքն՝ անոնց կաճոպին կապերը խպտած կտրելով՝ յանդգնաբարոյ կապանօք պրկեցին զՓիլիպ, և խուռ ամանով՝ եւրն քշեցին զնա մինչև՝ի Սիս, ուր և քերդարգել ըրին, իբրև մատնիչ ազգային իրաւանց և երդմնազանց: Նոր խռովեցին Անտիոքայ Բրնձին այլ՝ որ յետ դարձընէ Հայոց գահուն, և զորդին ապատէ. իսկ չիլ և շուտ հայրն՝ Հայոց ոսկւոյ և արծաթին հետ կու կշռեր որդւոյն սէրը: Աւրջն բերան, քիչ մ՚այլ վախէն լուեց, որ ջրլոյ թէ Հայք դեռ կրկին առ-

քուԹեան մէջ ըլլալով անոր կենացն այլ Հնաւհասցընեն. սաեն անցնելէ եաև գեապանները ապաջաուրնեը խաբեց որ գոնէ միայն արձակուեն, իրեն խաբեն որդին, խոստանալով բոլորովին հրաժարելու յիւրաքանչ ԹագաւորուԹեանն Հայոց: Ի՛նչ գժուարակնձիան և ոզբերգական խնդիր. Թագէն հրաժարելն Թերևս ըլլար դիւրին, բայց ինչպէս հրաժարեր Ջապէլն սրտէն, որ և անխարդախ սիրէր իր վարուժանը: Երկու տարուց ջափ տևեց այս խղձալի վիճակին. Պեմունդ տեսնելով որ պեապանուԹեամբ բանն առաջ չ'երԹար, անձամբ եկաւ՝ի Համուռն, ապաչելու զինքեան Հայոց, զինչանելով զանոնք գոհ ընելու և փրկանաւորելու Թշուառ զաւակը: Հայք չկըրցան չէ ըսել՝ Թող տուին որ մարդ զրկէ խմացընելու որպէսզի: Ախա՛ռ, շատ ուշ. կամ՝ նենգուԹիւն[1] կամ սրտնեղուԹիւն արդէն ազատեր էին զՓիլիպպոս՝ի կենաց: Պատմաւորչքն լուր բերին Թէ գեռ նոր՝ քանի մը (տասն) օր առաջ Փիլիպպոսի գալստր արևն քանաին մԹուԹեան և ախտուԹեան մէջ մարեր էր (1225). ՚ի պատիժ՝ երկն աւելի՝ եր անպատասխանելի հրաժարումն այլ էիա-

հայենակ իրաւանց, բայց և ՚ի փուշ փախուստ սրտին Ջապէլի: Ջապէլ հինայ զարդասկեալ՝ սկըսեր էր զգալ իր վիճակը և պարտքերը. աչքին դիմաց սարսափելով տեսեր էր իր կողակիցը՝ վնեալ և զայրացեալ մարդկան ձեռք ընկած. եԹէ ազգին իրաւանց գպչելին էր կրնար պաշտպան կենալ, մԹէ իր կենակցին և Թագակցին բարեհաս ըլլալու իրաւունք չունէր: Կ'իմանար՝ որ իր սկար հասակն խոպալնկ կ'ըլլայ բազդին և շատերու բազդի. բայց գեռ ամեն փախուստին այլ էիա-

1 Որմանք ըսին Թէ Թունաւ եղեր էր մահն:

10249926



բեռնալով իր ոտաձնոյ սահմանքն վեր Թուչիլ լուիկ սիրտը դրած կու գայիրը։

# Զ

Ազգանախանձ պարոնայքն Հայոց՝ երկրորդ անգամ պայծ դրին զԿոստանդին, որ փոխ-ած ցաւ Փիլիպպոսի կողմնակից իշխանները ցրուեց և անոնցմէ 28, կամ ըստ ումանց 70 հոգի բռնեց, կամ սպաննեց կամ վըրնտեց կամ նուաճեց։ Տարի մ'այլ արքունութեամբ կառավարելէն ետև, իր անուանակից Կոստանդին կաթուղիկոսը և մեծ իշխաններէն մէկ քանին հաւանեցուց՝ որ Զապելը հարանացընէ իր որդւոց մէկուն. որպէս զի ինքն այլ հայրապետը պաշտպանելով՝ ամեն փորձանքէ ազատ պահէ զԹագն և զԹագուհին Հայոց։ Եթէ փառասիրութենէ ազատ այլ չէր այս խորհուրդս, սակայն իրմէ արժանաւոր մարդ այլ չկար Զապելի սկեսրայր ըլլալու. ոչ ոք իշխեց ձայն հանելու, և ոչ ոք յետոյ զլջացաւ։ Ինքն Լևոնի համշիրակ, որդիքն այլ նոյնպէս էին Զապելի, և գրեթէ մէկտեղ մեծցած. ատոնցմէ փեսայացուն էր Հեթում, երէցագոյն որդին Կոստանդնի, իբրև 15 տարեկան[1], «Մանուկ տիօք, առոյգ մարմնով և » գեղեցիկ տեսանելով». ըստ ասելոյ ժամանակակից պատմչին, (Կիրակոսի), և ըստ սկանտեսին (Վարդանայ) «մեծահոգի և հանճարեղ » պատանեակ, որ էր անձնեայ և Թիւնեղ և գե» ղեցկադիտակ երիտասարդ»։

Այս վայելուչ և հաճոյական ձիւքերն՝ եթէ օտարաց անտարակոյս գրաւ մ'էին աչխարհքին իսալատուԹեանը և իրենց սիկնոյ երջանկուԹեա-

1 Իր անդրանիկ եղբայրն Սմբատ ծնած էր յամին 1208։

նը, սակայն Զապելի մեծ և զգայուն սրտէն չի կրցան խլել Փիլիպէի փուշը. որչափ այլ երախտաւոր ձանչնալը իր կրկին անգամ հայրապետութեան եղած կոտտանդինը՝ Զապել կ'իմանար որ ոչ միայն անոր թեւոց տակն է՝ այլ կեղրոնով մը և ճանկեռուն. և այս ճանկերը շատ սուր և արիւնոտ կ'երևէին իրեն. Հեթում այլ սիրուն ձագ մ'էր, բայց բազէի կամ արծուոյ ձագ: Զապել՝ որսերէ զըզուած՝ անհատով խաղաղութեան բոյնի մը կոթ փափաքէր. կ'ուզէր մէկ ուժով մը զինքը բազէի և արծուոյ չհասած բարձրութեան ծոցը ձգել, ուր ինք բարով ըսել թէ հարանութեան և թէ թագաւորութեան պատկին. որոյ համար պատճառած կոթ ճանկերը (Ռուբէնի և Փիլիպէի) իրեն մեկմեկէ մերձաւորներուն՝ կարճ օրով ու սև ագով ցաւալի մահերը: Մտածածը մեծ և յօժար, բայց՝ ի գործ դնելն էր դժար. պայլ, պարոն, իշխանք և եպիսկոպոսք կոթ յորդորէին զնա՝ ի կենակցութիւն Հեթումոյ և՝ ի տիկնութիւն. ինքն իբրև անօգնական աղաւնեակ և որոյ՝ միչէր մայէր, լայր ու լռէր: — Կամայ ա՛ կամայ նշանելով զնա ընդ պատանւոյն (1226), Թոլուցին որ ժամանակին այլ յորդորէ զսիրտ պիտի, և ապա մեծահանդէս կատարեն թագօրհնէքը:

Ահն միջոցին սրբատաէր աղաւնին սրտին միամտութեան հետ հոգւոյ խորագիտութիւն միացընելով՝ ուզեց որ երթայ մայրը տեսնէ. Թոլուցին իշխանքն. յուսալով որ սիրտն այլ հանգչի և միխթարուած դառնայ: Մայրն՝ Իզաբել՝ կամ իր կամօք, կամ Հայոց զգուշութեամբն քաշուած էր ի Սեբաստիա Խաւարիոյ, և իր փրանկ ազգակացոյ քով կոթ կենար: Ահ ամուր բերդաքաղաքն՝ որ Կիւրիկոյ արևմտեան սահմանածայրն էր, Լևոն տուեր էր Լատինացի Հիւրընկալ տապե-

10249926



ատց, որոնք մեծ պատուով և ապաստարութիւ ընդուներ և կու պահէին զայրն դշխոյն Հռոմի. հինայ անոր ժառանգ դուստրն այլ աւելի պատուով ընդունեցան. մանաւանդ երբ խնդացան որ ալչիկ Թագուհին չուզէր անկէ և մօրմէն բաժնուիլ, կամ՝ անոր և ազգականացը խրատուին, կամ իր կամօքն. և աւելի կու փափագի վանք մը քաշուիլ՝ քան ալքունեաց մէջ նազիլ: Բերդին դռները ամրացուցին: Կատանդին զայս լսելուն՝ մէկէն զօրքերը ժողովեց, հասաւ պաշարեց քաղաքը. քաղաքապետն կամ գլխաւորն ատենաց՝ Ֆրէդր (Եղբայր) Պերդրան՝ իր ատենաց կարը. ձուլեան և բերդին ամրութեան վրայ վատաֆացած՝ դէմ կեցաւ Հայոց. Կատանդին չուզելով երկայն պաշարմամբ վատնել ձգել բաղդը, լսած պատնացաւ Պերդրանայ՝ որ եթէ շուտով չտայ զՋապել, մէկէն ալիսի երթայ Իկոնիոնի Սլայէտանին տուլտանին հետ դաշնակցելու, և անոր զօրքերն այլ առած՝ գալ բնաջինջ ընելու ատենաց առանը առը: Պերդրան մէկ կողմէ վախնալով ատանալնքէն, մէկալ կողմէն այլ իր և իրեններ. րուն պատուոյն և քաջութեան նախատինք առելով քաղաքը մատնել հակառակորդին, և անկէ աւելի՝ իր հնարքերը, հոն ապաւինեալ Թագուհիները, ատենական հնարագիտութեամբ մը պատասխանեց Կատանդեայ, թէ մենք ոչ ի՛ուզենք ձեր դէմ կենալ ու քաղաքս պաշտպանել, և ոչ այլ կրնանք մատնել. վասն զի բարեբաշտակ Լևոն Թագաւորն մեզի տուած է, և հոս են իր կինն և դուստրն՝ ձեր Թագաժառանգն, և հոս կ՛ուզեն մնալ. ինչպէս կրնանք մենք համարձակիլ մեր բարերարնեերը և մեզի դիմողները ձեր ձեռքը տալ իրենց կամաց դէմ. ուրեմն Թողուցէք մեզի՝ որ մենք մեր կամօք դուրս ելլենք բերդէն, և դուք գնացածնիդ երթք: Այս պատմուած

---

ասպետքն իրենց պատուոյն էին, Թողուցին զՍեբևկիա. Կոստանդին նուէն ձեռք ձգեց մօրը բռնէն բռնած ձագի պէս՝ Զապելը, և հրաւիրեց ՚ի տիկնութիւն և ՚ի մայրութիւն Հայոց։

## Է

Այլ էկարծաւ Զապել ընդդիմանալ Հայոց, և Կոստանդնի ոչ Հեթմոյ խնդրածին. խմացաւ Աստուծոյ կամքը, և յանձնելով զինքը անոր նախնամութեան, իր ազգին հաւատարմութեան, պայլին պաշտպանութեանը, և փեսային սիրոյն, պատկեցաւ ՚ի հարսն Հեթմոյ և ՚ի Թագուհի Հայոց, եկեղեցական և քաղաքական մեծ հանդիսաւ և հատարակաց հաճութեամբ և ուրախութեամբ. որոց մնանակից ըրաւ Կոստանդին՝ (՚ի հատատութիւն աշխարհին և իր զաւակին) այն ազգերը կամ այն Թագաւորները՝ որոնց հետ յարաբերութիւն մ՚ունէին Հայք։ Գրեց առ սրբազան Քահանայապետն, առ կայսրն Ալամանաց, դաշնակցեցաւ ընդ սուլտանին Իկոնիոնի. աչերութեան պաշտօնները յանձնեց արժանաւորաց։ Իր անդրանիկը (Սմբատ) սպարապետ դրաւ, մէկ որդին այլ (Լեւոն) մարշալ կամ էշխան նագարարութեան, իսկ ինքն անուանեցաւ Աբգահայր և Աստգապան. և Թէ իր Թագաւորդ տանը և հարսին, Թէ բոլոր աշխարհին խորհրդատու, և ամենահաս օգնական ու կառավարիչ եղաւ քառասուն տարուց չափ՝ ցկատր ծերութիւնն († 1263). Հեթմոյ և Զապելի Թողլով աշխարհի փառք և վայելքը, իրեն վայ տուաւ հոգ և աշխատութիւնը. և այսպէս Հմտարուեց իր որդւոյն քսածը, Թէ հարկատարութիւնէ փոխարինեց Լեւոն՝ զինքն ազատելուն ՚ի կատաղոց սուլտանին, անոր գառեր տանի

հայրութիւն և հազարապետութիւն ընելով. և ճանչնալով միշտ զնա ժառանգ թագաւորութեան Հայոց և տիկին: Այսպէս այլ ազգն՝ թէ և թագաւոր կոչէր զՀեթում, բայց նախապատիւ կոչ ճանաչէր զԹագուհին Զապէլ, նոյնպէս և յետագայք. գոնէ մինչ անոր մահը և Հեթումոյ միանակ մնալը. ինչպէս որ այն մօտ առեններ գրուած յիշատակարանք ոմանք առանց խակ Հեթումոյ՝ կ'ըսեն. «ի թագաւորութեան Հայոց Լ֊ւոնի, որդւոյ » Զապէլ թագուհւոյն, դստեր Լևոնի թագաւո֊ » րի». կամ ինչպէս Ցովհան Երզնկացի զատե֊ » լով կ'ըսէ [1] վասն նոյն Լևոնի (Գ), «որդւոյ ի֊ » մաստուն արքային Հեթումոյ՝ հօր, և մօր՝ Զա֊ » պելի սրբոյ ընտանւոյ». և վասնզի՝ ի շատս թա֊ գաւորաց զԶապէլ միայն յիշէ:

Նոյն ինքն Հեթում՝ ինչպէս որ կ'երևի, իր ա֊ նուամբ կտրած դրամներուն վրայ՝ Զապէլը իր ալեակոծմը կեցած կու դրոշմէր, բարձրացոլ խաչ մը հաւասար բռնելով, և արքունի գաւազան. որ (եթէ չեմ սխալիր) երբեմն միայն Զապէլի ձեռ֊ քը կ'երևի. (դրամին եզերքն այլ գրուած է Կա֊ րոզոսիանն Աստուծոյ է. միւս կողմն՝ առիւծ մը խա֊ չակիր, նշան Լևոնի ատեն, զոր պահեց և Հեթում և իր սերունդքն, եզերքը նորեն անունը գրելով, ինչպէս ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:

Մեր երկայնաշունչ թագաւորաց պատմութեան մէջ ամենէն ցանկալի և գեղեցիկ մասերէն մէկն է Հեթումոյ թագաւորութիւնն, (որ մեծ մասամբ այս օրուան յիշատակէս գուրս է), և շատ երջա֊ նիկներէն մէկն, գոնէ երկու թագակցաց կենա֊ կցութեանն ատեն: Հեթում՝ որ երբեմն իբրև ըզ֊ քոյր գգուեր էր զԶապէլ իր հօր պայրութեան ատեն, և հիմայ իբրև հարան ընտանեաց անունը գրելով,

1 Յիշատակարան Քերականին:

ատէր զնա և իբրև տիկին և իր Թագին պատ-
ճառ: Զապէլ որ իր առաջին ամուսնոյն ատրաբատդ ամու-
նոյն կուսահատն սէրը և ցաւը չէր կրցած ջնջել
իր փափուկ սրտէն, շատ տարիներ (իբրև 8 կամ
9) չուզեց նոր առագաստը վայելել. մինչև երկար
փորձով տեսնելով Հեթմոյ զգաստութիւնը և
բարեպաշտութիւնը, յօժարութեամբ կ'ուզէր
անոր Թագաւոր հաչակուիլն: Կուսութիւն քան
զամուսնութիւն նախապատիւ սիրելի էր իրեն,
բայց վերջապէս հաւանեցաւ բոլոր աէրութեան մը
փափագին և օգտին. սիրեց նոր ամուսինը. նա-
խախնամութիւնն այլ օրհնեց իրենց սէրը և պտուղ-
բեր ըրաւ: Զապել 11 ամեայ էր պսակուած տեսն
և իբր 36 ամեայ բոլորեց կեանց պսակը. իրենց Թա-
գադրութիւնն եղաւ յամին 1226, իսկ անդրա-
նիկ որդին յիշուի իբրև տասն տարի վերջը: Ուրթ
զաւակ ընծայեց, երէք մանչ և հինգ աղջիկ. ա-
ռաջին՝ Լևոն (գ) Թագաւոր. բ, Թորոս. գ, Ռու-
բէն որ շատ չապրեցաւ երկրիս վրայ. (դաւերքն)
դ, Ֆէռդ, որ Սիոն քաղաքին գաղղիացի իշխա-
նին՝ Յուբլիանու Իպլինեան՝ կին եղաւ. ե, Սէպիլ՝
կին Պեմունդայ Զ, Անտիոքայ բրնձին. զ, Ռէնա՝
կին Սարուանդիքար բերդին տիրոջ, (զոր արևմը-
տեայք Sire de la Roche անուանեն). է, Մա-
րիամ՝ կին Կիտայ Իպլինեան (Guy d'Ibelin) գաղ-
ղիացի սենեչալին Կիպրոսի (sénéchal). ը, Իզա-
պէլ, իր մօր և մամուն անուանակից, որ շուտով
Թռաւ յերկինք [1]:

1 Վահրամ քարտուղար Լևոնի (գ) որդւոյ Զապելի, և հին ցեղագիրն Փրանկ՝ երաշխաւոր են այս ուրթ զաւակաց. սխալին որք իններորդ մ'այլ աւելցնեն Օշին անուն:

## Ը

Զաւակաց զարդացման և դաստիարակութեան
խնամքը ջնկած, Զապէլ՝ իր ամենուրեք առա-
ջին տարիներն, ինչպէս Ջիլխայի առեն այլ, իր
անձնական կրթութեանը կու պարապէր, մանա-
ւոր սիրով և յօժարութեամբ բարեգործութենէ
և ուսման, հեռանալով իր հօրը փափագանաց և
օրինակին, և ջանակից դանելով իր փեսային. եր-
կուքն այլ իրենց տաճկանին կարևոր փառք և
պատշաճ կու սեպէին զգիտութիւնս, մանաւանդ
սուրբ գրոց. գրաւորաց և գիտնոց ձեռնտու կ'ըլ-
լային. կու պատուէին, ընտանեբար կ'ընդունէին,
հարցընէին, և իրենց համար գրել տային:

Երբ մեծանուն վարդապետն (և պատմիչն)
Վարդան Արևելցի եկաւ ՚ի Կիւլիկիա՝ կաթո-
ղիկոսին քով, Հեթում և Զապէլ մեծ պատիւ
ցուցին իրեն, և իբրև աշակերտաք՝ ՚ի սուրբ գրոց
և ՚ի քերականութենէ խնդիրներ կու հարցընէին.
որոց պարզ և ժամանակին գիւրահասկանալի լե-
ուռմէն պատասխան և մեկնութիւն գրած է Վար-
դան. մեկուն մէջ կ'ըսէ առ Հեթում, յիշելով
զԹագուհին. « Այժմ հայնց արա՝ իմ Պարոն,
» սակաւ մի աշխատեա (՚ի կարդալն). քո սակաւ
» աշխատիլն՝ առաւել է քան զայլոց շատն... Եւ
» զոդի իմ տառապեալ և տկար յիշեացես, որ
» զքեզ սիրէ առաւել քան զասել... Բայց պա-
» հեմ զպարզիտ (տգէտ) մարդ և զառաքինի՝
» մի հարցանել (այս դժուար խնդիրներըը), որ
» չսանչէն. զի (և) ես նախահոգութենէ գրե-
» ցի. և թէ առժամայն զիս հարցանեն՝ և ես գը-
» տանիմ տկարացեալ. վասն որոյ մի՛ մեղադիր
» Ինձ ժամուն (առժամայն, մէկէն) չգտանելոյն

» զտեսութիւն բանին: Եւ ես գիտեմ որ այս չէ
» թագաւորական իրք, (գրած գիրքն) այլ ոս-
» կէգիր ալիտէր և Ճարտար գրչի. ես շատ պատ-
» Ճառ ունէի՝ որ խափանէր զիս յայս ձեռնար-
» կութենէս... բայց սիրոյն հրաշագործիւ յաղ-
» թահարեալ եղեն պատՃառքն. և որպէս տե-
» սանէք՝ եղև. թէ կամիս՝ դիւրին է տալ փոխել
» յալէկին (մաքուր օրինակիւ), որ հեշտ կար-
» դայք. և Թող Գրիգորէսն փոխէ, որ բան չկո-
» րընչի: Բայց իմ կամ է որ իմ մատանոյ սատարն՝
» մնայ առ ձեզ. ո գիտէ թէ աւելի ընտրուր [1] լի-
» նի ձեզ, վասն յուսոյն իմոյ որ առ Տէր, և սի-
» րոյն՝ որ առ ձեզ. զի այնց (այնպիսի) Ճառ և
» պատմութիւն չէ՝ որ շատ աշխատանք տանին,
» և ապա բան գտանեն. թէ Թուղթ մի կարդաս
» ժամն կամ երկուք՝ գտանես յորով խորհուր-
» դըս: Եւ Սատուծով՝ տղայահասակ և մօք և
» աչօք զօրաւոր էք. և՛ի միանգամ կարդալն սա-
» կաւ ինչ աշխատիք, և յայլն՝ անհոգ լինիք: Եւ
» զի ոչխոյ Ե ոչխարհի՛ի միում մարմնի տեսանի,
» և հասարակ է հոգևորն և մարմնաւորն, թէ
» Սատուծով իրք մի օգուտ լինի՛ի գրեցողդ կամ
» միխիթարութիւն՝ երկուցդ (այլ) լեցի: Եւ
» զանգդ բազմագոյն և պայծառ՝ որ պատկէ զձեզ
» յաւիտեան (գիրքն), Թող Թագաւորի պահէ,
» և՛ի պետոյ ժամն՝ առնոյք՛ի նմանէ. և նմա
» հրամայէ Պօղոս հարցանել զձեզ և զպատեհն
» ծանուցանել. և պարտական են, ասէ, ապրե-
» ցուցանել զիրեարս՝ առն և կնոջ: Եւ զերկո-
» սինդ ապրեցուսցէ Տէր Յիսուս կենդանութիւնն
» ձեր՝՛ի խնամս Հօր և՛ի գութ Հոգւոյն սրբոյ.
» յորոգումն սնդեան գալստեան Տեառն մերոյ Յի-
» սուսի Քրիստոսի, ոստոցդ, ծիրանաձին պղծոցդ.

1 Շնորհաւոր, ուղղութիւն:

» ՚ի գերկս Սիոնի սրբոյ. ՚ի կատարումն պատկ-
» ման հայակոյտ ազնուական ազգաց և ազանց,
» տոհմից ազատաց. ազատեցուցիչք՝ արեամն
» ոսկ զարմից, ընտրիչք և բեռնաբարձողք, կո-
» րացուցիչք օտար ազգաց. ՚ի փառս փառաւոր
» և պաշտեցեալ Աստուածութեանն »:

Զապելի ձեռնտուութեանն առ ուսուսիասէրս՝ գեղեցիկ վկայ և պատուական մ՚այլ է իր որդւոյն (գ. Լևոնի) քարտուղարն՝ Վահրամ վարդապետ. որ և ինքնին ըսաւ իր աւրոջ Թագաւոր օծման օրը առենաբանելով մայր եկեղեցւոյն մէջ. « Երանե-
» լին Զապել ընտանիին, որոյ ոլորմութեանն և ա-
» ռատ պարգևացն որ առ ուսուսիականն՝ պատուոյ
» է մեզ նուաստութիւն, և ևս վէհագունից քան
» զմեզ. ընդ որում՝ զանձաւ բարութիւնն ըն-
» կալցի փոխարէն »: Որով կ՚իմացընէ Վահրամ թէ Զապել կամ իր մանաւոր ծախքովն դաս-տիարակել տուեր էր զինա և անոր նմանները, կամ պատճառ եղեր՝ արքունեաց դպրութեան մէջ մտցընելու զնա:

Զապելի աւելի ևս հռչակեալ, գովեալ և օրհ-նեալ արդիւնքն՝ իր գթած և կարեկից սրտին արդ-պանիք՝ ոլորմութեան գործքերն էին, որք և ա-ռանձնական բարեպաշտութեան գործոց քով՝ իր պայծառ հոգւոյն արտաքին ճառագայթներն կըր-նային ըսուիլ: Յամանակակից պատմիչը մը[1] կ՚ըսէ. « Յոյժ բարեպաշտ էր կինն այն և ողջախոհ. ակ-
» րող ամենայն երկիւղածաց Աստուծոյ, և աղ-
» տաքեր. պահօք և աղօթիւք հանապազ ձըգ-
» նէր »: Իակ՚ի Թագուհւոյն բարեբարեաց առե-նատունն՝ իր ոտանաւոր գրած Ուսբինեանց պատ-մութեան մէջ այլ ևս գրուատանք զնա այսպէս.

1 Կիրակոս:

« Սա առաւել քարեպաշտեալ
եւ հաւատովն բարձրացեալ.
Սկզով յԱստուած էր միացեալ
եւ յերկինս Տեառն իրատեալ.
Բարի գործովք էր զարդարեալ,
եւ ողջախնդքն միշտ մաքրեալ.
Ձխոնարհութեան զարդ ըզգեցեալ,
Ձպարկեշտութեանն նախապատուեալ »:

Ոչ միայն անթիւ ողորմութեան գործքեր լուիկ և անցողաբար ըրաւ Ջապէլ, այլ և երկարատև ծնողաց յիշատակներ թողուց. որոց գլխաւորը կարծեմ՛ք զյիշեալն՝ի գրոց Հիւանդանոցն Սասոյ, զոր կանգնեց յամին 1241. և իր ծերանոցին զաւակը. ներէն աւելի, եթէ կրնամ ըսել, գթով կու խնամէր զհիւանդս. ոչ միայն առատ ուռճկաւ՝ զոր իր զարդերէն և անցաւոր զբօսանքներէն կտրելով՝ կապեր էր անոնց; այլ և անձամբ այցելութեամբ և ձեռօք դարմանելով, ըստ Խոսրովանուշայ բարեպաշտ դշխոյն Բագրատունեաց: Այս բանին ապացոյց մեծագոյն և արտակից վկայ է ինքնին իր փեսային Հեթում Թագաւոր, որ իր մեկ պարգևագրին մէջ գրեթէ Ջապելի մահուան տարին գրած, այսպէս կ՛ըսէ. « Եւ կոչակից Ջապել » Թագուհի, որ տառապանօք հոգոյ կրօնաւորա » և հիւանդս »: Անշուշտ բոլոր Ռուբինեանց տէրութեան առեն անկինջ մնացեր էր այս Ջապելի գթութեան յիշատակարանն, եթէ և Սիս քաղաքն շատ հեղ թշնամեաց և կրակի մատնուեցաւ. իսկ յետ բոլորովին տէրութեան վերցուելուն և քաղաքին աւերման, և ամենայն արքունի յիշատակաց մոռացութեան, Ջապելի չքնաղ սըրտին յիշատակին այս մեկ փոքրիկ յայտարար նըշանն՝ յանկարծ յետ 600 բազմադէպ տարինե. րուն՝ մեր օրերս յերևան եկաւ, (1833) Սոյ հի-

մակուան կաթուղիկոսարանէն մղեն մը հեռու արևելեան կողմէն, հոդու տակ ծնացած սրբատաշ վէմ մը. զոր Թէպէտ փճացուց մոլեռանդն նախանձ այլակրօնից, բայց բարեբաղդաբար վերայի արձանագիրն ինաց օրինակուած. և էր այսպիսի.

ԿԱՏԱՐԵՑԱԻ
ՑԱՐՄԱՐՈՒՄՆ ՇԻՆՈՒԱԾՈՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՍ
ՔՐԻՍՏՈՍԱՍՏԻՐ ԹԱԳՈՒՀԻՈՑ ՋԱՊԵԼԻ
Ի ԹՎԻՆ ՀԱՑՈՑ ՈՂ.

Յուսալի է որ ազգերնուս երախտագէտ պատկառանքն և սէրն առ յեսին պերճահռչակ մայրն և տիկին իւրեանց՝ Ջապել, ջուշանայ անոր ուրիշ յիշատակ այլ յերևան հանել, 'ի փառս անցելոցն և 'ի վախճառ ծնացելոցս:

Բ

Բայց Ջապելի աւելէն մեծ և գովելի ընորհքն՝ էր սրբասէր և երկիւղած կենցաղավարուԹիւնն էր, զոր այնպէս զմայլելով յիշեն աւետեան պատմագիրն և մեծանուն Ղազար Փարպեցի, 'ի խնամս մայրական և տիկնական, (որոց համար խնացաւ իր կոչումը, և Թէ անկէ հրաժարելն՝ իր աչխարհքին մեծամեծ չփոԹուԹեանց և կռուոց պատճառ պիտի ըլլար) 'ի խնամս ալքատաց և կարօտելոց, և 'ի

*ինամս ներքին մարդոյն, իր հոգւոյն. զոր և յաւ-
քսունից և՛ ի լծակցութեան առն Թագաւորի՝ իւ-
րև՛ ի կուսաստանի ամօթխածութեամբ և համե-
ստութեամբ զարդարէր. և բազմաբոլորով զաս-
կացն՝ միանգամայն գորովի մայր և արթուն դաս-
տիարակ էր: Եւ այնքան պարտուց և պատշա-
ճից մէջ՝ երբ ժինակ ըլլար յաղքսունիս (շատ հեղ
Հեթմոյ պատերազմի կամ ուրիշ գործոց համար
հեռանալուն), յառաջնութեան պալատանն
Ճգնէր պահօք և աղօթիւք: Բայց իր աստուածածաւէր
և մարդասէր սրտին միշտ բաւական չէր ըլլալ ա-
ռանձնակեաց սրբութիւնն. շատ հեղ պալատէն
դուրս կ՛ելնէր՝ թէ իբրև յայտնի Թագուհի և թէ
իբրև ծածկեալ անծանօթ անձ մը, երթալ վա-
զել՝ ուր որ բարեպաշտութիւն և ողորմածու-
թիւն կրնային տանիլ: Կ՛երթար երբեմն իր սի-
րելի զբօսարանը, իր դաստակերտ Թէաւրոնը՝
լսելու սրտառուչ ձայները. կ՛երթար իր Հէթո-
պանոցը և Սղափպանոցը. կամ ուրիշ հիւանդանոց-
ներ և առանձին տուներ, ուր այլ որ լսէր թէ
հիւանդ մը կամ երեսէ ընկած մը կայ, կամ
կարօտ մը թէ մարմնաւոր թէ հոգևոր զարման-
ներու:...*

*Կու յիշեմ զմեծ և գիւցազուհւոյ կայսրն Օգոս-
տոս, որ խմաստութեան այլ պատուոյ՝ շատ հեղ
կու հրաւիրէր իր առանձին սեղանին կցորդ՝ իր
ժամանակին երկու մեծ բանաստեղծքը, Վիրգի-
լիոս և Ովիտիոս. ատոնց մէկին, կ՛ըսեն, ընչա-
ռութեան նեղութիւն ունենալով՝ սակս հեկե-
կալու ձայն կու հաներ. մէկայլն՝ աչքը Ճպուռա՝
սակս արտասուաց կաթէր. Օգոստոս կու ծիծա-
ղէր ու կ՛ըսէր. «Նստեալ կամ ես ընդ մէջ ար-
» տասուաց և հառաչանաց»: — Վերջն՛ր կը-
լսեմք, ով սիեզերակալ սեբաստոս Օգոստոս,
որոյ մեծութեանդ արձաններն և կամարներն՝ ի*

Տիբերիան մինչև Անգարիա [1] դեռ կանգուն են, որ Անկիւրիոյ յիշատակարանիդ մէջ յիշես Հայոց Թագաւոր մը դնելդ այլ. աւա, (եթէ կրնան աւելնել այն աչքերն՝ որ 14 տարի մեկտեղ ապրելով՝ չտեսան զերկինից և զերկրի լոյն՝ Քրիստոս) աւա զՀայոց Թագուհիա այս, որ Քրիստոսի խաչին նըշանաւ Թագը կապեր և բարձրացուցեր է. աւա ով մեծդ և ամենամեծդ յերկրի, աւա այս փոքրիկ դչխոյս Կիւրիկիոյ, ինչուիսի՛ արտասուաց և հառաչանաց մէջ նստեալ կայ, և կու սիրէ նըստիլ ընդ երկար. լսեցի՛ր դու այլ այսպիսի հեկեկանք մը. սրբեցի՛ր այսպիսի արտասուն՛ք մը. նըստար երբէք ընդ մէջ հեծութեան հիւանդաց և արտասուաց աղքատաց: Տես.— մենք տեսանե՛նք հոս զՉապել. ինչպէս ոմանց առատապէս տակ, ըզգեստ և դեղ բաշխէ. ոմանց անձամբ այլ ծառայէ, սփոփէ, մխիթարէ. — ինչպէս, շատերը՝ աւելի առատ ու քաղցր սրտով և բերնով կու յորդորէ հոգինին հոգալու. հին եկեղեցւոյ զգաստ այրեաց և սարկաւագուհեաց նման՝ կու տովլեցնէ ոգիտաց զկանոնս և հրամանս հաւատոց. կու սիրեցընէ անհոգներու՝ եկեղեցւոյ տուրբ խորհուրդները. կու յիշեցընէ երեսց անցեալ վարքը. ի զըզջումն կու շարժէ խիստ կամ ալոտ սրտերը. խոստովանել կու տայ մեղքերնին և տուրբ հաղորդութեամբ զօրացընել հոգինին. և այսպէս զոմանս սարսռմով բժշկէ, զոմանս այլ հոգւով յաւիտեան հանգչեցընէ: Իսկ այնպիսի տեղուանք՝ ուր որ պատշաճողութիւնն կամ տաճարն չեն Թողուր երեսն երթալ, իր հաւատարմաց մէկը կու ղրկէ՝ նոյն իսկ ինքզինք և հոգը մատուցանելու: Չապէլ այս բաներուս մէջ կու ճանչնայ զինքն՝ Թագուհի և մայր ազգի:

[1] Չէքարիա-սու, Անկիւրիոյ քովէն անցնող գետն:

Երբեմն այլ էր որոյն վերաթռուչք կրակէն վառուած ու վարուած՝ կ'ելլէր գալուկ հաւատարի մը պէս, գլուխը քօղով ծածկած ու՝ է պեսին խոնարհած, հոգւով քան թէ աչքով առնելով զՃամբան. կու փութար կ'երթար ուխտաւորէն և վանորէից դրանց քով աղօթքի կեցուլու. մանաւանդ ուր որ լսէր թէ տուրբ անձ մը կայ, ոչ միայն հոն անոր մօտ փափաքէր հասնիլ, այլ և կ'ուզէր նոյն Ճամբէն երթալ, նոյն հոլն ու քարեզ կոխել՝ զոր արբազանն կոխած էր: Քանի՛ լուռ և անշփոթ ժամեր, քանի՛ մութ ու ցուրտ գիշերներ, լուանկայ կամ անլուսին երկինք՝ առանց մեր ջերմեռանդն ուխտաւորը՝ անծանօթ և անմարզաձայն Ճամբուն վրայ. ոչ ձմրան ձիւն ու բուք, ոչ տօրտական ցուրտ պախրցին, ոչ հոլմակոծ ծառերուն և ջրերուն մրմունջն, գազանաց մռնչիլ ու կանչելն, և ոչ յանկարծ դարանողի մը և իր առաջին պայլը սպանող աւազակին պատահելու վախն, կրնան արգիլել զարբազները Թագուհին: Իբրև այն հրաշալի հարան ալեզարական փեսային խանդակաթ՝ կու լսէր անոր ծածուկ ձայնը. «Ե՛կ 'ի Լիբանանէ ('ի քո պալատանէ) հարան. եկ այսր 'ի Լիբանանէ. եկեսցես և անցցես 'ի գլխոյ հաւատոյ, 'ի կատարէ Սանիրայ և Հերմոնի, 'ի մայրեաց առիւծուց և 'ի լերանց ընծուց». և կ'անցնէր կ'երթար իբրև զաղաւնին միակ կատարեալ և գեղեցիկ՝ կենալու արբազութեան տաճարաց դրանդեաց նեղքև. անձայն լուկ աղօթքով՝ պատանալու 'ի սէր հոգւոյն տիրոջը, և պատպղնելու զնա իր մաքուր սիրոյն: Երբեմն այլ Ճամբուն վրայ կանգ առնելով, հաշիւ վանաց և եկեղեցեաց դրանց մօտեցած՝ կ'ընկներ 'ի ծունկս, կու պագնէր արբազանից կոխած գետինը, կու Թրջէր մարգարտահամ արտասուօքը, կու քաղր դալար դէմքերը այն կրկին սըր-

բեաալ հոգին ու կաւոյն վրայ. անով կու չիէր շպարէր Թագուհին Հայոց իր պայծառ հոգւոյն դրախ հայեցլին: Ա՛յս էին սիրելագոյն զարդարանք և գեղեցանք և զբօսանք Զապելի:

Ա՛յսպիսի դէմք, այսպիսի սիրտ, այսպիսի հոգի՝ ի՞նչ կերպով կրնար երևիլ աչխարհային և Թագաւորական հանդիսից մէջ: — Ինչպէս որ կու վայլէր ստրը և զգաստ դշխոյն մը. որ իր ամեն պարտքը և պաշտաձը գիտեելով՝ էր պահեր և՝ ի ծանից և յընկերուհեանց, անոնց նոր վայելչութենին մ՝աւելցընելով իր չափաւորութեամբը և պարկեշտութեամբը. և ինչպէս արքունի ծիրանեաց վերարկուք չէին կրնար խափանել իրենց ներքևէն հագած խոշոր և խայթոտ զգեստը, և ոչ այլ չնորհագեղ Թափանցկիկ ժալման՝ հոգւոյն զըւարթութեան ձառագայթը. աս էր վինքը աւելի պատկառելի ընծայողը՝ քան իր ծալկած հասանն և ծանրագին Թագն: Ոչ ոք երբէք լսեց այն շրթունքներէն աւելորդ խօսք կամ կատակ մը, և ոչ ձայնով ծիծաղ մը վրնաւ բերնէն. ծանրիկ լրջութենն՝ բնական ձև և գոյն կ՝երևէին իր կերպարանացը:

## Ժ

Բաներուս բարեբաղդաբար վկայ ունիմք, Հայկակ, ժամանակակից յիշատակագիրներ, բայց դժբաղդաբար՝ այնչափիկ միայն. ոբր էր Թէ աւելի լրլային կամ մեզի հասնէին այսպիսի յիշատակք, և այլ աւելի բաներ պատմած լրլային Զապելի վրայ. գուցէ մեր միչէն այլ էլնէր Մանդակունեաց մը մանրամասնաբար գրելու Հայոց արքակենցաղ դշխոյին վարքը, որպէս նա Ոսկեբերացի դշխոյին և Զապելին (Եղիսաբեթի):... Այս

յիշատակ՝ որ յանկարծ բերնէս ելաւ, կու սակ-
պէ զիս, Հայկակ, խորհրդածութենէդ՝ այլ ընե-
լու և ցուցընելու զարմանալի և վերնաիւնամ հան-
դիպակցութիւնները այս երկու թագուհեաց մէջ,
որ թերևս դեռ դիտուած չեն և կ՚արժեն մատղու-
թեան: — Երկուքն այլ համանուանք. երկուքն
այլ ժամանակակից, դչխոյն Կիւլհկիոյ և դչխոյն
Թուրինկիոյ. ասկա՝ իբրև տան տարի յառաջ
ծնած քան զմերն, 20 տարի այլ անկէ առաջ քո-
լորեց կեանքը. նա երկու երկվեցեակ տարի ապ-
րեցաւ, մերա՝ երեք: Երկուքն այլ ջորս տարեկան
էին՝ երբ իրենց վիճակին տիրուհի սահմանուե-
ցան. երկուքն այլ նոյն մէկ տարուան մէջ (1221-2)
պսակուեցան. Ջապէլ ընդ Ֆիլիպի, Ելիսաբեթ
ընդ Լուդվիկ Հերմանոյ գաւառատէրն (Լանտ-
կրաւվի): Բայց մեծապոյն և հրաշախառն հանդի-
պուածն այս է, որ առեն մը՝ քանի մը տարի
սահմանուած էր՝ որ այս երկու լեռնաբնակ հաւ-
քաններս իրարու քոյր ըլլային. Թուրինկիա և
Կիւլհկիա սիրալի կերպով զիրար ողջունեցին: Ե-
լիսաբեթ՝ դուստր է այն Անդրէասի և քոյր այն
Անդրէասի՝ որոց մէկն Ջապէլի այր, միւսն ակեար-
այր պիտի ըլլային. և եթէ անունք չեղան, եթէ
Ջապէլ չեղաւ կոչակից կրտեր Անդրէի, և եթէ
երկու սրբաձեմ աղաւնիքն չեղան թևակից մէկ
թառի, մէկ սեղանի, մէկ խորանի քով, եթէ Ան-
կարաց սուրբ օրիորդն երկուութեամբ հատակին
չգրկեց ու գգուեց զօրիորդն Հայոց, և ոչ սա բազ-
կիկ բոլորելով անոր նազելի վզին կախուեցաւ.
սակայն երկնաւոր բաղդն գուգեց գրեց ըրաւ զա-
նոնք քոյրակից, գործակից, հոգեկից: Ինչ մաս-
նաւոր առաքինութիւն և գործ տեսանք Ջապէլի
վրայ, զնոյն պատմեն և Ելիսաբեթի վրայ. եր-
կուքն այլ նոյնպէս սրբասէր, աշխարհատեաց,
պահեցող, աղօթող, աղքատասէր, հիւանդա-

պահ: Չապել վանաց և եկեղեցեաց գրանց քով կ'ապրէր, Եղնաբեթ երբ իր պալատին մատրան դուռը գոց գտնէր ըլլար՝ դուրսը ծունկ դրած կ'ապրէր. — Չապել իր մայրաքաղաքին՝ Սաղմէջ հիւանդացաւ, որ ուզած աեն էր. Թայ գարմանէ ցաւագարնելը. Եղնաբեթ իր Մարտուրկի ապարանից սաորոտը չինեց հիւանդանոց մը, նոյնպէս ինամք տանելու: Երկուքին սոնուանքն այլ տեսնելով իրենց ընկերին բարեպաշտութիւնը՝ Թոդուցին համարձակ և գործակից այլ եղան անոնց առաքինի գործոց:—Երկուքն այլ գրեթէ նոյն մէկ տարուան միջոց (1225-6) իրենց երկրաւոր մեծ կորուան ըրին, Չապել ըզՖիլիպ, Եղնաբէթ զՀերման. սա 20 տարուան երեք զաւակօք այրի մնացած՝ իր աներձագին գրգռութեամբը՝ իբրև աէրութեան գանձը վատնող (առ աղքատս), հալածեցաւ յարքունեաց, և իբրև անաշխարհիկ պանդուխտ վարած մնաց մեծ չարաչարութեամբ և աւելի մեծ ու սրտառուչ համբերութեամբ. մինչև հալածողն անգամ զգաստանալով՝ նորէն դարձուց զսիրելին յարքունիս. բայց նա իր զաւակաց վիճակին ապահովացնելէն եաև՝ քաշուեցաւ պալատէն դուրս առանձին տնակի մը մէջ, և միանձնական զգեստ հագնելով (Ս. Փրանկիսկոսի երրորդական կարգին), քիչ աաեէն մեծ Հգնութեամբ և արբուեթեամբ կնքեց կեանքը (19 Նոյեմբ. 1231), և քանի մը տարիէն (1235) գասեցաւ և յեկեղեցւոյ՝ի կարգս սրբոց: Ա յս վերաց և հալածանաց՝ կերպով մը կրնայ համեմատուիլ նոյն աաեն Չապելի ցաւը՝ Ֆիլիպի սպանման վրայ, առանձնանալն՝ի Մելևկիա, և բոնի բերուելն՝ի Սիս յընկերուեան Հեթմոյ: Եւ եթէ աա այլ Հերմանայ պէս վայելուչ ըլլար՝անտարակոյս է որ Չապել այլ Եղնաբեթի միանձնական կեանքն կ'ընտրէր, ո-

---

*բուն արդէն այնչափ փափաքեր էր յառաջ քան զպատակին ընդ Հեթմոյ : — Նախախնամութիւնն այսչափ սահմանեց երկրի վրայ նմանակցութիւն այս երկու Թագուհեաց, որոց անշուշտ աւելի մեծ է նմանութիւնն յերկինս. ուր՝ Թէպէտ քանի մը տարի ուշ և աւելի ապրելով, բայց դեռ շուտ և անկատար կենօք՝ Թուա և Ջապէլ առ գուգակից անուանն, բանդին և հոգւոյն. Թողլով անմխիթար յերկրի իր երկրաւոր գուգակից և Թագակիցը, անկէց ունեցած զաւակները, (որոնց համանք դեռ հազիւ իրենց մօր կաԹը և ախոյն մեղրը Ճաշակեր էին) և բոլոր գինքը պատուող և պաշտող աշխարհը:*

## ԺԱ

*Արդեօք դիպուածական ցաւ մը, Թէ իր փափուկ սրտին հին հարուածէն բուսած վէրքն, Թէ մանաւանդ սաստիկ փափագն առ լաւագոյն երանելոյն կեանս, իր արդէն գեղեցիկ կեանքը փուԹացուցին 'ի գեղեցկագոյն վախճան, առ 'ի փոխել յամենագեղեցիկ կենդանութիւն: — Ո՛հ. քանի՛ քաղցր և անոյշ էր այն հոգւոյ հրաւէրքն՝ որ եկաւ իրեն ('ի 22 յունուարի 1252ի). — ձայն ցանկալի երկնաւոր և անմահ փեսային, որուն հարանցեալ է ամենայն մաքուր և մաքրասէր հոգի. — ձայն զի ինչո՞ է հոգին՝ եԹէ ոչ առ միանալ իր առեղծողին հետ. — ձայն Քրիստոսի Աստուծոյ, զոր ոչ միայն հոգւոյն անշուշտ անյօդ ականջին իմացաւ Ջապէլ, այլ և զգալի կերպով մը լսելով՝ անպատմելի ուրախութեամբ իմացուց իրեն քանի եկող և երբև հիւանդի նայողը ներսն, Թէ ահա լսեմ ձայն՝ որ կանչէ զիս. Ես՛ ողջանի եմ, Ես՛ կոպտելու եմ, Ես՛ սիրելի եմ. և այս*

*խօսքս էլրև վերջին բարով ձեռք ըսելով մերձակայիցն, հոգին՝ հոգւոյն փափագուլաց հետ խառնեցաւ, Թողլով յերկրի քմծիծաղ ու պայծառ՝ այլ անշարժ մարմին մը, 'ի սուգ և 'ի սէր հասարակաց։։։*

« Իակ Թագուհին զկեանս աւանդեալ
Ո՛ւ 'ի կէտ կոչմանըն ժամանեալ.
Զայն 'ի յերկինից ըզնա կոչեալ,
Զոր իւր ունկամբն յայտնի լըսեալ,
Ե՛կ ալաւնի՛ իմ, ասացեալ,
Ե՛կ սիրելի իմ կատարեալ։
Իակ նա յորժամ զայս ձայն լըսեալ
Զըսարթափին սրտիւ բերկրեալ,
Տեսլեամբ կերպին զըսարձացեալ
Ե՛ւ 'ի հոգին իւր ցընծացեալ,
Մերձակայիցըն զայս ազդեալ,
Ե՛ւ ընդ պատմելն՝ իակին փոխեալ.
Զհոգին 'ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զխեցին ունայն՝ յերկրի Թողեալ։
Զոր քահանայքն ակռամբ առեալ
Զնա օրհնութեան հողոյ արեալ։
Անդ Թագուհին յերկրէ ելեալ
Ե՛ւ առ Քրիստոս վերափոխեալ»։

Ա.յսպիսեայ բարեաց և բարեբարի, արքայէից և սիրելեաց Թագուհւոյ, հարսին և մօր մահ՝ որչափ ցաւալի և սգալի եղած է կինակցին, զաւակացն, մերձաւորաց, պաշտօնէից և բոլոր աշխարհին, ազատաց և ռամկաց, տղքատաց և հիւանդաց, կրօնաւորաց և զինաւորաց, քեզի դիւրագոյն է հասկանալ, ինծի աւելորդ ըսելն, Հայկակ. աւելորդ սեպեմ և խառնել զքեզ անոր երկարաշար յուշարկաւորաց մէջ, յոր կրնամք եւս ածել զբովանդակ Կիւլնկիա և զմեռն Կիպրոսի և Անտիոքայ, եկեղեցական, քաղաքական

և զինուորական խմբերով. որոց մէջ էր այլ կըր-
նար գոնէ ապրած ազատութեամբ մնանելիշ ըս-
նել՝ երկու զանազան ձևով բարձրապատիւ ա-
լևոր գլուխներ, երկու նահապետքն Հայոց, եր-
կու անուանակիցքն, Կոստանդին կաթուղիկոս և
Կոստանդին արքահայր, ինամակալք և դաստիա-
րակք Թագուհւոյն և հայրաբար սիրողք. որք
իբրև երկու մեծամեծ մայրիք մրրկաշարժ ան-
տառի մը՝ իրենց դիմաց իրենցմէ շատ գալար և
ծալկաբողբոջ միչաբեկեալ ծառին վրայ ծուած՝
դողդոջուն ձիւղերով կ'օրօրին կ'երերան: Բայց
դարձնենք աչուընիս իրեն գիլ ու գալար բարակ
բարուհնաձիներէն, որոց անդրանիկին (Լևոն) դեռ
հազիւ 16 տարեկան է. դարձնենք մանաւանդ
այն փափուկ անկոյն նեցուկ ու նշդարիկ եղող
արքակալնոյ նման ապանծալի՝ բայց հիմակ քա-
կեալ մեռնացեալ և կորացեալ Թագաւորէն...
Հեթում՝ այն օրերն մեծ պատրաստութեան մէջ
էր, հարկաւորաբար երթալու առ Մանգու խա-
քանն Թաթարաց՝ յաշխարհ հեռի: Զապելի յան-
կարծ յանդարձ աշխարհ երթալն՝ այնքան իւր
և արժանաւոր սգով պատեց զայրնացեալ Թա-
գաւորն, որ երկու տարի չկարցաւ հեռանալեւու
սենեկէն, ապա թէ գնաց:

Հեթում՝ ոչ կենակից և Թագակից միայն էր
Զապելի, այլ և անարգել գործակից անոր սըր-
տին բարի բերմանց. և եթէ իր արքունի անհրա-
ժեշտ պարտքն և՝ ի մօրէ որբացեալ զաւակնե-
րուն հոգն՝ չպատուէրէր, թերևս աւելի շուտով
Թողուր ինքն այլ Թագը, և առանձնակեաց հո-
գեկեաց մ'ըլլար. ինչպէս որ երբեմն այլ վերջը,
յետ առելաւորելու իր գաւերքը՝ և Թագը Թող-
լու (յամին 1269) առ անդրանիկն Լևոն: Եւ առ
իր ցանկալի և ցաւալի մօրն անմոռաց յիշատակը
կերպով մը կենդանացընելու համար՝ իր երեք ե-

բեց գաւեղքն անուանեց Զապլուն, Զապէլ, Սիսիկ:

Զապէլ Թագուհւոյ մահացու նշխարքը անմահութեան մաղթանօք և անուշ յուշովն պատեցաւ ու կնքեցաւ՝ հանգուցին 'ի տապանատունն Ռուբինեան պայազատաց, 'ի վանքն Դրազարկ, ուր նախ հանգչեր էր աեղւոյն շինողն Թորոս Ա, Թոռն Ա և մեծ Ռուբինի. և երկն եաքն երեն ցեղին շատ պարոնայք և պարոնուհիք. և ուր յետ 19 տարւոյ (1270) հանգուցին Թագուհւոյն քով իր Թագակից և կողակիցն այլ, Թէ իբրև արքայ Հեթում և Թէ իբրև Եղբայր—Մակար. որ և Զապելի պէս բազդ ունեցաւ օտար տէրք Թագաւորի մը հանդիսակից ըլլալու:

Իրենց երախտապէտ և սիրանուէր որդիքն և պայազատք՝ արքունի արբապատում Յայտաւոտրացք մէջ նշանակեցին Հեթմոյ հանգստեան օրը (28 հոկտեմբերի), և այս օրս (22 յունուարի) Զապելի պաշտելի յիշատակը. զոր 'ի կեանս և 'ի մահուն՝ Հանաչողք և մերձագոյք՝ աւրէ[1] անուանէին. ինչպէս որ Հեթումեանց[2] յիշատակն այլ՝ ոչ միայն մեր այլ և լատին միանձանց՝ հին ժամանակաց ոմանց մէջ անցած է երանելեաց կոչմամբ: Երանի էր ապգիս այլ, եթէ՝ ինչպէս շատ արժանաւորաց յիշատակն անմահացուցեր է, զոմանցն այլ նորէն արթընցրներ: Իսկ քեզ, Հայկակ, անշուշտ ախորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց և մեր-

1 Այսպէս գովութեամբ անուանէ զնա և ժամանակակից ու բարեկամ Հեթմոյ՝ Աստրի պատմիչն Ապուլֆարաճ:

2 Թէ Հեթում Ա, Թէ իր Թոռն Հեթում Բ, և Թէ իր եղբօր որդին Հեթում Պատմիչ տէր Կոռիկոսոյ, իրեքն այլ կրօնաւորած են 'ի վանս Լատինաց՝ 'ի Հայս, 'ի Կիպրոս և 'ի Փրանկաստան. որոց վարքն քիչ մը կու ըլլան Լատին պատմագրաց պատմիչք:

Ձաւորաց միջի մատղաշ Զապէլայ ծանօթացը-
նէլ՝ իբրև իրեն նախընթաց օրինակ համեստու-
թեան և իմաստութեան ու պաշտպան մեր ազ-
գին վերջի պայազատութեան մէջ ամենէն անուա-
նի, պատուելի, սիրելի և արքենի եղած թագու-
հին [1] Զապէլ:

1 Ցետ Զապելի՝ նու նորա առաջին թագուհին Հայոց՝ կին գ Լևոնի՝ կէտան՝ որ է կիտ Աննա (Փիլիպա-Աննա) գուստր Լամբրոնի տիրոջն, իր ակեսրին բարեպաշտու-թեան ճամբան բռնեց, և աւելի բազմաթիւ զաւակաց մայր ըլլալէն ետև՝ կրօնաւորեալ մեռաւ (28 յուլիսի 1285), մեծ համբաւով արքական վարուց. սա կոչուեր և Թէոտանէ, այսինքն Թէոֆանիա: — Նմանպէս գովութեամբ յիշատակուին՝ իր քոյրն Մարէտա (3 դեկտ.) — իր երեք վերոյիշեալ Զապիլ անուն դստերքն. իր տալն Ֆէդ.— Դ կոստանդին թագաւորի մայրն Մարէտա տիկինն (27 յուլիս). — և վերջին թագուհին Հայոց Մարէտա, կին Զ Լևոնի, և իր գուստրն Փէնա. —նախ յիշուած Ռ Զապէլ՝ կինն Օշին թագաւորի (3 մայիս):

10249926

# 9

## ԳԵՐԵԴԱՐՁ Գ ԼԵՒՈՆԻ

*6 փետրուար — 1289*.*

*Վաւէնք Երեւոյեան խաղոյկը· զոլորինք Նայ-
րենի կրակարանին եղերքը, ՚ի Կիւլիկիա, յար-
քունիս Թագաւորին Հեթմոյ: Հեթում (այս ա-
նունը կրօտից մէջ ամենէն անուանի և սիրելի
անձն) Հեթում ա, յաջորդ մեծին Լեւոնի, ինք-
նին հրաւէր կու տայ, և քան զուարիչ տարինեը
աւելի արտորանօք, իր հաւատարիմ հպատա-
կացն և պարոնայցն· գալու ժողովելու բազմու-
թեամբ, և Արտաւածտայեանութեան մեծ ուռնը
կատարելու: Կու փութան իշխանք և պարոնայք՝
ապահովելու իրենց ամուր բերդերը և իջնել
լեռներէն, ելլել պարապատառ քաղաքներէն և
ժողովիլ ՚ի Մսիս... Եւ ինչո՞ւ ոչ ՚ի Սիս, յա-
րուն Թագաւորաց: — Մի հարցընէք: — Պար-
նայքն գալու և անցնելու առեն՝ կու նային մէկ
մը այն մայրաքաղաքին կողմը, և դեռ եգիպտա-
կան աև ծխոյն նշանը աչքերով, գլուխնին շարժե-*

* *Այս Թուականս և մահուան Լեւոնի. գերութիւնն ե-
րեսունի 1266 տարւոյ, գերեզմանն ՚ի 1268:*

10249926



լով՝ երեանին իաչակնքելով կու փոխեն ձամ֊
բանին. Թէ և շատ դժար կու գայ երեից յառա֊
ջելն, վանալով Թագաւորին տխրամած դէմքը
տեանել. սակայն մէկ մ'այլ երեից հրաւէրքի
Թուղթերուն վրայ նայելով, և տեանելով անոնց
արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ'առնուն, և
կու մտնեն'ի Մախ. որոշեալ օրը՝ նախ քան զառօնն
կու ներկայանան միաբան, բարևել և շնորհաւո֊
րել Թագաւորին գնոր տարին և զաւագ տօներըն:

Սիրով և պատուով կ'ընդունի գնոտա Թագա֊
ւորն. և փոխարէն ոսկեղիներ տալով՝ կու հրամմէ
որ նստին. և նախ ինքն կու բազմի ծանրուԹէ իր
գահը: Ո՛հ. ո՛րչափ այլափոխուԹիւն է Թագաւորին
դէմքն քան զանցեալ տարին: Տարի մը միայն կըր֊
նա՞ր այդքան աւելցընել հազիւ վաԹանամեայ գըլ֊
խոյն ալևքը, որ ոսկի սպակին տակէն կախուած՝
իր սպիտակ արքունի բեհեզեայ քղամդին կու
խառնուին. և երկընցած դէմքն այլ այն գլխուն
դեղին Թագին կու նմանցընեն: Ո՛րչափ տարբեր
էր այդ դէմքն այն ՀեԹում Թագաւորի ոսկեհա֊
տիկ վառվռուն կերպարանքէն, երբ այդպիսի հան֊
դիսական օր մը բարձր գահուն վրայ ելած տեեն,
Կիւլիկիոյ ամենէն ազնիւ ծնունդն՝ տիկնոց տի֊
կինն Զապէլ, դուստրն մեծին Լեւոնի, տոր սէր
կողմը կու բազմէր, այն իր կենակից և Թագակից
դշխոյն. գահուն բոլորը բռնէին իր հինգ վեհա֊
կերպ մեծատոհմիկ եղբարքն, Սմբատ գունդըս֊
տաբլն՝ հին Հայկազանց և Վարդանանց նախան֊
ձորդ՝ սպարապետան Հայոց, Լեւոն՝ մեծ մարաջախ֊
տըն, Լիկոս՝ գայլանուն կտրիճն, Բարսեղ՝ վեհ֊
մախայլ արքեպիսկոպոսն և առաջնորդ Դրազար֊
կու, և Յովհաննէս՝ երիտասարդ արքեպիսկոպոսն
Մամեստիոյ և առաջնորդ Սարքակաղնոյ. գահուն
տոտրտաը Սոլոմոնի տուտ առիւծներուն տեղ՝ եր֊
կու եռանդուն կրակոտ կորիւնք կենդային՝ Լեւոն և

Թոլոս Թագաւորդիք. և իբրև ամենուն հովանի՝ Թագաւորին ձախ կողմը նստէր փառօք իր ջոջգլուխ ազգայոյսերն՝ Մոզոն Կոռանդին, աբրահամեան ծերուներն[1]:

Այդ չիշեալ մեծափայլ և մեծազօր ազգուհիներ ամենքն՝ այսօր խորտակած կ'երևին ժամանակի օրէնքէն. միայն ամենէն կրտսեր ազգայ-եղբայրն Յովհաննէս ազգեպիսկոպոս՝ մեզմէն բազմէր, մեկալ դին այլ ամենէն մեծն՝ ծերունազարդ ապարտաեան Սմբատ, ոսկեկոթ Թրին վրայ կրթնած, երբեմն երբեմն Թաւ Թաւ յուներուն տակէն երկու խոր կայծակներ պարզելով: Թագաւորին գլուխն այլ ծանրացեալ կ'երևէր գրեթէ Թէ կէս դար կրած Թագէն. 43 երկայն և բազմափորձ տարիներ պէսպէս գոհար քարերու պէս շարուած էին անոր վրան. ուրչափ զանազան աեղուանք, ուրչափ զանազան անձանց մէջ կանգներ էր Հեթում այն գլուխը. ուրքան երկայն և տալուր ճամբաներ ընելով՝ Կիւլիկիոյ գահերէն մինչև Թաթարաստանի խորագոյն անապատները՝ ազգին և տանը համար քրտնելով, կ'իմանայր հիմա պահլն ծանրութիւնը: Ես Թերևս անկէ եաև փափագելի էր իրեն հանդչեցընել այն յոգնած գլուխը, ըլլար նաև սև քարի մը վրայ:... Բայց արտին վրայ այլ կայ ծանրութիւն մը, և շատ մեծ ծանրութիւն. ինչուան որ զայն չթեթևցընէ, իրեն համար մահն անգամ անհանգիստ է:...

Սանք մեր մտածութիւններն չեն. այլ այն բազմախուռն պարոններուն՝ որք բազմեր են Թագաւորին դիմաց: Իսկ Հեթում իբրև Թեթև քնէ մը Թօթուելով գլուխը, և ծածուկ կրակով մը վառելով աչուըներըն՝ կու գարձընէ հոն եղող իշխանաց վրայ, և կ'ուզէ կու հրամէ աեղեկանալ

[1] Այսպէս կ'անուանէ զնա իր որդին Յովհաննէս:

ապատաւորաց՝ որ պակասներն այլ կանչեն և նըշաւեցընեն. իսկ ապատաւորք կարդէն պակաս չգըտնելով՝ կ'իմացընեն որ ամենքն այլ հոն են: Թագաւորն նորէն աչք դարձընելով՝ կու տեսանէ, թէ ոչ շատ, այլ մեծ պակաս. կու հրամմէ կու սակսպէ որ զանունք այլ կանչեն: Ապատաւորք չփոթած կու նային կու համրեն, պակաս չեն գտներ, և վախով մօտենալով կ'ըսեն, Սուրբ Թագաւոր, ամենքն հոս են: Թագաւորն նեղանայ. ապատաւորք իրար կ'անցնին, իշխանաց կու գառնան. ասոնք այլ կ'ապահովցնեն զԹագաւորը, Թէ Սուրբ Թագաւոր, ամենքն այլ ոտից հրաւէրք և պատուէր խաւրեցիք, հոս են, պակաս չկայ պարոններէս: Ան տեսն Թագաւորն անգամ մ'այլ սրափայլ աչքերը չորս դին դարձընելով, և բարկացեալ այլ մարմրած և հեծկլտած ձայնով կանչէ. Եթէ ամենքն հոս են, ո՞ւր են հապա պարոնաց պատրոնքն, Լևոն և Թորո...:

Լևոն և Թորո. երկու կրակէ նետերու պէս Թոան այս անուանքս Թագաւոր հօր մը բերնէն, և չմնաց ողջ սիրտ մը. իշխան, պարոն, եպիսկոպոս, ձիաւոր, սպասաւոր, ամենքն վիրաւորուն հառաչանք մը փրցնելով կու սկսին լալ վայել, երկինք երկիր նայիլ. բոլոր արքունական տեսանն նոր մեռած անդրանիկ զաւկի մը սգաւեներ դարձած. Թագաւորն ծածկեց հայրական դէմքն իր սպիտակ բեհեզին տակ. և մէկն չէր համարձակեր մօտենալ, բան մը ըսել, մխիթարանք մը տալ. պարոնաց գլուխն՝ ի գետին կորացեալ, վարդապետաց և եպիսկոպոսաց շրթունքն դողով համրացեալ, կ'ուզէին որ եղածն երազ ելլար. և Թէ չէր կարելի անկէ հեռանալու՝ գոնէ անզգայ ըլլալու: — Բայց ով կրնայ անզգայ ըլլալ, երբ ձիաւորաց պարծանքն՝ զուարթուն Թորոս՝ դեռ իր յորեքամեայ գերեզմանին մէջ սև սև վէրքերուն

նշաններով ահեղ դիւցազին նման պատկած կ'ե-
րևէր դիմացին... և երբ լուսադէմ Թագաժա-
ռանգն Լևոն՝ բարբառոս Պկպարս սուրբտանին սև
բերդին մէջ շլթայակապ տանջուէր: Անվախ
Սմբատան անդամ, հօրեղբայր սիրուն և կարիճ կո-
րեանցն, ձեռքը Թրին, Թևն 'ի գահ Թագաւորին
կռնթընած՝ արտասուաթաթախ աչքերը վերուցած
առն՝ կարծուէր Թէ մէկէն պիտի ցատքէ և ար-
քունի նիզակներէն մէկը կորզած՝ վազէ երթայ
Մարայ սուլտանին գահը կոխէ, և իր եղբօրորդին՝
պարոն Լևոնը, յափշտակէ բերէ հօրը գիրկը. խակ
երբ գլուխը Թօթուեըլով նորէն դէպ 'ի կուրծքը
կ'իջեցընէր, կարծուէր Թէ աշխարհք անցեր է
Հայոց առն համան. և ամենքն այլ գլխակոր մը-
նային:... Թանձր սուգ մը պատեր էր Հեթմոյ
արքունիքը. արևելք և արևմուտք, Թաթար
զանէն և արքազան Պապէն եկած մխիթարու-
Թեան գրերն անգամ՝ էէին փարատած զայն:...

Ի՞նչպէս եկաւ այն սև սուգն, ինչպէս եղաւ
այս չար գիպուածն: — Գիտես Հայկակ, որ կիս-
լիկիա Թէ և ամուր երկիր, բայց այլազգի տէրու-
Թիւններու դրացի էր, որք կ'ուզէին յափշտա-
կել այն պատուական աշխարհը: Թագաւորք Հա-
յոց երբեմն բարեկամուԹեամբ, երբեմն զէնքով
կուզգուշանային անոնցմէ. որոց զօրաւորագոյնն՝
Իկոնիոյ սուլտանն, շատ հեղ Լևոնի և Հեթմոյ
հետ կռուեր էր, երբեմն մէկին երբեմն մէկայլն
յաղԹելով. բոլորովին ապահովուԹեան համար՝
Հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ ղրկեց առ
ղանն Թաթարաց, յետոյ ինքնին գնաց առ Ապա-
ղա ղան, և երեք չորս տարի ուշացաւ յօտարու-
Թեան. մեծազօր և ահարկու Հէլակիւ ղանէն
սիրալիրութեամբ նիզակակից ըլլալ անոր, Սրաբա-
ցւոց և Թուրքաց դէմ շատ պատերազմներ ընել,
և Բաղդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Միջագե-

տաց, Ասորեստանի, Հայոց և Ասորւոց իշխանները նուաճել. որով իր սահմաններն այլ ազատ և հանգիստ մնացին շատ տարի. ուրիշ գործառոր Թշնամի չկար, բայց միայն Մարայ տուլդանն, որ հեռուէն կու սպառնար. իսկ Հեթում մէկ կողմեն երկիրը պարնանելով և բերդով ամրացուցեր, մեկայլ կողմեն Թաթարաց օգնութեան վրայ վստահացեր էր, և այլ աւելի իր խորագէտ հօրը խրատուց և եղբօրը քաջակռիւ բազկին վրայ: Բազդատ առնելու առեն Եգիպտոսի տուլդանին կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիֆային. ատոնցմէ երկուքն կրցան փախչիլ. մէկն էր Ֆռնտուխտար [1] Պէյպարս, չափաւոր տարիքը առած, մեկ այլն երիտասարդ մը Սօնգօր էլ-Աշքար (շէկ կամ կարմիր բազայ) անուամբ, որ իրեն պէս կարիճ վազուկ ձի մը ուներ. և տեսնելով ընկերին Թէ հասակը Թէ գէշ ձին՝ վախցաւ Թէ գերի ընկնի ապանուի. ատիկեց որ իր ձիուն վրայ հեծնի և փախչի: Թէ որ ես գերի ընկնիմ, ի՛նչսէր, տալայուԹեանս խնայելով՝ գիս չեն սպաններ. քու պարտքդ ըլլայ ազատել գիս: Եւ նման այնպէս եղաւ. կարմիր բազային բռնուելեցաւ, Պէյպարս պրծաւ և հասաւ յԵգիպտոս. յորդորեց անոր Ֆուդդուզ տուլդանը՝ Թաթարաց դէմ պատերազմ բանալու. և պատերազմին մէջ այլ շատ քաջուԹիւն ըրաւ, անոր համար վարձք ուզեց Հալէպի կուսակալուԹիւնը. և երբ տուլդանն չըրաւ, Պէյպարս համախոհուԹեամբ քանի մը իշ-

1 Մեր պատմիչք անուանեն զսա Պանդուխտար կամ Փնդուխտար. որ բնիկ անուն չէ, այլ մականուն է, առած իր տիրոջմէն. և տէրն այլ իր եղած արքունեաց մէջ պաշտօն ունէր իշխանին գնտակ տալու խաղի առեն. այս պաշտօնէին կ'ըսէին Ֆունտուխտար: Թերևս այս անուան համար Լևոնի գերուԹեան երգիչն, որ վերջը պիտի յիշենք, գնտակի խաղալը յիշէ:

10249926



*խօսքս իբրև վերջին բարով ձեռք լսեալով մերձա-
կայեցին, հոգին՝ հոգւոյն փափագոլաց հետ խառ-
նուեցաւ, Թողլով յերկրի քմծիծաղ ու պայ-
ծառ՝ այլ անշարժ մարմին մը, 'ի տուգ և 'ի սէր
հասարակաց։։։*

« Իսկ Թագուհին զկեանս աւանդեալ
Ու 'ի կէտ կոչմանըն ժամանեալ.
Զայն 'ի յերկինից ըզնա կոչեալ,
Զոր իւր ունկամըն յայտնի լսեալ,
Ե՛կ ալաւնի՛ իմ, ասացեալ,
Ե՛կ սիրելի իմ կատարեալ։
Իսկ նա յորժամ զայս ձայն լսեալ
Զբաղթագին սրտիւ բերկրեալ,
Տեսլեամբ կերպին զբարձացեալ
Ե՛ւ 'ի հոգին իւր ցընծացեալ,
Մերձակայիցըն զայս ազդեալ,
Ե՛ւ ընդ պատմելն՝ իսկոյն փոխեալ.
Զհոգին 'ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զխեցին ունայն՝ յերկրի Թողեալ։
Զոր քահանայքն ակռամբ առեալ
Զնա օրհնութեան հոլով արբեալ։
Անդ Թագուհին յերկրէ ելեալ
Ե՛ւ առ Քրիստոս վերափոխեալ»։

Ա.յսպիսեաց բարեաց և բարեպարի, արքայէից և սիրելւոյ Թագուհւոյ, հարսին և մօր մահ՝ որչափ ցաւալի և սգալի եղած է կենակցին, զաւակացն, մերձաւորաց, պաշտօնէից և բոլոր աշխարհին, ազատաց և ռամկաց, տղքատաց և հիւանդաց, կրօնաւորաց և զինաւորաց, քեզի գիւրագոյն է հասկանալ, ինծի աւելորդ ըսելն, Հայկակ. աւելորդ սեպեմ և խոռնել զքեզ անոր երկրաշարժ յուզմտկաւորաց մէջ, յոր կրնամք եւս ածել զբովանդակ Կիւլնկիա և զմասն Կապադովկիոյ և Ասորեստան, եկեղեցական, քաղաքական

և զինուորական խմբերով. որոց մէջ էր այլ կըրնար գոնէ ալտլած ալտակառանօք մատնանիշ ընել՝ երկու զանազան ձևով բարձրապատիւ ալևոր գլուխներ, երկու նահապետքն Հայոց, երկու անուանակից՝ Կոստանդին կաթուղիկոս և Կոստանդին արքահայր, խնամակալք և դաստիարակք Թագուհւոյն և հայրաբար սիրոյք. որք իբրև երկու մեծամեծ մայրիք մրրկաշարժ անտառի մը՝ լրենց դիմաց իրենցմէ շատ գալար և ծալկաբոլբոջ միչաբեկեալ ծառին վրայ ծռած՝ գողգոլան ձիւղերով կ'ողբին կ'երեան: Բայց գարձընենք աչուընիս լրեն գիլ ու գալար բարակ բարուանակներէն, որոց անդրանիկն (Լևոն) գեռ հազիւ 16 տարեկան է. գարձընենք մանաւանդ այն փափուկ անկոյն նեցուկ ու նշդարիկ եղող արքակալնոյ նման պանծալի՝ բայց հիմակ քակեալ վենացեալ և կորացեալ Թագաւորէն... Հեթում՝ այն օրերն մեծ պատրաստութեան մէջ էր, հարկաւորաբար երթալու առ Մանգու խանն Թաթարաց՝ յաչխարհ հեռի: Զապէլի յանկարծ յանգարձ աչխարհ երթալն՝ այնքան իւր և արժանաւոր սգով պատեց զայրնացեալ Թագաւորն, որ երկու տարի չկարցաւ հեռանալ սենեկէն, տպա թէ գնաց:

Հեթում՝ ոչ կենակից և Թագակից միայն էր Զապէլի, այլ և անարգել գործակից անոր սըրտին բարի բերմանց. և եթէ իր արքունի անհրաժեշտ պարտքն և՝ ի մօրէ որբացեալ զաւակներն հոգն՝ չպատուխրէր, Թերևս աւելի շուտով Թողուր կնքն այլ Թագը, և առանձնակեաց հոգեկաց մ'ըլլար. ինչպէս որ ըրաւ այլ վերջը, յետ տեղատուելու իր գաւերքը՝ և Թագը Թողլու (յամին 1269) առ անդրանիկն Լևոն: Եւ առ իր ցանկալի և ցաւալի մօրն անմոռաց յիշատակը կերպով մը կենդանացընելու համար՝ իր երեք ե-

բեց դասերքն անուանեց Ջաղըն, Ջապել, Սխալել:

Ջապել Թագուհւոյ մահացու նշխարքը անմահութեան մաղթանօք և անուշ յուշոյն պատեցաւ ու կնքեցաւ՝ հանգուցին 'ի տապանատունն Ռուբինեան պայազատաց, 'ի վանքն Դրազարկ, ուր նախ հանգչեր էր տեղւոյն չինողն Թորոս Ա, Թոռն Ա և մեծ Ռուբինի. և իրմէ ետքն իրեն ցեղէն շատ պարոնայք և պարոնուհիք. և ուր յետ 19 տարւոյ (1270) հանգուցին Թագուհւոյն քով իր Թագակից և կողակիցն այլ, Թէ իրեւ արքայ Հեթում և Թէ իբրև Եղբայր–Մակար. որ և Ջապելի պէս բազդ ունեցաւ օտար տուրք Թագաւորի մը հանդիպակից ըլլալու:

Իրենց երախտագէտ և սիրանուէր որդիքն և պայազատք՝ արքունի արբանդատուն Յայսմաւուրաց մէջ նշանակեցին Հեթմոյ հանգստեան օրը (28 հոկտեմբերի), և այս օրս (22 յունուարի) Ջապելի պաշտելի յիշատակը. զոր 'ի կեանս և 'ի մահուն՝ Ճանաչողք և մերձագոյք՝ սուրբ[1] անուանէին. ինչպէս որ Հեթումեանց[2] յիշատակն այլ՝ ոչ միայն մեր այլ և լատին միաձանց՝ հին ժամանակաց ամանց մէջ անցած է երանելեաց կոչմամբ: Երանի՛ էր ազգիս այլ, եթէ՝ ինչպէս շատ արժանաւորաց յիշատակն անմահացուցեր է, զոմանցն այլ նորէն արթընցներ: Իսկ քեզ, Հայկակ, անշուշտ ախորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց և մեր

1 Այսպէս գովութեամբ անուանէ զնա և ժամանակակից ու բարեկամ Հեթմոյ՝ Սարի պատմիչն Ասողկացի:

2 Թէ Հեթում Ա, Թէ իր Թոռն Հեթում Բ, և Թէ իր եղբօր որդին Հեթում Պատմիչ տէր Կոռիկոսոյ, իրենք այլ կրօնաւորած են 'ի վանս Լատինաց՝ 'ի Հայս, 'ի Կիպրոս և 'ի Փրանկաստան. որոց վարքն քիչ մը կու շրփոթեն իրարու հետ արեւմտեայ պատմիչք:

10249926



ձաւորաց միջի մատղաշ Զապելայց ծանօթացը-
նէ՝ իբրև իրեն նախընթաց օրինակ համեստու-
թեան և իմաստութեան ու պաշտպան մեր ազ-
գին վերջի պայազատութեան մէջ ամենէն անուա-
նի, պատուելի, սիրելի և սրբենի եղած թագու-
հին [1] Զապել:

1 Ցետ Զապելի՝ նու նորա առաջին թագուհին Հայոց՝ կին Գ Լեւոնի՝ կէտան՝ որ է կիւռ Աննա (Քիւրիա-Աննա) դուստր Լամբրոնի տիրոջն, իր ակեսրին բարեպաշտու-
թեան ճամբան բռնեց, և աւելի բազմաթիւ զաւակաց մայր ըլլալէն ետև՝ կրօնաւորեալ մեռաւ (28 յուլիսի 1285), մեծ համբաւով սրբական վարուց. սա կոչուեր և Թէոտանէ, այսինքն Թէոփանիա: — Նոյնպէս գովութեամբ յիշա-
տակուին՝ իր քոյրն Մարէտա (3 դեկտ.) — իր երեք վերա-
յիշեալ Զապիլանուն դստերքն. իր տալն Ֆէդ.— Դ կոս-
տանդին թագաւորի մայրն Մարէտա տիկինն (27 յուլիս). — և վերջին թագուհին Հայոց Մարէտա, կին Զ Լեւոնի, և իր դուստրն Փէռա. —նախ յիշուած Ռ Զապել՝ կինն Օշին թագաւորի (3 մայիս):

10249926

# 9

## ԳԵՐԵԳԱՐՋ Գ ԼԵՒՈՆԻ

### 6 *Փետրուար* — 1289 *.

*Վասեանք երեւոյեան խարոյկը. զոլորնք հայրենի կրակարանին եզերքը, ի Կիւրիկէ, յարքունիս Թագաւորին Հեթմոյ: Հեթում (այս անունը կրօտից մէջ ամենէն անուանի և սիրելի անձն) Հեթում ա, յայլորդ մեծին Լեւոնի, ինքնին հրաւէր կուտայ, և քան զուրիշ տարիներ աւելի արտորանօք, իր հաւատարիմ հպատակացն և պարոնայցն. գալու ժողովելու բազմութեամբ, և Աստուածայայտնութեան մեծ ծոմը կատարելու: Կու փութան իշխանք և պարոնայք՝ ապահովցնել իրենց ամուր բերդերը և իջնել լեռներէն, ելլել պարտապատ քաղաքներէն և ժողովիլ ի Մահ:... Եւ ինչո՞ւ ոչ ի Սիս, յաթոռ Թոռն Թագաւորաց: — Մի հարցընէք: — Պարտնայքն գալու և անցնելու առեն՝ կուռնային մէկ մը այն մայրաքաղաքին կոմը, և գեռ եգիպատացիան աև ծխոյն նշանը աւանելով, գլուխնին շարժե-*

* *Այս թուականս է մահուան Լեւոնի. գերութիւնն եղաւ յօգոստոսի 1266 տարւոյ, գերեզմարձն ի 1268:*

10249926



լով՝ երեանին խաչակնքելով կու փոխեն ձամ-
բանին. Թէ և շատ դժար կու գայ երեից յառա-
ջելն, վախնալով Թագաւորին տխրամած դէմքը
տեսանել. սակայն մէկ մ'այլ երեից հրաւէրքի
Թուղթերուն վրայ նայելով, և տեսնելով անոնց
արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ'առնուն, և
կու մտնեն'ի Մախ. որոշեալ օրը՝ նախ քան զարևն
կու ներկայանան միաբան, բարևել և շնորհաւո-
րել Թագաւորին գնոր տարին և զաւագ տօները:

Սիրով և պատուով կ'ընդունի գնոսա Թագա-
ւորն. և փոխարէն ոսկեղիներ տալով՝ կու հրամմէ
որ նսաին. և նախ ինքն կու բազմի ծանրուԹէ իր
գահը: Ո՛հ. որչափ այլափոխուԹիւն է Թագաւորին
դէմքն քան զանցեալ տարին: Տարի մը միայն կըր-
նա՞ր այդքան աւերմունել հազիւ վաԹսնամեայ գըլ-
խոյն ալևքը, որ ոսկի սպասկին տակէն կախուած՝
իր սպիտակ արքունի բեհեզեայ քղամդին կու
խառնուին. և երկընցած դէմքն այլ այն գլխուն
դեղին Թագին կու նմանցընեն: Ո՛րչափ տարբեր
էր այդ դէմքն այն ՀեԹում Թագաւորի ոսկեհա-
տիկ վառվռուն կերպարանքէն, երբ այդպիսի հան-
դիսական օր մը բարձր գահուն վրայ ելած աաեն,
Կիւլնկիոյ ամենէն ազնիւ ծնունդն՝ սիմնաց տի-
կինն Զապել, դուստրն մեծին Լևոնի, անոր ալ
տոմբը և անդամները կամ-կամ ընելով՝ ինչպէս
ասացինք, Ֆրանկաց Թագաւորին Ամաուրիոյ և առաջնորդ Արքեպիսկոպոսին Մաաեսիոյ և առաջնորդ Անքակալնոյ. գահուն
ստորոտը Սողոմոնի տուա առիւծներուն տեղ՝ եր-
կու եռանդուն կրակոտ կորիւնք կենային՝ Լևոն և

Թոլոս Թագաւորդիք. և իբրև ամենուն հովանի՝ Թագաւորին ձախ կողմը նստէր փառօք իր ջոջգլուխ ազգայոհայրն՝ Մոզոն Կոատանդին, աբրահամեան ծերուներն[1]:

Այդ չիշեալ մեծափայլ և մեծազօր ազգուհանական սեռներն՝ այսօր խորտակած կ'երևին ժամանակի օրէնքէն. միայն ամենէն կրտսեր ազգայ-ելբայրն Յովհաննէս ազգեպիսկոպոս՝ մեզմէն բազմէլ, մեկալ դին այլ ամենէն մեծն՝ ծերունազարդ սպարապետան Սմբատ, ոսկեկոթ Թրին վրայ կրնեցած, երբեմն երբեմն Թաւ Թաւ յուներուն տակէն երկու խոր կայծակներ պարզելով: Թագաւորին գլուխն այլ ծանրացեալ կ'երևի գրեթէ կէս դար կրած Թագէն. 43 երկայն և բազմափորձ տարիներ պէսպէս գոհար քարերու պէս շարուած էին անոր վրան. ուրչափ զանազան սեղուանք, ուրչափ զանազան անձանց մէջ կանգներ էր Հեթում այն գլուխը. ուրքան երկայն և տարբեր ճամբաներ ընելով՝ Կիւլիկիոյ գահերէն մինչև Թաթարստանի խորագոյն անապատները՝ ազգին և տանը համար քրտնելով, կ'ինամայր հիմա պահլին ծանրութիւնը: Եւ Թերևս անկէ եաև փափագելի էր իրեն հանդչեցընել այն յոգնած գլուխը, ըլլար նաև սև քարի մը վրայ:... Բայց սրտին վրայ այլ կայ ծանրութիւն մը, և շատ մեծ ծանրութիւն. ինչուան որ զայն չթեթևցընէ, իրեն համար մահն անգամ անհանգիստ է:...

Սաոնք մեր մտածութիւններն չեն. այլ այն բազմախոհութիւնը պարոններուն՝ որք բազմեր են Թագաւորին դիմաց: Իսկ Հեթում իբրև թեթև քնէ մը թօթուելով գլուխը, և ծածուկ կրակով մը վառելով աչուըները՝ կու գարձընէ հոն եղող իշխանաց վրայ, և յետոյ կու հրամէ աւենականան

[1] Այսպէս կ'անուանէ զնա իր որդին Յովհաննէս:

*սպասաւորաց՝ որ պակասներն այլ կանչեն և նըշանեցընեն. իսկ սպասաւորք կարդեն պակաս չգըտնելով՝ կ'իմացընեն որ ամենքն այլ հոն են: Թագաւորն նորէն աչք դարձընելով՝ կու տեսանէ, թէ ոչ շատ, այլ մեծ պակաս. կու հրամմէ կու տեսէ որ զանոնք այլ կանչեն: Սպասաւորք շփոթած կու նային կու համրեն, պակաս չեն գաներ, և վախով մօտենալով կ'ըսեն, Սուրբ Թագաւոր, ամենքն հոս են: Թագաւորն նեղանայ. սպասաւորք իրար կ'անցնին, իշխանաց կու դառնան. ասոնք այլ կ'ապահովցնեն զԹագաւորը, թէ Սուրբ Թագաւոր, ամենքն այլ ուրց հրաւէրք և պատուէր խաւրեցիք, հոս են, պակաս չկայ պարոններէս: Ան ատեն Թագաւորն անգամ մ'այլ սրափայլ աչքերը չորս դին դարձընելով, և բարկացեալ՝ այլ մարմրած և հեծկլտած ձայնով կանչէ. Եթէ ամենքն հոս են, ուր են հապա պարոնաց պատրոնքն, Լևոն և Թորոս...:*

*Լևոն և Թորոս. երկու կրակէ նետերու պէս Թուան այս անուանքս Թագաւոր հօր մը բերնէն, և չմնաց ողջ սիրտ մը. իշխան, պարոն, եպիսկոպոս, ձիաւոր, սպասաւոր, ամենքն վիրաւորուն հառաչանք մը փրցնելով կու սկսին լալ վայել, երկինք երկիր. նայիլ. բոլոր արքունական տեսանն նոր մեռած անդրանիկ զաւկի մը սգաւեներ դարձած. Թագաւորն ծածկեց հայրական դէմքն իր սպիտակ բեհեզին տակ. և մէկն չէր համարձակէր մօտենալ, բան մը ըսել, մխիթարանք մը տալ. պարոնաց գլուխն՝ ի գետին կորացեալ, վարդապետաց և եպիսկոպոսաց շրթունքն դողով համրացեալ, կ'ուզէին որ եղածն երազ ելլար. և թէ էր կարելի անկէ հեռանալու՝ գոնէ անզգայ ըլլալու: — Բայց ով կրնայ անզգայ ըլլալ, երբ ձիաւորաց պարծանքն՝ զուարթուն Թորոս՝ գետ իր յորեքամեայ գերեզմանին մէջ սև սև վէրքերուն*

նշաններով ահեղ դիւցազին նման պատկած կ'ե-
րևէր դիմացնին... և երբ լուսադէմ Թագաժա-
ռանգն Լևոն՝ բարերատ Պկյպարս առաքանին ան-
բերդին մէջ շղթայակապ տանջուէր: Անվախ
Սմբատ անդամ, հօրեղբայր սիրուն և կարիճ կո-
րեանցն, ձեռքը Թրին, Թևն 'ի գահ Թագաւորին
կռնթընած՝ ալտատուաթափ աչքերը վերուցած
առեն՝ կարծուէր Թէ մէկէն պիտի ցատքէ և ար-
քունի նիզակներէն մէկը կորզած՝ վազէ երթայ
Մարայ սուլթանին գահը կոխէ, և իր եղբօրորդին՝
պարոն Լևոնը, յափշտակէ բերէ հօրը գիրկը. խակ
երբ գլուխը Թօթուեըլով նորէն դէպ 'ի կուրծքը
կ'իջեցընէր, կարծուէր Թէ աշխարհք անցեր է
Հայոց տանն համար. և ամենքն այլ գլխակոր մը-
նային:... Թանձր սուգ մը պատեր էր Հեթմոյ
արքունիքը. արևելք և արևմուտք, Թաթար
զանէն և սրբազան Պապէն եկած մխիթարու-
Թեան գրեըն անգամ՝ չէին փարատած զայն:...

Ի՞նչպէս եկաւ այն սև սուգն, ինչպէս եղաւ
այս չար դիպուածն: — Գիտես Հայկակ, որ կիս-
լիկիա Թէ և ամուր երկիր, բայց այլազգի տէրու-
Թիւններու դրացի էր, որք կ'ուզէին յափշտա-
կել այն պատուական աշխարհը: Թագաւորք Հա-
յոց երբեմն բարեկամուԹեամբ, երբեմն զէնքով
կուզգուշանային անոնցմէ. որոց զօրաւորագոյնն՝
Իկոնիոյ սուլթանն, շատ հեղ Լևոնի և Հեթմոյ
հետ կռուեր էր, երբեմն մէկն երբեմն մէկայլն
յաղԹելով. բոլորովին ապահովուԹեան համար՝
Հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ ղրկեց առ
զանն Թաթարաց, յետոյ ինքնին գնաց առ Սպա-
ղա զան, և երեք չորս տարի ուշացաւ յօտարու-
Թեան. մեծազօր և ահարկու Հէլակիւ զանէն
սիսպուեցաւ նիզակակից ըլլալ անոր, Սրսբա-
ցոց և Թուրքոյ դէմ շատ պատերազմներ ընել,
և Բալդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Միջագե-

տաց, Ասորեստանի, Հայոց և Ասորւոց իշխանները նեղը նուաճել. որով իր սահմաններն այլ ազատ և դանգիստ միացին շատ տարի. ուրիշ զօրաւոր թշնամի չկար, բայց միայն Մարայ սուլտանն, որ հեռուէն կու սպառնար. իսկ Հեթում մէկ կողմեն երկիրը պարնանելով և բերդով ամրացուցեր, մեկայլ կողմեն Թաթարաց օգնութեան վրայ վստահացեր էր, և այլ աւելի իր խորագէտ հօրը խրատուց և եղբօրը քաջակռիւ բազկին վրայ: Բազդատ առնելու առեն Եգիպտոսի սուլտանին կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիֆային. ատոնցմէ երկուքն կրցան փախչիլ. մէկն էր Ֆոնտուքտար [1] Պէյպարս, չափաւոր տարիքը առած, մեկ այլն երիտասարդ մը Սօնգօր էլ-Աշքար (շէկ կամ կարմիր բազայ) անուամբ, որ իրեն պէս կարիճ վազուկ ձի մը ուներ. և տեսնելով ընկերին Թէ հասակը Թէ գէշ ձին՝ վախցաւ Թէ գերի ընկնի սպանուի. ատիպէց որ իր ձիուն վրայ հեծնի և փախչի: Թէ որ ես գերի ընկնիմ, ի՛նչսէր, տէյուԹեանս խնայելով՝ գիս չեն սպաններ. գոնէ պարտքդ ըլլայ ազատել գիս: Եւ նման այնպէս եղաւ. կարմիր բազային քունուեցաւ, Պէյպարս սրծաւ և հասաւ Եգիպտոս. յորդորեց անոր Ֆուտտուզ սուլտանը՝ Թաթարաց դէմ պատերազմ բանալու. և պատերազմին մէջ այլ շատ քաջուԹիւն ըրաւ, անոր համար վարձք ուզեց Հալէպի կուսակալուԹիւնը. և երբ սուլտանն չտուաւ, Պէյպարս համախոհուԹեամբ քանի մը իշ-

1 Մեր պատմիչք անուանեն զսա Պանդուխտար կամ Փնդուխտար. որ բնիկ անուն չէ, այլ մականուն է, առած իր տիրոջմէն. և տէրն այլ իր եղած արքունեաց մէջ պաշտօն ուներ իշխանին գնտակ տալու խաղի առեն. այս պաշտօնէին կ'ըսէին Ֆունտուքտար: Թերևս այս անուան համար Լևոնի գերուԹեան երգիչն, որ վերջը պիտի յիշենք, գնտակի խաղալը յիշէ:

*խանաց սպանեաց զնա և առեալը անցաւ (1260ին)։ Անկէ ետև գլխաւոր մտածութիւնն էր վրէժ առնուլ՝ ի Թաթարաց և անոնց օգնականներէն. յարմար ատիթ այլ գտաւ Հէթումի և Պեղքարի[1] մեծ վանքերուն ապստամբութիւնը. որոնցմէ յաղթեալ և փախչողները կ՚ընդունէր իր քով։ Անոր համար Հէթում պատուիրեց Հեթմոյ՝ իր նեզականին, որ Եգիպտոսի սուլտանին վրայ յարձակի։*

*Հեթում խորագիտութեամբ նախ Իկոնիոյ սուլտանին հետ դաշնադրութիւն ըրաւ (1262), յետոյ վազեց Անթիոքայ վրայ. բայց Պիւպարս առաջուց իմանալով ըլլալիքը՝ շատ զօրք խաբեց խափանեց Հեթմոյ խորհուրդը. այն առեն Հեթում քանի մը հարիւր մարդ այլ՝ ի Թաթարաց առնելով և 150 ասպետ անոխոքացի, մտաւ Անտիոքայ երկիրը, բայց ցաւալին սոխպուեցաւ յետ քաշուիլ. մանաւանդ որ Պիւպարս կու գար իր երկրին սահմանները կոխելու։ Անկէ ետև սկսան մեկմեկու դէմ պատրաստուիլ սուլտանն Մսրայ և Թագաւորն Հայոց, և զիրար հնազանդութեան կանչել, թէ և իրարմէ կու վախէին. բայց երբ Հէլակիւ՝ պաշտպանն Հեթմոյ և քրիստոնէից՝ մեռաւ (՚ի սկիզբն 1265 տարւոյ), Պիւպարս սկըսաւ համարձակ յառաջ գալ։ Նախ խաչակրաց ձեռքէն առաւ ամուր քաղաքները. վերջը պահանջեց ՚ի Հեթմոյ՝ որ Անտիոքայ դռները ազատ թողու իր մարդկանց անցնելու, ջուրքնէ իր երկրէն ցորեն բերելու, և նաև իրեն հարկ ապ։ Հեթում պատասխան չտուաւ անոր. թէ և դէմ կենալու չէր համարձակեր, բայց և ոչ այլ դաշնադրութիւն ընել, Թաթարներէն ակնածելով, վասն զի Թշնամիք էին Եգիպտացւոց։ Ահա այս-*

[1] Երկուքն ալ Ճինկիսկհանի թոռներէն են։

պիսի գժալը դէպքեր կան վարչութեան մէջ, որ փոքը առրութեանց (ինչպէս էր Կիւրիկեցւոց) հնալքը անհնար կ'լինեն: Պէյպուրսայ ուզածն այլ այս էր. հրաման տուաւ Համադի էլ-Մանսուր իշխանին և Գալավուն զօրավարին և ուրիշներու, (որոց մէկը Սմբատ կ'անուանեն մեր պատմիչք), յարձակիլ 'ի Կիւրիկիա. ուր և մնան օգոստոս ամսոյն սկիզբները 1266ին: Հեթում առաջուց լեռները բերդերով և պահապաններով ամրացուցեր էր. և Եգիպտացւոց չարժմունքը լսելուն պէս՝ ունեցած զօրքը տուաւ իր երկու կորիճ կորիւններուն, Թագաժառանգ Լեւոն՝ որ այն տաեն երեսնամեայ էր, և քաջ ձիաւոր Թորոս՝ որ սեւելի ծաղկահասակ էր, և երկուքն միասին քանի մը տարի առաջ (1260) սպաներ կոր-
պեր էր. պատուիրեց անոնց որ ծովեզերքի և լեռնոց միջոցը՝ Ալեքսանդրիոյ (Իսքէնտէրունի) քովի բանակատեղին պահեն: Իակ ինքն՝ իրմէ աղէկ դեսպան չգտնելով՝ սիրտ 'ի բերան առած փութացաւ ալեակ գնդով մը գնաց Թաթարաց զօրապետին, որ Էլպօստանի և Կոկիսոնի մէջ տեղ բանակեր էր, և օգնութիւն խնդրեց շուտով. քայց ուշացաւ ալեաց, մօտակայ վտանգը առաջ դրաւ, ուշացաւ որ իր անգին զաւակացը վրայ կատկածոտ հօր մը սիրտ կրնար խօսիլ և ջանալ, անօգուտ եղաւ. Թաթարն յամառեալ կ'ըսէր Թէ առանց հրամանի էլ-զանին՝ Ապաղայի՝ չեմ կըրնար մարդ տալ: Ուրիշ ձար չկար, պէտք էր տուր-հանդակ խաւրել զանին՝ և խաւրեց. քայց տուրհանդակն այլ պէտք էր կամ հայր ըլլալ կամ Թուչուն, որ քիչ օրուան մէջ կարենայ կարել քոլոր Փոքը և Մեծ Հայոց լայնութիւնը, և սրանալ ինչուան Մազանդարանի մօտերը, ուր գըտուէր զանն, հրամանն առնուլ և բերել Թաթար զօրապետին: Արդեօք ապաւէ Հեթում

սուրհանդակին դառնալուն. բայց մինչ անգութ և Հարատար Թշնամին այլ անշարժ կու ապասէ իր առելը. — այսօք դառնայ Թուչն յօդնութիւն զաւակներուն. — բայց եթէ ինքն անկէ հեռանայ՝ Թառներն Թերևս առելերնէն այլ չեն չարժիր օգնութեան գալու: Այս դժուարութիւնս առջինէն ծանր էր. հարկ էր Հեթմոյ հոն ապասել 15 աւուր չափ. բայց իր քաշած երկայն համբերութիւնը՝ ով կրնայ չափել. ով կրնայ կշռել արտին ալէկոծութիւնը այնպիսի առեն, որ յիրաւի բանական էր Հեթմոյ, Թէ և սև այլ ըլլային՝ մազերը ձերմկցընել, և օրուան առ՝ տարի մը ծանրացընել հասակին վրայ:

Իսկ Թագաւորդիքն ինչ կ'ընեն: Ամառուան ամենէն տաք օրերուն, որ Կիլիկիոյ քարուտ կողերէն կրակ կու ելլեն դաշտերուն վրայ, մինչդեռ մերձակայ վանքեր Ս. Աստուածածնի վերափոխման ոսկը հազակէին լեռնէ լեռ ձորէ ձոր, իրենք հոն կեցեր այրելով մրկելով կու սպասէին հօրերնուն, և Թշնամւոյն. և եաքնա աւելի շուտ հասաւ չկարծած կողմերէն: Իրենց կռթընած լերանց վրայ Հեթում աշտարակներ կանգներ և պահապան դրեր էր զգուշութեան. և ոչ ոք կարծէր Թէ մէկն այնպիսի առէջ անցնելու փորձ փորձէ. բայց Պկտարս իր զօրաց 15-20 օր միայն մինչ կարեր էր Կիլիկիա ապատակելու և կրցածնուն չափ աւերելու. պէտք էր որ ամեն չանք ընէին. և ահա յանկարծ Իլքհնաէրոնի լեռներուն գլխէն, սև մրրկի պէս սկսան վար Թափիլ Եգիպտոսի հնոցանոցն տաք օդուն վարժուղ Քէօլէմէնները, որ լցին վարի դաշտը: Հայք (ինչպէս շատ հեղ այսպիսի առեն կու հանդիպի) յանկարծութենէն շփոթած իրար անցան. տան և երկուաձեռ լչխան կար մէջերնին, ոմանք զարնուեցան, ոմանք փախան, ոմանք բռնուեցան. հոն էր և ար-

10249926



քայ-եղբայրը գունդապետալըն Սմբատ և իր կուրիճ զաւակներն Լեւոն և Հեթում. հոն իր մեկ եղբայրն այլ (Լիկոս), որ նոյնպէս իր Թագաւոր եղբօր որդւոցը պաշտպանութեան համար պատերազմելով՝ փառօք ընկաւ զէնքն ի ձեռքը. իսկ Սմբատայ այս փառքս չտրուեցաւ այս անգամ, այլ պահուած էր ուրիշ պատերազմի. իսկ հիմա ալեւոք էր Հայոց բանակին մնացորդը՝ բոլորովին կոտրանձէն ապրեցընել: Ի՞նչ ջանք չըրաւ արդեօք այն առիւծ դարձած սուկալը ապարտպեան՝ իր եղբօր կուրիւններըը ազատելու, որոնք հոն իրմէ աւելի իրենց հօր պատուէրքին, և անկէ այլ աւելի՝ իրենց քաջասրտութեանը ուզեցին լսել: Սմբատ չէր գիտեր՝ մնացեալ զօրաց առաջնորդել, թէ անոնց քովը կենալ. եթէ անոնց յամառ քաջութեանը նայելով քովերնին կենար, անշուշտ Հայոց բանակէն մարդ մը պիտի չազատեր. ապա՝ մեկ մը մնացեալ իշխանորդիները և զօրքը ապահովապէս ետ կու քաշէր, մեկ մ'այլ արքայորդւոց կու վազէր: — Բայց որո՞ւն հասնի. Լեւոն՝ Սարուանդէ-քալ բերդին առքը կեցեր, Թորոս իրմէ շատ հեռու կու կուռէր. Լեւոն կու ջանայ հօրեղբօրն հետ պաշտպանել իրենները, Թորոս անդադար առաջ առաջ կու նետուի իր բարձրանալինչ բարձրափուխինչ ձիովը, կու զարնէ կու կոտրէ զԹշնամին: Մենք Իլխանն դաշտը չեմք տեսած, և ոչ զԵկատր՝ Տրուայ պարիսպներէն դուրս Աքիլլևսի դէմ պատրաստուած, և ոչ անոր ծերուկն հօրն և մօր և կնոջ աղաչանքը լսած, զինքը այն առիւծի հսկային անյաղթելի զէնքերէն յետ կեցընելու. բայց Թորոսի համար կրնաք պակաս ըսել Հայ Հոմեր մը, եթէ Հոմերի կէս հոգին այլ ունենար: Քանի մը հազարնոց զինակիրներով միայն մահու չափ անակի մը մէջ ցատքելով իր բարձրավիզ ձիովն և սեաւ փոթորկի

10249926



պէս չորս դի մրրկելով՝ բոլոր ծայրկեալ երկաթասարդութեան ուժովը, կէս գունդ մը ձևացընէր. վահանը թողած՝ թուր ու նիզակ էր շարժածը, որոնց հարուածէն՝ անտառահար փայտից պէս անթիւք փռռուեցան բոլորտիքը. ինչուան տասն հազար եգիպտացի սպաննեցին, կ'ըսեն, այն օր այդպիսի կարիճ Հայք: Թորոս դեռ աչուընեբն սրինն դարձած՝ ամեն դի սրինն կու տեսներ, սրին կու հաներ, տուած և առած վէրքը չիմանալով. շաւեբն իրեն յորդոր և ձայն տուին. Հերկ է, Թագաւորդի, յետ դարձիր. բայց ոչ մէկուն այլ չլսեց. չլսեց անշուշտ մերձաւոր ընտանեաց գթոյն, և ոչ իսկ հեռաւոր հօր մը ծածուկ ձայնին. «Շատ է ազնիւ որդեակ իմ Թորոս, Թո» րոս՝ դարձիր այս անգամ, մինչև գայ հայրդ այլ » և մէկտեղ վրէժ առնուք »: Չլսեց այն ձայնեբրոն. այլ այն մարդակուտոր սև անտառին մէջ մինակ մնացած բարձրահասկ ծառոյ մը պէս՝ դեռ ճռնչալով չէր դադրեր իր հարուածներէն, մինչև բազմութիւն սուսերաւոր թշնամեաց երթալով մօտենային, և շատ անգամ հարցընէին. Մտակալն կարիճ, ո՞վ ես դու, ինչ կ'ուզես. քու բոլոր բանակիդ չըրածն՝ դուն միայն կ'ուզես ընել. ձգէ անկուշտ զէնքերդ և եկու տպրէ քաջի պէս մեր ձեռքը: Թորոս՝ միայն զանունք զարնելով պատասխան կու տար. մինչև քանի մը անգամ անձնատուր ըլլալու յորդորելէն և օգուտ չըլլալէն ետև՝ կատղած սուսերաւորքն մօտեցան պատեցին այն մէկ հատիկ վարսաւոր ծառը, ձիաւոր նահատակը, որ դրեթէ անոնց բազմութենէն խղդուելով՝ և իրմէ առաջ վիրաւորած ձիուն կռնակէն վայր ընկնալով կտրած նիզակին վայ երես՝ ի վայր փռռուեցաւ երկայն, յետին անգամ հայրենեաց հողը համբուրելու ընչակատուր շրթունքովը:... Կոտորածը սրինելուս զսահին՝ խնայեցան, բայց

ափսո՛ս, քիչ մ՚ուշ, որ Հայոց Թագաւորին որդին է եղեր կարիճն այն. ապա թէ ոչ՝ գուցէ աստուածորդի այլ կարծուէր գիւցաւիսպ Թորոնայն: Ոչ պակաս անկէ քաջութեամբ կուռէր և Լևոն. նոյնպէս կռուեցան և իրենց հօր եղբօրորդիքն, Սմբատայ կորիւնքն. որոնց մէկին այլ մեռաւ, մէկայլքն՝ Լևոնի և իր հաւատարիմ ծառաւորուն հետ՝ գերի ընկան Թշնամեաց ձեռքը:

Ո՞վ կրնայ պատմել անգութ Պէյպարսայ ուրախութիւնը՝ երբ գիմացը հանեցին զանոնք, յետ 20 օր Կիւլիկիոյ մէկ մասը աւրելէն և այրելէն և մայրաքաղաքն այլ կողոպտելէն, Թագաւորաց գերեզմաններըը քակելէն և գանձերը պարպելէն, (որոց միայն մէկ ամանէն 60,000 կարմիր (ոսկի) հաներ էին), դառնալով անբաւ աւարով, մինչև մէկ եզ մը երկու դրամի կու ծախէին:...

Իսկ Հեթում մինչև ցերը կ՚ուշանայ. մանաւանդ թէ մինչև ցերը կու դանդալին Թաթարք... Ահա կու դառնայ սուլտանդակին յԱպաղա ղանէն՝ բերելով առ զօրավարն Թաթարաց հրաման օգնելու Հայոց: Հեթում Թաթար դունդը առած՝ գացածէն աւելի շուտով կու կարկ օրերով երկայն ճամբան. կու մանէ էր երկիրը... Ընտանի լուութիւն և օտար ապաստակ. սև նշանները, աւերակաց փոշի, այրածներու ծուխք, ամեն բան իրեն կ՚ըմացընեն. դեռ կու սեանկ Եգիպտացոց վերջամնացները՝ որք իրմէ երկու օր առաջ եղեր էին երկրէն, և դեռ կու լսէ անոնց քամահանքը և աշխարհին հառաչանքը. կ՚իմանայ, կու զգայ Լևոնի գերութիւնը, Թորոսի մահը:...

Եթէ ամեն բանէ վեր կրօնքի ոյժը չզգար Հեթում, չեմ գիտեր արդեօք ինչ կ՚ընէր կամ ինչ կ՚ընէր. բայց այս ուժով միայն սիրտը բունեցավ, և այլ ամեն բան Թողլով, գլուխը կու դարձնէ դէպ իր քաջայուշատակ անուրոյ շինած վան-

10249926



քը, և հան այն մեծ Թագաւորին (Լևոնի) գերեզ-
մանին վայ ընկնալով և սուրբ վանականաց հո-
գեհաս ախիթարանքը լսելով՝ հազիւ կրնայ քէչ
մը զսպել զինքը. « Բայց զսիրան (ի՛նչ ականա-
» տես պատմիչն [1]) ինքն և Աստուածծ միայն գի-
» տէին Թէ որպիսի կրակով լցեալ էր. զի ոչ տե-
» սանէր զայնպիսի գեղեցկատեսակեր և զծաղկա-
» լից օրիան իւր առաջի իւր. ոչ յերեկոյ և ոչ
» ի վաղիւն, և ոչ ի ժամ ճաշոյն՝ յուսեալ և ըմ-
» պել. և ընդ միտ ածեալ զանմխիթար ախէտս
» գեղեցիկ օրիացն, զԹօրոսի գեղեցիկ պատկերն
» և զվայելուչ հասակն՝ որ ի սրոյ բաժանեցաւ
» յանուղորմ և արեանարբուս անօրինացն, նոյն-
» պէս և զԼևոնի ահիւ և անգոհիւ լինելն ի մէջ
» այլազգեացն ի ծառայութիւն. զայս ամենայն
» զմտաւ ածեալ բարեպաշտ Թագաւորն Հայոց,
» այրէր անհնարին կրակով, և գալարէր ալիքն
» յատակս սիրոյ օրիացն որ ոչ տեսանէր՝ և Թա-
» ւալէր ընդ երկիր անմխիթար ագով, բայց գալա-
» և ի ծածուկ »: Ուրիշ ծեր պատմիչ մ՚այլ [2],
ծանօթ Հեթմոյ, իր համաշխարհական պատմու-
թիւնը լմանցընելու առեն՝ լսելով իր երբեմն
հիւրընկալ իշխանազանց ևս գոյժը, գոլգոթան
գրչովը վերջին Թղթոյն վրայ կ՚աւելցընէ այս գէպ-
քըս այլ. « Գլուխ և խոց անողջանալի կոտորե-
» լոյն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ, ի
» մատաղ հասակի մերձ ի փթիլս մօրուաց. վը-
» կայեալ յամենայն բերանոյ՝ անպակաս ի բա-
» նդակ բարոյ, և կուսութեամբ շուքմարտա-
» նեալ ի ծրարս հնարհայն Աստուծոյ, որ յօժա-
» րութեամբ ևս գիմեալ ի պատկն արեան. քան-
» զի հարցեալ զՈՒՆ՝ ոչ ետ զանուն հօրն, զի կե-
» նաքն գերեալ մի լոյս աւելի քեռն հօրն և աշ-

1 Մաղաքիա աբեղայ: 2 Վարդան:

» խաւրհին, ընդ անդրանիկ եղբօրն՝ Լևոնի, պատ-
» կեղծ և հրաւիրեղ յաթոռ թագաւորութեանն
» առ կենօք հօրն: Ֆանզի նա եղև գլուխ գերե-
» ցոյն մեր, և հուր ապկեզ լերդաչարչար և սըր-
» տակատար աշխարհիս մեր և ազգիս, որ կամք
» ընչարգել և յերեսման: Հասանէ ձեռն վերին՝
» որ եհարն ցասմամբ, նոյն բժշկէ ողորմութեամբ,
» ածեալ զմեծաբուց խոցն, առնելով գերեդարձ՝
» (Լևոնի) զոր տարան ընդ ալեան, հնգետասան
» օր յամեալ յաշխարհն, և ընդ ալեսնուք ըզ-
» նոսա իրօք, և զմեզ խոցոտիչ համբաւոնէն »:
Եւ կու վերջացընէ պատմութիւնը յիշելով կա-
տանդին ծեր կաթուղիկոսին ազատուր մահը, որ
գրեթէ 50 տարի նստաւ յաթոռն, և չէ իմացաւ
Հեթմոյ որդւոց ցաւալից դիպուածին, որոց կըն-
քահայրն այլ էր. « Որ և ձայնակեաց իսկ և՛ ի
» Թանձրացեալ և զմռսեալ վերջնոյ լեզույ՝ մերձ
» և՛ ի կատար կենացն՝ տեառնաբար զդպրդուն Թա-
» գաւորութեանն մերոյ. զսուր և զգերութիւն
» իւրական ծննդեան և անդեան աշխարհին, մը-
» տեալ և՛ փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բոր-
» բոքման. ձեռաստն արքայորդեացն կորսեան,
» որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա, և
» արարին սպանդապետ սախտման [1] ընչոյն, բորբո-
» քեալով զծարաւ լուծման յոքնաթախիծ կեն-
» ցաղոյս: Զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Ա-
» տուծոյ, ընդ Ղազարու հանէ արտաքոյ այսքան
» ժամանակ կրկնց՝ յանպատուեմն »:

Բայց Հեթմոյ դառնակսկիծ ծարաւը չկրցան բոլորովին մարել Ականց անապատին բազմաբուղխ աղբիւրները. այլ հազիւ զովացած՝ յիշեց միան-գամայն Թագաւորութիւնը և հայրութիւնը. ձեռ-քը սրտին վրայ դրաւ, և հեռը բերած Թաթար

1 Յօրինակին սպիսպեան:

անօգուտ և անկիրթ զօրքերը ալածկելով՝ դարձաւ աչուըները իր կէս անապատացեալ երկրէն. փութացաւ գնալ առ ղանն Ապաղա, պատմեց աշխարհքին և սրտին հարուածներըը. ինդրեց առնել մեծ գունդ մը զօրաց օգնութեան, հասարակաց Թշնամւոյն (Եգիպտացւոց) վրէժը պահանջելու. բայց ղանն իր մերձաւոր Թշնամեաց հետ զբաղած՝ այս ինդիրքը անկատար Թողուց:

Անկէ անյոյս դարձած առեն էր՝ որ Հեթում ուրիշ ճար մը մտածելով կանչեց իշխաններըը Զրօրհնեաց ոմնին առԹիւ, և որդւոյը յիշատակաւ՝ անոնց սիրտը և քիչ մ՚այլ խղձերնին Հրմրտցնէ. վասն զի բաւական սիրտեր չգտնուեցան Թէ պատերազմին առեն և Թէ անկէ ետև [1]. անոր համար այլ հնար չէին համարձակեր բան մը խօսիլ. մինչև նախ Թագաւորն երեսը և բերանը բացաւ, և իշխանաց և վարդապետաց ըսաւ սրտաուսացն այլ շնորհակալելով՝ մխիթարեց զանոնք որոցմէ պէտք էր ինքն մխիթարուիլ. զԹորոս վարդանայ պատկակից սեպելով զՀեթում՝ համբերող նահատակին՝ 'ի գրան Յազկերտի. և աւելի կ՚ընդրեմ, կ՚ըսէր, առանց այսպէս ըլլալն, քան Թէ առնոյց ազատութեամբ ձեր և ձերոնեւրուն կորըսեան պատճառ ըլլալն. « Ինձ լաւ է Լեռնի ծառայութիւնն, և Թորոս իւր արեամբն 'ի վերայ » քրիստոնէից սպանած, քան ես այս ամեն երկիրս և ձեր արեանդ և խղճիդ սիրացած »: Ահա մեծահոգի խօսքերն սիրտ առին վարդապետաց և իշխանաց՝ փոխադարձ մխիթարութիւն առնել Թագաւորին, Թէ և անոր առգն դրանէն ցուցածէն հազար անգամ աւելի էր: Եւ այսպէս կէս մխիթարեալ կէս սգահար՝ կատարեցին յայտնութեան և Զրօրհնեաց հանդէսներըը, որչափ կա-

1 Այսպէս կու մեզադրէ զանոնք Մաղաքիա պատմիչ:

ըեւէ էր. և գարձան նորէն Թագաւորը քարևե-
լոս, և մխիթարեցաւ: Ակն վատահուԹիւն առնը-
լով Հեթոսմ, յայտնեց բերնով այլ ինչ որ սիր-
ը կ'ազատակէր, Լեռնի ազատուԹեան հնարքը.
գեա ոչ էր Լևոն, և գերուԹեան միջէն այլ հա-
ւատարիմ ձեռքով ու զարմանալի սրտապնդու-
Թեամբ իմաց կու տար իրեններուն, որ ամուր
կեցան Եգիպտացւոյն դէմ: Իսկ իտրագէսն Ցուն-
տուքատար Ճարտար հաւորսի նման՝ այնպիսի շա-
հաւոր որս մը ոչ կու պահէր, անով իր ուրիշ
փափագածները որսալու համար. և յետ քիչ մը
վախցընելու և յանդիմանելու, յիշեցընելով հօրը
արհամարհական հրաւէրքը՝ որ զինքը 'ի ծառա-
յուԹիւն կանչէր, հիմա տեսաւ, կ'ըսէր, մի՞թ որ-
եղաւ ծառայ. հրամեց որ տանին Գահիրէ քա-
ղաքին անուանի Լեռնաբերդին (Քալաթ-էլ-Ճէպէլ)
մէջ բանտեն, բայց տանց շատ նեղելու. ինչուան
հրաման այլ տուաւ անոր՝ Երուսաղէմ ուխտի
երԹալու. և երբեմն ազատուԹիւն այլ կու տար
դուրս հանելու զգուշուԹեամբ: Ահա այս դէպքն
է որ այն ժամանակներուն մօտ մեր բանաստեղ-
ծից մէկն երգեր է:

Աւա՛ղ ըզԼէոն ասեմ,
Որ Տաճկաց գուռն ընկեղ գերի:
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս,
Սուրբ խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:
Սուլդանն ի մօտան [1] եղեղ
Իր ոսկի գուռնան կու խաղայ: — Իմ լուս, և այլն:
Խաղաց ի Լէոնն երեսս.
«Ա՛ռ խաղա՛ ու սուր տատայիդ»:
«Լէոն, դուռ տաճիկ լինիս,
»Ես ու իմ աստաս քէ [2] գերի»:

1 Ի հրապարակ կամ խաղոյ տեղ: 2 Քեզ:

Լէռն ի բեւրդին նըստեալ
Դաստառակն աչեցն ուռ կուռ լար.
«Փէրվանա՝ [1] որ ի Սկս կ'երթաս՝
«Դուն խապար տանիս պապայիս» :
Ոնց որ պապն ալ զան լըսեց
Շատ հեծել քաշեց երամով.
Եկաւ ի սուլդանն ելաւ,
Շատ գեռեր եհան արընեց.
Իաւ [2] զիր Լեւոն որդին
Ու հասաւ սըրտին մուրատին:
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս.
Սուրբ խաչն օգնական Լէոնիս ու ամենուս:

Ազնիւ և քաջ երդիչ, որ կու համարձակիս Թագաւորիդ պատերազմաւ շատ արեան գեռեր հանել տալ, և յափշտակելով որդին՝ հանիլ ուրիշն տալու. նրաւ այս էր Հեթմոյ մտածութիւնն, բայց բաւական ոյժ չունէր այնպիսի Թշնամուդեմ: Իշխանքն այլ ատոր տեղ խորհրդակից կ'ընէին՝ որ փրկանք տալով ազատէ զորդին, և ի բենցմէ քան տալով կ'ուզէին խզձերնին սրբել: Բայց Հեթում երկու նախանձորդաց մէջ էր. մէկ կողմէն Եգիպտացւոց, մէկալ կողմէն Թաթարաց. Թշնամութենէն աւելի դժար էր բարեկամութիւն կամ դաշնադրութիւն, կամ փրկանք տալն. և եթէ այնպէս ազատէր որդին՝ կըրնար դարձեալ կորանցընել բոլոր աշխարհովը՝ Թաթարաց ձեռքով: Նախանձն ինչ չարիք չընէր. Հեթումի քան տարուան համարձակութիւնն և իսկ անցընելն մեծ գանից քով, շատ անհաւատ իշխանաց ծանր եկեր էր, և սկսեր էին համբաւել թէ Հեթմոյ բարեկամութիւնն կասկածելի է, անիկայ ծածուկ Մսրայ սուլդանին գաշնակից

1 Ո՛վ կարաւանի:

2 Իաւ. առաւ:

10249926



է: Ահա քանը իմանալով զանին քով գոնուած Մեծ Հայոց ազնիւ ճշմարիտ ազգասէր իշխանք՝ ծածուկ գրերով իմացուցին Հեթմոյ. և որչափ այլ եղած դիպուածոց համար ցաւակից կ'ըլլային, գեռ կու համարձակէին ըսելու, թէ Սուրբ Թագաւոր, աւելի լաւ է մէկ որդւոյդ մահն, և միւսոյն գերութիւնն, քան քու և բոլոր ազգիդ, ջրոք և եկեղեցեօք կոտորած և աւերածն. զդոյշ կեցիր, ջըլլայ թէ Եգիպտացւոյն կէս աւերակ տուն մ'այլ տաս. ապա թէ ոչ՝ անհաւատից խօսքը ճշմարտած կ'երևիս, աշխարհդ կու փճացընես, զմեզ այլ ամօթ և մահապարտ կ'ընես:

Ահայսպէս ժողովրդութեամբք պաշարեալ Հեթում, թէ թագաւորութիւնը կ'ուզէր ապրեցընել և թէ որդին. աւելի յայտնի թշնամւոյն վրայ վատահացաւ, քան կասկածոտ բարեկամին (թաթարին). և ծածուկ դեսպանները ղրկելով Պկպարսայ՝ հարցուց թէ ինչ կ'ուզէ Լևոնի աջառութեան փոխարէն: Պկպարս պահանջեց այնոր սիրելւոյն տեղ՝ իր սիրելւոյն ազատութիւնը, այն կարմիր բազային՝ որ դեռ թաթարաց քով էր. երկրորդ, այն բերդերը՝ զոր թաթարաց օգնութեամբ իրմէ առեր էր Հեթում՝ ետ դարձընել: Հեթում դարձեալ ծերութիւնը և յօգնութիւնը մոռնալով՝ գնաց Ախալա զանին, և գանգատելով Պկպարսայ վրայ՝ իմացուց անոր սպանդմունքն այլ. Ախալա մէկէն յանձն չառաւ թողուլ զՍօնգօրն. բայց Հեթում յետ դարձին 'ի Կիւլիկիա՝ եղբօրորդւոյն մէկը խաբեց առզանն, և վերջապէս բերել տուաւ զանիկայ. որ և ինքնին գրեց առ Պկպարս և իմացուց Հեթմոյ ձեռք ազատին 'ի թաթարաց:

Ահա ժամանակներս Պկպարս եւս եկեր էր Անտիոքը պաշարելու և քրիստոնէից ձեռքէն առնելու, և առաւ այլ: Հոն իմացուց Հեթում որ

պատրաստ էր խաւրելու իրեն իր բարեկամը. բայց անոր հետ ուզած բերդերը տալու կու դը-
ժարէր: Ան ատեն Պկտպաս իրեն գրեց. « Լաւ
» մտածէ, Թագաւոր, թէ որ դու քու որդիդ և
» Թագաժառանգդ ազատելու համար այդչափ
» կու գժուարիս, միթէ ես այլ չե՞մ կրնար աւելի
» իստանալ իմ բարեկամիս վրայ, որուն հետ ա-
» բեւնակցութիւն այլ չունիմ. ինչ որ կ'ուզես երէ
» Սօնգօրը. բայց գիտցիր որ մեր հաշտութիւնը
» աւրող դու կ'ըլլաս, և ես ասկէ դառնալուս ա-
» տեն՝ կու գամ վրադ »: Ահա սպառնալիքէն եաև
այլ ուշանալու և որոշելու բան չէր մնար. Հե-
թում յանձն առաւ պայմանները, և Անտիոքայ
մէջ դաշնադրութիւն մ'ըրին, և երկու կողմէն
խաւրեցին խնդրուածները, հանդերձ ընծայիւք:

Յետ քան և երկու ամսոց դարձաւ գերեաքն Լևոն 'ի Կիւլիկիա, և հետը իր հօրեղբօրորդին և իրենց Հոլտերը: Հեթում բոլոր իշխաններուն և աշխարհազուամբ հանդիսիւ՝ օրով Յամբայ ընդ առաջ գնաց որդւոյն, որ անկէ եաև իրեն քանի մը որդիէ աւելի կ'արժէր: Արդեօք ծեր նահապետին Յակովբայ՝ Յովսեփայ ողջ ըլլալն լսելով Եգիպտոս երթալ և ուրախանա՞լն, թէ Հեթմոյ իր Եգիպտոսէ ևնոյն իսկ Յովսեփայ գրուած բանտէն[1] ելած եկած որդւոյն տեսութեամբ՝ փոխադարձ ուրախութիւնն աւելի էր. ես չեմ գիտեր, և ոչ ոք գիտէ. և ոչ իսկ այն իրարու պըղ-
ըտած երկու սրտերն, որ կու զգան և չափը չեն գիտեր:... Երբ մտան 'ի Տարսոն Թագաւորական քաղաքն, ամեն կողմէ ժողոված վանականք և աշխարհականք եկան յուրախակցութիւն. և երբ մտան յարքունիս, առաջին հանդիպումն ե-
ղաւ անշուշտ ծանկահատակ պատկերաց մը՝ ըն-

1 Այսպես կ'աւանդեն պատմիչք մեր:

ծայեալ էր հետ՝ի համբոյր Լևոնի՝ իբրեւ բազմապատուիլ սիրոյն երկուքնախընծայ երախայրիքը՝ հեզանազիկ Զապլուանը, և Թագի պայազատ 3-4_ամեայ Հեթումիկը[1], զոր այն ևս պատերազմին քիչ առաջ՝ի լոյս ընծայեր էր մայրն, կեռան՝ տիկնաց տիկին՝ դուստր իշխանին Լամբրոնի:

Ա.յսպէս Հեթում հասանելով ըստ երգչին՝ ոչ-փին մուրապին, տարինեւրով փափագած ուրիշ մէկ կամքն այլ ուզեց կատարել. 45 տարի գլուխը ծանրացած Թագը՝ դնել՝ի գլուխ Լևոնի, և երբեմն հանգչիլ յաւիտենականութենե նախափուն-քը, միայնարան մը: Լևոն հրաժարեցաւ լալով, աղաչեց զհայրը, որ չափէ զինքն իր կենդանու-թեան առեն անոր աթոռը նստիլ. բայց հօրը յոգ-նութենն և նեղչին փափագն աւելի սոխպոզական էր. անշուշտ հեռուէն ձայն մ'այլ կու լսէր սա փութալու, զոր ուրիշներն չէին հասկընար:

Յաջորդ տարին դարձեալ և վերչին անգամ երկայն ճանապարհորդութեան մ'երթաւ առ զանն Ապաղա, նախ չնորհակալելով Լևոնի ազատու-թեան պատճառ ըլլալուն. և երկրորդ իր հրա-ժարելու և անոր թագաւորութեան հաստման և հրովարտակ ուզելով. զոր և առաւ, փութացաւ եկաւ յարքունիս, ժողով ըրաւ և կամայ ակա-մայ բռնադատեց զԼևոն յանձն առնուլ իշխանու-թիւնը, եթէ և իր թոլած Թագը դնել չէր ուզեր իր կենդանութեան առեն: Ծիրանեաց ու բեհե-զին հետ թօթռուելով ամեն աշխարհական հոգ և մտածմունք, անկէ եւս վանքեր և անապատները կու պտըտէր, երկրորդ և անանց թագաւորու-թեան մը պատրաստուելու. որոյ համար ճգնո-ղական զգեստով այլ զարդարուած և անունը Մախոր դրած, կու սպասէր հանդերձեալ հրաւի-

1 Հեթում ի թագաժառանգն. որ և կրօնաւորը եղաւ:

*րակին, որ և ջուշացաւ. վեցք մը փուԹացուց ըզմահը (28 Հոկտ. 1270), և Հաւուց զինքը իր փափաԹած և անխռով Հանգստեանը. Թողլով զմարմինն իր սիրելի Դրազարկ վանաց մէջ՝ սիրելագոյն անձին քով, իր սրբակենցաղ կենակցին Զոպէ Թագուհւոյն, որ իբրև քան տարի իրմէ առաջ Հոն արդարոց քունը կու վայելէր:*

*Լևոն Գ յետ երկայն և ծանր ագոյ, աղաչելով և առիպուելով իր բոլոր աշխարհքէն և յօտար Թագաւորաց և դրացեաց, Հազիւ յանձն առաւ Հօրը Թագն'ի գլուխ դնել. և անոր նման պէս-պէս դիպուածներու և կրից մէջ Թագաւորելով, նոյնպէս սիրելի եղաւ ազգին և պատուելի օտարաց. մանաւոր փոյթ և սէր ունելով եկեղեցեաց և վանաց և գրագիտաց, որոց առատապէս նուէրք կու տար, ոչ իր երկրին մէջ միայն, այլ և'ի Մեծ Հայս և'ի գաղԹականս Իտալիա. ուր և Բերուձիա քաղաքին Հայոց եկեղեցւոյն նուիրած ձաշոց գիրքը՝ իր ընծայագրովը կայ մինչև ցայժմ:*

*Լևոնի Թագաւորութեանը հինգերորդ տարին՝ իր գերող Եգիպտացւոց հետ պատերազմելով և վանուելով, վերջապէս յաղԹական պատերազմին դարձած՝ իրմէ երիտասարդ ձիէն վիրաւորուելով, մեծաւ փառօք մեռաւ ծերունի սպարապետն՝ Հօրեղբայրը Թագաւորին՝ Սմբատ (1276), յետ մահուան ամենայն Հանճարը եղբարցն, որոց անդրանիկն էր: Իսկ Լևոն յետ քսանամեայ Թագաւորութեան վախճանեցաւ ('ի 6 փետր. 1289). որոյ քաղաքավարութեան ամենայն դիպուածները պատմելու Համար՝ ինչուան'ի լոյս Հակէն այլ չկրաւեր:... Բայց արդէն մեր Հակման կանԹեղինն կու կածկղտայ, և կրակարան'ի մոխիրը կու դառնայ: — Գիշեր բարի:...*

10249926

# Ի

# ՍԿԻՋԲՆ ՏԱՐՒՈՑ

## ԵՒ

# ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ Ի ՀԱՑՍ

### *Մարտ 9–21*

*Ա*հաւասիկ Մարտ ամիս, որուն սպասեցինք ջրա ցուրտ և երկայն ամիաներ. բոլոր բնութիւն կու հառաչէր կու կանչէր զմարտ. ոչ իբրև տա- րւոյ գեղեցկապոյն ամիսը, այլ պատճառ մեր- ձաւոր գեղեցկութեանց. ոչ իբրև զապրիլ դա- լար, կամ գունաւոր իբրև զմայիս, ծաղկազարդ և պտղացոյց, այլ այդ ամենայն ընորհաց նշան տուող. և ծնող մանկապոյն և զուարթապոյն ե- ղանակի տարւոյն, — գարնան: Գարունն դեռ ե- կած տիրած չէ, այլ ահա կու գայ և յառաջէ, և ձմեռն երթայ և հեռանայ: Մեր կրակարանին ժամերն կու կարճընան. առաւօտն կու կանխէ, իրիկունն կ'ուշանայ: Յորեկն աճելով՝ իր թագա- ւորին (արեգական) ճառագայթներովը կու զար- դարի. օդն կու զգայ և կու պահէ զտաքութիւն. կու զգան ջուր և հող. ցամքած, սեղած, պնդա- ցած երկիրն՝ ձմեռուան ձիւնը և եղեամը կու հա- լեցնէ և կակղանայ. և ահա հինգ վեց ամիս իր

ծոցը Թուլեալ Թաղեալ սերմանք, Թմրեալ Թուռ-
մեալ տումնկք՝ ծայր արձրկեն, կանաչն կ'ընծա-
յուի, կարմիր կու գայ, ծաղիկ կ'երևի:

Իրաւ գեռ մեր բարձրադիր աշխարհին ամեն տափերն այլ իրենց կերպարանքը չեն փոխեր, և այս ընորհքներն չերևիր վրանին. գեռ ձիւն և սառն յամառեալ կու բռնեն զսար ու ձոր, բայց ամենևին անզգայ այլ չեն. ալևոր ժայռերն սկըսին ևս խայծ առնուլ. հողն Թէ և ոչ գալար՝ գոնէ կու յայտնէ վինքն և կու ջանայ Թօթուեել վրայի ձերմակ ԹանձրուԹիւնը: Մեր հիւսիսային խորհուրդներն, ևս առաւել արևելեան և հարաւոյ եզերքն՝ կ'առնուն բարեխառն կլիմայից հաւասար գարնան գոյն և շնորհք. որք արդէն մեր դրացեաց և մեր դէպ 'ի հարաւ գաղԹական եղբարց երկիրներուն վրայ համարձակ կու փայլին, և զուարԹացեալ բնակիչքը 'ի գործ և 'ի ըզբօսանս հանեն: Ահա Թադոս տիրոջ երգաձայնն այլ Երուսաղեմին կու գայ.

Հա՛ մըտաք յամիս մարտին.
Ծառերն ամենայն ծաղկին.
Հոտըն գայր գարնանային
Լսան եղնէք Հայոց զաւակին:...

Մեռք՝ Թէ ծաղիկը և Թէ լսան ամենուն հաւասար մասլԹեալով՝ լսեռք ուրիշ Ճարտարապետն երգէն և բազմարուեստ անձի մ'այլ որ Տիգրանակերտի կոլմերէն կ'երգէ. նոյնպէս մարտի ծաղկանց հետ խառնելով զաւակին յիշատակը.

Մարտըն կու գայր ծաղկընեւով,
Երկնից հաւերըն կարգալով,
Հրեշտակապետք փառըս տալով.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր:
Բարկ արեգակըն ծագեցաւ.
Սաստիկ ձլնեըրըն հալեցաւ.

Գառն ու մաքին ընծայեցաւ.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Ամպ ու երկինքըն խիստ գոռաց,
ՈլորմուԹեան ցօղըն ցօղաց,
Ծով ու գետերըն խիստ ծըփաց.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Ալեբերակուընքըն յորդորին
Ծառ ու ճըղերըն զարդարին.
Խոտ անասուընքըն կերակրին.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Մարդապէս է գաւեր մեղուն,
Ժողվեր ծաղկին ի լեռներուն.
Ոչ վախենայ ի մեռելուն,
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Պիւլպիւլ ղումրին՝ առաւօտուն
Եկեր գարձեր վարդին հոտուն,
Գանկատ կ'առներ նա ի հողմըն,
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Կաքաւըն գայր սարէ ի սար
Կարկաչելով ի ձորն ի վայր,
Զատուածծ օրհներ ինքն անպատար,
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Հաւ ու ճապերն Տաւասլական
Սաղմոս ասեն նոքա լըման,
Աղաղակեն առ տէր ի ման.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Դաշտ ու սարերըն նորոգին
Եւ զերդ նոր հարսըն զարդարին,
Ի յԱստուածոյ փառաւորին,
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Քար արտասուս բղխէ ըզջուր,
Որպէս ըզծով եղեւ աղբիւր.
Վարդ ու ծաղկին է համասփիւռ.
Յորժամ Հայոց զաւիկըն գայր։
Երուսաղէմ քաղաքն այսօր,
Աշխարհս ի հոն երթան յուսով.

Սուրբ Յարութիւն լըցվի լուսով,
Յորժամ Հայոց զաւակըն գայր։
Հայ ու Հոռոմըն խաչապաշտ
Ամեն բոպիկ ու գլխիբաց
Ուրախանան լուսոյն դիմաց.
Յորժամ Հայոց զաւակըն գայր։
Տէրըն ուացէ խաղաղութիւն
Եւ աշխարհի ուրախութիւն.
Հոտըն կու գայ անմահութիւն,
Յորժամ Հայոց զաւակըն գայր։
Իմաստասէրք ուրախանան
Եւ աստղնվորըս լինանան,
Ամեն մեղաց ձեռք լըւանան,
Յորժամ Հայոց զաւակըն գայր։

Եւրոպիոյ մէջ այլ կան աշխարհք՝ ուր գարնան գալը հանդիսիւ կատարեն զաւակի օրերը, բնութեան և ընտրհաց հաճոյագոյն երկու յիշատակները յիրար զուգելով, զգարուն և զաւակ. ինչպէս մեր երգիչն այլ, որ է ըստ ոմանց [1] արքեպիսկոպոսն Ամդայ, Մկրտիչ Նաղաշ, թերևս մեր ամենէն նշանաւոր և ճարտար անձն ի ե գարուն մէջ։ Ինքն հայկական Միջագետաց ծնունդ և հոգևոր տէր բազմաթիւ վիճակաց այն կողմերուն՝ Հայաստանի շատ գաւառներէն առաջ կու տեսնէր գարնան բերքը. և մեզի հետ կ'ողջունէր այս օրերս, և մեզմէ առաջ այլ՝ բաբելական կամ լաւական ուռենեաց երկայն երկայն խարտեաշ խոպոպները, լեռնկին տերևները, լորսյն (tilleul) կարմիր բողբոջները. հոն արդէն պարկեշտ մանուշակն կապոյտ աչուըները բացեր է իր անհնամ մենարանէն, անուշիկ հոտ մը խառնելով

1 Աւելի հաւանական է թէ հեղինակն ըսելու Մոտքոփ եպիսկոպոս մէկն։

անուշիկ հովի մը. և եթէ առպառակոտ գնդի մը վերջաւնաց զօրաց նման՝ յանկարծ բարբառոս հով մը չփչէ, օրէ օր բուսաբերութիւնն կու յառաջէ, և գրեթէ դիտող աչք մը չկրնար հասնիլ անոր շուտ շուտ զարգանալուն:

Արդ անտարակոյս բնութիւնն կու նորոգուի, ծերացեալ տարին կու վերջանայ, կամ նորէն մանկանայ. եղանակաց և ժամանակաց սկիզբն գարձեր է: Արժան էր որ այս բնութեան նորոգութեան եղանակին՝ սկսէին ժողովուրդք իրենց քաղաքական տարին, և գարնան պիշերահաւասարին կարգել իրենց կալանդը կամ ինդարար նուիրամատակը: Յայտ մնաին շատ խելօք և իրաւամբք գործէին հին ժողովուրդք, որոց առջև մեք ծանկեալ նոր ժողովուրդքս՝ անտեղութեամբ անյարմար միջոց մը կու սկսիմք մեր տարին, (ձմեռնային արևադարձէն 10 կամ 20 օր վերջը, 1 յունուար): Ան հին ազգերէն մինակ քիչ շատ անփոփոխ մնացած Հրեայն՝ մինչև ցայսօր իր տրբազան տարին կու սկսի գարնան հետ. միայն թէ տարին արևու հետ համեմատելու առեն՝ ամիսներն այլ լուսնի հետ կ'ուզէ յարմարցընել, որով ոչ ձիշդ և ոչ միշտ գարնան հետ կու սկսի տարին: Բարեբաղդաբար, յայտ իր հետ և իրմէ հին ազգ մ'այլ կայ՝ որ նոյնպէս իր հին արբազան տարեմուտը հաւատարմութեամբ կու նշանակէ իր ծանարին մէջ, և մինչև ցարդ միշտ արժանապէս կու սկսի այդ տարին՝ երբ արևն անոր և իր սիրական Յոյ աստեղատունը մանէ, որ է ըսել այն օրս գարնանամուտ, (9 մարտի կամ 21 ըստ նոր տոմ.): Ա,յս ազգս՝ որ յայտ մնաին աւելի քան զՀուտս և զՀելլեն՝ իմաստասէր մնաւանդ թէ ճշմարտասէր գտնուեր է, և այս գիտուը պահեր է՝ թերևս յանգէտս օտարաց, Հայ ազգն է. որոյ համար իրաւամբ պարծելով իր հին հեղինակաց

մէկն, անոր աստուածատուր ձրից մէկը սեպհ-
լով իր ծօմարն այլ, կ'ըսէ համարձակապէս, Թէ
Աստուածմէ առին « զառամարն, անդ Մովսէս, աստ
» ՀՈՑԿՆ յառաջ քան զնա »: Հայոց քաղաքա-
կան սովորական տարին ալ, ըստ ամենայն հին ազ-
գաց (որոց ռամիկն ոչ երբէք աստեղաբաշխ կ'ըլ-
լայ) շարժական և փոփոխական էր, նահանջ չը-
նելով. այլ արբազան տարին՝ հաստատուն է. ո-
րոյ սկիզբն ոչ ըստ քաղաքական տարւոյ, նո-
ոյդ ամին է, լասինաց օգոստոսի 11-23ին հաս-
տատեալ անշարժապէս, այլ բուն աղնս ամին,
ԱՐԵԳ: Բայց օրացոյցդ և նայէ, կոս տեսանես որ Ա-
րեգ ամին Խոյի տանուտէրութեան հետ կոս
սկսի, որ է կէտն գարնանային գիշերահաւասա-
րի. և ուրախութեամբ պարծէ նախնեացդ վրայ,
որ այս գեղեցիկ բնական ճշմարտութիւնը անփո-
փոխ պահելով յաւուրց ըմբռնելին՝ հասուցեր
են մինչև՛ ի մեզ, և մեզմով օտարաց, առեալ ի-
րենց գերադիւցազն նախահօրմէն, ՛ի Հայկէն. որ
ոչ միայն ճարտար շարժիչ էր աղեղան, այլ և
Թուոց և չափուց: Միանգամայն և ցաւէ որ չեմք
կրնար գեա՛ ի գործ գնել և զուգել այս հին ա-
մարը նորոյն հետ և վարել: Քաղաքական տարւոյ
սկզբան հանդիսից, այսինքն Նաւասարդին, փոքր
՛ի շատէ տեղեկութիւն ունիմք. այլ կրօնական
տարւոյն և Արեգին սկզբան հանդէսներն՝ Հայ-
կազանց խորհրդապահ քրմարանաց հետ ծած-
կուած են մեզմէ: Շատ է գիտելն և տեսանելն՝ որ
իմաստութեամբ գարնան սկզբան հետ Արեգին
սկիզբն այլ զուգած և նշանակած է Հայադիրն:

10249926



## Բ

Նոյն Հայոցդիրն յաւիշտակելով զմեզ՝ ի հնութեան ժամանակաց, ներելի կ՚ընէ թողլու այսօր նորագոյն յիշատակները, և հնութենէ հնութիւն ելնել՝ ի վեր քան զարեգն և զսկիզբն հայկական ամուց, և ուրնչանակէ այսօր յիշատակ մ՚այլ, որ ոչ մեր հիմիոս աշխարհիս գարուց մէջն է, և ոչ այլ անկէ առջինին, ալ երկու աշխարհաց միջոցն կրնայ ըսուիլ, նախաջրհեղեան և յետջրհեղեան աշխարհքները միացընող կամրջոյն վրայ. որ է ծեր նաւոյնն՝ Նոյի՝ տապանն: Սուրբ գրոց հետ հաշուելով անոր՝ ի տապանը մանելուն օրը, ըստ արբազան ամուց Եբրայեցւոց (և ոչ ըստ քաղքականին՝ որպէս ոմանք կ՚ընեն) չորհեղեղին գալը և գադրիլը, տապանին նաուիլը՝ ի լերինս Արարատայ, պատուհանին բացուիլը, և այլն, այս օրուան կու հանդիպի տապանին ձեղուան բացուիլն, այսինքն վրայի ծածկին: Տապանին՝ ի լերինս Հայոց նաուելն ինչուան լերանց գլուխները չուն չկրնան դուրս երևնալը՝ երկու ամիս անցաւ, յորմէ գուշակուի տապանին մեծութիւնն և բարձրութիւնն. յետ 40 աւուրց բացուեցաւ անոր պատուհանն, ուստի զի չուրն անկէ այլ վայր իջեր էր. և իբր յետ ամսոյ մը, այս եղանակաց նորոգութեան օրը՝ բացին արգելականքն տապանին վերնածածկը, և իբրև տան գարպանները՝ դիտանոցի վրայ ելնելով՝ տեսան «զի նուազեալ» էր չուրն յերեսաց երկրի». նուազեալ էր այլ ոչ ցամաքեալ բոլորովին. վասն զի տարի հասնիր դեռ երկու ամիս այլ պէտք եղաւ: Ի՞նչ հիանալի և արտառուչ տեսարան: Ահն լերանց կողն՝ որոց տափի մը վրայ նաուեր էր տապանն, և՚արդե-

10249926



լեր համարձակ տեսութիւնը՝ ի պատուհանէն. անոր համար նոյ կու տախտուէր թռչուններ արձակելով անոնց դառնալ գալէն կամ չդառնալէն իմանալ ջրոց ցածութիւնը և երկրին ցամքելուն չափը: Իսկ հիմա իր 30 – կանգնեայ նաւատան պիտանացին վրայ եւլած՝ իր հաճելորոյ ընտանեօքը, կու տեանէ այն ամրակերտ ընդարձակ նաւը ծովային բերդի մը պէս ամենաբարձր լեռնատափիկ միջոց նատած. որոց եաւէն՝ դէպ յարեւելս, յարեւմուտս և ի հիւսիս դառնալով՝ Հայաստան նի աւելն կամ պակաս բարձր լեռներն կ'երեւին. ոմանք ամենևին լերկ ու մերկ նոր ջրէ դուրս եւլած նման. ոմանք քանի մը ամսական արեւուս տաքութեամբ սկսած իրր աղուամազով մը ծածկուիլ բարակ կանաչութեամբ, որոց վրայ ծիրանագոյն արեգակն ի խոյն աստեղատուն էն. անոնց մէջ այլ կ'երեւին խորաձորք և հովիտք, և քանի մի դաշտք՝ իրրև աշնան վերջին արօրած պատրաստած սերմնացան և անբոյս ևս արտեր: Իսկ հարաւային կողմէն կ'երեւին ծովածաւալ դաշտք և անապատք Միջագետաց և Ասորեստանի, որ յիրաւի դեռ, թէ ոչ ծովու՝ գոնէ ճահճի պէս կու ծածանին, և տեղ տեղ ջրածածուկ, արեւուն վարնուածքներէն իրրև փռած հայլներ կու ցոլանան: Երկու ամիս նոյեանք տապանին երդիքէն կու դիտեն այս տեսարանը, մանաւանդ թէ միշտ փոփոխակ տեսարան մը, ջրոյն օր ըստ օրէ քաշուելուն, և արեւուն օր ըստ օրէ տաքնալով՝ և այն դաշտաց վրայ տեղ տեղ երեւցած տխրալի դէմքերը, աւերեալ աշխարհի և խղդուած հասակաց և պեղեցկութեանց մնացորդներ որ ծովուին քայքայելով, ծածկելով, և Թողլով միայն (տխրագոյն մնացորդ) ջուր ու ձերմակ ոսկորներ, այն հեշտամոլ փոփոխներուն, և այն յանդուգն հպարտներուն՝

ոյք կարծեցին Թէ միայն երկրիս վրայ է մարդուս վիճակն. և անիծեալք յերկինից՝ երկրէս այլ դուրս ՚ի ծոց անդնդացեալ ծովուն ծածկեցան, կերա֊ կուր կիսից և վիշապաց. հազիւ Թողլով սակաւ ինչ նշխարքնին ծովէն փսխած՝ իրենց հին բնակա֊ րանաց քով. որոց հիմունքն անգամ տակնուվրայ եղած հողուն հետ խառնուած կորած են: Եւ եր֊ կիր երկրորդ անգամ կ՚երևի « աներևոյթ և ան֊ » պատրաստ » անապատ մը ամայի, անմարդա֊ ձայն, անկենդանի. յորոյ վրայ հազիւ իբրև պըզ֊ տիկ շարժուն գծեր կամ բծեր՝ տապանին պա֊ տուհանէն արձրկուած Թռչուններն Թափառե֊ լով կ՚անցնին՝ դադար կամ բոյն մը փնտռելու:...

## Գ

Ո՛րչափ տարբեր էր այս երևոյթս երկրի՝ այն առաջին սկզբնական անպատրաստ վիճակէն ելած և նորակերտ զարդարուածէն. երբ ձայնն և մտան արարչապետին՝ հինգ աստուածային օրուան մէջ՝ գործելով և ներգործելով, փոխեց զաարեսս եր֊ կրի ՚ի բոյս և ՚ի կենդանիս, պատրաստելով ՚ի վայելս գերագոյն արարածոյ մը՝ զոր անունդմէ եաև ակնարկեր. և որոյ այսօր իսկ յիշա֊ տակ է ըստ Հայեցուիր կարգի՝ գարնանամուտ և բացման տապանին հետ. այսինքն Արարչագոր֊ ծութեան, որոյ սկիզբն յ՚17 ամսոյս նշանակի և վերջն ՚ի 22, աւելցնելով մարդոյն:...

Սիրելի՛ ընթերցող. — Ինչ մեծ և արժանա֊ ւոր յիշատակ. ոչ այնքան հնութեամբ, որքան հիացմամբ մտաց և քննութեամբ: Ո՞վ կրնայ ան֊ տարբեր կենալ երբ իրեն ծագումանը, և առաջին ծագման հնդիկը մը ընկնայ ՚ի միտքը:

Շատ հեղ լեռնադաշտակի մը վրայ վայրկ

կալնին առանալով ինչուան հարիւր ոտք բարձրութեամբ, որուն առերևազարդ թևերուն քառորդաքն 3-600 և աւելի ոտք կու շրջապատեն, և շքին տակ հովիւ մը քալոր իր հօտին կ'ապասանի, և որոյ կուրծքնած քունն՝ պատրուն պատրուն այլ յենարան և հովանի եղած է. հիանալով այդ հին ու նոր հակայ հատակին վրայ, որ ինչուան եօթ ուր նոր հարիւր նոր գարնան ծիծաղեր և նոր ձմերանց դիմացեր է, զարմացմամբ հարցեր եմք. Ուսկից և ինչպէս առաջ եկած է. — և աւելի զարմացմամբ լսեր եմք՝ թէ ազգի խոզակէմը, բնաջնջի կալնիկ մը առաջ եկած է այդ ահել հսկահասակ բուսականն նահապետն: Հապա այդ կալնին. — այն այլ ատոր նման և տակէ առաջ հսկայ ծառէ մը. — այն հին կտրած վերցուած ծառն այլ ուրիշ խոզակէ մը. և այսպէս մէկմէկէ: Վերջապէս, մանաւանդ թէ սկզբնապէս, ամենէն առաջ ինն էր, կալնին թէ կալնին, ծառն թէ կտաւն. կամ որնոյն է՝ ըստ բնաբան փիլիսոփայից, հաճն թէ հաւկիթն: Իրենց ինդիրքն և քննութիւնք դեռ այս մեծ հարցման պատասխանը չեն կրցած տալ. և դեռ հաւերը թողնելով՝ հաւկիթները գտրցնելով առաջ կ'երթան: — Մենք հաւանեցալ և հաւատացեալ եմք մովսիսական ստուածաշունչ գրոց պատմութեան, որ ամենէն առաջ մեզի յուցընէ զահեղ ջերմ՝ իբրև ամենածրար ձու մը սաւառնած յանժամանակէն Աստուծոյ. որոյ Հոգին՝ իբրև հոլաթև հաճապիւռ հաւ մը՝ գրգռայր 'ի վերայ անդնդատարածեալ տարերացն, իր կամքով և հրամանաւ կոչելով և կոչելով 'ի զանազան ձև ու բնութիւն. որով միանգամայն կերպացաւ կալնին առանց կալնիկի և հաւն առանց հաւկիթի:

Մեր սկիզբն այլ այս կանոնով եղաւ, քայց

ազնուապոյն կերպով, մեր աշխու քնութեան հա-
մեմատ: Ո՞վ՝ ի հաւատացեալց՝ իւր կրօնական և
պատմական ուսմանց սկիզբը չէ լսած չէ տեսած.
բայց անգամ մ՚այլ հրաշալի նախամարգարէին
գլոց գլուխը, և կարդա քու սկզբնա-
ւորութիւնը, մարդոյն ստեղծագործութիւնը.
Եթէ ուզես, մատդ վրայ հեծած՝ Թուիր միւն
էև քու հայրենիքդ, եդեմական սահմանները. և
դեռ դրախտին մէջ չհասած՝ անկէ դուրս և քիչ
մը հեռու (բայց մի մինչև ՚ի Դամասկոս)[1], ըն-
րէ գարտատափ կամ Ձորավայր մը. դիցուք Թէ
ըլլայ մեր հին Սրմանց, (Թերևս և Սեբոմանց)
լեռներուն մէջ, որ հիմա Պինկէօլ կ՚ըսուին. և ան-
կէ վերանալով պատմական ժամանակց սկիզ-
բը, տես նկատէ հոն լեցած՝ յառաջ քան ՚ի Սինա,
և յառաջ քան ՚ի Քորեբ՝ մէկ մեծ Թեթև ու շար-
ժուն բրդան պէս բան մը, երբև ամպով, ծխով,
լուսով, բիւրեղով շաղուած. որոյ միջէն կարծես
տեսնել մարդկային կերպարանաց ուրուական
մը, որ ծերոյն գօսուոյ նման ընդարձակ գլուխ ու
Թևեր շարժելով, և իւր սաստուած եղած կաւային
հոսի կոշտ մը քրքրելով յիւրաւի քեզի մեկնման
նիւԹական կերպարանք մը վեր կու կանգնէ: Ա-
չի ստեղծուածներէն տարբեր և ազնուապոյն կեն-
դանւոյ մը կազապար կ՚երևի սակայն. հազիւ եր-
կու ԹաԹով գեաինը կոխած, ուղղաձիգ կու վե-
րանայ երկնադիտակ բոլորակ գլխով. երկու կող-
մէն Թևեր արձկած, ոչ Թռչելու յարմար, այլ
երբև փարելու երէն նմանուոյ մը հետ, կամ Թէ
նոյն իսկ երէն ստեղծուին՝ երբ ձանչնայ զայն: Տե-

1 Վան զի ոմանք զԱդամ ՚ի Դամասկոս ստեղծուած
կ՚ըսեն. և անկից, կ՚ըսէ մէկն, Աստուած ձեռքը Ադամայ
ՃակտէՒն վրայ դրած՝ քշից քանէ մը ժամուան մէջ հասուց
յԱյրարատ:

10249926



*ասծնիս գեռ. անկասար կալլապար մ'է. անչարժ, անյարդ, անզարդ պատկեր մը, քայց Աստուծոյ պատկեր ըլլալ գուշակուի. կատակերա կարմրա- կերտ արձան մը, որ կարծես Թէ նախքան կենդա- նանալու աշխատելով՝ մանր քրտան կայլակներ կու Թորէ բոլոր զանգուածէն դուրս, զոր երե- կոյեան զովագին հովին կամաց կամաց ցամքե- ցընելով կու ձերմկցընէ, կ'ամփոփէ. և իբրև հե- ռուէն մօտեցընելով աչքիդ՝ հետզհետէ յայտնա- գոյն կու ցուցընէ մարդկային կերպարանք. նախ եգիպտական արձան մը կարծես զայն, վերջը կով- կասեան կերտուած մը, յետոյ մոմէ մարդ մը. հիմա քուն մարդ ըսել չըսել չես գիտեր, վասն զի քան մ'է, քայց ոչ կենդանի և ոչ մեռեալ, ոչ՝ ի քուն և ոչ արԹուն. այլ այնպիսի՝ որ ոչ անուն ունի և ոչ ձիւդ պատկեր մը՝ մեր հիմակուան գա- ղափարաց մէջ: Իսկ հրաշագործ ձարտարապետն՝ իբր Թէ պահ մը կխտակատար Թողուլ իր ամենէն գործնականալի էնդքը՝ կու գնայ անոր չափակցու- Թիւնը, և ծանրաԹեամբ ու մտածմամբ կ'ուզէ այդ կաւեղէն պատկերին ազդել ողջկուԹիւն, գոյն, շարժուձեւ, շունչ, կեանք, զգայուձիւն, քան և հոգի. և այս ամեն բաներն՝ իր գիտեցողն և հաձելուն աստեն՝ կ'ազդին, կ'երևին իր ձեռակեր- տին վրայ:... Տես, ինչ շուտ շուտ այդպէս ար- տաքին երևոյԹն կանկած կտած սկսաւ փոյլիլ, հետզհետէ մոմագոյն, մորտագոյն, շուշանագոյն, ձլրանեղոյն, վերջապէս մարմնագոյն. և այնքան բարակ ու փափուկ, որպէս Թէ Թափանցիկ մաշկ մը միայն ծածկէր նեղքին զարմանալի մկրճոյն, և իբրև ապակւոյ մը տակէ ցուցընէր կապուտա- Թել ջիլեր և երակներ:... Ահա յանկարծ բոլ- րակ գլխէն ինչուան ուսերը ընձուեցան արձրկե- ցան գունդ գունդ խոպ խոպ փունջեր, քայց իբրև պինձի անգրկի մը վրայ՝ անշարժ են. ալօտ ալօտ

արշալոյսէ մը ծագած առաւօտու պէս յանկարծ կ'երևին բարակ թարթափք և յոնկից կամարք, որոց ներքևը երկու մարգարտափայլ գոգք կան, մէջ սեղուանքն ևս ադամանդ.— անշուշտ ձանձ ցայր աչքերը. բայց անոնք գեղ չեն ձանաչեր, քեզի չեն նայիր, չեն շարժիր. սառնամած լը ձակներ են, ծածկուած ակուանք են, որ կ'ուզեն լոյս առնուլ և լոյս տալ:... Եղեցի ուրուն լոյն, անհամբերութեամբ կանչեա. եղեցի լոյս՝ ի վերայ այդ աքանչելի դասատեղտիդ. եղեցի դա կեն դանի պատկեր Աստուծոյ:... Եւ ահա եղև լոյն կենդանի:— Կու տեսնեմ, անդրին մարդ կ'ըլ լայ. կ'ըլլայ ըսելու չունար, կաւէ կաղապարն՝ Ա դամ եղաւ: Ի՞նչպէս եղաւ, ուսկից կիսաւ այն ձառագայթն, այն գոյներն, այն շարժուձն.... Դեռ վայրկեան մը, րոպէկ մը, պիտի մ'առաջ պատկեր էր, հիմա անձն է: Ման պի հրաշագործն՝ աստուածային երազութեամբը դպաւ այդոր ձակտին, և մէկէն արձանին մէջ նաներ ակտան շարժիլ: Դիտէ դա գանգուր գիսակներն՝ ինչպէս բարդ բարդ կու ծփան. նայէ դա շինորակ ընթանց շարժմունքը, դա զմրուխտէ աչց հրեղէն թաւալմունքը, երկնտրչէց ունգանց բա րակ ընթացութիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ պոյտքը, դա ջաղուռ թևոց թափ տալը. դա դուրթ տուող ասից գոփիւնը, որ ոչ միայն անդրին՝ի պատուանդանէն կարեկին, այլ բոլոր անձին ներքին ազդուածքէն ուժ առած՝ այնպէս աստակութեամբ մը գեռնին թռունդ կու տան, որ օդապարիկ գուներէն աւելի շոյտ և բարձր պիտի ցատքէր յերկինց միջոց, թէ որ դեռ ձակտին վրայ գրուած չըլլար մտան աստուածային. որ ներս և ամեհի երիվար մը՝ սանձով, կամ ծխով հոլմով զինուած պատրաստ նաե մը՝ խարսխով, դեռ բաներ է պին. բայց այնպէս մը կ'երևի՝ թէ հա-

10249926



զիւ և ոչ ընդ երկար կրնայ համբերել բռնուածն։ Իսկ աստուածպետականն յետին հաճութեան ժպիտ մ՚այլ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նորաչէն պատկերին վրայ շունչ մ՚այլ։ շունչ բանական, անմահ և անապական, որով բոլորովին կ՚ըլլայ կու կատարուի մարդն։ և հայերդ աստուածային զօրութեան, աստուածային երազութեամբ մը ձանչնալով ինք զինքը, ինչպէս և ուսումի ըլլալն, միանգամայն աչքով և ըղձամբք, թևօք և ծնգօք, սրտիւ և բանիւ և հոգւով կու կանչէ՝ ԱՍՏՈՒԱ՛Ծ ԻՄ։

10249926

# ՀԱՅԳՐԵԻՄԱՆԳԱՅՅ ԿՈՒԻՆ

## 25 Ապրիլ 775.

« Յաւուն Եփրատայ, ի ծայրագոյդ վայե-
» ջութիան », ըստ արբազան երգչին, ի ծնեալս
Ծալիոտան և ի բարձրաւանդակին Հայոց,
հրաւիրեն զմեզ այսօր հայադիր յիշատակք: Ի՞նչ
պեղեցիկ հովիտ, մանաւանդ թէ ինչ ընդարձակ
դաշտ՝ լցեալ զարդուք բուսաբերութեան. զոր
կուանուցանեն հարիւրաւոր ականակիտ վտակք,
ի՛ջնելով ի գոլից այրարատեան լեռնաշարից և
Ակնամարայ պարատափին. որք ամեն կողմանէ
շրջապատեալ ձևացընեն այս ձոռաձև և տաշ-
տանման հովիտս, իբրև 90 մղոն երկայն արևել-
քէ յարևմուտք, և 30 մղոն լայն ի հիւսիսոյ ընդ
հարաւ. և ժողովելով ի գոգավայրն և խառնե-
լով ընդ գլխաւոր վտակին՝ կուգեանան կ'ըլ-
լան պայծառն Արածանի, որ է արևելեան օժան-
դակ և գուգակից եղեմաբուղխն Եփրատայ, որ
ի Բարձր Հայոց ի գագաթէն Կարնոյ կ'իջնէ, և
երկուքն այլ ի համանուն Ծալկի լեռներէ: Եթէ
այս մեծ տաշտաձևիս հարաւային շրթունքն, այս-
ինքն Ապահունեաց (Մէլազկերտ) և Ծալիոտան
(Խամուր, Տիատին) լերինքն՝ ձեղքուելով անցք
մը ջուային Արածանւոյ, անշուշտ գեղեցիկ և քան

զԱղթամայր ընդարձակ ծովալիճ մը կ'ըլլար բա-
գրեւանդ. և Թերևս երբեմն այնպէս այլ եղած
ըլլալը առուգւն մեզի երկրաբանք:... Բայց դուբ,
Հայկակ, դուբ հոս գուցէ աւելի ծաղկահան կ'ուբ-
զես ըլլալ քան երկրաբան. այս հովիտներուս
մէջ մտած առենդ՝ Շահապիվանը կուբ փնտռես.
մեր հին նախնեաց հետ կուբ փափագիս նաւաստա-
դի աշխարհախուժմը հանդէսները կատարել. բայց
դեռ երեք ջրտա ամիս կայ այն ծովերուն. ուրիշ
անգամ այլ կուբ գամք 'ի Բագրեւանդ, որ ոչ սա-
կաւ յիշատակներ ունի:... Բայց քանի մը ամսէ
ետև ամառուան սաքուն՝ հիմիկուբ ծաղկանց գա-
ղտուԹիւնը չեմք գտներ. Թէ և այն առենն այլ
ունի իր լեռնալուսիկ գոյնզգոյն ծաղիկներն:

Հիմայ գարնան ծաղկունքն ծածանին վինջլիկ փըն-
ջիկ, Թռչունք ձայնեն մանրամիւղիկ, ջրերն կրկըլան
զովիկ զովիկ. ուր էր Թէ ազգային գուսանակ մ'այլ
երգէր մեզի զգարուն: — Զեն պակաբ գարուն
երգող Հայ գուսանք, ձեռնաւորք և մշակք, սըր-
բասնօրուս պաշտօնեայք, պատրիարքք և կաԹո-
ղիկոսք անգամ. այսքան զգալի և շօշափելի քնու-
Թեան և վայրաց գեղեցկուԹիւնն՝ գրեԹէ հար-
կաւ երգիչ և բանաստեղծ ըրած է զանոնք, գոնէ
գարուն գովելու համար. բայց Կոստանդին երզըն-
կացին, իսկաչնորհ, իսկատիպ գուսան 650 տա-
րուան, յանձն չառնուր սասնկ դրսէն դրդեռալ
քերդող ըլլալն, այլ տեսիլք տեսնելով, լոյս տես-
նելով առեր է այդ շնորհքը.

« Սինակէս որ, կ'ըսէ, ես ի յիմ իսկից չարեալըն
զարմացայ »:

Եւ այսպէս կ'երգէ զգարուն.

Մեծ գոհուԹիւն, հարիւր հազար,
Մեզ աւետիք է նոր հասեալ.

Եւ մեզ ընտրէք յերկնաւորէն
Յերկինս յերկիրս ի մեզ հոսել:
Երկիր էր լի մուժն եւ մըլար,
Սառն էր կաթել եւ պակ ու քար.
Հանց որ ջրիկ բոյս մի գալար.
Հիմի՝ ինք նոր է զարդարել:
Ջրմուռն բանդ էր եւ խաւար.
Գարուն եհաս ու նոր բահար [1],
Ի հաւ ի մէնջ գիշերն աւար.
Չի արեգակն է մեզ ծագել:
Երկիրս է մայր անկըմանի,
Չինչ գեղեցիկ նուք՝ ծընանի,
Շատ բարութիւնք յինք սընանի.
Հանց որ փուին գեղեցկացել:
Երբար հնչէց հոլմէն հարաւ՝
Չինչ արժանիքն յերկրէ տարաւ.
Հանց որ ջրկայ աչ մի ծարաւ.
Աչքն են բարութեամբ լըցեալ:
Հէգ որոտայ ամպ ցօղաբեր.
Կամար կապի յերկինս ի վեր,
Հոսէ յերկիր աչեղ գետեր.
Հաւատար վերկինք են արբուցել:
Է հարանիք արեգական,
Է ցընծութիւն պաղատական.
Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղայ
Ծաղկունք զերկիր են զարդարել:
Ծովըն դըրուրդ առնու սիրով,
Խաղան վեւոնք յերկինս ու ի ծով.
Ակունքա յորդոր գան պակ ու հով՝
Եւ ի քարէն յառաջ բղխել:
Ահեղ գոչեն գետերս յոլով
Յորդ ի լերունքս ի վայր գալով,
Գան ման ի ման ծաւալելով,
Սիրով ի ծովն երես դըրել:

1 Եղանակ տարւոյ:

Խաղան ելուն եւ այծեմուն,
Իջուան ի գաշտ ի յաղբիւրակուն.
Սկեվայրիք եւ անտառուն
Ի կապանաց են արձակել:
Հաւերըտ գան քաղցըր ձայնով
Ծիծեռն ի հետ սալմոսելով.
Գոյ արտուտիկըն կարդալով,
Զառաւօտուն է բարբառել:
Աչուին առնուն եւ ծընանին
Հաւք ու գազանք ի ելկվայրին:
Զագօք հաւերտ ելնեն պարին,
Ի են միւռեան երամ կապել:
Ծաղիկունքըն գան եւ ժողովին
Ի բուրաստան ի բաղջանին.
Մէկ մի մըտել ի մէջ ծովին[1],
Տեան է դեղին գերեր կացել:
Բլբուլն ելհաս շուքարբերան,
Աւետաբեր մեծ յարութեան.
Վարդին ելհար կանանչ վըրան
Որ գոյ բազմի գերդ հուր վառել:....

Երբ բլբուլն ու վարդն իսոյք բացուի՝ երգն շատ կ'երկննայ. այրի Կատանդին՝ մեր երգիչն. բայց հիմա հանգչի քնարն, հանգչին ծաղիկունքն այլ. վան զի յանկարծահաս հովուց մը պէս օրուան յիշատակն կ'անցնի հովաէս, և կ'այլագոնէ զգայուն: Դաշտիս երկու ծայրերէն կու լան իսոր գլուխն մը, ոտնաձայն մը, այնչ ջնկոց մը. լերանց գլուխն փոշեխառն ամպեր կ'ելնեն, անոնց մէջէն ձերմակ փայլականեր. արեւմուտքէն եկած ալծաթէ հեղեղ մը կու նամանի, որ Բարձր Հայոց գաւրերէն փութապոյթ թնդալով

1 Դեղին շուշան կամ նունուֆար ջրային:

կու Թաւիի հոս. արևելեան կողմէն եկածն ալիւ-
ասպրծայ հնոցէն ելած սեւ ծուխերու պէս կու
ծառանայ ու կու ցածնայ... Ասոնք յիրար չմո-
տեցած՝ մենք մօտենանք պատմութեան ճամբով.
անցնինք հազարով տարիներ, այսօրուան ամա-
կէտին հետ զուգենք տարեկէտ այլ, Քրիստո-
սի 775 Թուականին:

Ա յս նշանակեալ տարին՝ վերջին տարի է կե-
նաց և իշխանութեան երկու մեծ ինքնակալաց,
որք մեջերնին բաժնած են արևելքի բաղդը կամ
դժբաղդութիւնը: Մէկն է Կոստանդին կայսրն,
անուանի իր պատկերամարտութեամբ և մոլու-
թեամբ, որոց յարմար ատացած գարշելի անու-
նը՝ պահէ մինչև ցայսօր, Կոբրոնիմոս (.....):
Պուլկարաց և պատկերաց հետ կռուելէն՝ առեն
ջունէր արևելք հոգալու և պաշտպանելու հպա-
տակները, որոց մէջ սեպուէին և մանր մի Հայոց:
Իսկ մեկայլն է Լեւոնաճաֆար Ա.պա-Ալլահ էզ-
Մանսուր, զոր պատմիչք մեր Ջաֆր անուանեն,
խալիֆայ Ա.րաբացւոց, որ ամիրապետութեան
հին աթոռը փոխադրեց՝ ի նորոգեան Բաղատա
(763), և Կոբրոնիմոսի թուլութիւնը առանելով
իր բանութիւնը տարածեց ինչուան՝ ի Կիւլիկիա,
որավ Մեծ և Փոքր-Հայք այլ ընկան իր ընչա-
քաղցութեան և անգթութեանց տակ. որոց հա-
մար շատ մեղադրուած է քինիկ և օտար պատմիչ-
ներէ. վասն զի համառօտ ըսելով, իր 21 տարուան
ու 4 ամսուան իշխանութեան առեն՝ ընդ հարկի-
հապար մարդ չարգել սպաննել տուաւ, ի՛ըսեն.
որոց մէջ անշուշտ քանի մը քիւր այլ ազգակից
պէտք է ողբալ: Այդպիսի ամիրապետ մը ունող
ամիրայք՝ անկէ գթասիրտ չէին կրնար ըլլալ: Իր
իշխանութեան առեն Հայաստանի ոստիկանաց
մէջ (վասն զի այսպէս ի՛անուանէին Ա.րաբաց-
ցւոց եկեալ կուսակալքն) ամենէն գլխաւորն է

Աբգըլա, եղբայր համանուն նախորդ ամիրապե-
տին, որ ընդհանուր Պարսից և Հայոց կոլմանց
մեծ կոլմնակալ էր. և ուրիշ համահաճոյ հրա-
մաններէն զատ՝ այս այլ գրաւ իր հպատակացը,
որ մօրուքնին ածիլեն, և գլուխնին կանգուն ու
կէս բարձր խոյր մը դնեն. այս ևատոր նման պա-
տուէրքներով կու գային՝ ի Հայս ասպիկանք և
հարկահանք. (ինչպէս Սուլէման, Զալեհ, Ռուհ,
Մուսէ, Մուհամմէտ, Եզիտ, Պէքիր՝ հաքար ըստ
մեր պատմչաց). որք այնչափ կեղեքեցին աշխարհ-
նիս, մինչև շատերն փախչելով գեառնի տակ և քա-
րայրներու մէջ պահուըտէին: Ժամանակին հո-
գևոր տէրն՝ Տրդատ կաթողիկոս, և Հայոց ազ-
գային հոգաբարձուն Սահակ բագրատունի՝ շատ
անգամ լողոքեցին Աբգըլայէ. իսկ նա ասպիկան-
ներէն կու փոխէր, բանուէթիներէ կու թողուր: Ա-
պէս յետ վերոյիշեալ Եզիտայ և Պէքիրայ՝ իսա-
բեց (770) զՀասան-Իպն-Ֆահդապա (որդի Կա-
հադբայ՝ ըստ մերոցս), որ հետը բերաւ խորա-
սան-պարսիկ անկարգ գունդ մը, որոց ըրած չա-
րութիւններէն քանի մը յիշելով ժամանակակից
և ականատես պատմիչն (Վէանդ), զզուելով կ'ը-
սէ. «պատմել ոչ կարեմք զայլէսիցն պատմու-
» թիւն». մեք այլ այնպէս ընեմք, որ արցունքով
չիթօշնին սպրիլի ծաղիկներն:... Բայց ի՞նչ ընէ
խեղճ ժողովուրդն, որ ունեցածը բռնահան հար-
կահանաց տալէն ետև՝ չունեցածն այլ տալու
համար կու ծեծուի, կու կախուի, տաւուցեալ
լճից մէջ կու ճգուի. ի՞նչ ընէ հին հայութեան
մնացած զինուորութիւնն, որ իր եղբարց գան
հեծութիւնը կու լսէ. ի՞նչ ընեն Խրամի և նախ-
ջուանի եկեղեցեաց մէջ այրած նախարարներէն
մնացեալ ձիս իշխաններն՝ որ իրենց սեփական
պայազատութիւնը այսպէս տակն ու վրայ կու
տեսնեն. ի՞նչ ընեն մանաւանդ մեծատուր Մա-

վիճանեանքն՝ Աբրաւազդ և Մուշեղ, որդիք Հըմայեկայ և Հրահատայ. մինչ վիրաւորեալ ա-
ռիւծուց նման միայն մռնչէն իրենց աչաց առջև անապատացեալ հայրենեաց վրայ: — Չէ, այսպէս
չըլլին. այլ յուսահատութեան մռունչ մը մռնչե-
լով զայրագին սրտիւ, իրենց սրտակցաց ու պա-
տուհասակցաց ձայն տուին. որք, ըստ ասելոյ պատ-
մըչին, « եկին զոգի'ն Հեւին իւրեանց, և Հեւնա-
» մուխ եղեն յիւրա՝ զոր ոչ կարէին վճարել, վասն
» զի նուազուն էին. այլ սակայն լաւ համարեալ
» զմահ քաջութեամբ՝ քան զկեանս վատանգա-
» ւոր, Հեւնամուխ եղեն »: Նախ եւանդուն Աբ-
տաւազդ, անվախ, քայց և ոչ առանց խորամանկութեան իրեն հին նախնոյն՝ Գայլ-Վահանայ, յանդգնօրէն գնաց 'ի մայրաքաղաքն Հայոց՝ 'ի Դուին, ուր սրտաբացի ոսոխնեանն փոխանորդ զօրավար մը նստէր, և գրեթէ անոր աչաց առջև իր սակաւաթիւ գունդը ժողովելով՝ սկսաւ զինքը զրահել պատերազմական պատրաստութեամբ, համբաւելով՝ թէ Թշնամեաց դէմ պիտի երթայ: Աբրաբացի զօրավարը՝ իրենցմէ հաւատարիմ կարծելով զնա, միանգամայն և չուզելով իրենք զինրենք վտանգել, թերևս օգնեցին այլ զինքը զինե-
լու. և իբրև յառաջամարտիկ գունդ բանակի՝ Թողուցին իրենցմէ զատուելու: Աբրաւազդ մէկ մ'որ խաբուած բանակին քաղմութենէն դուրս ելաւ, մէկէն վազեց դէպ 'ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ. Վրաց ամուր և ազատ կողմերը եթաթալու. այն առեն այս գաւառս դեռ իր Անի քեղդը իշխանանիստ չէր ըրած, այլ կ'երևի թէ հիմակուան Ռուսաց իշխանանիստան և ամուր քեղդաքաղաքն Կիւմրի՝ էր գլխաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նստէր: Աբրաւազդ անոր չատ անիրաւութենէն թերևս ոչ չատ պատ-
կառ. և ամենայն յառաջամարտիկ գունդ բանակի՝ Թողուցին իրենցմէ զատուելու: Աբրաւազդ մէկ մ'որ խաբուած բանակին քաղմութենէն դուրս ելաւ, մէկէն վազեց դէպ 'ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ. Վրաց ամուր և ազատ կողմերը եթաթալու. այն առեն այս գաւառս դեռ իր Անի քեղդը իշխանանիստ չէր ըրած, այլ կ'երևի թէ հիմակուան Ռուսաց իշխանանիստան և ամուր քեղդաքաղաքն Կիւմրի՝ էր գլխաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նստէր: Աբրաւազդ անոր չատ անիրաւութենէն թերևս ոչ չատ պատ-

10249926



պաննէց. և ժոդոված ոտանիները յարիշտակելով՝ գնաց Վրաց կողմը, միաբանելու իշխանազանց հետ մէկանել: Արաբացւոց աչքերն բացուեցան. մէկէն նախանի ոտիկանութիւնն մէկը զօրապետ դնելով և իրենց ծառայութեան մէջ եղող Հայոց սպարապետ Սմբատն այլ մէկ տեղ առած՝ Արտաւազդայ եռւէն ընկան, ինչուան Ախլցխայի կողմերը յարձակելով. բայց հապճեպ քանի մը կտոր բան կրցան առնել, և յետ դարձան. վասն զի Արտաւազդեանք ինչուան Եգերացւոց երկիրը (Աջարա) գացին, և այն տեղւոյն ու մօտի Վրաց գաւառաց տիրեցին: Իսկ Իշխան-Քահդասպ ոտիկանն՝ ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ առջի պնգութիւնը բանեցընել. այսինքն՝ դարձեալ ամեն դի հարկահաններ ղրկել. որք սիժգալն սենեակներուն պէս եկան ժողովրդեան մնացեալ վաստակը ուղևծուծը քամելու. բայց այս անգամ շատ չյաջողեցան: Վասն զի եթէ Արտաւազդ հեռու էր, մօտ էր Մուշեղ. որ նախ իր երկիրնեըուն մէջ մտածները հալածեց, և բնութիւնն ընդունողներն այլ բնաւթար սրով գառեց. և պահ մը իր ընտանիքը Երասխաձորոյ մօտ Արտագերից առեր թերդը ապահովցնելով, եկաւ անկէ 60 կըտրիճ առած հետը, մտաւ այս մեր եղած Բագրեւանդայ գաւառը, ուր Էպու-Մհռեր՝ փոխանակ հեզաբար ծալիկ քալելու՝ բռնութար հարկ կուսպահանջէր. գնա այլ անոր մարդիկներն այլ կոտրելով՝ փոթորկի պէս յառաջ անցաւ. իսկ ծխատալած ալիծականներն՝ ահով դողով սկսան ծակերու մէջ քաշուիլ. որով համարձակութիւնն առնելով և ղնալ և ղկռիլ փախստականք Հայոց՝ գալու և Մուշեղայ պզտիկ գնդին խառնուելու. որ բան հաճելաւն և սորտափը ջրա դի սորտծեցաւ. բայց զօրայ քիչութենէն այլ իմանալով՝ ոմանք՝ և Թշնամեաց սիրտ ըրին մէկէն վասն

հանելու և Թեկլա մեկ հարուածով վերցնելու իրենց արդեք և սատակիչ եղողը: Բայց այնպես դազանացեալ Մամիկոն մը բռնել՝ շատ գժար և վտանգաւոր փորձ էր: Ախալեպ փորձեցին նախ 200 արաբացի պատերազմողք, որք Կարնոյ քաղքէն (Էրզուրում) եկան, ալեկ զինուած և զրահուած, իջան ի բաւեն, գալու ի Բագրեւանդ. դիշերը վրայ հանելով՝ մտան Խարս գիւղը, (Թեկլա Մժնկերտոյ մօտ), և անոր այգեստանեայց մէջ փառեցան, այգեաց պատերը իրենց պատնէշ կարծելով: Իմացաւ Մուշեղ, և հետը քանի մը կարճ առած՝ դիշերանց հասաւ հոն. և որով հետև այդ պատերը հիւսած չէին՝ այլ միայն քար քարի վրայ դնված՝ ցանկի մը պէս, անոնց տակ նստող և պառկողներուն վրայ փլուց. հոն կապուած ձիանն այլ խրտեղով՝ սկսան իրենց տէրերը կոխկըռտել. գիշերուան, ձիերուն, պատին փլչելուն շփոթութեան հետ մէկտեղ՝ նեղս Թափեցան Մուշեղեանք: Եղածն յայտնի է. Թեկլա ոմանք յայլազգեաց կրցան՝ մերկ կողոպուտ փախչիլ ազատիլ, բայց շատերն այն քարերուն տակ քնացան, մնացին:

Հավսւ քիչ մ'ատեն կրցաւ Մուշեղ հանգիստառնուլ իր ամրոցը, վասն զի այլազգեաց պլպլանին կուգար. Դրնոյ կոմնակալ զօրավարն իր պահապան զօրաց մէջէն չորս հազար կարճ ձիաւոր ընտրեց և յանձնեց Էպու-Նէձիպ զօրապետին, որ երթայ չարդէ չնչէ ապստամբները: Նէձիպ իր գունդը անոնց երթալնէթաց տաճկի ձիերուն պէս թռցընելով հասարակաց գուբան ձամբէն, յԱխլրտատայ ի Կոգովիտ, անկէ ի Բագրեւանդ հանեց, և եկաւ անոր գլխաւոր քինասուն մօտ, որ է Բագաւան (Իչ-գիլիսէ): Ախ ատեն մօտ, այս Ախծանուց նախընծայ վտակաց եղերք, այս մեսրի Նպատ լերան ձեղ

տակ էր, որ անկէ 400 տարի առաջ ուրիշ Մուշեղ մը, Քաջակոտէ Մուշեղ, Եապհոյ արքայէն արքային ահեղ բանակը ցրուեց. բայց այն առեն Հայ-Աղշակունի Թագաւորի մը ամբողջ զօրաց ապարատեա էր, և յոնական գունդ մ՚այլ մարտակից ունէր, և Մեծ Ներսէս մը բազկատարած աղօթաւոր: Անկէ 200 տարի վերջ՝ ուրիշ Մուշեղ մը վրայ գալով՝ անցաւ Բագրեւանդէն Խոտրով Անուշրէեան, և կոտրեցաւ՚ի Մուշեղայ եկբրատ գետոյն վրայ: Իսկ այսօր տանց Թոռանց Թոռն Տրատեանն Մուշեղ՝ 4000 արաբացի ապատամբէն ձիաւորաց դէմ ունէր 200 Հայ. քրանի դէմ մէկ միայն. սակայն ունեցածն բաւական եղաւ իրեն: Անոնք յարձակեցան եկողներուն վրայ, շփոթեցին, ցրուեցին, շատերը գետին փռեցին, աւելի շատերը փախուցին. փախատականաց եռւէն ընկան, օրով ձամբայ հալածեցին դէպ՚ի հիւսիս, ինչուան Արտագած լերան ոտքը. շատերն այլ ձամբան վրայ փռելով, և անոնց հետ զօրավարներն ալ. և աւարներով ու ձիոց երամակով յաղթական դարձան: Այսպէսով Մնացորդքն հասան՚ի Դուին. բոլոր քաղաքը՚ի դուռ,՚ի տուգ, անէծք և նզովք չարժեցին. և այնպէս ահ ընկաւ մէջերնին՝ որ կարծէին թէ ամեն դանդ Մուշեղը ներս կու մտնէ. և գրեթէ չվատահանալով քաղաքին ամրութեանը՝ ներքին ամրոցը քաշուած ամքեցան:

Այս անակնկալ և գրեթէ անհաւատալի յաղթութիւնն և յաջողութիւնն, և այն ահարկու Արտաբացւոց ահաբեկ ըլլալն՝ կրնայ գուշակութիւ՚ թէ երկայն առենէ՚ի վեր ընկճած ժողովրդեան մը ինչ ազգեցին. ինչպէս համբաւն հռչակուեցաւ. ինչպէս գլուխներ ատքցան՝ խելապատակէն այլ՚ի վեր, մինչև խոհեմութեան և նախահոգութեան ձայները լսեցին. և վերստ գրգռեւելով պատ-

ՀաՃԱՀՆ վեր բանել մատծեցին. մանաւանդ ՀափաՀանց ծորբեռքեալ ՃգնաւոյՆ մը, աւելի սլատին ՀալՀցընելով քան Սատուծոյ, զամենքը կու յորդորէր և քաջալերէր, և էլրև տեսիլք տեսած Հաւանեցընէր, Թէ արդարև ազգին բաղդն Հատած է. մի տարակուսանք կ'ըսէր, ձեր մէջէն մէկն ելլայ բաւական է Հալատի դէմ կենալու, երկուքն՝ բնաւոց դէմ:

Յիրաւի շատ դժար էր ոամկաց՝ (յետ տեսնելու որ 200 կտրիճ 4000 սպառազէն հեծեալները վանեց) այս դիպուածին մէջ՝ սրբուԹիւնը և սուրԹիւնը իրարմէ որոշել: Բայց ոչ միայն ոամիկ մարդիկ և սուանձին իշխանք միաբանեցան, այլ ինչուան Սմբատ բագրատունի սպարապետն այլ՝ Հաւանեցաւ Թողլու զԱրաբացիս և միաբանելու ընդ Հայոցն: Այս բանս յաղԹուԹեան մը չափ արժեց միաբանելոց. բայց մեծագոյն յաղԹուԹեան մ'այլ կու փափագէին. այսինքն Հաւանեցընելու զՍ.շոտ, նախայիշեալ Սահակայ իշխանապետին որդին. որ չափաւոր սրտիւք, և սրինքն աւելի փորձ Հաչակեալ խելացի մարդ էր. որչափ այլ Հայրենեաց փառքը փափաքէր, այլ աւելի անոր ապահովուԹիւնը կու պահանջէր. և՛ իմանար և՛ իմացընէր այն ճգնաւորին չափազանց նախանձաւորուԹիւնը, և կ'ըսէր իրեն եկող իշխանաց և յորդորչաց. «Ո՛վ Հայրենասէրք, զգույշ կեցէք. քաջ է՛ք և եռանդուն, բայց աւելի լաւ է խոնարՀուԹեամբ գործել և ձեզմէ առջինները փորձը քննել. կամք և կարողուԹիւն միշտ չեն կրնար իրարու Հաւասարիլ. մէկն՝ ի ձեր ձեռքն է, մէկայլն ոչ. շատ և անակնկալ յաղողուԹիւնք՝ երբեմն մեծագոյն անյաջողուԹեանց պատճառ կ'ըլլան: Քանի մը ՀարկաՀան և զօրավար զարկնք, քիչով շատերու դէմ կեցած, և երԹալով կու յուսաք շատնալ. սակայն իշխանաց սրչափ կրնանք բաղմանալ, իշխանաց երբ

10249926



միապուն[դ] ձնալ: Դեռ Արտաշատոց մեծ զօրավարն 'ի Դուբին է. դեռ 'ի Կարնոյ ուրիշ մեծ զօրավար մ'այլ կայ, դեռ շատ բերդեր անոնց ձեռքն են: Եթէ բերդերն այլ առնուք, եթէ Հայաստանի մէջ եղած զօրքն այլ հալածէք, դեռ դժուարութիւնը քիչ մը կ'ուշացընէք, վտանգը կը մեծացընէք: Ի՞նչ պիտի ըլլայ ձեր բովանդակ գունդն Էմիր-էլ-Մումինեայ տէրութեան ծովածաւալ և ահաւոր զօրութեան դէմ: Ո՞ր ազգ, ո՞ր տէրութիւն կրցաւ կամ կրնայ անոր դէմ կենալ. Յոնաց տիեզերական ինքնակալութիւնն այսչափ անգամ կտուրելով՝ չկրցաւ իր կորսուած երկիրներն 'ի ձեռք ձգել. ահա կայսրն Կոստանդին՝ որ միանակ տէրութեան դէմ ելլելով՝ սպաննեց, տէք ինչպէս տարտափած՝ Թոլ կու տայ որ ամբարտաւանութեան կոխէ իր տահմանները: Ինքն ծովին ու ցամաքը բաւական ամուր չկրնար այնպիսի Թշնամւոյ մը դէմ, դուք ինչ բանի վրայ դրած էք ձեր ապահովութիւնը: Արդ եթէ կ'ուզէք Ճշմարտապէս հայրենեաց օգուտը, ինչպէս և ես ամենայն սրտիւ, հանդարտութիւն մտածելով կեցէք տեղերնիդ. և չանացէք իմաստութեամբ դարմանի տանիլ եղած և կրած չարեաց: Ապա Թէ ոչ, ինձի կ'երևի, Թէ կամ չեռ մեռնիլ միասնակար փոխան՝ պիտի չանչն առնուք կորակոր նուաճիլ մնալ տեղերնիդ. կամ չուտահասած՝ միայն զձեզ ապրեցընել չանալով՝ ինքնակամ Թողուլ հայրենիք, տուն տեղ և վաստակ, ձեր հարց քրտինքով ժառանգած չարիքը, ձեր նախնեաց հաւաքով կանգնած եկեղեցիները, և ձեր ծնողաց գերեզմանները այլ՝ առեղեաց ոտից կոխան, և երթալ 'ի ծառայութիւն կայսեր Յունաց, և պանդխտութեամբ կեանքերնիդ մնշեցընել: Եւ կամ, որ շատ վախնալի է, շուտ կամ ուշ՝ ձեր Թշնամեաց ձեռքը ընկնալով՝ չարաչար մահուամբ պիտի մեռնիք »:

Ահա և այսպիսի քանք բաւական չեղան այն ապջոյած գլուխները զովացընելու. Թողին զԱշոտ, և եկան իրարու հետ գաշինք դնել, խորհուրդ ընել, հնարք մտածել. այլ ինչպէս շատ անգամ պատահած է և կու պատահի այսպիսի դիպուածոց մէջ, չկրցան միաբանիլ մէկ գործոյ վրայ. ոմանք իրենց երկիրը քաշուեցան, ոմանք ամուր բերդերու ապաւինեցան: Ամենէն տաք գլուխներն որ Մուշեղայ հետ միաբաներ էին՝ զինուած և ամուր, 5000 հոգի գունդ մը եղան. Դուինը Թողուցին, գնացին Կարնոյ քաղաքին վրայ, զոր քանի մը տարի առաջ Եզնիտ ոստիկանն առեր էր 'ի Յունաց և լաւ ամրացուցեր. Թերևս հինա մէջը բաւական զօրք չկար, չէ Հայոց Թուրն՝ այլ ոչ ոքն դէմ կենալու. բայց պարիսպներն բաւական զօրաւոր էին. բոլոր այն տարի (774) չմեռուան սաստիկ սառամանիքներն այլ չձանձրանալով՝ Հայք պաշարեցին կեցան քաղքին քով. և մեծամեծ մեքենաներ կանգնելով՝ կու ծեծէին պատերը. և քանի մը ծակ բանալով՝ կրցան քիչ մը քար Թափել 'ի ներս և քանի մը մարդ սպանանել. բայց աւելն սովով կու նեղէին քաղաքը, որ և անձնատուր ըլլալու վրայ էր, երբ յանկարծ մեծ մրրիկ և զօրաւոր հարկ մը հասաւ Հայոց վրայ: Առանց հեռանալը Աշոտ բարատաց, և ոմանց այլ իրենց բերդերը քաշուելը տեսնելով Դըռնեցի արաբացիք, սիրտ առին, ջուրա կողմէն այլ ժողովեցան, և սկսան այրած սրտով ու ծարուած սրով մօտակայ գաւառաց մէջ պատել, և շատ սրինահեղութիւն ընել. բայց ապատամբները նուաճելու համար ստիպուեցան ամօթով՝ եղածը խնայընել ամիրապետին: Սա վնէժինդրութեան յարմար առիթ գտնելով, անթիւ զօրաց միջէն ընտրեց Խորասանի կարճ նէրը, 30,000 հոգի, ձիով և զրահով ազէկ մը

պատրաստած, և յանձնեց էմի իպն-իսմայիլ փոխ և հաշակաւոր զօրավարի մը ձեռք: Որ և հարուածին հովերէն առաջ անցաւ Ատրեաստան, և Աղձնեաց կողմերէն գալով մուտ՝ ի խլաթ մեծ քաղաքն. ժողովելով հաւատարիմ մարդիկ՝ ազգէ մը քննեց տեղեկացաւ Հայոց պատրաստութիւնը, ուշադիր հոգի միաբան և ուր ըլլային, և ինչ ոյժ ունենային. զոր՝ ի հարկէ շատ քիչ և իբրև ոչինչ գաւաս իր բանակին բազմութեան և կազմութեան համեմատելով: Հոն՝ ի խլաթ էր այն առեն խոհական իշխանն Աշոտ. և տեսնելով իր հայրենեաց վրայ եկած չարիքն, և իր խրատած իշխանաց անհաւանութիւնը, սիրան կ'այրէր հոս հալէր, առանց կրակը դուրս ուլտալու. մանաւանդ որ պիտի տեսնէր Ատրեացւոց զօրաւոր ձակից ըլլալու իրեն ազգայիններուն դէմ: Անհնարին տագնապին մէջ առանց առեն կտրելնցնելու ամենայն ծածկութեամբ խնացուց իշխանակցը՝ էմիր պատրաստութիւնը. և ահա ժամանակն է, կ'ըսէր, ցուցնելու ձեր խոստացած հաւատարմութիւնը, կամ իրարու պաշտպանութեամբ մեռնելու: Աղջի խրատուն մտիկ չըրին պահնակներ, եթէ կասկածեցան. կարծելին որ Աշոտ Ատրեացւոց հաւատարիմ մնալուն՝ զիրենք խաբել կ'ուզէ և հեռացնել՝ ի խլաթայ. և մտքերնին դրին կարող պաշտպանց նման՝ այս մեծ քաղաքս այլ առնուլ յայլազգեաց: Հաստատած Ատրծրունեաց իշխանն գլուխ կեցաւ, հետ առաւ վաստակաւոր զօրքերէն զատ՝ Ամատունեաց գունդն այլ, Սիւնեաց սպարապետին Աշոտ եղբօր գունդն այլ, և ելաւ երթալ վանայ ծովեզերեայ հիւսիսային արևելեան կողմը՝ Արճէշ երթալ առնելու վրայ, ուզելով հնմնայատակ ընել. անցած տեղերէն ամէնուն հետևակ մարդիկ այլ կու ժողովեր կու խառնէր զօրքերուն: Երբ հասան՝ ի

Բեբկրի, Խլաթէն Հայ մը եկաւ նորէն լմացընե-
լու թէ էմիր զօրավարն մօտ է երեք բիւր և աւելի
զօրքով: Համազասպ հպարտացեալ՝ զայս այլ
ևեննգուձիւն կարծեց, և փոխանակ պատրաստե-
պատուէց լրաբերը, և առանց անցաւ հասնելու
յԱրձէշ: Ասոր բնակիչքն այլ իմաց տուեր էին
էմրայ, որ բազմութեամբ զօրաց ծածուկ ճամ-
բաներով եկեր տպատով տեղ մը դարաներ էր.
և հազիւ թէ Հայք սկսան Արձէշի բերդը ձեծել,
Արաբացիք դարանէն ելլելով վրանին ընկան, և
անզէն անհնուտ հետևակ գնդին մեծ մասը ջար-
դեցին, որոց ոմանք այլ փախչելու տեղն ծովը
Թափեցան. և այսպէս անխտհեմութեան զոհ ե-
ղան 1500 անպարտ մարդիկ. անոնց հետ իրենց
առաջնորդ ջրա տղնուական իշխանք այլ. մնա-
ցեալքն փախստեամբ գրուեցան: Ահա պատա-
հարս եղաւ ապրիլի 16ին (775): Արաբացիք զա-
նանք երիար միջոց հալածելէն ետև՝ դարձան ան-
կէ մեկայլ ապատանքները փնտռելու. և Խլաթու
և Մանազկերտի դաւառներէն վեր փութալով
Թափեցան հոս, 'ի Բագրեւանդ:

Ահա այս էր այն հնոցանման ևս ծուխն զոր
տեսանք յարևելից. որ և կոխելով այս ծայրա-
զարդ վայելչութիւնները, գետոյս տղբերականց
քով՝ Արձնի ըսուած գիւղը ևչան. և դադրեցան
զէնքերնին սրելու և մահու գործիքները պատ-
րաստելու: Իսկ արևմուտքէն փրթած փոքր ար-
ծաթափայլ հեղեղն՝ էր Մուշեղեան գունդն Հա-
յոց, որ պաշարէր զքաղաքն Կարնոյ. և յանկարծ
լսեց Արձիշու կոտորածը: Ցետ այնչափ երկայն
համբերութեան, պզտի գնդով մը այնպիսի մեծ
քաղաք մը պաշարելու և վառնդելու, որուն քըս-
նելու տեսն՝ ստիպուիլ Թողուլ, ոչքան ծանր,
ոչքան սրտակոտոր էր: Այլ ուրիշ հնար չկար.
ակռանին կրծտելով դարձուցին երեսնին 'ի Կար-

նոյ. քայց մեր երթան։ — Երկու ձամբայ կար գիմացնելին. մէկն և ապահովապէսն էր՝ Արտաշատայ գառնածն, անցնիլ երթալ յարևմուտք և ՚ի հիւսիս, Յունաց կողմը մտնել, և յետ այնքան նեղութեանց՝ գոնէ ապրիլ և հանգչիլ։ Իսկ մեկայն՝ կորիւնը կորուսած առիւծուն ձամբան էր. զօրաւոր Թշնամեացը վրայ գառնալ և յուսահատ կատաղութեամբ զարնուիլ, ըլլայ ինչ որ ըլլայ։ Եւ այս եռքինը ընտրեցին այն զայրասիրտ ընկերակորոյս առիւծքն։ Կարնոյ լերանց գարեկէն Թափուիլ՚ի Բասէն, և անկէ այլ Սուկաւ լերանց (Քէօսէ տաղ) կռնակէն ընկնիլ ՚ի Բագրեւանդ, քիչ օրուան քիչ ժամուան գործ մը եղաւ երեսնց. հոն այլ չդադրեցին, ոչ Թշնամւոյն բազմութիւնը ուզեցին քննել, ոչ անոր չարժելուն սպասել, այլ գարուդուր գեանի մը վրայ արձկած հրադոնան պէս ցատքռտելով առաջ եկան, և փոխանակ Թշնամեաց սպասելու՝ երեսնք անցան գեղը։ Թշնամեաց ահել բազմութիւնն և սաստիկ հարկու սպառազինութիւնն, արաբիկ երիվարաց վազն ու փութկին, լուսանկիզ վրանաց և դրօշաց չարժիւնն, խառնակուր ալալակն գոչուիւն, և պատերազմական գործեաց և Թմբկաց որոտումն, փոխանակ զերեզք վախցընելու, այնքան աւելի կատղեցուցին բորբոքեցին, որ Արաբացւոց բանակէն քանի մը հարիւր քայլ հեռի՝ Թողուցին ոչ միայն երեսնց բեռները, այլ և ձիանքը. հեռւաւոր աւելի ազատ և համարձակ կրնային հայկական սղեխները քարշել հեռուէն, ու մօտանց Թուր ու նիզակ չարժել։ Երկայն ձամբուն յոգնութիւնն այլ չէին ուզեր մոխիր ընել, եթէ գիշերուան սեաւ վարագոյրն երկու բանակաց մէջ չկախուէր։ Անոր մէկ կողմը 30,000 սպառազէն Արաբացիք, մեկայլ կողմն 5000 հեռւակ Թեւաղէն Հայք անցուցին, ինչ հոգաւ, ինչ մը-

ուածուԹեամբ՝ ապրիլի 24էն 25 մանող միջոցը, կրնայ գուշակուիլ քան Թէ գրուիլ: Աւաւօսան հազիւ Թէ ծագեց՝ Հայք անհամբերուԹեամբ նեւռուեցան բազմուԹեան մէջ, սասակ կոտրած մը ըրին, սրընԹաց հեծեծանքն մէկ մասը հալածեցին հեռացուցին. բայց վերջապէս իրենք այլ յօդնեցան: Արաբացիք սրամտեալ և զանահար յետ դարձան, Հայոց նախարարներէն մէկ քանի՝ (որ ռամկին պէս հեռուակ չէին) քշեցին իրենց ձորտերովը. Հայոց ռամիկն այլ, յետ քաշուեցաւ. այն առեն Արաբացի հեծելոց եկաւ վրէժխնդրուԹեան կարգն..սկսան կոխկրտուիլ դէմ դնող հեռուակ Հայերը: Առանք իբրև երկայնաձիգ ալիք՝ աւելի մեծ և երկայն ալիքէ մը ծածկուեալ Թաղուեալ առեն, վերջին անհնարին ձիգ մ՚այլ ըրին. յետին յուսահատուԹեան կամ յուսոյ ձայն մը վերցուցին. իրար վերար կանչելով և սիրտ առնելով. « քանի որ Թևերնուս վրայ » դեռ քիչ մը ուժ կայ, կ՚ըսէին, պէտք է Թափենք մեր հայրենեաց և եկեղեցեաց վրայ. ոչ » ոչ երես դարձընել և յետ դառնալ՝ անկարելի » ըլլայ մեզի. մեռնինք զէնք ի ձեռին, քան վա» խրատեամբ ապրինք »: Եւ արեւնոտ աչուընին մէկ մը երկինք առնելով, մէկ մը Բագրեւանդայ պաշտպան Ս. Յովհաննիսի, կանչելով ու գոռալով՝ նորէն յարձակեցան, և անգամ մ՚այլ իրենց մէջ մեծ և ուժով աղեաց վրայ եկան. միայն հազար հոգի մնացեր էին միագուռնդ՝ երկու երեք բեւրուց դէմ, զոր վերջին անգամ մ՚այլ քշեցին: Իսկ առնք այնպէս զարհուրեալ շփոԹեալ էին, որ չէին գիտեր Թէ մարդմէ հետ, հրեշտից հետ, Թէ հրեշտակաց հետ կուռ պատերազմին. և իրաւ Թէ ուստ՝ իրենց շփոԹութիւնը ծածկելու համար, յետոյ կուռ պատմէին, Թէ մենք Հայոց պըղպին հետ կուռ առանձինք երկնաւոր զօրքեր, պա-

ալաներ և երէցներ, ոլք աւետարանօք և բուբ-
վառօք կ'առաջնորդէին անոնց: Անշուշտ այսպէս
տեսան ինչուան որ Հայոց վրայ զէնք շարժելու
ոյժ չմնաց: Ան ատեն Թիւն յաղթեց. և երբոր
դիմակաց չգտաւ՝ արաբացի գունդն յաղթական
եղաւ: Տարիէ 'ի վեր անդադար կռուող և վաղող՝
3000 Հայք երեց նիզակաց վրայ երես 'ի գետին
Արածանւոյ ծայրէն մէջ փռռւելով՝ արիւնով
ներկեցին ափրիլէ երանգ երանգ փռռոցը: Հոն եր-
կու բարձր ծառոց պէս ընկան պարագլուխք նա-
հատակացն՝ ինչուան եռքը երեց խոտամանն և
քաջութեան հաւատարիմ մնալով, Մուշեղն մա-
միկոնեան և սպարապետն Սմբատ. անոնց հետ
նաև շատ մեծատոհմիկ նախարարներ, ինչպէս
բագրատունին Սահակ, գնունին Վահան-Գաջ-
նակ, և Սամուէլ մեծ նախարարն Մամիկոնէից,
որ տարօք գեռ երիտասարդ և գեղեցկութեամբ
անուանի, ծայրէն մէջ ծայրիկ, և իր ընկերա-
կըցացն հետ յիրաւի պարծանաց ամեն զարդերէն ա-
ւելի արտառուչ կռւ փայլէր՝ իր վէրքերուն բղխած
վարդերուն մէջ:

Եթէ այն ձգնաւորին քիչ մը արտորնօք տե-
սած և չափած տեսլեանն համեմատ՝ փառաւոր
վախճան մը ընծեցաւ պատերազմին, ասկոյն և
ոչ բաղդատելի ըլլայ անոյշ դառնութեան
առջև, չնկրնար անտես ըլլալ այնքան քաջու-
թիւն, հայրենասիրութիւն, կրօնասիրութիւն
այլ: Բայց ազգանախանձ մտաբանութիւնն ա-
ւելի գովելի կ'ըլլար՝ եթէ ըստ իրաւունն Աշոտոյ
շարժէին պատերազմէն առաջ, կամ պատերազ-
մի առեն. և կամ թէ յետ պատերազմին՝ Արծ-
րունեն Մեհրուժան չապաններ քաջին Մուշեղայ
երկու որդիքը (ոլք երեն ապաւիներ էին), երբ
թէ հայրենասիրութեան եղաւ պատճառ այնքան մարդկան

և իր հարազատաց կոտորածին: Իսկ Արաբացիք որ այն գունդը կոտրեցին, և Բագրեւանդայ դաշտաց վայ անթափ Թուղուցին, ու սկսան ջրա դի աւրել և աւարել, իրենց կորուստները այլ էին կրնար ծածկել, և ոչ լչնել շատ հեղ այնպիսի փորձեր փորձելու: Էմիր՝ իբրև յաղթական՝ ամիրապետին երթալու առեն՝ չարաչար ցաւերով բռնուած մեռաւ՝ ի Պարսկաստան. քանի մը ամսեն ինքն ամիրապետն այլ նոյնպէս վերցուեցաւ. յաջորդ տարին՝ պատերազմին մէջ ընկնող Սըմբատ ապարապետին որդին Աշոտ, սկսաւ նորէն Արաբացւոց եանէն ընկնիլ, և երկիրները ապաւեալ՝ Անի քերդը ամրցուց, որ յետոյ իր ցեղին Թագաւորութեան աթոռ եղաւ. և օր մը աղօթք ընելու առեն՝ Թշնամինէն պաշարուած, աղօթքը չվերցուց, այլ լմանցընէն եան՝ եղաւ զարկած զանոնք, և դիակունին՝ Վիրաւան Աբդլային՝ երկու կառը ըրաւ: Ասկէ եան եկող տասնեակը սկսան զգուշութեամբ վարուիլ Հայոց հետ, մանաւանդ Հարուն Էլ-Րհշիտ, որ ամիրապետ ըլլալէն վեց տարի առաջ (780) Հայոց և Պարսից մեծ տասնեան դրուած էր:

Ահա է Բագրեւանդայ ըստուած կռիւն. զոր կարմիր արձանագրութեամբ նշանակէ Հայադէրն յ'18 ահեւանի (25 ապրիլի) 775 Թուին Քրիստոսի:

10249926

# Ս. ԹԷՈԴՈՐՈՍ ՍԱՂՀՈՒՆԻ

## 11 Մայիս 296.

Ահաւասիկ հասաւ մեզմանկաթն Մայիս, գե-
ղեցկապոյն յերկոտասան հարազատաց տարւոյ,
գոնէ մեր հայրենեաց և անոր նման աշխարհի
մէջ. ուր այս ամիսս՝ հայոցիկը հայկագիր՝ Մա-
յեսի անուամբ հեղինակ նազին կու պարէ՝ և ըլտա-
և՝ և բարձունս, ծոլորովին կանաչ ու գալարա-
պեսա. ձեռքն ու ծոցն, գլուխն ու գօտին՝ փունջ
փունջ գոյն գոյն ծաղիկներով լցուած, ոյք կու Թե-
Թև գալշապարոց կոխած տեղէն կարծես գուրս
բղխեն. արծաթափայլ ալեբաւունք կանչեն կըր-
կըչան. ծաղկափեսուր Թռչնիկք երգեն պարեն.
Թեթևթաթիկ ոչիք և այծեմուռնք սահին տուրան.
հոտաւոր հովիկք և զով զեփիւռիկք ծոպ ծոպ
ծաղերնին ծածանեն, երբ հովտէ հովիտ ցածնա-
լով բլուրէ բլուր ցատքելով՝ անցնին վազէ բամբիշն
բարձանց Հայոց՝ մրապարդն մարելի: Անոր շուա-
կաթ շոգոլի ընչէն՝ ծաղկունքն վառ վառ շողշո-
ղան, պտղունք նայծ նայծ խանձին կարմրին. և
եթէ ձայնն անուշիկ հասնէր ականջիդ..., Ո՛հ,
երկն հայկածնին մարելոյ՝ Հայոց հովասուն
բարձանց վրայ, հարկաւ տարիներ առաջ, երբ իր
աղգն տէր ու ժառանգ էր բոլոր իր աստուածա-

պարգև երկրին, այն առեներան մրապարտ մարե-
րեայ երգն այլ երբեն նման աննման էր. մեր նոր
լսած երգերն՝ ինչպէս ջոր առրև մը վարգի պե-
մաց՝ չէին կրնար կենալ. ոչ մեր գուսաններ և ոչ
օտար երգիչք կրնան անոր արձագանգները ար-
թընցնել բարձր Հայոց պատկառելեաց մէջ. և
թէ ճաշակիկ մը, ձայնիկ մ'ուզեմք երաշել, թեր-
և սիրոյ բնեթելոյ բլուրներէն լսուածն վայելել
մեղրաբերանն մարերեայ. որ թռուի՝ թէ գետ ե-
փրատայ երիտասարդ վառվռներով ծաղկած ծա-
ծուկ ծառիկ մը կ'երգէ. « Ահա ձմեռն անց. ան-
» ձրևք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկք
» երևեցան յերկրի մերում. ժամանակ եհաս հա-
» ռնելոյ. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մե-
» րում. թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք
» մեր ծաղկեալք տուն զհոտս իւրեանց »:...
Անշուշտ եռանդուն սիրտ մը հոս չդադրելով՝ ըզ-
մայլած, հոգեշունչ երգչին հետ ուզէ հրաւիրել
անծանօթ մերձաւոր մը, արբանյան գեղեցիկ մը,
աղաւնակերտ հեզադէմ մը... « Ընդ հովանեաւ
» վիմին »: — Այո, Հայաստան այսօր կու տեսնէ,
կու յայտնէ այդպիսի մը, անծանօթացեալ ա-
նուանքն և տեղեաւ, որ ահա հանդչի ընդ հով-
նեաւ ծառոյն և ի վերայ վիմին. յեսուին և քաղ-
կրտոյն հանգիստ, նախ զհանգիստն յաւետե-
նից:....

Անտաւասիկ նա. նման արբանյան աքանչելի եղ-
բօրորդւոյն, արդարև սպիտակ ու կարմիր է. և-
րիտասարդ մը կու և կատարեալ հասակաւ.
քնութիւնն առիւծու և կերպարանքն աղաւնոյ.
գիտէ մնանչել, բայց ընտրէ ծնչել. իբրև մեծ աշ-
խատանքէ և յերկար վշտերէ եկած՝ անմարդա-
ձայն ձորակի մը մէջ՝ փուռած է մենաւոր ծառի մը
տակ, որ կարծես իր գեղանուաճ ճիւղերովն իբրև
մայրենի թևօք կ'ուզէ պաշտպանել զանիկայ, որ

ալ Թևալ Ձորեզերքին ցցուած քարի մը վրայ դրած է ծառին նետքեւ, և յոգնած գլուխն այլ Թեւին վրայ, ձախը՝ կուրծքին վրայ պարկեշտ պատմուճանին խորշերուն մէջ։ Կարծես ծաղկապաճոյճն մարմրի՛ ի հովիտ և՛ ի բլուր Թափառելով՝ կուվինտուէր այս երիտասարդը, որ ըստ էրախատապարտ պատմչի մը Թոլած յիշատակին, «էր ա» ջքն Թուխ, և գանգրահեր, և երեսաքն խար» տեաշ, և անձամբն երկայն»։ (աչքերն սև, մազերն գուռզ ու գալար, երեսն դեղին ու կարմիր, Հասակն ու կազմուածքն երկայնաձև)։ զգեստն պարզ մաքուր երկայն պատմուճան մը, վզէն ինչուան ծնկուըները և այլ վար։ մէջքը գօտուով գապած։ սրունքն պարթևական սնապանեներով ծածկած։ դեղին դաստակներն կիսաբաց։ ուսին քով մէկդի Ձգած հայկական եղջերաձև խոյրն։ Ճրտուանց ամենևին անհոգութեան կերպ, ներուսանց անհնարին հոգի մը, որ երբեմն երբեմն բացխըփիկ ըրած երկու սև ադամանդ պատուհաններն կու յայտնուի։ պահ պահ յանկարծ սև ամպի ջուքի պէս բան մը բոլոր երեսէն սահելով անանկ խեղճ ու ցաւագին երևոյթ մը կու տայ, որ կարծես Թէ քովի ձորակին վազած վտակին պէս՝ իրեն համար բոլոր աշխարհ կ՚անցնի, և կրնայ ըսել ինքն այլ իբրև գԱՀՐն ցաւոց, Թէ «Տրտում է» անձն իմ մինչև ցմահ»։ այլ ջուռով ամպի տակ եղած բարկ արևուս ձառագայթի պէս լոյս մը կու ծագէ դէմքին վրայ, պանչելի հանդարտութիւն մը բոլոր անձը կու պատէ։ կու խփէ երկնաշար Թարթափքը, և այնպէս անուշակ ու Թեթև քունի մէջ կ՚երևայ, որ դարձեալ կարծես լսել իր մեղմիկ շընչէն, Թէ «Ես ննջեմ և» սիրտ իմ արթուն կայ»։ Ո՛վ քուն ցանկալի քան զարթնութիւն. ով հրաշալի հանդարտութիւն. ով հանգիստ անբծութեան, ով սիրուե-

10249926



Թիւն անարտուամ. զեփիւռ, ծործոր, բոլոր գարնան զեղեցկութիւնն կու թուի իրեն հետ լռել ու մրափել: — Ո՛հ, Հայկակ, թէ գիտէիր այս միայնութեան պատճառը, այս քնոյն պէտքը, թէ գիտէիր անոր յայտնելու յետին արթնութիւնն, անշուշտ փափագէիր որ գոնէ Եփեսեան մանկանց չափ երկրնուր այդոր քունն, կամ թէ նոյն իսկ կենաց յետին քունն այլ հասնէր շուտով խաւնուէր անոր. անզգալի կերպով շունչը առնուր վեր քաշէր, և գիմայնիս Թորոսը անտրիւն նահատակի շուշանագոյն մարմին մը, Թաւալած 'ի մէջ մանուշակաց և ալբրանց-ա-րեանց:...

## Բ

Բայց ո՞ր երկիր մեր. ո՞ր է այս անծանօթ ձորակն, անծանօթ երկիրն, և ո՞վ այս անունն է-րևոյթ: — Մինչ կամաձև մուգ ապառաժիջք և գլուխ աշխարհագիրք, (և մանաւանդ մեր բազմերախտ պատմահայրն և աշխարհագիրն Մովսէս Խորենացի, որ բոլոր Մեծ Հայոց 200ի չափ գաւառները մեկիկ մեկիկ համրեց) նշանակել մեզի Կոպէոյ երկիրը, Սալահունեաց գաւառը, Սուրէնաշէն աւանը, Պարնէնէց գղեակը, և այն սքանչելագեղ Սեղէխոփ ձորակը՝ ուր այսօր կու հրաւիրէ գմեզ Հայապէրն, Եփրատայ քարձր հոսանաց եզերքը, որ Կարինէն իջնելով 'ի Դերջան գաւառ, անտի կ'երթայ Եկեղեաց (Երզընկա). և այս երկու յետին գաւառաց միջոց դար-վար երկիրն է մեր փնտռածն, որ կերպով մը որչափ անծանօթ է՝ այնչափ այլ ծանօթանալու առաւնութիւն. կ'լսուի նաև Կորդուաց երկիր, Հայոց ուրիշ հեռաւ աշխարհի և գաւառներու անուանակից. Թերևս անոնց նմանն կորդ, խորաուբորտ երկիր

10249926



մ՚ըլլալուն համար, կամ քնահիչքն նոյն տեղէն եկած ըլլալուն համար. կ՚ըսուի և կոպէոյ էշին՝ յանուն կոթեր ասանի. կ՚ըսուի յատկապէս և առաւել հայապէս Սալհունեաց (կամ Սալհունեաց նեաց, Սահլունեաց) գաւառ, որոյ մէջ էին վերոյիշեալ շէնք և տեղիք, և քանի մ՚ուրիշ այլ, զոր յիշէ հայադիրն և լաւ հիմիոս աշխարհագրողն Թիւնն: Ան յս տեղերուս հնագոյն և մէկ հատիկ և մեզի հարկաւոր յիշատակն՝ ասկէ 1500 և աւելի տարի առաջ կ՚ելլէ. այն տարիներըն՝ որ քաղաքական մեծութիւն մ՚այլ կու պատէր ըսելու մեր աշխարհը, երբ սասանեանն Արտաշիր պարսիկ՝ Արշակունեաց Թագաւորները հալածեց ՚ի Պարթևաց և՚ի Հայոց և բանաբար տիրեց մեր երկրին. ուսկից հեռացեալ պատանին Տրդատ՝ Հռոմայեցւոց քով կու մեծնար, և կու պատրաստուէր քաջութեամբ տիրելու հայրենեացը. իսկ նախարարք Հայոց՝ ոմանք հնազանդէին բռնաւորին, ոմանք այլ իրենց երկիրներուն ամրութեանց վրա տահացեալ՝ կու սպասէին իրենց օրինաւոր տիրոջ: Ասոնցմէ մէկն էր Սալահունեաց գաւառին տէրն այլ՝ Սուրէն, որոյ ցեղապետութիւնն մեծ էր, այլ այսչափ յիշուած՝ որ Թագաւորական ցեղէ էր կամ ինամի, ինչպէս անուանէն ալ կրնայ գուշակուիլ. իր անուամբ աւան մը շիներ էր, Սուրէնաշէն, յետոյ Զուրէն կոչուած, մօտ ՚ի հին բերդաշէնն կամ գղեակն Պարկենիոյ, որ յետոյ Բերդոան ըսուեցաւ, և անուանէն կ՚երևի որ շինած էր լերան մը կող, որոյ վրայ կայր բերդն, և շինուղքն էին Պարթեւանք կամ Թերևս Պարթևք: Ան երկիրս գրեթէ Մեծ Հայոց արևմտեան սահմանագլուխն է և մօտ Փոքուն Հայոց ու Յունաց բաժնին. ըսել է՝ Հռոմայեցւոց իշխանութեան, ուր այն տեղն ինչուան այս կողմերը նուաճած էին: Յունաց սահմանակցութեամբ կ՚երևի թէ

10249926



Սուրբն յոհնական ախորժակները այլ ուներ, իր անուան համեմատ սուր բարքը կակղցընելու համար. և ի'երևի թէ տիկինն այլ յոհնազգի էր, Սոփիա[1] անուամբ որ է Սէրէն, (Ալաւիթի քան յոհնաց), եթէ հայկական ազա՛ կամ ազա՛նի անունէն առած չէ, կամ Զալումհի անուան թարգմանութիւն մը չըլլայ (իբր յոհնարէն ազա՛, զարմանալի). և այս թերևս իր բնաշնորհ գեղեցկութեան համար կամ անոյշ բարուցը, որով աւանուած էր. իրենց սիրոյն պատուղն այլ վկայէ որ 'ի շնորհս մօրն և յոհնական մերձաւորութեան՝ կոչուեցաւ Աւրէնոպոլոս, որ նշանակէ Տուքք Աթենասայ, իմաստութեան դիցուհւոյն. գեղեցիկ անուն, որ ոչ այնքան ծնողաց ընական ճաշակը կուցոյցընէ, որչափ ծածուկ շնորհաց ընտրութիւնը. որ 'ի հեթանոսութենէ կանչելով զինա 'ի լոյս ճշմարտին՝ ապա Աստուածատուր անուամբ կընքեց:

## Գ

Պաղից առաստութեան ամառոյ մէջ ընծայեցաւ Աթենոդոր յամին Քրիստոսի 269, կարճ հօր արհամարհ որդի, և գեղեցիկ ու գարշալի մօր՝ գեղեցիկ և գողտրիկ զաւակ. աճելով առաւ այն հասակը և կերպարանքը՝ զոր տեսանք Սեղեմնուսի ճորակին մէջ քարին վրայ հանգչած երիտասարդին վրայ: Բայց տղայութեան հասակէն վեր անցնելու առեն, երբ գալար մրտենուոյ մը պէս չիտակ կու բարձրանար կարմրուկ ու գանգրուկ, և ոպնիազեայ սև աչքերն անթարգմանելի փայլունութեամբ մը կու վառէին, այն վտանգաւոր հասակին շատ հեղ նախանձոտ հիւանդութիւն-

1 Յոր. Աղուիթոս կամ Տղվիթոս:

10249926



նեերէն մէկն եկաւ վրան. տաճարուհիոց տարեկան էր, երբ աստեղանման գեղեցկութեանց մէջ ցաւոց և վիրաց ամպեր ցրուեցան, և վէրք անբժըշկելիք, որք որդւոյն մարմնէն աւելի ծնողաց սիրտը կեղեքէին. Թէպէտև, երբ ցաւերուն ազդած հեզութիւնը բնաւորը շնորհացը հետ խառնեցաւ, Աթենոդոր՝ իր խարտեաշ գլուխը մօրը ծընգաց վրայ դրած, և ձեռուընեն հօրը ձեռաց մէջ հանգչէր, կիսաբացիկ կիսամոլձիկ շրթակաթ աչքերուըն, տարակոյս կու բերէր՝ Թէ այդ ցաւագին մրուըքն՝ իրեն աւելի շնորհք բերած են Թէ տարած. այնքան լուսաւոր կերպարանքն էր խաւարած, այլ բարակ շուքերով խառնուած: Թէ և նոյն իսկ ցաւերն զինքն աւելի սիրելի ըրին ծնողացն և ծնողքը իրեն, սակայն կրնաւր հայրմը՝ իր պայազատը, իր ծերութեան յոյսն և յաջորդը, և մայր մը՝ իր սիրելագոյն ծնունդը՝ այդ տարակուսի մէջ տեսնել, և սիրոյն աստակուծ Թեանը կսկիծն այլ աւելի տաժանիկ չըզգալ:

Սուրենի զբօսանաց և Աղուիթայ զարդարանաց ծախքն՝ մեծաւ մասամբ բժշկաց և բժշկական գարմանաց տրուեցան. ինչ որ հարուստ նախարար մը և որդեգրով ծնողք կրնային ընել՝ եղան. բայց զաւակին չիբժշկեցաւ. չմնաց աստուած՝ որոյ ոտքս և նուէրք և զոհ չմատուցին, բայց Աթենոդոր չըռնացաւ: Եօթն տարի, կենաց առուգագոյն տարիներն, հասակին աճման և ձևացման տարիներն, հիւանդութեամբ և ցաւերով անցան, և ցաւերուն անցնելու յոյսն ալ գրեթէ մեկտեղ անցաւ: Եւ երբ առողջութենէ յուսահատած՝ երկար ողջութեան մատծմունքն առաջ կու գար, երբ կենաց փափուկ թելն՝ որոտած մրրկուած երևար ծնողաց աչքին, և անգութ կարողին մկրատն կու մօտենար մօր մը դիմաց, և երբ դալարագեղ հասակին միջակոտոր

ծառի մը պէս՝ գետին տարածուած տեսնըլէր կասկածոտ մտաց. — ո՜հ, այս՝ ամեն ցաւէ ցաւալի էր:... Բայց լռենք, գուցէ զուր տեղ հին և նոր սրտեր ճմլին:... Ախտիկի ցաւոց վրայ մէկ զօրաւոր լժիշկ և դեղ մը կայ. — կ'ուզեմ, ով կարօտեալ. — չորս մատ աչուընիդ վեր վերցուս, կ'իմանաս, կուտեանես:... Բայց ինչ ընեն անոնք՝ որ զուրկ են մեր սուրբ կրօնիս շնորհքէն: — Դեռ կէս երանի անոնց այլ՝ որ գոնէ բնական լուսով կրօնասէր են և բարեսէր. և ապնիւ սրտի և մաածոյ գլխի տէր ըլլալով՝ իրենց կեանքը մարդկօրէն կ'անցընեն, և բարեպաշտութեամբ կուսանան կամ կուս վայելեն այն բարիքը՝ զոր քնութիւնն իրենց չէ տուած կամ չեա է առել:

Ախտիկի մէկ մ'էր և Սալուխիա, թէ և դեռ քրիստոնէութեան շնորհքէն զուրկ, այլ ոչ հեռու: Իր երկիրնեերուն մէջ լուծ մը կար Սէնեբոցն ըսուած (որ յունարէն լսուելով՝ գուցէ Թզենուտ կամ Թզապարտակ նշանակէր հայերէն), զոր հիմա չենք ուսաներ աշխարհացուցի վրայ, բայց պէտք էր բառական ընդարձակ ըլլալ՝ որ Սալուխիա անոր եղերքը աւան մը կամ գեղ մը չիներ, իրեն պըտուղ տուն և ապարանքներ ու պարտէզներ. և շատ հեղ հոն քաշուելով իր գառնուկ պատանեկին հետ, բնութեան գեղեցիկ տեսարաններով՝ իր և անոր ցաւերը մեղմէր. և ո՞ գիտէ քանի երկայն ժամեր՝ վայրկեաններու պէս կ'անցնէին այն ծխածածան ծովակին եզերքը, երբ Աթենոդոր դալար վարդաթերփին պէս գլուխը մօրը կըռթընցուցած, և նա իր վարսաւոր ճակատը՝ բարակճիւղ ուռենւոյ պէս ոլորուին վրայ կախած, մէկ մը ջուրերուն հանդարտութեանը կունայէր, և սրտին բոլորքաց կրակներն՝ այն երկու պայծառ գովութեանց մէջ կու մարէր: Հոն մեկայլ կող-

10249926



մը՝ չինած փեսային դիմաց՝ աղբեր մը կար, պատ-
շաճ և անոյշ անուամբ Աբբենոպ, որ աւելի ա-
նոյշ խոխոջալով կ'իջնէր կու գար՝ Թերևս խաո-
նաւելու նոյն ծովակին ծոցը, ինչպէս Ամենոտոր
իր մօրը գիրկը. անատրակոյս շատ հեղ Աղուխիա
այդ աղբեր վազուկ արծաթները իր ոսկեհատիկ
որդւոյն ցաւած մասանց վրայ դարձուցեր, լուա-
ցեր ջնջեր էր. Ամենոտոր անոր քով հաւաքեր
դրեր էր մարերեայ գուենափոյն ջոյտերը, յաւաչ
քան փուռնչ փուռնչ ընծայելու իր մօրը, որ միշտ
մայրաքար՝ Թէ իրեն և Թէ իր որդւոյն մաս և պը-
ատակ կու հանէր այն մարգարտահագ ծաղկընե-
րէն: Որդւոյն ցաւոց վրայ գորովելով՝ կու յիշէր
անոր պէս ցաւագարներ. մանաւանդ երբ կու
տեսնէր զոհանա անունցմէ, որք լսած բարերարու ս-
րինաց հեթանոսութեան, հալածուելով 'ի չինից
և 'ի բնակութեանց, ամօյն անբնակ տեղուանք
կու Թափառէին, իբրև նզովեալք և անիծեալք.
այս սովորութիւնս կար նաև մեր ազգին մէջ այլ,
զոր յետոյ շատ իմաստով չանացին ջնջել Ս. Լու-
սաւորիչն և իր հաստատուն տուրք Մեծն
Ներսէս. չէնքերէ հեռու տեղուանք հիւանդա-
նոցներ և ուրկանոցներ (բորոտանեաց տեղ) շի-
նելով, որք և այդպիսի բարերարութեան տեղեաց
մէջ հնագոյններն կու սեպուին. բայց իրենցմէ ա-
ւաջ այլ այս ազնուասիրտ տիկինս Աղուխիա
Աբբենուս աղբեր քով չինեց տաճարելոց պա-
տրաստարան մը, ուր ժողովեցան 35 ցաւագարք,
և գիտասիրտ Աղուխիայի տուրքերովը կ'ապրէին,
և կ'օրհնէին իրենց բարերարը:

Ատոնց մէջ էր և Դաւիթ կամ Դաւիկ ծերու-
նին. որ, ինչպէս Աղուխիա անոնց մայր տեղուե-
ցաւ, ինքն այլ հայր եղաւ Թէ անոնց և Թէ նոյն
ինքն Աղուխիայ և Ամենոտորայ: Ատաչ՝ անոնց
մէջ իր պատկառելի հեզութեանովքն և արծաթա-

փայլ երկայն մօրուաքն՝ Տէր դից կամ վահագնի քուրմ մը կարծուէր, որ քաղցր շրթամբքն ա-ւելի քան ոսկեթել քնարով աւետնուն սիրտը կակղնելով, եթէ ցաւերնին չկրցաւ բժշկել, գո-նէ բնութեան բարիքներէն ու վայելչութենէն սկսելով՝ այն ահաւիկ ցաւագնելոց միտքը բարձրա-ցուց ինչուան առ բնութեան տէրն. և երբ հա-ստաց յարմար վիճակի, հանեց յայտնեց իր ծած-կած հովուական սրինգը և նոր նուագ մը երգեց. զամենքը ափշեցուց, զամենքը զմայլեցուց, զա-մենքը հեաւեցուց իրեն. այս նոր նուագս՝ նա-զով-րեցի հովուապետէն սովրած էր, անոր վարդա-պետութենէն էր, Քրիստոսի աւետարանն էր: Ծերունին Դասիկ գաղտուկ քահանայ էր. իր ընկերաց հովիւ եղաւ, մարմնոց ցաւերը թեթև-ցընելով՝ հոգիներուն մեռելութենէն անգամ ող-ջընցուց. դարձուց զամենքն՝ ի քրիստոնէութենէն. և ցաւոց ու փշոց մէջ՝ հոգեզուարճ վարդանոց մը, դրախտ մը բացաւ, ուր՝ այն աշխարհքէ մոռ-ցուած և մերժուած տառապեալքն աւելի եր-ջանիկ ու արտաքոց էին, քան իրենց երկար գերու-թիւնը Թօթոուղ ու Տրդատայ յաղթական դար-ձով փառաւորեալ դիւցապաշտ Հայկազունք:

Աղուիթա և Աթենոդոր այլ լսեցին Դասիկ-ան և Յիսուսի ձայները, և արտերնին թողուց. և թէ ոչ աւազանին ջրով՝ գոնէ սիրով ներսէն մկըր-տուեցան, և սիրով կ'երթային ծածկաբար տուրբ ծերոյն աւետարանութիւնը լսելու, որ յոնա-րէն կու կարդար տուրբ գրքերը և կու բացատ-րէր չհասկցուցից: Մինչդեռ հոն, իբրև աբեղա-կան սեղանէ մը՝ տուրբ կրօնից նուէրքն, ալօթք և զոհն՝ հեզօրէն կու բարձրանար առ Աստուած, դիմացը աւանին քով հեթանոսաց մեհեանները կանգնուած՝ կու հրաւիրէին զառուղջ և զհեւանդ՝ ի զոհ և՝ ի պաշտօն Հերակլի (Վահագնի) և Աս-

10249926



կլեպեայ՝ առողջութեան չաստուածծոյն, որոց ոճնքն մանաւոր հանդիսիւ կատարէին հոն առ ըուէ աարի: Բարեմիտ կամ Թերամիտ քուրմք և ժողովուրդք մեծ ջանքով կու յորդորէին զԱթենոդոր նոդոր այլ՝ որ գայ այն մարդասէր աստուածնեըէն բժշկութիւն ինդրէ. բայց նա միշտ պատրուակներով կու զգուշանար. ինչուան որ հայրն այլ տեսնելով որդւոյն չափահաս տարիքը, որ քսանը անցուցեր էր, կու խրատէր որ անհոգութիւն չընէ. «այս վեց տարի է կ'ըսէր, որ մեր » աստուածոց զոհ չես ըրած, Թերևս անոր հա» մար այլ ցաւերդ կ'երկընան». իսկ Աթենոդոր՝ նոյն իսկ ցաւերը պատճառ կու բերէր զոհի չերթալուն. և ոչ միայն վեց՝ այլ և կրկին վեց տարի խաբեց հայրը, և ձարտարութեամբ ազատեցաւ: Հաւանական այլ է, որ Սուրէն իբրև գաւառապետ մը և Թագազարմ, երբ լսեց Տրդատայ գալն ի Հռովմայեցւոց, փութացաւ դիմացը ելլելու, և արքունի բանակին մէջ էր, որ՝ (իր երկրին՝ Սալահունեաց մօտ) Եկեղեաց գաւառին մէջ գայլ գեղոյն եզերքը գտած էր:

## Դ

Գանի մը տարի այսպէս անցնելէն ետև՝ օր մը Սուրէնաշէն աւանն լծնդաց զինուց ջուխով. Թագաւորական գունդ մը զօրաց ելևւցաւ, որոց առաջնորդը իշխանն Մազենա. աւանք Եկեղեաց երէց աւանէն գալով և դէպ յԱրտաշատ երթալով ի հին մայրաքաղաքն Հայոց, կ'անցնէին Սալհունեաց գաւառէն, որ ճամբուն վրայ էր. ոչ պատերազմի և ոչ պաշտպանութեան համար էր երթալին, հապա յանցաւոր մը, կապուած մը, Թագաւորին անհնազանդ մը կու տանէին,

սէրուելեան դէմ պարտական գտուած մահա-
պարտաց ամենէն սաստիկ բանալը ձգելու, որ էր
Արտաշատ քաղաքին գեանափոր վիրտակը. իսկ
յանցաւորն այն՝ էր Գրիգոր մը...: Ի հարկէ ա-
մեն դիւէ հետաքրքիրք կու վազէին տեղեկանալու
թէ ո՛վ է, ինչո՛ւ համար է, և երբ լսէին թէ Քա-
ջի արանց Տրգատ Թագաւորի հօրը՝ Խոսրովայ
սպանողին որդին է, ի՛նչպէս ակռանին կրճտեալով
կ՚ուզէին վիրտակը չհասած՝ հոն սպաննել ոչնչա-
ցընել զայն՝ որ քանի մը տարիէ վերջը սիտի ըլ-
լար իրենց խաւարեալ հոգւոց Լուսաւորիչ: Հարկ
էր զօրականաց եկեալանաւորաց հեռացընել վրէժ-
խնդիր ամբոխը, և սպահով տեղէ մը անցընել
կապեալը. անշուշտ աւելի սպահով ձամբայ այլ
չկայր՝ քան մեր ցաւագնելոց պատսպարանին
սահմաններն, ուսկից՝ զգուելով կու հեռանային
այն սուեն առողջութեամբ, քաջութեամբ և ա-
զատութեամբ պարծեցող ժողովուրդն Հայոց.
իսկ հիւանդքն, տկարքն և նեղեալքն՝ համարձա-
կութիւն գտնելով՝ իբրև անկար և կարօտ մար-
դիկ՝ պահապանաց կասկած չէին բերեր: Ա-
յսպէս կրցաւ Դաւիթ իր ընկերներուն և Աթենո-
գորոսի հետ՝ մօտենալ առ սուրբն Լուսաւորիչ,
զորոյ խոստովանողութիւնը արդէն լսած ըլլալով,
և անշուշտ աստուածային ազդեցութեամբ իմա-
նալով թէ ինչ անձն է և ինչ պիտի ըլլայ այն
կապուածն, բերաւ իբրև հովիւ հոտ իր ցաւա-
գար ոչխարները՝ սպագայ հովուապետին ոտքը
ձգեց. և այն սրբազան նահատակին առաջին հը-
րաշքը և ընտրեալը վայելեցին այս նեղեալքս. որք
և առանց նեղութեան և ցաւոց՝ Աստուծոյ փառք
տալով դարձան: Հոն՝ Դաւիթ ծանծկաբար իմա-
ցուց Գրիգորի թէ ո՛վ է հետն եկած իշխանու-
թին, և գաղտ հաւատացեալ ու գեռ անկնութիք
ըլլալը: Սուրբն Գրիգոր քաջալերեց զծեր քա-

հանայն, և պատուիրեց որ առանց վախի առնուա
տանի պատանին իրենց դիմացը՝ արևելեան կողմը
եղած աղբիւրը, (արդեօք Ախբենուան, թէ ու-
րիշ մը) և հոն մկրտելով զԱԹենոդոր՝ անուա-
նէ Թէոդոր, Աթենասայ տուրքն ընէ Սոփոծա-
փոր: Ինչպէս այլ եղաւ. Լուսաւորչի ծածկեալ
ըլլան, զոր հաւատացեալոց աչքն միայն կու տես-
նէին, և մկրտութեան ջուրքն՝ նորէն ծնան այն
կայտառ պատանին, և մարմնոյ ու հոգւոյ ալո
ու բիծ՝ զամենն այլ ջնջեցին. գէմքն աւելի քան
զմանկութեանն պայծառացաւ. հոգին ևս աւելի.
և ոչ միայն գեղեցիկ, վայելուչ, կորիճ, այլ և
ընտրհազարդ և տուրբ, մաքուր, պաշտելի անձ
մը եղաւ Թէոդոր: Երանաշնորհ մայրն այլ այս
աստուածային պարգևաց հաղորդ ըլլալով, եր-
կուքն այլ չէին բաժնուեր Դասկայ քովէն. Ար-
բենուսի ձորակը քրիստոնէութեան ծաւածա-
ծուկ տաճար մը դարձուցին, Հայոց հեթանո-
սութեան վերջին տարիներուն և վերջին ջանքերուն
առեն. երբ Տրդատ դրդեալ 'ի Դիոկղետիանոսէ
հրաման հանէր և հալածէր զքրիստոնեայս՝ իր
նոր տիրած և ընդարձակած տահմաններուն մէջ,
իր հաւատարիմ և անհատապաշտ իշխանքն այլ
նոյն հոգւով իրենց երկիրներուն մէջ հակէին:
Բայց Սուրբն որչափ այլ գիւտանել և վրէժխնդիր
էր, չկրցաւ խմանալ որդւոյն քրիստոնէութիւնը,
զանց անոր անոյշ տալմաերգութիւնը Արբենուսի
խոխոջանաց և Թզենուոյ ծփանաց հետ: Ինչուան
յետ վեց տարիներու՝ ուրիշներն կատածելով և
հանկընալով՝ մատնեցին որդի մը՝ իր հօրը, անվե-
ղութիւն մը՝ անգթութեան: — Իբր անախորժ
քնէ մը արթննալով Սուրբն, այն տաեն իմացաւ
թէ ինչո՞ւ Աթենոդոր չէր երթար վանդակն և
Ակվեպէայ տեղանները զոհելք և պատկառ պա-
տուելու. թէ ինչո՞ւ այնպէս միայնութիւն և տա-

անձնուրէին կու սիրէր որդին՝ նաև յեա բժըշ
կուրեանն, իբրև ուլայուրեան և հիւանդուրեե
յիշատակաց ուվորուրեան մը: Ինչ որ ծուռ հա
ւասքի մը եռանդն, հայրենի գուրե և ուիրական
կամք մը կրնային ընել տալ՝ ըրաւ Սուրէն. վեց
ամիս աշխատեցաւ որդւոյն սիրտը գարձընելու.
իր չափէն վեր այլ խոստմունքներ ընելով, և բո
լոր Սահմանեաց գաւառին ընդարձակ տէրու
թիւնը և փառքը ցուցընելով եռանդուն երիտա
սարդին. այլ ամենևին չկրցաւ ազդել քրիստո
նեայ սրտին: Հայրուրիւնն գարձաւ 'ի տէրու
թիւն, տէրուրիւնն 'ի բռնուրիւն, եղաւ հալա
ծիչ և գահիճ որդւոյն. կարելի խոստմանցն հա
կառակ՝ ամեն կարելի սպառնալիք այլ ըրաւ, և
հասուց պատիժ ու զրկմունք. ակամայ քան կա
մաւոր անգթուրեամբ տանջեց իր սիրքը. սա
կայն չկրցաւ զատել զորդին իր նոր և յաւիտե
նական հօրէն, 'ի Քրիստոսէ: Յետ վեց ամսոց
յօգնեցաւ, յուսահատեցաւ Թշուառ և ոլբալի
հայրն. մեկ հատիկ և վերջին հնար՝ կամ ապրե
ցընելու կամ կորուսանելու՝ սեպեց իր սեր սու
րը. սպառնացաւ ու վճռեց սոսկալի մահ: Թէո
դոր բնաւ չվախցաւ մահուանէ, որ իրեն փափագե
լի հանգիստ մ'էր: Բայց նոր Սանատրուկ մը տես
նել, նոր Կայէն մը, իր հօրը ձեռքը սպանուիլ,
ո՜հ, այս գառն էր քան զմահ և մահերու մահ:...
Աւետ Աստուած. ոչ իր կոչակից կենակից
ամուսնական իրաւունքն, ոչ կնոջական մայրա
կան խանդաղատանքն և գուրն՝ չկրցան ազատել
իր մեկ հատիկը: Գազանացեր էր Սուրէն. աչուը
ներն արիւն, բերանն մահ կու փսխէր. ոչ ոք կըր
նար մօտենալ անոր. սպառնալեաց ժամանակն
այլ անցեր էր. ըլլալքն հասեր էր:

Թէոդոր վերջին անգամ մը նայելով իր կրկին
և մեկմեկէ շատ անուման ծնողաց վրայ, բոլոր ու-

10249926



*դիական և քրիստոսական եղբօր կրակնեռով վա-
ռած արևանման աչքերովը, անոնցմէ զօրավարն
պէս, որ յետ ամենայն զօրականաց՝ քայլ քայլ
կ'լինկնայ զօրաւորագոյն թշնամւոյն առջև, որ-
ցոնքները զապելով, և թողլով այն չէնքը՝ որ եր-
բեմն իրեն ծննդեան տեղ, և ասկէ ետև իրեն հա-
մար ամայութիւն և ունայնութիւն էր՝ քոլոր աշ-
խարհս հետ, Թերևս մօրը դիմաց սարսափելի և
անտանելի տեսարան մը չբանալու համար, եկաւ
գնաց անդադար նետի մը պէս: Ծովակ, ձորակ,
աղբիւրք և հիւանդանոց չկրցան արգելուլ զին-
քը. ամենուն վերջին նայուածք վերջին բարև տա-
լով, և ոմն գիտէ ինչպէս արտին չափազանց ծան-
րութիւնը և լեցունութիւնը Թափելով Դասակայ
գրկաց մէջ, և ընդունելով անկէ անմահութեան
Ճաշակը և կենաց հացը, եղիտասարդական ու-
ժով մ'այլ ցնցելով զինքն և Թափելով սուրբ ծե-
րոյն դողդոջուն Թևերէն և արտասուաթոր մո-
րուքէն, փախաւ գնաց Աբրեհնուսի ձորէն դուրս,
և անցաւ մօտիկ և աւելի անծանօթ անձայն ձո-
րակի մը մէջ, որ կ'ըսուէր Սելեմնուսա. և հոն
եօթն օր վեր վար պտրտելով, Ցեփթայեայ օրիոր-
դին նման, Աբդէմեհէի նման, ինքզինքը հրաժա-
րեցնելով իր ծաղկեալ կեանքէն, իր պայծառ ա-
րևէն, անգին մօր մը արտասուաթոր ծոցէն, կու նը-
էրէր միայն անոր՝ ուսկից կու գան և ուր կու
գառնան ամենայն բարիք և ամենայն շունչք ար-
դարոց. մինչև յօգնած և հանդարտած՝ ընկաւ
փառուեցաւ այն ծառին տակ և այն քարին վրայ,
ուր առանք զինքը առաջին անգամ մեր պատ-
մութեան սկիզբը:...*

10249926




# Ե

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալէդ, կու ձանձրես ով է այդ չքնաղ երիտասարդը. կեցիր հոս պահ մ'այլ, վերջին պահ. վասն զի այլ երկայն ժամանակ չկայ. մօտեցիր այդ անուշ ապառաժ սեղանին քով, այդ Սելեմնուսի սաթեկայ ծառին տակ. ես լսեմ, դու դիտէ և զգա:...

Բայց ահա հեռուն վիշապի խօշիւն մը կու լսուի, աւիւծու մռնչիւն մը. ձորեզերքն վար վարատագալեն սեւ արծուի պէս կու սլանայ կ'իջնայ ծառին վրայ, ծառին նեղքև, քարին մօտ... երկայնժանիք հրէշ մ'է, գազանապոյն քան զվիշապ, քան զաւիւծ, քան զարծուի... Ինքն է, ինքն է, սուսերամերկին Սուրէն... որդւոյն փախստեան վրայ աւելի կատղած և արեան վրիժով լցուած, հին պատեհէն քաշելով ժանգոտ սուրը, և «Ախ դպէս, իմ երիտասարդութեանս երկաթը, այնքան կոտրած թշնամեացդ արեամբ էկշռացած՝ ծերութեանս առեն ինծմէ իմ որդ-» ւոյս արիւնն այլ պիտի ուզէիր թափեցու», ըսելով, կ'առնու, և մոլեգին դիւահարի պէս կ'ընկնի սարէ սար ձորէ ձոր որդին փնտուելու:... Անշուշտ սատանայական ոգին զինքը քաշէր քշէր տանէր, ինչպէս երբեմն զԿայէն՝ ի մահ Աբէլի, կամ ինչպէս անկէ առաջ (ըստ դրախտերգակ քերդողին) ինքնին՝ դժոխոց անդունդներէն ելած՝ կու փնտռէր դրախտին դուռը, որ մեր երանեալ նախածնողքը ձգէ՝ ի մեղս և՝ ի մահ: Այսպէս դիւական թափառանօք վերջապէս հասաւ Սելեմնուսի ձորեզրը, և երբև սեւ արծուի՝ աչքեր-ով բարձրէն ծառին տակ իր փնտուած որսը, հասաւ շուտ ու թեթև անուր վրայ:... Բայց՝ ի հար-

10249926



Թեոդոր հեզասիրտի աչուընները կուս մը քա-
ղաղով, և կուս մը գլուխը վերցընելով...

10249926



# Զ

Ո՞ւր են հիմա մեր մայիսի ծնած ծաղիկունքն, ո՞ւր մնացին մրազարդ մարեբեայ մրգունքն: — Ախպէս, չկայ ծաղիկ հոլածին՝ որ չցամքի. չկայ պտուղ երկրաբոյս՝ որ չթօթափի. ամենայն դալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիտի ըլլայ մնայլ ու խաւար: Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ձիէն այլ զատուի՝ գարձեալ մը նայ անթառամ, և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յարթէ կանգուն ու ճօճուն ծաղկանց: Ախպիսի ծաղիկ է հայրապէն գառնանման կոտորեալ երիտասարդն Թէոդոր, Թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ քարձին տակ՝ օշոշով և մանուշով հիւսուած խոտերու վրայ, Սեղեմնուսի սպասուր ձորակին մէջ. ուր հեզամնչիկ հովիկն խոնարհած կու խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց հետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն դադրեցնէ և պաղեցնէ կարմիր կաթիլները, և գիշերուան լուսագրնաիկն վերէն ծաղէ արծաթափայլ դոզդոջուն ճառագայթները, որք կու մարմրին, շուք մը կու դառնան՝ Թէոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով: — Ախ լոյն անշուշտ առաջնորդեց այն մարմինը մեծցընող և գգուող և հիմա զինքը սպասաթուռնդ վիճաւոյ անձի մը, մօր մը:... Չառնենք, չքննենք մենք այն մայրը Սեղեմնուսի մէջ:— Դու այլ գարձիր մայրիկ, գարձիր Աղուիթա՝ առ Դասխոս, և հրաման տուր. «Եա՛լ, հայրիկ, եալ գնա 'ի Սեղեմնուս, հոն կու գտնես իմ հայրապէն գառնուկս, իմ մրրկաթափ վարդենիս, իմ նուաստ ծաղիկս. ան ու լուս այն արշալոյս ճառկասը. բայց կիսալուսոյ ըլլած՝ բեր ինծի փունջ

10249926



մը ոսկեթել մազերէն, որ գլխուս վերչին պատկ ընեմ. լեցուր այն շուշանացեալ ցրտութիւնները մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կտաւներով գոցէ, գոցէ այն արևակերպ դէմքը, զոր քիչ առեղծն ալիսի առանեմ յերկինս. և գիր ծածկէ՛ի ծոց ամենուս ծնողին, հոգւոյն»: — Գնաց գեանամած ծերունին, հեան առած Թէոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեաներ, հաւատացեալ եղբարք և քոյր, պարկեշտ կուսանք, որ քոյրով և մորով արցունքներին ծածկած, և բոցաշունչ ճրագներ բռնած յուղարկաւոր կ'երթային Թէոդորի: Արդեօք կայ՞ն առնոց մէջ, կամ կայր մէկ մը՝ որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետ անոր մօրը կանչելու զինա՝ իմն Թէոդոր. — պատմութիւնն կու լռէ:...

Քահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին նեղքև և այն սեղանացեալ քարին քով՝ փորուեցաւ եռանդուն երիտասարդին քնարանն, և ծածկեցաւ մարտիրոսի մարմինն: Անարուեստ պարզունակ քարակոփ խաչ մը վիայ կեցաւ նահատակութեան և հանգստեան սրբոյն Թէոդորի:

Թող գայ հիմա Ալուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ: — Ահաւասիկ երանելի տիկինն, ծառէն աւելի մազերը ցրուած՝ փուռած Հակատ՝ի գետին: Իբրև կրկին մուք սոլոմոնեան դատարանին, հոն ու Ալուիթա կու գրկեն ու իմն է կ'ըսեն այս որդեակս:... Ինչ մ'այլ ապաւէն Ալուիթա, և ահա Թագաւորն իտալացւոց՝ իր ցանկալի վէիսը կու սպայ, և յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու Թէոդիկ:

10249926



# Է

Իսկ հայրն... քա՜ւ լեցի, ամենևին անարժան այնպիսի անուան. գազանացեալն, դիւամոլն կամ դիւաբեան Սուրէն, իր սատանայական սուրը ա֊ռած՝ և եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ. սելերն կու փախչին և ինքն նմանէ չի կըրնար հեռանալ. Գոչեցին արեան որդւոյն բո֊ղոքէ յերկրէ և յերկինից: Հեզիկ գառին ա֊բրին հինա երկնաւոր նահատակի ահաւոր մա֊ահունք գարձած՝ սուրին վրայէն Սուրէնի սիրտը կու պատռատէ. կու փուլթայ խելացնորն՝ մօտի ազբիւրը, ապէկ մը կու լուայ կու չնչէ որդւոյն յեան նշանները, և անով իր և անոր միջի կապն՝ յաւիտեան կու չնչուի: Զորս տարի այն գառնա֊գոյն դահճին, խղճի խայթուածքներուն մատ֊նուած, Սուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցընելով, անզեղջ և անյոյս կատապաշտ մըլ֊րտութեամբ մեռաւ. և յիշատակն յանէծս և՝ ի ատելութիւն մնաց:... Իւրածին որդւոյն արեան խուռ եղող սիրան՝ չէզաւ արժանի Աստուծոյ որ֊դւոյն ձայնը լսելու՝ Հուսաւորչի բերնէն, և դառ֊նալու՝ ի հաւատս Թէոդորի՝ համօրէն Հայաստա֊նեայց հետ, որք յետ երկու տարւոյ արժանա֊ցան այս ամենամեծ պարգևիս: — Վասն զի Ս. Թէոդոր նահատակեցաւ յամին 296, այսո֊րուան ամսակէսին (11 մայիսի) 28 տարեկան և 6 ամսական. Սուրէն կորաւ 300ին. Ս. Գրիգոր լուսաւորիչ՝ եկաւ՝ ի վիրապէն յաջորդ տարին (301). և երբ հեռևեալ տարին կ'երթար՝ ի կե֊սարիա՝ Հայոց եպիսկոպոսապետ ձեռնադրուե֊լու, անցաւ սովորական Հասիքէն, Սալհունեաց գաւառէն և աւանէն, որչափ տարբեր 15 տարի

առաջ անցած էին. փոխանակ չղթայէն և կալանաւոր պահապանաց, հիմա Տրգատայ յաղթական կառաց վրայ դրօշած և Հայոց ամենէն մեծ նախարարները ջորս դին առած: Ան չհեղն և ազնուաբարս հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով, իր սուրբ անուանը կու փնտռէր. կանչեց գառաւ ծերունի քահանայն և հարցուց զԹէոդոր. Դասիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցերցուց այն տեղը՝ ուր որ վեց տարի 'ի վեր կու քնանար անոր հրամանաւ կըն-քուածն: Ի՛նչ կենդանակերպ արտասուքներ էին որ Հուսաւորչի մը աչքերէ կիյնան հայրաբար սուրբ երիտասարդին նշխարաց վրայ, որ իր քրմանց առաջին պատուն, և մեր լուսաշնորհաւոր անդրանիկ նայրիքն էր. անոր համար և առաջին վկայարան՝ յետ Հռիփսիմեանց նշխարաց ամփոփման, Թէոդորի հանգստարանն եղաւ. ինքնին Գրիգոր դեռ չձեռնադրուած՝ կանգնեց հոն մատուռ մը, և երբեմն երախայ յանձնածը՝ հիմայ սուրբ վկայ մը յանձնելով Դասիոսի՝ գնաց: Եւ երբ ցանկալի տաճարին իր ճակատը բարձրացուց դէպ յարևելք, ալեկոծմեան անկիւնը հանգչեցուցին սրբոյն մաքուր նշխարքը. մեկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ դրին այն սըրբեալ քարը՝ որ մեր գառին զենման սեղան եղաւ: Ան երկու սխրալի սրբատաշ քարանց մէջ էր անկէ եառ՝ Աղուիթայ սիրելագոյն հանգստարանն, որ իր որդւոյն մատրան ապատաւոր ըլլալով երբև հաւատաւոր այրի մը, երկնախառն կեանք մը անցուց հոն. այլ ոչ երկայն ժամանակ: Որդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը, երբ հասաւ տարեդարձ անոր վերջին անգամ իրեն համբոյր տալուն և անէն փախչելուն, նոյն օրը (3 մայիսի) Աղուիթա, որպէս թէ դարձեալ զգալով այն ցաւալի կիրքը և որդին փնտռելու եկեալ՝

աւանդեց ազատնաշունչ հոգին. և Ճգնաւորն մարմինն Թաղեցաւ իր սրտեկին դիմաց՝ տաճարին դռնէն դուրս: Այդր և աւչի յիշեալ երկու սրբանիշ քարանց նման ջորջորդ մ՚այլ դրուեցաւ՝ Աղուենթայ տապանին դիմաց, տաճարին արևմըտեան կողմը. և նեղքեն հանդչեցաւ Դաւիթ, որ այս սիրուն քան սիրուն հանդիսից մէջ առաջինն ըլլալով հասակաւ, վերջինն եղաւ ժամանակաւ. և ամեն քան կարգեցին կնքեցին եռև, ըսաւ իր սէգկից Սիմէոնին հետ. « Արդ արձակեա, » Տէր, զծառայս քո՝ ի խաղաղութիւն. զի տե- » սին աչք իմ զփրկութիւն ». և հանդեաւ ընդ արդարս:

## Ը

Թէոդորի Թէ տապանէն և Թէ այն սրբանիշ քարէն ուր իր սրտեան կաթիլքն խառնեցան՝ տաբրին լուսէն, շատ հրաշքներ եղան հիւանդաց և մոլեգնելոց վրայ. և ոմանք եղան, ինչպէս կու ցուցնէ երախտապարտ պատմչէն քանակարգութիւնն, յաւազ իսկ քան զչինուածին մատրանն և զդարձն Հայոց ի ձեռն Լուսաւորչին: Հայր. դերն չեսպասեր զմեզ հոս մէկիկ մէկիկ յիշել զանունք. վկայասիրաց Թոզլուքէ հին պատմչին նշանածներէն եօքն այլ եղածները քննելու և իմացնելու մեզի իսկ, որ զայս իրենց ի՚իմացընելք: Եւ եթէ հարցնէ սիրոն՝ Թէոդորի վկայարանը կամ ուխտատեղին, երթայ Եերզնկա, և անցնի արևելեան կողմը և հարցնէ Գորգոս Ս. Թորոս վանքը. զոր արբազան նահատակէն 1140 տարի վերջն այլ յիշատակած գտանեմք ի գիրս՝ « մեծա- » փառ և բարձրատաւոտիւ ուխտ » կոչմամբ: — Հոն քննէ գտնէ և համբուրէ մեր ըղձաւոր շըրթամբք այլ՝ այն հոյակապ սրբանիշ քարերը, և մնաս-

10249926



դիական և քրիստոսական երկու կրակներով վառած արևանման աչքերուն, աննկուն զօրավարն պէս, որ յետ ամենայն զօրականաց՝ քայլ քայլ կ'ինկնայ զօրաւորագոյն Թշնամւոյն առջև, արցունքները զսպելով, և Թողլով այն չէնքը՝ որ երբեմն իրեն ծննդեան տեղ, և ամէն եռև իրեն հայրական սէրոյն և ուշադրութեան էր՝ քոլոր աշխարհս հետ, Թերևս մօրը դիմաց տարապիելի և անտանելի տեսարան մը չբանալու համար, ելաւ գնաց անդարձ նետի մը պէս: Ծովակ, ձորակ, աղբիւրք և հիւանդանոց չկրցան արգելուլ զինքը. ամենուն վերջին նայուածք վերջին բարև տալով, և ոչ գիտէ ինչպէս սրտին չափազանց ծանրութիւնը և լեցուածութիւնը Թափելով Դասակայ գրկաց մէջ, և ընդունելով անկէ անմահութեան Ճաշակը և կենաց հացը, երիտասարդական ուժով մ'այլ ցնցելով զինքն և Թափելով տուրբ ծերոյն դողդոջուն Թևերէն և արտասուաթոր մօրաքէն, փախաւ գնաց Աբբենուաի ձորէն դուրս, և անցաւ մօտիկ և աւելի անծանօթ անձայն ձորակի մը մէջ, որ կ'ըսուէր Սելեմիուա. և հոն եօԹն օր վեր վար պտըտելով, ՅեփԹայեայ օրիորդին նման, Աբդէմաեհի նման, ինքզինքը հրաժարեցնելով իր ծաղկեալ կեանքէն, իր պայծառ արևէն, անդին մօր մը արտասուաթոր ծոցէն, կուներէր միայն անոր՝ ուսկից կու գան և ուր կու գառնան ամէնայն բարիք և ամէնայն չուռնչք արգարոց. մինչև յօգնած և հանդարտած՝ ընկաւ փուռեցաւ այն ծառին տակ և այն քարին վրայ, ուր տեսանք զինքը առաջին անգամ մեր պատմութեան սկիզբը:...

10249926



# Ե

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալդ, կու ձանձես ով է այդ չքնաղ երիտասարդդ. կեցիր հոս պահ մ'այլ, վերջին պահ. վան զի այլ երկայն ժամանակ չկայ. մօտեցիր այդ անուաշ ապառաժ սեղանին քով, այդ Սելեմնուսի սաբեկայ ծառին տակ. ես լսեմ, դու դիտէ և զգա:...

Բայց ահա հեռուն վիշապի խօշիւն մը կու լսուի, աւիւծու մռնչիւն մը. ձորեզերքն վար վարատզեմ սեւ արծուի պէս կու սլանայ կ'իջնայ ծառին վրայ, ծառին նեղքև, քարին մօտ... երկայնժանիք հրէշ մ'է, գազանապոյն քան զվիշապ, քան զաւիւծ, քան զարծուի... Ինքն է, ինքն է, տուսերամերկն Սուրէն... որդւոյն փախստեան վրայ աւելի կատղած և արեան վրէժով լցուած, հին պատեհէն քաշելով ժանգոտ սուրը, և «Ախ դպէս, իմ երիտասարդութեանս երկրէթ, այնքան կոտրած թշնամեացդ արեամբ չկշտացած՝ ծերութեանս առեն ինծմէ իմ որդ-» ւոյս արիւնն այլ պիտի ուզէիր թափեցու», ըսելով, կ'առնու, և մոլեգին դիւահարի պէս կ'ընկնի սարէ սար ձորէ ձոր որդին փնտուելու:... Անշուշտ սատանայական ոգին զինքը քաշեր տանէր, ինչպէս երբեմն զԿայէն՝ ի մահ Աբէլի, կամ ինչպէս անկէ առաջ (ըստ դրախտերգակ քերդողին) ինքնին՝ դժոխոց անդունդներէն ելած՝ կու փնտռէր դրախտին դուռը, որ մեր երանեալ նախածնողքը ձգէ՝ ի մեղս և՝ ի մահ: Այսպէս դիւական Թափառանօք վերջապէս հասաւ Սելեմնուսի ձորեզրը, և իբրև սեւ արծուի՝ տեսնելով բարձրէն ծառին տակ իր փնտուած որսը, հասաւ շուտ ու թեթև անուր վրայ:... Բայց՝ ի հար-

10249926




կէ երկու քայլ մնացած՝ բնաբերաբար կամ ա-
կամայ կամօք՝ կանգ առաւ. հայրենի բնութիւնն
զօրանալով՝ դիւական մոլութեան մէջ անգամ
հիացաւ այն ազանչելի հանդարտութեան և ան-
մեղութեան թափանցիկ քունին վրայ, որուն նը-
ման բան չէր տեսած երբէք:... Ո՛հ. և ինչո՞ւ
չինձգեց սուրը ձեռքէն. ինչո՞ւ չցատքեց ընկնալու,
և հայրական շրթունքները վեր վար բերելու այն
մարգարտաշար վարդերուն վրայ, այն բարակ
քրանահար երեսներուն վրայ. այլ առանց դըպ-
չելու կեցաւ կանչեց կերկերեալ կոկորդով մը՝
« Աթենոդո՛ր, որդեակ »:... Թէոդոր հեզամրափ
աչուընները կէս մը բանալով և կէս մը գլուխը
վերցընելով՝ պատասխանեց. « Հայր իմ »... վեր-
ջին անգամ հօր և որդւոյ անուանակոչութիւնք:
Սուրէն դարձեալ այլայլած՝ հարցուց անոր, թէ
պիտի հաւանի՞ իր կամացը և Թողլով զԿրիտաոս
դառնայ՝ ի պաշտօն կուռց:— Թէոդոր՝ « ես Կրի-
տոսի հաւատացեալ եմ, ըսաւ, և այս հաւատոյս
» վրայ հոս կու մնամ». և նորէն դրաւ գլուխն ի
քարին, խփեց շրթունքը և աչքերը... մինչ բա-
րով արև, կեանք և աշխարհ:— Բայց մէկ ան-
գամ մ՝այլ բացաւ Թէոդոր կիսակէս աչքը և շըր-
թունքը, երբ Սուրէն վայրենի վագեր պէս մէկ
ցատքելով ձգեց ձախ ձեռքը, և որդւոյն երկու
Թիզ խարտեաշ մազերէն բռնելով վեր քաշեց
խնձորակերպ գլուխը, և պարկեշտ պատմուճա-
նին օձիքէն կարապաձև պարանոցն երկընցաւ:...
Ո՛վ հրեշտակային կերպարանք, ի՛նչպէս կ՝այլա-
փոխես:— Իակ Սուրենայ աչ ձեռքէն յանկարծ
փայլակ մ՝էր ջուլաց շեշտակի:...

Հոս միտեալ մեկդի կ՝ընկնան՝ պատմչին գրիչն,
Սուրենի տսկալի սուրն, և Թէոդորի ձեռնակ
վզէն նռնանման ձեղքուած կարմրահաս գլուխն:

10249926

10249926



Թեոդոր հեզասիրտի աչուընները կուս մը քա-
ղայով, և կուս մը գլուխը վերցընելով...

10249926



# Զ

Ո՞ւր են հիմա մեր մայիսի ծնած ծաղիկունքն, ո՞ւր մնացին մրտպարտ մարեբեայ մրգունքն: — Ախպէս, էկայ ծաղիկ հոլաձին՝ որ չցամքի. էկայ պտուղ երկրաբոյս՝ որ չթօթափի. ամենայն գալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիտի ըլլայ մեայլ ու խաւար: Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ձղէն այլ զատուի՝ գարձեալ մընայ անթառամ, և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն ու ճօճուն ծաղկանց: Ախպիսի ծաղիկ է հայրապէն գառնանման երբայրապարտն Թէոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ բարձին տակ՝ օշոշով և մանուշով հիւսուած խոտերու վրայ, Սեղեմնուաի սպասուր ձորակին մէջ. ուր հեզամիչիկ հովիկն խունարհած կու խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց հետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն դադրեցնէ և պաղեցնէ կարմիր կաթիլները, և գիշերուան լուսագրնաիկն վերէն ծաղիկ արծաթափայլ դողդոջուն ճառագայթները, որք կու մարմըրին, շուք մը կու դառնան՝ Թէոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով: — Ախ լոյն անշուշտ առաջնորդեց այն մարմինը մեծցընող և գգուող և հիմա զինքը սրտաթունդ փնտռող անձի մը, մօր մը:... Զտեսնեննք, չքննեննք մենք այն մայրը Սեղեմնուաի մէջ:— Դու այլ գարձիր մայրիկ, գարձիր Աղուիթա՝ ատ Դասիոս, և հրամայն տուր. «Եա՛լ, հայրիկ, եալ գնա 'ի Սեղեմնուա, հոն կու գտնես իմ հայրապէն գառնուկս, իմ մրրկաթափ վարդենիս, իմ նուագող ծիլիկս. ատ ու լուա այն արշալոյս ձայնը կատը. բայց կիսալուայ լրտած՝ բէր ինծի փունջ

մը ոսկեթել մագիլէն, որ գլխուս վերջին պահակ ընեմ. լեցուր այն շուշանացեալ ջրհոսունքները մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կտաւներով գոցէ, գոցէ այն արևահեղոյզ դէմքը, զոր քիչ առեղն ալիսի առեանեմ յերկինս. և գնը ծածկէ՝ ի ծոց ամենուս ծնողին, հոլուն» : —

Գնաց գեանամած ծերունին, հեան առած Թէոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեաներ, հաւատացեալ եղբայրք և քոյր, պարկեշտ կուսանք, որ քոյրով և մորով արցունքներին ծածկած, և բոցաշարժ ճրագներ բռնած յուղարկաւոր կ'երթային Թէոդորի: Արդեօք կայրն առնոց մէջ, կամ կայր մէկ մը՝ որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետ անոր մօրը կանչելու գնա՝ իմ Թէոդոր. — պատմաբանն կու լռէ:...

Քահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին նեղքև և այն սեղանացեալ քարին քով՝ փորուեցաւ եռանդուն երիտասարդին քնարան, և ծածկեցաւ մարտիրոսի մարմինն: Անարուեստ պարզունակ քարակոփ խաչ մը վկայ կեցաւ նահատակութեան և հանգստեան սրբոյն Թէոդորի:

Թող գայ հիմա Աղուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ: — Ահաւասիկ երանելի տիկինն, ծառէն առելի մազերը ցրուած՝ փուռած ձակատ՝ի գետին: Իբր և կրկին մուք սոլոմոնեան դատարանին, հոն ու Աղուիթա կու գրկեն ու իմն է կ'ըսեն այս որդեակս:... Ինչ մ'այլ սպասէ Աղուիթա, և ահա Թագաւորն իտալացւոց՝ իր ցանկալի վճիռը կու տայ, և յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու Թէոդոր:

# Ի

Իսկ հայրն... քա՜ լեցի, ամենևին անարժան այնպիսի անուան. գազանացեալն, դիւամոլն կամ դիւաբեան Սուրէն, իր սատանայական սուրը ա֊ռած՝ և եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ. սելէրն կու փախչին և ինքն իրմէ չի կըրնար հեռանալ. Գոչուճն արեան որդւոյն քո֊ղքէ յերկրէ և յերկինից: Հեզիկ գառին ա֊բիւնն հիմա երկնաւոր նահատակի ահաւոր մա֊սունք դարձած՝ սուրին վրայէն Սուրէնի սիրտը կու պատռէ. կու փոխեմ խեղճացնորն՝ մօտի աղբիւրը, ալէկ մը կու լուայ կու չնչէ որդւոյն յեանին նշանները, և անով իր և անոր միջի կապն՝ յաւիտեան կու չնչուի: Զորս տարի այն գառնա֊պոյն դահճին, իրմէ խոյնուածքներուն մատ֊նուած, Սուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցընելով, անզեղջ և անոյշ կատապաշտ մըր֊րոնթեամբ մեռաւ. և յիշատակն յանէծս և՝ ի ատելութիւն ճնաց:... Իւրածին որդւոյն արեան խռնչ եղող սիրան՝ չեղաւ արժանի Աստուծոյ որ֊դւոյն ձայնը լսելու՝ Կուսաւորչի բերնէն, և գառ֊նալու՝ ի հաւատս Թէոդորի՝ համօրէն Հայաստա֊նեայց հետ, որք յետ երկու տարւոյ արժանա֊ցան այս աւետաւէտ պարգևիս: — Վասն զի Ս. Թէոդոր նահատակեցաւ յամին 296, այս֊րուան ամսակէտիս (11 մայիսի) 28 տարեկան և 6 ամսական. Սուրէն կորաւ 300ին. Ս. Գրիգոր Կուսաւորիչ՝ եկաւ՝ ի վերապէն յաջորդ տարին (301). և երբ հետևեալ տարին կ'երթար՝ ի կե֊սարիա՝ Հայոց եպիսկոպոսապետ ձեռնադրուե֊լու, անցաւ սովորական ճամբէն, Սալհունեաց գաւառէն և աւանէն, որչափ տարբեր 15 տարի

առաջ անցած էին. փոխանակ չղթայից և կալանաւոր պահապանաց, հիմա Տրդատայ յաղթական կառաց վրայ դրօշած և Հայոց ամէնէն մեծ նախարարներն չորս դին առած: Այլ հեղն և ազնուաբարս հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով, իր սուրբ անուանը կու փնտռէր. կանչեց գառաւ ծերունի քահանայն և հարցուց զԹէոդոր. Դասիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցերցուց այն տեղը՝ ուր որ վեց տարի 'ի վեր կու քնանար անոր հրամանաւ կըն-քուածն: Ի՛նչ կենդանակայլակ արտասուքներ էին որ Հուսաւորչի մը աչքերէ կիյնան հայրաբար սուրբ երեսատարփին նշխարաց վրայ, որ իր քըրտանց առաջին պտուղն, և մեր լուսաշնորհուածէ անդրանիկ խայրիքն էր. անոր համար և առաջին վկայարան՝ յետ Հռիփսիմեանց նշխարաց ամփոփման, Թէոդորի հանգստարանն եղաւ. ինքնին Գրիգոր դեռ չձեռնադրուած՝ կանգնեց հոն մատուռ մը, և երբեմն երանեալ յանձնածը՝ հինմայ սուրբ վկայ մը յանձնելով Դասիոսի՝ գնաց: Եւ երբ ցանկալի տաճարին իր ճակատը բարձրացուց դէպ յարևելք, աղաւոլմեան անկիւնը հանգչեցուցին սրբոյն մաքուր նշխարքը. մեկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ ուրկէն այն սըրբեալ քարը՝ որ մեր գառնէն ջենման տեղան եղաւ: Այն երկու սխրալի սրբատաշ քարանց մէջ էր անկէ եաև՝ Աղուիթայ սիրելագոյն հանգստարանն, որ իր որդւոյն մատրան ապատաւոր ըլլալով իբրև հաւատաւոր այրի մը, երկնախառն կեանք մը անցուց հոն. այլ ոչ երկայն ժամանակ: Որդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը, երբ հաւատ տարեգարձ անոր վերջին անգամ իրեն համբոյր տալուն և անէն փախչելուն, նոյն օրը (3 մայիսի) Աղուիթա, որպէս թէ դարձեալ զգալով այն ցաւալի կիւքը և որդին փնտռելու եկեսով՝

աւանդեց ալաւնաշունչ հոգին. և ձգնաւոն մար-
ւին Թադէացաւ իր որդեկին դիմաց՝ տաճարին
դռնէն դուրս: Այդու և առչի յիշեալ երկու սըր-
բանիշ քարանց նման չորրորդ մ'այլ դրուեցաւ՝
Ադաւիթայ տապանին դիմաց, տաճարին արևմը-
տեան կողմը. և նոքաքեն հանդչեցաւ Դաւիթ, որ
այս սիրալի քան սիրալի հանդիսից մէջ առա-
ջինն ըլլալով հաստիւաւ, վերջինն եղաւ ժամանա-
կաւ. և ամեն քան կարպելէն կնքելէն ետև, ըսաւ
իր ալէկից Սիմէոնին հետ. « Արդ արձակեա,
» Տէր, զծառայս քո՝ 'ի խաղաղութիւն. զի տե-
» սին աչք իմ զփրկութիւնն ». և հանգեաւ ընդ
արդարս:

## Ը

Թէոդորի Թէ տապանէն և Թէ այն տըղե-
րէն ուր իր տրեան կաթիլքն խառնեցան՝ տարբին
լուսէն, շատ հրաշքներ եղան հիւանդաց և մա-
նեցեալց վրայ. և ոմանք եղան, ինչպէս կու ցու-
ցընէ երախտապարտ պատմչէն քանակարգու-
Թիւնն, յաւաչ իսկ քան զչինուԹիւն մատրանն
և զդարձն Հայոց 'ի ձեռն Լուսաւորչին: Հայա-
բնակ չեսախէր զմեզ հոս մէկիկ մէկիկ յիշել զա-
նունք. վկայասիրաց Թողումք հին պատմչին նչա-
նածներէն եօքն այլ եղածները քննելու և իմա-
ցընելու մեզի իսկ, որ զայս իրէնց կ'իմացընեմք:
Եւ եԹէ հարցընէ սիրոյն՝ Թէոդորի վկայարանը
կամ ուխտատեղին, երԹայ յԵրզնկա, և անցնի
արևելեան կողմը և հարցընէ Գորգոս Ս. Թորո
վանքը. զոր արբազան նահատակէն 1140 տարի
վերչն այլ յիշատակած գտնեմք 'ի գիրս՝ « մեծա-
» փառ և բարձրատաւոտիւ ուխտ » կոչմամբ: —
Հոն քննէ գտնէ և համբուրէ մեր ըղձալուր չըր-
Թամբ այլ՝ այն չորս արբանիշ քարերը, և մնաս-

10249926



*ւանդ հիւանդային անկեանը. հոն կանգնի և համբուրէ (եթէ պահուի ցարդ) ձուլաքարձ խաչէն մը մէջ դրուած սրբոյն Թէոդորի քակտրաբարբառ յիսուսախօս լեզուն, որոյ համար այլազգիք անդամ, կ'ըսուի թէ այն տեղը կ'անուանեն Սբուբիւը Ս. Թոդոս (եթէ Գոլոփոս կամ Սալահունի անուանէն փոխուած չէ այդ անունը)։ Յանձնեմք իր հետ՝ աշխոյժ և ճարտարարուեստ հաստակացոց Ս. Թէոդորի, գիտել նկարել և ցուցընել մեզի այս պատմութեանս մէջ յիշեալ տեղուանքը. երկու ձորակները, երկու աղբիւրները, ծովակը, ւանները, դղեակները և այլն. – յանձնեմք ա-նոնց վաւերուն մտաց և կրթեալ սրտից և մանաւանդ՝ նուագել և երգել այս պատմութեան և եկեղեցւոյ արժանի և ընտիր դրուագն. – աղաչեմք մեր եկեղեցւոյ գլխաւորաց, իրենց զանազան հոգոց մէկը պահեցընելով կամ մէկ մ'այլ աւելցընելով՝ այսպիսի սիրալի սրբոյ մը յիշատակը չնձգել միայն Յայտաւուրաց Թափթփած Թերթից մէջ, այլ բարձրաձայն հռչակել տալու տուրբ խորանաց վրայ, եթէ արդարև սրբոյն Գրիգորի Լուսաւորչի գործակից և հոգեկից ըլլալն կու ձանաչեն իրենց առաջին հոգ և պարտք, և պաշտամանեք սրբոյ՝ բարձրացընել զփառս Աստուծոյ։*

10249926

# ԿԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ

## 2 Յունիսի, 451.

Արեգական իր տարեկան ընթացից մէջ դեռ չէ հասած իր բարձրագոյն դիտանոցը, կրակաթափ աչքերով նայելու արտրածոց վրայ. դեռ հայկական մրազարդ մարերի կու շարունակէ իր գունաւոր օրերը, մանաւանդ մեր հայրենեաց բարձրաւոտ գաւառաց մէջ. և դեռ այս օրուան նըշանակեալ ամսաթուին (2 յունիս – 26 մարերի) ըստ վկայութեան անուշզրոյց Եղիշէին, « Գարնանային է ժամանակն և գաշտքն ծաղկալից »: Բայց արդէն Արարատայ ցածուն ծաւալ գաշտաց մէջ տաքն կոխած է. և եթէ առաւօտն և երիկուն զով այլ ըլլան, բոլոր օր մը անցընելու համար, Հայկակ, պէտք է նման նահապետին Աբրահամայ փնտռել հով հով սարեր, զով զով ջրեր. « զբօսանս բարձանց և զբօսանս հովտաց »:

Ահա դեղեցիկ ընդարձակ բարձրահովիտ մ'այլ, որ ասկէ 3000 տարի առաջ ընտրուած էր իբրև գերագոյն և հաճոյագոյն հովատան տեղի Հայկազն նահապետաց, անոնց զօրաց և ազատաց, « ուր էին հովոյ գեղին թագաւորացն Հայոց », ըստ բանից հին ազգային պատմչին. որոյ արևմըտեան հիւսիսային կողմին՝ արտրատեան Մասեաց

10249926



բարձրութեան գարնէն գուրանալով գաշտանան. սրևելքէն գեան Երասխ գարտավազ կոչ պատէ, հարաւային կողմէն՝ ոչ շատ բարձր լերանց շղթք կ'անջրպետեան զայն 'ի Կոգայովտէ և 'ի պարտատվէն Վանայ: Ա յս սահմանագրեալ գաշտաւհովիտս լբր 3-4000 ոտք բարձր յերեսաց ծովու, ցածագոյն Երասխայ գաշտին մէջ բնակող Հայկազն նահապետաց ամարանոց եղաւ, Քրիստոսէ 13 գար առաջ, երբ զբօսասէրն և դէպ պատերն Շաւարշ (որպէս ստուգաբանէ Գր. Մագիստրոս) չինեց հոն քաղաքաւան մը, 'ի բնակութիւն ամառուան, և իր անուամբն կոչեց Շաւարշաւան կամ Շաւարշան. յորմէ բոլոր շրջակայ կողմանքն և գաւառն կոչեցան Շաւարշական կամ Շաւարշան. մինչև Քրիստոսի ե գարուն սկիզբը Ա յրաքայէն Սմբատ սպարապետ ե. Արտաշէսի արշակունւոյ՝ Ա լանաց Արդոզ կամ Արտազ գաւառէն պատերազմի գերիներ բերելով, հրամանաւ իր սանիկ Թագաւորին հոն բնակեցուց, և անոնց հայրենի գաւառին անուամբ՝ Շաւարշանն այլ ըսուեցաւ Արփոլ կամ Արփոլական գաւառ. իսկ հիմայ իր անուանի և զարմանալի քարաբերդ քաղաքին անուամբ կ'ըսուի Մակու: Ա յս բնութեան և ա՛րուեստի ընտրած և հրաշակերտ տեղւոյ՝ արքազան և հին զօրութիւն մ'այլ պատուեր, սիրեր, սքանչեր է. — կրօնքն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ խոստոյն խորհրդոց և հրաշափառագոյն հանդիսից տեղ ըրեր է Շաւարշական գաշտերը: — Վերայիչեալ Արտաշէսի հայրն՝ Սանատրուկ, կ'երևի Թէ քան զհինն Արտաշատ և քան զնոր Ձեռակերտ Մծբինն կամ Մծուրա՝ սիրէր զայս տեղս, և իր անունը Թողուց հոն լեռնաբլուր մը վրայ, Սանատրուկ լեառն, որ Թերևս հիմայ Տէփէ կ'ըսուի. ասոր քով եկաւ առաքեալն Քրիստոսի Թադէոս, և աշակերտուց զդուստր Թագաւորին՝

զօրավարդն Սանդուխտ, առաջին կոյս վկայուհի Քրիստոսի, և ընդ նմին նահատակեցաւ սքանչելի վկայութեամբ. որոց յիշատակին՝ Հայաստան աս֊փհականած է քաղցց (դեկտեմբեր) ամսոյն մէջ օր մը: Այս երկուքին վկայարանն այլ՝ (քրիստոնէու֊թեան հնագոյն ուխտատեղեաց և տաճարաց մէկն) կու պատուի մինչև ցայսօր Թոփէի վանք անուամբ, որ և՝ ի պատիւ առաքելոյն՝ Հայոց գլխաւոր ե֊պիսկոպոսական Թեմոց մէկն եղաւ, և՝ ի միջին դարս՝ մի՝ ի ջրից սրբեպիսկոպոսաց՝ որոց հարկ էր գաւազիլ յօծման նորընծաի կաթուղիկոսի: Ա֊ռաջին երեք դարուց քրիստոնեայք, գաղտնա֊պէս կու պատուէին այս սրբազան տեղս, առ ահի հեթանոս Թագաւորացն Հայոց. նախախնամու֊թիւնն այլ մնանաւոր առաջութեամբ կու հակէր անոր վրայ. և ուր Հայոց քրիստոնէութեան ա֊ռաջին արեգակն ծագեցաւ, անոի երկրորդ ան֊գամ ալ ծագել տուաւ զարեգակն Լուսաւորիչ. որ յետ 200 տարւոյ վկայութեան տուրք առաքե֊լոյն և Սանդխտոյ և անոր հօրեքրոջն Աւազուհեայ, անունց նշխարաց հանգստարանին քով իր էու֊թեան սկիզբն առաւ՝ ի ծոց ուրիշ Ոգոհեայ, կնոջ Անակայ, երբ կու գայր սա՝ ի Պարթևաց իբր փախստական՝ խաբել և սպաննել զԽոսրով Թագաւորն Մեր:

Ի՛նչ զարմանալի և աստուածախառն տեսչու֊թիւնք. Հայոց առաքելոյն Թադէոսի Թաւլման միայնարանն՝ Հայոց նոր առաքելոյն՝ Գրիգորի՝ յղութեան առագաստ: Ո՛րքան սքանչելի է Շա֊հարշան՝ մեզ այսպիսի հոգևոր հանդիսից տաճար ընտրուիլն, քան թէ մեր Թագաւորաց հովանոց:

Ահա երկու արքահարհուրդ դիպաց՝ նորա֊կերպ նման մ՚այլ հանդիպեցաւ նոյն տեղւոյն, Խոսաւորչի եղելութենէն 200 տարի ետև., որ թէ քաղաքական և թէ կրօնական կերպարանօք

հուշակեցաւ. և ահա այն դէպքն է զոր նշանակէ Հայադիրն այս ամսակէտիս. որ ամէն տասնևչորս դար առաջ (451 Թուին Քրիստոսի, յունիսի 2) էր շաբաթ օր Հոգեգալստեան ծոմին. յորում հանդիպեցաւ Շաւարշանի երրորդ մեծ ազգային քաղաքակրօն դիպուածն, այն է ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ:

## Բ

Ահա դիպուածս, այս պատմութիւնս, այս ազնուս անգամ այնքան հուշակեալ և համբաւեալ է յոտիս, որ ամենէն քիչ տեղեկութիւն ունողն այլ՝ երբ լսէ ինձ կամ կարդէ Վարդան՝ սրտատրոփ կու ցատքէ. և Թերևս ոմանք ուզեն յանկարծ գոնուիլ ինչուան նոյն արտազական գաւառին մէջ, նոյն Շաւարշական գաշտը, նոյն Ախարայրի գեղին քով, նոյն Տղմոպ գետոյն եզերքը, ուր այն մեծ և բաղդատահման Հակատամարտն և անմահական գործն կատարուեցաւ: Բանայ փափագողն՝ ժամանակակից հեղինակաց, Ելիշէի և Ղազարայ Փարպեցւոյ, գեղեցիկ գրուածքը և մանրամասն պատմութիւնները, և ժամ մը, երկու ժամ՝ անոնց հետ ժուռ պայ հան. հան՝ ուր Հայութեան անկինը, անմոռաց, յաւիտենական արձանագիր մէկն կանգուն կայ և պիտի մնայ: Իսկ ես հետդ, Հայկակ, կալ՝ի կալ ընթացիւք կ'ուզեմ մանն գալ, և քանի մը բան հեռուէն դիտել այն մեծ տեսարանէն:

Կանխենք ուրեմն քան զմեծ գործողութիւնն՝ գոնէ օր մը, գոնէ գիշեր մը, այն գիշերն ուր յու նիսի առաջին օրը երկրորդին կու իյնայ. վու թանք փոքր Մասեաց սարերէն դարվար տահլով՝ ինչուան յետին բարձրատունին, որ կու նայի

Շաւարշան դաշտին վրայ: Արդէն այս երեկոյեան նման՝ 14 դար առաջ այլ՝ այս անհատնում դիշերային լապտերս, այս բազմաւեա լուռ վիայս, այս խորհրդապահ լուսինս՝ ոյնպէս բոլորացեալ լուսաբիր կու բարձրանար մեր եկած արևմտեան դարից ետևէն՝ Մասեաց-Ոսին կողերէն, Արտաշատայ դաշտին հորիզոնէն. և ահա հանդարտ համաստիւռ և իբրև իշղակաթ կակուղ ճառագայթներով կու լուսաւորէ մեր փնտռածը, Շաւարշական Աւարայրի ընդարձակ դաշտը. որ մեր կեցած տեղէն պէտ՝ ի յարևելս հարաւոյ երկրնցած, իրեն ձևիչ կ'առնու Տղմոպ գետոյն ընթացքը, այն որ արևմտեան հիւսիսային կողմէն իջնելով՝ ծռանը և պղտոր ալիքները կու թափէ Երասխ[1], և այդ եռանկիւնաձև կամ երկայնաբոլոր դաշտին մէջ՝ իբրև մոխրագոյն երկայն շղթայ մը կու շարժի լուանին նշուլից նեղքև: Նեղ ու նուազ չըսը մ'է նա. բայց ինչ լայն վիհ, ինչ խոր խորոց՝ իր եզերքը տարածուած երկու անդնման բանակաց մէջ. որոնցմէ մեր կողմը մեզի մօտ եղածն՝ լուանէն և կրակէ աւերի պայծառուած ջերմակ ու գոյնագոյն կու տեսնեմ. մէկայլն՝ կարծեմ թէ հեռաւորութենէն աւերի պատճառաւ մը՝ խառն ու խաւար կ'երևայ, թէ և ահեղ անտառի պէս սփռուած ու դաշտին մեծ մասը ծածկած: Այս երկու բանակաց միջի շարժմունքն և գործքերն այլ ինչ տարբեր. հեռաւորը և սեբ բանակն միայն սովորական պատերազմի պատրաստութիւններ կու ցուցընէ. իսկ մօտաւորս աւերի կրօնական և հայրենական հան-

1 Այս գետս հիմա ինչ կ'ըսուի և ինչ ընթացք ունի, յայտնի չէ մեզի. Աբրահամ Գ կրետացի՝ կաթուղիկոս՝ Ամատպատպ մօտ կարմիր վանքին քով Երասխ խառնուող գետը կու սեպէ Տղմուտ:

10249926



դիտարան կ'երևի քան պատերազմի մարզարան: Սակայ է Հայոց բանակն. վերջին բազմաթիւ բանակ՝ գումարեալ յանուն հայրենեաց, իր հնացեալ իշխանաց ձեռօքն. 66,000 Հայ պատերազմող, ձիաւոր և հետևակ, խաչանիշ վրանաց և դրօշուց սակ ժողոված են՝ զազգ և զկրօնս պաշտպանելու: Ի՛նչ պանծալի գունդ և ի՛նչ բազմութիւն կարճաց մեր աչքին առջև:... Սակայն ինչ են այդ վեց ու կէս բիւր զօրքն Հայոց՝ Հայաստանի միահեծան և միահաւան ազգութեան օրերուն՝ հարկաւոր և վտանգի ժամանակ գումարած բանակին քով: Սովորական աեն՝ Հայոց աշխարհապահ զօրաթիւն էր 120,000, որոց 40,000ի չափ Թագաւորական գունդն էր, 84,000 այլ նախարարաց և տոհմից. իսկ մեծ պատերազմաց ժամանակ՝ կրկին և երեքկին աեսլն ըլլալն՝ այսօր դիմայի բանակնիս կու վկայէ. յորում հազիւ քսան և հինգ տոհմի կամ ցեղի իշխանք և զօրք կան, որոց որոշեալ զօրաբաժինն 20,000ի չէր հասներ. այս ցեղերուն շատին մէկ մնան, և ըուն իսկ նախարարն այլ (մեծ դժբաղդութեամբ գեաոյն այնդիի կոչմն են, պարակաս կան բանակին հետ. և ցաւելով պէտք է տեսնել հոն այլ նոյն չափ թիւ մը Հայոց. (վասն զի ըստ վկայութեան պատմչին՝ ուրացեալն Վասակ թէ իր Սիւնեաց աշխարհէն և թէ ուրիշներէ «ժողով» վեաց զամենայն գայթակղութիւն, և արար «գունդ զօրաց բազմաց», ոչք կամաւ կամ ակամայ իսանեցան ընդ Թշնամին հայրենեաց և եկեղեցւոյ. (ըստ սեպհեան արբոյ Կոստաւորչին՝ գառինքն սպիտակք գառնալով 'ի սեաւ գայլս): Գառանց ու գայլոց գունդերն միատեղ առնելով՝ 120 հազար Հայ կ'երևան դիմադեմ Նարարայրի դաշտին մէջ. զոյս բաժնելով կամ չոկելով ըստ աշխարհաց Հայաստանի՝ կու տեսնեմք որ հին

Հայոց 15 կամ քսան աշխարհաց Թուէն, միոյն հինգ կամ վեց աշխարհքէ եկած են այս գունդերս. որ են Ախլաթատ, Տուրուբերան, Վասպուրական, Սիւնիք, Մոկք. իսկ ուրիշ աշխարհքներէն հազիւ ոմանց մէկ երկու գաւառ կամ տոհմ կու յիշուի. Մեծ Հայոց չորս մասին պրեթէ երեքն գուրս է այս գաշտէս. բոլոր արեւմտեան մասն՝ Յունաց կայսեր իշխանութեան տակ է. և թէպէտ Համայեակ՝ եղբայրը մեծին Վարդանայ, կու չանայ կ'աշխատի անոնցմէ այլ զօրք ժողովել, բայց ոմանք չեն շարժիր կայսեր վախէն, ոմանք այլ ուշանալով չեն հասնիր ատենին. իսկ հիւսիսային և արեւելեան գաւառք՝ Վրաց և Աղուանից խառնուած՝ անոնց հետ անշարժ կու կենան. հարաւային ամուր աշխարհք այլ՝ Սղձնիք և Տմորիք՝ գրեթէ ինքնագլուխ չէզոք կու մնան. Թէ և ասոնց ամենուն այլ հրաւէր և ապաչանք ղրկուած էր. և ոչ միայն ասոնց, այլ և Վրաց, Աղուանից և Հոնաց, գալ մինչեան Պարսից դէմ կենալու. բայց երկու խորամանկ և ազգուրաց վասակք, մէկն յարևմուտք կեցած, մէկալն յարևելք, ամենայն հնարքով և ստութեամբք զանոնք հետու բռնեցին Վարդանեան գնդէն: Այս տեսութենէս կ'իմացուի որ այսպիսի ծանր հարկի առեն՝ եթէ բոլոր Հայք միաբան մէկ կողմն ժողովէին, Վարդան միտքանակ 66,000ի կրնար 300,000 զօրք այլ ունենալ: Որչափ այլ մեծ երևի այս թիւս, գեռ շատ պակաս է համեմատելով վերը ցուցած հաշուին և Թուոյ աշխարհաց և գաւառաց և զօրաբաժնին Հայոց:... Թողլով երբեմն կարելին և այժմ անկարելին, գառնանք եղածին, և դիմաց նիս կեցած մեր հայակոյտ բանակին:

Զօրս գունդ կամ Թեւ բաժնուած է այս բանակս. երեքն երկոյնատարած շարուած են Աբաբայրի դաշտին մէջ Տլմուսայ եզերքը. վասն զի

գիմացը Թշնամին այլ նոյնպէս տարածուած է. իսկ մէկայլն՝ երեքին եռուէն մէջ տեղուանքը կէ-
ցած է, իբր վերջապահ և օգնական վտանգելոց. մեր կեցած տեղւոյն մօտինն է՝ Առաջին և այ Թևն հայ բանակին, որ Տլմռատայ գետոյն այլ առաջա-
կողմն է, ուստի կու վարէ աչքը դարվար յա-
րևելս յԵրասխ. այս առաջին մասին Թևապետն է հաւատարիմ Հայոց Ներքին հազարապետն, ուշ-
խարհատեսուէն, որ Մալխազ կ'ըսուի, և է իշ-
խանն Խորխոռունեաց ԽՈՐԷՆ, կարգեալ փոխա-
նակ ուրացող իշխանին Գագիկայ. Հայկայ որդւոյն անունը և քաջութիւնը 3000 տարիէ վերջ այլ փայլեցնող: Իրեն օգնական գնդապետքն են, բաց յայլոց պայազատաց հին նախարարաց, ԱՐՇԷՆ ԸՆԾԱՅԻՆ և ՆԵՐՍԷՀ ՓԱՋՔԵՐՈՒՆԻ. ասիկա Վա-
նայ ծովուն հիւսիսային կողմէն եկած. առաջինն՝ որ Աղթոյ կոչմամբ կու գովուի՝ ի պատմըչէն, թէ և ամէն ցնդէ աւելի քիչ նահատակից ընկեր ունեցաւ այս պատերազմիս մէջ, բայց զօրահան-
դիսին առեն՝ այս բանակիս մէջ գտնուող ամեն իշխանացմէ աւելի և անհամեմատ աւելի զօրք կու տար, 4000 հոգի, որ (եթէ սխալ չէ Թիւն) կու նշանակէ կամ բազմաթիւ կամ պատերազ-
մող ու սահմանապահ տոհմ մը, որուն պատմու-
Թիւնն և տեղն անգամ մեզ յայտնի չէ, բայց Թեր-
և Վասպուրականի Ընձահից կամ Անձահից գաւառն ըլլայ, որ յետոյ յանուն գլխաւոր բերդ-
աւանին՝ Կոփոր ըսուեցաւ, (հիմա Քիւդիւր, ի սահմանի պարսկական Հայոց): — Միջին Թևոյն ընդհանուր հրամանատարն է ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ, որ այս Հայոց բանակիս մէջ, յետ սպարապետին (Վարդանայ) առաջին նախապատիւ իշխանն է, և ըստ կարգի ազնուութեան բարձրագոյն է քան զնա այլ. (վասն զի հին Վարեսատանի տիեզերա-
կալ Թագաւորներու ցեղէն է). ըստ արդեանց

10249926



այլ արժանապէս առաջին Հանճարը ընա, թէ և նախ յիշած պատմըչաց (Եղիշէի և Ղազարայ) մէջ չգտանես անոր գեղեցիկ յիշատակները, զոր անպատմ և խորթ ձեռք մը (Բարձուման սարսին) վերուց ընկեց գեղեցկապէս պատմութենէն: Վահան նայ ընկեր գնդապետք են ՄԻՐՇԱՊՈՒՀ ՄԱՐԴՊԵՏՆ կամ իշխանն Մարդպետութեան, որոյ կալուածքն էին հին աեն Նախիջևան գաւառին սահմաններն, և պաշտօնն էր Հայոց Թագուհւոյն և արքունի գանձուց հսպարապետութիւնն, որ և գունդ մը արքունի զօրաց ունէր իր ձեռքին տակ. սար հետ է և ԱՐՏԱԿ նախարարն Մոկաց, որ թէ և հոչա ու խոշոր երկրի և բնակչաց տէր էր, այլ ինքն շատ կիրթ և ազնիւ մարդ, և լատ վկայութեան ժամանակակից պատմըչին՝ Տպոյէ, հասէպ, փոչ ե էրանելէ, և Վարդանայ սպարապետին յատուկ սիրելի ու արտակից մտերիմն, թէ ազնիւ և մտացի բարուցն Համար, և թէ հին ծանօթութեանն և երախտեացն: (Վան զի յետ մահուան Ս. Սահակայ՝ երբ պարսիկ մարզպանք եկան 'ի Հայս՝ մեր աշխարհին կարգերը վեր վար ընելու, Վարդան Թողլով իր իշխանութիւնը և երկիրը՝ քաշուեցաւ յաշխարհն Մոկաց, յեր կիր Արտակայ, ամուր բերդ մը, և մեծ պատիւ և սէր գտաւ այս իշխանէս. այնպէս որ երբ յետ ժամանակաց՝ Պարսից Թագաւորին դուռը՝ Հայոց նախարարք տագնապած էին, իրենց բերան առին զԱրտակ, որ Համոզէ զՎարդան իրենց հետ միաբանելու 'ի խորհուրդ ուրացութեան): Հիմայ Վարդան զԱրտակ բանակին միջոցը դրաւ: Այս երեք մեծ իշխանաց հետ կային ուրիշ մեծամեծ նախարարաց պայազատք և Թագաւորական զօրաց գլխաւորներ: -- Բանակին ձախ թևոյն զօրավարքն էին, ՓԱՓԱԳ ԱՌԱՒԵՂԵԱՆ. Թէ ինքն և Թէ իր ցեղն շատ ծանօթ չէին մեր պատմութեան

10249926



մէջ, և բնակուԹիւնին մօր տեղ ըլլալն այլ յայտնի էր, Թէ և կ'երևի մեզ Աղրատայ կուլմէրն ըլլալ. ԹաԹոխ վԱՆԱՆԴԵՑԻ, Բաւեղոյ ընդարձակ դաշտերուն իշխեցողն. սոնց ընկեր ՏԱՃԱՏ ԳԸՆԴՈՒՆԻ՝ պարմանալի մեկնուԹեանեալ, գլխապես շատ հեռու և օտարակիզբն տոհմի մը, Քանանացւոց, Քամայ ցեղէն. որք ըստ պատմուԹեան՝ հալածեալք Ի Յեսուայ և Իսրայէլացւոց՝ անցան ՅԱփրիկէ, և մէջերնէն մէկն Քանանիդաս անուամբ եկաւ Ի Հայս, և ցեղն ըսուեցաւ ԳՆԹՈՒՆԻՔ կամ ՔՆդունիք: Ահա (ձախ) Թևին դիմաց՝ Պարսից ալ Թևը մեծ պատրաստուԹեամբ և բազմուԹեամբ կեցած էր. անոր համար ապարտպետն Վարդան՝ ընդհանուր տեսչուԹենէն զատ մանաւորապէս այս Թևին առաջնորդել կամ օգնել յանձն առաւ: Բանակին երեք Թևերուն ետև ջորւորդ օգնական կամ վերջապահ դրաւ քալ և հաւատարիմ խումբ մը, գնդապետ կարգելով իւր հարազատ եղբայրը ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆ, և իւր միւս արտակից և նիզակակից բարեկամն ու սիրելին՝ ԱՐՇԱՒԻՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ. (ինչպէս որ յետոյ ատոր որդիքն՝ Ներսեհ և Հրահատ՝ իր եղբօրորդին և իր յաջորդին վահանայ՝ արտակից և բազկակից եղան): Աղշաւրայ կալաւածն էր Ախրատայ հին Երասխաձոր գաւառը, որ յետոյ Կամսարական և Աղշարունիք ըսուեցաւ: Ահա երկու հաւատարմաց և քաջաց հետ՝ ջորւորդ գնդին կ'առաջնորդէր նոյն իսկ բոլոր բանակին առաջնորդն և սպարապետն, ինքն Մամիկոնէից տէրն, Մեծ, Քաջ և Սուրբ ԿԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ:

Պատերազմին առեն՝ աւելի ձախ Թևոյն քով գտնուեցաւ. իսկ հիմա՝ գրեթէ ամեն տեղ ամեն գնդի քով կ'երևի. ամեն մեկուն պէտքը և պատրաստուԹիւնը քննելու տեսնելու, և հարկաւորը տալու, ըսելու. ամեն կողմ կարծես կու

լսուի նոր խօսած առեներաբանութիւնն. « Ի բա-
» զում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ
» իս [1] »: Ամեն բան կարգաւորելէն և վաղուան
պատերազմի յարմարցընելէն ետև, կոչ գառնայ
Վարդան ջորւս գնդերէն զատ ուրիշ և աննման
գնդի մը մէջ, որ առաջիններէն ոչ շատ հեռու
ժողովեր էր, վրանի տակ. և էր Հայոց եկեղե-
ցւոյն ուխտն. հոն էին կաթուղիկոսն Յովսէփ,
որ աշխարհին քաղաքական շփոթից համար դեռ
հանդիսապէս չէր օծուած. և զատ ուրիշ եպիս-
կոպոսաց և երիցանց՝ հոգելից և հրաշալից երէցն
Ղեւոնդ, որ բոլոր ուխտապահ Հայոց հայր և
բանակին երկրորդ սպարապետ մ'էր, եկեղեցւոյ
և հայրենեաց աննման նահատակ մը, որուն ամե-
նայն կրօնասէրք և ազգասէրք, աշխարհիկք և ե-
կեղեցականք՝ կրնան նախանձիլ. Ս. Սահակայ և
Մեսրովպայ վախճանելէն ետև, ինքն՝ որ անոնց
երիցագոյն աշակերտն էր, իբրև երեսփոխան մը
եղաւ անոնց. խորհրդոյն և օրինակաւն կու շար-
ժէր վեհեղեցին և զաշխարհն: Եւ ահա այս գե-
շերս այլ՝ մեր հաւատարիմ բանակին գիմաց և
Վասակայ ղրկած հրապուրիչ պատգամաւորաց՝
երկար քաջալերական առենաբանութեամբ մը
Վարդանայ ըսածները կու հաստատէ կրօնական
փաստիւք: Զօրականք՝ այդ երկու հոգեշունչ բե-
րանոց փչմունքէն (Վարդանայ և Ղեւոնդայ) վա-
ռուած՝ պատերազմէ վեր, յաղթութենէ վեր
բանի կու պատրաստուին, — մարտիրոսութեան,
պսակուելու յերկինս. և պահ մը զինուց պատ-
րաստութիւնը դադրեցընելով, հոգւոյ պատրաս-
տութիւնը կու սկսին: Մէջերնէն երիտասարդք
ոմանք, այն առենուան Թոյլ տրուած սովորու-
թեամբ դեռ երախայ ըլլալով, կու փութան 'ի

[1] Կարդա Յեշուէ:

սուրբ աւազան մկրտութեան, կանչելով, « Ահա » գիներ ջուով, վասը առաու արեամբ » : Շաւարշանի դաշտաց մէջ լճակ մը կու նշանուի Ա.գ-կէօլ, սալխաակ-լիճ անուամբ. կու սկրեմ կարծել թէ այս լճակիս մէջ մկրտուած ըլլան այն եռանգուն երիտասարդքն, որք գիները նորակնքոց ձեռամբ պատմուճանը հագան, առաուն քալեց փայլուն զրահը, երիկուանը՝ վկայից կարմիր ծիրանին:...

Հինայ հասարակ գիներն անցեր, և գիւցազնական կամ քաղաքական օրը ծներ է. գեռ չլուացած՝ կու փութան քահանայքն գիներային եկեղեցական պաշտօնը աւարտելու. և սուրբ մկրտութեան հանդէսը կատարելու, — սուրբ պատարագը: Թէրևս Լուսաւորչի և Տրդատայ, կամ մեծին Ներսէսի և Մուշեղ օրէն՝ ի վեր՝ այսպիսի վեհ վսեմ, սքանչելի, սրբալի հանդէս մը կատարուած չէր. պատերազմական փոթերէն առաջ լուսեցաւ եկեղեցւոյ կոչնականն, սուրբ հօտապետաց քաղցրիկ խաղաղութեան ձայները. և երբ խաղաղարարն ամենայն աշխարհի անունոյ ձեռքով սուրբ հացն կերպարանօք ծածկեալ՝ բարձրացաւ ի հաճութիւն Հօր և ի հաշտութիւն մարդկան, վաթսուն հազար կարիճ հաւատացեալք՝ անձամբ և զինուք խառնարշեցան, երկրպագեցին, հալորդուեցան սուրբ խորհըրդոցն, մարմնոյ և արեան Քրիստոսի Աստուծոյ. գրսի զրահներէն զօրաւոր զրահ մը հագան հոգւով, և կանգնելով կանչեցին. « Հաւատարեալ « մահս մեր ընդ մահու արդարոցն, և հեղուին » արեան մերոյ ընդ արեան սուրբ մարտիրոսացն, » և հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւս, » և մի՛ ապականեսցի իւր ի ձեռս հեթանոսաց » : Ապա փութացան իւրաքանչիւր իր գինը, իր տեղւոյն, զէնքերնին զրահնին պատրաստելու, և ուժերնին կազդուրելու քիչ մը կերա-

կրով, յատակ քան զարևուն երևալն: Ոմանք այս բաներուս զբաղած, ոմանք այլ վրանաց դրան քով կամ իրենց կահուց և զինուց վրայ կռթըլնած, աչուընին Հայկին և Վահագնին համատեղ ղուԹեանց վրայ, լուիկ մուիկ երկնից և երկրի հետ խօսելով մոքերնին, յանկարծ ձիերուն դափրը ու խրխինջը լսելով՝ կու դառնան այն կողմը, ու արաբերնէն ինչքեր կ'անցնի. կու ԹօԹուբեն վարագեղ գլուխնին. հայկական մեծ ու պայծառ աչքերն կու Թաւալին լայնալիճ յօնից ներքև. ալեղնաձիգ մատերով խարտեաշ պերևեշանին չահուտելով՝ կու նային կ'երԹան մուԹն 'ի լոյս հովտէ հովիտ, լեռնէ լեռ՝ ինչուան այն տեղն, այն չէնքը՝ ուր քնիկ հայրենի անակն է, ուր Թողուցին իրենց կակուղ սիրելիները... ահ, ոլքան հեռու իրենցմէ, և արդեօք ոլքան աւելի պիտի հեռանան քանի մը ժամէ վերջ. արդեօք վաղը այս ժամուս դեռ երկրիս վրայ՝ Թէ յերկնից պիտի նային անոնց՝ զոր սուրբ սէրն չէ բաժներ ոչ յերկրի ոչ յերկինս:... Երկընցկիր քէչ մ'այլ՝ ան վերջին ժամ պիշերոյս, և Թող մեր սիրասուն սրբըբասուն, քաջասուն Հայ երիտասարդաց՝ այսպէս մի մահածուԹեամբք կամ սրտածուԹեամբք սպասել ազգմայարդար փոխից Հայնին. և դու եղեմաշուընչ հայրենի հովիկ, (եԹէ սոյգ է զգայուն մարդկան կամ երգչաց լսածն), անցիր սոնց շրԹանց քովէն, խառնուէ այն լայնաշուընչ հագագնեբուն, և գնա հրախառն համբուրիլ սէս հաղորդելու իրենց յիշածնեբուն, իրենց սիրածնեբուն.... Մենք հարկաւ և ոչ կամաւ՝ անցնինք գետոյն այն կողմը, Թշնամեաց բանակն այլ քիչ մը ճանչնալու:

10249926



## Գ

Ա յս Պարսից բանակս մեր աշխարհը եկածնե-
րուն մէջ մեծերէն մէկն է. եթէ Հայք հարկէ
առեն ինչուան 300,000 և աւելի զինուոր կրնա-
յին հանել, Պարսք ևս առաւել, իրենց ընդար-
ձակ աշխարհաց համեմատութեամբ. և հիմայ որ
ուրիշ կոլմանէ խաղաղութիւն ունէին՝ կրցան
մեծաւ բազմութեամբ գալ, իրենց ամենէն երևե-
լի զօրավարներով, և ամենայն պատերազմական
պատրաստութեամբք: Յազկերտ և իր իրաւտուն
Մհերնեւրսեհ՝ ինչուան Հնդկաստանի հրատանջ
հովիտներէն Հայաստանի ձիւնեղէն բարձրադաշ-
տաց վրայ իսաւրեցին էրամոկս փղոյ. զորս բանա-
կին մէջ իրենց սպարապետն՝ ի գոնդս գոնդս բա-
ժանեց, կ'ըսէ պատմիչն. քաջաձի Հայոց հեծե-
լոց դէմ չէին կրնար կենալ համաձիւս Պարսիկ
ձիաւորք, անոր համար այս անձուկն քննդնա-
ւոր գաղանաց վատահացեր էին. իրենց ընտիր
ձիերն այլ Հայաստանէն կ'առնուին, և հաշտու-
թեան առեն՝ իրենց լաւագոյն յաղթող հեծեալ-
քըն՝ Հայք էին: Հիմայ այս գոնդ գոնդ փղաց
երամակը միայն չորս հինգ խուռմբ այլ սեպհնք
կամ բոլոր մէկէն 50 փիղ (որ Թէ և շատ, գեռ
պատմչաց ցուցածէն շատ չ'երևիր), մէկէն ա-
նոնց քով 150,000 Պարսիկ կու տեսնես. վասն
զի կրկին կրկին կ'ըսէ պատմիչն Թէ ամէն մէկ փղի
քով 3000 սպառազէն զօրականք կային, և կ'ա-
ւելցնէ. «Թող զայլ զօրան ամենայն». որոնցմէ
էր Մոպէան քաջամարտիկ գոնդն այլ. գարձեալ
ուրիշ տեղ կ'ըսէ, որ սպարապետն Պարսից տե-
սակաւով Թէ 60,000էն աւելի են վարդանանք,
և Թէ ոչք են անոնց պարտպլտուխքն, մէկուն դէմ

*եղեք եղնիք հոգի կու պատրաստէր: Արդ այս ա-*
*մենայն, և տակէ դուրս Վասակայ ուրացակից*
*գունդքն այլ, և Հոնք և ուրիշ բարբարոսք այլ*
*մեկտեղ առնելով, եթէ Պարսից բանակը 250,000*
*զօրաց կու հասնի՝ ըսեմք, դեռ Ձիմարաէն պա-*
*կաս բան կ'ըլլամք, և ոչ այլ աւելի՝ եթէ 300,000*
*այլ ըսեմք. մանաւանդ որ պատմչաց մէկն կ'ըսէ*
*առնց համար, թէ «տարածանէր երկայնէր Ձա-*
» *կան չերիզնուելիս գաղթին ռեծէ* ». և յառաջ,
« *'ի ձրջապտպ փեղի Տղմոպ գաղթին... զակիշ ա-*
» *ծեալ բանակէին* »: Զակիշ ըսածն է բանակին
չուրս դին ամրութիւն՝ ապահովութեան համար,
զոր աւելի պարզաբար կու յիշէ առաջին պատ-
միչն. « Բանակ բոլորէր, փոս հատանէր, պատ-
» *նէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցա-*
» *նէր իբրև զքաղաք ամենայն պատրաստութեբ* »:
Վան զի կու վախէին Պարսք թէ Վարդանանք
յանկարծ վրանին հասնին, և կրնային այլ այն-
պէս ընել, ըստ Զազարայ Փարպեցւոյ. բայց ա-
սիկայ յանդգնութեան գործ մը կ'ըլլար. և ամե-
նայն պատրաստութիւն, մանաւանդ հոգևորը՝
ընելու առեն չէին ուշնար. — վան զի երկու
բանակներն այլ գրեթէ մէկ առեն հասան պա-
տերազմին տեղը. Պարսք՝ Հերայ և Զարևանդայ
կողմերէն (Խոյի և Սալմաստայ), Հայք յԱրտա-
շատայ, պատերազմին առաջին օրը. և տեսան
որ Պարսք նոր հասեր են և բանակինին ամրացը-
նելու վրայ են: Պարսից սպարապետն էր Մու-
հան Նխոռշտոսրպ (որ Թեոդոս նշանակէ Թաւե-
րեա, բուրդ-մօրուք), իրենց ամենէն երևելի զո-
րավարն. և կ'երևի թէ նոյն անձն է, որ Հայոց
Թագաւորութիւնը վերցուեցաւ՝ երկու ան-
գամ մարզպան դրուեցաւ 'ի Հայս, և հոն չգտած
պատուին վրէժն առնուլ ուզեց այս առթիւ.
երկու յարմար անձ մը չէին կրնար գտնել Մու-

10249926



նեբաեհ և Յազկերտ: Պատերազմին առեն ինքն կեցաւ ընդհանուր զօրավար բանակին կեդրոնը կամ մէջ առելը, Պարսից առենէն կարճ քայլագ քայլ անյապղիթ և անմահ սեպուած գնդով, որ է Մոպէան կամ Մատենիկն. որք Մակեդոնացւոց փալանգին պէս քովէ քով պարապի նման անբաժ կու կենային և մէկտեղ շարժէին, և թէ մէկն ընկնար, առեղը ուրիշ մը կ'ամբողջացընէր գումդը: Զախ թևին զօրագլուխ՝ կ'երևի թէ էր Դովընճ, որ և բոլոր բանակին մէջ նախապատիւ էր յետ Մուշկանայ, և Հայոց աջ թևին դէմ կու կենար (ընդդէմ Խորենայ). բայց այս կողմէն պատերազմը չի զայրացաւ, կամ թէ երկու դիմացմարտք այլ հաւասար քաջութեամբ կռուէցան իրարու հետ. այլ սատկութիւնը արևելեան կողմն էր, ուր էր Պարսից աջ թևն. և հոն գումարած էին բոլոր նիզակակից ազգաց զօրքն, որոց մէջ գլխաւորք էին (դժբաղդաբար) Հայք և Կոփէ, որ են Հայոց արևելեան սահմանակից քաղքից ծովուն մօտերը. սոնց այլ դրակից Գէլէ (Տիլէմ). սոնցմէ զատ Ասպարհայէ կամ Ասպարհայէ, և Հոն՝ որք 'ի հարկէ մեծաթիւ պիտի ըլլային: Հայոց սեցած գնդին գլխաւորն պէտք էր ըլլալ ինքն վահն Վասակ, տէրն Սիւնեաց, (որ քան զամեն ցեղ Հայոց՝ բազմաթիւ զօրաբաժին ունէր յաշխարհագումար հանդիսին Հայոց, 11,400 կռուող.) Սիւնեաց իշխանին միաբանք էին իշխանքն Բագրատունեաց, Խորխոռունեաց, Վահևունեաց, Ամատունեաց, Ասպահունեաց, Ամէհոյ, Ուրծայ և սոյն մի Ամատունեաց և այլոց, որոց զօրաբաժինք գումարին 8000ի չափ, և Սիւնեաց գլխին հետ 20000ի կու մօտենան. Վարդանանց զօրաբաժինէն գրեթէ աւելի են. սոր համար ըսի՝ որ սոսոնց չափ այլ կրնային հետևող ունենալ և բոլորն 60-70000 ըլլալ: Այս երեք Թևերէն զատ

էր ջորւոյն, և անոր առաջնորդ Աւրպաշէր, իբրև վերջապահ, միանգամայն և փղապետ, որ մեծ խումբ մը զազաններով՝ մեկայլ զօրաց եաւը կեցած էր, և ուր պէտք ըլլայր՝ հոն օգնութեան պիտի շարժէր:

## Դ

Բայց հոս չըշանանք, վասն զի ահա լուսացեր է պատերազմական օրն, օրն մեծ, օրն անմոռանալի: Երկու բանակներն իրենց հրամայուած տեղը և կարգը կու բռնեն. Պարսից սպարապետն իւր երեսուն բիւր զօրաց և փղաց բազմութեան դիմաց՝ կու տեսնէ գրեթէ հաւասար երկայնութեամբ շարուած բանակ մը. բայց գիտէ այլ որ իրենին պէս Թանձր չէ նա. հազիւ քանի մը կարգ զօրաց կան եաւէ եաւ. զայն այլ գիտէ (մեր ցաւովը) որ անոնցմէ այլ ոմանք բոլոր սրտով միացած չեն բուն ուխտապահ Հայոց, այլ Վասակայ հրապուրանօք սլլուորած. և եթէ վարպետ խաղ մը խաղայ՝ կրնայ զանոնք իր զօրաց հետ խառնել, կամ պատերազմէ դուրս հանել. գիտէ որ իր նիզակակից սևցած Հայերն՝ այն օր Վասակայ հետ իրենց միամտութիւնը Պարսից ցուցընելու համար՝ աւելի քան զՊարսիկս քաջութեամբ պիտի կռուին, կամ աւելի առեղծութեամբ. ինչպէս որ կ'ընեն Թշնամացեալ բարեկամք: Ամէնք իրեն մէկ մէկ յոյս մեծ մեծ միութիւնք են. բայց քանի որ կու մտածէ Թէ իր բուն Թշնամեաց, Թէ և քիչ զօր այլ հաւատարիմ Հայոց՝ պատրաստեան է Վարդան, այն ժամանակն (բուն ամեն ժամանակն) զօրավարաց օրինակ, և Պարսից Թագաւորին անգամ՝ քաջութեամբն դէռ սիրելի և հարկաւոր անձ մը, Մուշկանոյ բոլոր պատրաս-

տուԹիւնն և քաղմուԹիւնն տարակուսելի կ'ելնէի, ու կու տագնապի: Բայց ժամն կառուց կու մօտենայ. կու ժոլովէ գնդապետները ու զօրավարները, կու յիշեցընէ իրենց պարտքը, վարդանանց կարճուԹիւնը, քաջուԹեան և յաղԹուԹեան վարձքերը, վատուԹեան և փախստեան պատիժները և դատապարտուԹիւնը. և կու խաբէ իրաքանչիւր իր կարգին:

Ահա բաները լսելու կարօտ չէին Հայք, բաւական լցուած Վարդանայ, Ղևոնդի և Քրիստոսի հոգւով, որ դեռ սրտերնուն մէջ կու խօսէր. կըրնար ուրեմն իրենց ապարտապետն այլ քիչ մը այն գիշերուան վերջին պահին՝ առանձնանալ իր վրանին տակ. նախ խօսիլ ընդ Աստուծոյ և յանձնել իր կեանքը և մահը, որոց երկուքն այլ սուղիս կու փախչէր, և կու հաւատայր այն օր փոխել յանմահուԹիւն. ապա երկրիս վրայ հարկաւորը եղած բաներուն համար յետին կամքը աւանդել՝ ի կատակ կամ՝ ի սիրա մուերմաց. մինչ ապատաւորքն և Թիկնապահք զէնքերը և զարդերը կու պատրաստէին:

Ահա հագաւ, հեծաւ, զուարԹացաւ Վարդան, արևէն աւելի ցանկալի և ապահել այն օր՝ իր սիրելեացն. ամենուն աչքն՝ ոչ այնքան Թշնաւեաց բազմուԹեանը վրայ ատկմամբ կու նայէին, որքան սիրով կու դառնային այն բարձրաւուր կաԹողիկէաձև շինակարմիր վանին, որոյ դրան վերև ոսկի արծուին Թևատարած, չորս բոլորն կարմիր-կանաչ-սպիտակ դրօշներ հովէն ծաղրուելով ու բացուելով՝ իբր ծափ ծափի տուած կու հրաւիրէին զՎարդան. զՎարդան հրաւիրելով՝ վրանին եզերքը պար առած պահապան ու պատուոյ գունդն՝ նշան տուին, և սկսան շարժիլ. յանկարծ վրանին փեղկերն վերնալով բացուեցան, Թիկնապահք և ապայք, հնծեալք և հեռակք՝ փայլ

փայլ զէնքերով եբլև ամպէ մը սկսան դուրս թա-
փիլ. և իւրմէ մը ծաղկազգեստ կայտառ երիտա-
սարդաց՝ 25 տարուընէ վեր՝ լուռ ձայն մը ձգե-
յին, որոտալօր, ահաւոր, վեհ և քաղցր ձայն
մը, որ մեր յեսին Արշակունի Արտաշէս Թագա-
ւորին սև օրէն վեր չէր լսուած...: Ալքսունական
երաժշտաց գան էր. որ այն օր՝ի Վարդան կու
ձանաչէր Հայոց Թագաւորը, առաջնորդը, յոյսը
և փառքը. և երբ մեծամեծ ոսկեփայլ գալարուն
և անգալար պլինձներն լայնաբոլոր բերանին յեր-
կինք ջոկած՝ եբլև յեսո երկայն հառաչանաց՝ հայ-
կական պատերազմի եղանակը հնչեցին, ահ, բո-
լոր բանակն, գետին ու լերինք Թնդալով գոփե-
լով որոտացին, Փառ Հայոց, Սուրբ պատերազմ,
Վարդան գոչ: Եւ ահա յերևան եկաւ քաջն այն,
Կարմիրն այն Վարդան, ճառագայթներուն եռևէն
դուրս վազող արևուն պէս, իր նախապատուն
Մուշեղի նման՝ ձերմակ, ճարտուկ, ճախրասլաց,
բարձրապինչ բարձրափոխինչ ձիուն վրայ յար-
մարած՝ քան թէ հեծած կամ նստած. վասն զի
ձին գրեթէ սանձի անկարօտ և սիրոյը տակ ա-
ռելի թեթևցած քան թէ առաջ՝ չես գիտեր կու
խաղայ թէ կու թռչի. իսկ սէրն եբլև եզեկիէ-
լեան անուի մը վրայ հանգչած՝ թեթևութեամբ
ամեն դի կու դառնայ, կու թռչի, կու հանի:
Ոսկեխառն արծաթակուռ սպառազինութեան
վրայ՝ ձգած է մեծ ծիրանի ու ոսկեթել սամոյր-
օձիք վերարկուն, զոր արևակերպ ականակուռ
ապնզակ կամ ճարմանդ մը կուրծքէն վեր կու
միացընէ, օղակներէն յակուռնթներ կախուած,
և ինչուան նռնագոյն կօշիկները կ'իջնէ. գլուխն
արծաթախառն սաղաւարտ՝ ոսկեքանդակ գարգ-
մանակաւ, որոյ կռնակէն դէպ՝ի գագաթն ոսկի
ալծուխ մը կայ, և վարի եզերքը բոլորած պատ-
կաձև թափ մը, անոր վրայ այլ պլլուած բոլոր

պերապոյն իշխանութեան նշանը՝ ալխուրհատանք ը-
սուած հանգոյցը, որոյ ծայրերն ցցուհնազարդք՝
ուսոց վրայ կ'իջնեն: Բայց արդարև սեռութեան
արժանի մանն՝ այն հանգուցին նեղքև էր. բոլո-
րակերպ, կարմրայտ գրեթէ ճառագայթարձակ,
զուարթ դէմք մը. նման եգիպտացին Ամմոնազդոյ,
բայց Ամպրոպայնոյն աչքերով: Խաչգլուխ և խըն-
ձորգլուխ ձողերու և նիզակաց վրայ՝ բաց յեռա-
գոյն դրօշից կու ծածանին զանազան գունով և
նշանով վառեր, Մամիկոնէից սէրութեան, Հա-
յոց սպարապետութեան, Յունաց տրուտաէլա-
տութեան և Հայ Թագաւորի սեպհականութեան.
զորս ուրախութեամբ ողջունելով 66,000 բերան՝
Պարսից անհուն բանակին և անճառնի փղերուն
ձայնն այլ կու խափանեն պահ մը: Վարդան յա-
ռաջ անցնելով իր սպայից գնդէն՝ մեկ մը ձերմա-
կովը կու Թուչի բանակին մեկ ծայրէն ինչուան
մեկայլը, ողջունելով, ուրախասելով, գրեթէ նոր
ոյժ մը փչելով, և... նշան կու տայ սկսելու զպա-
տերազմն: Ահա մեկէն կու սկսին զէնք ձգել վեց
բիւրքն Հայոց. ոմանք սպատազէնք (այսինքն բո-
լոր զրահ հագած), ոմանք մերկ (այսինքն ան-
զրահ), և ասանք են աղեղնաւորքն. ոմանք վահա-
նաւորք, հեռւակք՝ նիզակաւորք և սուսերա-
ւորք. աւելի շատն հեծեալք ծանր կամ թեթև
զրահով:

## Ե

Հիմայ Թողունք որ քիչ մ'այլ խոսի Եղիշէ.
« Իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան
» կողմանքն լի արամաութեամբ և մեծաւ քաջ-
» սութեամբ զայրանային, և գազանացեալ զօ-
» րութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան.
» և ամբոխ ազազակին յերկոցունց կողմանց՝ կո-

10249926



» րև ՚ի մէջ ամպոց չփոթելոյ՝ ձայնմունա գոր-
» ծէր. և հնչումն ձայնից՝ զքարանձաւս լերանցն
» շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտից և ՚ի
» փայլեան պատենազէն վառելոցն՝ իբրև նշոյլք ճա-
» ոպայթից արեգական հատանէին: Նա և ՚ի
» բազում տեսերացն շողալ, և ՚ի ճօճել բազմա-
» խոռն նիզակացն՝ իբրև յերկինս սահիլն
» հրաձգութիւնք եռային: Փանզի ոմ իսկ ի բա-
» ական ասել զմեծամեծ սպգնապ սհաւոյ ձայ-
» նից. պրպէս կոփիւնք վահանաւորացն և ձայթ-
» մունք լարից ալեղանցն զլսելիս ամենեցուն առ
» հասարակ խլացուցանէին: Անդ էր տեսանել
» շատ մեծի սպգնապին և զալէտս անբաւ տա-
» րակուսանացն երկոցունց կողմանցն, առ՚ի յան-
» դուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քան-
» զի Թանձրամիտքն չիմարէին, և վատասիրտքն
» լքանէին, քաջքն խիզախէին, և նահատակքն
» գոչէին »:...

Ահա մեծ ու բազդաւէտ ձակատամարտս, ուր 300,000 և աւելի անձինք կռուեցան գրեթէ յա-ռաւօտէ մինչև յերիկուն, որչափ նշանաւոր է սասակութեամբն՝ նոյնչափ այլ քիչութեամբ մե-ռելոցն. երկու կողմն մեկտեղ հազիւ 4 կամ 5000 մարդ ընկան. որոյ պատճառ, մեկ մը երկուքին այլ հմտութեամբ և վարպետութեամբ շարժելն է. մեկ մ՚այլ բանակաց մէջ տեղ գետ մ՚ըլլալն, որով երկայն աոեն հեռուէն նետաձգութեամբ և ուրիշ հեռաձիգ զէնքերով կռուէին. Հայք ա-զեղնաւորութեան մէջ շատ վարպետ էին, որով աւելի յաջողեցան Պարսից վրայ, բայց Թուով նուազ ըլլալով՝ կրնային յօդնիլ առանց քշելու Պարսիկները. իսկ սանք Թէ և բազմաթիւ՝ չէին համարձակեր Հայ ազեղանց դէմ գետը անցնիլ, մանաւանդ առանց վտերուն՝ զորոնք դժուար էր շարժել: Բայց կամաց կամաց երկու բանակն այլ

ական մօտենալ ՚ի գետակըդքը, և հարկ էր որ մէկն կամ մէկայլն անցնի դիմացի կողմը երբ յայլ. Թող. և Հայք առին այս առաջնի յաղթութիւ. նը: Իրենց երկրին դար ու փոս գիրքն՝ գիրենք ջալքաշ և փոյձ ըրեր էին. յաջողութեամբ ան. ցան ջուրը, մինչ Պարսիկք տարակուսեալ կու վխտային եզերքը. Հայք չուէն ցատքելով առաջնի Թափով դիմացի եղողները քշեցին. բայց իրենք այլ ական Պարսից բազմութեան ոյժը խմանալ:

Հոս գրեթէնորէն սկսաւ պատերազմին, և բաղդն յերևան գալ: Բանակաց արևմտեան թևքն հա. ւասար կրնային կ՚ընդդիմանային, և գրեթէ ին. ջուան վերջը սակաւաթիւ Հայք՝ Դոդվըճայ գէմ կեցան, ինչուան որ իրենց երեք գնդապետ զօրա. վարքն այլ՝ քաջապէս ընկան նահատակութեան դաշտին վրայ, Խորէն, Աբրահամ և Ներսէհ: Միջին թևքն այլ նոյնպէս ստուար ձգամբ և գրեթէ հա. ւասար կռիւ կռուէին. իսկ արևելեան թևերուն, ուր Հայք Հայոց գէմ էին, Վահակայ հրապոյրն զօրացաւ, և Վարդանանց կողմն թևն սկսաւ տը. կարանալ. այն չփոթութեան առեն գունդ մը անկէ զատուելով՝ փախաւ կամ պատերազմին դուրս ելաւ. այս բանս բոլոր պատերազմը կեր. պարանափոխ ըրաւ: Աւելի մեծ չփոթութենէ ազատեց իր բանակը՝ արիաբուն և երազահաս սպա. րապետն, որ տեսնելով ձախ թևին ետ քաշուիլը, վերջապահ ջոկով մը հասաւ օգնութեան, նորէն կարգի մուծց հաւատարիմները, և ինքն առաջ անցնելով ընկաւ Պարսից աջ թևին վրայ, յո. րում՝ ուխտազանց Հայք, և հեծելային ուժ ա. րևելեան ազգաց գունդեր կային, և քշելով առ. րաւ ձգեց անոնց միջին թևին և փղակուռին վը. րայ: Նոյն առեն Վահան Արծրունի այլ Հայոց միջին գնդաւն ստուար Թափով յարձակելով Պար. սից միջին և բուն գնդին վրայ՝ խուովեց, շարժեց

և դէպ յարևելք քշեց. որով Պարսից երկու շինուածք շարժած գնդերն այլ ընկան իրարու վրայ, ու Վարդանայ և Վահանայ առաջերուն մէջ. և եթէ աստնք չառաւելոր ըլլային, կամ նոյն առեն վերջապահ գունդն այլ իրենց օգնութեան հասնէր, Թեւրևս բոլոր Պարսից բանակը պիտորէին. վասն զի Վահանայ և Վարդանայ բախմունքէն՝ անվանելի Մասեան գունդն անգամ պատուեցաւ, 140 անմահ Պարսիկ՝ Հայոց սպարապետին և Աղբրուանի նիզակակցին առաջերովմահացան, մեկայնեն այլ փախչելու վրայ էին. և ահա վրան կորած Վասակայ չար գլուխն առնուեցաւ իր յետ քշուած գնդին մէջ. Վարդան արդար վրէժխնդրութեամբ դարձաւ այդ անիծապարտին վրայ, որ իր Թելադիր սատանային սիրած օձուն պէս՝ սողսակելով պարզեցաւ, փղերուն մէջ փախաւ պահուըտեցաւ: Թեւրևս Վարդանայ պէտք էր այնչափ յառաջ նետուիլ կամ հասնիլ. բայց ինքն արդէն ըլլալը գուշակելով, աւելի երկինքց նահատակ քան յերկրի յաղթող ըլլալ փափագէր: Պարսից սպարապետն Մուշկան՝ որ կենաց և մահու, յաղթութեան կամ յաղթուելու ժամը հասած կու տեսնէր, որչափ որ սպգնապեցաւ ի Վարդանայ, անոր շատ յառաջեն այլ երեն օգուտ առաւ. տեսաւ որ անոր և մնացեալ Հայոց միջին ու ձախ Թևերուն մէջ՝ մեծ միջոց կայ. իր շինուած զօրաց դասերը և Մասենիկ գունդը ժողվեց սրատանդեց, ու մաս մը այն հետու մնացեալ Հայոց վրայ դարձուց, մաս մ՚այլ Վարդանայ և Վահանայ դէմ կենալու. և սանոյց եանէն գալու և մէջ փակելու՝ պատուէր տուաւ շուտով, փոխեց կանչեց Աղտաշէսի՝ որ փղերը առաջ քշէ. ինքն այլ իր յատուկ գնդով յառաջ անցաւ: Եւ այսպէս երկու երեք կողմէ պատելով հան, « կորովին Վարդան իւրովք քաջ

» Նիզակակցօքն՝ ոչ սակաւ նախճիրս ՚ի տեղւոջն
» գործեաց. յորում տեղւոջ և ինքն իսկ արժա-
» նի եղև առնուլ զկատարեալ նահատակութեն
» պսակ »[1]: Վարդանայ հետ հոն պսակուեցաւ
իր պատուակից և նիզակակիցն Վահան Արծրու-
նի. այս երկու պարագլխոց պէս՝ իրենց գնդից
ինչուան վերջին շունչը առաջնորդելով և կռուե-
լով՝ ընկան մեծափառ քաջութեամբ այլ թևին
երեք զօրապետքն, զոր վերը յիշեցինք, ձախ
թևին գնդապետն այլ Տաճատ Գնթունի. այս
թևէն և միջին թևէն երկերկու զօրաւոր զօրա-
գլուխք ապրեցան. անոնց տեղ ուրիշ զօրապետ
իշխանք ընկան ԱՐՏԱԿՆ ՊԱԼՈՒՆՒ, ՀՄԱՅԵԱԿ ԴԻ-
ՄԱՔՍԵԱՆՑ, ՎԱՀԱՆ ԳՆՈՒՆԻ և ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆ-
ՁՏԵԱՆ, որով յայանի եղաւ՝ որ թէ Վարդան և
թէ իր հաւատարիմ նիզակակից՝ մաքերնին
դրեր էին՝ կամ հալածել քշել զԹշնամին, կամ
ինչուան վերջը պատերազմելով մեռնիլ. և ա-
րեամբ քաւել բոլորովին իրենց սուտ ուրացու-
թեան յանցանքն այլ: Սակը համար երբ Պարսից
զօրքն մնան ՚ի Հայս, Վարդան հրաւէր խաբէբ
էր իրեններուն՝ ոչ այնքան ՚ի պատերազմին՝ որ-
քան ՚ի մարտիրոսութիւն, ըսելով. « Գունդ բա-
» զում հասեալ գայ, բեբեխով աստուածածախրաց
» պատկս երկնաւորս. արդ որ ոք ցանկայ առնուլ՝
» աճապարեցէք, զի մի վրիպեցի ոք և զկնայ-
» ցէ.... եւ զայս լուեալ ճշմարտասիրացն և զան-
» մահութիւն սիրողացն՝ զգրգեցան, եւևեալս առ-
» նելով զվիմեամբք, որպէս հօտք որ ՚ի ձայն աղի
» վտանգեալք զինի հովուաց »[2]: Իսկ վերջապահ
գնդին մեծ զօրապետքն Արշաւիր և Համազաս-
պեան՝ պատերազմին սաստիկ խառնուրդէն հե-
ռու ըլլալով՝ իրենց պաշտօնը կատարեցին. յետ

1 Եղիշէ:

2 Ղազար Փարպեցի:

նահատակութեան արժանաւորաց՝ և երեկոյին վաղ հասնելուն, եւ քաշէցին ուխտապահ զօրքերը, որ իրենցմէ յանդուգն և յառաջապէմ վարուէնին կորուսեր էին. ուստի ամանք այս երկու վերջնապահ զօրագլխաց գնդին խառնուեցան, ոմանք այլ ցրուեցան զանազան կողմ, կամ բերդերու մէջ քաշուեցան: Տան պարտզնուխ նահատակեալ իշխանաց հետ, իբրաքանչիւրին ցեղէն (բաց յԱրծրունեաց) 276 կամ 286 կրօնիք ընկան բուն պատերազմին առեն. որոց գրեթէ կէս կէսն, 137 հոգի Վարդանայ հայրենակից՝ ոխերասէր Մամիկոնեանք էին, ճիւաղելոց մէջ բազմաթիւներն են՝ Արտակայ տոհմակից Պալունիք, 57 հոգի: Ասոնցմէ դուրս են Արծրունիք, որոց թիւն թշնամութեամբ չընդուած կ'երևի. նոյնպէս նշանակուած չեն ուրիշ ցեղերէ և թագաւորական գնդէն մեռելաց զատ զատ թիւերն. բայց առաչիններուն հետ մէկտեղ բոլոր պատերազմին մէջ ընկողքն էին 696 հոգի. ասոնցմէ զատ քանի մը հարիւր այլ նոյն օրը ձեռք ընկան և փոյթ առնակոխ էլան, կամ ամրացած տեղերնէն բռնուած սպանուեցան. և ասոնցմով ու առաչիններով վիպասանը նահատակելոց թիւն եղաւ 1036 [1], զատ՝ի սան նախարարաց: Իսկ Թշնամեաց կողմէն պատերազմի մէջ ընկան ինն մեծ իշխան և 3544 մարդ. որ է ըսել՝ եռապատիկ կամ քառապատիկ աւելի քան ղՀայս:

1 Վարդան պատմիչ 1232 հոգի կ'ըսէ. անշուշտ պատերազմէն եւոքը բերդի մը մէջ գտնուած ու սպանուածներն այլ մէկ տեղ սեպելով:

10249926



## Զ

Ի՞նչ եղաւ այս մեծ և հռչակաւոր պատերազմին հետեւանքն: Հայք՝ բարոյապէս յաղթեցին, Պարսք աշխարհօրէն: — Վասակ և Պարսիկք նախ սկսան առջի հնարքները բանեցընել. ոխատապահ Հայք այլ իրենց հնարքը, ոմանք բերդերու մէջ ամրացան, ոմանք այլ կռուով Պարսից դէմ կեցան, ինչուան անոնց տահմաններէն այլ յարձակելով և տիպեցին զՅազկերտ՝ որ զիրենք ազատ թողլու իրենց տուրքը կրծնէ պաշտպանի և իրենց հայրենի սովորութեանց մէջ: Յանձն առաւ և թողուց Յազկերտ. և որովհետև քահանայք և գլխաւոր նախարարք բողոքեր էին առ նա ընդդէմ Վասակայ, կանչեց զանոնք իր դուռը, զոմանս կամաւ և զոմանս բռնի. և բոլոր Պարսից տաճկին առջև քննելով՝ յանցաւոր գտաւ զչարութեացս պարտ իշխանն Սիւնեաց Վասակ. և գտատպարտեց մահուան բանտի, ուր և չարաչար տաւերով մեռաւ: Քահանայից գլխաւորները Ս. Ղևոնդեանք, նահատակել տուաւ (յամի 453). իսկ Հայոց նախարարները բանտեց՝ ի Պարսկաստան, ուր և մնացին զանազան պատճառաւ 18 տարւոյ չափ. յետոյ Պերոզի Թագաւորութեան տաճն արձակուեցան դարձան իրենց հայրենիքը, ուր կային գեռ սեցած ուրացող Հայերէն. և նորէն տանց գլուխ եղեալ՝ յանցաւոր գտաւ զչարութեացս պարտ իշխանն Սիւնեաց Վասակ. և գտատպարտեց մահուան բանտի, ուր և չարաչար տաւերով մեռաւ: Քահանայից գլխաւորները Ս. Ղևոնդեանք, նահատակել տուաւ (յամի 453). իսկ Հայոց նախարարները բանտեց՝ ի Պարսկաստան, ուր և մնացին զանազան պատճառաւ 18 տարւոյ չափ. յետոյ Պերոզի Թագաւորութեան տաճն արձակուեցան դարձան իրենց հայրենիքը, ուր կային գեռ սեցած ուրացող Հայերէն. և նորէն տանց գլխաւորութեամբ սկսան Պարսք հակառակիլ ոխատապահաց, որոց գլուխ կեցաւ Վարդանայ արժանաւոր եղբօրորդին Վահան. և քանիմը տարի պատերազմով յօգնեցնելով Պարսից զօրավարները, վերջապէս տիպեց և հաւանեցուց զԹագաւորը՝ որ Թողու զՀայս ազատ իրենց կրօնից և հայրենի սովորութեանց և իշխանութեանց

ՋԼ. և նոյն ինքն Վահան եղաւ բոլոր Հայոց վե. րակեցուս եշխանապետ և երբ փոխարքայ, մարզ. պան կոչմամբ, յետ 35 տարւոյ պատերազմին Վարդանանց:

Ահա այս եղաւ հետևանքն Շաւարշանի երրորդ հանդիպին: Այսպէս կատարեց Վարդան իր օր մ'ըսածը՝ Պարսից Թագաւորին և բոլոր արքու. նեաց առջև, թէ այնպիսի գործ մը պիտի գոր. ծեմ՝ որ բոլոր աշխարհք պատմըւի մինչև յաւի. տեան [1]: Յիրաւի, մեր նախահօր Հայկին օրէն և իրեն Թուռնորդւոյն Գեղեցիկին Ասլայի օրէն ին. ջուան յարքայորդին Թորոս և ինջուան'ի քաջն Վխտարիտ, զօրավար Ջ Լեռնի, վերջին Թագա. ւորին Հայոց, Հայ իշխանաց և զօրավարաց մէջ՝ ամենէն սիրելին և ուսնելին մեր Հայոց ազգի խո. րանաց, սրտից և բերանոց մէջ՝ է կարծէն Վար. դան, որդի Համազասպայ Մամիկոնէից տեառն և Հայոց սպարապետի և երբեմն իշխանապետի, Թուն մեծին աստուածապատիւ հայրապետին Սահակայ Պարթևի. որոց քաջութեան և արդու. թեան գրկաց մէջ ծնաւ, սնաւ, գործեց ու մե. ռաւ. պատուական կենօքն՝ ոչ միայն իր ազգէն՝ ինչուան Թագաւորի տեղակալութեամբ կամ ար. քունի տան պահպանութեամբ, այլ և'ի Յունաց և'ի Պարսից. բոլոր Հայոց սպարապետ ըլլալով քան տարի, ազգային և օտար նշանաւոր զօրա. վարաց շատէն վեր անցաւ. 42 մեծ ճակատամար.

1 « Յայտ հետե այսպէս կամք են (իմ), ջանամ զի թէ
» ցայժմ գործեալ ինչ իցէ, և ոչ արժանի անուան և գո.
» վութեան. յայտ հետե հնարիմ ամենայն զօրութեամբ
» և ուժով օգնականութեամբն Աստուծոյ, գործել գործ
» այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և'ի
» կայսեր դրանն և յայլ ազգս՝ պատմեցի համբաւն
» այն, մինչև ցյաւիտեան »: — Ղազար Փարպեցի:

ան մէջ յաղթող ելլելով, զոր աւելի Պարսից ծա-
ռայութե՛ան մէջ ըրած էր զանազան աշխարհքներ,
ինչուան Խորասանի և Թուրքաստանի անապա-
տին մէջ Մէրուա կամ Մէրվիրուա գետոյն վրայ,
ուր նոյն ինքն Յազկերտ Թագաւորն ակնատես
ըլլալով անոր քաջութեանը, և ուրիշ գործքերն
այլ լսելով, հիմա իր զօրաց կոտորածէն և նախա-
րարաց սպանուելէն աւելի՝ Վարդանայ մահուան
վրայ ցաւեցաւ, և դառափեռեց զՎասակ իբրև
պատճառ անոր մահուանը. և բոլոր արքունեաց
առջև կ'ըսէր, « Թէ զայնպիսի քաջ և պիտանի և
» զվաստակաւորն մեր՝ զՎարդան.... և կայսր
» (Յունաց) և կամ Հնոց արքայ բռնութեամբ
» յինէն հանել կամէին, (եա) ամենայն Արեաց
» (Պարսից) ուժովս կռուէի, և ջայլ հանդչէլ,
» մինչև այսրէն յիս հանէի »: Պանծալի վկայու-
թիւն և արժանաւոր համարումնք. բայց ափսո՜ս
քեզ ո՛վ կոյր Թագաւոր, որ անխոհեմութեամբ
կորուսիր այնպիսի պիտանի մարդը, զոր միայն
իր ձեռարիս սիրելի հայրենիքն և եկեղեցին ան-
կորուստ պահէն մինչև ցայսօր:

Վարդան նահատակութեանն աւետն գոնէ յիս-
նամեան պիտի ըլլար. իրեն ժառանգ արու զա-
ւակ չթողուց, անոր համար Մամիկոնէից տէրու-
թիւնն անցաւ իր Հմայեակ եղբօրը. որ նոյնպէս
քիչ աւեներն նահատակուելով, յաջորդեց անոր
որդին Հռչակաւոր կտրիճն Վահան, յեա գար-
ձին՛ի Պարսից: Բայց գուսան մը ուներ Վարդան՝
իր հօրը և իր գեղեցկութեան պատճառաւ կրկին
անուամբ կոչուած, Վարդենի և Շուշանիկ, որ Վը-
րաց քրեշխին կամ Գուգարաց նահապետին Վազ-
գենի տիկին եղաւ, և անոր անդուլ ձեռքով նա-
հատակուեցաւ, երկայն և աքանչելի համբերու-
թեամբ և խոնարհութեամբ, յայտնի ցուցմունքով
որ գուսան է Վարդանայ և Թուանեայ Ս. Սահա-

կայ, որոց փառք մ՚այլ աւելցուց, մեր եկեղեցւոյ ոճնեըլն վկայուհեաց պարծանք ըլլալով, և ցուցած արուեստեամբն՝ ոչ պակաս քան զքաջսամարտիկ սուրբ գունդն Վարդանանց:

Վարդանայ անգին մարմինը, անշուշտ հաւատարիմ Մամիկոնեանքն՝ էթոլուցին աւար Պարսից, այլ իբրև պանծալի նշան և գրօշ հայրենեաց՝ քաջաբար վերուցին: Նշխարքն զանազան տեղ ցրուեցան, և յետոյ մինչև՛ ի Համչէն, ուր կու յիշուին և՛ ի սկիզբն ԺԶ դարու: Բայց Ոգին հայրենեաց, հաւատարիմն Հայաստանի, որ իր քաջանշան որդւոց վարձու և անմահութեան մէկ մէկ անակնկալ և վսեմական բան կամ անուն կու հնարէր, յափշտակեց Վարդանայ նշխարաց մէջէն այն Թանկ գլուխը՝ որ զինքը դնելով բոլոր Հայ աշխարհին և եկեղեցւոյ վրայ՝ աւելի բարձրացուց զանոնք, և այն ջաջուռ աչքը՝ որ երեսուն տարի արևելից և արևմտից մէջ քաջագոյն և սրբագոյն վարուէր էր բանակաց, յաղթութեանց վրձռահատ, և պատկաց հաւաքուլ. առաւ դրաւ՝ անոր մարմնով մայրենի նախահաւուն և հոգւով հօրն՝ հանգստարանին մէջ, Ս. Լուսաւորչի նըշխարաց քով:... Սեպուհ լերան արքայական սարեղբոն մէջ միաբանեցան երեք վեհագոյն նշխարք և մեծագոյն յիշատակք և աստուածափառ նահատակքն Հայոց. ԳՐԻԳՈՐ, ՏՐԴԱՏ, և ՎԱՐԴԱՆ:

## Է

Ս. Վարդանանց վրայ երգուած գանձ մը լսենք, որ բազմաց անծանօթ է.

« Որ զաւետեան յաւետեանի ընտրս առատապէս, արարեր զիմանալի զօրս վերինս քեզ՝ ի հաճոյս Թիւն. հաձեցար և՛ ի մարդկանէ առնուլ սպա-

աաւուրս և փառաբանիչս անուանդ քոյ սրբոյ, ընդ որս և՝ ի շառաւիղէ մերոյն համայնից հօրն լուսոյ՝ զԲաջն Վարդան, հանդերձ իւրայովքն. զորս կարպեցեր՝ ի զօրս վերինս գերապանձ լուսով զարդարեալ. ընդ որս Աստուածոյ զօրացն յայտնապէս տեսեալ՝ ի վերուստ իջեալ պատկ լուսոյ բոլորեալ: Ընկալ Տէր, զաղաչանս միաբան ժողովելոցս քեզ՝ ի հաճութիւն. ալաչեմք:

Վասնական վիպասանութեամբ պատմաբանի ձեր գործ հանդիպի, Բաջդ Վարդան, արի, երջանիկ, հանդերձ միախոհովք ընդ քեզ վառեցովք, Թիւս հազարաց և երից տասանց հանդերձ վեցեկի Թուով. լիալիր սիրով վառեալ՝ ի սէրն Աստուծոյ. հանձարական ձեր իմաստութեամբ, մաքուր անձամբ, մաքրափայլ մտօք, մաքրազարդից գոլ հանդիսակից, արժանաւորք յաւէտ գովութեան, տիրապէս հաճոյք Աստուծոյ: — Ընկալ, և այլն:

Աստուածդ ձեզ անուն քաջութեան յերկինս և յերկրի, քաջ զօրականք, ընտրեալք Աստուծոյ. որք ըստ հրամանի փրկչին Յիսուսի սպառազինեալք՝ մեծաւ հաւատովք, բարձեալք ըզխաչն տէրունական, յուսով հետևեալք զհետ խաչելոյն, տեսեալք Հոգւոյն, բանիւ բարձրելոյն ամրացուցեալք զմեզ իմանալիս, կրկին մարդով կրկնակի վառեալք որպէս զքաջք՝ ի պատերազմի, վանեալք զդունդս լեգէոնաց հակառակորդացն ճշմարտութեան: Ընկալ, և այլն:

Էական լուսոյն հետևեալք՝ յերկրէ յերկինս ըռահ կազմեալ, վանն Քանապարհին ճշմարտութեանն՝ Քամբարտապատ Քանապարհ հորդեալք, զևարդախութիւն ոնայնախոհացն՝ արդարութեանն ընտրանաւ յայտնեալ, տուր երկայր ոճնելոք բարձեալք, վիճաբարս ազգին վաշխուէրս՝ ի մաքառումն պատրաստական. զծաղկածին

10249926



*դաշան Վաանական՝ [1] կարմրածաղիկ արեամբ ձեր ներկեալ, արգասաւոր ձերով հանդիսիւ զարդարելով զբամբիշ Քրիստոսի: Ընկալ, ևն:*

*Սուրբք և սիրեցեալք և ճշմարիտ զօրականք ընտրեալք, ըստ հաճոյից Տեառն պատրաստեալք, զբարիոք մարտն մարտուցեալք՝ ի յաղթական ձեր պատերազմի, զբրաբիոնն ձեր մրցանակի արժանապէս յանձին ընկալեալք. որպէս զքաջ յաւէտ նահատակք արիական ձեր պատերազմաւ Թևակոխեալք՝ ի վերնասիոնն՝ ի կենդանւոյն քաղաք Աստուծոյ, ի պօղոսեան մայրն առաքեալ, քաղաքակից գոյք հանդիսի. բարեխօս լերուք առ Տէր վանն ոծնողացս զիշատակս ձեր, զօրականք ընտրեալք: Ընկալ, և այլն:*

*Ա յս գանձիս կամ քարոզիս հեղինակն է Մովսէս ոմն, ինչպէս որ անագրուխս տառքն ցուցընեն, ոյոյ առաջին և վերջի տներն աւելորդ սեպեցինք հոս դնել, անոնց մէջ Վարդանանց յիշատակութիւն չըլլալով. օրինակն 620 տարուան ձեռագրէ մը առնուած է, որ հեղինակին բաւական հնութիւն ալ ցուցընէ:*

[1] *Կ'երևի թէ հեղինակն կամ գրողն չփոթմամբ կու յիշէ հոս, Ս. Գրիգորիսի նահատակութեան դաշտը Վոփնոյեան, փոխանակ ըսելու Շահաբզեան կամ Աբփաբզեան:*

10249926

# ԺԱ.

# ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

ԵՒ

# ՍԱՀԱԿԴՈՒԽՏ

## 21 Յուլիսի 736.

## Ա.

Հրոտից ամիան է. արեւն՝ առիւծ աստեղա-
ան մէջ արդարև հրեղէն ձառագայթներովը՝
եբրև առիւծային թաթերով կու լլկէ կու տոչորէ
զերկիր: Հայկայ հրաձօճակ աստղն այլ (Շնիկն)
սկսած է բարձրանալ. ամեն տեղ տաք, ամեն բան
կրակ: Ո՞ւր են այն Հայոց ձիւնեղէն աստնապատ
լերինքն. անոր բևեռային կերպարանքն՝ հիմա
յայրեցեալ գօտի փոխուեր է: Երկու հակադէմ
կլիմայք կ'երևին մեր երկրին մէջ. աստիկ ցըր-
տուԹիւն և աստիկ տաքուԹիւն: Ի՞նչպէս բնա-
կելու է աստնկ երկրի վրայ:... Մեր հարքն, և
մեր եղբարքն անգամ, շատ տեղ գետնի վրայ չէին
բնակեր ուրիշ աշխարհաց բնակչաց նման, գոնէ
տարւոյն երկու ծայրայեղ յեղանակաց աստեն,
այլ անկէ վար կամ անկէ վեր. այսինքն, ձմեռն՝
երկրին երեսաց տակ, կէս գետնափորս տանց մէջ,
նման իմն հոզաթմբիկը կենդանեաց. իսկ ամառն՝

10249926



այլ աւելի վայելչապէս, երկրիս սովորական եւ բեռէն վեր, օդասահման կենդանեաց և թռչնոց հետ. կամ լերանց և սարից վրայ, կամ ծառոց և ձեռակերտ բարձրաբանդակաց վրայ, ձուլերու ցիցերու վրայ հաստատելով դարպասները և ննջարանները: Սահք են Հովտ և Հովանոց և Հովոց փեղկէն Հայոց. որ Թորգոմայ օրերէն 'ի վեր մինչև ցայսօր սիրելի և բաղձալի են 'ի Հայաստան և Հայաստանի եզերքը բնակող ազգաց. և ինչ որ այսօր Ռուսաց և Օսմանեանց իշխանաւորքն և զօրապետք կ'ընեն երկրին բնիկ ժողովրդեան հետ՝ անոր բարձրաբանդակաց վրայ սմոռնանալով, զնոյն 4000 տարի առաջ այլ Բաբելոնի և Նինուէի Թագաւորք և իշխանք, մեր Թագաւորաց, իշխանաց և ռամկաց հետ:... Ո՞րչափ այլադէմ, այլախոհ, այլակամ ժողովուրդք, ջուրք և տեարք ամռնացան բնակեցան հոն 'ի հովս Հայոց, և անցան գնացին, շատերն անդարձ. իսկ երկիր դարձեալ նոյնպէս իր ամառանոցը կու պատրաստէ. նոյնպէս կու բուսանին ծառք և ծաղիկունք, նոյնպէս կու գան ծիծառունք և կռունկք. նոյն հովք և նոյն հովանիք Հայոց. և նոյն.... այո, ըսենք կիսամաղձիկ կրնք, և նոյն սերտունդք բնիկ նախնեաց, դեռ ևս վկայք երեւելի այլազգեաց, և վայելողք հովին և զովին:

Օրհնեա՜լ ըլլան հովքն Հայոց, հովք հայրենեաց, զոր 'ի մխիթար և 'ի մուսայուսին երկրին ձմերան՝ պարգևեց մեզ դրախտին անկողն, Աստուածատեան. օրհնեա՜լ հովն և զովն՝ որ 'ի ցած ձորերէ և դաշտերէ վեր կանչելով ժողվելով զՀայաստանեայս՝ երկրին այն կոնաձև կամ տափաձև բարձանց վրայ, իբրև 'ի վերայ սեղանոյ բնութեան, բնաբար այլ կ'ազդեին անոնց՝ արարչական ծածկ մեծութիւնը, վսեմութիւնը, գեղեցկութիւնը, զանազանութիւնը: Կ'առողջանային կ'ու-

ժողովային կու զուարթանային միտք և մարմին. Թագաւորն կու հպարտանար, և ոչ անիրաւէր, որ Աստուած իր իշխանութեան տակ ձգեր է այն հովտաւն սահմանները, և անոնց աշխոյժ ծըննդեքը. գինուորք և ազատազունք հոն կու զըրացըննէին, Թեթևցըննէին, ճկուն և տոկուն կ'ըննէին իրենց կարիճ անձինքը, սակէ սար՝ այծեմանց և ցուցց եանէ ընկնալով յորս. հավիւք՝ հոն կու ծաւալէին երկրին և երկրագործութեան կեանդանի հարստութիւնը և օգնութիւնը. արուեստաւորք և առևտիւք՝ օրական և ամսական աշխատութիւնները հոն կու հանդչեցըննէին. քանասէրք և հոգեսէրք անգամ, պաշտօնեայք Տրի և Քրիստոսի, պարապուք ուսմանց և կրօնից, հոն այն հովերուն մէջ գոնէ ժամ ժամ զովանալով, աւելի յստակ մտօք և պայծառ տեսութեամբ կ'ելլէին բարձրագոյն տեղուանք, 'ի կաճառս հռետորաց, 'ի պարս բանաստեղծից, յերգս հրեշտակաց. և իրենց հոգեշունչ Օրհնութիւնները և Շարականը երգելով՝ կ'ըմբնէին, եկեղեցւոյն Շարականը և Մանրուսմունքը՝ նոր նոր եղանակով հարստացըննելու. և ամառնային հովանոցներու ազգած երկնախառն հոգին և շունչն՝ զարմանալի մտածութեամբ ինչուան խորագոյն ձմերան խորանիստ տաճարաց մէջ հնչեցըննելու, և ձայներնին հասցըննելու յետ հազար տարիներու՝ մինչև մեզ այլ: Օրհնեալ ուրեմն միանգամ այլ ըսենք, այն երկնաշունչ Հովքն Հայոց, որ այսպէս հոգևորեցին մեր հարքը, և անոնց յարդարեալ շնչովն՝ զմեզ այլ կու հոգևորեն այսօր:...

Ե՛կ, Հայկակ, եղնենք այսօր մենք այլ այն բարձրանազ տեղերուն, հայրենեաց գարերուն, Հայոց հովերուն, Սիւնեաց զովերուն վրայ. այն տեղուանքը՝ ուր Բաբկ՝[1] ազատեալ 'ի գանդրկա-

1 Հայր ուրացելոյն Վասակայ:

ասելեւէնէ Պարսից՝ ուրախութեամբ որպէս կ'ելնէր, «խնդալով խայտալով՝ ի վերայ սովորական » Թատերացն և ինջոյից իրախարանացն, ՚ի լեռ- » րինա որոստան և բազմաջուխիր վայրացն, ՚ի լեռ- » րինա Սիւնեացն [1] »:

## Բ

Ահա խալէն խնամուէն և որպէն աբելի պիտի ախորժիս անշուշտ, երբ քիչ մը յօդնութիւն առնելով, և աչքերդ բնութեան բարձրագլուխ և խոր- րածոց գեղեցկութեանց վայ պտըտցընելով Թո- ղուս միտքդ վեր վար ժուռ գալու, և յանկարծ լսես վերը յիշեալ պաշտօնէից մեկուն ձայնը, որ իր աշխատանին յարմար և իր բնատուր շնորհաց համեմատ՝ բարձրագոյն մտածութեց մէջ Թրուջը- ռելով վերանալով, Սիւնեաց Սիոնն լեռնէն կու- գայ Երուսաղէմի Սիոնը, անկէց այլ անդին, հեռու, իսը կ'իջնէ մինչև յատուկս կարմիր Ծո- վուն. հոն կու պտըտի մեծ նախամարգարէին հետ, կու դիտէ ծովակըտուր գաւազանին հրաշ- քը, կու լսէ անոր հրաշալի Օրհնեացուքը. և իր բարձր հանճարոյն վայ վատահացեալ՝ աբելի վե- հագոյն անձին (Քրիստոսի) շնորհօք, կու փորձէ աբելի հոգևացընել հայացընելայն հրաշալի օրհնե- երգը. և սլանալով իր հայկական հովոց վայ՝ կու սկսի նուագել.

«Յաղթական քեզ օրհնութիւնք, Տէր. որ ըզ- խորոց ծովուն հերձեր զջուրն. զի ՚ի նմա զքառնա- ւոլին ջաղխեցեր զգլուխ. և զարդեւլեալն՝ ՚ի ձեռն խաչի քո՝ վերածեր ՚ի կեանս:

1 Ստեփ. Ոսկեբերեան:

ահա կու տեսանեմք՝ որ իբրև տեղեակ այս տեղե-
րուս՝ անտուելոր և անմարդաձայն ձամբով մը կու
գայ, Աւազ ալբեր ընթացքը կու բռնէ, անոր
հովանաւոր ափանցը ընթացիւք. քալուածքն ե-
րագ, հաստատ և իբր սպառնալից. նոյնը կար-
ծել տան դէմքն այլ, որոյ սևաթել չոլյանակին
վրայ հագիւ քիչ մը արծաթագոյն խառնուածք
կ'երևնայ. բարձրակատար յօնքն քիչ մը իրար
մօտեցեր են լայնաբոլոր ճակտին կեդրոնին տակ.
երեսքն ջոր կարմրութեամբ մը կու վառին. բայց
քանի կու յառաջէ՝ դէմքն կու թուլանան, հան-
գարտութիւնն կ'աւելնայ. կարծես թէ ոտքին
տակ ցաւքերող մորեխայց, գլխուն վրայ կախաւած
ճպուռնց աղաչական ճռճռմանց ոլորմելով, և կա-
նաչ հովանոյն պատուռուածոց միջէն երևցած
կաղը կաղը երկնից կապոյտներէն խրատուած՝
կռնձած ճակատը պարզելով, խարշափուն տե-
րևոց միջէն սաւրուելիկ հովերու շնչմամբքն սրտա-
բացուելով, և ջրոյն մանրաքրքիջ կարկաչանօք
հրաւիրուած, քալուածքը կու ծանրացընէ, կու
դադրի. կու նայի ծառոց և աղեաց վրայ. կու ձայ-
նէ իր փոքրաւորաց և սպասաւորաց յառաջ գալ,
և հոն իր վրանը կանգնել և հեռանալ. և երբ
գինքը իր ցանկալի առանձնութեանը մէջ կու
գտնէ, վերարկուն վար դնելով, կ'երթայ աղբիւ-
րին յատակ հոսանաց տակ տաքութիւնը բժշկե-
լու. կու զովանայ, կու ջնջուի, և աղբերափանց
մօտ յարմար լայնամիջոց ուռենի ծառ մը տես-
նելով՝ կ'առնու իր փայտաշէն հանգստանոցը, ա-
մառուան հովոցի անկողինը, կու հաստատէ այն
կանաչ-վարսպոյր հովանեաց տակ, և զԱստուած
օրհնելով՝ անոր քնաքուն քնազարդ տաճարին
մէջ, հանդիստ՝ ի քուն կու փոխուի, մտածու-
թիւնքն յերազ և՝ ի տեսիլս։... Արդեօք կու
տեսնէր քիչ մը վերջը ըլլալիքն այլ. երազական

առախքանելուն քաջայայտ ձիւարտուԹիՒ մէջ մըտնել ու ճնաւն առանց արԹըննալու։... Ո՛վ սխըրալի և առակալի դիպուած, և գրեԹէ անունան այսպիսի անունն մարդու մը հաւատը։

## Դ

Բայց յառաջ քան զդիպուածն՝ քիչ մ՚այլ ձանչցիր, Հայկակ, այս վեմամիտ մարդուս կեանքը և գործքը։ Վասն մտացն յարմար կամ ԹէԹ առիԹ իսկ այնպիսի մտաց՝ վեմական ծագումն ունէր. Հայոց մայրաքաղաքին (ուր կուՏնատէր կաԹողիկոսն և Արաբացի ոստիկանն աշխարհատեսուչ), ապաԹեցաւ Սահակ՝ որ յետ կաԹողիկոսին նախապատիւ կրնայ ըսուիլ Դուռնայ եկեղեցւոյ պաշտօնէից մէջ, ընծայեց աշխարհիս զԱռեփաննոս, իբրև Զաքարիա մը Աստուծոյ սրբարապոյն սեղանոյն խունկ ածելու առեն՝ իրմէ արժանաւոր քահանայապու զաւակ մը մայԹելով և ընդունելով, անոր Յովհաննէսին նման՝ զոր, որ արդարև անոր պէս այլ վախճան մ՚ունեցաւ։ ԱպաԹեցաւ հայրն՝ յայտնի է որ իր որդին առաջին տարիներէն սկսաւ վարժեցընել և կրԹել ուսմանց և եկեղեցական պաշտամանց. որոց աՒելի յարմար և վեհագոյն վարժարան մ՚այլ չէր կրնար գտնել քան զնոյն իսկ Հայոց կաԹողիկոսարանը, ուր եկեղեցւոյ ոՒխտին համար մանաւանդ ուսուՒնարան մ՚ունէին մեր հայրապետքն. որոց աԹոռը կուՏնատէր այն առեն Տէր Սահակ, ազնուական, միանգամայն և քանավարժ քանասեղծ անձն, որպէս վկայեն իր գրչէն մնացեալ քանի մը ձառք և շարականք. անշուշտ ձանչցաւ հանճարեղ կաԹողիկոսն իր հանձարել հաւքսակը, և յանձնեց մանաւանդ իմոց վարժապետաց։

աարքեպուԹեան վրայ, և իշխանն յաղԹող ելաւ. հմուԹեամբ՝ Յունաց Ս. Հարց վարդապետուԹիւնը հարազատօրէն մէջ բերելով, միանգամայն փիլիսոփայական պատճառաբանուԹեամբ քննելով: Իմացաւ Ստեփաննոս որ իմաստասիրական տրամաբանուԹեանց համար բաւական չէր ինչուան այն աեէն սովրած'ի Հայս, և պէտք էր աղբիւրներէն քննել սուրբ վարդապետաց գրուածքը: Եւ որովհետև Սմբատայ հետ աւրուած էր՝ գաղտուկ և ծպտելով եկաւ'ի Դըւնայ և գնաց'ի Կ.Պօլիս. և փնտռելով գտաւ հոն վարպետ Յոյն իմաստասէր մը որ և Ճգնաւորի պէս կ'ապրէր'ի միայնուԹեան. անոր աշակերտեցաւ Թէ լեզուն սովրելու և Թէ փիլիսոփայուԹիւն. յոնարներէն զատ լատիներէն այլ սովրեցաւ որ արևմտեան եկեղեցւոյ Հարց վարդապետուԹեանն այլ տեղեկանայ: Իսկ Սմբատ դժուարելով անոր գաղտուկ երԹալուն, իմացաւ ուր ըլլալն, և նախանձայուզուԹեամբ իմացուց կայսեր, Ստեփաննոսի ով և ինչ կարծեաց տէր ըլլալը: Կայսրն այլ, կ'ըսէ պատմիչն, հրաման տուաւ քննելու զՍտեփաննոս. իսկ սա իր վարպետէն խրատուած՝ ըսաւ, Թէ ես ուրիշի հետ բան չունիմ, այլ պանդուխտ եմ, եկած իմ ապրուստս հոգալու և իմ բարուցս աշխատելու: Այս խօսքով ոչ միայն ազատուԹիւն գտաւ, այլ և համակուԹիւն տուաւ քաղքէն գալու և Յունաց եկեղեցիները և ուսումնարանները մանելու. մանաւանդ Ս. Սոփիայ գրատունը, ուսկի ուզած գրքերը կ'առնուր, կարդար, կ'օրինակէր, Թարգմաներ: Յետոյ ԱԹէնք այլ գնաց, հոն այլ հին իմաստասիրաց Թողած համբաւոյն մնացորդը քաղելու. և նոր գրքեր քննելու: Եւ երբ դարձաւ՝ աւելի ծանօԹացաւ Յունաց մեծերուն, պատրիարքարանին և արքունեաց: Հոս էր այն

աաեն Դաւիթ հայազգի իշխանաձն, որ հիւպատուսութեան և թագաւորական սեղանակցութեան պատիւն ունէր, և յոունարէն լեզուն կատարեալ գիտէր: Սակայ օգնականութեամբը կամ աչքէ անցնելովն՝ Թարգմանեց Սահմանում զանազան Ս. Հարց գրուածներ. նախ Ս. Դիոնէսիոսի արիսպագացւոյն խրիմնասքան խորհրդոց գրքերը, որոյ մեին բանից այլ լուծմունք կամ մեկնութիւն գրեց Համառօտ. այս գործս՝ի գլուխ հանեց յամի Տեառն 712. մէկ երկու տարի ետև Թարգմանեց Ս. կիւրղի Պատրպհանոյ ըստուած գիրքն և անոր զանազան նիւներն և ճառերն. — միւս տարին, 716, Ղեսպիան գրոյ մեկնութիւն մը Թարգմանեց. յաջորդ տարին, 717, Ս. Գրիգորի Նիւսացւոյ Ցաղագս բնութեան և կազմութեան մարդոյն անուանեալ գրքերը. և հաւանօրէն ուրիշ գրքեր այլ: Դաւթի ձեռքով համարձակութիւն առած՝ կայսերական գրատունն այլ քննեց, և գտաւ ոսկետուփ մատեան մը նախնի Ս. Հարց գործոց, զոր արդէն ընդունէին Հայք. որով կայսրն այլ հաճելով այս բանիս՝ յանձնարարական գրով կամ օգնականութեամբ խրեց զՍահմանում՝ի Հռոմ, ըստ խնդրոյ նորա, որ այն տեղի հռչակաւոր մատենադարանն այլ քննէ. հոն գտաւ Սահմանոս Ցովհաննու Շաւուշեցւոյ Ս. Հարց գործոց ընտիր և հին օրինակներ, ինչպէս Ս. Աթանասի, Ս. Եպիփանու, և Ս. կիւրղի Գանձոյ գրքերն. և հաւանօրէն ինչ որ մինչև այն ատեն հայերէն Թարգմանուած չէր՝ ինքն Թարգմանեց: Ասոնցմէ գուրս Թարգմանեց Ս. Մելիտի ըստուած տեսիլքն կամ գուշակութիւնքն, որ ուրիշն չինած անվաւեր գրուածք են. Իլխանի առման պատմութիւն մը հաւատօ, յորում Իլխանի տուումն 1194 տարի Քրիստոսէ առաջ կ'ըսուի: Ուրիշ շատ գրքեր այլ, կամ բնագիրը կամ Թարգմանած՝ հետն ա-

ած , չուզեց ՚ի Հռոմայ նորէն դառնալ ՚ի Կ.Պօ-
լիս , ուր արդէն 15 տարի կեցեր էր . այլ նաւեց
յԱթիա և դարձաւ ՚ի Հայրենիան ՚ի Հայս :
Իր հեռատրութեան 15 կամ 20 տարուան մի-
ջոց՝ մեր աչխարհքն շատ փոփոխութիւններ տե-
սեր մանաւանդ թէ կրեր էր Արաբացւոց ոտի-
կանները . Հայոց իշխանքն նուաղեր էին , Եղիա
կաթուղիկոսն շատոնց վախճաներ էր , և ըստ ո-
մանց նաև իր յաջորդն՝ մեծանունն Յովհաննէս
Օձնեցի , և Դաւիթ Արամունեցին էր կաթողիկո-
ս որ և մեծ պատուով ընդունեցաւ զՍտեփաննոս
և իր բերած գրքերը . որոնցմէ զատ ուներ նաև
նամակ մ՚այլ կինքեալ , Կոստանդնուպօլսոյ պատ-
րիարքէն Ս . Գերմանոսէն . որոյ ծանօթ ըլլա-
լով ՚ի Կոստանդնուպօլիս և շատ հեղ հաւատոյ
վասյ խօսելով , և յորդորուելով ևս պատրիար-
քէն՝ Յունաց հետ հաղորդուելու , Ստեփան-
նոս կու զգուշանար , իր կաթողիկոսին հաւա-
նութիւնը չառած : Անոր համար Ս . Գերմանոս
գրեց այն հոգեվից Թուղթը , « Բզիպոս ե խաղաղո-
» ՚ին մեր » . զոր և ինքն Ստեփաննոս թարգմա-
նեց և տուաւ կաթողիկոսին , և անոր հրամանաւն
այլ , կ՚ըսեն , գրեց պատասխանը , « Զգիպոսի խո-
» ղաղութին աս բերելով » : Սակայն այս պատաս-
խանը , հիմա մեր ձեռք եղած օրինակներուն նա-
յելով՝ հեռի է ՚ի խաղաղութենէ Քրիստոսի և ՚ի
հոգւոյն Գերմանոսի և յիմաստութենէն Ստե-
փաննոսի , թէ և շատք ՚ի նախնեաց մերոց յանուն
Ստեփաննոսի յիշեն . այլ եղան և երկբայողք և
օտար ձեռքի խառնուրդ ցուցընողք [1] . զոր զգօն
քննող մը կրնայ ստուգել թէ այն երկու Թղթե-
րը կարդալով , թէ Ստեփաննոսի ուրիշ գրուածք-
ները , և թէ մանաւանդ անոր հանճարը և ձօ-

1 Ինչպէս հոչակաւոր վարդապետն Վանական :

նաց հետ այնքան կենակցութիւնը: Ոչ միայն կա-
թողիկոսն Հայոց՝ այլ և իշխանք Ճանչցան և պա-
տուեցին զՍտեփաննոս, մանաւանդ Սիւնեցիք, ո-
րոց քով վարդապետ և ուսուցիչ եղեր էր. և ո-
րովհետև իրենց եպիսկոպոսն Յովհան՝ յաջորդն
Աիանիայի, արդէն վախճանած էր, Բաբգէն և
Գուրգէն իշխանք Սիւնեաց խնդրեցին՝ի կաթող-
կոսէն որ ձեռնադրէ զՍտեփաննոս իրենց եպիս-
կոպոս: Կաթողիկոսն ոչ միայն եպիսկոպոս ձեռ-
նադրեց զինա, այլ և՝ի պատիւ արժանեաց նորա
անուանեց Ղեպատոլիպ. և Սիւնեաց եպիսկոպո-
սութեան աթոռը որ մինչև այն ատեն եօթնեերորդ
կու սեպուէր՝ի կարգի եպիսկոպոսաց, բարձրա-
ցուց յերրորդ կարգ, և Սիւնեաց աշխարհին ու-
րիշ եպիսկոպոսաներուն նախապահ դրաւ զինա:

Մէկ տարի մը միայն կատարեց Ստեփաննոս
իր պաշտօնը արժանապէս, թէ հովուական այ-
ցելութեամբ և թէ քարոզելով. և գրելով՝ զատ
յատուկին գրածներէն՝ զանազան խնդրոց վրայ
Ճառեր, որոցմէ հասին մեզի քանի մը հատ, քա-
նի մը մեկնութիւնք այլ եկեղեցւոյ խորհրդոց և
ծիսից. և Ղևոնդիւն մը հին փէրճանին, զոր հատա-
նօրէն՝ի Կոստանդնուպոլիս գրած է: Սրբազան
երգոց մատն այլ Թուի թէ երգեց այս միջոցիս,
(որ ըստ ոմանց ոչ մէկ տարի՝ այլ ութ տարի
քշեց, բայց կ'երևի թէ առաջին տարիներն Սիւ-
նեաց աթոռոյն անտէրութեան ժամանակն են):

Ո՞րքան ազնիւ և ցանկալի երգեր և այլ գրուածք
նեը և թարգմանութիւնները փափաքելի և յու-
սալի էր այսպիսի բանիբուն վարդապետէ մը,
որ յետ ոսկեգիր Թարգմանչաց և գարուն՝ ա-
ռաջին Թարգմանիչ կրնայ ըսուիլ. մինչև ոմանք
նոյն իսկ Թարգմանչաց մէջ կու խառնեն զինքը,
կամ իր գործքերը կ'ընծայեն Թարգմանչաց ժա-
մանակակից Ստեփաննոսի մը՝ որ չէ եղած:

10249926



# Ե

Դառնանք հիմա՛ի Մոզն ասան, ուր շատ անգամ եկած էր Ստեփաննոս այցելութեան. այս առելոյն ատեն չինուածքեամբ ու հարստութեամբ նշանաւոր եղած կ՚երևի, քաղքի մը պէս. և թեև հարուստ քաղքի շնորհօք և անշնորհութեք ոչ աննշան: Եղծ ու մեղծ բարուց պժգալի օրինակ և ցուցանք մը կու յիշէ պատմութիւնն, և անով այլ մեր պատմութիւնը կու լուսցընէ. ցուցանք մը՝ Մեդէայ, Յեզաբելի, Հերովդիադայ առասակէն. անպարկեշտ լկտի և յանդուգն կին մը, հերաւուկ մը, որ թեև շատ ցածազգի ան է այլ ջըլլալով, աւելի համարձակութեամբ կու լըբէր իր գլխէ հանած երիտասարդին հետ, և գայթակղութիւնն կու հրատարակէր: Ատոր համար արթուն եպիսկոպոսն երեք անգամ եկեր խրատեր էր այդ անզգամ զպայուհը, որ չէր խրատուած. իակ այսօր ջորրորդ անգամ յանդիմանելով, և անոր լրբութիւնը տեսնելով՝ հոգևոր իշխանութեն բանադրեց, Ատուծոյ արդար դատաստանին և մարդկան արհամարհանացը թողուց զանիկայ. և այն բարկութե տաքութիւնն էր՝ որ ցորեկուան ատեն հետ խառնուած կու ստիպէր կու տանէր զինքը քիչ մը զովութիւն և հանգիստ փնտռելու, նախ Աւազակաց ալեաց և վերջը Ճոճահուլ հովոցին վրայ: Որչափ որ արտադուն և նեղութիւնն ստատիկ էր եղած, այնքան այլ հանգիստ խոր և խաղաղ եղաւ. և ո՞ գիտէ, կիսարթուն միտքն ինչ մեղեդեաց և խորհրդածութե հետ էր, կամ հոգին՝ աեսլեամբ՝ ոլքան հեռացեր էր այս աշխարհքէս, երբ յանկարծ լրջաք այլ ըստրովին հեռացաւ վերացաւ ատկեց. և երանի թէ

երեսին խոպատատած զովագին հովուն բաքախ-
մամբը և ոչ դահճէ աւելի դժնդակ հարուածով
մը՝ կարկէր շունչն: Սոսկումն և զզուանք կու բերէ
լսելն, Թող թէ պատմելն, այնպիսի անարգ և ե-
ղեռնաւոր վրէժխնդրութիւն մը, մանաւանդ այն-
պիսի արարածէ մը՝ որ կին կ'ըսուի, որ բարու-
թեամբն կակուղ հրեշտակ մը կու դառնայ, չա-
րութեամբն խաստղ սատան: Յանցաւոր և անի-
րաւ կինն այն՝ ոսով լցուած ընդդէմ եպիսկոպո-
սին, ուզեց նոյն օրը դիւական դրդմամբ սարսա-
փելի յիշատակ մը թողուլ աշխարհիս վրչ. և ի-
մանալով անոր ուր տեղ հանդչիլը, պարտաւո-
րեց հոմանին՝ իր անարգ սիրոյն վրայ. մահու զէն-
քը ձեռքը դրաւ, հանեց զնա 'ի ծառն. յայտնի
է լինչ բանի համար: Մարդն Թերևս ոչ այնքան
ճարպիկութեամբ օրչափ վախով դողով կամաց
կամաց վեր ելլելով, երբ տեսաւ Սուրիանոսի
վեհամափայլ դէմքը՝ հրաշալի հանդատեան մը մէջ,
որոյ լսատ պատմէին « իբր զբոց ցոլանայր շունչն
» 'ի վեր, և ճախր առեալ դառնայր անդրէն. և
» հրեշտակ մի կացեալ 'ի անտրան՝ հովանի ունէր
» նմա Թևօքն », սարսափած, Թուլցած, հապիւ
կրցաւ չիտակ վար իջնել, և տեսածը պատմել
հնարքը: Իսկ այն այլանդակ այլափոխ սիրտն՝ այլ
աւելի կատղած՝ նորէն սուրէց, կանացի և գե-
ւացի չողոքով բողոքով, սիրով ու սատով՝ որ ու-
րիշ բան չմտածէ, միայն սպանանէ: Երկրորդ ան-
գամ այլ եւս Թշուառ ու վատ մարդն, բայց և
առաջինէն աւելի սոսկացած սահմռկած՝ ահաւոր
բաներ տեսանելով՝ ծառէն վար ընկաւ քան Թէ
իջաւ: Ահն տեսն հերատուկ չատուկն որ իր առ-
ջի բնութենէն բոլորովին դուրս ելած էր, վատ
և անարի կանչելով մարդուն, Թևերը սոթատելով,
առաւ սուրը. և այն խաբող սատանային հետ սո-
ղոմկելով ծառն 'ի վեր՝ հասաւ հրաշտանչ հրեշն

մը պէս անվնաս և անազդեալ որսոյն վրայ. և այն վսեմ տաճարաձև գլուխը վերցնող սեան (վզին) իջուց անիծեալ հարուածը... այնքան շուտ և շիտակ, մինչև քնացողն՝ մէկ ցնցմամբ արթընցաւ յաւիտենականութեան մէջ. և անկէց տեսնելով իր Մոզան հովտաց և հովից մէջ թողած մարմնոյն արիւնթաթաւ կերպարանքը՝ կանչեց հոգւով. «Տէր, քո է վրէժխնդրութիւն և արդար իրաւունք». ինչպէս որ տեսիլքով յայտնուեցաւ այս՝ նոյ կամ նոյ անուամբ սրբակեաց ճգնաւորի մը, որ այն տեղն մօտ Սիոն լերան վանաց մէջ կ'ապրէր:....

Այն օրուան հուշն՝ իբրև փախչելով և ամաչելով՝ իջաւ բարձրաւանդակ հանգստարաններէն, երեկոյեան հովանիներուն հետ խառնուելով, որոն զովութիւնը զգալով եպիսկոպոսին սպասաւորքն՝ եկան վրանը վերցնելու... Փուշ զարմացք, սոսկումն առաւ զինքնք՝ երբ փայտեղէն մահճէն դեռ կաթկըթած արիւնը տեսան, և աստուածակերպ տէրընին՝ աւազակի մը պէս սրախողխող:... Զերկընչընինք. մեռածէն աւելի իրենք մահացեալ՝ վերուցին մեծահոգի անձին մարմինը, և հանեցին Սիոնի վանքը, ուր լալով և ողբով եկան նոյ և իր միանձնութիւնը. բայց մօտի Սուրհանդակ գեղին քնակիչքն այլ լսելով՝ իրենց գեղջասագին հետ եկան և աղաչելով պաշտօնէից՝ իրենց գեղը իջեցընել տուին մարմինը, և հանգուցին Ս. Քրիստափորի նուիրեալ մատրան մը մէջ առ ժամանակ մի: Սակայն պժգալի գոյժն գեղէ գեղ, քաղաքէ քաղաք տարածեցաւ, անոր հետ նոյ ճգնաւորին տեսիլքն այլ՝ որ սոսկալի պատուհաս մը կուգ սպառնայր բոլոր այն սահմաններուն: Զուշացաւ պատիժն, ըստ պատմչին՝ ահագոր ժաժ և սասանութիւն եղաւ քառասուն օր բոլոր գաւառին մէջ. շատ լեռներ փլան և գետին-

---

նեը բարձրացան, շատ ալբիւրներ յառաքեցան և
յամառք սեղուանք ալբիւրացան. ծուխն ու փո-
շին ամպի պէս կու տարածուէր, և զոլոր բնու-
թիւն՝ի սուգ երևէր. տան հազար հոգիէ աւելի
համրուեցան չէնքերու տակ և գետնին պատա-
ռուածոց մէջ մնացող մեռնողքն, անծանօթներէն
զատ: Այս կէս բնական և կէս բռնական պատու-
հասին հետ՝ բնակչաց վախն և յեռանց աւանդու-
թիւնն խառնուելով՝ ըսին, թէ ժաժին և մշուշին
առեն ողբոց ձայներ այլ լսուէին, իբր թէ վշ
յոր, վշ յոր կանչելով, և անկէ՝ Եղեգեաց ձորն ը-
սուեցաւ Վայոց ձոր. սակայն այս անուն անկէ
հարիւրաւոր տարի առաջ այլ կու լսուէր:

Ֆառատուն օրէն ետև գաղրեցաւ ժաժն ու մը-
շուշն, և ամեն կողմէ եկան, երկրին աւերմունքը
Թողլով՝ նախ անոր հոգևոր տիրոջ արժանաւոր
հանգիստ մը տալու, և եպիսկոպոսաց, քահա-
նայից, վանականաց և ժողովրդեան բազմութիւնը
բառական չտեսնելով, զկաթողիկոսն այլ կանչե-
ցին. և յետ բազմօրեայ գիշեր ցորեկ աղօթից և
պաշտամանց՝ աշխարհահանդէս յուղարկաւորու-
թեամբ վերուցին մարմինը յԱրկազան գիւղէն,
և Արբայ գետոյն դիմացի կողմը անցընելով հանե-
ցին բարձրաւանդակ տեղ մը՝ լերան ստորոտին
վրայ, կանաչաբոլոր մխայնութեան մը, այսինքն
անտառի մը մէջ. ուր շատ հին առեն վեր, և յա-
ռաջ իսկ քան զվուսաւորչին ժամանակն, առա-
քելոց քարոզութեանը հետևող հին քրիստո-
նեայք Սիւնեցիք եկեղեցի մը շիներ էին ի գարուն
մէջ, ի պատիւ Ս. Աստիանոսի. որոյ քով բո-
լորեցին հոգեսէր անձինք իրենց միայնանոցը, և
խստակրօն ճգնութեամբ կ'ապրէին, գիշեր ցո-
րեկ աղօթելով. և կերակրի համար ոչ միայն մաե-
լինէ և կթելինէ հրաժարելով՝ այլ և ամենայն
տալք բանէ, և Թանիկն անգամ Թողլով, անոր

համար կոչուեցան Թանահապ, և տեղն՝ Թանահ-
ոի վանք. ահա հոս բերին հանգուցին Սիւնեաց
իշխանաւեր մեռրապօլտին մարմինը. վրան պըզ-
ոիկ մատուռ մը կանգնեցին. զոր յետ շատ ժա-
մանակի, յամին 1278-9 քակելով՝ մեծ ու քա-
րակոփ գմբեթաւոր եկեղեցի մը շինեցին, և հի-
ման տակ թաղեցին մարմինը իր տապանաւն:
Ա յս եկեղեցին ինչուան հիմա կանգուն կեցած է.
և հիւսիսային կողմը որմնակից ոեղի փոքրիկ քա-
րաշէն մատուռ մը. տեղւոյն բնակիչք կարծեն
Թէ հոն ըլլայ Սահականնոսի գերեզմանն. բայց
պատմութիւնն դեռ եկեղեցւոյն հիման տակ կու
Ձանայէ այն եկեղեցապարտ գլուխը:

## Զ

Իսկ ինչ եղաւ, ըսէ կորաւ այնպիսի գլխոյ գա-
հիճն, հայ Հերովդիադային. արդեօք ժաժին ա-
տեն պատառուած գետնին անդնդոց մէջ ընկղմե-
ցաւ, Թէ ապրեցնելէն աւելի որոտած ու սըրտ-
մըտած մարդկանց արդար վրիժուք պատառ պա-
տառ կորաւեցաւ... Սահականնոս Սատուածոյ ար-
դարութեան և ողորմութեանը յանձներ էր իր
ապանիչը, և իր նախանձն նախօրինակ նախա-
վկային հետ՝ ըսեր էր, «Տէր, մի համարիր զայդ
» գմա 'ի մեղս»: — Ժողովուրդն վախցաւ Սա-
տուծոյ դատաստանը յափշտակելէն. քնութիւնն
պատկառեց իր արարչին կամքէն. իսկ այն որ Սա-
տուած է գթութեանց՝ կակղացուց խստացեալ
այլանդակեալ սիրտը. և այն սեղեխ հերատուկ
Հերովդիադային՝ դարձուց յապաշխարող մը: Ձանչ-
ցաւ կինն՝ իր կարծածէն վեր ըրած չարիքը. և
ինքվինքը դատապարտելով՝ զգեստները պատըռ-
տելով քարերով կուռ ծեծէր կուրծքը. և այն ան-

10249926



պարտ ալեան տեղ՝ իր յիմարած արիւնը թափե-
լով, ինքն իր սոսկալի չարիքը և խայտառակութիւնը
կու պատմէր, կ՚ողբար, կու գոլոքէր, իրաւունք
և պատիժ կ՚ուզէր. և տեսնելով որ իրեն մեծա-
գոյն պատիժ և մարդկանցմէ այլ պատիժ չգըտ-
նելն, գնաց Թանահատ վանքը ալևմտեան կող-
մէն պատող ձորակի մը դիմաց, և հոն գետինը փո-
րելով՝ մտաւ ինչուան՚ի կուրծքը կենդանի գե-
րեզմանի մը մէջ՝ և իբրև անոյշ մեռեալ մը՝ սմաւ
ձմեռ, գիշեր ցորեկ կ՚ողբար կու լար, Թողուելն
կու խնդրէր մեղացը. մինչև ամենուն գուշէն այլ
չարժեցաւ, և աղօթք հրամայուեցաւ անոր հա-
մար. Թողուելեան ձայնն եկաւ՚ի գերեզմանէ
սպանելոյն, « Թողեալ լիցին քեզ մեղք, ով կին
» դու » . զոր և տուրք պատարագի ժամ ամենքն
լսեցին, և Թողուելին աչեսեցին կինոջն: Բայց
նա թէ և շնորհակալեցաւ Աստուծոյ, բայց գետ
զինքն անարժան սեպելով ուրիշ կերպ ապրելու,
ուզեց և մնաց միշտ նոյն կենդանաթաղ գերին մէջ.
և հոն հանդարտ արտասունքով կինքեց ապաշխա-
րող կեանքը. հոն այլ Թաղուեցաւ, իր զոհած
բարեխօսին գիմաց. որ կու Թուի գետ իր վեճա-
կան ձայնը կամ հառաչանքը լսեցընել այն հին և
սրբազան Թաքնուելեան և միայնուելեան խորէն:

## Է

Այլ ո՞ւր է իրեն արժանաւոր խօսնակ մ՚այլ,
որ իր ցաւալի մահը ողբերգէր մեզի: Ո՞ւր էր այն
մովսիսանման Օրհնեացուք երգողին հոգեկցորդ
քոյրն, Մարիամ, որ նոյն և նման երգերը կըրկ-
նէր: — Նախանձելի բազդ, կրնամ ըսել Թէ և
անակնհանելի, և պանծալի փառք հայրենեաց մե-
րոց. մեր օրհներգու դիտապետն, Մեսրոպանոս,

ունէր իր մարմանման Թմբկուհին, մեր եկեղեցւոյ արքազան սիբիլլային, յիսուսասէր Սափիոնէն, հարազատ քոյրն, ՍԱՀԱԿԴՈՒԽՏ. որ աւետեան հետ անոր հոգւոյն նրբութեան և ախորժակաց այլ ժառանգակից էր: Սահակդուխտ այլ համառ երաժիշտ և երգահան էր, և հրեշտականման ելոյնակատար. փափուկ և սպիտակ հասակը կուսութեամբ և հաւատաւորի պարկեշտ ձևովը պըսակած, արդարև մենասէր յաւերժահարսին նըմանի, Թողուց հետացաւ յաշխարհէ, միայն իր ընտանեաց սեփական տուրքը՝ հոգեխօս քնարն առաջ հետը. և մէկ հատիկ արժանաւոր միայնութեան տեղ ընտրեց հոն, ուր իրմէ 400 տարի առաջ, Հայոց օրիորդաց պարագլուխն, նրբասիրտն նրբազգածն, նազելեաց նախատիպն, մեղսամաքրիկն և մենասէրը, Թագապատակ և արքապըսակն ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ, իր հակայ Թագաւոր եղբօր (Տրդատայ) ձեռքով կանգներ էր իր սքանչելի օդասրահ Հռիփսիմը, գառնոյ ձորոյն սիւնասար պատապետ բնաշէն բլրոց վրայ, որք խորանդունդ վիհերու և բազմածոց ձորակներու վրայ նային, և մեր գարուս հմուտ բնաքննիչներն այլ սքանչացուցին: Ան գառնոյ ձորակին ծածուկ ծոցերուն մէջ՝ գառաբերդին, մանաւանդ Թէ հրեշտականերդն Սահակդուխտ, անզբաղ քարայր մը, և հոն անցուց կեանքը, հիանալի բնութեան տեսարանաց մէջ՝ հիանալի երգովք օրհնելով բնութեան Տէրը: Բայց այն անունն քնարին և մեղրաշունչ բերանոյն ձայներն՝ շատ զօրաւոր էին իր միայնութեան դէմ կռուելու. — երգ և լռութիւն չեն կրնար միաբանիլ. — այրէ այր, քարէ քար համբաւն հնչեց. կարծուեցաւ Թէ Հայոց եկեղեցւոյն երգահան հոգին, մարեմզոյն մուսան՝ մարմնացեալ իջեր է Տրդատայ և Խոսրովիդխտոյ սիրական տուներուն մէջ. աշխարհիկ

10249926



ու եկեղեցականք կու գային, ոչ լսելու և զմայլելու միայն, այլ և աշակերտելու և առնելու նոր եւ զանակնելը: Հարկ եղաւ որ մեր մուսային այլ՝ որ առաջնորդ պաշտօնը կատարէ. և առանց իր կուսական ու նուիրական շնորհաց նուաղուելու մը բերելու, մենարանին դրան առջև վարագոյր մը ձգելով, ինքն եւս նստած՝ կ'երգէր և կու սովրեցնէր: Շատ բարակ և բազմահմտական երգեր չինեց, զոր մեր երաժիշտքն Մանրոսոնփ կ'անուանեն, և առանձնաբար Կյոուրդի և Մեղէդի. որոց գոնէ մէկ մասն անշուշտ գտուելիք այսօր այլ այլ Մանր-ուսամունք և Կցուրդք գրոց մէջ, թէ և մեք չգիտեմք թէ ո՞րն է յատուկ իրեն, ո՞րն իր եղբօրն և ո՞րն օտարաց. միայն հաւանիմք թէ շատն առջի երկուքին են, քեռն և եղբօրն, Ստեփաննոսի և Սահակդիտոյ. այն երգոց մէկին այլ, ինչպէս կ'իմացընէ մեզի պատմիչն, Սահակդիտոյ անունը կու յայտնէր, անպրեսի գրեցուին, և կու սկսէր Սրբուհի Մարիամ: Ժամանակին, ո՛չ, այն ժանեւոր ժամանակն, մեզի չհասուց այն կցուրդն այլ. բայց անշուշտ չկրցաւ այլ գոլորշին անհետ աննշան ընել, և Թոլոզց առաջին ուսնը. զոր և շատ հեղ հիմայ ըստ յարմարութեան վայելուչ իմաստին՝ երգեմք առաջի Սրբութեան Սրբուհեանց:

« Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի, և սպանակ կատակարանաց,
Որ չ'ի վերուստ զհացըն կենաց՝ պարգեւեցեր քաղցեալ բնութեան
Առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց »:

Իր քերդող եղբօրը երեւական վախճանին առեն՝ արդեօք ինչ էր քերդողուհի քոյրն, և լսելով արտահայր արտաբեկ գոյժը՝ քարայրին անկիւ-

10249926



նէն առակալով առաջ եկաւ, և անպարման ցաւառն յետին վիխիարութիք առնըլով իր հոգեխաօս բառնըխուը, վերջին անգամ անոր ամէնէն քաղցր և ամենէն ողբական ձայները իր սրտին փափկագոյն զգացմանց հետ՝ հանեց հնչեց. և իբրև այլոբինակ Դեբովրա՝ փոխանակ օրհնելու այն այլանման տիրատարի Յայէլին ձեռքերը, նվովեց հեբատուկ չարաբէն կնոջ աչը, և իբրև մայրն Սիսարայ զրկուած իր սիրելւոյն այցելութենէն, փոխանակ բարձր ձողերու և գաւազաններու վրայ կանգուն դիտելու՝ գետնամած տեսնելով անոր եպիսկոպոսական և արքայական վառերը և դրօշները, ոչք և արիւնովը թաթաւած՝ կու լայնէն նոր և կակծալի կերպով մը «զկապուտ եբանգոյն գունագոյն նկարուց, նարօտ պէսպէս »նկարուց. այն էր պարանոցին նորա կապուտ», և հառաչեց իբրև հարարազատ քոյր անեղբայր, քոյց Սահակդխտոյ և Սուբհանոսի արժանավայել հառաչանօք. և ապա իր երկայն սեաւ վարագուրովն՝ քնարն այլ գէմքն այլ պատելով, ծածկուեցաւ տոլորովին մարդկանց տեսութենէն 'ի խորա քարայրին...: Պատմութիւն լուծ:

10249926

# ԺԲ

## ՏՕՆՔ ՆԱԻԱՍԱՐԴԻ

### 23 *Օգոստոս.*

*Հայոց արքային տարեգլխին՝ բնութիւնն ծաղկափթիթ ծնունդով կու կենդանացընէ զմարդիկ. իսկ քաղաքական տարեգլխին, որ է Նո-ռուզդն (օգոստոս), կէս խամրած բնութիւնն ինքնին կենդանանայ մարդկան հաւատացած ոգիներով և հանդէսներով: Տարւոյն ամքագոյն ամին՝ Հայոց բանակենդանին էր, կայլանդ էր. կրօնական, զինուորական և աշխարհախուժք հանդէսներով՝ բարձրաստիք, լեռնահովիտք և հովտագք Հայոց՝ գարնանանման գեղեցկանային: Բազմաթիւք 'ի գաւառ ժողովրդեան՝ հոլագործք՝ մեծ աշխատութիւն մը չունենալով այս եղանակիս, կրնան ցորեկուան ատքը անցընել՝ երեկոյ և բնութեան խնամած հովանեաց ներքև, ուր կու դիմեն 'ի քաղաքաց այլ արուեստաւորք, զօրականք և ազատազունք: Եթէ դու այլ, Հայկակ, բազդ ունիս ատոնց մասնակից ըլլալու, բարով գոհով վայելեա. ապա թէ ինծի պէս զրկուած ես բնութեան գալար ագաւանեաց, հովերուն զովերուն, հովտին և սարուն, դիտէ զանոնք քու մենարանէդ: Նայէ, ինչ գոհ և հանգարտ ոմանք նստած պզտիկ ձեռագոր-*

ծի մը կու պարտպին, քան Թէ կ'աշխատին. ո՞
մանք կու խոպան, կու խօսին. մէկն խոտերուն
վրայ երկընցեր՝ քուն կ'ըլլայ, մէկ այլն ջրերուն
եզերքը կու զովանայ. ուրիշ մը՝ քիչ մը փիլիսո-
փայ կամ մելամաղձիկ՝ առանձին շքի մը տակ
կամ առուի մը գլուխը նստած՝ կու կարդայ կու
մտածէ. հոս ալայք կու ցատքըտեն, կու գլորին,
կու պառկին. հոն ամբողջ ընտանիք մը առանց
սփռոցի սեղանի մը վրայ կու ճաշէ. այս կողմը եր-
կու բարեկամք՝ երբեմն ծանր երբեմն Թեթև խօ-
սին. այն կողմը՝ երկու սիրելիք իրենց կարծած
ամենակարևոր բանին վրայ կու խօսին, և՛ի հար-
կէ անանկ ձայնով մը՝ որ մենք չենք լսեր: Հոն քա-
նակած է այրարատեան տասուածահրաբէր դաշ-
դեն այլ, ազգային աշխարհագրական գինուորքն,
120,000ի չափ, ժողված ըստ աշխարհաց և նա-
խարարութեանց Հայոց, իրենց իշխանաց և Հայոց
Թագաւորին հետ, կատարելու Նաւուադէն փոխե-
րը. ոմանք տասուածոց պահապանաց, յիշատակք
քաջաց նախնեաց, մրցանք կորձաց, խաղք և վա-
յելք հասարակաց. զոր 3000 տարւոյ չափ կա-
տարեցին՝ մեր ըստ աշխարհի երջանիկ նախնիքն,
Թնդացին դաշնեցին Բագրեւանդայ տափերու և
բլուրներու վրայ, մինչև ծածկեցան անոնց տակ:
Իսկ երբ Հայկայ և Վահագնի օրերուն խորհրդա-
կատար քրմապետաց տէր՝ փոխանակեցին խա-
ղաղական քահանայապետք, մեհենաց վրայ եկե-
ղեցիներ կանգնեցին. բայց անոնց ջորս դին և դուր-
սը նոյնպէս մնաց. բնութիւնն իր կերպարանքը
չփոխեց, ազգն իր հանդէսները չփոխեց. այլ տե-
ները սրբեց, և փոխանակ դից՝ նուիրեց Հայոց
աին Աստուծոյ և նահատակաց նորա: Գրեթէ
անկարելի էր՝ որ Ս. Գրիգոր զՀայս՝ ի հեթանո-
սութենէն դարձընելով՝ ի քրիստոնէութիւն, այն
հին մեծահանդէս աշխարհաժողով գտօսանաց օ-

*րերը՝ անհանդէս անյիշատակ Թողու. ուրեմն Թէ ինքն և Թէ իր հետևողքն՝ անոնց իւրաքանչիւրին առել՝ կերպով մը նման և յարմարագոյն սուրբ ծաներ և եկեղեցւոյ յիշատակներ կանգնեցին: Ինչուան որ քրիստոնէութիւնն ազէկ մը ամրանալով, և ժամանակի երկարութեամբ հին սովորութիւնքն խափանելով, կրցան յետագայ ազգնուրդք՝ այն եկեղեցական ծանից օրերն այլ պատշաճապէս փոփոխել, շատն այլ դարձեալ նոյն առաջին հետևանութեան ծանից օրանԹուին Թողուլ:*

## Բ

*Նաւասարդի նախընԹաց՝ տարւոյն վերջի հինգ օրերուն սկիզբը՝ (որք աւելեաց կ'ըսուին) նուիրեալ էր Վարդավառին Վարդամատն ԱՍՏՂԻԿ դիցուհուն, որոյ վոխան առաջին հայրապետն Հայոց կարգեց ՂԱԶԱՐԴԱՂԱՒ. որ է ծոն Պայծառակերպութեան Քրիստոսի, զոր քան զամենայն ազգ՝ պայծառապէս ծանեան Հայք վինչև ցայսօր: Իսկ նաւասարդին առաջին օրն (11 օգոստոս.) որ է քաղաքական տարեգլուխն Հայոց, ազգին ամենէն մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և հանդէսքն շատ օրեր կու տևէին, պէսպէս յիշատակներով. որք միով անուամբ Ամանորայ կ'ըսուէին, իբրև սրբազանեալք յատուկ Աստուծոյ մը. քաղաքօրէն այլ համաշխարհական կամ աշխարհաժողով կ'անուանէին. վասն զի ուրիշ ծոներէ աւելի կատարուէին բազմութեամբ մարդկան, որք յամեն գաւառաց կու գային ժողովէին Բագրեւանդայ բարձրաւանդակաց վրայ. Թագաւորն իր այրարատեան ջրոց բիւր գընդովն, նախարարք ու Թ բիւր գումարտակօք, 600 գաւառապետք և 400 գահակալ իշ-*

*խանք, բազմաւթիւն կրօնական աւուր պաշտօնէից, ամենքն իրենց սեպհական հներով, պաշտօնէից Ճորտերով. որով մինչ քաղաքական, զինուորական և կրօնական ազգային հանդիսացեալք իրենց մարդիկներով, քանի մը բիւր կ'ըլլային զաո՛ի հասարակ զօրականէն: Իսկ բազմաւթիւն ազնուաց և ասկաց՝ միլիոնաւոր պիտի ըլլային:*

*Ի՞նչ էր այս Հայոց համաշխարհական ծնից պատճառն. — քեզի անծանօթ չէ Հայկակ, որ նախ՝ հին նահապարդն կամ տարեմուտն էր. որոյ լուսիզքն և անուն անգամ մեծութեան ամպոց մէջ ծածկուած է, որք ինչուան Նոյի տապանակիր պագաթը և դարը կու բարձրանան. Նահապարդն որ հին հնդիկ և զանդիկ լեզուաւ Նահա-ապատ ատուածեան, այսինքն Նոր-փառի, նոյն հին ազգին աւանդութեամբ, յիշեցնէ ըզհեղեղի յիշատակն այլ. Նոր-փառ որ և Նոր-ապատի՝ մեծի Պրահմայ ատուածոյն գուսար և կին կու Ճանաչի, և ըզոց գնցուհի, ասկիան աղբերականց և գետոց: Երկրորդ, Նահապարդի օրերը՝ կ'ըլլային սէտպէս ըզահապէտ, իբրև ծնիք ըզոց կամ յիշատակ ըզհեղեղին և փրկութեան մարդկան տապանաւն'ի լերինն Արարատայ: Իսկ մերոցներէս հինա վարդավառին օրը կու կատարեն ըզոց հանդէսն այլ, որպէս յայտնի է ամենուն: — Երրորդ, ատն էր յիշեալ Նմանոյ ամենաբեր դէզ, զոր բերոց և առատութեան խնամակալ ջատուածն մը կարծեմք. և կամ ջատուածահայրն Նրամադդ և Նահիճ ասկինն. վասն զի ատոնց ծնունդ այլ (մանաւորապէս առաջինոյն՝) այսօր կատարուէր: Այս ջատուածներէն զատ ուրիշ շատ դէզ մեհեանք այլ կային Բագրեւանդայ մայրաքաղաքին կամ գլխաւոր բնակութեան տեղ, որ կ'ըսուէր Բագաւան, այսինքն ջատուածոց քաղաք կամ շէնք. իւրաքանչիւր դէզ սեղանք կամ մատուռնքն այլ*

Բագին կ'ըսուէին. և այս բազնեաց բազմուԹենէն ոչ միայն ասանն, այլ Թուի ԹէՀ և գասանն ոչ-ջոյն իր անուանն առած՝ Բագրեանդ է. իբրև բա-գաւորանաց բազգարան, այսինքն զուն աստուածա-բան:

Դից հետ դիւցազունք և դիցանուէր կամ սըր-բազան անձինք այլ հոն իրենց արժանեաց համե-մատ բագին ունէին, ինչպէս որ կու վայլէր այլ՝ նաւասարդի ծոնելը ամենախուռմբ համաշխատա-հական ընելու համար: Այս դիւցանուէր և պաշ-տելի անձանց մէկն էր Մոծան մեծ քրմապետն, բարեբաստ Թագաւորին և Արտաշիսի բազմաԹիւ որդւոց մէկն. զոր ոմանք յեղբարցն սպանին, ո-մանք այլ մեծարեցին. ասոնցմէ էր Տիգրան գ, որ երբ ԹագաւորուԹեան հասաւ (յետ իր Ար-տաւազդ և Տիրան եղբարցն), Մաժանայ գերեզ-մանին վրայ դիցավայել բագին մը շինեց, քովն այլ հիւրանոց կամ իջեւան, ուր ձրի քնակին ան-ցորդ ուխտաւորք, և վայելեն Մաժանայ նուի-րած զոհերէն: Տիգրանայ որդին Վաղարշ՝ այլ ա-ւելի պատուեց քրմապետ հօրեղբօր յիշատակը, և նաւասարդի ամանորայ ծոնելը այլ աւելի աշ-խարհախուռմբ հանդիսիւ կատարել կու տար. ո-րով հին ծոնից վրայ չորրորդ մ'այլ աւելցաւ:..

Բայց մինչդեռ Տիգրան և Վաղարշ այսպէս եղ-բայրասէր Մաժանայ վրէժը լնդրէին, սպա-նողն (և ինքն իսկ սպանեալ) Արտաւազդ՝ յետ մա-հուն անգամ կու մրմռար կու սպասնար նորէն վրէժ լնդրելու և աշխարհախուռմբ ծոնը հա-մաշխարհական սուգ դարձնելու, և տարուոյն հետ լոյր աշխարհս այլ վերջացնել տակն ու վրայ ընել: Արտաւազդ՝ անդրանիկն Արտա-շիսի և Սաթինիկան՝ սպայուԹենէն՝ ի վեր քո-լոր կեանքը խեղԹուկ մեղԹուկ անցուց մոլոր-Թեամբ և յանպտուԹեամբ, մինչև ժողովուրդն

իրեն Շէդոր կանչէր. անանկ որ Հայկն պրէլէ սրտացաւէ մեռաւ, և մեռնելու առեն, (առաջ պէլք մեռնելէն եաւ կ'ըսեն) անիծեց զնա, որ երբ որսի երթայ «յազատն 'ի վեր 'ի Մասիս», Քաջերն (գէշ ոգիներ) բռնեն զինքն և տանին լեռան վերի կողմը մուԹ վհի մը մէջ պահեն. և այնպէս այլ եղաւ կ'ըսեն. վասն զի Թագաւորելէն քիչ վերջը որսի երթալով Մասեաց վրայ՝ Գինոյ գետակին աղբերց քով՝ ձիով հանդերձ ընկաւ Մասեաց վհին մէջ, և Քաջերն երկաթի շղԹայիւք կապեցին զնա. բայց իր երկու որսի շներն քովէն չզատուելով՝ անդադար երկաԹներըը կու կրծեն կու մաշեցընեն. անանկ որ տարուն վերջն օրը մագլ բարակուԹեան և կտրելու կու հասնի. բայց նա տասերդին օրը դարբինք իրենց սալը և ամենայն արուեստաւորք իրենց գործիքը կու զարնեն. այն ձայնէն երկաԹներըը նորէն կու հաստընան, Արտասազդ իր շղԹայից մէջ պերի կու մնայ, աշխարհս այլ անոր սեռերմանքներէն ազատ: Ահա այս այլ հինգերորդ յիշատակ մ'է նաւատարդի. զոր յիշելով և յետ 300 տարւոյ՝ մնակարծիք ոմանք 'ի քրիստոնէից, ոչ միայն նաւատարդին օրը, այլ և ամեն կիւրակի օրեր՝ տալերնին գործիքնին կու զարնէին, որ զօրանան շղԹայք չփացած Շիզարին, և չելնէ զաշխարհս աւրելու:

## Գ

Ահա ամեն յիշատակներէ վերագոյն և հնագոյն և ծանեալի յիշատակ այս օրուանս էր, վեցերորդ, մեր շատ հեռի յիշեալ ՀԱՅԿՆ, մեր ազգին նախահայրն, և իրմով ազգերնուս ձևանալն, մեծ յաղԹուԹեամբն ազատելով 'ի Բէլայ բռնուԹենէն: Թեև յիշես, Հայկակ, որ Թէ ազգային

աւանդութիւն, թէ Քաղդէացւոց հին պատմութիւն, թէ մեր տօմարական տարեհաշիւք և թէ ատտալաբաշխականք անգամ միաբան ցուցընեն, այս մեծ և ամենասքանչ տօնիս սկզբնաւորութիւնը՝ ի 11 օգոստոսի, 2492 տարի յառաջ քան զԹուականն Քրիստոսի: Զկայ ազգ մը որ այսչափ տոյգ հին և այսչափ պանծալի յիշատակ մ'ունենայ. վասն որոյ կրնամք անուանել զսա բուն Օր հայկեան և Տօն ազգային. որ այնքան երկար ժամանակէ վար իջնելով՝ բարձր լերան գլխէն կեանց ձեան հիւսիսնման, և վերոյիշեալ յեսուին յիշատակները վրան առնելով՝ այլ աւելի մեծցեր է: Հայկայ մեծ քաջութեան և անուան համար էր՝ որ իր յաջորդքն՝ նահապետին օրերուն իրենց ազգին այժը ներկայացնող կարիճ զօրաց աշխարհապատում հանդէսներ կ'ընէին. և այն մեծ անձին անունը մեր տոքը Հայք և թարգմանիչք իրենց հեթանոս հարց պատուապրութեանը՝ հետևելով՝ աւելի սրբացուցին և անմոռանալի ըրին, երկնից համաստեղութեանց և աստուածաշունչ գրոց մէջ գրոշմելով, ուր որ ուրիշ ազգք Որիոն դիւցազնը և աստղը կու յիշեն: Քանի որ ազգային ինքնագլխութեան կար՝ այս և այլ հետ միացեալ յիշատակք կրկնուէին և հնչէին քրիստոնէութեան դար ու կէս սիրած աւետն, ուրչափ որ քրիստոնէութիւնը կրնար յիշել. և որպէս զի բուն սրբազան կամ եկեղեցական տօն մը պահանջ այն օրը, հայրն մեր Լուսաւորիչ գրեթէ ամեն տօներէ առաջ այս օրս նուիրեց Ս. Կարապետին Յովհաննու և Աւետարանչաց եպիսկոպոս վկային, որոց նշխարքը բերաւ՝ ի Կեսարիոյ և՝ ի Սեբաստիոյ. և նախ՝ ի Տարօն գաւառ գալով ու անոր կուսաւորները ջնջելով, Աստուծոյ յայտնութեամբ՝ անոնց տեղ շինեց բերած սրբոց մասունքը, եկեղեցիներ և վանքեր, որոց մէջ ա-

վենէն նշանաւորն է Մշոյ ուսումնական ընտրաց Ս. կաթողիկն: Տարօնոյ եպիսկոպոսն՝ սահմանակից բազրեւանդայ՝ ուսակից կ'ընդունի զԱրածանի գետն, անոր պէս այլ մեհենազարդ կրօնական երկիր մ'էր, և աւելի հանդիսից. ինքն այլ ունէր իր բազաւանին՝ Ցաղիշոփ կամ Ցաղիոյ փեղիւ անուանեալ, որ է ըսել զոհերու տեղ, իր շատ մեհենաց և բագնաց համար: Լուսաւորիչ այնքան տուտ և ինքնակար հանդիսաներ խափանելու համար՝ պատուիրեց Թագաւորական հրամանաւ, որ այնուհետև նաւասարդի հեթանոսական յիշատակաց տեղ՝ նոյն տարեմտին օրը՝ կատարուի այս երկու սրբոց յիշատակն քաղաքական հանդիսից մէջ՝ առաջինն պէս: Անոր համար դարձեալ բազրեւանդայ ծայրը՝ մօտ Ծաղկոյ և Նպատ լերանց, մօտ և Արածանւոյ ակբիւրներուն՝ ուր վիրաց զՏրդատ և զբիւրաւորս Հայոց, Լուսաւորիչ՝ մեծ տաճար մ'այլ շինեց յանուն Ս. Յովհաննու, որ և կոչի Բագրեւանդայ Ս. Յովհաննէս. որ և կեաս 300 և աւելի տարիներու նորէն շինուելով գործակցու. Թեամբ Հերակլ կայսեր, մինչև ցայսօր կ'ամբառնայ մեծապոյն նշանակ հին և նոր Նաւասարդաց: Երբ Հայոց ինքնիշխանու Թիւնն այլ վերցուեցաւ, քաղաքական ազգային հանդէսք այլ դադրեցան, ո. րով այս սրբոց յոնքն այլ ուրիշ շարժական յոբնէց կարգը մնաց: Բայց Նաւասարդն, այսինքն Հայոց քաղաքական տարեմուտն, 44 դարէ վեր մինչ դաւանալով՝ Հայկայ տասեղ բարձրանալուն օրերը՝ անխափան կու յիշեցնէ մեր ազգային և հայկեան օրը, զոր և արժան է մեզի՝ որ վիճակի մէջ այլ ըլլանք՝ անոր յարմար յիշել, յոնել և հանդիսացընել անմոռաց, որչափ որ ազգի և Հայ անուն և լեզու պահենք:

10249926



# Դ

Տարեգլխէն երկու շաբաթ եաև, նաւասարդի 15ին, հին Հայոցին մեծ աշխարհախուռմբ ոճն մ'այլ կու նշանակէ, Հայաստանի ամենէն սիրելի և ամենէն մեծ խնամակալ պահապանին, որ էր դիցուհին ԱՆԱՀԻՏ, մեծապէս պատուեալ և պաշտեալ՝ ի Հայոց քան յայլ ազգաց. մինչև ոսկիէ արձաններ կանգներ էին անոր յԵրիզա աւան՝ ընդ մէջ Մեծ և Փոքր Հայոց, ուր շրջակայ ժողովուրդք այլ յուխտ գային. ուր և մեծազօրն Տրդատ ազատելով զհայրենիսն ի Սասանեանց բռնութենէն՝ համաշխարհական ոճն և շնորհակալութեան մատոյց. և իր հրովարտակաց և խօսից մէջ կ'ըսէր. « Մեծի Անահտայ տիկնոջ, որ է » փառք ազգիս մերոյ և կեցուցիչ. զոր և Թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ Թագաւորն Յունաց. որ է մայր ամենայն պգտոպոլիտանոյ, » քարեբար ամենայն մարդկան բնութեան, և ծնող նոյնպէս է մեծին արին Աբրամազդայ:... Մեծն » Անահիտ որով կեայ և կենդանութիւն կրէ երկիր » կիրս Հայոց:... Խնամակալութիւն յԱնահիտ » տիկնոջէ » (հայցէ ձեզ Հայոց): Այս առեալ էր ձեռն ի բուն ձեռնէացն Հայոց ընագաւորացն. ուր կու պատուէր Հայաստանի Տիկնին, նաև յօտար ազգաց. կարծուելով ի Լատինաց Տիանա, (որ և այլ կողմն կարդալով Անահտ կարդացուի). ի Յունաց՝ Աւրթէմս, և Պարսից և մերձաւոր ազգաց մէջ այլ նոյն Անահիտ անուամբ ճանաչուէր. քայց ամենէն աւելի Յունաց պարծանք Ափէնաս դիցուհւոյ նման ճանաչուէր. ինչպէս Տրդատայ գովութիւնն յայտնէ, և Պղատոն փիլիսոփայն այլ յայս կարծիս էր. սակայն անոնց Աթենիայ, Բաբելացւոց Միւլիտտեայ, Փիւնիկեցւոց Ա-

10249926



տարտայ, Լուսնի, Աստղկան, Հերայի և այլոց դից այլ զուգական կու սեպուէր. միով բանիւ ամենայն աստուածական հաճոյ յատկութիւն Ճանաչէին Հայք յԱնահիտ պինդն, և անոր համար մեծապաշտօն ապատուէին: Յայն պաշտօն կու հրաւիրէր Տրդատ և զԳրիգոր, որ քիչ առենէն զինքը ալնսի հրաւիրէր 'ի մեծագոյն և 'ի սրբազան պաշտօն. ինչպէս որ յետոյ անոր հաւանութիւնն իմացանելով զԱնահիտ 'ի տիկնութենէ Հայոց՝ տեղը բարձրացուց զմիսյն արժանին պաշտօն յետ Աստուծոյ, զՍ. կոյան Աթոռածածկին, արդարև երկնից և երկրի տիկին. և մեծահանդէս տօն մը կարգեց 'ի նոյն 15 նաւասարդի (25 օգոստոս). զոր հին տօմարք Ահէպան տօն կու գրեն, և այլք՝ առանց որոշ յիշատակի՝ միայն եկեղեցւոյ և Աստուածածնի տօն. որ յետ ժամանակաց փոփոխելով կամ խափանելով, մոռացութեամբ քաղաքական և անահտական հանդիսից, նոյն Աստուածամօր վերափոխման տօնին հետ խառնուեցաւ, զոր Հայք տօնեն ('ի կիւրակէի մօտ 'ի կէս օգոստոսի. նաև այլք 'ի 15 օգոստոսի, որ է 5 նաւասարդի):

Այս տօնիս նախընթաց օրը, որպէս յայտ է առենուն, հինա Շողակն տօնը տօնեմք, որ է էջմիածնայ մայր եկեղեցւոյն նաւակատիքը, և եկեղեցւոյ և Աստուածածնի յիշատակ մը. զոր նոյնպէս տաճմանեց Ս. Լուսաւորիչն, և հաստատեց 'ի 4 նաւասարդի (14 օգոստ.) որ կամ իր առելեան օրն էր, և կամ հաւանօրէն՝ ուրիշ հին հեթանոսական տօնի մը օր, որոյ խափանիչ դրուեցաւ Շողակն, ինչպէս Վարդավառն այլ Աստուածական տօնին. և անոր պէս այլ պեղեցկութեան, վայելչութեան և պաճուճանաց յիշատակ մը, կամ դիցուհւոյ տօն մը դուշակել կու տայ անունն:

թուի թէ ուրիշ ոճն մ'այլ կամ թափօրի պէս հանդէս մը կար անկէ քանի մը օր եառ, նաւասարդի եօթին (17 օգոստ.), ընդ մէջ Ամանորայ և Նահատակ ոճնից, որուն պատճառն անծանօթ է մեզի, բայց սեղը հաստատուած է ՏՕՆ ՊԱՏԿԵՐԻ ՏԻՐԱՄՕՐՆ:

## Ե

Ի՛նչ զարմանալի փոփոխութիւն և անման յարմարութիւն: Աստղիկ և Անահտայ ոսկեծղի ոսկեձոյլ ոսկիամոյր անդրեաց սեղ, փայտեայ խաշլոր անշուք պատկեր մը. բայց կերպարանածը անոնցմէ շատ և շատ մեծ, տաուրածայրին խոհուեհոյ մը, ոչ քեռ և դաստր կամ կնոջ դից, այլ Մօր Աստուծոյ, և անամուսին մօր. որ է ըսել կին և կոյս. մինչ բառիս կատարեալ. հրաշալի բան, բոլոր հեթանոսաց իմաստութէ վեր. ուր Աստղկայ և Անահտայ նման մենաւոր կոյսերը՝ դրին դարձուցին 'ի կարգ անպարկեշտ կանանց. քրիստոնեայն՝ կուսի մը գերագոյն շնորհք իր յաւերժ կուսութիւնը չանչնալով՝ հաստատց զնա մայր Աստուծոյ, և միոյ միայնոյ Աստուծոյ. որով և միան Տէրուհի երկնից և երկրի:

Ահա ոճնս հնագոյն է քան զԳրիգոր Լուսաւորիչ, և ըստ բարեպաշտ և ընդունելի աւանդութեան՝ հաստատեալ 'ի Բարդուղիմէոս: Ահա Արաքեալս որ զրկեցաւ 'ի տեսութենէ Տէրամօրն անոր ննջմանը տեն, բաղդաւոր եղաւ անոր ընկերակերտ պատկերը ժառանգելու, և բաղդաւոր ըրաւ զՀայս անոնց ժառանգեցընելով: Ահա պատկերը քանդակեր և նկարեր էր Յովհաննէս աւետարանիչ, և Տէրամայրն գնելով 'ի վերայ եբեսացն օրհներ և Թոզեր էր յիշատակ առաքե-

լոյն և աշակերտաց և ամենայն հաւատացեալց. առաքեալք՝ վասն միխիթարելոյ զիարդուալիմեոս՝ անոր պարգևէցին. և նա իբրև տէրունական նըշան մը հետը կու տանէր՝ ուր որ քարոզութեան կ'երթար յարևելս, ի Հնդկաց մինչև ի Հայս. և անով տուա աստուածներըը կու վերցընէր, ճշմարտութիւնը կու հաստատէր. անով արևտ նուիրական աշխարհին մէջ (Խորասան) զարև խաչարերեցընելով՝ անոր բագնին սպասաւոր մոգերը՝ աշակերտեց ի պաշտօն Աւրեգականն արդարութեան, և հետը բերաւ ի Հայս, կարգեց առաջնորդ նորընծայ հաւատացեալց: Մեր աշխարհին հարաւային արևելեան կողմերը պարսեալով, եկաւ այն բարձր և անծանօթ Տօրոսի կողմերը, որք Աղթամարայ ծովուն պարապատիկը կ'անջրպետեն ի բարձր հովտէն Տիգրիսի. որոց վրայ ձմեռան գիշած բարդ բարդ ձիւներն ի գարնան բազմավտակ հեղեղաջուր դառնալով, սաստիկ դնդընչմամբ կու թափին Թաւերաձև լեռնապատ խորաձոր մը մէջ, և կ'երթան խառնուելու արևելեան Տիգրիսի ծոցը, որ այն կողմէն կու բղխէ: Վասն և բռնութիւնն աւելի ահեղ տեսարան մը կ'ընծայէին այդ գժուարակոխ ահաւորատես կահաւացեալ լերանց, քարաշէն ամպադիտակ բերդերով. որոց մէջ անուանի էին երկուքն, Կանգոսոր կամ Ագռաւաբերդ և Դարբնոց-բերդ: Բռնութեան և բռնութեան ահեղութեան վրայ՝ աւելցուց կռապաշտութիւնն իր պատկառանքը և արհաւիրքը. յիշեալ գագաթանց մէկուն վրայ կապնած էր սիկինն Հայոց՝ Անահիտ. բայց ոչ ինչպես յերկրին կայ՝ ծաղկանց և մարմանդից մէջ խաղով ծիծաղով նազելով, այլ իբրև տեղւոյն գժուարութենէն, ամառուան կայծակներէն, ձմեռուան սառամանիքներէն, և ապառաժից ժանտութենէն՝ խոժոռած դժնէհայեաց դէմքով մը կ'երևար. որոյ

չանթերը կայծակները կու ցասքեցընէին խաբեբայ քուրմը, քարայրի մը մէջ քաշուած, սաէպ սաէպ մեծամեծ կռանիներով սալեր սարեր զարնելով թնդացընելով և կայծ հանելով։ Որչափ որ ահաւոր և դժոխեւանելի էր այս տեղս՝ այնքան այլ յաձախելի ուխտաւորի մը եւած ժողովրդեան. որք աւելի սուկմամբ քան սիրով կու քշուէին կու գային հոս, իրենց ցաւերուն կամ իւրեանց ձերուն համար ձար ու ձարակ գտնելու. խաբեբայ քուրմք այլ կու տային անոնց աղտեղի դեղերը և ծրարները, այլանդակ կռոց արձաններուն ձեռքէ։ Ահա այս տեղս եկաւ Ս. առաքեալն Բարթողոմէոս Խորասանէն դարձած առեն. և իր բերած Տիրամօր պատկերն բաւական եղաւ ամեն բան գադրեցընելու. դարբնաձայն թնդմունքն լռեցին, կայծերն մարեցան, կռոցքն կործանեցան, Անահիտ անյայտ եղաւ. իսկ անոնց պաշտօնեայքն սոսմած՝ կ'ուզէին քարկոծել զառաքեալն և իրեն հետ եկող հաւատացեալքը. իսկ նա պզտիկ խաչով մը ամենուն յաղթեց, առաւ ու անկեց Անահտայ տեղ, և ամենքը փախան, չէք եղան. և անկէ եւաւ այն խաչին կ'երկրպագեն. մինչև յետ 250 տարուց եկաւ Ս. Լուսաւորիչն, յարգուելեամբ առաւ այն խաչը իբրև յիշատակ առաքելական, և հետը կու տանէր, ինչուան որ առանձնացաւ'ի Սեպուհ. յետոյ գարձեալ այս կողմերս բերին զայն և կանգնեցին'ի վերայ գերեզմանի ահեղազօր Թագաւորին Տըրդատայ, մարմինը հոս փոխադրելով'ի Թորդանայ։

Ան ափսոսայ լեռներուն վրայ եղնել յաղթական և յուսալ՝ չարաչար աշխատանք և պաշտօն էր. անոր համար Ս. առաքեալն իր հրաշագործ Տիրամօր պատկերը պահեց այն լերանց ձևացուցած խորանին մէջ, ապահով ու ծածուկ խորշ մը, ուրկ մօտէն կ'անցնի լերանց հոսանքէն ձևացած

Տիգրիս գետն. այն քարէ պարեղոյն մէջ իր ձեռաք փոքրիկ եկեղեցեակ մը շինեց, ու հոն գրաւ հրաշալի պատկերը. քոյին այլ քանի մը խրճիթ շինել տուաւ, և բոլորը մէկէն անուանեց ՀՈԳԵՍՑ ՎԱՆՔ. ուր բնակեցուց նորընծայ կուսանք, զորս 'ի Գողթն գաւառէ բերած էր հետը. և անունց յանձնեց Տիրամօր պատկերը և մատուռը. նորահաւատ քրիստոնէից այլ հովիւ քահանաներ ձեռնադրեց, որք աւելի գալուստ կ'երևէին քան թէ կուսանքն: Սոնց առաջնորդ էր Մարիամ քոյրն Յուսկան կամ Յուսհատայ, զոր առաջին հայրապետն կրնայք անուանել. որ և յետ շատ տարինեբու ոգեյով բոլորովին առանձնացեալ ապրիլ, Թողուց Հոգեաց վանքը, և գետոյն դիմացի կողմն անցնելով, քարայրի մը մէջ խցիկ մը շինեց, հոն ձգնեցաւ, հոն մեռաւ և թաղեցաւ: Իսկ իրեն տեղ մայրապետ դրաւ զԱննա, Որմզդատայ կամ Մազդատայ և Մաքովարի [1] քոյրը. որ նոյնպէս քանի մը տարի հոգալով կուսաստանը և վանքը, յետոյ առանձնացաւ ուրիշ կողմ մը, Դարբնաքարի ձորոյն այն դին, և ինքն այլ հոն իր խըրճիթին մէջ վախճանեցաւ, իրեն յաջորդ թողլով իր քոյրը Մարիա. որուն ուրիշներն այլ յաջորդեցին. և մինչ հաւատացեալք, թէ և սակաւաթիւ, մնացին հոն, ինչուան Հայոց աշխարհօրէն հաժատան 'ի Քրիստոս: Ուսկից քանի մը տարի առաջ՝ Հռխիմեան կուսանք այլ եկան հոս ուխտի, և մխիթարուեցան իրենց պէս գալուստ կեցող հաւատարիմներուն: Այսպէս անկոխ անտէս քարերուս տարեբուս մէջ Աչմարտուհիքը կուսապահէին փափուկ կուսանք, մինչդեռ կայսերք և հըս-

1 Զասոնք կու յիշէ Խորենացի իբրև իր տուեն ծանօթ անձինք ուրիշ պատմութիւններէ, որք կորսուած ըլլալով՝ մեզի անծանօթք են:

կայ Թադաւորք կոչ հալածէին իրենց տիրած տե-
ղերէն: Վախնալով որ հոս այլ չհասնի հալա-
ծանքն՝ Հռիփսիմեանք ստիպեցան Թոլուշ գիւղ-
շաւոր խաղաղութեան մէջ իրենցմէ առաջ եկած
Տիրամօր պաշտօնեաները, և գնացին դէպ՚ի կողմն
Վանայ: Իսկ երբ Լուսաւորիչն սկսաւ քրիստո-
նէութիւնը հաստարձակ տարածել, Հոգեաց վան-
քըն այլ հռչակեցաւ, լուսաւորեցաւ, հրաշքնե-
րով պայծառացաւ. որոց անձամբ ականատես
վկայ ըլլալով տեղը Հայրն մեր, ընդարձակեց
վանքը և շինեց Ս. Սիոն եկեղեցին. բայց առաքե-
լոյն ձեռակերտ Տիրամօր տաճարիկը անարատ
Թոլուշ, նոյն ձևով և մեծութեամբ, և նոյնպէս
այլ մնաց գրեթէ մինչեւ այն վերջը, բայց տեղն՝ ի
Լուսաւորչէ նորոգեալ՝ երթալով անուանի եղաւ,
ուր յետ կուսանաց սրբոց կրօնաւորեցան, և Հա-
յոց անուանի վանորէից և ուխտատեղեաց և ե-
պիսկոպոսարանաց մէկն եղաւ. վանաց երէցն ու
եպիսկոպոսն կոչուեցաւ Ստեփաննէ Պափկերին
առաջնորդ, որ նոյն է ընդ Հոգեաց վանաց. և եր-
բեմն նոյն իսկ Անձևացեաց եպիսկոպոսական ա-
Թոռն, որոյ առաջին՝ ի պատմութեան յիշատա-
կեալ եպիսկոպոսն է Աբիատարն՝ ի դ դարու, մե-
ծին Ներսէսի օրերը:

Այս տուրբ Ներսէս հայրապետս այլ եկաւ հոս
ուխտի և հետը բորոտներ բերելով՝ բժշկեց Տի-
րամօր շնորհքովը, և հիւանդանոց մ՚այլ շինեց
ուրիշներու համար. որով երբորդ անգամ մեծ
հաստատութիւն առաւ տուրբ Պատկերին տօնն.
զոր և յետագայ Հարք և եպիսկոպոսք հանդիսիւ
կատարէին այսօրս (7 նաւասարդ, 17 օգոստ.)
երբեմն՝ ի յիշատակի վերափոխման կուսին, որպէս
Թոռն՝ ի նոյն ինքն յառաքելոյն բարձուելմամբ
դրուած, և հաստատուած՝ ի Ս. Լուսաւորչէն:
Ինչուան՝ ի վերջին դարս յուխտ և՝ ի պատուի

*ինաց Հոգեաց վանքն, և Պատկեր Տէրամօրն. որք հիմա նոր հետազօտութեան և լուսափայլութեան կարօտ են, քրիստոնէութեան հնագոյն և առաջին ուխտատեղեաց, կուսաստանաց և վանաց մէկն ըլլալով:*

*Ահա տեղերս այսպէս ստորագրէ ականատես քերդող ոմն՝ Ներսէս Մոկացի, մեզմէ երկու և կէս դար առաջ:*

*Ընչհար փայտին որ ընորհեցաւ*
*Բարդուղիմեայ վիճակեցաւ:*
. . . . . .
*Եկեալ յերկիրն Անձեւացեաց՝*
*Ահ ի համբաւ քարի միոջ,*
*Յոր էր պղուէան ամրացեալ յորջ,*
*Ընդ Անահտայ բնակէր սիկնոջ*
*Մարդախուշըշ կըռանագոչ.*
*Քանզի փայլակն ի վայր անկեալ՝*
*Ի դարբընաց քըրայս արկեալ,*
*Զդեղն որ կազմէր ախտիւ խառնեալ*
*Յուռութուղտն մահարդացեալ.*
*Որպէս ի Ճառըն պատմական*
*Ոսուցանէ մեզ միաբան,*
*Եւ վիշապին հին մեքենայն*
*Կխարխանոս այր արբազան:*
*Զի հին վիշապն անդըր բռնէր*
*Եւ կըռանին համաձայնէր,*
*Բախմամբ Թնդման ահ արկանէր,*
*Զնոսա յուշոյ միշտ խափանէր:*
*Իսկ այք տեսլեան զերդ խելագար*
*Անդ խառնէին դեգերաբար,*
*Թարախածոր առեալ ձըրար*
*Եւ կոչէին Դարբընաքար:*
*Յոր վայր հասեալ առաքելոյն*
*Փութով խափան առնէր գործոյն,*

10249926



Դարբնաքար լսիման Թինդոյն,
Որ գործնեայքն էին նիւԹոյն.
Եւ զիցամոյրըն խորտակեաց
ԸնդնուԹիւն քակեալ դիւաց.
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբուԹեան տեղիք գործեաց:
Իակ չար զինուորք գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձու լերինն,
Վիրգա ի վիմաց յայն հոսէին
Ընդ այն և ձիչս արձակէին:
Բարդուղիմոս զայն տեսանէ
Բարձրաւանդակ լեառն ելանէ
Խաչ մի փոքրիկ անդ օծանէ
Քարիւ մի զքաջքն արտահանէ.
Զոր եւ յետոյ սուրբըն Գրիգոր
Զարձանն առեալ՝ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն աւուր
Երեսին եդ պըսակաւոր:
Կանգնէ եւ անդ կրկին նըշան,
Ցըստորոտով լերինըն յայն.
Կարկառակոյտ մի սուզական
Ձեռնագըրեալ ի մեծ արձան:
Եւ է տեղին յոյժ լեռնափակ
Պատեալ վիմօք երկնագիտակ,
Իակ մէջ ծոցոյն հարթայատակ
Հոսանահեր վըհաքատակ.
Զի Տիգրիսին մեծի կայլակ՝
Որ յԱդեննայ քաղդէից վըտակ,
Ցամաքեալ իսպառ միշտ հանդարձակ,
Ընդ գոգ հովտին արագարագ.
Մերձ կանգնաւոր մեծ ամրոցին՝
Որ Ագաւաւոց քար կոչէին,
Ոսոխ լերանցըն չուրք հոսին
Եւ պետանան՝ ատ գարնան մասին,
Գայ զառիվայր առատաբին

Անցեալ ընդ հիմըն տաճարին,
Ընդ արքային հիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին։
Հիմն արկանէ անդ հաւատոյ՝
Ընդ խորանին կառուցելոյ.
Շինեալ յանուն Կուսին հոգւոյ
Եւ պատկերին որ անդ սրբոյ։
Անդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին
Փոքրըր ձեւով զեկեղեցին
Եւ անուանէ Աթոռաձոձին.
Զառեղին Հոգւոյ-վանք անուանէ,
Եւ ի քըւեր կանայս յանձնէ.
Խրճիթ փոքրիկ նոցա շինէ
Եւ ի դերբեուկըն բաժանէ.
Կացուցանէ զքոյրն Յուսհատոյ
Մայրապետ կրօնից գըլուխ նոցա,
Զքոյրն Աւրմըզդոյ և Մաքովարոյ
Եւ զայլ կանայըն յետ նոցա։...
. . . . . .

Բագրեւանդայ քըւերնեերըն բարձրաձայն հնչած նաւասարդի երգերն՝ հոս այս Անձեւացեաց քաղաքէն մէջ ցածնալով կու ծածկուին։ Ո՛ւր էր թէ դարձեալ այս անձաւներըն արձագնալով ելլէին հնչէին՝ ի բարձրաւանդակ Բագրեւանդ, ի ջաւակօք Հայկայ և Տրդատայ, Բարդուղիմեայ և Գրիգորի, ամենայն անկնաս յիշատակօքն Նաւասարդայ.

10249926

# ԺԳ

## Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

### 28 Նահատարդի. — 7 Սեպտեմբերի.

Ա

Կէս դարէ աւելի էր որ Հայաստան յերկու վիճակ բաժնուած՝ երկու ինքնակալ տէրութեանց վերատեսչութեան տակ, Պարսից և Յունաց, անոնց երկար և աշխարհախուռն կռիւները գրեթէ բոլորովին դադրեցուցեր էր: Բայց Յազկերտ Բ՝ հազիւ Թագաւորած Պարսից, յամի 439, անպատճառ պատերազմ հրատարակեց ընդդէմ կայսերաց. հրաման տուաւ իր յատակապահ սահմանակալ գունդերուն, որ մէկն Ասորեստանէն երթայ Մծբնայ վրայ, մէկ այլն յԱտրպատականէն մանէ 'ի Հայաստան, Յունաց հայկական բաժինը խլելու: Ա յս գունդս՝ Երասխայ հովիտը և Վանայ պարտատախը անջրպետող միջոցէն փութալով՝ կ'ելնէ, Ծաղկոտան վայելչութիւնները կոխկռտելով կու փճացնէ, ոչնահանդէս բագրեւանդայ բարձրատափին վրայ կու բանակի. և առանց ակնածութեան և գթոյ՝ կու գայ նոյն իսկ անոր չինագլուխ ոչնագլուխ տէրոյն՝ Բագաւանդին՝ քով՝ իր զօրապետաց վրանները կու զարնէ: Ո՛րքան այլափոխուած էր Բագաւան այն առջի

զուարթածաղկիկ պայծառուսութենէն, զոր երբեմն[1] առատ, Հայկակ. և սակայն շատ առեն չէր անցած այս երկու կերպարանաց մէջ. հազիւ տասն տարի էր՝ որ Աշրարատայ Թագաւորին բանակն էր կանգներ ի Շահապիվան, և ոչ իր դիւշնեքն ու վաշտերն փոուէին ի Բագաւան: Բագաւան թէ և դեռ իր հեթանոսական անունը պահէր, բայց գրեթէ գար ու կէս առաջ Լուսաւորչէն ալով օծուած էր, Տրդատայ և իր աշխարհահռչակ բանակին հոն մկրտուած առեն. և Տարօնոյ գիւցազանին հետ՝ նուիրեալ էր Ս. Յովհաննու Մկրտչի. որոյ անունը առնելով իր արբեալ Հայաստան վրայ Թագաւորն Տրդատ, իր յիշատակն այլ խառնեց Մկրտչին հետ. անոր համար շատունք կարծեն թէ յանուն Յովհաննու-Տրդատայ Թագաւորի՝ Ս. Յովհաննէս կոչուի մինչև ցայժմ Բագրեւանդայ Խոչ-գիւղէն անուանեալ տաճարն և վանքն. և ի միացեալ յիշատակ Տրդատայ, Լուսաւորչի և Յովհաննու Մկրտչի՝ Հայոց ամենէն արբազան ուխտատեղեաց մէկն է եղած. և հիմա մեր աշխարհքին արբազան տաճարաց ամենէն վսեմագոյնն է ահեղակերտ մեծութեամբն և հնութեամբն. գեղեցիկ ծնուռնդ Ճարտարապետութեան մեր Խորէնէ վարպետին և առատաձեռնութեան Հերակլի կայսեր. որոյ շինութեանն աւարտը և նուէրքն Հայոց աշխարհին նշանակէ ի 28 նաւասարդի (որ է 7 սեպտեմբերի) 639 ամին: Ախորեան քեզի յիշեցինք այլ, Հայկակ, զարմանագին զուգադիպութեամբ՝ նոյն օրագրութիւնը շանած է և նոյն գարուն, այսինքն յեօթն սեպտեմբերի յամին 439, ճիշդ 200 տարի առաջ: Ահա առեն Բագաւանի Ս. Յովհաննէսի կայսերական հերակերպանքը էուներ, սակայն անշուք

[1] Տես Տօնի Նաւասարդի:

չինուած մ'այլ էր, Գրիգորի և Տրդատայ պատմութիւնը ըլլալով. վասն այսորիկ ոչ միայն պաշտօնեայքը ժողովուրդք, այլ և ժողովրդապետք և հայրապետք գոյին պատուելու զսեղանին յիշատակաց:

Եւ ահա հիմ՝ այլ Յակոբեան վարդապետաւ զօրաց արշաւանաց առեն, հոն Բագրեւանայ իշխանութեան խորհրդոց քով քաշուած կուներէր, և երկայն գիշերուան լուսապահով լապտերի մը պէս՝ որ գանգատ առաւօտուն մօտ պսպղալով կու մարմրի, այնպէս կու հանէր մօտ՝ի գերեզման ննջեցեալ ծերունի մը. բայց աստուածափայլ աստուածապատիւ ծերունի մը, որոյ նման՝ ամենայն քարեմասնութեամբքն և ծայրացեալ հասակաւն, ոչ յառաջ և ոչ յետոյ էր եղեալ՝ի Հայաստան: Սա է Թոռն Թունորդեայ արբոյ Լուսաւորչին մերոյ, մեծ կաթուղիկոսին Հայաստանեայց Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ:

## Բ

Ամեն կենսագիրքն վկայեն Թէ ծնած և մեռած է մի և նոյն ամսաթուի մէջ նաւասարդի 30ին. վախճանած տարին յայտնի նշանակեալ ըլլալով, և շաբաթուան օրն ալ (հինգշաբաթի), կ'իմանանք որ այդ նաւասարդն չարժական ամսուն է, որոյ 30ն էր անշարժ նաւասարդի, 28 յամին 439, և 7 տեպտեմբերի. իսկ իր ծնած տարին՝ ըստ շարժական տարւոյ նաւասարդի 30ն քսան կամ 21 օր այլ եաք էր, որով Ս. Սահակայ ծնած օրն կ'ըլլայ տեպտեմբերի 27, համարելով Թէ ծնած տարին է Քրիստոսի 352-53 Թուոց մէջ: Յայտնաւորաց մէկն կ'ըսէ Սահակայ համար, Կեցեալ ամս ՃԶ (356), որ ուղղագրելով ՁԶ, մեղի կ'ընծայէ կենաց տարիքը 86, և ծնած տարին 354.

10249926



իր աշակերտին[1] վկայեն թէ հասած «'ի յերկար ծերութիւն». սակայն անտեղի է պատմչաց ո. մանց բաածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ Ս. Սահակ. վասն զի այդ թուով՝ ծնունդն կ'ելնէ յ'319 կամ 329 թիւն Քրիստոսի, յաւուրս Ս. Լուսաւորչի: Բաւական է Ս. Սահակայ 86-90 տարուան կեանց՝ դեռ սովորականէ երկայն՝ շըրջան մ'այլ. որ և երկարութենէն աւելի նշանաւոր եղաւ իրեն պատահած դէպքերով և անձինքներով. որով ոչ միայն ազգային պատմութենէ այլ և ընդհանուր նոյնաժամանակ պատմութեան մէջ լաւ նշանելի է. ազգայնոց մէջ՝ թէ քաղաքական թէ եկեղեցական և թէ ուսումնական տեսութեամբ, իսկ օտարաց առջև՝ աւելի եկեղեցական մեծաւորութեն: Սահակայ երկայն կեանքն և երկայն կաթուղիկոսութիւնն (51 տարի), ընտանդն և զարդացումն 'ի կեսարիա և 'ի Կոստանդնուպօլիս, զինքը մեծաւոր և ծանօթ և շատ կապ ըրին այն մեծամեծ Անձանց՝ որք եկեղեցւոյ մէջ վեհապետական կեանք մը ըստրեն, անոր ամենէն պերապանծ հայրապետքն ըլլալով: Ահա կեանքն՝ «այն աւետն է, կ'ըսէ Վիլմէն, որ եկեղեցական օրինօք այլ հիմնեալ հաստատեցաւ և հաստրակայն սէրութիւն մը դարձաւ. այն աւետն է, որ 'ի պերճախօսութեան և 'ի դպրութեան՝ յաւուրջ բերաւ այն վսեմ և պայծառ հանճարները, որոց ոչ երբեք նման գտուեցան հաւատարմրդք՝ բայց եթէ Գաղղիոյ ծէ դարու արբազան քարոզիչքն: Ո՛րչափ մեծամեծ մարդիկ, որքան պերապոյն ձայնք ելան՝ Ս. Աթանասէն մինչ 'ի Ս. Օգոստինոսի միջոցն. ի՛նչ հրաշալօր մտաւորական շարժումնք բոլոր հռոմէական աշխարհին մէջ.

1 Ղազար Փարպեցի:

» Ինչ տալանդներ՝ խորհրդական մրցմանց մէջ
» հանդիսացեալ. ինչպիսի այժ մարդկան՝ հաւա-
» տոց վրայ բանեցուցած. ինչ կերպարանափո-
» խութիւն բովանդակ ընկերութեան, որ եղաւ
» ձայնիւ այն կրօնից՝ որ գեանադամբանները էին
» կու վերանայ ի գահոյս Կեսարուց, որ ուզա-
» ծին ակա՛ի գործ ածէ՝ իր մարտիրոսաց արեամբ
» մաշեցուցած սուրը:... Մտաց և արիութեան
» ամենէն ամօթալի ցածութեան իջած առեւն է,
» երբ նեղքինիք կառավարէին զինքնակալութիւն,
» և բարբարոսք վրդովէին, այն առեւն է որ Ա-
» թանաս մը, Բարսեղ մը, Գր. Նազիանզացի
» մը, Ոսկեբերան մը, Ամբրոսիոս մը, Օգոստինոս
» մը՝ կու լսեցընեն ամենէն մաքուր բարոյականը
» և ամենէն գերագոյն պերճախոսութիւնը: Մեծն
» առանց հանճարն կանգուն մնաց ինքնակալու-
» թեան ընկնելու առեն. կործանմանց և փլա-
» տակաց մէջ առնք՝ հիմնարկութք կ'երևին. և չի-
» բաւէ, վանդալն Ճարտարապետք էին այն մեծ
» կրօնական շինուածոյն՝ որ պիտի փոխանորդէր
» հռոմէական ինքնակալութիւնը»: Մեր Հայոց
ազգին այլ հին Թագաւորութիւնն և ինքնաի-
րութիւնն վերնալու առեն՝ Ս. Սահակ էր որ
զազգն և զեկեղեցին կանգուն պահեց՝ մինչև ցայժմ.
(Թերևս աւելի քան) հաւատար այդ յոյն և լա-
տին սուրբ Հայոց, որոց ոմանց [1] կենաց վերջին

1 Ս. Սահակայ ծնած տարին (354) և քիչ ամիս վերջ (13 նոյեմբ.) ծնաւ արևմտեան (և Թերևս ընդհանուր) եկեղեցւոյ մեծագոյն վարդապետն՝ Ս. Օգոստինոս. անոր վարդապետակիցքն՝ Ս.Ամբրոսիոս և Հերոնիմոս 14 ամեայ պատանեակք էին (ծնեալք յ'340). Ոսկեբերան՝ որ Ս. Սահակէն 10 տարի վերջ սկսաւ հայրապետութիւնը և անկէ 32 տարի առաջ լմնցուց, տասնամեայ մանուկ էր (ծնած յ'344): Ս. Սահակ իր պապուն կենդանի օրհնութիւնն առած է, վանն զի սուրբ Վրթանէս վախճանե-

կայծերը տեսաւ իր նորահաւատ աչքն, ոմանց պատ-
ճառական օրերուն հատաւ, ոմանց կենդանւոյ և
մեռուածոյ եղաւ, շատերուն՝ և նաև իրմէ վերջ
սկսողներուն՝ շրջանին լրընկերելը տեսաւ, և հա-
զիւ վոմանս Թողոց դեռ իրենց պայծառ աթո-
ռին վրայ: Սոնցմէ ոմանց, և անոնց 150 ընկեր
հայրապետաց Ա. Կոստանդնուպօլսոյ և Ե տիեզե-
րական ժողովոյն, (յամին 381), հաւանօրէն ա-
կանատես եղաւ, իր կաթողիկոսութենէն ուղ
կամ լինն տարի առաջ, երբ Թեոդս տուրբ կարգ
այլ առած չէր, քայց իբրև որդի և Թոռնորդի
տուրբ քահանայապետաց և վկայից՝ ծանօթ էր
'ի դրան կայսերաց: Քահանայապետութենէն տա-

ցաւ հաւանօրէն յամին 355. յաջորդ տարին (356) Ե-
գիպտոսի և ամենայն միանձանց արեգակն մտաւ, տուրբն
Անտոնիոս 105 տարուան. տարի մը ետև, 357, նոյնպէս
հարիւրը անցած վախճանեցաւ Ոսիոս՝ որ Նիկիոյ Ա. տիե-
զերական ժողովոյն գահակալութիւն քազմեր էր. այն ժողո-
վոյն և բոլոր արևելեան Ս. Հարց պարագլուխն մեծն Ա-
թանաս՝ Ս. Սահակայ պատանութեան ատեն իր գահուն
վրայ կ'ելներ կ'իջներ († 373), և Թեոդս ընդուներ էր զնա
յԱղեքսանդրիա իբրև Թոռն իրեն աթոռակից հայրապե-
տաց. և սա առաւել Ս. Կիւրեղ յԵրուսաղէմ, որ վախճա-
նեցաւ Ս. Սահակայ կաթողիկոսութենէն 3 տարի առաջ
(386), և իր յաջորդն Յովհաննէս հայրապետ: Մեծա-
փառ և վայելչաբանն Բարսեղ՝ որ Մեծին Ներսիսի հետ
կարգ առեր էր, անշուշտ անոր որդւոյն մեծարող դաս-
տիարակ այլ եղաւ, և իր կարգակցին եղերական մահը
ողբալով՝ կու ապաւէր որ փոխանակ կորճացի Սահակայ՝
Ներսիսածին Սահակն իրմէ առնու իր հարց նմանն կաթո-
ղիկոսութեան ձեռնադրութիւնը. քայց կանխեց մահն
(379). որ և յաջորդ տարին (380) մարեց Աստուծոյ անա-
պատներուն արևը, զՍ. Եփրեմ: Մեծին Բարսղի հոգե-
կից տարեկից և պատուակիցն Գրիգոր Աստուածաբան՝
վախճանեցաւ Ս. Սահակայ կաթողիկոս նատած տարին
(389). իսկ անոր (Բարսղի) հարազատ եղբայրն Գր. Նիւս-

ջի կեանքը, 35 տարի, աւելի Հայաստանէ դուրս քան ներսը անցուցած կ'երևի: Բոլոր մեր նախնի լուսաւորչազարմ հայրապետք՝ Յունաց մէջ կըրթուելն առած են. մանաւանդ Ս. Ներսէս, որ նախ՝ ի Կեսարիա և յետոյ՝ ի Կ.Պօլիս վարժեցաւ յունամուն. և ըստ պատմչաց ոմանց, աւաջին քաղաքին մէջ իր պատանեկութեն առեն Վարդան Մամիկոնեան նախարարին Սանդուխտ դուստրը կին առաւ, ըստ այլոց (որ աւելի հաւանելի է) Կոստանդնուպօլսոյ մէջ Ասպետն անուամբ ազնիւ (Յոյն) իշխանազին դուստրը, որ և յետ երեք տարուոյ վախճանելով՝ Թողուց զՆերսէս այրի պատանի մը. բայց անոր հասակին և մեծ սրտին

ասցի՝ անոր կաթողիկոսութեան 12դ տարին (400). արհաւիրան Ամբրոսիոս՝ յիններորդ տարի կաթողիկոսութեան Սահակայ (397): Քիչ մ'ետև (403) վախճանեցաւ Ս. Եպիփան իբրև հարիւրամեայ. Երուսաղեմի հայրապետն Յովհաննէս ի 25դ տարին (414). Թէոփիլոս Աղեքսանդրացին յ'30դ տարին (418). Ս. Հերոնիմոս յ'32դ տարին (420). մեծն և իր տարեկիցն Օգոստինոս ի 42դ տարին (430): Ակակ Բերիոյ եպիսկոպոսն 112ամեայ ի 44 տարին կամ այլ ետև. իրմէ քիչ առաջ ետև երկու Ակակք այլ, եպիսկոպոսք Ամիդայ և Մելիտինոյ: Վերջապէս այն ամենայն գիտուն և արքազան հրաշալի անձինքն, որք ի կիսոյ Դ դարուն ց'կէս Ե դարու փայլեցան յաշխարհի, և եկեղեցւոյ Հարք և սիւնք հաստատուն կ'ըսուին, ամենքն այլ անցան Ս. Սահակայ աչաց և կենաց առջևէն. իր գահակից և երբեմն գահագլուխն՝ քաղաքասան փիլոմոս արքեպիսկոպոս Կեսարիոյ՝ վախճանեցաւնոյն իսկ Ս. Սահակայ վախճանած տարին. և այն մեծերէն՝ միայն Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի և Ս. Պրոկղ՝ Ոսկեբերանի աշակերտն և աթոռոյն ժառանգն, երկուքն այլ Նեստորի գըլխահար ախոյեանք, բարեկամք և թղթակիցք Սահակայ՝ և տարւոք կրսերքն՝ իրմէ քանի մը տարի ետև միացան իրենց փառաւորեալ ժողովակցացն յերկինս: (Կիւրեղ † 444, Պրոկղ † 446):

վիճաբանութիք, և յաւիտենական վիճաբանութիք՝ մէնայլ՝ միածին որդեակ մը, զմեծն ՍԱՀԱԿ: Թէպէտ աշխարհքիս մէջ չէ եղած քան զաւանիք՝ վեհագոյն հայր մը վեհագունի որդւոյ: Աստուած՝ միայն մեր եկեղեցւոյ չնորհեց 140 տարւոյ չափ՝ Ղևտացւոց նման՝ քահանայապետական պայազատութիւն, որք վեց ազգ զնրար յաջորդեցին:

Սահակ 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Կեսարիա վարժեցաւ նր ցեղին և աշխճանին յարմար ուսմանց. յոնարկնը նրբ մայրենական լեզուս պիտէր, և ուսմամբ այլ այնքան հմուտ էր անոր քերականական արուեստին՝ որ նոյն իսկ բնիկ Յունաց վարդապետներէն շատը կու գերազանցէր[1]. ատորերէն այլ գիտէր անչուշտ չափաւորապէս. պարսկերէնն այլ՝ նրբև ակրտոլ լեզուս 'ի Հայս. նակ նր և մեր բնիկ հայերէն լեզուին՝ Թարգմանչն կրնայ ըսուիլ, կամ առաջին հայկաբան. վկայ՝ հայերէն աստուածաշունչ գիրքն, որ նր ոսկի գրչէն և մեղը լեզուէն առած է նր մեծագոյն ոլորկուԹիւնը, քան զոր քաղցր և կանոնաւոր հայախոսուԹիւն չկայ ազգերնուս մէջ. և Թերևս ըստ այսմ մասին՝ քան այլովքն՝ արժանապէս գերապանց պատուի քան զամենայն ԹարգմանուԹիւնս Ս. Գրոց: Իր աստուածաշնորհ հայրն՝ Մեծն Ներսէս, լաւ գիտնալով և Թերևս տեսնելով այլ իւր անարժան հօրը, Աղթանագինէի, և հօրեղբօրը (Պապայ) անվայել վարքը, և խանգարեալ արքունեաց հրապոյրքը, չեմ տարակուսիր որ Թողեր էր իր գեղաբոյս ծնունդը զդոյշ տեղ և ըզդոյշ վարժապետաց ձեռք. որոց մէջ մնայն աւելի ընտրեց Իսահակ այլ, քան հօրը ահել և տխուր մահուընէն եաւ՝ փոխեալ անոր գահը ելնել հաղիւ 20 ամեայ հասակաւն, ինչպէս Ս. Գրիգորիս

1 Ղազար Փարպեցի:

իր պապան Հօրեղբայրն (15ամեայ), կամ նոյն իսկ իր Հայրն Ներսէս, որ չէր աւելի քան զ'25ամեայ նորահաս երիտասարդ մը՝ գահը ելած առնն, և ոչ աւելի քան զ'35ամեայ՝ ի գերեզման իջած առնն[1]:

Ս. Սահակ այլ կանուխ կարգուեցաւ, Հռաստոմի աղեռոյն ժառանգ մը աւելցնելու համար. բայց Աստուած սահմաներ էր իրմով դադրեցընել յաջորդութիւնը. և հրաշալի երկայն տեսիլքով մը յայտնեց անոր՝ մինչ դեռ աղիկատ էր, և Վաղարշապատայ մայր եկեղեցւոյն (Էջմիածնի մէջ) հակուին կ'ընէր աւագ հինգշաբաթի գիշեր մը, իր ազգին եկեղեցւոյն հանդիսապետին ուխտապահ և ուխտազանց հաւատացեալ գործովք: Միայն դատիկ մ'ունեցաւ Ս. Սահակ, զոր անուանեց իր անուամբն Սահականոյշ, և տեսաւ՝ ի կնութիւն Համազասպայ Մամիկոնէից տեառն[2]. ՝ի Համազասպայ ծնան իրեք տահակավայել կորիւնք, Կարմէրն Վարդան, Համազասպեան և Հմայեակ. որոց առաջինը իրեն յորդեգրեց իբրև հարազատ ժառանգ. բայց Վարդան այլ իր տեսլեաց պատճառն պէս տրուա զաւակ չունեցաւ՝ իր Դրամրիկ կնոջէն, այլ երկու պզտիկ, Վարդանոյշ և Շուշանիկ կոչուած, զորս գթած Մեծն Խահակ իր պատանեկան ծնգաց վրայ, և սեպհեց իրեն պայազատ, Թողլուվ անունց այլ իր սեփական Հայրենի ժառանգութիւնն[3]. Հաւանօրէն իր Թոռանց Թոռունքն այլ

1 Ամենայն գաւազանագիրք մեր և պատմիչք Ս. Ներսիսի 34 տարի կուտան քահանայապետութեան. այդ Թիւն իր կենաց տարիքին տալու է:

2 Յորմէ կու հաստատուի Թէ ինքն չէր որդի դատեր Մամիկոնէից տեառն:

3 Որոյ մէջ յիշատակուի աւետարան մ'այլ՝ իր սքանչելի մատանց իսկագիրն. կ'ըսուի Թէ Ս. Սահակ իր ձեռաքն շատ գրքեր այլ գրեր էր:

առաւ Ս. Սահակ, զոնէ Ս. Շուշանիկան չառաւ էիցքը, (որ՝ ախտա, գժնկի մը հետ զուգեցաւ, վազգենի վրայ բզեզևին. սակայն այնով այլ աւելի ինքն զարմանալի և ծանելի եղաւ): Վարդանայ մեկայլ եղբարց ցեղն արու զաւակօք յաջորդեց ինչուան ԺԴ դար (Թերևս անկէ եաև այլ), և Ս. Սահակայ արեամբը Պահլաւունի ըսուեցաւ. արեան հետ արդիւնքն այլ ժառանգեց արժանապէս. և ԺԱ-ԺԲ դարերու մէջ շատ արժանաւոր անձինք ընծայեց աշխարհի և եկեղեցւոյ. և այսպէս կատարեցաւ իր առելեան մէջ հրեշտակին խոստումն, Թէ վերջի աաեններըը իր ցեղէն նորէն քահանայապետներ պիտի ելնէին, և էին Գրիգորեանքն և Ներսիսեանք, յետ կիսոյ ԺԱ դարու մինչև՝ ի սկիզբն ԺԴ դարուն:

## Գ

Ս. Սահակայ վարքն շատ նշանաւոր երևոյթ կ'ընծայեն նկատմամբ իր անձին և ազգային պատմութեան. — Ա. առաքինութեամբ կամ հայերէն դպրութեան, որ իր գործակցութեամբն զարգացաւ. — Բ. Եկեղեցական կարգայ վայելչութեան, որոց նոյնպէս հիմնադիր կըրնայ ըսուիլ, յետ Ս. Լուսաւորչին. — Գ. քաղաքապետական կամ քաղաքական առեչութեան, որոյ մանաւանդ եղաւ հաւատար իր հօրն, և աւելի քան զբազումս յօտար հայրապետաց. — Դ. անձնական առաքինութեանք, կամ նուիրական կեանք: Անոնցմով կ'երևի սուրբն Սահակ աշխարհքիս մէջ փայլած ամենէն պայծառ հոգւոց մէկն. իսկ ին առաքինութեամբ, հարուստ հանճարով, տաք սրտով, գործունեայ կամօք, վեմ զգացմանքք: Ահա ջրոց գլխաւոր դիտելեաց վրայ կ'ուզեմ դար-

ձընեալ աչքդ, Հայկակ, Թէ և համառօտ տեսու-
Թեամբ, քան պատմական դատարմամբ:

Որչափ որ Ս. Սահակայ ժամանակն փառա-
ւոր և պայծառ էր ըստ եկեղեցական կարգի, այն-
չափ այլ անշուք և անշնորհք մեր ընիկ աշխար-
հին քաղաքական վիճակն. իր երախայրութեան
տարիները, նոր յաթոռ նստեր էր Տիրան Թա-
գաւոր, սկիզբն ազգերնուս կործանման, իր ան-
քրնատոնեայ վատ և Թոյլ վարուք. որոյ գէմն ջա-
նալով Ս. Յուսիկ՝ պապայրը Սահակայ՝ զոհ
եղաւ. Տիրանայ յաջորդն Արշակ՝ չարագոյն քան
զհայրն, վեհագոյն քան զՅուսիկ քահանայապետ
ունեցաւ՝ անոր Թոռը, զՍ. Ներսէս, որ ժրու-
Թեամբ ջանաց այնպիսի մոլի անձին իշխանուԹե-
աւեն՝ Թէ զաշխարհն Թէ զեկեղեցին չէն պա-
հել. նոյնպէս անկէ այլ մոլի որդւոյն աւեն, Պա-
պայ, որոյ անօրէնուԹեան լինքն այլ զոհ եղաւ:
Իրմէ վերջ 15 տարւոյ չափ Հայաստանի քաղա-
քական շփոԹուԹեանց միջոց, Պապայ, Վարազ-
դատայ, Արշակայ և Վաղարշակայ և Խոսրովու
ԹագաւորուԹեանց աւեն՝ չորս կաԹուղիկոսք
նստան օտար ցեղէ. ատոնց վերջնոյն աւեն Խոս-
րով գ յաջողեցաւ ազգին յերկու բաժնուած նա-
խարարները միաբանելով՝ հանդարտեցընել զՀա-
յաստան. և յամին 389 նստուց յաԹոռ մեծին
Ներսէսի՝ անոր արժանաժառանգ որդին, զմեծն
Իսահակ, որ այն աւեն իր հօրը վախճանած տա-
րինքն ըլլալով և անոր ձրիւքն և շնորհօք զարդա-
րեալ և յաւելեալ, ևերպով մ՚այլ անոր քահա-
նայապետուԹիւնընորոգեց և յաւալ վարեց ամ-
բողջ կէս դար: Խոսրով քան զայս մեծ շնորհք
չէր կրնար ընել իր ազգին. և այնքան մեծ եղաւ
և գովելի շնորհքն, որչափ որ անով իր անձնական
շահուն միտք բերաւ. վասն զի այնպիսի կաԹո-
ղիկոս մը իր աԹոռոյն հեզինակուԹենէն զատ,

Թագաւորաց ազգական այլ ըլլալով՝ ապգին վայելուչ ազդեցութիւն պիտի ունենար. այս բանս վախ բերաւ Պարսից Թագաւորին. և որովհետև խօսքով առանց իրեն իմացընելու՝ այնպիսի նշանաւոր անձ մը Հայոց արքունի գահոյն վրայ բարձրացուցեր էր, Պարսիկն զերկուքն այլ պարտաւոր սեպեց. և զի խօսքով ուրիշ ինքնագլուխ գործեր այլ կ'ընէր, և ինչուան անկէ գլուխ քաշելու և ցունաց հնազանդելու կու սպառնար, խաբեց իր Արտաշիր որդին՝ որ զխօսքով վերցընէ'ի Թագաւորութենէ, զՍ. Սահակ այլ'ի հայրապետութենէ: Խօսքով խաբուելով և սխալուելով՝ Արտաշիր ձեռքն ընկաւ. և սեղը գրուեցաւ իր եղբայրն Վռամշապուհ (390). որ քան զեղբայրն պզուճաւոր և վախկոտ գտուելով՝ ինքնագլուխ բան չէր ըներ. անոր համար չհաւանեցաւ Ս. Սահակայ խնդրոյն այլ, որ գաւերը (Սաֆականոյշ) ապաչանօք՝ խնդրեր էր իր փեսային Համազասպ Մամիկոնեանը սպարապետ գնել Հայոց, փոխանակ նոր վախճանածին (Սահակայ ասպետի): Այս բանս երկրորդ պատճառ մ'եղաւ Ս. Սահակայ՝ անձամբ երթալու առ Թագաւորն Պարսից և միտքը չինելու: Գնաց'ի Տիզբոն, տեսաւ արքայից արքան, հաճելի և պատկառելի եղաւ անոր. խնդիրքները ընդունեցաւ, զՀամազասպ ոչ միայն սպարապետ կարգեց, այլ և Հայոց նախարարաց մէջ բարձրացուց պատուով ինչուան'ի հինգերորդ գահն. ուրիշ յանցաւոր սեպուած նախարարաց այլ ներումն առաւ, և անոնց պատուոյ կարգերը նորոգելով՝ գարձաւ առ Վռամշապուհ, և ատոր ձեռքով այլ հաստատել տալով Հայոց Գահնամակը[1], իր տեղը հօրը նման նո-

1 Որ է ցուցակ կամ կարգ պատուոյ իշխանաց և աւագաց, թէ որն առաջ որն ետև պիտի կենան կամ նստին Թագաւորական կամ ազգային հանդիսից մէջ:

րէն նուոգիչ եղաւ քաղաքական դասակարգու-
Թեանց. և ևս առաւել աշխարհքին խաղաղու-
Թեան և չինուԹեան: Բայց քաղաքական խնամ-
քը Թողուով առ խոհեմ Թագաւորն Վռամշապուհ,
ինքն սկսաւ մեծ հոգով և ջանքով իրեն վայելածը
հաստատել և ամեցընել, եկեղեցական բարեկար-
գուԹիւնքը, որ շատ տարինեւրէ վեր խանգարեր
էին շատ տեղ, և անարժան սովորուԹիւնք տի-
րեր էին: ՈւղղուԹեան համար բաւական գիտու-
Թիւն և համոզուԹիւն, կամք և ոյժ ունէր. բայց
ուղղուԹիւնը հաստատուն և ծնայրուն ընելու հա-
մար՝ կարևոր հնարք մ'այլ կար՝ որ ևս պահէր
իր հօրը, և Յունական և Հռաւաւորչի անգամ. այս-
ինքն է ազգային լեզուի գործածուԹիւնն, որ 'ի վա-
ղուց խափանեալ էր, քանիկ հայերէն գիրն խափա-
նուելուն համար. և անով՝ օտար լեզուները (յոյն,
ասորի և պարսիկ) սովրիլ ստիպէին Թէ աշխար-
հականք և Թէ եկեղեցականք, իրենց արուեստքին և
սուրբ պաշտամանց մէջ վարելու. և ամենքն այլ
հաւասար լեզուաց յաջողուԹիւն ջանեննալով 'ի
հարկէ կրԹուԹեան և կրօնից մեծ պակասու-
Թիւն կ'ըլլար: Պէտք էր հայերէն գիր հնարել:
Ահա հնարքը Սուրբ մեր քահանայապետին
մովսէսեանման գաւազանին ջուռաւ, այլ իրեն ա-
ռարկանման աջակցին, Ս. Մեսրովպայ:

## Դ

Ահա անձը զոր լաւ կու ճանաչես, Հայկակ,
որ յամենայնի լծակից և գործակից եղաւ մեծին
Սահակայ, գրեթէ և կենակից. (անկէ հինգ ա-
միս ետև յաշխարհքէ եղաւ և անկէ այլ քիչ մը
առաջ յաշխարհ եկած կ'երևի). նախ Ս. Նեբսէ-
սի փոքրատարը էր, և անոր վսեմական մահուն ա-
ռեն լսածնեբը մոխկ ընելով՝ աւանդեց յետնոց.

յեռոյ Հայոց Թագաւորին արքունիքը մեռաւ քաղաւորութեամբ, լաւ Թարգմանիչ և գրիչ ըլլալ. քանի մը տարիէն՝ արքունիքը Թողուց, առանձնացաւ յաստուածխոհութիւն և՝ ի ձեռնաւորութիւն. և հոգին ու միտքը աստուածային շընորհօք լուսաւորելով, եկաւ (յամին 396) քաղցրացնել և վարդապետելու զանազան կողմեր, աւետարել՝ ի Սիւնիս: Ահա վարդապետութեան աւետն աւելի քան զաւելի Հանչցաւ ազգային գրոց և գպրութեան հարկաւորութիւնը. որոյ համար եկաւ խորհրդակցելու ընդ սրբոյն Սահակայ, և տեսաւ որ արդէն կաթուղիկոսն այլ նոյն մտածութեամբ եպիսկոպոսաց ժողովոյ մէջ է (403). բայց ուրիշ եկեղեցական հոգեր վրան առած ըլլալով՝ յանձնեց Մեսրովպայ մանաւանդ խնամքով այս բանիս եռանդն ըլլալ. և ինքն անձամբ առ Թագաւորն երթալով՝ նա այլ յորդորեց յայս ջանս: Բարեաբար Թագաւորն այլ եթէ գանձով և եթէ քաղաքական ծանօթութեամբք օգնութիւն ըրաւ, մանաւանդ որ ինքն այլ պէտք ունէր լաւ քարտուղարաց, և Ս. Մեսրովպայ յարքունեաց երթալէն առև՝ յարմար մը չէր գտած: — Զեր. կընկրնենք այս պատմութիւնս. Ասուր Դանիէլ եպիսկոպոսի մը քով հին հայերէն գրեր կային, անոր խնդրեց զՍ. Մեսրովպ (404), որ առաք բերաւ՝ ի Հայս, և երկու տարի աշխատելով, գպրոցաց մէջ սովրեցնելու տղայոց, Հանչցաւ որ անբաւական են այն Դանիէլեան նշանագիրքն. և յետ սրբոյն շատ հնարից և տուվտութեանց, ինչպէս՝ ի Սամոս[1] երթալով՝ հան աւելի տղմիքով և Ան-

1 Մեր գրերուն գանուած տեղն հետաքննութեան արժանի է. ոմանք Սամոսի տեղ Սամոսատիա ասելնէն շատ մուշտաւ քաղաքը կարծեցին. ոմանք այլ՝ ի Բալու եղած է կ՝ըսեն այս դիւտս. ստոյգն՝ ի նախնեաց վկայի Սամոս

աուձոյ յօյանուէթեամբ՝ քան մարդկային հնարիւք՝ գոսա և յարմարցուց իր և մեր փափագելին (յամի 406). և Ճարտար յոյն գրչի մը ձեռօք մացընելով՝ ի ձև, (որ Թէոդովէտան պոռփ կամ էր՝ կոնտակիէ կ՝ըսուին հիմա), իբր փորձի համար ձեռք զարկաւ Թարգմանելու և գրելու հայերէն Սողոմոնի Առակաց գիրքը: Այս եղաւ սկիզբն Թարգմանութեան Ս. Գրոց, հեռու և անծանօթ կըղզւոյ մը մէջ, այն տարին՝ յորում Պաղեստինոյ առանձնութեան մէջ Ս. Հերոնիմոս գադրեցուց իր գրիչը՝ սուրբ գրոց լատիներէն (վուլկատա) Թարգմանութենէն:... Հոս քեզի Թողում ազգիդ և նախնեացդ արդար և համաչխարհական խնդութեան և հանդիսից մանակից ըլլալ. կ՝ուզես Ս. Մեսրովպայ հետ փութա՛ի հայրենիքդ, իբրև՛ի Սինա լեռնէն լինելով աստուածազիծ պատգամներով. կ՝ուզես Թագաւորին և կաթուղիկոսին և բոլոր մեծաց և փոքունց հետ անոր դիմացն ելլել, օրհնել, համբուրել և ընդունել այն անտես մուացդ հետ խօսիլ և լուսաւորող գծիկները. և մի ատ մի նկատէ, սեռ դպրոցաց կանգնումը, աշակերտաց ժողովումը, փոյթ և ջանքն, իբրև երկայն ծոմապահութենէ ետև պահոց պնակները կոտրող և զաւակ ընդունել՝ յոյն և սուրի պնակիանները Թողլով՝ հայերէն այբուբենը գրող ու սովրող մեծ ու պզտիկները. անոնց մէջէն՝ Սողոմոնի 60 զօրաւորաց պէս՝ բոլոր աշխարհքէն ջոկած 60 ամենընտիր աշակերտքը, որք

կղզին, (Սուսամ-սուսը). Ս. Մեսրովբ՝ Պերութէն կամ Սիդոնէն կամ մօտ նաւահանգստէ մը նաւելով՝ բոլոր փ. Ասիոյ հարաւային եզերքը պատած է ընդ Միջերկրական ծով, և արևմտեան կողմը կղզեաց մէջ մտեր է՛ի Սամոս, որ և արժանի է մեր դպրութեան կամ Ս. Մեսրովպայ ուխտաւորելոց մէկն ըլլալու:

իբրև ուշնոպոյնք, փոփկաձայնք, երկարոգնք, կամ զերկուսին յԱղեքսանդրիա, յԱթէնս, 'ի Կոստանդնուպօլիս, յԵգեսիա, և յայլ ուսմամբ առնուանի քաղաքս, լաւ սովրելու յոյն և սորին լեզու, և թարգմանելու սուրբ և պիտանի գրքեր։

Ահա գիւտս և յեղափոխութիւնս այսպէս երկդէ հին գանձասաց մը, (Գէորգ).

« Ո՛վ անվեհեր փութոյն այնդուրեան՝ 'ի գիւտ
» հանճարոյ սրբոց Թարգմանչացն. խորհին առեալ
» ծանել տառս գծագրաց, նշանակ իւօրից հայկա-
» կան լեզուիս. որով վայր անցեալքն յիշատա-
» կին, և մեկնեալքն՝ զեմ յանդիման իւօրին։ Ցայս
» հոգ զարթուցեալ սքանչելին Սահակ, զարմին
» վեցերորդ սրբոյն Գրիգորի. զոյն առ նովաս և
» զոյգ ընդ նմին առաուածաբանակ հայրն սուրբ
» Մեսրովպ. որ և զլուծանլի պարգեւս առաւին ընդ-
» կալաւ յԱստուծոյ 'ի մեծ պէտութեանցն։ —
» Լո՛ր Քրիստոս, պահպանիչ աշակերտաց եր-
» չանիկ սրբոց Թարգմանչացն, ազաչեմք »։...

« Գրաւորական տառիւ առլըրմամբ մեծապէս
» իմնդայր սէրն սուրբ Սահակ. իսկոյն ձեռնար-
» կէր 'ի Թարգմանութիւն մարգարէականն աս-
» տուածախօսութեանց. ժողովեալ մանկունս 'ի
» վարժ դպրութեան, աշձեցուցանէր զուսուցին
» իմաստից, չամբելով զկաթին նշանագրացն՝ առ-
» նէր վարդապետս և պատմաբանողս, զի յա-
» ջորդք հարանցն վարդապետաց՝ լինին աշա-
» կերտքն պայծառագոյնք։ Լո՛ր Քրիստոս, ևն »։

« Եւ ևս 'ի զօրագոյն զօրութիւն գնալով գրա-
» ւորականին վարժից կրթութիւն, ատրպ գրա-
» գիտութիւնն զարգանալով 'ի քերթողականն
» արուեստ յառաջիւր. որոց առաջին մեզ հայր
» քերթողաց պայծառն Մովսէս այն Խորենացին,
» նախնին աշակերտ սրբոյն Մեսրովպայ 'ի քեր-
» ւայէց հզօր քան զնա. համազօր նմին՝ Ցովսէփ

» Պաղնացի. նորուն վարժակից Եվնակ կողբա-
» ցի. Անյաղթն Դաւիթ և առաքեն Կորիւն, և միա-
» համառ գաս քերականացն. որք աստուածե-
» պէն վարդապետութեամբ փարթամացուցին զգ-
» Հայաստանեայս: Եւ Ֆրիատոս, պահապանիչ
» աշակերտացս երջանիկ սրբոց Թարգմանչացն »:

## Ե

Պարագլուխ Թարգմանչաց և մատենագրաց ինքնին Ս. Սահակ՝ քահանայապետի արժանաւոր կարգերը հոգալով, յառաջ քան զայլս Ձեռնադրողէն կարգը գրեց. ինչուան իր առեն գործածած Ս. Լուսաւորչի յունարէնէն առածը փոխելով և ընդարձակելով. և յամին 410 նաւասարդի տօնէրուն, առաքին սկիզբը հրատարակեց զայն հանդիսապէս. գուցէ ձեռնադրելով բազմութիւն եկեղեցւոյ սպասաւորաց, քահանայից, և Թերևս եպիսկոպոսաց այլ: Նոյն կամ յաջորդ տարին՝ Թագաւորէն և բոլոր եպիսկոպոսաց ուխտէն ինդրուելով՝ յանձն առաւ գլուխ կենալու Աստուածաշունչ գրոց Թարգմանութեանը. և ընդ Ս. Մեսրովպայ՝ բոլոր եկեղեցական պաշտամանց և ծխից, այսինքն Մաշտոց ըստուածգրոց, մանր մի Թարգմանելով՝ի զանազան հայց, և մանր մի նոր շարադրելով, և մնացեալ Ս. Լուսաւորչի գրուածներըը փոխելով՝ի հայ: Ընդհանուր Թարգմանութեանց սկիզբն սեպուի 411-2 տարին, և վերջն 426. այս 14 տարուան միջոց Մաշտոց, և Աստուածաշունչ գիրք հայերէն գրուեցան և կանոնեցան, հաւանօրէն՝ գրագրութեամբ քաջին Մովսէսի Խորենացւոյ որ Ս. Մեսրովպայ քեռորդին էր, և Ս. Սահակայ Գրիչն [1]: Թարգ-

1 Ս. Սահակայ գրագիրն կամ դպրապետն կ'անուանի Մովսէս Բարգմանիչ, երբեմն կէս-բնաւոյ երբեմն խոբնաւոյ:

մանուելեան երկրորդ տարին Ս. Սահակ յէջմիածին ըլլալով, (ուր և կ'երևի թէ այն աաեն նորոգեց Ս. Հռիփսիմեայ լուսաւորչաշէն մատուռը, և այն հրաշագեղ կուսին տադանին վրայ դրաւ իր հայրապետական կնիքն այլ Լուսաւորչի կընքովն քով), հան հրատարակեց ննջեցեալց Աչխոհանդէսը՝ զոր Ղազարիկ Թարգմանիչն բերած էր՝ (Ս. Եփրեմայ շինածը աատրերէն՝ ի հայ փոխելով և աւելցընելով), հրատարակեց տան տարի եռև։ Ուրիշ կանոններէն միայն Սէրմօզհնէայ Թուականն յայանի է, յամին 423-4 հրատարակուած. մնացեալքն այլ այս միջոցիս ոմանք՝ ի Ս. Սահակայ և շան այլ՝ ի Ս. Մեսրովպայ կարգաւորեցան, անոր համար իր մականուամբն Մաշտոց լսուեցաւ գիրքն, կամ թէ ինքն Մաշտոց[1] լսուեցաւ գրոց պատճառաւն, որ կ'լսուի և Օրհնութիւնաբէր։ Մեր Տնտոյցն այլ ըստ հայ և հռոմ ամոց ինքն Ս. Սահակ նախ կարգաւորեց, և ինչուան հիմա գաուխ իր գրածն այլ, յետոյ փոփոխածներէն զատ։ Թարգմանութեանց գլուխ գործոց եղաւ նախայիշեալ Աստուածաշունչ գիրքն, որ և տուրբ Սահակայ անթիւ յիշատակաց և պարծանաց պարծանքն է հիմա մեր մէջ. զոր նախ՝ ի հայատան գտուած տարբերէնէն թարգմանեց, վերջը յունարէն Եօթանասանից թարգմանութենէն սրբագրեց, կամ նորէն թարգմանեց. և այլ վերջը՝ Եփեսոսի ժողովէն եռև՝ երբ թարգմանիչք բերին աւելի ընտիր և ստոյգ Եօթանասանից օրինակ մը, անոր համեմատեց՝ և փոփոխեց տեսչին

[1] Մաշտոց անուամբ կաթուղիկոս մ'այլ ունիմք, թ դարուն վերջերը. զոր այլ ոմանք կարգադիր սեպեն այդ դրոց. և անոր համար հին մաշտոցաց եռևէն գտուխ այդ կաթուղիկոսին վարքն։

Թարգմանածը [1]. և վերջապէս վերջին ձեռք դնե-
լու և ըստ կարելւոյն կատարելագործելու հա-
մար, աշակերտաներէն քաջագոյնները (յորս Մով-
սէս Խորենացի, Դաւիթ, Եղիշէ, և այլք), իսա-
կեց յԱղեքսանդրիա, որպէս զի ուխտաբար հմուտ-
նան յոյն լեզուին, և ամենևին անտարակոյս և
հաւատարիմ ըլլայ Թարգմանութիւնն. բայց ա-
շակերտաց անյագ ուսումնասիրութիւնն և ըն-
թերցմունքն զնորեն ուշացուցին Ալեքսանդրիոյ
հարուստ գրատանց, և Ս. Կիւրղի վարդապետա-
րանին մէջ. և երբ դարձան՝ի Հայս՝ զնորեն ղրկուղ
մեծ վարդապետքն վախճանած էին:

Ս. Սահակայ հեղինակօրէն շարագրածոց մէջ՝
մաշտոցի քանի մը կանոններէն զատ, գլխաւորքն
են Աւագ շաբաթու շարականք (բաց՝ի քանի մը օրհ-
նութիւններէ), սկսեալ՝ի Ղազարոս յարութիե
ամենս վանեմ երգոյն, «Ախսոր գոլով՝ի Բեթանիա՝
» քո ամենազօր հրամանաւդ ձայնեցեր Ղազա-
» րոս, և դուրացաւ մահ. դժոխք պարտեցաւ, ա-
» պականութիւն լուծաւ. կենդանարար Քրիս-
» տոս, կեցո զմեզ». մինչև՝ի վերամխիթարող յե-
սուն նուագն Քրիստոսի Թադևոսի. «Որ արարիչդ
» եա արարածոց, հանգուցեալդ՝ի քերովբէս,
» վիմով կնքեցար յերկրի»: Ախս հեզասլաց խո-
րամուխ լեզուին և բանից՝ յարմարցուց երաժըշ-
տական եղանակներն այլ. վասն զի այս գմայլելի
արուեստին այլ քաջահմուտ էր: Ժամագրոց այլո-
ցից այլ մեկ մասին հեղինակն է Ս. Սահակ, ա-
նացելոց՝ իր աշակերտքն և յաջորդքն Գիւտ և Յո-
հան, և այլք յետոյ: Պատարագամատոյց մ՚այլ ոչնի
հիմակուան գործածուածքն աւետի Ճոխաբան և
Աչգաբան: Սոնք թէ իր մատենագրական հան-

1 Տես վասն Թարգմանութեան Ս. Գրոց՝ի Բազմավէպ 1850, երես 212, և 1851, երես 250:

*Ճարտն անեւրկբայ հաւատամիք են, և թէ իւր եկեղեցական կարգաց և հոգեւորութեան իմաստոցն. որոց համար՝ (բաց յայտնի պաշտամանց կամ սրբազան գրոց) շատ անգամ ժողովեր ըրաւ եպիսկոպոսաց, և արժանաւորը քահանայապետութեան կանոնները, իրաւանեը, կոնդակներ հրատարակեց. յորոց ինան հինա վեց կամ եօթն խոհական և յատակախոս բանք. Ա. առ Եպիսկոպոսունս, Բ. առ Քորեպիսկոպոսունս, Գ. առ Քահանայս և Վանականս. Դ. վան եկեղեցւոյ և վանաց, և տրից կամ նուիրաց ժողովրդեան 'ի վանս. Ե. վան անուանութեան եպիսկոպոսաց եկեղեցական նուիրաց. Զ. դարձեալ վան նուիրաց եկեղեցւոյ, թէ որպէս բաժնելոս է եկեղեցւոյ սպասաւորաց: Ա յս իրաւաներս Ս. Գրիգորի գրած կանոններէն առնելով ընդարձակած է, ինչպէս ինքնին կու վկայէ, և իր կաթուղիկոսութեե առաջին տարինեըն հրատարակեց յունարէն, և յետ գիւտի գրոյն՝ հայերէն. անոնց հետ ուրիշ կարճ կանոններ այլ, որ յանուն Ս. Հուսաւորչին պահուին ցարդ 'ի կանոնագիրս մեր: Ս. Սահակայ ամենայն գրուածոց լեզուն աքանչելի յատակութիւն, մաքրութիւն և ոսկրութիւն մ'ունի հանդերձ վսեմութեամբ, զոր իր հոգեկիր և աչխատասանգ Ս. Շնորհալիէն զատ՝ թերևս ուրիշ մը չկրցաւ առանալ նոյն աստիճանի:*

*Ա յս աստուածատուր և ամենահարկաւոր եկեղեցական և ուսումնական շնորհքները պատրաստէն եաև, իր բոլոր ազգին և վիճակին մէջ ծաւալելու այլ չանաց մեծն Խահակ. Պարսից բաժնին մէջ անաչխատ ընդունելի ըրաւ, բայց Յունաց բաժնին մէջ գժուարութիւն կրեց: Երկու տէրութեանց մէջ կատոյ պատճառ չըլլալու համար, քիչ մ'այլ իրարատեցութեամբ՝ յուսնաբաժինք խորչէին 'ի Պարսկահայոց. մինչև ոչ*

հայերէն դպրութիւնը ընդունեցան, և ոչ Ս. Սահակ հակայ օրհնութիւնը. այլ՝ ի կեսարիոյ արքեպիսկոպոսէն կ՚առնուին ձեռնադրութիւնն այլ. Ս. Սահակ փորձ մը փորձելէն ետև՝ առ ժամանակ մը լռեց. մանաւանդ որ այն տարինեըն կոտանդնուպօլսոյ աթոռոյն յաջորդութեան մէջ այլ շփոթութիւն կար. մինչև որ շատ տարիէ ետև (420) առիպութեըվ Ցունաց բաժինը երթալ, և նորէն հոն իրեն արժանի պատիւ չգտնելով, Թուղթ գրեց առ կայսրն Թէոդոս Փոքր և առ հայրապետն Ատտիկոս, նուէրնակ խաբրեելով իր փոխանորդը, զՍ. Մեսրովպ, և իր Թուղթ՝ Վարդան. կայսրն և հայրապետն նախ մեղադրեցին Ս. Սահակայ՝ աւելի Պարսից և Ատրուց կողմ կենալը, և հայերէն գրոց գիւտին համար Ս. Ոսկեբերանին խորհուրդ չհարցնելը. (զի՝ եկեղեցին՝ որ այն առեն իրենք զՈսկեբերան կոչ հալածէին՝ ի սաստկանիս հիւսիսային փոքր Ատիոյ). վերջապէս հասանեցան որ Ս. Սահակ հովուէ յոտնաբաժին Հայերն այլ, և հոն այլ գպրոցներ բացուին հայերէն գրութեան. Ս. Մեսրովպայ այլ յոտնական վարդապետութեան աշխատի և պատիւ տալով յետ դարձուցին: Այսպէս զբոլոր Հայաստան աշակերտեցին Սահակ և Մեսրովպ. և ինամքնին տարածեցին անկէ դուրս այլ իրենց գրակից և մտաւոր Թեմակից ազգաց վրայ, Վրաց և Աղուանից, որոց լեզուին գրերն այլ հնարեց Ս. Մեսրովպ, և սուրբ գրքերը Թարգմանել տալ սկսաւ:

Ցունաց բաժնին մէջ եղած առեն՝ Ս. Սահակ իմացաւ որ հոն իր վիճակելոց մէջ չար և այլանդակ ալանդ մը կայ, զոր Բոլբոլիկոն կ՚անուանեն պատմիչք մեր, և ոչ այնքան մտաց չարափառութենէն, որքան բարուց անբարութիւն կուգար ցուցնեն. խափե եռեռ ընկաւ այս ալանեութիւնը վերցնելու. և երբ հարկ եղաւ իրեն նորէն դառ-

նաև 'ի Պարսից բաժինն (421), յանձնեց սուրբն Մեսրովպայ՝ որ անաչառ քննէ դատէ, և անհաւանութիւնը պատժէ, անուղղութիւնը՝ ճակատագրին իւրանով այլ նշանելով՝ հալածէ: Այս բանս լեռ ցոյց այն աղանդին սատակ ապերջութիւնը կու ցուցնէ և թէ Ս. Սահակայ արիութիւնն. որ յայլոց քաղցր և հեզ, զինջ և համբերող, ուր որ Սահատոնց իրաւանց վնասիչներն յանձնած էր իրեն՝ հոն արդար և անաչառ էր. զինչ արժանութիւն ցերեկոյ լեռոյ նեստորականաց և ուրիշ ազանդաւորաց դէմ. զինչ՝ իր կանոնական գրոց մէջ այլ կու սպառնար. և զինչ իւրատ գրէր շատ տարի ետև առ Ս. Պրոկլ՝ աշակերտ և աթոռաժառանգ Ոսկեբերանի, արտմախատն յիշաւտակաւ իր ազգին վհատկին, որ անուէր ըլլալով այն առեն՝ կու գժուարացընէր կաթուղիկոսութեան տիրապետ իշխանութիւնն այլ. նակ գուք կ'ըսէր « Թագաւորս ունիք՝ որ զհոգ Սահատոնց յանձին բարձեալ բերեն, և... կարող են զբ» փուշն 'ի միջոյ արկանել. (վասն այնորիկ) պարտ և » պատշաճ է ձեզ որ 'ի մեծամեծ իշխանութիւնք » վայելէք՝ նախանձել զնախանձն Սահատոնց և 'ի » գլուխ վարել զայնպիսի նախանձու վրիժուց » հատուցմունս, և ոչ ով և մարմնով ջանալ՝ զի » բարձցին 'ի միջոյ եկեղեցւոյ Քրիստոսի՝ անուա» նակ անօրէնն ամբարշտութեան գայթակղութիւնք »: Այս Թուղթս սուրբ հայրապետին մեր մահուընէն քիչ տարի առաջ գրած է, երբ ինքն կաթուղիկոսի քաղաքական կամ իշխանական տէրութենէն հրաժարած՝ միայն սատուածային տէրական իշխանութիւնը անհրաժեշտ կու վարէր, անդադար վարդապետութեամբ և հովութեամբ: Այս յաւալի և սիրալի դէպքը պէտք է յիշեմք, Ս. Սահակայ քաղաքագիտութիւնը և քաջ ազգապահպանութեան այլ լաւ ձանաչելու համար:

10249926



# Զ

Գրեթէ գրոց Թարգմանութեան սկիզբն և քահանայօրհնէքի հրատարակման տարին (412) վախճանեցաւ բարեպաշտաւրէն Թագաւորն մեր Վռամշապուհ, որ Տրդատայ մահուընէն ետև՝ կէս դարու մէջ եղած ջրլլալու չարիքն և չփոթքը՝ մոռցուցեր էր իր 21 տարի խաղաղ և խոհեմ կառավարութեամբն. իր մահն նորոգեց հին վէրքերը, որք՝ աւազ, անբժշկելի մնացին: Վռամշապուհ՝ իրեն ժառանգ տասը տարեկան տղեկ մը Թողուց, Արտաշէս անուամբ. աշխարհը մեկէն վերվար ջրլլալու համար՝ փութացաւ պզտատ հովուապետն Ս. Սահակ, (որ և յետ Թագաւորին ազգապետ Ճանաչուէր), գնաց առ Յազկերտ Ա, և կերպով մը իր պատճառաւ զրկուած Հայոց առաջին Թագաւորին փոխարէն ընելով, ինքզինք որ նորէն Թագաւորեցընէ Վռամշապհոյ եղբայրը, Խոսրովը, որ Անյուշ բերդին մէջ արգելուած և ծերացած՝ մահուընէ զատ ազատութեան յոյս, և Թերեւս փափագ այլ չունէր: Ս. Սահակայ ընորհքն միայն կրցաւ Պարսից անփոփոխելի օրէնքը փոխել, և ինչուան՝ ի մահ և՝ ի քանոտ գատապարտեալը՝ հանել՝ ի բանտէ, և հաւանեցընել զնա այլ՝ նորէն իր երիտասարդ գլխին կրած Թագը՝ գնելու հնամ կորացեալ և ալևորեալ գլխին վրայ. որ և տարիէ մը աւելի չկրցաւ վերցընել զայնասայն գոնէ փառօք մեռաւ, և Ս. Սահակայ օրհնութեամբը նչաւ քնանալու իր ազգակից Թագաւորաց հետ հասարակաց քունը: Ս. Սահակայ փափագն կատարեցաւ անոր Թագաւորութեամբն, այլ կիսկատար մնաց՝ կարճ Թագաւորութեամբն. յետ որոյ քանի մը տարի պարապ մնաց աթոռն, Արտաշեսի տղայութեանն համար.

և Թէպէտ հատաւ նա յարքունս, բայց Յազկերտ
իր որդին Շապուհը Թագաւորեցուց Հայոց. որ
և յետ չորս տարի անարգանօք Թագաւորութե՛ն
հօրը հետանդութիւնը լսելով փութացաւ՝ի Պա-
րսկաստան անոր յաջորդելու. բայց մեկաւել՝ի
դերեզման մտաւ, իրեններէն սպանուելով. և
Թագաւորեց Պարսից Վռամ Ե: Սա մեկէն Յոս-
նաց դէմ պատերազմ բացաւ (420), մեր աշ-
խարհքն այլ նորէն ոտնակոխ եղաւ. և ահա այս
չփոթութեանս համար էր որ Ս. Սահակ անցաւ
՝ի բաժին Յունաց. և որովհետև Շապհոյ Թագա-
ւորութեան տասն մեռեր էր իր փեսային Համա-
զասպ Մամիկոնեան՝ սպարապետն Հայոց, անոր
որդին և իր Թոռը՝ Վարդանը՝ ղրկեց ընդ Ս. Մես-
րովպայ առ կայսրն Թէոդոս, և սիրապէտ պա-
տուականութեամբ հօրը տեղ իշխանութեան հաստց:
Անոր հետ Թէոդոս կայսր պատուէր ղրկեց առ
Անատոլ՝ իր արևելից կոմսնակալ զօրավարն, որ
յապահովութիւն յունաբաժին Հայոց ամուր
քաղաք մը շինէ, և շինեցաւ Կարնոյ քաղաքն (422):
Անյապէս Յունաց կայսրն և անոր իշխանութեան
տակ եղած արևմտեան Հայաստանը չահելով և
յանձնելով՝ի վարդապետութիւն Ս. Մեսրով-
պայ, Ս. Սահակ Ճարտար քաղաքապետութեամբ՝
արևելեանն այլ չԹողուց Պարսից Թագաւորին
վերաժանդրութեանը. այլ զաստիան Սահակ և
(յետոյ) զԹոռն իւր Վարդան (երբ դարձաւ առ
՝ի Յունաց) ղրկեց՝ի դուռն Թագաւորին՝ հաշ-
տութիւն խնդրելու. որովհետև Շապհոյ երթա-
լէն ետև՝ Հայք գլուխ քաշեր և վանտեր էին ըզ-
Պարսիկ պաշտօնեայս. ասոնց պատգամաւորու-
թիւնը բաւական չըլլալով, (ըստ ոմանց)[1] ինքնին

1 Ի պատմչաց ոմանք զՎարդան միայն յիշեն զրկուած
առ Թագաւորն Պարսից. ոմանք զնա և զՍահակ առաքեա.
ոմանք այլ գեղջաբար Վարդանայ ընդ Ս. Սահակայ:

Ս. Սահակ՝ երբ արևմտեան Հայոց եկեղեցական բանեբը կարպի դրաւ, երկու փոքր Թոռներուն հետ (Համազասպայ և Հմայեկայ) գնաց՝ի դաւան Վռամայ (422), և իր քնաձիր և սաստուածատուր հնարհօքն՝ ոչ միայն Թաւիեց Թագաւորին զէնքերը, այլ և Վռամշապհոյ որդին Արտաշէսը Թագաւորեցընել տուաւ և բերաւ կանգնեց իր հօրը աթոռը: Երկու տէրութեանց մէջ և այնպիսի վտանգաւոր և խառնակ ժամանակ մը՝ այսպիսի խորագէտ և անխարդախ խոզ մը խոտալ և յաջողիլ՝ միայն տուրքն Սահակ կարող էր[1]: Ո՛րքան անոր երախտապէտ և անձնատուր ակռք էր ընդլայն Հայաստան՝ իր Թագաւորաւն և իշխանօքն և ամենայն ոստիւ եկեղեցւոյն և ասմկաց: Հաստատէր ուրչէ սկսեալ իր յաջորդ հայրապետքն՝ շատ հետ այսպիսի բարիք և տկրութիւն ըրին իրենց որդիացեալ ազգին, բայց այն օրհնեալ և օրհնելի ազգին որդիքն՝ շատ պակաս և պարտական գըտուեցան տա բարերարան: Ա՛յսչէս այլ հիմա, նախ Թագաւորն՝ անարժան որդի ազգն Վռամշապհոյ, Պապայ և Արշակայ ձամբանեբը երթալով՝ զգուեցուց նախարարնեբը, արհամարհեց անոնց երեսպաշտութիւնը, անսասեց Ս. Սահակ հայ խրատուցը, միայն իր ծալկեալ և հաւժիտ երիտասարդութեանը լսելով:

Նախարարք և իշխանք վեց տարիէ աւելի (423-428) չկրցան համբերել անկէց իրենց և իրենց կանանց հասած անարգութեանը, և միաբանեցան մերժելու զԱրտաշէս՝ի ձեռն Վռամայ Պարսից Թագաւորի, և անոր գունէն կոմինակալ կամ հարկաժողով մը գնել տալով՝ խրատքանչիւր ի-

1 Յունաց հետ հաշտութեան միջնորդ մ'այլ եղաւ Ա. կաք եպիսկոպոսն Ամիդայ, պարսիկ գերիները գնելով և ազատ արձակելով:

10249926



բենց տէրութիւնը և ազատութիւնը խափանելու թեամբ վարելու. առ այս կու յորդորէին զՍ. կաթուղիկոսն այլ: Թէպէս մուածութիւններն զտլտվին անկրաւ էէր, իրենց առջի կրածնեերը յիշելով յանկարգ Թագաւորաց, այլ դեռ շատ հեռու էր յուղիլ և՝ ի խոր տեսութենէ. մանաւանդ որ եպածէն աւելի սև կ՚ուզէին ցուցընել զԱրտաշէս, և յիրաւի իրմէ սև ու ապտեղի Թագաւորի մը մտանել իրենց գլխին՝ բայց քրիստոնեայ Թագաւորը. ինչպէս որ շատ պայծառ և գեղեկ իսոքերով բացատրեց այս բանը Ս. Սահակ, և երկար ջանաց հանդարտեցընելու զնախարարսն: Բայց անոնց համբերութիւնն հատեր էր. և ջուզելով եա կենալ իրենց բռնած ճամբէն, էէին այլ կրնար ուրիշ անտեղի և վատ գործ մըն այլ ջաւելցընել. այսինքն, իրենց աշխարհական տէրոջ՝ Թագաւորին հետ՝ պատրեցընել նաև հոգևոր տէրոջ՝ կաթուղիկոսին իշխանութիւնն այլ. վասն զի եթէ նա չմիաբանէր հետեւելուն՝ իսոքերնին աւազ էէր երթար. ապա պէտք էր գնա այլ յանցաւոր ցուցընել Պարսից Թագաւորին դէմ: Ահա հոս էր մեծագոյն փոսն, որոյ վրայէն չկրցան ցատքել, ընկան մէջը, և ձգեցին իրենց տեսութիւնը և բոլոր աշխարհքնին: Ելան գնացին Պարսից դուռը. Վռամ յօժարութեամբ լսեց անոնց ամբաստանութեանց և զրպարտութեանց. և քիչ մը վերջը կանչեց՝ ի դուռն զԹագաւորն և զկաթուղիկոս. Թագաւորն արդարացուց զինքը. կաթուղիկոսն այլ ցուցընելով թէ Թագաւորին անքրիստոնեայ գործքերը՝ իր (Սահակայ) տեսանին մէջ դատելի է և ոչ Պարսից տեսանին մէջ դատապարտելի, անոր իրաւունքը պաշտպանեց. և հոս այլ երևցաւ Ս. Սահակայ մինակ մեծութիւնն՝ բոլոր քաղմութեան իշխանաց պզտիկ-մեծութեանը քով: Արտաշէս իր նեղքին խլճտվը,

նախատրտիք իրենց արտաքին իշխանքը, վասն իր անփույթ իշխանքը՝ մեծագործ միգամած կորացած էին. միայն Ս. Սահակ սպիտակ և պայծառ սիրտ նացեալ ամպոյ պէս հոն կու բարձրանար: Պարսից Թագաւորն առանձինն այլ յորդորելով զՍ. հայրապետն, և էլարենալով անոր բերնէն առաստանութիւն մը լսել, բառական սեպեց նախատրտից լսածը, և յանկրաւի գատաստարտեց զԱրտաշէս, զրկելով յաթոռոյ և յազատութենէ. նոյնպէս այլ երաւ կաթուղիկոսին. դարձեալ նախատրտից լսելով, որք (ամօթով կ'ըսեմ) առաստանեցին զնա իբր ցուռնց կուսակից, և փաստ բերին անոր գրած նամակաները առ կայսրն և առ Անատոլ, և զվարդան զրկեցին առ նոսա: Ս. Սահակ այլ արգիլուեցաւ 'ի Պարսս, երթալ էրս տալ: Հայոց Թագաւորին առ Պարսից մարզպան մը զրկուեցաւ 'ի Հայս. իսկ այն սուրբ և մեծ կաթուղիկոսին առջ ոմն. — չարաչեզոք երէց, չէ՞ էրէց մը, Արծկեցի Սարմին. որ 'ի վարձ մատնութեան այնպիսի ապստամբարեալ և պատկառելի անձի մը, անոր աթոռը ժառանգեց: Հայոց քահանայապետ անուանեցաւ, գոնէ կաթուղիկոսի արտաքին իշխանութիւնը բանեցընելու, որովհետև ինքն և ոչ եպիսկոպոս էր: Եկաւ 'ի Հայս, իբր առ երեսաք Ս. Սահակայ պայծառութեանը մէջ բիծ երևեցնելու համար. բայց և ոչ տարի մը դիմանալով՝ նոյն իսկ իր գործակից և բանակից նախարարներէն վանաուեցաւ. որք և ուրիշ կաթուղիկոս մ'ուզեցին 'ի վասնմէ. նա այլ Բզնէից համար Բագրեւանդ անուամբ Ասորի մը խաբեց, որ եկաւ տանաիկիններով լեցուց Հայոց հայրապետանոցը, զոր Ս. Սահակ իմաստուն վարդապետօք և Թարգմանչօք և խարազնազգեաց Ճգնաւորօք զարդարեր էր: Ան ատեն շատ լաւ իմացուեցաւ առնոր արժէքը, և ոչ միայն աշխարհին մէջ, այլ և

կայսեր քով և Եփեսոսի 200 հայրապետաց մէջ հարցուեցաւ բնաւուեցաւ Հայոց տուրը հայրապետին վերադաս գահը. հայրապետը Թարգմանիչքն մեր որ հոն գտնուեցան՝ ցուցին հեռուէն Տիզբոնի բանտը: Ահա անկարծելի յանդիմանուեցաւ Թիւնա՝ի սիւնհոդոսի աշխարհագրումար հայրապետաց, արդարև ծանր՝ այլ արժանի էր մեր կարճամիտ կամ կարճատես իշխանաց. որք աչքերնին աղէկ մը շինելով՝ յետ երեք տարուոյ մեր ժեցին զԲրքիշու այլ. և ոմանք լռելեայն՝ ոմանք յայտնի՝ Ս. Մեսրովպայ և բոլոր եկեղեցւոյ ուխտին հետ մեկտեղ՝ նորէն զՍ. Սահակ խնդրեցին յետ դարձընել. միայն ոմանք Պարսից Թագաւորին կամացը Թողուցին զի՛վ որ ուզէ խաբելու. յոնաբաժին Հայք այլ ուրիշ մ՚առաջարկեցին. Վռամ Թէ իր ուզածը և Թէ անոնց ուզածը միաբանելու հնարք մը սեպեց՝ Շմաւէլ (Սամուէլ) անուամբ ատրի մը խաբել փոխանակ Բրքիշոյ, կաթուղիկոսի արտաքին իշխանութիւնը վարելու, և մարզպանին օգնական ըլլալու. Ս. Սահակն այլ արձակեց, որ Շմաւէլն ընտրածները ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն, և հոգևորապէս հովուէ իր ժողովուրդը. և այսպէս յերկու բաժնեւ կաթուղիկոսութեան իշխանութիւնը, և արտաքին հոգաբարձութիւնը վերցընելով՝ի Ս. Սահակայ, անոր վիճակեալ ոտձիկն այլ պահեցուց. այսինքն կաթուղիկոսին տրուած կալուածքներուն մեծ մասն առաւ, և քիչ գեղ ու ագարակ Թողուց անոր. արձակելու առեն այլ երդումն պահանջեց՝ի Ս. Սահակայ՝ որ հաւատարիմ կենայ իրեն, և չմիտի Յունաց կողմը. ապա Թէ ոչ՝ բոլոր ազգին վրայ չարիք կու հասցընէ: Ահն առեն Ս. Սահակ՝ որ կ՚իմանար իր հարկատորութիւնը ազգին համար, բայց չէր այլ կրնար յանձնառու երևիլ վասնզի ամեն հրամայածին,

իր արժէքը անպատմ մ'այլ ցըցուց. և յոյժ կանուխ
նեղով բոլոր ազգուն հանդիսին մէջ, ևրկար ա-
ւետարանութեամբ մէկիկ մէկիկ յառաջ բերե-
լը 40 տարիէ աւելի հաւատարիմ ծառայութին
և երախտիքն առ Դուռն Պարսից, և՛ Դրանէն
անվարձ և աներախտութեան, Պարսից առաս խոս-
մունքը և խարդախութիւնը, և անիրաւ դատա-
ստանները, և իր քրիստոնեայ հաւատոց անհրա-
ժարելի պարտքը՝ հաւատակցաց հետ (Յունաց
և այլոց) հաղորդութիւն ընելու: Եւ այնքան ոխ-
րաբար Հարստահարութեամբ, այլ հանդարտ և
վեմ կերպով խօսեցաւ այն վեհմտիտ այրն Թան-
ձեայ ալևորն, մինչև Թագաւորն և իշխանքն և
մոգերն ապշահած իրար կուռնայէին, և չկըր-
ցաւ մէկն պատասխան տալ. այլ յետոյ ինքնին
Թագաւորն հրամեց իր մեծերուն, որ շատ գանձ
առակ տան մէր կաթուղիկոսին, այնպէս պետ-
ցիկ և անվախ համարձակ խօսելուն համար. որոյ
համբառն յետոյ մեր աշխարհն այլ հանեալով՝
այլ աւելի սիրելի ըրաւ իր ծերուն ամենաշնորհ
հայրապետը: Իսկ ինքն՝ առակը մերժելով՝ տուռ-
նեբուն ապաչեց որ անոր տեղ Թագաւորէն խըն-
դրեն՝ ինչ որ ինքն երբեմն յԱրտաշէս խնդրեր էր.
այսինքն, նախարարաց իշխանութեան պահնամա-
կը անփոփոխ հաստատել, և մանաւորապես Ար-
շակունեաց ինամի եղող նախարարաց կալուածք-
ները յետ դարձնել իրենց: Վասն հոս այլ յայլ-
Թուեցաւ յԻսահակայ. ամեն խնդրածնեբը կա-
տարեց, և անոր Թուը, Ս. Վարդանը՝ հաստա-
տեց՛ի պատիւ Մամիկոնէից սիրութեան և զօ-
րավարութեան Հայոց: Ասպէս յետ երեք կամ
չորս տարի արդեանց դարձաւ Ս. Սահակ՛ի
Հայս, և իր հին փառաւոր աթոռը Վաղարշա-
պատը Թողուվ, նկատմամբ անարժան Եմռւէլին,
բայց յանձնելով զայն՛ի հոգատարձութիւն իր հո-

գեկցին՝ Ս. Մեսրովպայ, ինքն ընտրեց երեն կա-
յանք՝ Հայոց սկրտարանը, Բագրեւանդայ Ս. Յով-
հաննու ոսխատաեզին. և երբեմն այլ անոր մօտ
վիճակները պտըտեըով, հարազատ հովուի պէս
կու ինամէր իր հեռացող և երբեմն մոլորեալ հօ-
տը. և առանչուան պէս անհնայ քարոզէր և վար-
դապետէր:

## Է

Ահա առեն մխիթարութեամբ ընդունեցաւ
տըրըն Սահակ զԱղան՝ Արծրունեաց հոգեսէր
էշխանն՝ի կրօնաւորական կեանս, ինչպէս 40 տա-
րի առաջ այլ խնդրեր էր, բայց Ս. Հայրապետն՝
Պարսից Թագաւորէն ակն ածելով՝ չէր յանձն
առած այն առեն: Ս. Սահակայ արգելանաց ա-
ռեն Եփեսոսի ժողովն կատարուեր էր (431).
որոյ վեց կանոնները և ոմանց՝ի Հարց ժողովոյն
առանձին Թղթերը առ Ս. Սահակ բերին՝ի Կոս-
տանդնուպոլիս եղած Թարգմանիչք մեր՝ Ղևոնդ
և Կորիւն, Եզնիկ և Յովսէփ, ուրիշ տուրք Հարց
գործքերով, և գտան զՍ. Սահակ և զՄեսրովպ
Աշտիշատ Տարօնոյ. զորս ընդունելով Ս. Սա-
հակ՝ ժողովական առենաբանութեն[1] մը ըրաւ
իր Տաւտարիմ եպիսկոպոսաց առջև, և Տաւ-
նուեամբ նոցա և Ս. Մեսրովպայ՝ պատասխան
գրեց Հայրապետաց. և սկսան նոր բերած գրքերը
Թարգմանել և տուրք գրոց Թարգմանութիւնը
ուղղագրել: Բայց Եփեսոսի ժողովին վճիռը էգոպ-
րեցւոց՝ի Յոյն՝ Նեստորի և իր հեռևողաց վճ-
ռերը, այլ աւելի զայրացաւ և ընդարձակեցաւ:

1 Այս առենաբանութիւնը կու յիշուի մեր Հարց առ-
տուածաբանական խնդրոց վկայութեանց մէջ, ՚ի ճառէն
որ Աղերիտեան խօսէցաւ:

Ուղղափառ և սյլափառ էրարու գէմ գրէին, և օտարաց խաւրէին գրածնէին, յորոց շատք էին. բեռնալով ընարել զուղիսն և զծուռն՝ չիտնէին. աւելի չիտնցընուն էր Նեստորի վարժապետին Թէոդորի Մոպսուեստացւոյ գրուածքն, որ Անտիոքի և Մակեդոնի և ուրիշ հերձուածոց դէմ[1] գրուած ըլլալով՝ ուղղափառ կ'երևէր, բայց ետևնէն տակ ծածկած էր նեստորական թոյնն. սակայն՝ ի սկզբան շատոնք իբրև ուղիղ ընդունեցան. ինչպէս և Կիւրոյ եպիսկոպոսն Թէոդորետոս իմաստուն պատմիչն. որք՝ ի Հայս այլ խաւրեցին այն գրոց օրինակները, և որպէս ետևի՝ ամանք՝ ի մերոց այլ ընկալան, և քարեկամն Թէոդորեայ՝ մեր Եւլալ եպիսկոպոսն Մարդպոլոյ (զոր յետոյ յիշէ Եղիշէ՝ ի ժողովն Արտաշատու) Թարգմանեց զայն գրեանքն՝ ի հայ: Այս բանիս կասկածելով նախ Ս. Սահակայ մերձաւոր աշակերտքն Ակակ Մելտենոյ եպիսկոպոսն, և երանելին Բաբուլաս՝ Եդեսիոյ եպիսկոպոսն, գրով իմաց տուին առ ծերունին հայրապետն մեր (յամի 434-5). որ և մեկէն քննել տուաւ ու գտաւ. և Թէոդորոսի գրուածոյ հետ՝ Բաբուլայի և Ակակայ նամակն այլ խաւրեց առ ծանօթն իւր Ս. Պրոկլ Կոստանդնուպօլսոյ հայրապետն, ձեռամբ Ղևոնդի երիցու և Աբրոյ կամ Աբելի, որպէս զի նա երկու կողմէն գրուածներն այլ քննէ և իր դատաստանը իմացընէ: Պրոկլ ուրախութեամբ ընդունելով Ս. Սահակայ ղրկած նուիրակութիւնը, և անոր ծայրագոյն հասակին, և Թերևս հին ծանօթութեան և դիպուածոյ համեմատ, ինքն որ դեռ նոր նստեր էր յաթոռ (434), գրովելով և պատկառանօք, իբրև իր վարդապե-

1 Մէկ գրուածն այլ էր ընդդէմ մոգութեան Պարսից, և գրեր էր առ Ս. Մեսրովպ, Թերևս ատոր խնդրովը:

տին (Ոսկեբերանի) ընկերակիցը տեանելով՝ կուզգրէը այս նշանակեան խօսքերով սկսելով. « Երա-
» նի՛ որ հանապազորդ լինէիցին ի քաղցրահայե-
» եաց տեսլով աստուածապէտ երեսացդ. և վի՛ ա-
» սեմ հանապազ, այլ գոնեայ յաւուրս կամ
» յամիս կամ ի տարեկանս: Աստուածէ և իմ անճո-
» ո՞ տունքը զիս արժանի հասանել անկանել յոտս
» սուրբ երանելիչս:.. Եւ ուստի՛ ինձ այդ լինիցի,
» բայց եթէ յաղօթից սրբոյդ, զոր մեծ պա-
» տարագաւ միշտ ի վերայ արժանաց և անարժ-
» ժանաց՝ ամենատուրքն Աստուծոյ հատուցա-
» նէս »: Իսկ իրաւունք վրայօք երկոցն բացատրու-
թիւն մը գրեց. բայց նախ քան զկնի՛ի Հայս,
խաբեց առ անուանին Յովհաննէս Անտիոքայ հայ-
րապետն, որ ինքն այլ իր հաւանութիւնը և տա-
րագրութիւնը տայ. նա այլ իր եպիսկոպոսաց
ժողովով տարագրեց և գովութեամբ դարձուց.
նուիրական տարտաւ թուղթը նաև առ մեծն Կիւ-
րեղ Ալեքսանդրի հայրապետն. նա այլ հաւա-
նեցաւ և առանձինն այլ գրեց թէ՛ առ Ս. Պրոկլ
և թէ առ Ս. Սահակ ընդդէմ Թէոդորի Մոպ-
սուեստացւոյ. այսպէս Պրոկլ երկու պատրիար-
քաց վկայութեամբ այլ հաստատելով գրածը՝
անկէ ետև զկնեց ի Հայս[1] (436). բայց իր նուի-
րական Բասիլ՝ իր կողմանէ այլ բաներ աւելցուց
ընդդէմ Թէոդորի, իր հայրապետին գրածը բա-

[1] Այս թուղթս գրուած կու սեպուի յամին 435. հա-
րիւր տարի ետքը Դիոնեսիոս փոքրիկն կամ կարճիկն
թարգմաներ է ի լատին լեզու. խորագիրն կամ հասցէն՝
Հայոց եպիսկոպոսաց, վարդապետաց և վանահարց ուղ-
ղուած է. Ս. Սահակայ անունը չկայ. հաւանօրէն, անոր
գաւտ գրեր էր, եպիսկոպոսաց գաւտ. որպէս զի Պարսից
թագաւորին առջև յանցաւոր չսեպուի Ս. Սահակ՝ իբրև
ժողովով ցունաց հետ միաբանող:

ական չհամարելով: Այս Թուղթն այլ միաբան պատասխան գրեց Ս. Սահակ ընդ Մաշտոցի, և ապահովացաւ որ Թէոդորի սերմունքը չկան Հայոց մէջ. « Եւ որ Դիոդորեայ (Թէոդորի) Մամուեստացւոյ աշակերտեալք եցեն, առ ժամանակս՝ » ի շնորհացն Աստուծոյ՝ այնպիսի ինչ էև է յայտնեալ. ապա թէ եցէ ծածկեալ ի ժանգոյ ալտեղ » ղուճե, ի հարկէ ջան լինի մեզ խլել զնոսին և զգայ- » թակղութիւնն զայն ի միջոյ ի քաց կորուսանել. » զի միաբանութիւն՝ որպէս ի ձեռամ միջի փա- » ռաբանի, և զմեզ ի նմին հաւատարմութեան փա- » ռաւորութիւն առ Աստուած հաստացանել ար- » ժանի սրտացէ »: Այս Թուղթս [1] գրած է Ս. Սահակ հազիւ երկու կամ երեք տարի յառաջ քան իր մահը. այն միջոցին հանդիպեցաւ և մահ Շմաւէլի, որ ապահովութեամբն աւելի քան զԲըզքիշոյ զգուելի եղած էր ամենուն, բաց ի Սուրմակայ: Հաւատարիմ նախարարքը և եպիսկոպոսունք ազատելով այն անուանեալ քաղաքացի տարի կաթուղիկոսէն, Ս. Սահակայ տաքն ընկան, և լալով ներումն խնդրէին և օրերով կ՚ալաչէին որ իր հօրը Ս. Ներսիսին պէս անյիշաչարութեամբ յանձն առնու նորէն իրեն կատարեալ կաթուղիկոսութիւնը. բայց ամենայն ջանք և աղաչանք անօգուտ եղան. Ս. Սահակ ոչ յիշաչարութեամբ մերժեց, այլ արդէն լաւագոյն հանդերձեալ կենաց պատրաստութեան մէջ ըլլալով

1 Ակէ զատ երկար Թուղթ մ՚այլ գրած է Ո. Սահակ միաբանութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց և վանահարց, որուն միայն յունարէն բնագիրն կայ հիմա. այս Թուղթս կարդացուեցաւ Կոստանդնուպօլսոյ ԺԲ ժողովոյն (Ե. տիեզերական) մէջ յամի 553, իբրև զօրաւոր և պայծառ գրուած մը ընդդէմ Նեստորի և Թէոդորոսի, անոնց ժամանակակից սուրբ և մեծ Հայրապետէ մը: — Տես Պատմ. Հայ. Բ. 261:

այն ծանրացեալ հասակի, միանգամայն և հին առակքն միշտ աչացն առջև ըլլալով, յիսուն վաթսուն տարի զայն լուռթեամբ պահելէն ետև, պատմեց իրեն ալաչոզաց, թէ իր ցեղէն քահանայապետութեանը գագրիլն և թէ իր եկեղեցւոյն հանդերձեալ հալածանքը և վտանգը: Զոր լսելով ամենքն զարհուրեցան, ապշեցան, ափ 'ի բերան եղան, և ակամայ իրաւունք տուին այն մեծ սըրտակուռ անձին՝ որ կ'ըսէր. « Երթայք լինէն » 'ի բաց, և Թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր » կորուստ աշխարհիս Հայոց. զոր առանեմ ա» չօք մտացս՝ 'ի զօրութենէ վերին ցուցակութենէն. » մի բանտադատէք միխիթարել զիս 'ի վերայ բեկ» ման ժողովրդեան իմոյ [1] »: Ելան կարակոր, 'ի բաց գնացին լուռմուռ, և անկէ ետև ոչ ոք համարձակեցաւ այն խնդրոյն վերայ բան մը խօսիլ՝ այն վեմ ցաւով կնքուած սրտին հետ. որուն բանի հնչած հառաչանքն այլ հիմա շատ ազդու կու գար նախարարաց ականջին, քան անկէ տասն տարի առաջ երկայն յորդորանքն՝ զերթեք կրկին տիրամտանութենէ յետ կեցընելու համար: Իր լուսաւորչական գահը իշխանական փառօք զարդարէն առէլի՝ միխիթարութիւն եղաւ իրեն կենաց վերջընթեր տարին՝ (438), իր մեծ աթոռակցին, Ս. Ոսկեբերանի մարմնոյն գարձն 'ի Կոստանդնուպոլիս. որուն մահը, աքսորանքը, և եպիսկոպոս նստիլն առաջ էր Ս. Սահակ իր կաթուղիկոսական աթոռէն: Իսկ հիմա այն աթոռոյն աստիճանաց վրայ նստած՝ և նկատելով 'ի գերեզմանն, « յայնմհետէ ամփոփեալ զինքն յամենայն » աշխարհածաւալ պատանաց, աղօթից միայն պա» րապէր և վարդապետութեան [2] »:

1. 2 Ղազար Փարպեցի:

# Ը

Հոս պէտք է յիշել Ս. Սահակայ վարուց սըբ-
բազան նրբազան կերպարանքն այլ, աստուա-
ծային համակամութիւնն, կամ նեղքին կենա-
կըցութիւնն ընդ Աստուծոյ. յորում այնքան գե-
րազանց էր քան իր տուրբ նախնիքն անգամ, մին-
չև անաչառ պատմիչն [1] համարձակ վկայէ թէ,
« Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ,
» աղօթիցն մասամբ առաւելեաց: Քանզի առա-
» ջաւ աշակերտս 60, արք կրօնաւորք, խարա-
» զնազգեաւք, երկաթապատք, գոկազնացք, որ
» յարընդ նմա չըչէին. որովք՝ մշանչենաւոր պաշ-
» տամամբ կոփտրէր պիանոնն, որպէս պայն՝ որ յանապատին
» էն. և հոգայր պաշխարհս, որպէս պայն՝ որ յաշխարհի
» էն »: Այս երկու անունեան հարկաւոր հոգերը
բոլոր կենացը մէջ այնպէս միացուցեր էր Ս. Սա-
հակ, որ երկու անձ կարծուէր մի և նոյն կեր-
պարանօք, մէկն յաշխարհի և յարքունիս՝ գըն-
կերս և զազգ հոգալով, միւսն յանապատի և յա-
ռանձնութեան՝ իր հոգին և զԱստուած մտածե-
լով: Այսպէս կ'ընէր կաթուղիկոսութենէն առաջ,
այսպէս կաթողիկոսութեան առեն, և այսպէս
իր կենաց վերջերն այլ. և թէ և հիմա բոլորովին
առանձնանալ փափագէր, այլ « Բազումք կե-
» պիսկոպոսաց և յայլոց պատուական քահա-
» նայից՝ ոչ երբէք ժուժէին առնել և մեկուսա-
» նալ՝ ի միաբուռլիս ալքերկ վարդապետութե-
» արբոյն, ուր ուրեք և դիպէր, ՚ի յոտանի և
» կամ ՚ի հովս [2] »:

Ցետին անգամ՚ի հով եղեր էր յամսեան 439 տարուոյ, երբ յետ մահուն Վռամայ՝ անուր յա-

1 Խորենացի:

2 Ղազար Փարպեցի:

Ջորդ արդւոյն՝ Յազկերտի՝ զօրքն եկան ՚ի Բագաւան, ինչպէս տեսանք ՚ի սկզբան պատմութեան. և ահա այս անժամ ու անպատշաճ չփոթութենէն պէտք էր հեռացընել այն ՚ի մահ և յանմահութիւն հասուն ցեալ հայրապետը, որ արդէն յետին հիւանդութեամբ մօտ էր իջնելու յանկողնէն ՚ի գերեզման: Հայրապետը հաւատարիմ ձեռնասունքն՝ աւելի գրկօք քան պատգարակօք՝ վերուցին ժամանակին հայրապետաց նահապետը, և Լուսաւորչի յետին պայազատը. տարին քանի մը ժամ հեռու՝ Ալաշկերտի Բզնունեաց ըսուած գիւղը. որ տպահով և Յամբէ հեռու տեղ մ'էր, (զոր գժբաղդութեամբ ես շատ վինտռեր և չեմ տեսած): Հոն հիւանդութիւնն ծանրանալով, իմաց տրուեցաւ ծանօթի-



1 Ղազար Փարպեցի:

ցուց անգամ մ՚այլ մտքէն ընդարձակ նկարի մը ակն՝ իննամեայ կենաց զազմակերպ տեսարանները և փոփոխութիւնները, քանէն աւելի թագաւորաց յաջորդութիւնները՝ զոր տեսեր էր երեք տէրութեանց մէջ, Հայոց, Յունաց և Պարսից, որոց շատին հետ տեսութիւն և զրոյց այլ ունեցեր էր. — իր աշխարհին կերպ կերպ և շատը ողբալի դիպուածները, (Տիրանայ կուրութենէն ինչուան Արտաշիսի աքսորը). — ևս առաւել եկեղեցւոյն անցքը, իր մեծ պապուն՝ Յուսկան՝ զրածեծ մահուընէն մինչև՚ի մահ իր անարժան աթոռակցին՝ Շմուէլի. ուսկից փոխելով յիշատակը՝ անցուց առջևէն երկայն տուրը շար մը իր հովուակից հայրապետաց՝ զորս դար և կէս ժամանակ [1] անուցեր և իրեն ծանուցեր էր, և որոց եւսէն ահա կ՚երթար ինքն այլ, յետ շատերէն երկար՝ (կէս դար հովուութեան և բազմաթիւ վաստակոց և վշտաց) առ հովուապետն և վարձահատոյցն ամենեցուն, Քրիստոս. որոյ յանձնելով զազգն և զեկեղեցին, զերախտաւորս և զպերախտս, և ապա իր՚ի մանկութենէ առ նա փափագած և կարօտած հոգին, փոխեցաւ «ի» զաղաւկան հանգատիւ [2] » ՚ի կենաց աշխարհիս՝ ՚ի կեանս արքայութեան երկնից. յետոյն սեպտեմբերի, 439 տարուոյն, յոր հինգշաբաթի, երկրորդ կամ յերրորդ ժամուն « ՚ի պաշտամանն ա» նուշահոտ իւղոյն [3] ». մեծն այն անձն, « Որ

1 Ս. Աթանասի ծննդենէն՝ յամի 296, ցմահ Ս. Սահակայ, 439:

2 Ղազար փարպեցի:

3 Ի՞նչ է այդ անուշահոտ իւղն, որոյ պաշտամանն աւուն վախճանեցաւ Ս. Սահակ, ըստ պատմելոյ կարեան. հաւանօրէն հիւանդաց օծման իւղն. կամ այն իւղն՝ զոր Յովնք ալ պատարագին հացին և գինւոյն հետ կ՚օրհնէին գիշերային ժամէն ետև. իւղը սովորաբար կանթեղաց հա-

» մահկանացու. ծնեալ, անմահ զնա՛ն յիշատակ
» եթող. պատուեաց զպատակերն, պատկառեաց
» ՚ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանն. և
» այսքան կենցաղավարութեաց՝ նոր զի ոչ պակասու-
» թեան ՚ի ծերութենէն եղանիլ, և
» ոչ յախտից առընդունել[1] »:...

Հանգիստ, ով Մեծ, քու սրբանեալ մարմնոյդ յերկրի, և փառք պայծառ հոգւոյդ՝ յերկինս: Բայց ինչ ըսեմք քու հաւատարմացդ, քու անմխիթար որբոցդ, քու կարօտեալ աշակերտացդ, որք յետ երկար ժամանակաց և աշխարհէ աշխարհ պանդխտութենանց՝ կու դիմէին Աղեքսանդրիոյ և՛ Բիւզանդիոյ, Աթենայ և՛ Հռոմայ՝ քու և քու հոգեկցիդ (Մեսրովպայ) ամենընկալ հայրապետրով գրկացդ, յուսալով հարատեւ պարգեւք և առագաստի երգովք դիմաց ելնել, և ուրախ կամ ատեն տարուան մեծաւոր աշխատանաց պտուղն ընծայել: Իսկ հիմա՛, « Ո՞ւր է
» քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս,
» և ահաւորութիւն՝ առ թիւրս. ո՞ր զուարթ
» շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հան-
» դիպումն. ո՞ր խնդալիս սիրոն՝ ընդունող ար-
» բանեկաց. ո՞ր երկայն Ճանապարհաց յոյս հեշ-
» տացուցիչ, աշխատութենանցն հանգուցող: —
» Կորեաւ ժողովրդոյն, Թուեաւնաւատհանգիստն, ե-
» լիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ »:
Ա՛յս իսկաբեր եթէ նախ Խորենացւոյ մը գրչէն լսած ես, Հայկակ, գիտցիր որ կրքերն՝ շատերուն են, իմս այլ են. որ այն ատեն և անկէ ետև եղածներն այլնկատելով, աւելի անորնման « Հա-
» ռաջումն յիս ՚ի նեղքս ընթանայ և արտօսր, և

[1] Խորենացի:

» կամեցուցանէ բարբառել զան տիրական և սգա-
» ւոր », զան Թէ փափագ գայ Ս. Սահակայ վը-
» րայ. « Հրաշափառագունիւ անցանել զանիւ ըստ
» արժանի տուրբ հօրն գրուատից [1] »: Սակայն
դալձեալ նոյն ազնուատիրտ աշակերտին և պատ-
մըչին հետ « այլուստ աեղւոյ և ժամանակի զոյտա-
» սիկ Թուղթուք ». և երթանք մենք այլ հետուէն՝
ընկերելու այն լուրջ յուզարկաւորաց հետ, ո-
րոց աշխարհական պարագլուխն է մեծին Վար-
դանայ կինն, սևազգեալ սիրելւոյն պէս. իսկ ե-
կեղեցականաց՝ Երեմիա երէցն, սարկաւագապետ
Սրբոյն, հանդերձ բազմաԹեամբ աշակերտացն
և խարազնազգեաց միաբանից, քահանայից, ա-
զատ և ամիկ մարդկան աշխարհախուռմբ հանդի-
սի. ոյք լեռնէ լեռ ձորէ ձոր անցնելով, և Սրա-
ծանւոյ հատաչաձայն կարկաջանաց քարավազ
ձամբան բռնելով՝ կ'իջնեն 'ի Տարօն գաւառ, և
կու գադրին անոր հիւսիսակողմը պարսպող լե-
րանց առջեւը՝ սարատափի մը վրայ, ուր է հան-
գուցեալին սեփական կալուածն, և բուն հին զո-
հից աեղն՝ Յոպիլաւ գեղն. հոն այն ատուածծա-
նման հոգւոյն անարատ պահարանը՝ պարկեշտ
մարմինը՝ կ'ամփոփեն պատուական տապանի մէջ.
որոյ վրայ յետոյ կու շինեն այնպիսւոյն արժա-
նաւոր « Եկեղեցի մեծատպայծառ և վկայարան
» սրբոյն, պատուական և մեծագին սպասուք ».

1 Խորենացի: Արդեօք գրեց սա յետոյ հրալեփոտո-
գոյն քան մը, ինչպէս արժանի էր, 'ի պատիւ իր մեծ հայ-
րապետին, յայտնի չէ: Կարծուած է Թէ և Տէրոյ Վա-
նանդեցի քահանայն՝ որ նուիրակ գացած էր 'ի Պարսս
խնդրելու զՍ. Սահակ, գրած ըլլայ անոր վարքը. — ա-
ւելի հաւանական է Թէ խոսքով ընդգմանէն այլ գրած է
անոր վարքը: Սարկաւագ վարդապետ այլ ներբող մը
գրած է 'ի պատիւ նորա: Այս գրուածներէն և ոչ մէկն
հիմայ ծանօթ են:

անոր այլ թոլոմաիքը « հիննացուցեալ կանգնե-
» ցին՝ ի տեղւոջն վանս բազմութեան պաշտօնէից,
» կարգեալ գարմանս անպակաս պտղոց՝ ի հան-
» գիստ առաւելեալ եղբայրութեանն [1] » . ուր
ժողովեցան իր ձգնազգեցիկ աշկերտներէն ոմանք.
ոմանք այլ ուրիշ տեղեր ցրուած վանքեր հաս-
տատեցին : Իսկ հաւատարիմ երախտապէտ սիրե-
լիք սրբոյն՝ Աշոիշատայ եկեղեցին և վանքն այլ
բաւական չափելով, « ժողովս տարևորականս
» աշխարհայորդոց բազմութեամբ հաստատեցին
» ՚ի տեղւոջն. որ ըստ ժամանակի՝ բազմամբոխ
» ժողովրդոք՝ կամաւոր յօժարութեամբ ազատք
» և քահանայք գաւառին, այլ և կարի յոյժ հե-
» ռաւոր տեղեաց դիմեալք յօր կարգադրութեան
» նորա ժողեն. որ և բազում օգնութիւնս առող-
» ջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահին ՚ի
» նշխարաց սրբոյն, և ուրախալից սրտիւ դառ-
» նան [1] » :

Երջանիկ հայրապետս և յայտնի մասին, որ Վար-
դանայ պէս Թոռն ունեցաւ, և Մամիկոնէից նը-
ման բարեպաշտ և տաքսիրտ ազգականները, ոյք
կրցան ուրիշ նախարարաց ապերախտութեան
փոխարէն՝ մեծագործ տուրք յիշատակարան մը,
հոյակապ տաճար մը կանգնել, իրենց նահապե-
տին նշխարաց վրայ. այնքան արժանապէս մեծ
ու փառահեղ էր այս տաճարս, որ երբ լման 200
տարի եաև (639) մոլէնախանձ Հագարացիք առա-
ջին անգամ մտան ՚ի Հայաստան, հատարակ եկե-
ղեցեաց ինայելով՝ ամենէն աչքի զարնողները վը-
լուցին. որոց մէջ ջորս հատն յանուանէ յիշա-
տակի, և առաջինն է սա : Յայտնի է որ յետոյ
դարձեալ չինեցաւ վայելչապէս, բայց զայն այլ
քակեց, կ՚ըսեն, գազանապետն Էնկլթիմուր, և

1 Ղազար Փարպեցի :

10249926



անոր քարերով Արածանւոյ Սուրուխ գիւղին քով կամուրջ կապեց. բայց մինչև հիմա կու տեսնուին աւերակք հին եկեղեցւոյն, նշանք մամիկոնեան մեծապարծուլթեան. որոց մէջ փոքրիկ, պարզ, ու կէս գետնաթաղ չէն մատուռ մը՝ 14 դարէ վեր կու ծածկէ պզէրէպման ձեթին Սահակայ: Անոր դիմաց դրուած է պատշաճապէս՝ իր յետին հոգեկիր և արենակիր շառաւիղին, շուշանափէղ և Շուշան-անուն Թոռնեայն, Վարդենի՝ դուստրն Վարդանայ մեծի: Անոնց ոսկին յիշատակին մինչև ցայսօր յուխտ երթան խոնարհ տեղացիք, կարծեմ թէ և Քուրդք անգամ. փոխանակ այնքան հեռաւոր և մերձաւոր ազգայնոց, որոց պարտ և պատշաճ էր ոչ միայն նորէն կանգնել վայելուչ եկեղեցին, այլ եթէ աւելի առատութիւն և ազատամտութիւն ցանեցընէին, բլուրջափ քուրդ մ՚այլ բարձրացընել ՚ի յիշատակ անոնման հայրապետին մերոյ և ամենայն հայրապետաց արժանաւոր օրինակին. փափագելի էր այն քրգան չորս երեսաց վրայ կուռել գրել իրանշան քանդակներով՝ իր վարուց չորս պքանչելի կերպարանքը. առաջնոյն վրայ գրել ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՑՑ, դրուագելով երկու անգամ իր ազգին Թագաւոր կանգնելը, և երկու անգամ անոր ազնուականութեան գահնամակը նորոգելը. մէկ մը՝ Պարսից գուռը, մէկ մը նախարարաց ժողովին մէջ իրաւաբանելն, և այլն. — երկրորդ երեսին վրայ գրել ՈՒՈՈՒՄՆԱՏՈՒՐ ԲԱՆԱՐԷՐ, և շարել իր շարականները, Թարգմանութիւնները, նախադասելով աստուածաշունչը, Ս. Մեսրովպայ ձեռք սալը, դպրոցաց բացումը ընդ բոլոր Հայաստան, Վրաստան, Աղուանատան, և Թարգմանչաց առաքումը Աւորիս, Յեգիպտոս, ՚ի Յունաստան և Իտալիա. — երրորդին վրայ գրել ԵԿԵՂԵՑԱՋԱՐԴ ՀԱՑՐԱՊԵՏ, և դրուագել իր գու-

մարած ժոդովքները, դրած կանոնները, գրած և հաստատած եկեղեցական գրքերը, Հայրապետական հետ թղթակցութիւնը, հերձուածները հալածելը. – յորմէդին վերջ դրեր ԵՐԿՆԱԿԵՆՑԱՂ ՍՐԲԱՍՈՒՆ, նշանակելով իր նուիրական, ճգնազգեցիկ կեանքը և կենաց յետին ժամը: Իսկ քահանայութեան երգման ծայրն ալ քիչ մը տաշելով տրնկել 'ի գագաթը երկնասլաց սպիտակ սրտաձև սափոր մը ոսկի բոցով և ոսկի գծով նշանուած, զոր փափաքէի Հայկակ, որ՝ թէ ոչ այնքան մեծ, գոնէ այնքան փայլուն ըլլար՝ մինչև ուր որ ըլլայինք՝ կարենայինք տեսնել զայն և կարդալ հոն ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ:

10249926

# ԺԱԴ

## ՀՈԳԷՓԱՅԼ ՍԱՅԼՔՔ ՀԱՅՈՑ

## ԱՐԻՍՏԱԿԷՍ

30 Նոյեմբերի.

### Ա.

Փչեց նշաւ պահրցին ձիւնապատակ սարսռէն. արջառ ոչխար Թողլով գալար արօտները՝ գոնափակ գոմերու մէջ խուճած մնային, հինգամեայ ձմեռան ձանձրոյթը սկսելով: Զբօսասէրք և քնասէրք այլ փուճան՝ ի չէն՝ ի քաղաք. վասն զի նոյեմբեր էր խոնաւ ոտքերուն կոխեց գծառ ու գծաղիկ. տերևներն խարտեաշ Թօթափեցան, պտղատու պարտէզն չոր ձողերով ցցուած պատնէշ մը գարձաւ, կամ մրրկէ փախած մերկ անառագաստ նաւախուռմբ. պաղուկ պահրցի մ՝այլ, պաղուկ հով մ՝այլ, ու ահա կու մեռնի կ՝անցնի գալարուԹիւն մը կլլմայից. ահա ձերմակ պատանքն այլ կու սկսին տեղ տեղ փռուիլ. ձիւնն լեռներուն գագաԹէն վար կ՝իջնէ, կու սկսի լեռան գալ գաշտայց. քիչ առեն զամենքը կու ծածկէ և միայն ինքն կ՝երևի:... Վնցաւ այս առաւան բնական կամ բուսաբանական հանգէան և կեանքն այլ. գոցինք գեղանահայեաց պատուհան.

նկա, բանանք վերնապետական պատուհանները, զոր բանալ զմայլիլ երկնից հովտին լուսածոլ ծաղկըներովը, զոր տարբոյն բուսարձակ յեղանակաց կայտառութիւնն՝ շատ հեզ արհամարհել կամ անտես ընել կու տար մեզի: Նայէ, Հայկակ, գլխէդ՝ ի վեր. պարզ է գիշերս, տես աստղալից երկինքը. եկ դառնանք հոն, հոն է մեր ձմեռնային տեսարանն: Գառ, ծաղիկ, պտուղ, խաղող, աշխոյժ, թեթև մտածութիւն, զուարթ երկրաւոր կեանք մը կ'ազդեն. իսկ երկնից աստեղապարդ ելոյթն՝ սխոլժ ծերութիւն, ծանրութիւն մը, խոր մտածութիւն և անմահութիւն մը: Ո՛հ, որքան պիտի ընդարձակէր և բարձրանար մտքերնիս, եթէ կարենայինք՝ ինչպէս անկաբանք բոյսերը՝ այսպէս այլ այդ երկնահովտին ամեն մէկ լուսաստերմ ծնունդները ճանչնալ, իւրաքանչիւրին կազմուածքը և իւրայմէ տարբերութիւնը, իրենց ճառագայթն և նպատակը, և «զամենեսին վնասս յանուանէ կոչել»:... Թերևս օր մը պտուտին և յայտմ մասին մեզմէ աւելի բազդաւորք, և երկինք՝ պատմէ անոնց մեզմէ պահած Աստուծոյ գործքերը, և Հաստատութեան ներդաշնակաւոր ձայնն՝ լուսոյ հետ դարէ դար վար իջնելով՝ աւելի մօտ հասնի մեր ուղեղոյ և թոռանց: Իսկ մեք քանի որ մեր խոնարհ վիճակին և գիտութեան չափով իջերև անապատակեաց թափառիկք կիսագլոր սայլերով կու դեգերինք, գաւեհիօրէն մեր շարժուն բնակութեան անուամբ՝ երկնից ամենէն նշանաւոր համաստեղութիւնն այլ կ'անուանենք Սայլ. զոր աստեղաբաշխք այլ՝ ոչ աւելի ազնիւ կոչմամբ անուանեն Արջ. և ինչպէս որ քեզ ծանօթ է՝ ոչ մէկ, այլ երկու Սայլ և երկու Արջ համաստեղութիւն նշմարեն, Մէջ և Փոքր: Ահաւադիկ առասլինն՝ բևեռէն բաժնուած երեան այն-

գին գարձուցեր է. երկրորդին ծայրն նոյն իսկ բևեռին մէջն է իրեր. այսինքն իր եօթն աստեղացն առաջինն՝ որ է քեղբոյն ծայրն՝ ինքնին բևեռային աստղն է: Մեր նախնիք այլ ըստ հնագոյն և նոր ազգաց՝ զաստղս Սայլ կամ Սայլաթափք կ'անուանեն. բայց ինչպէս որ նոյն հին ազգեր ուրիշ անուններ այլ կու տային այդ համաստեղութեան, նախնի Հայք այլ կոչէին Բաղմոյն, Անասուն, Վէրկն (Թերևս վէրցն որոշագոյն առանելով՝ եօթնեւրորդը նուազագոյն), Բաղմաոտէրպ, Գոպար, և այլն: Եւ ինչպէս ամեն ազգ մէկմէկ ազգային աւանդութեամբք կամ կարծեօք, այսպէս մերն այլ այդպիսեօք անուաներ է զայդ և ուրիշ աստեղաց բոյլքը, որպէս Հային, Վահագն, Յորդգող կամ Մէրածան կամ Հէրմանոյ: Եթէ ազգային հին դպրութիւնն և վիպասանութիւնք յայտնուէին՝ այս երկնից աստղային դպրութիւնն այլ հայ գրերով և անուններով պիտի կարդայինք. կամ թէ տուրբ ազգային ոգին կանգնէր ուրացաբար և գիտնաբար և հրամմէր, անշուշտ դարձ հայկական դիւցային կամ արբազան անուամբք պիտի ձանաչուէին. հին հայկական պայազատութիւնն՝ իր քաջազունքը, դպրութիւնն՝ իր իմաստասէրքը, և եկեղեցին՝ իր տուրբերը պիտի յիշէր և անուաններ՝ զանունք տեանելով:... Մենք հիմա չատանանք այդ երկնագնաց գուսպարեաց Սայլին եօթնաստեղեան կազմուածքին նայելով զուգել անոր այսօրուան Հայադիր յիշատակին, որ է Ուրսայ Մեծ Թռոանց Լուսաւորչին [1]. և առանց հեղինակութիւն բանեցընելու, կամ օրէնք հրամմելու՝ դիտեմք այսօր եօթն աստեղաց մէջ կամ հետ՝ գՈրսայ՝ ի ծայր քեղբոյն, և վարը իր ուղիքն

1 Տօնացոյցք ամանք նոյեմբերի մէկին և ամանք այլ դեկտեմբերի մէկին դնեն այս տօնս:

Աթխոփակէս և Վրնանէս, և ջրրս անիւնեերը՝ Գրէգո-
րէս, ալօտագոյնը, իբրև հեռու աշխարհի (Ալօտա-
նից) հիւր ղրկուած, և Յոսէի իր եղբայրն, Նէր-
սէս՝ Թոան Յուսկան, և վերջին անիւ հիւսիսային
բևեռին ալղատիգ նայող՝ Սահակ որդի Ներսիսի:
Եւ Թէ դու արաւես ըլլալով, Հայկակ, սիրես
Փոքր Սայլին վերածել այս ցանկալի անուններս՝
որ մեր սոյգ երկնագնաց եկեղեցւոյն հոգեկիր
կառքն են, անոր ծայրի սասին՝ որ է հիւսիսային
բևեռն երկնից՝ կ'ըլլայ մեծն Գրիգոր, մեկայլքն
այլ մի ըսա միտքէ:

Մեր արքազան Հայապէրն՝ Գրիգորի, Ներսի-
սի, և Սահակայ մանաւանդ ոսկեայ շրջատա-
կաց օրեր նաւիրելով՝ այս օր մնացեալ ջրից յի-
շատակը կարգէ. անոնցմէ այլ վերջնոյն, (Գրի-
գորիսի) սուրբ նշխարաց գիւտին պատճառաւ
ըստ օր մը նաւիրէ. որով օրս սեփական կու
մնայ երից, Աւխատակիսի, Վրթանիսի և Յուս-
կան, և ատոր մահուան ընկերակցի մը, Դանիե-
լի ծերոյ. որք՝ ի հարկէ այլ և այլ օր կատա-
րեցին իրենց երկրաւոր կենաց յաղթական ընթա-
նը, այլ որ և է մոռացութեամբ կամ խորհրդով՝
ջոլորն միասին մէկ օրուան հատու մեզի: Ասոնց
համար երգէ քաջ գանձասացն Մովսէս. «Մշտա-
» պայծառ լուսոյն աշտանակք գովելիք և քար-
» ձրատեսլուն, քահանայապետք պահապետք,
» շուտաւետեալք՝ ի հօրէն լուսոյ, ճշմարտութե
» ճշմարիտ քարոզք և պարծանք պարծանաց մե-
» ծոյս գրոհի. սիւնք տաճարի տեառն բարձրաբերձ
» գոլով և հաստահեղոյս. սուրբ Աւխատակէս,
» վեհդ Վրթանէս, քաջափառ Յուսիկ և համբակ
» Գրիգորիս, հանդերձ արքայանեալդ Դանիելիս
» այլասեռիս և համափառիս, անմարմնաբար՝ ի
» մարմնի կառուցեալք՝ որպէս հրանիւթք և ի-
» մանալիք: Այսօր ժողովեալ մանկունք Սիոնի

» ասնեն ցնծութեամբ զօր յիշատակի Հերոյ Հան-
» դիսի: Ահա բուրեցի այս երգ առաջի քո, ա-
» ռենասուրբ Երրորդութիւն »:

Այս աքանչելի եօթնաստեղեան հայրապետաց գուսպարքն՝ մեր եկեղեցւոյ ամենէն նշանակեալ եւ բեւեռեալ մէկն է, քաղաքական պատմութեան մէջ այլ ոչ աննշան, որովհետեւ ազգին հին հեթանոսական օրինաք՝ քահանայապետքն Թագաւորի պէս մեծափառ գլուխ մ'էին. Թագաւորաց յաջորդութեան մէջ եղած պարապ ժամանակին այլ՝ Թագաւորահօր կամ խնամակալի տեղ մը կու բռնէին: Ասոնց լուսափայլութիւնն մեր եկեղեցւոյն հորիզոնին եւ գահնեն վրայ երբեւ դար ու կէս քշած է. այն վեմ, բեւեռեալ եւ բազմայեղանակ դարուկէն (Որն եւ Ելին կէսն) որ քրիստոնէութեան փառաւորագոյն յեղանակն է, իր գերագոյն վարդապետաց եւ հզօրագոյն եւ ընտիր Թագաւորաց փայլմամբ. Թագաւորաց նկատմամբ՝ այս յեղանակիս մեր պատմութիւնն շատ անփառունակ է, բայց մէկ Տրդատ Թագաւոր մը կ'ընծայէ՝ որ կիներ Յունաց Կոստանդիանոսի եւ Թէոդոսի հետ նախապատուութեամբ մրցիլ (եթէ օրինաւոր է այսպիսի մրցումն). իսկ հայրապետաց նկատմամբ՝ մեր հայկական եօթնեռեակն էլ նուազիր Յոյն եւ Լատին ժամանակակից պանծալի հարց քով, թէ ոչ գրականութեամբ, այլ հոգեւոր եւ ազգանուէր երկամբք, որ առաջին պարտք է հայրապետին: Մեր եկեղեցաշարժ Սահակ եւ Մեսրոպ՝ ծանօթք են գրաւոր վաստակով այլ միւոց առաջ ինչ յիշատակ կայ, այլ գրամբք եւ արեամբ մի քան զմի գերագոյնք, եւ առաքինական գործովք զանազանեալք.

10249926



## Բ

Երեք հայրապետաց (որոց մանուածոր յիշատակն տրուած է այսօր), զառաջինն միայն հետաքննեալք այս գիշեր, որ և՛ ի կարգի հոգեփայլ Սայլին անմիջապէս յետ Լուսաւորչին գայ, այսինքն է ԱՐԻՍՏԱԿԷՍ կամ ՌՍՏԱԿԷՍ, երկրորդ որդի Գրիգորի՝ տարօք, բայց աստիճանաւ յառաջացեալ քան զանդրանիկն Վրթանէս. որովհետև սա ամուսնացեալ էր, ինքն կուսակրօն, և վասն այնորիկ ընտրեցաւ՛ի հօրէն յաջորդ իւր: Եօթանց մէջ սա և Գրիգորիս միայն կուսակենցաղ եղան, հրեշտակային միայնութիւն սիրելով, քան Լուսաւորչի ցեղը աճեցընել, որոյ համար այլք յանձն առին՛ի սկզբան ազամային լծակցութիւնը: Մինչդեռ Վրթանէս հօրը նման պատանութեան առեն աշխարհ մտաւ՛ի Կեսարիա, Արիստակէս գրեթէ ծննդեան առենէն յաշխարհէ զատելով անապատաբար ապարակի նման միշտ միայնութիւն և առանձնութիւն սիրեց. երկու որդւոց ըստ աշխարհի հայր ըլլալն քաւական սեպելով մեծն Գրիգոր, ընդհանուր Հայ ազգին հայրութեան նուիրեց զինքը, երկայն և վերջին բարև մը տալով իր պարկեշտ լծակցին՝ Մարիամայ, որ իր սիրոյ վերջին խայրնքը գեռ ծոցին վրայ կրելով՝ երկանը հետ բոլոր աշխարհիս այլ ամէնք բարով ըսաւ, քաշուեցաւ հաւատաւոր կանանց վանք մը, և հոն անուց իր երեխային, ինչուան որ հասաւ տարիքն՝ մարց և կուսանաց պրկէն ելնելու և ձգնազգեաց հարանց որդեգրելու: Հօրմէն զատուած առեն, անզգայ անծանօթ անձիկ մ՚էր Արիստակէս. իսկ մօրմէն բաժնուելու առեն՝ այնքան լաւ և խոր գիտէր մայրական սէրը, ուրչան որ ուրիշ սէր մը չէր գիտեր. բայց

*դարձեալ ՚ի նոյն առաքինի և մեծասիրտ մօրմէն սովրեալով հանդերձեալ կենաց գերագոյն սէրը և վարձքը, և անոր օրինակաւ և խրատուէն յորդորուած՝ պզտիկ հասակէն և ուժովէն, ըրաւ այն մեծ անցքը՝ իբրև նոր Սամուէլ մը Աննայի ձեռաք. և յանձնեցաւ Նիկոմաքոս անուամբ ղպօն Ցոյն կրօնաւորի մը, որ շատ տարի քովը պահեցավ եղաւ անոր հոգւոյ հայր. և երբ քրիստոսասնուէր կենաց ամենայն հնարքը սովրեցուց և բաւական տեսաւ իր հոգեստուն աշակերտը՝ ցուցուց անոր խորագոյն միայնութիւնե և անապատին մուտքը: Առհասարակ երկրորդ անգամ մ՚այլ բաժնուելով ՚ի մէկ հասիկ ծանօթ և հոգեկից անձէն, և Թեկլա առաջինէն զօրաւոր՝ եթէ ոչ նոյն պէս կակուղ ցաւով մը, Թողուց զինքն երեն, և Թաղեցաւ առանձնութեան մէջ, միայնակեաց ասուածախոհ ճգնաւոր մ՚ըլլալով. այսինքն մինակ տարօր աղօթիւք և ընթերցմամբ և քիչ մը ձեռաւոր աշխատանօք. բոլոր կեանքը մշտավառ կանթեղի մը պէս Աստուծոյ դիմաց կախուելով, պիշեր ու ցորեկ:*

*Թեկլա աւելի քան քսան երկայն տարիներ անցան այն լռութեան և միայնութեան մէջ՝ մէկ օրուան մէկ դիշերուան պէս, երբ առաւօտ մը իր մառացեալ խրճիթին դուռն ուժով զարնուեցաւ. և երեցան բազմութիւն անծանօթ և օտարադէմ մարդկան, ոսկեփայլ արծաթազգեստ զինուորք, ցցունազարդ սաղաւարտաւորք, դեանագլուխ հեծեալք. որք չէ միայն քսան, այլ քառասուն կիսուն տարուան բաներու երազներ պատմեցին. գոնէ երեն երազ երեցան այն տարիներուն մէջ հանդիպածնեերն դուրսը, իր հօրը, Հայոց ազգին և անոնց Թագաւորին. որք հիմա երեն հրաւիրակ խաւրելով ազգին աղնուագոյն իշխաններըը՝ կու հրաւիրէին, կու սպասէին կու քաշէին որ երթ*

պայ՝ի Հայաստան, ՝ի վաղարշապատ, յարքու-
նիս հանդէպ Թագաւորին և՝ ի գահ քահանայապե-
տութեան Հայոց: — Որչափ այլ նորատեսիլ էր
այս երազս և դժուարին անկէ արթննալ, սակայն
դժուարին եղաւ Աւետաւիքին, մանաւանդ թէ
անկարելի՝ իր միայնութեան տեսիլները շարու-
նակել. աշխարհախառն խժլտուք մը ալիքներու
պէս խուժելով՝ զարկաւ քշեց իր պարկեշտ շե-
միկը, և հեղեղեց իր ամօթխած իցիկը. շփոթե-
ցաւ անզգաստութիւնն, փախաւ բազմամեայ խլա-
ցեալ լռութիւնն. Աւետաւիքս երբեւ չորս դին
ջուր առած՝ հազիւ քարի մը վրայ տանիւռիւ ե-
ղած շուարը մնաց:... Սակայն քան զլուած բաներն,
և սակայն քան անտես հոր մը (թէ և այնպիսի
արժանաւոր աննման հօր մը՝) անփորձ սէրն,
քաղցր և ցանկալի էր իրեն իր միայնութիւնն, որ
էր իր բոլոր սուացուածքն, իր տէրութիւնն, իր
սէրն. և եթէ Աստուծոյ և հօր մը կամաց հնա-
զանդութեան պարտքը չճանչնար, ու կեսարիոյ
եկեղեցւոյ գլխաւորներէն չյորդորուէր, չէր կըր-
նար թողուլ իր խշտեակը և երթալ Հայոց նորա-
հաստատ քահանայութեան գահապետուխ ըլլալ:
Սրբազան հարկին գլուխ ծռեց Աւետաւիքս, ոչ
առանց կծու արտասուքներով բաժնուելու այն
տեղէն՝ որ միայն զինքը կու ճանչնար, և զոր միայն
կու ճանչնար ինքն. և այն քանի մը արտակից հո-
գեկից անձինքներէն՝ զոր իր սրբութիւնն ժողովեր
և աշակերտեր էր իր ճգնարանին մօտ:...

Շուտով աներևոյթ եղաւ իրեն ծանօթ սիրելի
սահմանն. շատ չափաւոր համառօտ էր իր հոր-
զոնականն. կարճ ժամ մը չանցած՝ նոր հորիզոն և
նոր աշխարհ մը բացուեցաւ դիմացը, որ անծայր
անվերջանալի կու թուէր՝ որչափ որ յառաջ եր-
թար: Բայց իրեն առաջնին տեսիլք և ցուցանիք ե-
ղան զինքը տանող բազմութիւնն, Հայոց արքու-

նի գնդին հակայակերպ կուրիձներն՝ անձառնի ճօճմունքներով, ահագին զրահներով, երկայն տէգերով և լայնալիճ վահաններովն, որոց մէջ որդոյն երդնեցի բանուած վայրի եղնորթի մը պէս վախնալով կ'երթար. ապանց իսօսելու կուներէր կուն նկատէր անոնց շատ արևէ շատ արիւնէ անցած խանդրած երեսները, հին ու նոր սպեաց նշաններ, առիւծաձև ցցուած և տարածուած մազեր. — կու տեսնէր անոնց մէջ ամենէն պատուելի և նախիշխան եղած ծերունի մը, որուն գմբեթաձև գլուխն թէ և բոլորովին ալևորած էր, թէ և երկայն տարաձև յօնքերն խառնուէին խորացած աչաց թարթիչներուն հետ, թէ և կուրիճ թուանեղ պատ կ'երևէր զնա հասակն, բայց դեռ զէնքով ու զրահով ծածկած, իր ամենէն կայտառ զինակրին հաւասար շուտ կու շարժէր, կ'ելներ կ'իջներ ձիէն, ու ձայնը փողի պէս գնդին մէջ կու տարածէր. և էր Աւրպատ մանդակունի սպարապետն Հայոց, և դաստիարակ Թագաւորին Տրդատայ, զոր՝ յառաջ քան զչիսուն տարի՝ փախուցեր ազատեր էր Առիատակիսի պատուն ընկերաց ձեռքէն. և այսօր անոր Թոռը՝ զինքն Առիատակէս՝ կու տանէր իր վեհափայլ տանուն (Տրդատայ) մտերիմ ընելու: Երկրորդ պատուելի անձն կ'երևէր գնդին մէջ բաւական տարօրէն կերտուածք մը, Տաճատ՝ Աշոց գաւառին տէրն, որ և փեսայ էր Արտաւազդայ և երբեմն ձանչցուլ և մատնող Գրիգորի՝ իբրև որդւոյ Անակայ՝ սպանչի հօր Թագաւորին, և յետոյ նոյնպէս իմաց տուող Տրդատայ որ Գրիգոր երկու որդիք ունի, արժանաւորք պատուելոյ. անոր համար այլ զրկուեցաւ զանոնք գտնելու տանելու, և այսպէս փոխարինելու իր մատնութեանը, որով Հռաւաւորիչ տան և երեք տարի յօճուտ վերապին Արտաշատայ մնացաւ: Բոլոր գնդին յառաջադէմ

և վարել կ՚ընթանայր եռանդուն երիտասարդ մը, երեն յարմար կրակոտ երեվարի մը վրայ Թուչելով, Գոփ՝ կարապետեան Տրդատոյ. որ ամենևին Անահատակիսի կամակատուԹեանը և սրտով և աչօք յետ դառնալուն չնայելով փողէր փչէր քշէր երԹար, և ալքօնի գունդը յանապատէն փոխադրէր ՚ի Կեսարիա մայրաքաղաք Փ. Հայոց, ուր առաջուց գտեր և պատրաստեր էին զՆՀԼը. Թանէս երէց եղբայր Անհատակիսի. ալք և զարմանօք և երկինք նայելով՝ եղածները մեկմեկու զրուցելով և իրարու գլուխ տալով, անկէ եռև կամայ ակամայ ձամբայ ընկան փութալ դէպ ՚ի Մեծ Հայք:...

## Գ

Հանինք մենք այլ հոն մեր պատմուԹեան ձամբան կարճեցընելով: Ահա համբաւը լսելով Թագաւորն ինքնին ընդ առաջ կու գայ երբև երեն եղբօրորդւոց և որդւոց Լուսաւորչի, կ՚ուզէ անձամբ տանիլ զանոնք երեից հօրը: Իսկ հայրն նոյա և մեր՝ որ կամակից էր Թագաւորին իր որդիք կանչելու ՚ի Հայս, ոչ աշխարհական փառաց և մարմնաւոր միխԹարուԹեան համար էր, այլ իր հոգևոր բեռը վերցընելու օգնական և փոխանորդ ունենալու համար, զոր չէր կրնար այնպէս համարձակուԹեամբ յանձնելու ուրիշի՝ ինչպէս իր որդւոց. միանգամայն և երկայն չարաչլուԹեամբ և յոգնուԹեամբ մաշած՝ կարծէր Թէ շուտով երեն կենաց վախճանն պիտի հասնի, և փափագէր վերջին տարիները միայն իր հոգին մտածելով պատրաստուիլ՚ի հանդերձեալ կեանս. դարձեալ՝ անդադար գովուԹիւն և օրհնուԹիւն և պատիւ լսելն՝ ուր որ երԹար, իբրև գերմարդկային անձ մը երևելով, երեն ծանր կու գար և

Ի՛ուզէր փախչիլ ի մարդկանէ և թաքչիլ յԱստուած: Այս մոածութեամբս էր որ հիմա այլ որդւոց գալուն առեն՝ ինքն չէր երևեր, այլ յեղեկեցաց գաւառն էր, ուր այնչափ չարչարանք կրեր էր, և իբրև Թափած արեանը գին՝ Տրդատ անոր առեր էր այն գաւառին մեծ մասը, լեռներով դաշտերով և ջինքերով, մինչև Լուսաւորչի գալուն ատենն: Այս գաւառին և Դարանաղեաց սահմանամէջ է Անպահ արտատաւ լեռն, բայնատարած կողերով, ակրերով, քիչ տեղ դուր շատ տեղ դժար, անտառոտ մացառոտ տափերով. այս գժուարտակոխ և ահարկու տեղուանքը՝ ուր դազիւ հովիւներն կրնային ելնել կրեներց հօտից եաւէն, մեկ զարմանալի տղկիկ մը կրցեր էր արհաւատ ելնել, և երկայն տարիներ տղկիկ քարայրն մը մէջ մինակ տարել վայրենի որոջի մը պես. իրմէ զարմանալի և գեղեցիկ տղկան մը (Հռիփսիմեայ) ընկեր էր սա, մենատէրն Մանր. վոր յետ շատ տարիներու գտուս այն խորչերուն մէջ Լուսաւորիչ աչքն. և երբ ժամանակն լցուաս, տմիտքեց անոր տարկեշտ մարմինը իր հովուական վերարկուաւն, և Թաղելով անոր նեղքատոյն մեռնարանին մէջ, անկէ եաւ ուզեց ինքն ժառանգել զայն աեղը, և իրեն մեռնարան և տղօթարան ընտրել: Ահա այս կողմերս էր երբ լսեց Տրդատայ Ձայնը, որոյ Ձայնին միայն պատասխան կուտար և ի՛ենկեր իր Ճգնարանէն. և առեծն և գառն համամիտ և համաեր մեկտեղ կենակցէին:

Այս անգամ Թագաւորին հետ տեսաւ իր առաջին կենաց ժառանգքը և կենդանի յիշատակքը, իր արիւնը, իր որդիքը. որոնց երկրպագութեան վայ Թեկուա քիչ մը Ճանչնար հին նմանութիւն, իսկ կըսաերոյն՝ Աւետիսի վայ՝ գուցէ ուրիշ նմանութիւն չէր գաներ, բայց եթէ Թեթև ամպոյ մը պէս հեռացեալ սահեցեալ անձի մը՝ որ երբեմն

10249926



իրեն կենաց կցորդ, և անոնց մայր եղած էր. (ե-
թէ գեռ այսպիսի մտածութիւն կրնար այն աս-
տուածախոհ անձին միտքն այլազարնել հեռուանց):
Սակայն եթէ արտաքին նմանութիւն և ծանո-
թութիւն գժուար և աննշմար էին Գրիգորի և
Առիստակիսի մէջ, հոգեխառն նմանութիւնք զար-
մանալի կերպով կ'երևէին. — երկուքն այլ ան-
մարմնոց նման, մէկն Հգնաւորի հայր, միւսն Հգ-
նաւորի որդի, երկուքն այլ Հգնողք: Քառասուն
տարեկանի մօտ էր Առիստակէս՝ երբ առաջին ան-
գամ Հանդիպաւ իր հայրը զՍ. Գրիգ. Լուսաւորիչ
Հայոց. ինչ զգացմունք մաքուր սրտին՝ առաջին
անգամ հանդիպման մաքուր և վեհ սրտի մը և գըր-
կաց վրայ բաբախած առեն.... Տեսեր ես, Հայ-
կակ, Համբան փոխել տուած գետ մը. իր յա-
տակին պէս Հեռագործ յատակ մը կու փորեն
երկայն տարիներ աշխատելով, որուն ծայրն հո-
սանքով կամ կապանքով մը միայն զատուած
է՝ի գետէն. երբոր վերչապէս կու փորուի կու
լմընայ նոր Համբան, այն կապանքը կու քակեն
կամ այն հոսանքումբը կու փլցընեն. և ահա յան-
կարծ գետն իր հին ծոցը Հոսելով այս նոր բա-
ցուածին մէջ՝ ապահիկ լեռներու պէս Հաւասա-
րով կու Հափուի, և երկայն տարիներով փորած
յամրաք ծոցը՝ վայրկեաններու միջոց կու լեցուի կու
ծածկուի անծանօթ հոսանքներով: Այսպէս հոր-
գեց՝ի սրտէ Գրիգորի հոգեխառն ակն՝ի սիրտ
և՝ի հոգի Առիստակիսի, ոչ այնքան բնական, որ-
քան գերաբնիկ ներգործութեամբ մը: Անշուշտ
հոգին սրտին զարկեր և բան մը ազդեր էր Գրի-
գորի, զոր Թերևս լաւ չէր իմացած այն առեն,
երբ մօրը գիրկը Հգելով զԱռիստակէս երախայ՝
հեռացաւ անոնցմէ և այսօր երկրորդ զարնուածք
սրտին իմացուց յայտնապէս, եթէ սա է իր հո-
գւոյ պայազատն, իր յաջորդ հայրապետն Հայոց:

Արդէն իրեն սեղակալ և ընդհանուր հոգաբար-ձու եկեղեցեաց և վանորէից դրեր էր Դանիէլ անուամբ եպիսկոպոս մը, (որ և երկարակեաց ըլլալով՝ նոյն պաշտօնը վարեց Առիսատակիսի, Վրթանէսի և Յուսկան օրերն այլ, և եռքինիս մահուընէն եաև՝ անոր պէս ինքն այլ նահատակեցաւ, վասն այնորիկ և այսօր Լուսաւորչէն որդւոց և Թուանց հետ հաւասարապատիւ կուսուն). անկէ զատ ձեռնադրած հարիւրաւոր եպիսկոպոսաց գլուխ և նախադաս կարգեր էր զԱբեղեհանոս Հալըքայ եպիսկոպոսն, որ քրմապետի մը որդի էր. իսկ հիմա զԱռիսատակէս՝ի ընդդէմ Թագաւորին Տրդատայ և մեծամեծաց և եպիսկոպոսաց՝ անուանեց իրեն երեսփոխան և յաջորդ, եպիսկոպոսական աստիճան տալով անոր. ինքն այլ անոր վիճակը իրեն առաւ, այսինքն առանձնուԹիւնն, առաջինէն աւելի հեռանալով յաշխարհէ և լեռնակեցիկ ձգնելով, միայն առեն առեն ինջնելով և որդւոյն հետ միաբան ձգելով հոգևոր արտրը Հայաստանի ընդարձակ եկեղեցական ագարակին մէջ:

## Դ

Ցետ քանի մը տարի այսպէս քաղաքավարելու՝ Տրդատ ուզեց սեսուԹեան երԹալ Կոստանդիանոս կայսեր իր մեծամեծ նախարարներուն, երբ նա՝ի Քրիստոս հաւատալով՝ ազատուԹիւն հրատարակեց եկեղեցւոյ, Գրիգոր այլ ինքս իր ձրդնարանէն՝ մեկաեղ երԹալու շնորհաւորելու եկեղեցւոյ գլխոյն՝ եղած յաջողուԹիւնը, և հետն առաւ իր եկեղեցւոյ գլխաւորները զԱռիսատակէս և զԱրքիանոս՝ հանդերձ այլովք: Եւ երբ յետ իբր տասն տարւոյ Կոստանդիանոս հրաւէր խաբէից առ Տրդատ՝ նոյնն զԳրիգոր առնուլ և գալ՝ի Նի-

կիա քաղաք, ուր եկեղեցւոյ գլխաւոր եպիսկոպոսանիստն 300էն աւելի պիտի ժողովէին՝ի քննութիւն և՝ի դատապարտութիւն Արիոսի վարդապետութեան, Տրդատ աշխարհին քաղաքական վիճակին համար, Գրիգոր այլ խոնարհութեամբ պատուէ փախչելով, յանձն չառին երթալ. այլ երեց կոչմանէ խաբեցին զԱռիստակէս, ընկերութեամբ ուրուշ քանի մի եպիսկոպոսաց Մեծ և Փոքր Հայոց, որոց անուանքն նշանակին՝ի կանոնական գիրս ժողովոց եկեղեցւոյ: Առիստակէս երթալու առեն հանդիպեցաւ՝ի Կեսարիա՝ ընկերակցելու Ս. Գևոնդեայ հայրապետին՝ որ իր հայրը ձեռնադրեր էր, և նոյն օրը եկեղեցւոյ մէջ կու մկրտէր իր հօրն անուանակիցը զՍ. Գրիգոր՝ հայր Գրիգոր Սատուածածանի, (իրեն նման մենաստր հայրապետի, որ և նոյնպէս իր հօրը օգնական և յաջորդ եղաւ Նազիանզու եկեղեցւոյն մէջ). այս հանդիպին ներկայ և ձամբուն ուղեկից եղան Ս. Յակոբ Մծբնայ հայրապետն, Եւթալ Եդեսիոյ հայրապետն և Յովհան Պարսից հայրապետ, և այլք:

Անցնելով ընդ Կապադովկիա, Գաղատիա, և Բիւթանիա՝ հասան այս մեծ և փառաւոր եպիսկոպոսաց կարասանս՝ յառաջին ժողովարանն եպիսկոպոսաց, ի հաստատութիւն հաւատոյ, ի Նիկիա քաղաք. որ և առաջուց հոն ժողոված պատուական առաջնորդներուն և ժողովրդոք ընդառաջ ելան արևելից վեհապետն հայրապետաց, որոց նմանք չերևեցան երբէք ժողովոց մէջ: Այս հայրապետաց մէջ, առանց կոչնաւորութեան և վիճման, Հայոց հայրապետն էր ամենէն հեռաքննելին և փափաքելին. քանի և էրս առիթ վեր յարևելք և յարևմուտք հռչակուած էր Գրիգորի Լուսաւորչի անունն, իսոստովանողական նահատակութեամն, բազմաւոր վիրապ-ընկերու-

Թիւնն, Հայոց հսկայ Թագաւորը և բոլոր ժողովուրդը՝ ի Քրիստոս հաւատացնելն, և հարիւրաւոր եպիսկոպոսաց պահպանել զլսելն. և գեռ չառեր զգիանալով անոր խոնարհաբար հրաժարելն՝ կարծէին Թէ պիտի տեսանեն զնա Կեսարիոյ հայրապետին աջակից. այլ խաբուեցան. ապնը. ահիոհքն՝ վխնթարուեցան անոր տեղ հայրապետման արժանաւոր որպին տեսնելով. նաև այլ խոհք (եթէ սոյգ է աւանդութիւնն) տհաճելով և արհամարհելով: Վասն զի կ'ըսէ աւանդութիւնն, Թէ Ս. Գրիգոր մեծահասակ և վայելչակերպ էր, նաև Աւխատակէս՝ փոքրահասակ և վատուժ, ոյսպութենէ վեր անդադար ճգնութեամբն, «Մենաւորութեան լեռնակեցութէ, » քաղցի, ծարաւոյ և բանջարաճաշակ կենաց, և » արգելանոց անլուսիկ, խարտնապգեստ և գետ» նատարած անկողնոց և բազում անգամ գիշե» տակեան հանգիստն գիշերոց գհարկ քնոյ՝ յո» տանաւոր տքնութեան ի Թարթափ ակն վը» ճարելով[1]». և իր անմոռաց մենասէր ճգնաղգեցութեան ախորժումն՝ անզարդ անպաճոյճ հագած, որչափ որ կրնար եպիսկոպոսաց գլխաւորը մը: Զոր սեանելով, կ'ըսեն, պճնասէր և ամբարհաւաճ Հռոմոց մանկունքն, որք Նիկիոյ լճին (Ականիա, Իզնիկ կ'ըսվի) եպերքն կու սպասէին, քթերնուն տարին, և դա ոչ եպիսկոպոսապետի՝ այլ եզնավար մշակի մը կերպարանք ունի, կ'ըսէին. և չարաճճիկք ոմանք՝ հոն գետին հերկով եզներն այլ կու ցուցընէին, կամ զինքը փորձել կ'ուզէին հրէաբարբառանախնդրութեամբ: Ան սեն, կ'ըսեն մեր այլ յոյլերաւէր և յոնախայթ աւանդաբանք, Աւխատակէս մանը բանեւոր քչեց եզանց զոտը, ոչ կարծր հողը կակղե-

1 Ագաթանգեղոս:

10249926



լու, այլ կակուղ ջուրը կարծրացընելու. և նմ-
կիոյ լճին մէջ արտաւար մը տեղ՝ իբրև ցամաքի
վրայ գնալով և քայլեցնելով եզնեւրը՝ ակնքները
ակօսեց, ձերմակ փրփուրով գինեը դիզելով, և
պարձաւ ցամաք. և իր ոտից հետքն ինչուան հի-
մա կ'երևայ լուսափայլութեան նշանով: Դու,
Հայկակ, մի փնտռեր այդ նշանները, ինչուան որ
հրաշից արժանաւոր և աստղ պատճառը չի գըտ-
նես. սակայն իբրև հին աւանդութիւն կարդայ
գովասանին գրածը. « Ի վերայ կապուտակ ա-
» լեացն լայնատարած լճին լնութեան վեհաւէտ
» և քաղնածածան կորովակի սիպաշարժ թանձ-
» րութեամբ ջուրցն ովկիանոյն՝ սիպաքայլ ոտիւք
» արընթացութեամբ սխրացեալ. անվեհեր դիտ-
» մամբ յիւսուածոյ՝ նկատեալ տեղին հասա-
» նէր. ոչ պետրոսօրէն երկմտէր, այլ փրկչաբար
» խիզախէր: Եւ ժողովելոց հարցն բազմութեան՝
» սիրալի հիացումն առնէր. և զանդրադարձու-
» թիւնն եկաւորութեամբ՝ ոչ տարակուսանօք
» ինչ հայթհայթէր, կամ յառաջարկեալ հան-
» դիպէն կասէր. այլ նոյնաձև օրինակաւ համար-
» ձակապէս՝ հաստատուն երկիր ելանէր. որ և
» հետք հետապնդութեան մինչև ցայսօր ժա-
» մանակի լուսաշաւիղ երևմամբ՝ ի վերայ երե-
» սաց ջուրցն տեսանի առ՝ ի յիշատակ սրբոյն
» աքանչելեաց. և ձկնորսապէս ամենայն ուրեք
» ՝ի տեսողացն ստուգիւ պատմի առանց երկբա-
» յութեան, որպէս և է ճշմարիտ. նա և թշնա-
» մեաց վկայութեամբ հաստատի հաւաստեաւ,
» որ զօրաւոր է յամենայնի. այլ և տուն Աստու-
» ծոյ և տաճար ՝ի տեղւոջն հաստատեալ, առ՝ի
» վկայութիւն հրաշից և ՝ի հաւատ տեսողաց »:

Եկեղեցւոյ և սիւնվերական տուրբ ժողովոյն պատմութիւնն ամենուն ծանօթ է. յետ վճար-

*ման գործոցն՝ Աւխատակէս այլ գարձաւ իր աշ-
խարհը. և ժողովոյն մէջ եկեղեցական բարեկար-
գութեան համար սահմանեալ կանոնաց օրինա-
կը և հաւատոյ դաւանութիւնը կամ հանգանա-
կը բերաւ ներկայացուց իր հօրը և Տրդատայ,
ոյք պատկառանօք ընդունելով նոյնպէս այլ ընդ-
ունէլի երին բոլոր Հայոց. Ս. Գրիգոր իր կոչ-
մանէ այլ քանի մը կանոն և վարդապետութիւն
աւելցուց անոնց հետ. և անոնցմէ զատ այլ շատ
կանոններ և վարդապետական ճառեր և պաղատ-
ներ գրելով և աւանդելով իր արեւնակիր և հոգե-
կիր յաջորդին, քանի մը տարիէն եաև բոլորովին
հրաժարեցաւ յաշխարհէ և՝ ի տեսութենէ մարդ-
կան. և այլ չէր իշներ իր պետական լեռնէն՝
յայց ելնելոյ իր հոգեծին որդւոցը. հազիւ եր-
եւեան կ՝ընդունէր՝ ի տեսութիւն զՏրդատ և զՈրդ-
տակէս՝ երբ եկեղեցւոյ հարկաւոր իրդիւներ կամ
տարակոյս ունէնային:*

## Ե

*Այսպէս Աւխատակէս յետ տանուհինգ կամ
աւելի տարի առանձին եպիսկոպոսութեան և ե-
ւսափոխանութեան, յամին 331 միայնակ և բուն
քահանայապետ Հանդուեցաւ Հայոց. և եօթն
տարի կեցաւ արքազան պաշտաման մէջ. ոչ պա-
կաս այլ և « առաւել ևս քան զհայրն վերագոյն
» եղեւեցուցանէր սա զիւր վարդապետութիւնն
» առ հարսն, և յետ նորա », որպէս վկայէ ակա-
նատես և ականջալուրն Ագաթանգեղոս. և միւս
պատմիչն[1] ասէ. « Արդարև էր տուսեր հոգևոր
» լոյս տատցելուծին, վասն որոյ Թշնամի ամենայն
» անիրաւաց և գազրագործաց երևէր»: Իր եօթն-*

[1] *Մովսէս Խորենացի:*

ամեայ միայնակ քահանայապետութեան միջոց Աւխատակէս ջանաց իր լուսաւորիչ հօրը լայսը աւելի ծաւալել, կարպեսը հաստատել, պակասները սւելցընել, մանաւորապէս վանքերը շատցուց. եկեղեցեաց մէջ այլ յիշուի Ծոփաց գաւառին մէջ չինած մեծ և հոյակապ եկեղեցին: Իակ գրաւոր յիշատակ հասած չէ մեզի նրմէ. միայն կու յիշուի որ հօրն հետ կանոնները գրաւ և վարդապետութիւն եկեղեցւոյ: Ի նեղլոյղ եամանալի և զգալի եկեղեցւոյ վայելչաբան շարականմ՝ուններիմք, «Զորս լսա պատկերի քումմ», և՝. սատր Տեղինակ կարծուող զանազան անձանց մէջ երկցապոյնն է Աւխատակէս, թէ և ոչ հաւանապոյն. և սակ թէ յետ գարձին 'ի Ժողովոյն Նիկիոյ երգած ըլլայ, «Կեցո զորդի ծառայի քո » զոր 'ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր, ուր » եգին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ»:

Իակ իր վերագոյն և սուրբ հոգեոր աներկիւղ վարդապետութեան պայծառագոյն վկայութիւնն այլ է իր վարդապետութեան և կենաց կատարածն: Հայոց հաւատալէն վեր մօտ քառասուն տարի անցեր էր. որչափ որ քրիստոնէութիւնն համարձակ ծաւալեալ պաշտուէր, բարուց թուլութիւնն այլ կու սկսեր երեւ ելնել. մանաւանդ որ մեծն Տրդատ այլ ծերացեր, և ինքն այլ իր հոգեւոր հօր Գրիգորի նման ճգնասիրութեան և առանձնութեան փափագէր. սով թուլամիտք և թուլահաւատք սկսան համարձակութիւն առնուլ, մանաւանդ ուր որ թագաւորէն շատ հեռու էին: Անանցմէ էր և Աբէղայոս Ծոփաց նահանգին նախարարն, սահմանակից Փոքր Հայոց և Յունաց բաժնին, և ըստ ոմանց՝ ազգաւ այլ յունախառն. սատր երկրին մէջ էր Աւխատակէսի չինած մեծ եկեղեցին, ուր թերևս սովորական աթոռն այլ դրած էր. և շատ անգամ գալով և

ուեանելով նախարարին անքրիստոնեայ վարքը՝ հայրապետաբար կու խրատէր և յանդիմանէր. բայց ամպարիշտն ոչ միայն ոչ զգաստացաւ, այլ ոխալով և մախալով՝ Հերովդեսի և Հերովդեա-դայ խորհուրդը մտաբերեց, մեր Ճշմարտաքարոզ կարապետին գլուխն առնուլ, մինասէր տատրակին մրմունջը լռեցընել. և երբ օր մը տուրք հայրապետն քանի մը աշակերտօք առանձնաբար կու գար՝ շատ չբանած Ճամբէ մը, յանկարծ ծածկուած դարանէն ասպազակի պէս դուրս ցատքեց Աիքելայոս իր սպասաւորներովն, և սրով Թուրց սրբոյն աստուածախոհ և քաղցրաձայն գլուխը... Անապատէ յանապատ փչեց շունչը. 'ի միայնու-թենէ մարմնոյն յածային միայնութիւն միացաւ մա-քուր հոգին. որ աւելի քան զ60 տարի նբերև բունի արգելեալ էր 'ի պարկեշտ հոլեղէն բնակարանին:

Առաջինն 'ի յաջորդաց Լուսաւորչի այսպիսի վկայական մահուամբ կնքեց իր մեծ և ծանր պաշտօնը, աւելի յայտնի արեան նահատակութեամբ՝ քան իր ամեն յաջորդքը: Իակ իր հոգեփայլ բազմակցաց մէջ, իրեն նմանագոյնն կուսութեամբ Ս. Գրիգորիս, մահուամբն այլ կերպով մը նմանեցաւ է, երանչար արեանհեղութեան ապանմամբ. անոր եղբայրն Յուսիկ՝ ծեծով անարիւն զոհ եղաւ. Ներսէս նոյնպէս վկայ և զոհ, այլ աւելի ծածուկ, թունով մահացեալ. Վրթանէս և Սահակ միայն բնական մահուամբ և ծերութեամբ մեռան յանկոյնի, 'ի միջի սիրելեաց. իակ պարագլուխ գուպարիցն՝ Ս. Լուսաւորչին, մովսէսնման՝ առանձինն, հրեշտակաց առջև և Աստուծոյ:

Աշակերտաք Ս. Առիստակէսի տարին անոր միշտ մահացեալ մարմինը և Թաղեցին 'ի Թիլն աւանի՝ գաւառին Լուսաւորչի, որուն սեփական ստացուած տուած էր այն աեղն Թագաւորն Տրդատ. որ 'ի հարկէ լսելով այս մեծ գոյժը, եկաւ ապա-

նելոյն եղբօր՝ Վրթանիսի հետ՝ յեսուին պաշտօնը կատարելու, արամուԹեամբ և սրտմտուԹեամբ. յորմէ զարհուրած աղջակերպն Ալքեպլայոս մէկէն փախաւ և Կիւբլիկիոյ մէջ Տօրոսի դժուարաւոտ լեռներու մէջ ընկեր էր: ԱւանդուԹիւնն յիշէ Թէ և ինքն սուրբ հայրն Գրիգոր ազդմամբ հոգւոյն խմանալով՝ եկաւ լալու իր խոստովանուԹեան պակասորդը լեցնուլ վկայամահ որդին, որ և հօրը քարոզուԹեան պակասորդը կու լեցընէր. և Թերևս հոգևոր նախանձով մը դարձաւ իր ճրագնարանը, անկէ եաև լուսաւոր տեսուԹեանցը մէջ նոր երևոյԹ մ'այլ ունենալով, զԱռիստակէս արիւնլուսայ:

Աչխարհաշրջիկ վարդապետ մը մեզմէ երեք դար առաջ, կ'ըսէ, Թէ սուրբը Առիստակիսի կարապետանման գլուխն 'ի ֆորֆուս կղզին տեսեր և պատուեր է. բայց մեզ անծանօԹ ըլլալով երբ և ինչպէս և հիմա ուր ըլլալն, փափագիմք գիւտին. և ախԹարիմք աստեղագործ երկնից քևեռինայած առեննիս՝ դիտել և նկատել Սայլին երկրորդ և բարձրակամար աստեղ հետ զԱՌԻՍՏԱԿԷՍ: ԵԹէ ըստ մենաէր ախորժանայն՝ գործովք և հաչակաւ այլ անծանօԹագոյն մնաց այս սուրբս քան զընկերակիցն, սակայն արդեամբք հաւատար և առաւելեալ. վասն զի գրեԹէ քան զամենայն յաչսորդան (բաց 'ի Սահակայ) երկարագոյն միջոց (իբրև քառորդ մի դարու) եպիսկոպոսական և հայրապետական հոգաբարձուԹիւն ըրաւ, և Հռաւորչի քահանայապետուԹեան կէս միջոցը և կէս հոգը մէկ աեղ կրեց, անոր արքային լուսոյն հետ մօտագոյն խառնելով իր կուսափայլ հոգւոյն ճերմակ ճառագայԹները, զոր և յետոյ 'ի ծիրանեգոյն ծարկելով՝ իր ջերմիկ արեամբն՝ սլացաւ յառաջ քան զՀոյրն և զայլ ամենեսին, Հայ հայրապետաց գոռալոյ նախագահ ըլլալու 'ի պարուԹեան յաւիտենից:

10249926

# ԺԲ

## ՇՈՒՇԱՆ-ՎԱՐԴԵՆԻ

### *Դեկտեմբերի* 25 (14)[1]

## Ա

*Տարւոյն վերջի օրերն է. եղանակն սխուր, ժամանակն խաւարին. Թոռմեալ Թմրեալ բնու-Թեան վրայ տարածուած համաափիւռ ձերմակէն՝ լոյս չի ծագեր, մխիթարուԹիւն չերեր. ձմեռն՝ միշտ ցուրտ, սառն՝ միշտ սոսկումն կ'ազդէ. նակ այն այսահար սնոտափիւնն, այն մոլեգին մրրիկն զոր կու լսես կէս գիշերուն՝ ձարձատեալ ծառոց կարկամ գրկերէն, և քարանձաւաց բքալից բե-րանբերէն, մարդուս՝ ինչուան ոսկորները կու սարսռեցընէ: Ա յսպիսի առեն տաքուկ անկողնի մը, վառած Թոնրի մը անկիւն, արծարծուն կրա-կարանի մը եզերք, ի՛նչ քաղցրեն, ոչ միայն ծու-լոյ՝ այլ և օրն'ի բուն աշխատող բանուորի մը, համեստ բարեկամաց, կամ մենաւէր խմատասի-րաց: Քաղցր ըլլայ քեզի այլ, Հայկակ, յառաջ*

[1] *Այս հայադիր յիշատակս նշանակուի 'ի 17 քաղց-ամսոյ, որ է դեկտ. 25, բայց գործոյն Հանդիպած տարին (473-5) Հայոց շարժական տօմարով քաղցի 17ն Հանդի-պի 'ի 14 դեկտեմբերի:*

քան մրափի մռայլութեան մէջ ընկնալէդ, քանի մը ժամ ձաթռտող խարոյկին լուսովը՝ մեր հայրենեաց հին գիպուածները հետաքննել, և այդ մեռած փայտերէն նոր կենդանութիւն հանող կրակիկ պէս՝ մարած անցքերէ և մեռած անձերէ՝ կենդանի կյքեր արթընցընել:.. Երանի՛ անոնց, որ թէ և աղքատիկ, թէ և ցօղունապատ խրճիթի մէջ, կամ կիսաթաղ հողէ տանեաց տակ, գեռ խոր խորշիկ մը, բուխերիկ մ՛ունին, որոյ մէջ քանի մը տաշէղով տաքութիւն և լոյս կուպահեն, և անով իրենց նմանեաց երեսը կուտեսանեն. ծխանին ծակէն արձրկած ծուխն՝ նաև գիշերուան և քնոյ խորութեան մէջ, կ՛իմացընէ հազիւ հանդիպող կամ մոլորած անցորդի մը՝ թէ այն մեռելատիպ հողի քարի խուռւբ և ձեան տակ այլ կենդանութեան կէտ մը, ընտանութեան բոյն մը կայ:... Ո՛հ, ինչ դժնդակ է այն աեղն, ուր ծխան չի ծխեր. ինչ խղճալի անձ, որ այսպիսի ե. ղանակի և ժամանակի մէջ՝ բնութեան ամենայն սաստից և արհաւրաց մէջ, սառի և սարսուռի մէջ պատած պաշարուած բռնուած ըլլայ. ուր ոչ միայն այդ չարիքն, այլ և չարիքներէն ազատելուն ճար ու յոյս այլ չըլլայ. — և մանաւանդ, մանաւանդ եթէ մէկն բռնի և անպարտ դատապարտուած ըլլայ այդպիսի, և քան զայդ աւելի զրկմանց, կրից և ցաւոց:... Հայկակ, հոս անտարբեր կալ ճնալ չըլլար. այս յիշատակիս՝ ցուրտն և սարսուռն ամեն պատ ճաթեցընելով ներս կումանեն. կրակդ կ՛անցնի, ծուխդ կուցնդի, սիրտդ կուսոսկայ:: Ե՛լ, ել խրճիթէդ, մոռցիր ձմեռ խաւար. հայրենական հոգւոյ հրեղէն վերարկուն ձգէ վրադ, թող կրակիկդ, և հարատ գիշերուան խօլաշունչ մրրկին մէջ՝ անկէ աւելի ել թռիր:

Երթանք, մեկ ինչով անցնինք սառնապատ սա-

լեր ու ձորել. երթանք՝ ուր որ ցրտին, միայնու-
թեան, ամայութեան, և ահեղութեան երևոյթ
կայ, վեշտք և կիւք կան: Երթանք, ուր այս-
օրուան Հայոգիր յիշատակն յափշտակէ զմեզ.
ուր հայրենեաց հիւսիսոյին սահմանները. ուր
հակայաձև երկայնաշար Կովկասու լեռնագօտեաց
գլխոց՝ իբրև զուգահեռակ կամ հակապար ա-
նոնց, աւելի ցած և աւելի կարճած լեռնագօտի
մը կու ձգուի ընդ հարաւակողմն. զոր Հոխով
հաս կամ գուցէ լաւ ևս Հայոհիաս կ'անուանէ
աշխարհագիրն. և որ շատ հեղ հին Հայոց և Վրաց
սահմանապարիսպն եղած է. բայց շատ հեղ այլ
Հայք անցնելով այդ պարսպէն՝ տիրած և բնա-
կած են անոր դէպ հիւսիս տարածած գեղեցիկ
ձորագաշտերուն. որոց մէջ մեծ գետոյն Կուրի
հայաբուխ օժանդակներն զեռալով քաջաբոյս փո-
րակներ և ձորակներ կու ձևացընեն: Անոնց վրայ
կ'իշխէր Թագաւորաիւս նախարար մի, անուանեալ
Բդեաշխ Գո-գարոյ. վասն զի այս հին և մուրթ նա-
հապետական անուամբ կոչուէր այդ Վրաց և
Հայոց մէջ տարածուած բազմաձև բազմաձոր
բազմալիճ բազմագետ աշխարհն. որոյ և կետրն
գաւառքն՝ յարևելեան կողմն՝ կոչուէին Կողբո-
ք որ, Ծոբոք որ, Զորոք որ: Այս երեք փորակաց ան-
միջապէս յարևմտից հիւսիսահան կէց՝ փորակ
մ'այլ կայ, զոր շատ պատմիչ և աշխարհագիրք
Թորդեր են անծանօթ. այն է Բաղնոք որ. և սակայն
ամենէն աւելի ծանօթ ըլլալու իրաւունք ունէր
այս գաւառակս. որովհետև ասոր մէջ է, իր հա-
րաւային ծայրը և կեզը գաշտին Վրաց, ասոնց
հիմնու մայրաքաղաքին՝ Տփխեաց՝ դիմաց, իբրև
կիսաւուր Ջամբով միայն հեռու՝ Գուգարաց բը-
դեշխին մայրաքաղաքն՝ Յուրպա, նոյնպէս գրեթէ
բոլորովին մոտացեալ. զոր միայն յիշեցընէ ձո-
րագնաց գետակ մը՝ Յուրպագետ կոչմամբ, և խաո-

նուբ հարաւային հայակռվկաս լեռներէն իջած վտակին հետ, այն որ իր բնիկ գաւառին անունը կու պահէ (Բոլնեաց գետ), հիմա Բոլոփաւրէ կոչուելով: Իակ այդ բդեշխաց աթոռ հին և շէն քաղաքն՝ հազար տարիէ վեր գիւղացեալ՝ Գոլընփ կոչի, հնագոյն անուամբ և աւանդութեամբ մը. վան զի այդ տեղը՝ կ'ըսեն, շինած է Գոլ կամ Գոլ անուն եղբօրորդին Հայկայ. որոյ անուամբ երբեմն գետն այլ Գոլընագետ կոչուի: Ահա շէնս կամ քաղաքս՝ Բոլնոփորի հարաւային ցածագոյն ծայրը շինած է. իակ գաւառին բարձրագոյն լեռնաստահման ծայրը, հիմակու մացառախիտ և պընձաւհատ Լեռվէր լերանց ստորոտը, Բոլոտաւրեայ աղբերականց մօտ՝ ամուր և աւեր շէնք մը կայ, որ նոյնպէս Գորգոմայ առաջին Թոռանցմէ շինուած կ'երևի, քան թէ՛ ի Ճենազնեայ Ուռպէլեանց, և կոչուի ինչուան հիմա ՈՒՓՐԷԹ, Թերևս յանուն Ուփար նահապետի մը կամ Ուփաղք ցեղի մը. որոյ հին բնակարան և ոստան եղած կրնայ ըլլալ. և յետոյ տեղւոյն բարձրութեան և դժուարութեանն համար Թողուած, բայց պահուած իբրև ամուր և անմատոյց բերդ, պատսպարան և տեղի ապաւինի գաւառին, կամ արգելարան բանի մի իւսաիւ պահելի անձանց:

Մեր քննութեան առեն այլ, ասկէ իբրև 1400 տարի առաջ, այս պահուած քաշուած վիճին և խոժոռ կերպարանքը կ'ընծայէր ՈՒփրէթ. և առաւել այս եղանակիս և այս պահուս: Գրոնն, այն աստուածային երկրաշփուռ ծիծաղն, պարոնն և ամառն՝ որ Բոլնեաց փորակը ծաղկազարդ բուսաբուսի վիճակ մը կու դարձընեն՝ անոր պայծառ ակեաց մատուռակութեամբն, ՈՒփրեթայ բերդին եզերքն այլ էին մոռնար հարակաց երկրի պարզևէն. ինչուան բանաբրու պատերուն վրայ այլ կու բուսանի կու բացուի ո-

բախտութեան և անմեղութեան նշանակին, ծաղիկ մը... Իսկ մարդուս սրտի ծաղկին՝ գթութիւնն, ո՛հ, գթութիւն չի բուսանիր, չի բղխեր բանաւորաց կուրծքէն, որ մանէ այդ պատերէն ներս. հոն՝ ուր ոչ միայն սոյդ արդարութեամբ դատապարտածն, այլ երբեմն (չըսեմք շատ հեղ) նաև անպարան արգելեալ, զուրկ՝ ի լուսոյ և՝ ի յուսոյ աշխարհի՝ տառապի, տուայտի, մեռանի:...

Ա՛յս գիշեր, Հայկակ, դու այդ նիւթական անչար բնութեան պարգևին այլ չես գաներ հոս. հոս ամեն բան չորցեր, սառեր անցեր է. և եթէ ըսո՝ գալդիդ՝ գլխուդ վերև Թափառած սև մըրուններն պատռտելով, բանան քանի մը վայրկեան դալկահար և դողդոջուն լուսնի մը երես, ահա սեւածդ ամայի ցուրտ սառած անապատ մ՚է: Լեօք և Լեալվար լերանց կոչտ կռնակներն վրայ քանի մը կանաչ ըսուած մոշայք և եղևինք կան. այլ այս առհասարակ սարածեալ ձեան տակ համ մէջ, դողդոջուն ու անփախուստ շուքերու պէս կու ծփան ծառերն. և այդ պաղ ալիքոյն հովուն Թևերուն տակ՝ իբրև վզէն բռնուած կենդանիք՝ սուր ու խայթող ձայներ ձի՛չեր կու հանեն. միայնակ ճրագ և երաժշտութիւն հիւսիսային հովվաբանին՝ այս եղանակիս, այս աղերսոյս: Եթէ յանկարծ ջաուռկ պառաւի մը վայելուն նման սուր ձայն մ՚այլ չի լրթի՝ դիմացն բերդի պիտ քարէ պահապանի նման բարձրացեալ աշտարակին գագաթէն. որոյ վերին պատուհանին խորշը քաշուած տափագլուխ լայներես փեսորափոսք բուխճակին՝ տպակէնման մեծակլոր աչքերը աջուձախ սահեցընելով, կորուկախ քթովը՝ ձմերեան իւր հանդարտութեան մէջ անգամ անհանդարտ և անկուշտ, բանտապանին կամ բըռնաւորին նման կարծես կու սրդոլի ամեն օտար կենդանեաց, որ չհասնիլն իր աւերակաց սէրու-

Թիւնը, չափելուն իր որաները: Եւ ահա, երբ լուանին Ճաշուած Ճաւապայմնեըն այլ քաշուին, անհեգեգ բերդն, բարձրահայեաց բուրգն՝ աներևոյթ կ'ըլլան, բուին վայն ու վոչն աւելի կու զօրանայ: Արտաքինէն կրնաս գուշակել Ուփրեթայ ներքին երևոյթն այլ, պատերուն Թանձրութիւնը, սրահներուն, սենեկներուն կամ խորշերուն նեղութիւնը, և տեղ տեղ բարձրէն բացած ծակերուն պզտիկութիւնը. ուսկից ոչ երբեք արտաքոց մաքուր օդ մը և պայծառ լոյս մը կ'ինչնեն, այլ մրոտխաւն բան մը, այնչափ՝ որ կարենայ արգելական մը դեռ ընել, և հաւաչանքները անկէց դուրս արձակել ինչուան ուր որ հասնի. և փոխարէն՝ դրսէն ընդունել բուխձակին վայելքը, հիւսիսին սօսափիւնը, և երբեմն հեռաւոր ձորերէն ինչած ջուերուն հանգարտընթաց սահանոց կարկաչանքը. — հաւաչանք հովու և ջոյ, — ի պատասխան հաւաչանաց հրացեալ և հալեալ արտի բանաստեղծին:...

## Բ

Կայ արդեօք հիմակ այլ մեկ մը, այսպիսի դժնդակ եղանակի մէջ, այսպիսի դժնդակ դոյն աեղ մը արգիլուած. մինչդեռ քաղաքական և կրօնական եղանակք՝ փոխանակ բնութեան՝ մխիթարեն զմարդիկ, նոր տարուոյ յուսով և Քրիստոսի Աստուծոյ ծննդեան ուրախութեամբ: — Քանի մը մղոն Ճամբայ, ձորակ մը, ամայի դաշտակ մը, պատ մը միայն՝ անանց անկոխ արգելք կանգներ է ընդ մէջ աշխարհի, կենակցութեան, և ընդ մէջ բանաստեղծին. ամենայն ինչ՝ ոչ միայն տխուր, այլ և անփոփոխ է անոր չորս դին, բայց ի մոքէն. եթէ դեռ զօրաւոր սիրտ մը կարենայ նուաճել զայն

թուքին, և բանեցընել գլխոյն աստուածա-
տուր ազատութիւնը. այն ազատութիւնը, ո-
րուն կ'ուզէ, բայց չկրնար արգել ըլլալ անգթա-
պոյն բռնաւորն այլ:... Բայց անցնինք այդ լուռ
և խաւար արահներէն, խորշերէն, գաղտնարան-
ներէն, ուր վրանիս կու թափին ձանձախարխիլի
նման սեւցած սարդի ոստայնները, և պահապան-
ներէն շուտ արթընցող ճիւաղակերպ ջղխիններ՝
կաշկնձիկ թևերով՝ ատամի ձագերու պէս պա-
տէ պատ կու զարնուին. բայց յայն սենեկէն միայն,
ուր անփոյթ՝ քան անգութ՝ պահապանքն ապա-
կած, փոխանակ անքուն հսկողութեան, խորտա-
լով կու խրտեցընեն իրենց մատնուած դիմացի
արգելականը: Եթէ այդ մարգկային գազանաց
որսխտութիւնը նայելու ըլլաս, կ'իմանաս՝ որ հոս
շատ արգելական չկայ, բայց եղողն շատ զգուշա-
թեամբ պահուած է իբրև մեծագոյն յանցաւոր
և անազատելի մահապարտ մը:...

Սիրտ ըրէ, մանր այդ ծակը. խարխափէ շո-
շափէ տես գոն. շատ ընդարձակ չէ, քանի մը
քայլ է. այլ գիշերուն մէջտեղն չես կրնար քան
տեսնել. սակայն հոս թէ մինչեւ ցարկ արևուն
այլ գա՝ շատ աւելի պիտի չտեսնես. տեսնելու
բան այլ չկայ. այդպիսի արգելականի խուշ մը՝
շատ մերկ և պարապ է: Խե՛ղճ. և ոչ անկողնի մը
կայ, այլ պզտիկ խշտիկ մը, որուն վրայ հազիւ
նստել կարելի է և ոչ երկայնուկ պառկիլ. ո՜հ,
պառկելու ձար այլ չկայ:... Կու լսե՞ս այդ թանձր
շղթայից խշտոցը. անշուշտ ատոնք բանտելոյն
ոտքերն կաշկանդած են. ոչ ոտքերն միայն, այլ
և այն մարդուս ազատութեան արտաքին զուգակ
գործաւորները, ձեռքերն այլ: Այլ աւելի խըլ-
ճալի և ափգալի. մարմինն այլ արձակ չէ, գլուխն
այլ ազատ չէ. հայեցուածք շատ վայել անուր մը՝
վրէն անցած, ամուր կապանօք պատկին պնդած

է. եւ ապատիկ երկաթով կապկըպած, կատաղի գազանի մը կամ գազանացեալ վիրապի մը նման, երեք անգամ արգելեալ։ — Սո՞յգ է ուրեմն առաջ պեղն, որ առենօք այս լերանց դիմաց՝ Կովկասու էլպրուզայ բարձրագոյն սարերուն գլուխը կու ցուցներ զդիւցազն Պռոմիթևս, որ երկնուց կրակ գողնալուն ու յերկիր բերելուն համար՝ չաստուածներէն դաժանապարտուած կապկըպած լերանց մերկ կողերուն վրայ ձգուած էր։ Ախդպիսի պատուհասի մը արժանի սեպուած կարծուի այս հակակովկաս լերանց բանտեաղն այլ։ Ի՞նչ բարկ կրակ է արդեօք սաղ գողցածն. վան զի յիւրաքի իր ձեռքերն այլ այրած, խարած, ապիացած կ'երևին. նոյնպէս ոտքերն այլ, և ինչ որ մորթ կ'երևի վրան. նաև երեսներն այլ, և ինչուան աչքերն այլ՝ գրեթէ աչքուընէ եւլած. երբեմն բարկ ա. րեւէ, և վերջը մեզէն խանգարած ուռած ցաւած. կարկատուն դէմքն՝ վատած գեղնած. չորս դին՝ զգուելի որդեր ճճիներ կու զեռան։ Դիմացը՝ սև ու չոր գարիէ հացի կտոր մը, քովը փաղչիկ մը պաղ ջուր. այս է իր կենաց անունդը ամեն Աստուծոյ օր, որչափ այլ ապրի։ Վրայի մաշած զգեստն, եթէ զգեստ այլ կրնայ ըսուիլ, իր վիճակին յարմար՝ տանջելի, մազախառն հիւսուածք մը. աւելի խստակրօն ճգնաւորի հագուստի նըմանի, քան սովորական մահկապարտի։... Բայց ո՛վ անտանելի ծանօթուընէն... այս ամեն պրժգալի բաներն դեռ կու պզտիկնան, ոչինչ կ'երևին, կամ թէ կրկին կու մեծնան, կու աստղականան լեռնանան, մինչև յերկինս կու բարձրանան, երբոր հաւատաս, Հայկակ, եթէ այդ չարաչար բանտարկեալ մահապարտդ՝ սովորական յանցաւորաց սեռէն չէ, այլ կին մարդ է։...

Անշուշտ երկուքին մեկին. կամ դա՝ պատմութեանց մէջ չլսուած եղեռնաւոր անզգամ, գե-

ղնչ ապանիչ, քաղաքայրեաց, աչխարհակործան կին մը պիտի ըլլայ. կամ աւտր քանտուղն այլ ա- ւելի եղեռնաւոր անզգայ գազան բռնաւոր մը:... Կին մը. ասանկ աւտեն, այսպիսի տեղ, այսպիսի վիճակի մէջ... Անշուշտ սիրտ չես ըներ, Հայկակ, այս պատմութիւնս քու ուրտուդ պատմելու. կամ սիրտ չեն ըներ անունք լսելու և աչք մը տալու այսպիսի սեռակից անձի մը վրայ. քեզի անգամ ծանր է՝ քու մօրդ զուգակիրը՝ թէ և յանցաւոր և մեծայանց ըլլայ, այդ երկաթներուն մէջ կարկամած տեսնել: Հապա ո՞րքան աւելի զգալի, կսկծալի և տանկալի պիտի երևի այդ պատկերդ, եթէ դիմացը ուրիշ պատկեր մ՚այլ ըլլար՝ աչխարհիս (չեմ ըսեր զեղծ ու չիացած, այլ և) օրինաւոր բարեկեցիկ վայելուչ փառաւոր տիկնոջ մը: Պէտք է արդեօք այն պատկերն այլ փընտռել: — Ա,յո. հոս ոչ մարդահաճութիւն և ոչ անձնահաճութիւն, այլ բարոյական հարկ և պարտք մը կայ զայն այլ տեսնելու. պէտք է վայրկեան մը բանտէն դուրս ելնենք, որ բանտին մէջինը լաւագոյն ճանչնանք:

## Գ

Շատ հեռու չեմ տանիր զքեզ, Հայկակ. հազիւ ճաշաժամու մը ճամբայ. այս Բողնոյ-փորտակէս դուրս չէ, այլ նոյն իսկ անոր չինապլուխն, նախայիշեալն Յուլոտաւ. մայրաքաղաք բդեշխին Գուգարաց: Անշուշտ մեկէն գուշակես թէ դիմացդ ելնելիքն պիտի ըլլայ բդեշխուհին: Յիրաւի, անկէ զատ չէ. և գիտնալու ես որ այս տեղի բդեշխուհիս, Թագուհիէ շատ պակաս չէ: Հայոց մեծ Թագաւորութեան տակ քանի չափ նախարարներ կային, մեկ մեկ փոքր աչխարհներու ազատօրէն կառավարք. ատոնցմէ Տրուան աւելի

10249926



շատ ազատ և գլուխէ անկախք էին. ատոնք էին Բզէնիփն, որ երբեմն Թագաւորք այլ կ'լսուէին, և որոց մէկն հոս Հայաստանի հիւսիսակողման սահմանակալ կամ աշխարհապահն էր՝ Գուգարաց նախարարն, որ և Վրաց էրէնէ կ'լսուէր, և երբեմն բուն ազատ Վրաց Թագաւորէն աւելի զօրաւոր՝ և աւելի ընդարձակ երկիր ունէր, և անոր վրայ այլ իշխանութիւն կու բանեցընէր՝ Հայոց Թագաւորին կողմանէ: Արդ յայտ է որ բուլոր հիւսիսային կամ կովկասային ժողովրդոց առջև Գուգարաց բդեշխն՝ մեծագոր մեծափառ իշխան և տէր մը Ճանաչուէր. խաղաղութեան աւուն 18 կամ 20000 զօրաց հրամանատար էր. անոր համեմատ առատ եկամուտ այլ ունէր երկրէն. մէկ մը անոր ընդարձակութեան և բերքեբուն համար, (բաւական տափարակ և ցած դաշտեր ունենալուէն, և ամէկ փայտի անտառներ, ու մանաւանդ պղնձի և ուրիշ մետաղաց հանքեր). մէկ մ'այլ Ալանաց-Դրան ճամբուն հարուսային պահակը՝ իր իշխանութեան տակն ըլլալով, որ էր սովորական ճամբայ Հայաստանէն և արևմտեան Ասիայէն՝ ի Կովկաս գնացողաց և անկէ հոս եկողաց. այս երթևեկս և մանաւանդ վաճառաց ելումուտքն՝ շատ շահաւոր էր Գուգարաց տէրոջ: Այսպիսի դրութեամբ՝ հարկ է որ իր դէնոյն այլ հիւսիսային տիկնոջց մէջ թագուփայլ և մեծափառ նազէր: Եւ եթէ ուրիշ դէշ իսկ միայն այսպիսի բարձր գահու մը վրայ ըլլալէն այլ կրնային փայլել, հիմակուան բդեշխուհին իրմէ առաջիններէն անուանի, աւելի բարձրադոյն պէտք է փայլեր իր անձնական ձրիքը, որով կայսերաց գահոյքն անգամ կրնար պայծառացընել. վասն զի էր նա Թոռնադստերիկ մեծի Պարթևին և առաջ քահանայապետին Սահակայ, գուսաւոր Մեծին Վարդուհէին-

ՇՈՒՇԱՆ. այս երկու պարտիզներուն ծաղկանց ա-
նուամբ և անոնց հնարհօքը ծանօթացեալ և հրա-
ւիրեալ, ՚ի հօրէն Վարդուհի կամ Վարդանուշի կամ
Վարդենի կոչեալ, և ՚ի սիրոյ դպրաւանաց՝ իր մա-
քուր և պայծառ սեռէեանն համար Շուշանիկ կո-
չուած, որ և իբր սեփականագոյն անուն մնաց
վրան: Շուշանական հոտքն և հնարհ.քն՝ էր այնքան
հարստաւթիւն, Մեծին Վարդանայ Մամիկոնէից
սեռէն անուանակիր զաւակ և ժառանգ ըլլալն,
կամ Գրիգորայ բդեշխի դչխոյ ըլլալն. և ոչ այն-
քան մարմնական գեղեցկութիւնն, ոչ իսկ պար-
թևական և մամիկոնեան արեան ազնիւ սերունդն,
որքան ՚ի հօրմէն, մամէն (Սահակադեստոյ) և ՚ի
մեծ պապէն առած դաստիարակութիւնն, իմաս-
տութիւնն, բարեպաշտութիւնն. մինչ քանիս,
հնարհ.քն և օրհնութիւնն՝ որովք արդարև աշխար-
հիս մէջ մեծ անուն և զարմանք թողլով՝ արիա-
կան, դիւցային, աստուածանշոյլ կանանց մէկն
Հանդիսացաւ. և հարկ էր որ իր երկրաւոր ան-
ուութեան օրերուն այլ փայլէր և ըլլար աստղ և
պսակ հիւսիսոյ: Երկանը՝ Վազգէն բդեշխի՝ ներ-
կայ չեղած առեն, սիրաբար կ՚իջևներ և հրամանն
տայր աշխարհին, տանը մէջ՝ գերզգօն ազնիւ մայր
մ՚էր. հաստատակաց բարերար և դայեակ. եկե-
ղեցւոյ բարեզարդիչ փայլեցուցիչ, արժանաւոր
Ս. Սահակէն ժառանգած բարեպաշտութեան,
հոգեսիրութեան և հայրենասիրութեան. որով
կարգաւորեց և մուտս Ցուրտաւայ եկեղեցւոյն
մէջ հայերէն ժամակարգութիւն, զատ ՚ի վրա-
ցւոյն. (վասն զի Վրացիք այլ շատ կային հոն,
Թերևս աւելի քան զՀայս, երկար առեն Վրաց
իշխանութեան տակ ըլլալով երկիրն. անոր հա-
մար երկու լեզուով այլ կատարել կու տար պաշ-
տօնը). և եպիսկոպոսաք հրամանը սիրով ընդու-
նելով՝ հարիւրաւոր տարի եռքն այլ՝ իբրև աւան-

դուրթիւն և պատուէր մեծ դչնոյին՝ անփոփոխ պահէին այս կարգը։

Ահա այսպիսի է ըղեչխուհին՝ զոր կ'երթամք տեսանելու ՚ի Յուրտաս. և ՚ի հարկէ այսպիսի ձրից և արժանեաց քով՝ շատ ծանրութիւն և անգամ նեղ պիտի ըլլայ՝ անոր վսեմափայլ կերպարատնացը հիանալ, կամ սիկնուրթեան թագն ու շղարշը, ոսկին, բեհեզն, ծիրանին, գոհար ակունք և մարգարիտները դիտել. բաւական ըլլայ առանց մանր քննելու և համրելու՝ հարիւանցն մ'այլ տեսնել զինքը դչնոյական գարշապին մէջ՝ հանդիսական հպարտատովը, և բնական նարմանազուկ չարժուածքովը. կարծես՝ ընորհք, հեզութիւն և վսեմութիւն իրար խառնած՝ զինքը զանգեր ու զարդարը են. և այդ ամենայն փառքերէ վեր եւնելու կու չարժէ մանտրուքայլ ոտքերը, որպէս թէ իր բուն գահոյքն՝ աստեղաց կամ արևու մօտ խորանի մէջ կանգնած ըլլայ։...

Հիմա կրնամք, Հայկակ, այս Գուգարաց ըղեչխուհին, իր սիկնաբար կոխած շեմքն չարժել ու փոխադրել վայրկեան մը Ուփրեթայ զնդանին մէջ. և հասկընալ՝ թէ ինչ է վեհ վսեմ գեղեցիկ բարեկիրթ բարեպաշտ զնաւակամայր կին մը, և ինչ է այդ մեր նախ տեսած, երեքերկաթեան կապած, մաշած մորած պառաւն. որոյ՝ կին անգամ ըսել դժար կու գայ։ Թերևս պարտիզապետ չուշանին և ձմեռը անանց իւր տրտում ցուրտ ծաղկին մէջ՝ այնքան անմռմանութիւն չըլլայ, որքան այս երկու կերպարանաց մէջ. անմօտենալի վիհ մը կ'երևի մէջերնին։... Եւ սակայն. — սակայն, ինչ էնկրնար ընել մարդուս հոգին. այն մեծ և անմահ զօրութիւնն, որ բարութեամբ կրնայ բարձրանալ մինչև Աստուած, և չարին հետևելով՝ ինչուան սատանայի գործակից ըլլալ։ Այս երկու հակառակ կերպով՝ հոս այլ մեզի

*անունան անմոռենալի անկարծելի երևցածն՝ կըր-
նայ ըլլալ. և արդէն եղած է, և մեր ուզածէն և
չուզածէն աւելին այլ: — Ուխրեթայ շղթայեալ
վշտակիրն՝ և Գուգարաց հնորհաշուք դշխոյն՝ Շու-
շանիկ, անբաժանելի մի և նոյն անձն է...: Մե-
ծին Վարդանայ մեկնաւոր դուստրն, Վազգենի
կինն, Վրաց բգեշխուհին, անունան Շուշանիկն
այն է՝ որ վեց տարիէ վեր այս ահեղ և դժնդակ
տեղւոյս և շղթայից մէջ դատապարտուած է՝ ի
տանջանս և՝ ի մահ:...*

## Դ

*Ո՛վ ափշութիւն, ո՛վ տակուբեր, ի՛նչ փոփո-
խութիւն, տէր Աստուած: Եւ ի՞նչպէս. ինչո՞ւ:
— Արդեօք այդ մեծահոգի մեծաշնորհ կինն՝ իր
և հատարակաց նախամօրը պէս խաբուելով, աս-
տուածային պատուիրանին անհնազանդ՝ վըր-
տուեցաւ իր դրախտանման դարպասէն. Թէ ար-
դեօք երկնային զօրութեանց պարագլուխ արու-
սեակին պէս հպարտացեալ՝ ուզեց Բարձրելոյն ա-
թոռն ելնել, և զարնուելով անոր կայծակէն՝ գլո-
րեցաւ ընկաւ՝ ի խաւար և յօտարութիւն:...
Թէպէտ և անհուն կ'երևի կերպարանաց փոփո-
խութիւնն, սակայն այդ մաշած դիմաց վրայ ամ-
բարտաւանութեան և մեղաց հետք չեն երևիր.
շատ հեռի են չարութեան շուքերն անգամ՝ այն
հեզութիւնը և առաքինի արամութեամբ խորացեալ
խորշամեալ երեսներէն. — նուաղեալ և ցամա-
քեալ աչքերէն՝ դեռ գթութիւն և ողորմութիւն
կու կաթէ. — խարշած շրթանց մէջ դեռ ընորհք
կու ժպտին լռիկ. — անթագ անպսակ ճաղատ
ճակտին վրայ դեռ անարուեստ զօրութեամբ մը
գրուած կ'երևի՝ թէ սա դշխոյ է արժանապատ:
Ընդ բանտին մէջի մէկ հատիկ գործարանն՝ ուր-*

Ռահոյ մը, անոր վրայ երկու գրքոյկք՝ աղօթամատոյց մը և Ս. Սահակայ առաւածաշնչական մատենէրով գրուած աւետարանիկ մը, և այս երկուքին մէջ կանգնած խաչափայտ մը՝ կոչ վկայեն, թէ առաւածարեալ հոգի մը կայ այդ պատերէն աւելի՝ մարմնով բանտուած՝ անձին մէջ. որուն հանդարտութիւնն, սեւնեկին խաղաղութիւնն, և գրեթէ որդանց մէջ անգամ զգալի անուշահոտութիւն մը, շատ համարձակ կոչ վկայեն, թէ դա ոչ միայն իր անուան շնորհն պահած է, այլ և առաւելած. անպարտ է այդ գառապարտեալդ, անարատ է առաւապեալդ, սուրբ է Ուխտեցի բանտարկեալն, հրեշտակաշնորհ է Շուշանիկ, և անօրինակ երևոյթ մ'է մեր տեսածն հոս...

Ո՞վ է ուրեմն պարտաւորն. ով այն այլանդակ յանցաւորն, այն ապառաժ բռնաւորն, այն մարդապազանն՝ որ յայս վիճակ հասուց զսա: — Վազգէն. — Վրաց լռելեան, նոյն իսկ կենսակիցն, ամուսինն Շուշանիկան:... Անշուշտ կամ խելագար կամ դիւահար պիտի ըլլայ՝ որ այդ գործդ ըրեր է, կամ գժոխական աւերմութեամբ մը վհատած՝ որ զմարդ մոլորցընէ չար քան զկնե ու զդեւ:

Ափսո՜ Շուշանիկան. երջանիկ ժամանակ մը ծնաւ, իր հօր Վարդանայ աւետեան փառաց մէջ և հօրապատուն Սահակայ ճգնաւորական գահակալութեան առեն. սակայն թշուառ գարու զրկեալ եղաւ: Հասակին վիճակին ամենէն պայծառ մէջոցին, Հայոց բոլորին փառափայլ արևն խաւարեցաւ, վերցաւ Թագաւորութիւն ցեղին Տրդատայ և քահանայապետութիւն Ս. Գրիգորի. Հայաստան տակն ու վրայ եղաւ, Պարսք չանալով զՀայս կրակապաշտ ընել՝ երկայն տարիներէ վեր լուած հալածանքը նորէն բորբոքեցին. Հայք բանիւ և փաստիւ չկարենալով համոզել զամպարիշտն Յազկերտ՝ աշխարհօրէն պատերազմաւ ու-

ջեցին գէմ կենալ զինուց բռնութեան. մէջերնին երկպառակութիւն ընկաւ, կէսն կաշառուած 'ի Պարսից և մոգութեան հաւանած՝ արգելք եղան յաջողութեան պատերազմին և ազատութեան. Վարդան՝ հայրն Ղուշանկան զլուխ հայրենեաց ուխտապահ մնալին՝ ընկաւ փառօք և արբութեամբ մեծ ձակատամարտին մէջ. նրեն հոգւոյն և զօրութեան յաջորդ մը չգտնուեցաւ շուտով: Իշխանաց և ցեղապետաց ոմանք փախստեամբ և թաքստեամբ ծածկուեցան. ոմանք զէնքով պաշտպանել չկրնային նրենց ամրոցները. շատոնք այլ 'ի Պարսից ձեռքն ընկած խաբէութեամբ՝ բռնաւեցան յօտարութեան. և ոչ սակաւք՝ գժբաղդաբար՝ սիրելով զփառս և զվայելս աշխարհի՝ քան զհանդերձեալ յոյսն, հաւանեցան կամայ կամ ակամայ մոգութեան և կրակապաշտից. և քրիստոնէութեան փոխանակ՝ արևու և մնխրի պաշտօնը յանձն առին: Որոցմէ այլ աւելի զղուելով ուխտապահքն, ոչ միայն արք այլև կանայք, փափկասուն սիկնայք, իբրև նորէն կնքուելով 'ի Քրիստոս՝ հաստատեցին ուխտ զրին մինչև խոպան համբերել, նեղիլ, տառապիլ և ջուրանալ զառաջս հաւատոյ Յիսուսի, չմտրել Լուսաւորչին չահը՝ պինդ մնալով անխրախոյժ խանձողաց դիմաց:

Այս եղբի երկու դասուց մէկմէկ պարագլուխ կրնան սեպուիլ Գուգարաց բդեշխն և իր դվնոյն. Վասգէն վասականման ուրացողաց, աւերողաց, հայրենատեաց, քրիստոսատեաց անարի արանց. Ղուշանիկ՝ Ղամունեայ նման մեծահաւաա մեծահոգի հայրենասէր աստուածասէր այրասիրտ կանանց. որք « Մուսացան զկանացի սկարուհին, » և եղեն արուք առաքինիք 'ի հոգևոր պատերազմին... ոչ միայն յոգին մխիթարեալ կային առ » աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, » այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել և զօր-

» Ձին զբեռն ծանրութեան... Ոչ ինչ յիշեցին
» ամենևին զանուշն փափկութեան մայրենի ազա-
» ւութեանն, այլ իբրև մարդիկ՝ որ վշտամբեալք
» լեալ էին անդամին 'ի չինական սովորութենէն
» տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրա-
» գոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերու-
» թիւն վշտաց:... Անարիւն Ճպուռանց նմանեցին,
» որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրա-
» նաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով,
» զանմարմնոցն բերեն զնմանութիւն [1] »:

Ախալխալք էին այն ժամանակի ուխտապահքն Տէհնայ։ Տէհնայ Հայոց աշխարհին, որպէս ակա-նատես սուրբ պատմիչն նկարագրէ։ Այլ ինչ արգեօք պիտի ըսէիր. ինչ մեղուներն թէ հրեշտակն գրչով պիտի գրէիր, ոմն անուշակ եղիչէ, եթէ լսէիր, եթէ տեսանէիր՝ այդ տիկնաց տիկինը, այն քոլ մեր դիւցազին՝ Վարդանայ՝ Վարդենի դրան-րիկը Շուշանը, այսպէս քան զամէն կին և այր՝ այդ հալածանաց պարագային մէջ՝ սասկապէս տանջեալ և հրաշափառապէս հանդիսացեալ։

## Ե

Եթէ կանացի մարմին մը քան զայդ սաեղծ կըտրուկ տանջանքներ կրած է, գուցէ սաեղծ երկար սաեն չէ կրած. Թերևս ոչ ոք այլ սաեղծ և սպա-սպա զրկանք և սրտակոտոր կիրք սպեաց գԹոյ և հոգւոյ վշտաց։ Անշուշտ այդ սեռին վեհապոյն մե-ծուհեաց սասջին գասէն է Շուշանիկ. երբ նկա-տենք զնա յետ սրբութեամբ տիկնութեան կե-նաց՝ ուրացողի մը կին գտուած, Թերևս և մայր ուրացող որդւոց։ Ա յս քան նէն հազար մահէ գասնապոյն էր. և բովանդակ այն միջոց ժամա-

[1] Եղիշէ։

նակին՝ յոր անարժան դժնիկ այրիկին՝ Վազգէն՝ ’է դուռն Պարսից էր գացեր, կու հոգար կու հալէր կասկածելով անոր ընելիք չարչն. Թէ անոր՝ և Թէ իր զաւակաց (իրեք մանչ և մէկ գաւեր) հոգւոյն վտանգը մտածելով: Անոր համար երբ մէկն իրեն աւետիս տուաւ, Թէ տէրդ գարձեր ’ի Պարսից՝ ողջ առողջ կու հասնի իր աԹոռը, առաջին հարցմունքն եղաւ, Թէ հոգին ինչպէս է, ողջ է... Դժուարասելի, և աւելի դժուարալուր պատասխան. աւանդ. Վազգէն հիւանդ, օրհասական, մեռած է հոգւով. զի « ի դուռն արքունի երԹեալ » արտոյտ զքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական օրինօքն՝ ’ի չոմայ և ոչ ’ի հարկէ և ’ի բըռնի » նուԹենէ... վանն լկաի և անառակ վարուցն... » երկիր պագանէր կրակի, և ուխտեր ընդ սանայի. և խնդրեր կին պարսիկ ’ի Թագաւորէն. և (նա) հաւատայր նմա, և տայր պինդ » ի-րոյ Տայդ նմա ’ի կնուԹեան. և յանձն առնէր » զկինն առաջին (զՇուշանիկ) և զորդիսն՝ դարձուցանել ’ի մոգուԹեան օրէնս »[1]: Այս կայծակնաշար գոյժն երբ իջաւ յականջ Շուշանկան, գլորեցաւ ընկաւ գետին. և երբ խելք ու շունչ իրեն դարձաւ, վայով և լալով քիչ մը սիրտը պընդելով ժողովեց զաւկընեերը, չատպելով տարաւ յեկեղեցին, ընկաւ տուրբ սեղանոյն դիմաց, զարկաւ Ճակատ ’ի գետին. երբեմն հառաչանօք և երբեմն լուԹեամբ՝ անտրտի Աննայից պէս գետնամած մնաց, միայն Աստուծոյ բողոքելով, և միայն Աստուծով կրնալով դիմանալ: Եկեղեցւոյ պաշտօնեայք ցաւով և ահով կու նայէին, և աւելի եռանդեամբ իրենց բոլոր օրուան պաշտօնները կատարեցին. Շուշանիկ գետ տեղէն չէր շարժած. երեկոյն հասաւ, Աստուծոյ տաճարն

1 Վարք Շուշանկան:

այլ պիտի փակուէր. Շուշանիկ ելաւ սուրբ յա-
տակէն, բայց չդարձաւ իր ապարանքը, այլ ե-
կեղեցւոյ քով տնակ մը քաշուելով, հոն բոլոր
գիշերն այլ Աստուծոյ կու պանգատէր: Իր դրան
քահանային վերջապէս համարձակելով քիչ մը
մխիթարուելեն տուաւ, և ուրիշներէն այլ ատե-
պելով՝ քիչ մը կերակուր առաւ. և գարձեալ
գիշերուան մնացած մասը կեցաւ յաղօթք: Ա-
պիտի սրտի հարուածոց՝ էկայ քան զայս (աղօթք)
յարմարագոյն և զօրագոյն ձար ու ճարակ: Ե-
կրորդ առաւօտեան պաշտօնին այլ կատարելով
յեկեղեցին, գարձեալ սկսաւ դրան քահանային
ողբալ իր զաւակաց վանգը. արդէն իր մէկ հա-
տիկ աղջկին չափահաս ըլլալով, հարկաւ քիչ օ-
րէն մուրացաշատ զանդիւն մը հարս պիտի երթար.
մանչերն այլ ժամանակաւ անպարկեշտ պարսու-
հեաց փեսայանային:

Ուրիշ մխիթարանք չգտնելով առաքինօրէն
կանչեց. «Հատո՛ւ սպառեցաւ ամենայն յոյս յեր-
» կրէ և 'ի մարդկանէ. բայց (ես) ակն կալայց
» Աստուծոյ ամենակալի՝ որ փրկէ զիս. և տայցէ
» ինձ թևս որպէս արծուոյ զի թռուցեալ թևօք
» Հոգւոյն սրբոյ ընդհօք հասանել և դադարել
» յանապատի, ընդունել զօրութիւն 'ի վերին
» խնամոյն, սթափիլ փոքր ինչ 'ի մրրկեալ սըրտ-
» նեղութենէս և'ի վհատութենէս... Եւ ես պատ-
» րաստ եմ տալ զանձն քանտից և կապանաց և
» ամենայն կտտանաց, որով նեղէ զիս ոսրացողն.
» զի Աստուծով կեցից, և մեռայց վասն անուան
» նորա, և ոչ թողից զաւանդութիւն հարցն ի-
» մոց՝ լուսաւորչական Հայոց »:... Ահն յԱստու-
ծոյ խնդրած աղաւնոյ թևերն իջան ի՛ սուան հո-
գւոյն, և ինչուան Ուփրեթայ քանան այլ հասու-
ցին, թեթևութեամբ և ուրախութեամբ սրտին.
որով նախ եւս կանգնեցաւ իբրև մեծ թագուհի

մը՝ ու թագաւորի մը հկրցած յաղթութիւնը ը-
րած ըլլայ:

Այսպէս վեհմեհութեամբ և վսեմահոգութեամբ նըս-
ուած էր, երբ Վազգէնի կոչմանէ նուիրակք ե-
կան, արքունեաց եպիսկոպոսն Յովհան և քահա-
նին եղբայրն՝ մեծ իշխանն Զոչիկ: Պահ մը ապա-
սպանձեցան, կասպուեցան, ակսան լալ. և հազիւ
կրցան կըսկըմալով և ամաչելով քահանային հրա-
էրքը տալ, որ կու կանչէր տիկինը, բայց կ'իմա-
ցընէր այլ որ կ'ուզէ իրեն պէս քրիստոսասէր
տիկին: Այն աուեն մեծն և մեծաց դուստրն և
Թուանեայն՝ Վարդանայ և Սահակայ, տիրական
բերանը բանալով սասուց եպիսկոպոսին. Ան-
վայել սահմանիդ՝ այսպիսի պատգամաբերու-
թիւն, ըսաւ. դու ճշմարտութեան քարոզ, «Թո՛ղ
« զայդ հրամայեա. միաբանել ընդ առն ամբարշտի
» և ուրացողն զԱստուած. և այսպիսեացս լինիս
» թելադիր և մտախոհ: Աւա՛ղ իմոյ Թշուառու-
» թեան, որ և յորդորիչ ինձ ոչ գտաւ »:

Եպիսկոպոսն պատկառեալ և արտասուեալ՝
պատասխանեց. Ճշմարիտ է ըսածդ, բայց եթէ
դու անշարժ մնաս՝ Վազգէն ոչ գքեզ միայն, այլ
և բոլոր իր իշխանութեան քրիստոնեաները պիտի
հալածէ, եկեղեցիները քակէ, բադին կանգնէ.
մինչդեռ հիմա կու խոստանայ մեզի՝ ամենևին
չդպչիլ անոնց, և ոչ զոք սպանել, եթէ դու հա-
ւանիս երթալու իրեն: Ես և տագրդ, Զոչիկ, ե-
կեր եմք՝ ոչ յուրացութիւն հրաւիրելու զքեզ,
այլ յորդորելու գալ երևիլ դէպ ի մեզ, քան մը ը-
սել. վասն զի եթէ չես Աստուծոյ կայ մէկն՝ որ
կարենայ անոր միտքը փոխել և սիրտը շարժել՝
դու ես, տիկին մեր: — « Վազգէնն սրտին սիրել
» ու շարժել՝ միայն Աստուծոյ կարելի է, ըսաւ
» Շուշան. բայց թէ իմ երթալս հարկաւոր կ'երևի
» ձեզի, ահա կ'երթամ, բայց 'ի տառապանս և

» 'ի չարչարանս » : Ըսաւ և արիաբար դարձաւ յատպարանքը. ասկոյն չմոռաւ իր տիկնուԹեան փառազարդ սենեկաց մէջ. այլ առանձին անասկի պէս զառուած կողմ մը քաշուեցաւ, և երեք օր անքուն անկերակուր, լալու և աղօԹքի կեցաւ:

Երրորդ իրիկուն Վազգէն պատրաստել տուաւ մեծահաց ընԹրեաց տաճարը. ջահերն վառեցան, ամենքն իրենց բազմականը բռնեցին, մայն Շուշան դչխոյին գահոյքը պարապ էր. բդեշխեն խաբեց զՋոլիկ որ բռնադատէ բերէ զբդեշխուհին. յետ երկար աղաչանաց հազիւ հաւանեցաւ Շուշան. իբրև նոր ՑուդիԹ մը, այլ Ցխտւսի հեզուԹեամբն և մեծագոյն վեհմուԹեամբ գինուած՝ երԹալու նոր Հոլոփեռնեսայ ընԹրկիքը. չընտրեց անոր պէս իր պերճագոյն զարդերը, և ոչ իսկ առնոյմէ շատ փայլուն բնական գեղեցկուԹիւնը երևցընել ուզեց. այլ չափաւոր ձևով մը պարսկաձ, մայն ծածուկ զարդ մը, չքնաղ լանջապանակ մը, անգին կնիք մը դրաւ ծոցը, որ էր իր սուրբ հօրմայապուն ձեռագիրը աւետարանին, և այնպէս մտաւ 'ի տաճարն:. Սիրացան սարսեցան պահ մը ամեն աեսողք չուզելով անգամ, մինչև Ջանացին իրենք զիրենք զապել, և խօսքով ու կերակրով այլայլուԹիւններն ծածկել. իսկ Շուշան՝ իբրև երկնաճաշակ յաւերժահարսն, իր բարձր գահոյեց վրայ բազմած, անիսօս և անկերակուր կեցաւ, և ոչ իսկ ՑուդիԹայ պէս իր նաժըշտաց մախաղէն փոխինդ մը ծամելով. այլ իբրև պնաԹեր լուռ լեզուաւ և մեծաբարբառ երեսներով՝ երբեմն կուռ մարէր երբեմն կուռ վառէր, աչեի ակնախտիղ քան զաումնային ՋահափայլուԹիւն տաճարին: — Նոր աեսակ անունի ընԹրկիք մ'եղաւ այն օր. Վազգէն սրտէն վազրի պէս կուռ մունչէր, ինք զինք կ'ուտէր և չէր կրնար ձիկ հանել. Շուշան իր դչխոյն՝ գիմացն բազմած՝ լուռ

Թեամբ անդադար յանդիմանութեան տեղատա-
րափ մը կու Թափէր անոր և համախոհից վրայ.
մինչև փութացան ընթրիքը չերկընցնել եղնել, և
ամէնքը իրենց տեղը քաշուեցան: Նոյնպէս ըրաւ
և Շուշանիկ:

## Զ

Իսկ քաջն Վազգէն՝ այն կըլլած Թուռնահամ
պատահարները չմարսած, շրթունքը խածնելով,
և Թողլով իր Պարսկաստանէն բերած շամբուշ
բամբչիկն այլ, կու փնտռէր զՇուշան՝ անոր սրըտ
կապանաց մէջ. ոչ իբրև այն օրերը՝ որ իր բարե-
չեշտակ հայրն Աշուշա բդեշխ՝ մեռելիմ բարե-
կամն Վարդանայ՝ փեսայացոյց զինքը Թագաւո-
րական փառաք Մամիկոնէից օրհորդին. և ոչ իբ-
րև փքացեալ հսկայ մը՝ արեգնափայլ առագաստ
մտնելով, այլ իբրև լախտաւոր անճոռնի Հերա-
կլէս, կամ կոպիտ գրաստավար մը, հաստ բրով
մը հանդիպեցաւ հրեշտակափայլ հարսին, երբ
ծառայից ձեռքով՝ գոնել և բանի բերել տուաւ
զինա. և փոխանակ տարտչահարհիկ պարզևաց, փո-
խանակ պարսկային ծոցէն բերած բասոց և մար-
գարտաց, անհնարին ծեծուփեթ Թափեց վրան,
անխնայ և անխիղճ. քարշանք մազերու և պար-
կեշտ զգեստուցն, բանցի աքացի հարուածք...
(ամօթ, զզուանք մարդկութեան). մինչև յեան
ծառայքն անգամ զայնելով և ցաւելով՝ վազեցին
առ Ջոջիկ, որ փութացաւ եկաւ Ջանաց գոցել
այդ խայտառակ տեսարանը, ազատել զանմեղ
աղաւնին դաժան վարուժանին ձեռքէն: Բայց
ձար չէղաւ. գազանացեալ մարդն՝ իր եղբայրն
այլ սկսաւ աքացել քշել, և իբրև փայտահար
յանտառի կ'իջեցներ հարուածները իր ոտքը ըն-
կած անձին վրայ, հայհոյելով զնա և անոր հայ-

ըը, զհաւատքն այլ, զԱստուած այլ. մինչև ինքն յօգնելով և յուզելով մեզ հաւատացով մ՚այլ ձեռքին տակ սպաննել իր առաջին կենակիցը, հրամայեց որ քարշեն տանին ձգեն ուսկից որ բերին:

Երկրորդ առտուն ինքնին գնաց հոն, տեսնելու իր երեկուան թափած կարկուտին արգասիքը: — Շնորհապետն Շուշան չախչախեալ էր, կզակները կոտրտած, աչուքները արիւնալից. այլ ոչ բոլորովին մինչեւ. դեռ ողջ էր: Հրամեց վազդէն որ հոն պահեն զինա զգուշութեամբ, և չթողուն որ քովը մարդ երթայ. ուրիշ բան այլ չտան իրեն՝ բայց միայն գարեհաց և ջուր, ինչուան որ մեռնի:... Իրմէ վերջը եկաւ հաւատարիմ դրանապերէցն, իր աստուածահրաման պարտքն ընելու, չվախենալով բռնաւորէն, ուսկից պահապանքն անգամ գանելով՝ Թոլ տուին քահանային. որ երբ մտաւ և այնպէս արիւնլուայ գետին փռուած տրորած տեսաւ տիկինը, պաշտօնը մոռացաւ, սկսաւ տղու պէս լալ. մինչև ինքն քաջալրտ խոստովանողն Քրիստոսի սկսաւ՝ փոխանակ ընդունելու՝ տալ վախճարութիւն. « Մի՛ » լար, ասէր, 'ի վերայ իմ. զի առանց հանդիսի և » չարչարանաց՝ ոչ արդարոյ առաջի Աստուծոյ » ծոյ ամենայն մարդ. և ոչ ընտրեալ փրկչին՝ քան » նէ Թոլու զոք առանց ողորմութեան որք յոտ » սանն 'ի նա »: Ապա քահանայն այլ զինա միխիթարելով՝ ազաչեց որ քիչ մը ուտելու բան առնու. Շուշանիկ հազիւ կրցաւ բերանը բան դնել. այնչափ ուժէ ընկած էր:

Գիշեր մը ամիս այսպէս անցաւ. վասն զի Վազդէն քաղաքէն հեռացեր էր. ուր նորէն դարձաւ աճապարանօք, լսելով որ երկրին վերայ Թշնամի կու գայ. ապահովութեան համար տղաքը Վրաստանի կամ Կովկասու ամուր կողմերը ղրկելու. ղեց. Կուր գետէն անցնելու առեն տղոց մէկն դի-

պատածով կամ դաւադրութեամբ ընկաւ կո-
րաւ, և մեծ սուգ պատճառեց բոլոր երկրին.
միայն Շուշան էր՝ որ մօր պէս յաւերժաւ, այլ
քրիստոնէի պէս ուրախացաւ՝ որ աղայն ժամա-
նակաւոր մահուամբ յաւիտենական մահուանէ
ազատեցաւ, սուրբ հաւատքը ջուրցած մեռաւ:
Իսկ հայրն Վազգէն հեթանոսօրէն անյուսաբար
կ'ողբար չարաչար. մինչև իր իշխաններէն զատ՝
Վրաց Թագաւորն և Պարսից կողմանէ դրուած
մարզպանն այլ եկան զինքը մխիթարելու: Իսկ
անզգայն խորամանկութեւն քանեցընելով՝ այն
առեն հեռացուց զՇուշան'ի պալատէն, և հրամ-
մեց որ երթայ եպիսկոպոսին ապարանքը՝ եկեղե-
ցւոյն մօտ: Մեծ ուրախութեւն և բաղդ սեպեց
զայս Շուշանիկ, և արդէն երկընչէն ազատած ա-
պեւով զինքը՝ իր աշխարհաձև զգեստն այլ փո-
խեց հոն, և հաւատաւորի խոշոր զգեստն հագաւ
և օրհնեցաւ. կրկին նուիրական կենաք մեծ զուար-
թութեամբ անդադար աղօթից և բարեգործու-
թեան կու հեռևէր, ամենայն տեսողաց սիրելի և
զարմանալի և գրեթէ պաշտելի ըլլալով: Ա՛յս
ատեն հրկրին բոլոբոքեց Վազգէնի սիրտը դիւա-
հանչ կատաղութեամբ. և երբ մեծամեծ հիւրերն
քովէն գացին՝ յետ կանչեց Շուշան, և պատուէր
խաւրեց՝ որ Թողու այդ ձևը և կերպը, և դառնայ
գայ հնազանդի իրեն ու տիկնութեւնը վայելէ:
Իսկ մեծահոգի նահատակն բացէ՛ի բաց մերժեց
ամպարշտին հրաւէրքը. և այսուհետև մեր մէջ
կապ չկայ ըսաւ, վասն զի դու Թողեր զԿրիստոս,
իսկ ես այլ աւելի կատուեցայ անոր հետ: Ա՛յս
պատգամին հետ ելկեց դարձուց Վազգէնի իր
տիկնութեան նշաններըը, զարդերը, և ինչ որ ան-
կէ ունեցեր էր. և գիանալով անոր կատղիլը՝
պատգամը վերջացուց ըսել տալով. Թէ ինչ որ
կ'ուզես ըրէ, «Ես պատրաստ եմ մեռանիլ, քան

» Թէ անցանել զաւանդութեամբն հարցն իմոց» :
Ահա արդար նախատանաց այլ չհամբերելով անարդար մարդակերպն, գարձեալ իր գիւցազնական լախտն ու բկրն առած՝ բազմութեամբ ծառայից վազեց խեղճի պէս... : Երկինք կայծակները բռնեցին, երբ առանց սարսափելու մըտաւ յեկեղեցին, լսելով որ հոն է Շուշան և անկից չհեռանար. չպատկառելով ոչ յԱստուծոյ և ոչ 'ի մարդկանէ՝ սկսաւ սրբազան տաճարին մէջ այլ ծեծուփետ քաշել աղօթող տիկնոջը. տակացան գանեցան տեսողք, գոյն առին գոյն տուին, բայց չհամարձակեցան բան մ'ընել. միայն Ատուծոյ պաշտօնեային, քահանայ մը՝ համարձակեցաւ յանդիմանելու. Ի՞նչ սրտով, ի՞նչ երեսաբանութեամբ, լաւ, այդպէս չարաչար կու տանջես տիկինը : Անօրէն մոլին վերուց բերը՝ իջուց տատիկ կոփ մը քահանային վրայ այլ... : Երկինք դարձեալ համբերեցին.. նակ ժողովուրդն այս երկու արբասիզծ յանդգնութիւնները տեսնելով, սկսաւ լալ և յերկին բողոքել. Վազգէն՝ անմեղ գառանց փարախի մէջ սոված գայլոյ պէս ընկած, որու որ պատահէր՝ զարնելով հրելով, փութացաւ իր ծառայից օգնութեամբ քարշել զՇուշան, հանել յեկեղեցւոյն, և նոյնպէս գեանաքարշ ընդ քար և ընդ տիզմ զգեստաբզկիկ արիւնլուայ ձգել յատարանքը. ուր մնացած ուժն այլ թափեց խեղճին վրայ՝ ծեծելով և զգեստները պատառտելով առաջինէն աւելի. և այնպէս կիսամեռ թողուց. Զոյնիկ այլ հան չէր որ կանար աչառել հարսը :

Յետ քանի մ'անգամ այսպիսի սիգգալի հանդիսից՝ Վազգէն հարկադրած ըլլալով իր երկրէն դուրս Հոնաց կոմսը երթալու՝ վերջին դիւսական և անելու վախճն այլ թափեց Շուշանիկեան վրայ. անձամբ բերելով զնա յՈւռիկէ՝ և այն երեքերեք-

կաթեան շլթանեըը անցընել տալով ոտից, ձեռաց և վզին, անլուր լըթուեամբ իր կնիքն այլ անոնց վրայ զարկաւ, որ չհամարձակի մարդ մոտենալ և քակել. և այս յետին պատուն ընելով իր ամուսնոյն՝ վերջին բարեւն այլ տուաւ հայհոյելով անոր նախանիքը և տուրբ կրօնքը: — Իակ երանուհին այսպիսի կատանաց մէջ այլ իր վեմական սրտովն նախ գոհացաւ զԱատուծոյ, և ապա ուրախ եմ ըսաւ՝ Վազգենի, որ զիս Աստուծոյ սիրոյն համար այսպիսի կապանաց արժանաւորեցիր, որով քիչ տաեննէն յաւիտենական զատուելեան պիտի հասնիմ. բայց քեզ վայ և ափսոս՝ որ ատոր հակառակ կապանք և հատուցմունք պիտի ընդունիս Աստուծոյ արդար դատաստանէն: — Ան արդար և ահաւոր դատաստանին վճիռն էր Շուշանիկան բերնէն ելածն. որ և այնպէս ազդու՝ այլ անօգուտ՝ զարկաւ Վազգենի սրտին, որ չկարաց այս անգամ պատասխանատալ. և յուդայեան յուսահատութեամբ մը հեռացաւ:

Երբոր վիշապին հետը հոտը ծածկուեցաւ, երբեք օրէն հաւատարիմ դրանեըէցն՝ որ ձագակոյտ Թռչնոց պէս ծառէ ծառ դարէ դար կու դիմաէր իր խնամոց կարօտը, մտաբ բանալ. այս անգամ ուրիշ բան չկար ըսելու, բայց ընկնալ պատնել տիկնոջն կարծր կապանքները և համարձակ երանի տալ անոր: Իակ առաքինի և անմոռանալի դուստրն Վարդանայ, միայն մէկ երանուհին մ'ունէր, ի'ըսէր, որ է այս երկաթներս, որ զիս կու սրբեն այնպիսի մարդու կենակից ըլլալէս, և անոր զաւակ ընծայելէս. աստիք ըլլան վկայ աստղն երկնից և երկրի՝ որ իմ յօժար կամօքս Թողուի ինչ որ աշխարհս ինծի կրնար տալ, և հանդերձելոյ համար յանձն առի այս ցաւերս, որով յուսամ Աստուծոյ ողորմութեան և իր սրբոցը

10249926



# Է

Ա յսպէս կեցաւ, այսպէս ծամբերեց Շուշան երկայն տարիներ Ուփրեթայ գետակին մէջ. միայն յետ շատ ալաչանաց Զօլկայ՝ հազիւ զինքզինք վազգէն առուր վզին երկաթը վերցընել տալու. որով կրնար տուրքն քիչ մը հանգչեցընել գլուխը կաշխէ բարձի մը վրայ. բայց զայն այլ խնայելով կ'ընէր. վասն զի ինքն այլ սկսաւ անգթանալ իր վրայ, իբրև թէ արտաքին ցաւն և կսկիծը կան չըլլային. քունն այլ կու կարճեցընէր, որ աւելի ժամանակ ունենայ ալօթելու. գարէհացին և ջուրն այլ շատ կու սեպէր, և ամբողջ շաբաթներ ծոմ կ'անցընէր, միայն շաբաթ և կիրակի օր քիչ մը բան ծամելով յետ տուրքը հալորգուելէ, զոր հաւատարիմ դրանեըէցն անխափան կու բերէր. և կամաց կամաց ուրիշներն այլ համարձակելով սկսան գալ, աղօթք խրատ և օրհնուելիքն ուզելու, ամանք այլ առողջուելիքն խնդրելու, և գան այլ ուզածնին:

Սրբուելեան, ճգնուելեան ու հրաշից համբաւն սկսաւ տարածուիլ ջրոս գին. լսեց ինչուան Ճորայ պահակէն՝ Լիժականջ Վազգէնն այլ. և յետ ջրոս տարւոյ գառնալով իր երկիրը, առաջին հոգն եղաւ իր բանտարկեալը քննելն. և իմանալով որ մարդ մուած է նէրս, պահապանաց մահուան ծեծ մը տալ տուաւ. և հրամեց առաջինէն աւելի խըստուելիւն ընել ու չարչարել զտուրքը: Բայց այնչափ երկար առեղուան փորձով սղէկ գիտնալով որ չարչարանք օգուտ մը չունին, ուզեց կախարդուելեամբ ուզածին հասնիլ, նման Սաւուղայ. և տարի մը ջատուկ վհուկ կնկան ձեռքով աշխատեալով՝ չիկրցաւ բան մը շահիլ: Ամենէն զօրաւորն Տնարքն և վհուժն՝ որ յերեսի Շուշանկայ սկսաւ

վեր ՚ի վայր պիտի ընէր, ամենէն եաքը Թոլուց. — ոտքերը ուրացընել, իրեն պէս կրակապաշտ ընել: Ահա դառն գոյժս՝ ուսկից միայն այնքան առեն կու գոլար մայրն ալէգուշտ և քարեպաշտ, իր վեց տարուան երկաթներէն աւելի կորուկ եղաւ՝ կիսամաշ կեանքը բոլորովին մաշեցընելու: Ահնուհետև աշխարհիս վրայ արտի կէտ մը չունէր, և ոչ յանկարծական յոյս մը. վշտաք և ցաւօք շատ առաւել քան իր ընկերակից առաքինի համբերող կանայքը, անոնց՝ գոնէ ուշ քայց վերջապէս հասնող վրէժխարուճիւնն այլ չունեցաւ. յիրաւի ոչքաց անոնց համար արտասուաւէտ վիպասանն, Թէ «Բազում ձմերաց հալեցան սառնաշունչ մանկք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. » տեսին և խնդացին կենցաղասէրք մարդիկ. և նո- » քա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն » իւրեանց». — սակայն յետ երկար չրջանաց՝ վերջ ունեցան այն բազում ձմերունքն այլ. և երբ յետ իբր տասներեք տարեաց անգամ մ՚այլ եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունքն, ընդ կենցաղասէրք մարդկան՝ խնդացին և ձիացին հաւմբերող տիկնայքն այլ. վասն զի վերջապէս տեսան «զանձկալիսն իւրեանց... զցանկալի գեղ երե- » ստց նոցա»: Ահա, ահ, միայն Շուշանկան չհասաւ գարուն. չեկաւ ծիծառն, չերևցաւ անձկալին. և ոչ «ծաղիկք գարնանային իշատակեցին » զպատկասէրս ամուսին»: Շուշանիկ վեց եօթն տարի ոչ կանաչ գետնին ծոցէն ծլած ծաղիկ մը տեսաւ, և ոչ ծաղկի տեսութեամբ այլ կրնար անոնց պէս ցանկալի իշատակ մը արթընցընել. իր ծաղիկն էր փուշ վշտաց, իշատակն՝ ուրացող մը Ահաուծոյ և ամուսնոյ: Անոնց՝ տուն տեղն գարձեալ նորոգեցաւ, մաքրեցան փոշոտեալ և ծխատեալ սրահք և սրակապանք նորեկ հարսանեաց, վերցուեցան տարտի ոտայնք առագաս-

տաց նոցա, կանգնեցան բարձրագահք տաճա-
րացն, և ուղղեցան սպասք երախանաց նոցա.
գարձեալ գալարացան բուրաստանք ծաղկոցաց
նոցա և որթք գինեբերք ծաղկեալ եռուն զհոտս
իւրեանց. և սիրելիք հանդիպեցան իրարու ընդ ու-
ռեներաւ և ընդ նռնենեաւ: Իսկ Շուշանայ, ցորեկ,
գիշեր, ամառ և ձմեռ միակերպ խաւար մը, կսկիծ
մը, տխրութիւն մ'էր, հալումաշ յիշատակներ.
որոց երկընցած աներևոյթ թելը՝ միայն մահն ալ-
տի կարէր: Եւ արդէն մօտեցեր էր մահուան ցուրտ
ակրան՝ այն մարգարտաշարը ոսկեօղ սուրբ կե-
նաց կապին...:

## Ը

Զարչարանաց եօթնեերորդ տարին խոնարհե-
ցաւ ընորհակաթ Շուշանկան գլուխն. լուսածա-
րաւ աչքերուն դիմաց քոլորովին գոցուեցաւ աշ-
խարհիս վարագոյրն. հանդերձեալ լոյսն սկսաւ
զհոգին հրաւիրել:... Հուչակեցաւ մահաբեր հի-
ւանդութիւնն. ամեն լսող երանի կուտար անոր՝
որ կարենար տեսնելու այն հրաշալի նահատակը.
բայց ամենքն չուներցան այս բաղդը. իշխանք և ազ-
նուականք Վրաց և մերձաւոր Հայոց՝ փութա-
ցան յետին յարգանք մը մատուցանել իրենց քա-
աշխարհի գժբաղդ դշխոյին. ամենէն առաջ հա-
սաւ բարեաւէրն Զոլխիկ՝ իր կնոջ հետ մեկտեղ. ըն-
կաւ նախ երկրպագեց Շուշանկայ աղօթանոցին
վրայի խաչափայտին. ապա սուրբ տիկնոջ ոտքը
ընկաւ, զարկաւ գլուխը գետնի, լացաւ շատ. օր-
հնութիւն և մեղացը թողութիւն խնդրեց, և հա-
զար կատր եղած արտով հեռեկանօք բանտին պա-
տերը Թնդացընելով յետ գարձաւ: Եկաւ Սա-
մուէլ եպիսկոպոսապետն Վրաց Մծխիթայ մայ-
րաքաղաքէն, հանդերձ Յուրտաւայ գրան Յով-

հան եպիսկոպոսով և քահանայիւք, որք շատ անգամ եկեր և մխիթարեր էին զտուրըը. և առաջեալ այն հաւատարիմ դշխոյին դրանէրէց քահանայն որ ստուգիւ անոր մեծ և տուրբ սրտին խորհրդոյն կրնցը հաղորդ էր, և Աատուծոյ և իր աղախինէն՝ շատ երկնաւոր վարձուց արժանի էր, 'ի փոխարէն այն զովարար մխիթարական բաժակաց՝ զոր բանիւ աւետարանին ընծայեց իր տիկնոջ և հոգևոր դստեր: Անոնց ամենուն այլ՝ աիկինն արտառուշ ընդհակառակեցաւ, իբրև իրեն ծնողաց և դայեկաց. ընդհակառակ եղաւ և իր յետին այցելութեան եկող մեծաց և մեծուհեաց և հասարակ ժողովրդեան. աղօթեց և աղօթք խնդրեց. օրհնեց և օրհնուեցաւ:...

Ամեն մարդկային օրէնք կատարեցան. մնաց արդեօք ժառանգութեան խնդիրն. — յայտնի է որ տուրբն իր խաչէն և աւետարանէն զատ կտակելու բան չունէր. բայց մերձակայք և ժողովուրդն՝ նախանձելի և ապահելի բաներ կու տեսնէին. ամենքն մեկմեկէ աւելի կանչէին. Երկաթնեղէդ կտորիկ մը ինձի, շղթանեղէդ օղակ մը, խշտեկէդ յիշատակ մը ինձի հանէ, տուրբ տիկին:... Իսկ տուրբն, արդարև տուրբ, խոնարհ և հեզ, պատասխանեց մտրմըրած ձայնովը. Ես արժանի չեմ այդպիսի խնդիրներու. « Բայց կայք » Աատուծոյ եղիցին, արարէք որպէս և կամիք ». և յետին հրաժարական՝ ամենուն առհասարակ օրհնութիւն տալով ըսաւ. « Ամենա- » ւին Քրիստոս լի արասցէ զձեզ հոգևոր օրհնութեամբ »: Ապա բազմութիւնը հեռացընելով, ինքն այլ իր մէկ հատիկ մնացած երկրիս վրայի բաղձանքը կատկեց եպիսկոպոսապետին և անոր ուխտին. սակայն դեռ զայն այլ պէտք էր խոնարհութեամբ մը՝ յանձնելով անոնց կամաց. « Եթէ » արժանի կու սեպէք զիս խնդրոյս, տարէք մար-

» Ինա թաղեցէք այն տեղ՝ ուր որ նախ առաջին
» զիս քարշեցին »: Ահա միայն եղաւ կատակ և փա-
փագ Մ. Շուշանեան. հոն թաղուիլ մարմինը՝ ուր
որ զահիճներն, զփառք, զաշխարհ և զվայելս
կորոյս այն մարմինն. և քարշանք, հարուածք,
ջարբարանք և վիշտք սկսան՝ վասն հաւատոց և
սիրոյն Աստուծոյ, և հոգևոր սիրելեաց հան-
դէպք պատրաստուեցան: Վարդանածին դշխոյն
ինչուան՝ ի մահ իր հայրենի մեծապարտութիւնը
պահել էր, հոգւոյն ամենայն վեհապոյն շնորհաց
հետ:

Ցետ այսորիկ ամփոփելով զինքն յինքեան՝ ար-
ձակեց վերջին ձայն մը գոչմանեան առ Աստուած,
որ արժանի ըրաւ զինքն այդ ջարբարակիր նահա-
տակութեան, և աղաչելով ընդունել իր կարօ-
տած հարց և որբոց քով, խաչակնքելով աւան-
դեց հեզաբար զհոգին. որոյ նման հզօր և պայ-
ծառ՝ շատ քիչ ճանաչուած է յաշխարհի՝ ակա-
նատես քնութեան մը մէջ:

Բարեպաշտօն կանայք մեծ պատուով լուացին
մաքրեցին պարկեշտ և մաշած մարմինը, աւելի
աք արտասուքներով քան անուշահոտ ջուրերով.
յետոյ երկու եպիսկոպոսունքն և քահանայք այլ
ինկով և խունկով զսպեցին. և բազմութեամբ
ժողովրդոց, համարձակ պաշտօնով, իբրև նորէն
Գուգարաց դշխոյն դարձընելով՝ ի գան, ՝ի քար-
ձրադոյն գահ, հանդուցին Ցուրատաւայ կաթո-
ղիկէին մէջ. երեկոյի և գիշերի պաշտօնը կատա-
րեցին. երկրորդ օրն՝ հանգստեան պատարագ
իբրև սրբոց ծնանդէս: Ապա վերցընելով սըր-
բահոտ մարմինը՝ տարին գրին իր փափագած տե-
ղը, հոն՝ « ուսոի զառաջինն քարշեցին ». և ուս-
ոի կու յուսայ տուրքն՝ յետ դադրելու բոլոր
կենցաղոյս ձմերուան, ՝ի բանալ քրիստոսանուրջ
գարնան նորոյ երկրի, պայծառ ծաղիկ յարու-

Թեան վերադառնալ վերադարձնել ընդ առաջ երկնաւոր Թագաւորին, և գրկել իսաւնիլ անբաժանապէս իր նախափառաւորեալ հոգւոյն հետ:

Այն ընարեալ և սրբեալ տեղն եղաւ ժողովատեղի բարեպաշտ անձանց. Հայոց և Վրաց առանի ուխտատեղեաց մէկն. ուր և յետ 500 ամաց՝ մեր պատմչաց մէկն այլ, Սեբաստիոյ եպիսկոպոս, վկայէ, Թէ « դեռ ևս կան տեղիք չարչարանաց և մահուան դչխոյին, յետ տարիներու՝ պատերազմի մէջ բռնեց զուրացող բդեշխն՝ Գուգարաց արևմտեան սահմաններուն վրայ, և ողջ ողջ կտոր կտոր ընել տալով, կտորներն այլ ծառոց վրայ կախեց 'ի նշաւակ տեսողաց և 'ի կերակուր գիշահաւուց. Պարսից Թագաւորին այլ իմացընելով ինչ բանի համար ընեն՝ անտեղեակ եղաւ:

## Թ

Եթէ դու այլ բաղդ ունենաս, Հայկակ, օր մը համբոյր տալ այն սրբութեան տեղեաց, մի՛ մոռանար անգամ մ'այլ Բողնեաց գետն 'ի վեր երթալով՝ հազարամեայ աւերակաց մէջ փնտռել Ուխրեթայ քուխճաբոյն բերդին մամռապատ ծնաց ցորդները. նորոգէ մտօքդ, ոչ այնքան գնութեան կան շէնքը, որքան անոր մէջ հանդիսացեալ զարմանութին. — տես անգամ մ'այլ՝ այն անուանդ,

1 Պատմիչ վարուց Շուշանկան, որ եթէ չէ իր դրաներէցն կամ Յովհան եպիսկոպոսն, ուրիշ ականատես ժամանակակից մը պիտի ըլլայ, Վազգենի վրայ բան մը չըսեր յետ անոր որդւոյքը ուրացընելուն. բայց յետագայ պատմիչք Վրաց կու հաւատան՝ որ իրենց Թագաւորն 'ի վճէժ անպարտ չարչարանաց և մահուան դչխոյին, յետ տարիներու՝ պատերազմի մէջ բռնեց զուրացող բդեշխն՝ Գուգարաց արևմտեան սահմաններուն վրայ, և ողջ ողջ կտոր կտոր ընել տալով, կտորներն այլ ծառոց վրայ կախեց 'ի նշաւակ տեսողաց և 'ի կերակուր գիշահաւուց. Պարսից Թագաւորին այլ իմացընելով ինչ բանի համար ընեն՝ անտեղեակ եղաւ:

բնութեամբ, արբուութեամբ, Շուշանուվարդը. — տես զանիկ մէկ մ'իր փառաց արքունեաց գահոց մէջ, մէկ մ'այլ երեքերկաթեան կապանաց, որդանց և ձձեաց մէջ, անլոյս, անկրակ, անմխիթար Թաղած, յաղբիւս ընկած մարգարտի պէս. — համրէ՛ պնորը վեցամեայ վշտաց, մանաւանդ թէ ըստ հին պատմըչին ազգման՝ զնուրաքանչիւր «զտաչ» րեաց կամ զամաց կամ զշաբաթուց կամ զաւուրց և կամ զժամուց չարչարանս». — նկատէ այն մեծահոգի ծովատարած սրտին անդադար Թաւալած ալեկոծուր ալիքները. — և ապա դարձիր նայէ վրադ:...

Ո՛վ ժիգոհ կենցաղասէր մարդիկ. ով անհամբեր դիւրանդիր տիկնայք. ով փոքրոգի լծակարծք Քրիստոսի. որք այդչափ գանգատիք ձեր կենաց և կրից վայ. գնացէ՛ք 'ի բերդն Ոսկրեթայ և տեսէ՛ք զ'ՇՈՒՇԱՆՆ-ՎԱՐԴԵՆԻ:

10249926



# ԱԾՈՑ Ա

## ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

*Մայիս 27.*

Ա

*Հայոցիս օրացուցական այսօր թ դարուն քա-
նի մը անձանց արքական կիշատակին մէջ՝ վեհա-
գոյն կու նշանակէ զ'ԱՇՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ: Հազա-
րամեան դար մը մեզմէ առաջ՝ նշանաւոր կէտ մ'է
մեր հայրենեաց պատմութեան մէջ. մեծ յեղա-
փոխութեան մը միջոց, որ երկայն և ծանր տա-
րիներ քշեց, բայց յաջող վախճան և արդասիք
ունեցաւ. յայտ է թէ ոչ բաղդով, հապա ջան-
քով, աշխատութեամբ, չափով ու թռւռվ. այ-
սինքն խելքով, իմաստութեամբ, արիութեամբ,
առաքինութեամբ: 450 տարիէ վեր քաղաքական
մութենէ ձեղքած քայքայած ազգ մը, և Հայու
պէս ազգ, որ իրեք աշխարհակալ զօրաւոր տէ-
րութեանց, Պարսից, Յունաց և Արաբաց, հա-
զարամէկ փորձանքներէն անցեր էր տաշտուելով
ու մաշտուելով, և դեռ կու ութար, մանաւանդ այդ
եռքի ազգին ձիրանաց տակ. այդպիսի ազգ մը՝
կերպով մը դարձեալ մէկ քաղաքական ազգային*

գլխու մը միանալու, և այն գլխոյն վրայ այլ արքունի փառափայլ թագ մը դնելու, և յետ այնքան անյոյս գարուց՝ Հայոց արքայ ըլլալու, կամ ծածուկ աստուածային հրաշք մը պէտք էր, կամ յայտնի ԱՇՈՏ մը՝ այն ծածուկ հրաշքը իր քակ կաց, մատց և սրտին մէջ ամփոփած, զոր և ըստ ժամանակին յերևան կու հաներ: Յիրաւի սա բազմաց անկարելին նաև անկարծելին՝ ի գլուխ առաւ, հաստատեց, 30 տարի աշխատելով. ոչ այնքան սրով և աղեղամբ, (թէ և նոյն տարինե րուն մէջ ինքն էր Հայ հայրենեաց առաջին զինակիրն և անձնապահն այլ), որքան խոհեմ մտքովն, և Թերևս անկէ այլ աւելի՝ զգայուն և առատ սրտովն, որոց դէմ չկրցան կենալ ոչ արտաքսական զանուածներն, ոչ բիւզանդականներն, և ոչ ազգային նախանձ և ինքնակամներն. ամենքն այլ հաճեցան հաւանեցան սիրեցին զԱշոտ: Ամիրապետն Բաղատաց՝ անոր յանձնեց բոլոր Աղրպատականի, Մէյջափետաց և Կովկաս լերանց միջոց եղած երկրին վերակացութիւնը, և խաղաղութեան պատասխանատու ըլլալը. կայսրն Կ.Պօլսոյ՝ ի մէջ ամենայն Թագաւորաց և իշխանաց ժամանակին՝ որոց հետ վերաբերութիւն ունէր, ըստ մեծութեան՝ յետ խալիփային՝ զԱշոտ կու ճանչնար մեծատպատիւ ազգիչխան, և ըստ սիրոյ՝ առաջին Որդէ կոչելով զնա իր Թղթոց մէջ. իսկ ազգային իշխանք՝ նաև անկախք՝ զնա ճանաչէին նախիշխան և միայն Թագաւոր:

Ազգի մընաւ գլխատեա ըլլալ կամ ազգ մը կանգնել յինքնիշխանութիւն՝ մեծ յաջողութիւն կամ մեծ ձարտարութիւն կու պահանջէ. և ի հարկէ այս ձիրքերս ունէին որոնք որ այսպիսի գործ կատարեցին. այսպէս և մեր Աշոտն: Բայց երեննըման գժուար պարագայից մէջ ըլլալով և այնքան խոհեմութեամբ, զգաստութեամբ և աշխատաս-

10249926



յոյուԹեամբ վարուոյ՝ շատ քիչ կու գանուին ազգայարոյց և ազգակեցոյց ըստած անձանց մէջ այլ։ Թողլով օտար ազգաց պատմուԹիւնները, մեր պատմուԹեան մէջ այլ Աշոտէն առաջ և վերջը քանի մը անգամ գիտենք՝ Հայոց ինքնագլխուԹիւնին կորուսանելը և նորէն ձեռք բերելը, ի ձեռն քաջ և հայրենասէր և երբեմն և փառասէր անձանց. քիչ շատ ծանօԹ են Հայկն, Ամամ, Պարոյր, Տիգրան, Զահրատ, Վաղարշակ, Տրդատ, և յետ Աշոտոյ՝ Գագիկ, Ռուբէն, Լևոն. Թողունք աւելի անծանօԹները, որ ի զանազան ժամանակ և տեղի տիրապետ

թեւտութիւնն, ընտրոզաց այլ մեծ առաքինութիւն. որ գժբաղդաբար ասկաւազիւտ եղած է այնպիսի ազգի մը մէջ, ուրուն բնական երկրին ձևն ու գերքը, ձորերն, լեռներն ու գետերն անգամ՝ պատուիրեն անկախութիւն մը կ'ազդեն բնակչացը։ Հոս անկարելի է ենթադրել մեր հայրապարտեայ իշխանաց և նախարարաց վրայ այնպիսի առաքինութիւն, առանց ենթադրելու Ա. ջոտոյ մեծագոյն կատարելութիւնը. և յերեսի ով որ մեր վերոյհարգեալ ազգայ արոյց տիրապետաց վարքը ուշի ուշով քննէ, կարծեմ չկրնար գտնել առաքինի մը իրեւ զԱշոտ. միայն Վասպուրականի կրնայ այս պատուհաս արժանի սեպուիլ, բայց իր օտար ծագումը, և բաղդով Թագաւոր ըլլալն (Թողունք դիցապաշտութիւնն այլ), մեզի այնչափ սիրելի չեն ընծայեր զինքը, որչափ երախտաւոր մեր հին հարանց պատմութիւնը գտնել և պահել տալուն համար։ Երջանիկ նա, մանաւանդ թէ մենք, որ գտուեցաւ այն առեն իր և մեր բաղդին յարմար՝ Աբաս Կաթինա մը, որ մեր Հայկազանց պատմութեան պատճառաւ՝ զինքն այլ անմահացուց. ինչպէս որ իրմէ եաքը անոր գրուածքը առաջին կարդացող և նորոգողն Ագաթանգեղոս այլ անմահացուց իր ժամանակի ազգակեցոյց Տրդատը. իսկ անոր վերջին կարդացող և հայերէն հաւատքոյն՝ Մովսէս Խորենացին՝ երբ վասպուրշակայ Թագին և ցեղին ընկնալը և վերջնալը լալոտ աչօք տեսաւ, զոր կրնար անմահացընել... — զբացագոչեն Սահակ, զնախահայրն Ա. ջոտոյ. « Անմահ 'ի յիշատակ Թողուլ քեզ զայդ » (Պատմութիւն Հայոց) և որ զինի քո գալոց » են ազգք »։ Մար Աբաս, Ագաթանգեղոս, Մովսէս, երեք անուան անձանց համար գրելով, թերևս անունդ ասելն զերեզք, երեսնդ այլ ասելն անմահացուցին զազգս Հայոց...։

Բայց վԱշոտ ոմվ անհամհատկնէ: Զուռնէր, էքըսանա՛ւ ինքն այլ Աբաս մը, Մովսէս մը, որ իր թէ քաչկուռնիւնները թէ լաւուռնիւնները մեզի ձաւռէին: — Ուռնէր, այո՛. և յայտմ եա՝ ըստ մասին՝ բաղդատուր քան զառաչինեան եղաւ. վասն զի գոտաւ ոչ միայն ազգային՝ այլ և ազգական մը, Թոռնակից մը, զԲագրատունին Շապուհ, որ բոլոր իրենց ցեղին պատմուռնիւնը գրեց՝ ի պատճառս իր համշիրակին. դժբաղդ մենք եմք, որ դեռ այս բագրատունեաց պատմուռնիւնը չեմք առած, և ծգ դարէ վերջ կարդացող այլ չեմք գիտեր, թէ և անյոյս չեմք օր մը յերևան ելնելուն: Այդ փաւփագելի գրուածդ անշուշտ ոչ Աբասայ և Մովսէսի գրուածոց չափ հետաքննական ալիտ ըլլայ, և ոչ Ագաթանգեղոսին պէս վայելչաբան, որով հետև ժամանակակից անուանի պատմիչ մ՚այլ, պերճաբանն Յովհաննէս կաթուղիկոս, կ՚ըսէ առ նոր հաւմար. «՚Ոչ կարացեալ ըստ քերթողական » հրահանգացն համառօտաբար ընձեռել, սակայն » ըստ իւրում ժամանակի ընտանի գոլով նորա » զրոյցացն ամենայնի, գերջուկ քանիւ բաւական » քեզ ասյ պատճառս տեղեկուռնեան»: Սակայն մեր հոս վինատածը՝ չէ քերթողուռնիւն, այլ պատմուռնիւն, տեղեկուռնիւն ընտրեալ անձին՝ որոյ վարքը «՚ի մանկուռնենէ մինչև յերևոյնս երիտասարդուռնեան... զրօրուռնիւնս և զքաչկուռնիւնս և զպատերազմունս, և զհրամանունս՝ ի » յայլս, և զայլոց ևս՝ ի նա,... յայտնապատում » արարեալ է (և) զզրոյցս պայազատուռնեան » Աշոտոյ,... զիշխանական պատմուռնեան և զզ » նախագահրացն զհանգամանացն զկարգս», և այլն, մանրամասն գրեր էր Շապուհ. վասն այնորիկ կաթուղիկոսն անոր կոչխարէ փափագուլը, և ինքն միայն Թագաւորուռնենէ վերջն դիպուածները հաւմառօտիւ կոչ յիշէ: Եւ որովհետև անկէ

զաս ուրիչէ մ՚այլ դրուած չտնիմք, ըսել է որ այս արժանաւոր անձին կատարեալ պատմութիւնն անծանօթ է մեզի. բայց պէտք այլ որ ցաւալի է այս՝ այնչափ այլ ցնծալի՝ որ ձեռացած քիչ առելուԹիւնքն այլ աւելի զօրաւոր վկայ կ՚ըլլան անոր մեծուԹեանը: ԵԹէ Շապհոյ գրածն՝ Թէ իրեն և Թէ Աշոտոյ պարծանք կրնար սեպուիլ՝ աննախանձաբար ազգակցին պատմուԹիւնն ըլլալուն համար, Թերևս ուրիչ կողմէ՝ իբր ազգակից՝ կողմնապաշտ կամ շոյտքորԹ կարծուէր. բայց կաԹողիկոսն որ իր ժամանակին դէպքերը՝ Թէ վայելչաբար և Թէ անկողմնապահրուԹեամբ գրած է, որչափ այլ զգուշացեր է Շապհոյ պատմածը չկրկնելու համար՝ Աշոտոյ վրայ խօսելու առեն, չէ այլ կրցած համարումնքը, զարմանքը, ըսեննք ԹէԹ և սէրն այլ՝ զապել ու չըսել. «Ինձ առ» տանօր ոչ արդեօք այլ ինչ է քանս սիրելի՝ քան » ԹէԹ դեգերիլ ՚ի քանս գովեստից, որ վասն Աշո» տոյ իշխանին իշխանաց են հեռւմունք: վասն » զի ՚ի սխա հասեալ միջակուԹեան, քաջահա» սակ էր նա և անձնեայ և ԹիւնաւէտԹ և զուարԹ» երես և մրայօն, նկարէն իմն և նիշ յաչս ու» նելով, որպէս զյաւիտեան կարմիր ՚ի մէջ մարգար» տի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկուԹեանն » աչեօք. մեծիմաստ և քաղցրաբան, և առ կերա» կուրս իրախճանաց ոչ իանդգնեալ նորա ընդ» լաւագոյնն և ոչ արհամարհեալ զնուաստս» գոյնն. այլ հասարակաց ՚ի վերոյ տարածէր » զզգեստ իննամոց իւրոց, և լծակօք իմն կշռէր, » նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միան» գամայն իսկ ասել, ԵԹէ որ ինչ մարդկուԹեանս » էր պիտանի՝ ոչ ինչ կատեցուցանէր »:

Ուրիչ ժամանակակից պատմիչ մ՚այլ, (Թովմա) որ այնչափ բազդատուԹենէ կողմնակից չէր, Աբծրուանից տունէն ըլլալով, և որուն գիւց-

10249926



ազն էր Գագիկ, չկրնար չըսել Աշոտոյ համար աւելի մեծաբանութեամբ, թէ « բարձրագոյն » և հանճարեղագոյն էր քան զբնաւ Հայաստա- » նեայս, և զընդհանուր կացեալս՝ ի նեղչոյ երկ- » նից » . որ է, լսատ մատց հեղինակին, քան զա- մենայն Հայ և քան զամենայն մարդ (ժամանա- կակից) աւելի խելացի և մեծահարկի:

Անուանին Փոտ պատրիարքն Յունաց կոչէր զԱշոտ՝ « Քաջայայտ բարեպաշտութեամբ, հզո- » րագոյնդ Հոխութեամբ, բարձրագոյնդ՝ ի հոմա- » սեռս »: Յիշեալ պատմիչներէն քիչ եւս կոտ խոհական պատմիչն Ասողիկ՝ կ'ըսէ վասն Ա- շոտոյ, յետ յիշելոյ իր յաղթութիւնները. « Էր » այր քաղցր և հեզ, և անարատ և անբամբաս » կեանս կեցեալ, և ոչ անօրինեալ արատիւոյ օ- » րինաց բնութեանն, և հաճոյ էր Աստուծոյ յա- » մենայն վարս անբիծս »: Թողունք յետագայ պատմչաց և ամենայն գինքը յիշողաց միաբան գո- վութիւնը և յարգութիւնը, որոց նման քիչե- րուն տուած են իրմէ առաջ կամ ետև, կամ թէ և ոչ մէկուն. վասն զի դժար է նմանը գտնել բո- լոր բարեմասնութիւնքը մէկտեղ բերելով. վայ- ելչութիւն, քաջութիւն, հանճար, կրօնասիրու- թիւն, աշխարհաշինութիւն, սիրտ շահել, ազգը պատուել և փառաւոր ընել, հին քաղաքական կարգերը նորոգել, եկեղեցեաց պայծառութեան և ուսման զարգացման օգնական ըլլալ, ցանկալի խաղաղութեամբ, զոր վայելցուց թէ ազգին և թէ սահմանակցացն, յետ այնքան գարերու անհան- գըստութեանց, խռովութեանց և կասկածանաց. և ազգային ինքնագլխութեան հետ՝ Հայոց մատ- ռոյ, գրական և արուեստական ոգին այլ նորէն կանգնել: Ինչ որ ըստ այս մասանց՝ իրեք գարե- րու մէջ (Ը, ԺԱ, ԺԲ), չինութիւնք և քաղաքա- ձանք եղան, նախ Մեծ և ապա Փոքր Հայոց մէջ,

ամէնքն այլ պատրաստեան են Աշոտոյ Ա., որ էր ա-
ռաքեալ Մեծ ըստուերացուցանող եւ ոչ միայն Թագաւորու-
Թեանէն այլ արդեամբք եւ արժանեօք՝ էր ամե-
նուն անուանակցաց մէջ Աստուածն: Վերակենդա-
հեղինակաց վկայութիւնքն եւ պատմութեանց
դէպքն (զոր յետոյ տեսանիք), ամիրապետաց եւ
կայսերաց պատուադրութիւնքն, տահմանակից
ազգաց եւ պետութեանց պատկառանքն, ազգային
նախարարաց եւ իշխանաց մեծարանք եւ հպատա-
կութիւնն՝ տարակոյս չեն Թողուր որ ամէն ա-
ջի հազարամեան դարեդարձին՝ Հայաստանեայց
մէջ նա էր ամենէն երեւելի անձն, կամ Բուզան-
գոյն՝ ի հռոմայեցոց, ըստ Փաւստոսի եւ Թովմայի:

Իսկ եմ այս բանս յիշել եւ կրկնել առ քեզ, Հայկակ, ոչ այնքան ժամանակի կարգին բերելն է, որքան այսպիսի արժանաւոր անձի մը քաւականանալս ճանչուած չըլլալն. Տիգրանք, Տրդատք, Վահանք, Վարդանք՝ բոնած են մեր ազգասիրաց միտքը. արժանապէս. բայց Աշոտոյ այլ տալու է իր տեղն, անոնց կարգին վրայ. ես հոն կը գնեմ. դու եթէ գանես իրեն մեկնողը՝ զՇապուհ պատմիչ, կրնաս Թերեւս նոր կարգի դասաւորութիւն ընել: Առ այժմ մնացեալ պատմչաց յիշատակներէն հաւաքեմ Աշոտոյ կեանքը. զոր լաւագոյն եւս ճանչնալու համար՝ պէտք է նախ ճանչնալ ա-
նոր ցեղը, զիագրատունիս, մանաւանդ Հայոց անիշխանութեան առեն. մեկ մ'այլ պէտք է ճանչնալ այն առենի (թ դարու) Հայաստանի եւ անոր վերձաւոր ազգաց քաղաքական վիճակը, եւ ա-
ւաւել երկու աշխարհակալ իշխանութեանց, Յունաց եւ Արաբացւոց, որոց բազդն կամ կամքն կու շարժէին զՀայս եւ բոլոր Ասիոյ արեւմտեան մասը:

10249926



## Բ

Բագրատունեաց ցեղին ծագման վրայ երկու դրութիւն եղած է. մէկն ըստ Հայկայ և յԱրմենակայ զաւակաց կու համարի զայն. բայց ըստ Խորենացւոյ՝ այս բանս ըստուած է «անհաւատի » մարդոյ, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճըշ» մարտութեան». մէկն այլ ևս ըսածն, զոր Վիրք և Յոյնք [1] հաստատեն. որ է՝ ի Հրեից ծագումն, և ըստ Վրաց՝ ըստ Թագաւորական Յուդայի և Դաւթի ցեղէն. որոց նահապետն կամ նախահայրն ի Հայաստան եկաւ Շամբա կամ Սափարախա անուամբ իշխանն, զոր Հրաչէ հայկազն Թագաւորն մեր նիզակակից Նաբուքոդոնոսորի՝ 600 տարի Քրիստոսէ առաջ՝ բերաւ յԵրուսաղէմէ իբրև գերի. բայց ազատաբար և իշխանաբար քնակեցոյց Հայաստանի արևմտեան հիւսիսային կողմերը. գլխաւոր տեղ տալով անոր՝ Սպեր գաւառը. ուսկից ամենք գէպ ի հիւսիս՝ Եգերաց և Վրաց կողմերը սփռեցան, ամենք դէպ յարևմուտս և հարաւ, Փոքր, Բարձր ու Դ Հայոց կողմերը, Թեւրևս ինչուան ի Կապադովկիա, ուր Բագապէան [2] գաւառ յիշուի. վասն զի առաջ այս ցեղին սովորական եղած Բագրատ անունն այլ Բագապէս էր, ինչպէս որ Սմբատն այլ Շամբատ կամ Սափատիս: Իսկ այս նոր անուններն առին՝ երբ Քրիստոսի դարձանէն քիչ տարի առաջ բռնադատուեցան Յունաց Թագաւորէ Հայոց, և շատերն ուրացան հրէական կրօնքը. իսկ ո-

1 Կոստանդին Պերփիւռոժէն:

2 Խորենացին յաշխարհագրութեան Պտղոմէոսէ ա-
նուանէ, ի մեան Փռիւգիոյ:

մանք հաւատարիմ մնացին, ինչպէս լուեցնց Հայերն այլ՝ յովանդակ Հայկազանց իշխանութեան առակ, որք աւելի ուղղահաւատ և նեղոտեալ էին քան զԱրշակունիս:

Ասոնց թագաւորութեան սկիզբը՝ իբր 150 տարի նախ քան զՔրիստոսի Թուականն, երբ Վաղարշակ մուտ թագաւորեցու ՚ի Հայս, հրէական տոհմին ազգապետան՝ Բագարատ՝ առաջին եղաւ ողջունելու զնա թագաւոր, և շատ ընծաներէն զատ՝ իր մէկ աղնիւ ազջիկն այլ ընծայեց ՚ի կնութիւն նորընտիր թագաւորին Հայոց. թագաւորն այլ այս բանիս փոխարէն՝ զանեռն ընտրեց իրեն թագադիր, և երկրորդ թագաւորութեան. միանգամայն և Աղբար, այսինքն Հայոց ձիաւոր զօրաց պետ, և առանձինն արևմտեան զօրագնդին (11 կամ 21,000 զօրաց) պետ: Ա.յսպէս մէկ գործով, հրէական աչալրջութեամբ և շահաբերութեամբ՝ Հայոց հին և նոր տոհմից մէջ առաջնութիւնը առաւ Բագրատունին, ամենէն աղնիւ և մեծխլեան տեսուչցաւ [1]: Ա.յս պատիւս և իշխանութիւնս մինչև ժառանգական մնաց իր տոհմին մէջ մինչեան եղբը. թէ և քիչ մը ժամանակ՝ ոմանք յազգապետացն զրկուեցան, (մեր թագաւորաց անհաւանութեամբն, կամ տխտելովն կուռք պաշտել). բայց այն իրենց ազգային ձկուն բարքն և յօժարամտութիւնն ՚ի ծառայել, միշտ իրենց աչերանց սիրտը կու շահէր. և կ՚երևի թէ Հայկազանց ժամանակ այլ մեծ պատիւ ունէին, և հաւանօրէն նոյնպէս արևմտից կոչմնապետ էին: Մեծն Տրդատայ և իր Թուանց պահակութեան մէջ այլ՝ յետ Հայկազանց և Պարթևաց

1 Ստեփանոս Ոռոպելեան. «Շնորհէ և ես ունել զնախնական բարձ ՚ի վերոյ քան զամենայն»:

Թագաւորական տոհմից՝ առաջին գահն էր Բագրատունեաց կամ Աշոտեաց. նոյնպէս գրուած էր Աբշահունեաց Թագաւորութենէն վերջն այլ Պարսից գահնամակին մէջ. միայն այս առեն Սմբատ առաջին դրուեցաւ ի պատճառս մարզպանութեան Վասակայ: Աբշահունեաց վերջին Թագաւորաց հետ խնամութիւն այլ ընելով Բագրատունիք՝ այլ աւելի ազնիւ և նախատոհիւ եղան:

Պատուոյն հետ Բագրատունեաց սահմաններն այլ ընդարձակեցան. և այն հալածող Արշամայ առեն խակ բնակեցան ոմանք յԱյրարատ Թագաւորական նահանգին մէջ, ուր և առաջին գարուն եռքերն Արտաշէս անլր խնամակալ բազմութիւն ազգապետին Այրարատեան Արտաշէս Մծուռայ՝ տուաւ Կապովիտ գաւառը, Այրարատ լերանց առորոյը, ուր շինեց նա զԲագարան աւանն. յետոյ շինեցաւ Դարոյնփ բերդաւանն, և ելաւ իշխանանիստ և գերեզմանատուն Բագրատունեաց, զոր իբրև տուն և քնարան նախնեաց՝ պատուէին ազգապետքն հինգեան ի ծ դար Քրիստոսի, և դեռ ոմանք հոն Թաղուէին: — Ը գարուն վերջերը՝ մեր մեծ Աշոտոյ պապն՝ Աբշարունեաց երկիրը՝ կամ Երասխաձորը՝ գնեց ի Կամսարականաց, Շիրակայ հետ, որ քիչ առեն իրենց ցեղին Թագաւորաբնակ առեն եղաւ: Տարօնոյ երկրին այլ կ'իշխէին Բագրատունիք նոյն առեն, բայց ինչ կերպով զանիկայ ի Մամիկոնէից առնուլն՝ մեզի յայտնի չէ: Անկէ այլ հետու, Մակաց երկրին իշխանն այլ Բագրատունի էր այս ժամանակներս (թ գարուն մէջ). ըսել է որ Հայաստանի միջին ազնուագոյն այրարատեան Թագաւորական երկիրները՝ և մանաւանդ հարաւային Հայք այլ քիչ քիչ Բագրատունեաց ձեռքն անցան: Բայց այսչափ միայն չէ. հապա ինացեալ արևելեան երկու մեծ աշխարհաց համ ցեղից, այսինքն Արծրունեաց և Սիւնեաց

հետ այլ խնամեներալով՝ կերպով մը անոնց վրայ այլ նախերկրացութիւն ունէին բագրատունիք, զո-
նէ մեր Աշոտն, որ այն երկու մեծատաուխ ցեղից ազգատոհմաց աներ և հայրապիր էր: Իսկ հիւան-
սային Հայոց և սահմանակցաց, գրեթէ ծայրէ ծայր Ա և ծովուն եզերքէն ինչուան կապէից ծո-
վուն եզերքը՝ հայ ու վրացերու մեծ իշխանք և թա-
գաւորք՝ ի բագրատունեաց էին թ–ժԹ դարուց
մէջ. սկսեալ ի Հաճէնոյ ու Սպերու երկրէն,
(որ բագրատունեաց բնագաւառն էր ի Հայս),
Տայոց ուէրն՝ որ կիւրապաղատ կ'ըսուէր յունա-
կան պատուով, Կղարջաց և Գուգարաց սեարքն,
Ախիսզաց կամ Եգերաց Թագաւորն, Վրաց Թա-
գաւորն, Կախեթոյ Թագաւորն, Ջորոյ գետոյ և
Աղուանից ընտուած Թագաւորք, և Թագաւորքն
Հայոց: Վրաստանի բագրատունի իշխանաց սկիզբն
եղաւ յ'Ը դարու, ի Հայոց հոն անցնելով ոմանց,
Թէ և վիրք չեն ուզեր ընդունիլ զայս, և կ'ա-
ւանդեն Թէ Երուսաղեմէն եկած է իրենց ցեղա-
պետն Ջ դարուն վերջերը: Իսկ արեւմտեան կող-
մերը՝ Սպերէն անդին Փոքր Հայոց մէջ այլ Աշ-
խարհաբերդու (Ագիւհրօվա) սահմաններուն՝ այս
տեղերս կը տիրէր Բագրատունի մը, Գրիգոր
Իշխանիկ անուն, որ Յունաց ձեռքէն ուրիշ տե-
ղեր այլ առաւ: Այս գործերուս և կռիւներուս
պատմութիւնը քննողին՝ յիրաւի մեծ զարմանք
պիտի բերեն այսպիսի դէպք. և գրեթէ ուրիշ
տեղ մ'այլ տեսնուած չէ մեկ իշխանական տոհմի
մը՝ այսպէս լուիկ մեղմիկ այսքան ընդարձակ և զա-
նազան աշխարհաց իշխանութիւններ ձեռք բե-
րելն՝ առանց բռնակալութեան. և կու ստիպուի
հաւատալ մարդարէութեան Խորենացւոյ, ինչ-
պէս ինքն այլ կու հաւատար Ատուածոյ առ Աբրա-
համ ըսածին. « Եւ բագրատունեաց ասեմ, յի-
» շեալով զբան իւր (Ատուածոյ), եթէ թագա-

» Հոլք ազգաց՝ ի .քէն եւ լցեն, և թագաւորէք՝ ի
» Դուբինն[1] »։

Դառնալով նորէն իրենց իշխանական պայազատութեան, Արշակունեաց տէրութեան վերջերը՝ քան հին սովորութեան՝ իրենցմէ էր սպարապետն Հայոց. որ երբ մեռաւ, Ս. Սահակ հայրապետն՝ իր գաւեր խնդրանօք՝ անոր որդին էր Թուրը Մաժիկոնեան իշխանը (զՄեծն Վարդան) դրաւ. բայց յետ նահատակութեան նորա՝ իր յաջորդն Վահան և ուխտապահ նախարարքը՝ Բագրատունեաց պէհաւորին՝ Սահակայ անպետն տուին Հայոց աշգապետութիւնը, որ այն առեն կ'ըսուէր Մարզպան։ Անկէ ետև դար մը (չ դար), գար Պարսից և Յունաց հակառակութեան, Բագրատունիք գրեթէ չեն յիշուիր պատմութեան մէջ, այլ աւելի Մամիկոնեանք և ուրիշ ցեղերէ նախիշխանք. բայց նոյն գարուն վերջը Սմբատ Բագրատունի՝ նորէն կու կանգնէ ցեղին անունը և փառքը, գրեթէ Թագաւորական պատիւ գանելով Պարսից արքային շնորհքով, վասն քաջութեանց իւրոց, և Վրկանայ մարզպան կ'ըլլայ, Հայոց մէջ այլ եւրև նախիշխան. որուն նոյն պատուով յաջորդեցին՝ որդին Վարազտիրոց, և Թուն Սմբատ, մինչև՝ ի կէս է գարու. յորում Աւտաբացիք վերուցին Պարսից Ներսեհ Ասատանեանց Թագաւորութիւնը, և մոան՝ ի Հայաստան։ Հոս այլ Բագրատունեաց աշգապետն և Հայոց նախիշխանն Սմբատ՝ իր նախնեաց քաղաքագիտութիւնը գանեցընելով՝ կամովի հնազանդեցաւ Աւտաբաց անդիմակաց իշխանութեան,

[1] Թէ և զԴուբին այլ երբեմն առին Բագրատունիք, բայց իրենց Թագաւորական աթոռն չեղաւ հոն, այլ ոչ այլ շատ հեռու այն կողմէն։ Աչուոյ որդին Սմբատ Թագաւորն հոն նահատակուեցաւ. և այնով կ'ըսէ պատմիչը, խորհնացւոյն գուշակութիւնն կատարեցաւ։

10249926



և ինաց իր պատուին մէջ. այս քաղաքագիտու-
թիւնս բանեցուցին իր յաջորդքն այլ, մեծաւ մա-
սամբ, ինչուան մեր Աշոտն այլ, և այնպէս յա-
ջողեցան զՀայաստան՝ ի խաղաղութեան պահել
և զերկունք յիշխանութեան, հաճութեամբ թէ ազ-
գին և թէ ամիրապետաց. իսկ երբ մէկ կամ մէկ-
այլ կողմէն տհաճութիւն եղաւ՝ Հայաստան գրե-
թէ միշտ պատուեցաւ: Մէկ խօսքով և տեսու-
թեամբ, յետ վերցուելու Հայոց ինքնագլխու-
թեան՝ Արշակունեաց թագովը, ազգային բաղդն
կամ վարչութիւնն տահմանուած կ'երևի ի ձեռս
Բագրատունեաց մինչև ցԹԹ դար, կամ 800 տա-
րուան միջոց, յորում երբեւ դար մի միայն Մա-
միկոնեանք փայլեցան:

Վերոյիշեալ բազմայաղթ Սմբատէն սկսեալ
(զ դարուն վերջէն) ինչուան ի Մեծն մեր Աշոտ
ի կէս թ դարու, 260 տարի, գրեթէ անընդհատ
կը յիշուին Բագրատունեաց գլխաւորքն երբեմն
տան ազգ, Հայոց իշխանապետի և սպարապետի
պատուով. յԱշոտոյ Մեծէն այլ սկսեալ՝ 200 տա-
րի՝ այլ աւելի պատուով՝ երբեմն նախնիքն և թա-
գաւոր Հայոց կոչուելէ պայազատութիւնն. ան-
կէ այլ եւս դարձեալ 200 տարուոյ չափ՝ ցեղին
պայազատութիւնն կուսական թագաւորու-
թեանց մէջ (ցկէս ԺԹ դարու): Իսկ վրաց և ի-
մերէթի մէջ ինչուան այս դարուս սկիզբն կար
Բագրատունի թագաւորութիւն, և ինչուան այս
օրս թագաւորական սերունդք և իշխանազունք
Բագրատունիք, որ Ռուսաց կայսրութեան մէջ՝
արքայազանց և զօրապետաց պատիւ և իշխանու-
թիւն ունին հիմա այլ. և Եւրոպայի, գուցէ քո-
լոր աշխարհիս ազնուական տոհմից մէջ ամենէն
հնագոյնն և ազնուագոյնն է Բագրատունեաց
ցեղն՝ 2,500 տարուան հնութեամբ (կամ 3,000
ըստ վրաց, հանելով մինչ ի Դաւիթ մարգարէ):

10249926



# Գ

Հայոց աշխարհին և ազգին ծագումը ո՛վ է՝ ըն-
ծած է իր մէջ բաժանեալ ըլլալն քաղաքական
վարչութեամբ, յետ վերցուելու ինքնագլխու-
թեանն (Արշակունեաց), կէտն Յունաց և կէտն
Պարսից ձեռք ընկնալով. որոց յաջորդ կամ ժա-
ռանգ եղան ինչուան անցեալ դարուն վերջն՝ Օս-
մանեանք և նոր Պարսք՝ յետ Աղուանից. իսկ
այս դարուս՝ հիւսիսային հզօր ազգ մ՛այլ (Ռուս)
այն երկուքին բաժնէն մեծ մեծ մասեր առնելով՝
երկրագործ եղաւ Հայոց, հանդերձ վրաց աշ-
խարհին տէրանալովքն, որուն միացած էր մեր աշ-
խարհին մէկ մասն այլ: Յունաց բաժինն՝ նախ ա-
րևմտեան Հայք, քիչ մ՛այլ հիւսիսային և հա-
րաւային գաւառներն էին, Կարնին, Բասէն, Եր-
զընկա, Ձմշկածագ, Խարբերդ, Աղձնի, Նփըր-
կերտ, Ամիդայ կողմերն, և բոլոր Փոքր Հայք, և
Եփրատայ ալ կամ արևմտեան կողմն եղած աշ-
խարհները. որք առեն առեն կերպ կերպ բաժ-
նուեցան քաղաքական կամ աշխարհագրական
օրինօք, և Յոյն կամ Հայ իշխանաց յանձնուե-
ցան. իսկ Մեծ Հայոց մասին վրայ առվորաբար
առեալի իշխանները կուգային, մէկ գլխաւորի
մը երաշխաւորութեան ատկ, որ զանազան պա-
տուոյ անուն և աստիճան կ՛ունենար, ինչպէս՝
կոմս, սպրաթելապ, պապրին, կիւրապալապ, պրոպոպա-
լար, նոպիլիսիմոս, պիհիպապ, և այլն: Զօրաւոր
կայսերաց ժամանակ՝ ինչպէս էին Յուստինիա-
նոս, Մօրիկ, Հերակլ, և այլն, բաւական հան-
գիստ և հնազանդ էին արևմտեայ Հայք, և կայ-
սերութեան մեծամեծ պաշտամանց և արքունեաց
մէջ յառաջադէմ. իսկ տկար և մոլի կայսերաց
առեն՝ շատ հեղ ժխտող և ապստամբ. և երբ Ա-

բաբացիք տիրեցին արևելեայց, երբեմն ուզեցին սառնց՝ քան Յունաց ներքև մնալ, Թերևս ազգին միութեանն այլ փափագելով, յորում ըստ կրօնից այլ զանազանութիւն մեր էր. յունակոլմանք կաթողիկոսին իշխանութենէն ելնելով, քիչ անգամ նաև առանձին կաթողիկոս այլ ունենալով, բայց աւելի՝ առանձին եպիսկոպոսներ՝ իբրև 'ի Թեմի Յունաց պատրիարքաց կու սեպուէին: Քիչ մը մերայոց կամօքն, քիչ մը Յունաց Թուլութեամբ, Արաբաց բռնութիւնն՝ Ե և Ը գարուց մէջ գրեթէ բոլոր Մեծ Հայոց տիրեց, և ոչ միայն Դուռնայ մէջ նստաւ ոտիկան, իբրև վերակացու և հարկահան Հայոց, այլ և Էրզնուռումի, Կամախի, Խարբերդու, և հարաւային Հայոց կոլմերը զանազան ամիրաներ և հարկահաններ դրուեցան. ինչպէս Այրզն, Նփրկերտ, Մանազկերտ, Խլաթ, Նախիջևան, Պարտաւ, և այլն. որոնց հետ երբեմն Յոյնք կու պատերազմէին, քիչ հեղ և յաղթէին: Իսկ այս ժամանակիս, Աշոտոյ երիտասարդութեան առեն՝ Թէոփիլոս կայսրն բաւական զօրացաւ և շատ տեղ առաւ Արաբացւոց ձեռքէն. բայց վերջապէս հաշտութիւն ընելով յետ քաշուեցաւ. իր յաջորդ Միքէլին առեն (842-867) Մեծ Հայք գրեթէ բոլոր Յունաց ձեռքէն ելնելով՝ կամ Արաբացի ամիրայից կամ բնիկ իշխանաց ձեռք մնացին. ինչուան որ Վասիլ Մակեդոնացի կամ Արշակունի Թագաւորեց 20 տարի (867-886) և բաւական զօրութիւ և փառքով կայսերութիւնը կանգնեց:

Այս անձը հարկաւոր է քիչ մ'աւելի ճանչնալ Թէ Աշոտոյ ժամանակակից ըլլալուն, Թէ հայազգի ըլլալուն և Թէ գործոյն համար: Այս առեն Յունաց և Հայոց մէջ քանի մը տեսութիւք իրարու նման երկու իշխանութեամբ և երկու հայ-

այլ ունեցան. Վասիլ և Աշոտ (857-886), Փոտ և Զաքարիա (854-875): Վասիլ՝ ըստ ոմանց մեր պատմչաց՝ Տարօնոյ կոլմերքէն էր, բայց հաւանօրէն էր ի Մակեդոնիոյ, և ի հօրէ կամ ի մօրէ Արշակունի Հայերէն, զոր կայսերքն Յունաց այն կողմերը բնակեցուցեր էին: Յոյնք շատ զարմանալի բաներ կու պատմեն ասոր ծննդեան, տղայոութեան, ուժին և քաջութեանց վրայ, և կայսր ըլլալու գուշակութեանց. ասոյգն այս է՝ որ աղէկ կրթուած, կարիճ, զգօն և բարեպաշտ մարդ էր. և խելքով ու քաջութեամբ յառաջացաւ, ինչպէս յայտնի է. բայց անզգամ և մոլի կայսեր մը պաշտօնեայ ըլլալով՝ սոխպուեցաւ երբեմն անոր կամաց և գործոյն այլ հեռևիլ, որ իր համբաւին մեծ սպառ է. զոր և աւելցուց՝ զկայսրը սպաննելով և քանի մը ուրիշ սպանութեամբք այլ: Բայց յետոյ արդարասէր կառավարութիւն, յաղթութեամբք, շինութեամբք, գեղեցիկ օրէնօք և գրաւոր խրատուք այլ՝ նշանաւոր կայսեր մէկն եղաւ: Գլխաւոր գործոց մէկն այլ է՝ Փոքր Հայոց մէջ բռնացած Պօլիկեան կամ Մանիքեցի սպանդաւորները չնջելն, հետերնին անձամբ պատերազմելով և ուրիշ զօրավարօք, որով հետև թշնամիքն այլ զինք կու գործածէին: Մէկ նշանաւոր գեպքն այլ եղաւ Փոտայ հետ յարութեերութեան: Այս անձին ծանօթութեան այլ հարկաւոր է մեզի. Վասիլ նախորդ Գինով Միքայէլին աաւեն, իր քեռին վարդ՝ ուզածին պէս կու կառավարէր զնա և տէրութիւնը, հանդերձ անկարգութեամբք և զեղխութեամբ. որոյ համար յանդիմանութեամբ ի Ս. Իգնատիոս Հայրապետէն Կ.Պօլսի՝ ոխացաւ, և աթոռէն ձգելով՝ աքսորել տուաւ. անկէ աւելի անակնկալ կերպով՝ տեղը դրաւ իր ինամիներէն մէկը, որ տէրութեան դիւանապետն էր, և ժամանակին ամէ-

նահմռւտ անձն և ճարտար գրիչն կու սեպուէր. զոր և աշխարհական վիճակէն՝ ըստ օրուան մէջ բարձրացուց ի գահ պատրիարքութեան Կ.Պօլսոյ, յամին 857. այս էր Փոտ: Ասոր նման և ասկէ շուտ՝ երկու տարի առաջ այլ ի Հայս, Զաքարիա՝ իր արժանեաց և գիտութեան համար՝ մի և նոյն օրուան մէջ յաշխարհական վիճակէն բարձրացաւ ինչուան ի ձեռնադրութիւն կաթուղիկոսութեան Հայոց. որ և Յովհաննէս իմաստասիրէն եաւ († 728) առաջին մատենագիր և ժողովարար հայրապետ է: Ահա երկու զուգակցաց մէջ՝ որչափ որ Աշոտ վեհագոյն կ'երևի քան զՎասիլ անարատ քահանայութեամբը, այնպէս Զաքարիա քան զՓոտ. եաթին գիտութեամբն անհամեմատ վեհագոյն էր քան զմեր հայրապետն, նաև խորամանկութեան գործովքն անհամեմատ վար քան զանիտան՝ յոր նատաւ բանութեամբ: Ետ զարմանալի է՝ որ Փոտ չանաց Հայոց և Յունաց եկեղեցւոյն միութիւնը հաստատել ուղղափառապէս, յետոյ իր եկեղեցին զատեց ընդհանրական եկեղեցւոյ միութենէն: Յայտնի են բազմաց իր գործքերն, զոր չկրցաւ առաջ տանիլ Վասիլ առեն, որ ի Թագաւորէն՝ վռնտեց զնա յաթոռոյ և դարձուց զՍ. Իգնատիոս. բայց երբ սա վախճանեցաւ (878), Փոտ խորամանկութեամբ չահեցաւ զկրօն Վասիլ. որ թերևս իր սպանութեան՝ ի կայսրութեն եղնելուն վրայ միշտ վախնալով, կ'ուզէր եւել քան զեւել համոզել ժողովուրդն իր օրինաւոր ըլլալուն, մանաւանդ երբ Աղշաիւնի ցեղին սերունդ: Ահա տկար կողմը գիտնալով Փոտա՝ քովէն պատմութիւն մը հնարեց, հին յունարէն ձեռագրի մը մէջ գրեց հին ձևով հին մագաղաթի վրայ, գուշակելով ի նմա թէ Աղշաիւնեաց ցեղէն Թագաւոր մը պիտի գայ այս առեն, այս անուն, և այս քանիերս պիտի ընէ, զոր արդէն ըրած

էր Վասիլ. գիրքն այլ անոր գրատան մէջ մնաց՝ իր մէկ համախոհին ձեռքով, որ և հաւատացուց կայսեր, Թէ զայն կարդալու և մեկնելու համար՝ Փոտէն յատնար մարդ չկայ: Դարձաւ Փոտ յաքսորանքէն, կարգաց իր մարգարէութիւնը, ինչն իրեն մեկնիչ ըլլալով. իմացուց որ այն գրուածը բոլորովին յատնար էր Վասլի, ինչն էր գուշակեալ Արշակունին՝ Հայոց Թագաւորաց ցեղէն, որք պայազատելու առեն՝ Թագը կ'առնուին Բագրատունեաց նահապետէն. Վասիլ այլ գոհուեցաւ կատարեց այս բանս, ինչպէս յետոյ պիտի տեսանենք. և Փոտ նորէն նստաւ յաթոռ հայրապետութեան, ինչուան որ մեռաւ Վասիլ. բայց որդին՝ Լևոն Իմաստասէր՝ մէկէն ձգեց զՓոտ յաթոռոյն, և աքսորեց Հայոց վանք մը, ուր և մեռաւ (891):

## Դ

Յոհաննց կայսրութեան և Հայոց յարաբերութեան վիճակը իմանալնէս ետև, դառնանք Արաբացւոց ամիրապետութեան, որք քաղաքական օրէն աւելի առընչութիւն ունեցան ընդ Հայոց. և իրենց դէնպէտին (Մահմէտի) մահուընէն քիչ տարի ետև՝ մտան 'ի Հայս. ուր Պարսից բռնութիւնն տկարանալէն ետև՝ կայսերք աւելի չնային տարածել իշխանութիւննին, հանդերձ եկեղեցական վարդապետութեամբք: Այս բանիս տհաճելով ժամանակին քանի մի գլխաւոր և զօրաւոր Հայ իշխանք, երբ յանկարծ նոր և զօրաւոր Թշնամի մ'այլ տեսան (զԱրաբացիս), նախ մէկ մը զէնքերնին ատոնց վրայ փորձեցին, բայց յետ անօգուտ քաջութեանց և յետ կշռելու Թշնամւոյն ոյժը՝ յանձն առին հնազանդելու. ընդունեցան անոնց ատենց ատիկանը, և իրենց մէջէն իշխա-

նապետ կամ հոգաբարձու մը. այսպէս ըրաւ Սըմ-
բատ բագրատունին այլ՝ Թոռն Սմբատայ բազ-
մայաղթի: Յոյնք շատ ջանացին բայց չկարցան
վռնտել զԱրաբացիս և նուաճել զՀայս. մերոնք
ինչուան ի գարուն վերջը բաւական հանդարտ
մնացին ոստիկանաց իշխանութեան տակ. բայց
ի գարուն սկիզբն՝ անզգամ և ագահ հրամանա-
տարք սկսան չարաչար նեղել զՀայս. ատոնք այլ
զայրացեալ՝ չարդ մը տուին Արաբացւոց (՚ի
Վարդանակերտ), որ մեր պատմութեան մէջ նը-
շանաւոր դէպք և Թուական մ՚եղաւ. ինչպէս որ
Արաբացիք այլ քիչ մ՚ետքը (705) խորաման-
կութեամբ աւելի մեծ միտս հասուցին Հայոց,
գլխաւոր իշխանները այրելով Նախջևանի և Խրա-
մայ եկեղեցեաց մէջ, ուր ժողովեր էին՝ իբր գա-
լինք գնելու պատճառաւ. և այս տարին այլ Ա-
րարացւոց պատմութեան մէջ անուանի եղաւ
Կրակի փորի ըսուելով. տպրած իշխաններէն և ա-
նոնց զաւակներէն շատն ալ բռնեցին՝ ամիրապե-
տին խաւրեցին. և ատան տարի նեղելէն ետև Թէ
զանոնք Թէ մեր աշխարհը, գերեաներէրը դարձու-
ցին և դիւրութիւն ըրին, քաւաստան տարւոյ
չափ, Յոանց և Հոնաց հետ պատերազմի զբա-
ղելով: Ա.յս տաեն բագրատունիք նորէն սկսան
պայծառանալ և Աշոտ պատրիկ իշխանապետ ե-
ղաւ (733). դժբաղդաբար Մամիկոնեան իշխանք
նախանձելով չանացան անոր տեղ անցնիլ, և վեր-
ջապէս անարգ կերպով և սժգալի գործով մը
զրկեցին զԱշոտ (749): Ամիրապետն լսելով Հայոց
խըրտումը խաւրեց զեղբայրը՝ Աբդլա (750), որ
հանդարտեցուց և դրաւ իշխանապետ զԱհհակ
(753) հօրեղբայրն Աշոտոյ, որուն յաջորդեց
որդին Աշոտ. իսկ անոր հօրեղբօրորդւոյն՝ Աշոտ
պատրիկին՝ յաջորդեց իր որդին Սմբատ՝ իբրև
սպարապետ Հայոց: Քանի մը տարի հանդար-

տուեցինէ վերջը՝ շուտ շուտ ասոնցմէ վատ խուեելով՝ ի Հայս, ամենքն այլ կու չանային անկէ քան մը փրցընել, աւարով դառնալ, կեղեքէին կոլոպտէին. քնականապէս Հայք այլ նեղեալ յուսահատեալ՝ ոմանք փախչէլ մտածէցին, ոմանք այլ քունուելեամբ քունուելնին վանել. ասանկ մեծ գործոյ համար դիւրին էր տարաձայնել և երկու բաժնուիլ. ինչուան Աշոտ իշխանապետն և Սմբատ սպարապետն իրարմէ զատուեցան կարծեօք. Սմբատ ապատամբողաց կողմը բռնեց, Աշոտ ձեռքը քաշեց և առանց մնանելու հայրենիքը՝ հաւատարմութեան պահեց անոնց՝ ուսկից իշխանապետ գրուած էր: Այս գործս ինչպէս առաջ գնաց և ինչ վերջ ունեցաւ, գոպէք է յիշես, Հայկակ. Բագրեւանդայ ըլլոց վրայ ժուռ գալուդ՝ պատմելու եմ քեզի[1]: Այս գեղեցիկ ծաղկաւէտ հովտաց արեւմուտ ներկելէն եաև, նոյնն ասոնկան եղաւ Եէզիտ Իան-Իաէիա, որ քանուերկու տարի առաջ Աբդլայի հրամանաւ՝ զԱահակ իշխանապետ դրեր էր, և երկրորդ անգամ խալտզյուց զՀայս. Բագրեւանդայ կուսէն մէջ ընկած Սմբատայ տեղ՝ անոր որդին Աշոտ Մասկերը կարգելով ապարապետ. որ օրինաւոր իշխանութեան հպատակ, բայց անօրէն զրկոտաց գլխահար էր. և քանի մը Արաբացի բռնաւոր զօրավարներ ու զօրագունդեր ջարդեց, որք էր երկար իշխանութեան տեսեն՝ (776-819) Հայաստանի զանազան կողմերը շատ սւաբար ու աւեր կ'ընէին. ատոնցմէ էին երկու Խազմ կամ Խուզիմա, հայր և որդի, մէկն նահատակիչ հռաքատ Արծրունի եղբարց՝ Ս. Սահակայ և Համազասպայ՝ (յամին 785), միւսն նահատակիչ Ս. Սահակայ և Յովհափայ (յամին 801): Ոյն

1 Տես Վարքն 25:

աոեննեբն Զահապ անուն ամիրայ մ'այլ՝ Աբծ-
բունեաց ուբացոզ Մեհբուժան իշխանին փեսա-
յացեալ՝ ի Դուին բանացելս, և Աբշարունեաց
գաւառին մէկ մասին այլ տէրբեր, (ոբ Բագբա-
տունեաց սեպհական էբ,) աւելի այլ առաջ գալ
կ'ուզէբ. Աշոտ՝ իբ Շապուհ եղբօբը օգնութեամբ
վանաէց անոբ զօբքը, և տիբէց ուբիշ կոմսբէն
զատ՝ Շիբակայ գաւառին այլ, ուբ Անի բեբդը
ամբացուց և ընտանիքը հոն գբաւ, ոբ յետոյ էբ
ցեղին Բագաւոբանիաս քաղաք եղաւ: Գանի մը
տաբի վեբջը նոբէն Զահապեանք եկան 5000 զօ-
բօք յաբձբկեալս ի Տաբօն, ուբ միւս Բագբա-
տաձնի Աշոտն կ'էշխէբ. Աշոտ Մսաէբ 500 մաբ-
գով վանին հատաւ՝ 3000ը ջաբդեց, մնացեալը
ցբուեց. եղբայբն այլ Դբնայ վաբ յաբձակե-
ցաւ, և քաղաքն առին: Անոնց վբէժն ուզեց առ-
նուլ Հօլ ասաիկանն, ոբուն 4000 զօբաց դէմ է-
լաւ Սմբատ Տաբօնոյ իշխանն (ոբդի Աշոտոյ իշ-
խանապետին) 500 մաբդով, օգնութեամբ Սիւ-
նեաց իշխանին. բայց եբկուքն այլ մեռան պատե-
բազմին մէջ (819-20): Նոյն առեն Սևադա Զա-
հապեանն այլ Աշոտ Մսաէբի և Շապհոյ հետ
կբ կռուէբ. այս պատեբազմիս մէջ ընկաւ քաջն
Շապուհ. իսկ եղբայբն՝ սպաբապետն՝ յետ էբ-
կու տաբուոյ խոպտութեամբ կեանքը կնքեց, և
տեղն անցաւ (820) Սմբատ Ախլ-Աբուս խոսբովանող,
հայբ մեբ Աշոտ Բագաւոբին, ոբ Սևադայի հետ
հաշտութիւն ըբաւ, և հաստատուեցաւ իբ սպա-
բապետութեան պատուոյն մէջ:

Այս առեններս ամիրապետոյ այբատեաս-
Թիւնն սկսեբ էբ ակաբանալ, պատճառաւ իբենց
ղեղծմանց, և անկիբճ Թուլքեբ ընտբելու իբենց
պաշտօնեայ և պահապան. կամաց կամաց զօբա-
ւոբ իշխանք սկսան գլուխ քաշել: Ասոնցմէ
բանութիւնն այլ սկսաբ ցուցնել ի Հայս. Մուգաս-

ակ ամիրապետն վախնալով որ Հայք բոլորովին
ջնջասցին Յոաննայ հետ, Հօրէն սպանուած Սմբ-
բատ իշխանապետին որդին՝ Բագարատ՝ իր հօրը
տեղ գրաւ տէր Տարօնոյ և իշխանաց Հայոց (839).
զոր և իր յաջորդ խալիփան (Վաթէք-Պիլլահ)
հաստատեց նոյն պատուոյն մէջ (843): Ա յսպէս
ատոր իշխանապետութեան և Սմբատայ սպարա-
պետութեան տասն երեսուն տարուց ջոփ, մինչև
ցկէս ք դարու, բաւական վրայ եկան Հայոց իշ-
խանք և սկսան ակնածելի ըլլալ ամիրապետաց.
որք Թոյլ տուին անոնց, ինչպան որ մէկ կողմէն
Յոաննայ հետ հաշտութիւն ըրին (840), մէկ այլ
կողմէն իրենց տէր՝ դրկեցին Փոքր Հայոց Պօլե-
կեանները Յոաննայ դէմ, որ քանի և հինգ տարի
աշխատցուցին Լեւոն և Վասլի զօրավարները և
ընոյն ինքն Վասիլ (848-873), և ամիրապետը ա-
պահովցուցին այս կողմանէ:

Ա յսպէս քիչ մը դրսէն խաղաղեալ, ամիրա-
պետք ուժերնին մարելու առեն՝ վերջին և ահեղ
փորձ մ՚ըրին Հայոց նոր արծարծած ոյժն այլ
բոլորովին մարելու. յիրաւի մեծ խաւար հասաւ
Հայոց, բայց այս վտանգէն ելաւ առաջինէն պա-
ծառ լոյս մը:

Վերը յիշեցինք որ խալիփայից վարչութեան
շփոթութեան և անկարգութեան մէկ պատճառն
այլ էին իրենց նորընտիր թուրք օգնականները.
ատոնք Թաթարստանի կողմերը պատերազմի մէջ
բռնուած կաթիճներ էին, զոր խալիփայք իրենց
թիկնապահ ըրին, վտանգին վատահանալով. և ոչ
միայն զինուորութեան՝ այլ և արքունեաց մէջ
վերակացութեան և պաշտօններու հաստկին յա-
ջողները: Ատոնք այնքան համարձակեցան, մինչև
երբ Վաթէք խալիփայի մեռաւ (847), իրենք նըս-
տուցին յաջորդ անոր եղբայրը Մոդավվէքէլ-
Ձեաֆար (զոր մեր պատմիչք Ջաֆր կոչեն). ի-

թարու արժանի ընտրուղքն և ընտրեալն. մէկն ա-
նօրէն անգութ բռնաւրեամբն, մէկալինք անուր
յարմար գործիք. այնչափ այլ յարմար, որ հետ
15 տարւոյ՝ անոր որդւոյն հետ միաբանած՝ ապան-
նեցին զնա: Ձեաֆար անգթաւրեամբն՝ խալի-
փայից Ներոնն ըսուեցաւ. արքունեաց մէջ, վե-
րոյիշեալ պահապաններէն զատ, չորքոտանի վայ-
րենի գազաններ այլ ազատ թողուցեր էր՝ որ յան-
կարծ իր պաշտօնէից դիմաց կ'ելնէին, և կամ լե-
ռնպատառ կամ մարմնապատառ կ'ընէին. բայց
տեսնելով որ անոնք կ'ուշանան, օր մը բոլոր մե-
ծամեծները մէկ տեղ ժողովեց, և իր թիկնապա-
հաց գլուխ կենալով՝ զամենքն այլ թրէ անցուց:
Ախտէս իր մերձաւորները պատուղ մը հետա-
ւոր հպատակաց վայ ինչ գութ կըրնար ունե-
նալ: — Աւելին և դէպքն լաւ կ'իմացընեն. և
հարկ է տղետալի պատկեր մ'այլ տեսնենք մեր
աշխարհին մէջ, որ մեր Աշտոյ պատկերը լաւ մը
լուսաւորէ. թէ և նոյն իսկ այն սեւանկար պատ-
կերն այլ իր լուսափայլ կողմերն ունի:

Ձափր ամիրապետութեան աթոռը նստելէն
քիչ ետքը (848) Հայաստանի ոստիկան խաբեց
զԱպուսահլ-Մուհամմետ-էլ-Ֆուզի ըսուածն,
երբ Բագարատ իշխանապետ էր՝ ի Տարօն. որ և
խորագիտութեամբ կանխելով քան զԱպուսահլ՝
անոր առջև խաբեց իր մեծամեծներէն մէկ քա-
նին ծանր և ազնիւ ընծաներով, և յորդորեց որ
էաշխատի առաջ գալու, եթէ միտքն հարկերը
ժողովել էր, ինչպէս որ կ'իմացընէր. նա այլ դի-
տելով և իմանալով որ Բագարատայ քով բաւա-
կան ոյժ և օգնական կայ (Արծրունեաց հետ դաշ-
նակցութեամբն), գոհութիւն ցըցուց և հարկերը
առնելով հանդերձ ընծայիւք առ խալիփային՝ յետ
դարձաւ, և յաջորդ տարուան հարկապահան-
ջութիւնը յանձնեց Ակրն (Խուրշան) նահանգին

կուսակալին որ կ'լսուէր Մուսէ-Խան-Զօրահա։ Ինքն դարձաւ առ Ջաֆր, և թերանով ամբաստանեալն զան՝ իրաւ կամ սուտ թղթեր այլ սուսա, այն կողմերու ամիրաներէն գրուած՝ ընդդէմ Բագարատայ և Աշոտոյ Արծրունեաց նահապետի։ Ոչ միայն Ջաֆրայ հաճոյ էր այս ամբաստանութիւնս, այլ և Մուսէի, որ արդէն Բագարատայ թշնամի էր սահմանակցութեամբն. և հիմայ Հայոց հարկապահանջ ըլլալով՝ սկսաւ խրոխտալ, հարկը ժողովելու անուամբ, բայց իրօք վրէժ առնելու։ Ձմեռ առեն (849) յանկարծ բազմութիւն զօրաց մտաւ 'ի Տարօն, և Բագարատայ ձմերոց քաղաքը (Մուշ) պաշարեց. Բագարատ շուտով ազաչաւոր դեսպան խաւրեց Աշոտոյ Արծրունեաց նահապետին, որ իր տոհմայնոց և ազատազգի պաշտօնէից ձայն տալով՝ վաթսուն և աւելի հզման ժողովեցան, գնացին 'ի Տարօն, երբ Բագարատ տխրատուած էր Մուսէի դէմ մինակ ելնելու. յարմար առեն հանելով՝ զարկին ցրուեցին զօրքերը, բանակը կողոպտեցին։ Մուսէ ամօթով տեղը գառնալով՝ նոր ամբաստանութիւն գրեց խալիփային. այնպէս այլ Արծրունեաց երկիրը գնացող հարկահանք, որ իրենց անիրաւութեան համար վնասուած էին յԱշոտոյ և պատերազմելով յաղթուած (849-50)։ Այսչափ լուրեր բաւականէն շատ էին Ջաֆրի՝ չարաչար պատժելու զՀայս. և պատժոն այլ 'ի հարկէ կու վայլէր որ ըլլար Ապուսէթ. որ և ինքնին այնչափ կու փափագէր վրէժխնդրութեան՝ որ արտորնօք Հայաստան վազելու առեն՝ Ճաթեցաւ Ատրպատականի կողմերը. և տեղը դրուեցաւ (851) իր որդին Եուսուֆ։ Ամիրապետն՝ ատոր կարճ ձիաւոր զօրք

մեծ պատրաստութեամբ և յուսով կոխեց նախ Աշտոյ երկիրը, և անոր մօրն տպաւնօք՝ միայն պատանդներ առնելով՝ եւրա անկէ և եկաւ՝ ի Խլաթ. հոն կանչեց զրով զԲագարատ իշխանապետն՝ խոստանալով զինքը իրեն տեղ վերակացու դնելու, վասն զի այս երկրին ցուրտը՝ ինծի շատ ջնաս կ'ընէ կ'ըսէր, և չեմ կրնար հոս ուշանալ: Բագարատ խաբուեցաւ եկաւ իր մեծերով և եկեղեցականօք. ամենքն այլ ընկան յորոգայթ և յերկաթի կապանս, և զրկուեցան առ ամիրապետն. իսկ Եուսուֆ փութացաւ տիրեց Տարօնոյ, բոլոր երկիրը տակնուվրայ ըրաւ, և ժողովրդեան կէսը փախուց, կէսն գերի ըրաւ որ առնի յԱտրբատական, առ ժամն պահելով՝ ի Մուշ՝ ուր ձմեռը կ'անցուներ. սպասելով գարնան՝ որ Տարօնոյ հարաւակողմի լեռնայնոց վրայ յարձակի, որք են Սասունցիք և Խուլթեցիք: Բայց անոնք իրմէ շուտ չարժեցան, և նիզակնին ցցած լեռներէն վար թափեցան. պաշարեցին, առին Մուշ քաղաքը, Թշնամիները կարդեցին, գերիները արձակեցին, Արծրունեաց պատանդները յետ պարձուցին, աւարը Թալնեցին. հպարտացեալ Եուսուֆն այլ գաան՝ որ վախէն փախած և Բագարատայ չինած Մշոյ Ս. Փրկիչ հոյակապ եկեղեցւոյն գմբէթին պատին մէջ ապահովուրատած էր. հոն տպաննեց զնա նիզակաւոր մը:

## Ե

Երբ այս անակնկալ լուրն հասաւ Ջաւախի, այլ Հայաստանի բոլորտիքն ջնջման վտանգը տեսաւ, ամեն կողմէ կարճ պատերազմներ կանչեց, մասնաւորապէս Ս. Թոթքացի և Պարսիկ վարպետ ապէնաւորներ և հեծեալներ, և մեծ զօրագունդ կազմելով յանձնեց իր գլխաւոր պաշտօնէից մէ-

կուտ, որ քաջութեամբ, խոհականութեամբ և խաղաղասիրութեամբ անուանի էր, և այլ ասելի հաչակեցաւ ՚ի Հայաստան. խալխիայեն սկսեալ պահապանաց ցեղէն էր սա, և կոչուէր Բուղա-Էլ-Շարապի կամ Գարա-Բուղա, Էլ-Քեպիր (այսինքն Սև-ցուլ, Մեծ կամ գոռող): Իրեք տարի տարի կեցաւ ՚ի Հայս (852-5), բայց իրմէ առաջինութեան շատ երկար տարիներու մէջ էլլերցածը՝ ՚ի գլուխ տարաւ: Նախիջևանի և Խրամի օրերը կեղտով մը նորոգեց. նպատակն էր Հայոց ունեն իշխանաւոր, զօրաւոր անձինքը կամ սպանել կամ գերի տանիլ, կամ հաւատքէն ուրացընել. և ինչպէս կ'ըսէ մեր ժամանակագրաց մէկն համառօտիւ [1], «Կալեալ զամենայն իշխանս և ազատս Հայոց՝ եսպան, զկէսն մարմնով և զկէսն հոգեւով». բայց մենք կրնանք աւելցընել թէ ոմանք հոգեւով այլ մարմնով այլ սպրեցան. և շատ դիւրագին և թեթեւ ջըրին Բուղայի արիւնոտ ու սև յաղթանակը. որ՝ բաց ՚ի գերեաց, 30,000 մարդ կարդեց կ'ըսեն ՚ի Հայս, (զատ ՚ի Վրաց), իսկ իրեններէն՝ այլ աւելի կարգուեցան: Թէ մարմնաւոր քաջութեամբ և թէ հոգեւոր նահատակութեամբ, շատ նշանաւոր և անմահանալի յիշատակներ Թողին Հայք այս պատգամից. զոր ՚ի գիր անցուցեր էր Շապուհ պատմիչն, մէկ մասն այլ կու պատմեն Յովհան կաթողիկոս և Թոմա արծրունի. որոց գլխաւոր դէպքերը միայն համառօտիւ յիշեմ, որ լաւ իմացուի Հայաստանի վիճակը Աշոտոյ առեն:

Բուղա՝ Բաղէշի կողմերէն մտաւ ՚ի Հայս, և գնաց ՚ի Խլաթ, որ շատոնց ամիրայից աթոռ էր եղած. նախ գունդ մը խաբեց Խութեցոց վրայ, զոր շատ դժարութեամբ հազիւ կրցան նուաճել.

[1] Մխիթար Այրիվանեցի:

Աշ ծ գունդ մ՚այլ տուաւ ժխլրաք անուն զօրավա-
լին և զկնէց Ակծրունեաց վրայ. սա ինչուան ար
հաւաւ՚ի վան՝ ձամբուն վրայ կրցածը աւրեց,
Թաղնեց. խրեննէրէն այլ շատ մարդ կորուսա: Ա-
շատ Ակծրունին իր ազատները ժողովեց՝ Նկան
ըսուած ամուր քարաբերդը քաշուեցաւ (՚ի Թոռն-
աւան գաւառի Երասխայ մօտ). զոր եկան պա-
շարեցին ժխլրաք և Բուզա՝ զոլոր խրենց գնդերովն,
(ոյք աւելցեր էին Հայաստանի մէջ եղած ամի-
րայից զօրօքն այլ, և ամենայն պատերազմական
ու պաշարման գործիք և նիւթ ունէին). պաշա-
րեալքն զարհուրած՝ Աշոտէն գազտուկ Թուղթ
խաւրեցին ու Բուզա. նա այլ պահանջեց որ զԱ-
շոտ խրեն տան և խրենք ապահով մնան: Աշոտ
իմանալով իշխանաց վատութիւնը և չկարենալով
վախերնին փարատել, կամայ ակամայ գնաց ու
Բուզա, որ պատուով ընդունեցաւ զնա ու ժամն.
ինչպէս անկէ առաջ ընդուներ էր Մոկաց տէրը՝
Սմբատ Բագրատունի մը. սա ամենէն առաջ
ինքնակամ խրեն գալուն համար՝ բանտարկին սիր-
տը շահեցաւ, և ժխլրաքայ բանած գերիները յետ
դարձուց. իսկ Աշոտ և անոր որդին Գրիգոր Դե-
րենիկ, և ուրիշ գլխաւոր իշխանները, հանդերձ
ամենամբք՝ իբրև գերի կամ պատանդ խաւրուե-
ցան ու ամիրապետն. նոյնպէս անոր Գուրգէն
եղբայրն այլ, որ Բուզայի խաւրած 15,000 զօրքը
ջարդելէն ետև՝ ինքնին եկաւ ու Բուզա. իր մայրն
այլ Հռիփսիմէ տիկինն՝ կամաւ որդւոյը ետևէն
գնաց՚ի Պարտաւ:

Երբ հասան ատոնք և ուրիշներ այլ՝ առաջին
քանտեղոյ քով, ամիրապետն զամենքն այլ կան-
չեց իր առեանը, և ամենայն զարհուրելի կերպա-
րանօք և խօսքերուն յանդիմանեց, պատռնացաւ,
մեհատպարտ վճռեց. միայն ազատութեան ձար՝
մեղմանութիւնը ցուցընելով: Յազկերտի առեն

Վարդանանց դիպուածն հոս այլ նորոգեցաւ. և Թէպէտ Աւծրունեաց եպիսկոպոսն Յովհաննէս, որ կապելոց մէջ էր, իւր կարգին յարմար պատասխանատուաւ, քրիստոնէից կրօնքը և պաշտպանեց. բայց խալխային բարկութեամբ առեանէն ելնելով խմացուց կապելոց՝ որ իր օրէնքին դէմ էր անոնց հետ վիճաբանիլ, կամ մնայ որ կամ հաւատքնին ուրանան կամ սպանուին: Վարդէն Բագարատ իշխանապետն ուրացեր էր, ըսելով՝ Թէ քանութեամբ և սիրայ ուրանալն մեղք չէ. ուրիշ շատեր այլ դժբաղդաբար իրեն հետևեցան. իսկ Յովհաննէս եպիսկոպոսն, Գրիգոր Աւծրունի իշխան մը և Գրիգոր քահանայ մը, հաստատուն մնալով՝ երկաթակապ բանտեցան, ուր չորս տարին մեռան իշխանն վկայական անուամբ:

Իսկ Բուզա՝ ի Դուբին ձմերելով՝ հոն նահատակեց եօթն կարիճներ, ոյք իրենց գլխատուրն աշնուամբ (Աստմ Անձևացի) կոչուին, և նաև Վարդանանց ժամանակակից նոյնանուն վկանեըն զանազանելով Եղիզէոս Փովղեանք: Այն ձմեռ չորս կողմ եղող իշխաններ՝ Հայ և Վրացի՝ իրենց երկրին ամրագոյն տեղուանքը քաշուեցան, ոմանք այլ եկան անձնատուր եղան. որոց մէջ գլխաւորն էր Սպարապետեան Սմբատ, որ և ազատուելէն պատճ իր տեղը բնակելու, և երբ պէտք ըլլայ բանակը դալու և առաջնորդելու: Գարնան (853) գնաց Բուղա Տփխիս քաղաքին վրայ, առաւ այրեց 30,000 հոգւով: Վրաց կողմէն անցաւ Կովկասի կողմերն այլ նուաձելու, և եկաւ նախ Ծանարաց վրայ՝ որ Աղանից և Վրաց մէջ տեղ բնակէին. զօրաց բազմութեանը վրայ վատահացած՝ սկսաւ կռուիլ. բնն ամիս [1] նստաւ այն տեղուանքը, տան և բնն անգամ պատերազմե-

1 Ինն օր գրած է Թոմայի Արծրունւոյ գրոց մէջ.

ցաւ սաստկացաւէս, չաս մարդ կորուս, ամօթով յետ գարձաւ, մնաս Հայ-Ազուանից երկիրը. ուր եաչի կամ Ախա-Մոսէ երիցու-Քրդի անուամբ կարիճ մը Ալցախայ լեռնային կողմերուն կ'իշխէր. և Ծանարաց քաջութենէն ակրա առած՝ իրեններէն ժողովեց ՌՀիւ լերան վրայ, և պատրաստեցաւ ընդդէմ Բուղային: Բուղա հոս այլ նախ յարձակմունքով սկսաւ, յաղթուեցաւ. ապա սկսաւ լեռը կրցած կողմէն պաշարել, և իր զօրաց համար ապաւինութեան բերդակներ շինեց. ամիրապետին այլ լուր հասաւ, տեղւոյն դժարութիւնը և կարիճ իշխանին յամառութիւնը իմացընելով, թէ ինչ ընէ, Թողնէ եթէ ապաս: Խաչիփային՝ կռուելու հրաման և նոր զօրք եկաւ, բոլոր բանակով նորէն յարձակեցաւ, և նորէն վռնտուեցաւ: Տարւոյ մը չափ հոն ուշացաւ Բուղա, քանիւոլթ անգամ յարձակուեցաւ ըրաւ, ամեն անգամ այլ յաղթուեցաւ: Դարձեալ սէրք եղաւ պատգամով խաղաղութեան հրաւիրել. Ախա-Մոսէ յանձն չառաւ Բուղայի հետ իսկել, ինչուան որ Խաչիփային ուղղակի լրեն Թուղթ չգայ. երկու կողմէն այլ դեսպան խաւրեցին՝ Ի Պաղատ. Խաչիփային Թողութեան գիր գրեց Մուսէի, եղածները չեղած սեպելով, և պատուիրեց որ անկասկած գայ իրեն, Բուղայի այլ պատուիրեց որ պատուով ընդունի զինա: Եւ այնպէս եղաւ:

Բուղա այս կողմերս եղած աաեն՝ նահատակեց զՄուկաթել Վանանդեցին, Սոլոմոն Սևորդին, Կահա, և Յովնան ԽուԹեցին՝ որ իր լեռնցոց առաջնորդն էր Բուղայի զօրաց դէմ, և հինգ հոս իր հայրենեաց նման լեռներու և լեռնորդայց գիմաց՝ գերագոյն քաջութեամբ պատերազմեցաւ: Բոլոր այս կողմերս և Ի Դուին և Ի Վաղարշապատ նահատակելոց Թիւն՝ աւելի էր քան զ250. զոր

ամենքը մեկէն ոտնել հրամմեց կամթուղկման, Յովհաննէս ե, մեհեկանի տուռն քան և հնգին, (որ է երեք մարդ):

Ապու-Մուսէի հետ պատերազմելու առեն՝ Բուղատուրի ազատ իշխանաց այլ պատգամ խոսելը էր որ գան նրեն հնազանդին. ոմանք հաւանեցան, ոմանք մտանութեամբ ձեռք ընկան. ոմանք այլ երբ տեսան Ապու-Մուսէի յանձնառութիւնը, յոյսերնին կտրեցին պատերազմով դէմ կենալու կամ փախչելով ազատելու: Այս կամաց կամ ակամայ նուաճեալ իշխանաց գլխաւորքն էին՝ Սիւնեաց երեք մեծ իշխաններն, Գրիգոր, Փիլիպպէ և Վասակ. Խաչենոյ տէրն Աբլնեթրսես, Գարդմանայ տէրն Կարիճ, Սևորդեաց տէրն Սահակ Կոն (որ և խոստովանութեամբ մեռաւ 'ի Պարսս իր ոտգործն հեա), Գրիգոր Մամիկոնէից տէրն, Սահլ Շաքէոյ տէրն, (Պապէք սպասամբը բռնողն). գրեթէ չմնաց ոևիցէ գլխաւոր իշխան մը: Այսպէս Բուղա առէլի խոստմանութեամբ քան քաջութեամբ իր կամացն հանելով՝ գնաց 'ի Պարսս ձմեռելու, բոլոր բռնած իշխանները մէկ առել ժողովելով: Սուտ խոստմունքներով և պատուով քիչ մը առեն խաբխըբեց. գիշեր մ'այլ յանկարծ իրենց հանգրստեան և քնոյն առեն՝ շղթաներով կապուած գտան գլուխնին. երկրորդ օրը ձամբայ դրուեցան գէպ 'ի Բաղատաս, Սմբատ սպարապետն այլ անոնց հետ, որուն մեծ մեծ յոյսեր կուտար բուղա: Ինքն այլ բռնած որսերը քշելով գնաց իր արժանաւոր ամիրապետէն վարձքն առնուլ. առեղը Թուղով Իբրահիմ անուամբ կուսակալ մը: Իսկ Հայոց իշխաններէն՝ միայն Գուրգէն Ապուսէթի որդի բռնած վասպուրականի գլխաւոր ազատներն մնին՝ բուղայի հաւանութեան ոչ նայած, զոր արդէն քաջութեամբ՝

անոր Թոզատ զօրքերու ձեռքէն սուբր էր. իսկ Հայոց միջնաբերդին մէջ Թոզուց Սմբատ սպասրապետին որդին՝ զՄերն ԱՇՈՏ։

## Ջ

Բագրատունի Թագաւորաց մէջ միայն մեր Ա. շոտոյ կենաց չափն կու յիշուի, եօթանասունու. մէկ տարի. վախճանած տարին այլ նշանակուած ըլլալով՝ ծնած կու հանդիպի Քրիստոսի 820 թը. ւականին. այն տարին՝ յորում սպանուեցաւ Ղևոն Հայկազն կայսրն՝ ի Կ. Պօլիս, յորում՝ ի Հայս Սմբատ իշխանաց իշխան և Սահակ Սիւ. նեաց նախարարն Հօրայ հետ պատերազմելով՝ ընկան կռուին մէջ, յորում (կամ տարի մը եաև) մեռաւ մեր Աշոտոյ պապն՝ Աշոտ Մատակեր. ո. րոյ ժառանգն Սմբատ Խոստովանող՝ հօրը մա. հուանէն քիչ առաջ՝ աւեր էր ի կնութիւն Տա. րօնոյ սիրոջ և Հայոց իշխանապետ և իր անուա. նակից Սմբատայ դուստրը, յորմէ ծնեալքն են, (մեր գիտցածներն) Հրաս մանչ և երկու աղջիկ, նախ մերս Աշոտ, յետոյ Աբաս[1], Շապուհ, Մա. շէղ. Ա.... կին Գուրգենայ իշխանի Գուգարաց, Ա... սիկին վրաց։ Սմբատ իր հօր եւանգուն կարճութենէն սեւէն իսպղտատեր աշխարհաշի. նութիւնը ժառանգեց. անոր համար հօրը Թշնա. մւոյն՝ Զահապետան Սևադայի հետ հաշտութիւն ըրաւ և Թոզուց որ նաեւ հանգիստ ի Դուին, ինքն այլ անկէ ձանչցուեցաւ սպարապետ Հայոց, ինչպէս իր մանկահասակ աներձագն այլ՝ Բագ. րատ՝ տէր Տարօնոյ և նախիջևան Հայոց։ Սպա.

1 Ասոր անունէն կարծեն ոմանք հօրն Ապլաբաս մակա. նունը, իբր թէ հայր Աբասայ. բայց ինչու ոչ Աշոտոյ՝ այլ Աբասայ հայր կոչուի.

*բապետ և իշխանապետ՝ խնամիք և բարեկամք էին, բայց Բագարատ ոչ Սմբատայ իսկեմոութիւնն ուներ և ոչ բարեպաշտութիւնն, և շատ աւելի վերջը (840) մէջերնին տհաճութիւն մը ծագեցաւ՝ Բագարատայ յանդուգն գործով մը. ատ որ չարաչեզուս մարդիկ ամբաստանեցին այն աստենուան կաթողիկոսը՝ Տէր Յովհաննէս ը, վրան անարժան բաներ ըսելով, որոց առանց քննութեան հաւատալով Բագարատ՝ հրամմեց որ իրեն կաթողիկոսութեան պատիւ չտան. սա այլ Թոլուց աթոռը և վանք մը քաշուեցաւ: Սմբատ և Սիմեսաց տէրն Սահակ՝ այս բանիս դժուարած՝ յետ դարձուցին զկաթողիկոսը և պատուով նստուցին աթոռը. Բագարատ իբր արհամարհուած՝ կոչ ապատեր յարմար առթով իր իշխանութիւնը ցուցընել. բայց ուրիշ փորձանքներ հանդիպեցան իրեն, Ախուանէթի ոստիկանութեան առեն, ինչպէս առաջ յիշեցինք: — Սմբատայ ապարսպեսութեան առեն, որ և Աշոտոյ կենաց վէրջը էր (821-855), իր իսկեմութեամբն Հայաստան՝ ի խաղաղութեան վայելեց, գոնէ այն առենամն՝ ուր կոչ հանդէր իր առաջնորդութիւնն, կամ Դուինայ ոստիկանին իշխանութիւնն. վան զի Հայոց սահմանակից՝ Արտանք, Արբատական և Միջագետք՝ ուրիշ ոստիկաններ և զինուրներ ունէին, որ այն կողմերը կոչ նեղէին. ասոնցմէ էր Սևադա մ'այլ, Ահասանչան? ըսուած, որ Պարտաւէն (Արտանից մայրաքաղաքէն) եկաւ զօրքով ոստոստակից Սիմեսաց երկիրը, և հին իշխանանիստ Շաղատ ասանին տիրեց. վասակ Սիմեսաց տէրն՝ բռնաւորին դէմ աւելի բռնագոյն մը գտաւ, զՊատէք մոլորեցուցիչ ապստամբն՝ ի խալիֆայէ, զոր պատճառ մեր կոչեն Բաբ կամ Բաբան. ասոնց հետևանքը մուտ եղաւ կռնչէց, և անդր օգնութեամբ վռնտուց*

զԱհատա. ինքն այլ քիչ առեղն մեռաւ, երբ այն վտանգաւոր օգնականն գեա իր երկիրն էլ. որ և Վատակայ ազգիկը կին առաւ և աներթալ իշխանութիւնը սկսաւ նուաճել. Սիւնեաց բազք գաւառին կուրիճներն ոտք ելան, բայց բաւական չեղան դէմ կենալու այն բռնաւորին, որ քսան տարի ամիրապետաց սերոբութիւնը սասանեցուց, և իրեն եաև ընկնողներէն 150,000 մարդ ջարդեց. հոս այլ շատ կոտորածներ ընելով՝ սիրեց բաւն Սիւնեաց սերոբութեան. անկէ անցաւ (827) Ասանայ ծովեզերքը կչնալ Հայկին Սիւնեաց երկիրը, հոս այլ 15,000 մարդ կոտրեց, և տասն տարի այլ այս կողմերը և հարաւային Հայոց ամեն տեղութիւնքը ընկնալով՝ իշխանական ճամբաները ջարդով յետ դարձաւ: Մեծ վարձք խոստացուած էր գինքը սպաննողին կամ բռնողին. որ տրուեցաւ քսոչ Հայ-Արաբ երիտասարդ իշխանի մը, Սահլի Ամբատեան, որ նախ իր հայրենեաց՝ Արաբանից, այսինքն Արցախ և Աղուանից Հայոց՝ տապատակները ջնջեց, յետոյ ամիրապետին խուռած Աւֆշին զօրավարին յարձակումն՝ Բաբանայ եաևէն ընկաւ, վերջապէս բռնեց (837) այն զարհուրելի բռնաւորը, և տասը վարձք 660,000 Փրանգի ջոփ: Այս այն կուրիճն է՝ զոր յետ իբր քսան տարուց սերիշ մեծամեծ իշխանաց հետ Բուղա խուռբեց առաջ ամիրապետն՝ի Բաբելոն, ինչպէս քիչ մ'առաջ յիշեցի:

Այս պատերազմներուս մէջ Ամբատ ապարտաւեան և իր որդին Աշոտ այլ մեան ունէին: — Մեր հմայ ունեցած պատմիչքն չեն յիշեր. բայց այսչափ կ'իմացընեն՝ որ Ամբատ ոչ միայն քաջութեան վարչութեան և շինութեան կրթեց իր անդրանիկը, այլ և ապրուտպետութեան, քանի կաց տասնչորսերորդ. և հօրը յաջորդեցին տասը

ասել շատ քաջութիւններ ըրած ըլլալը՝ և զանոնք
էր համբերակին (Շապհոյ) ՚ի գիր անցընելը՝ կու.
յնէր ժամանակակիցն և ականատես Ցովհաննէս
կաթողիկոս. և հարկ է թէ գոնէ Բուզայի գալէն
առաջ տասը տարին այնպէսի գործով անցու.
ցած ըլլայ թէ ՚ի Հայս և թէ Կովկասու կողմերը.
նակ խաղաղութեան առեն այլ չինուածոց պա.
րսպելով՝ ՚ի հինն Երազգաւորս՝ որ և Շիրակա.
ւան (Պաշ-Շէօրէկիէլ). պալատէն զատ՝ Սմբատ
մեծ և փառահեղ եկեղեցի մ՚այլ շինեց (838)[1]
Ամենափրկիչ անուն, քարձրաբերձ գմբեթաւ, որ
հիմայ կործանած է. բայց եկեղեցին իր ջորս ան.
սիւն կամարաց վրայ բարձրացեալ կեցած է, թէ.
պէտ և այն այլ Սմբատէն ելլուս գար եաև նորո.
գեալ:

## Է

Յետ երեսուն տարւոյ Սմբատայ պատրիար.
քութեան և Աշոտոյ կենաց՝ հասաւ Հայոց մեծ
աչխուժութեան և վտանգի պատճառն, զոր ա.
ռաջ յիշեցինք, Բագրատայ և Ադուանէթի դի.
պուածովք, որոց համար եկաւ Բուղա ՚ի Հայս:
Նախատես և նախահոգ պատրիարքն իր կշռա.
նակցոյ անդադրութիւնը տեսանելով և գիտե.
նալով զամէնքը համոզել, չանաց միացածը և կըր.
ցածը ապահովել. և դեռ Մև զօրավարն (Բուղա)
իր աչքատրհէն չջարժած՝ Սմբատ իմանալով եղած
պատրաստութիւնը, թէ անոր և թէ ամիրապե.
սին՝ Թլթոյ և ընծաներով խնդացուց որ ինքն ապ.
րատմամբ կոչը չէ, այլ օրինաւոր իշխանու.

1 Ոմանք մեր Աշոտոյ որդին Սմբատը համարին այս եկեղեցւոյս շինող. բայց իր շինածն ուրիշ եկեղեցի էր պալատին մօտ, որ Թեքուս հիմնայ հոն միացեալ քանի մը աւերակ եկեղեցւոց մէկն ըլլայ:

Թեան հաւատարիմ. և այսպէս առաջին յաղթուե-
ցաւ Թիւն մ՚ըլլաս բանտարկին դէմ, և Հայաստանի
միջնաշխարհը ապահովցաւ. զոր և այլ աւելի
հաստատել՝ երբ Բուզլա Ամատիլասայ պէս ստա-
նալեաք եկեր կու գար մեր աշխարհը: Ա.յս ան-
գամ Հայոց պահապան հրեշտային՝ 30ամեայ կեա-
տու և հզօր երիտասարդի մը կերպարանօք ե-
լաւ անոր դիմաց, աչքը շլացուց, սիրտը շարժեց,
խռտմունք առաւ որ հրա եկողին ջնաս չհասցը-
նէ, և այնպէս Թոլուց որ մանէ 'ի Հայս: Ա.յս
հրեշտակս էր ինքն ԱՇՈՑ, հաստիկին և վայելչու-
Թեան և գինուորութեան ամենէն փայլուն և ծաղ-
կած տեսեն. անշուշտ Բուզլա իրեն քաղդ այլ սե-
պեց որ այդպիսի անձ մը և անոր նման եղբայրք
և հայր՝ իրեն դիմակաց պիտի չըլլան: Աշտաց քա-
ղաքական և ամենայն կիշատակելի գործոց մէջ
այս առաջին դիպուածն է. դիպուած բարեգու-
շակ, Թէ և ինքն գեռ չէր տեսաներ՝ այդ գործոյն
և ատոր նմանեաց համար՝ նոյն գացած ձամբէն
Թագաւորական Թագի մը ձամբայ եղնելն, որ հա-
տաւ իր ձակտին՝ յետ 35 տարւոյ: Երբորդ ան-
գամ ապահովեց Ամբատ հայրենիքը յետ իր հրե-
տակին (իր որդւոյն) ինքնին եղնելով ընդ առաջ
Բուզլայի, երբ սա նուաձելով զՀարրաւային Հայս՝
մտաւ 'ի միջնաշխարհն և գոռգոռ 'ի մայրաքա-
ղաքն Դուին. « Սպարապետն Հայոց՝ իբրև գի-
» տաց, կ՚ըսէ պատմիչն Թոմայ, Թէ ոչինչ օ-
» գուտ բերէ արտաքոյ հրամանաց նորա լինել,
» փութացաւ եկն առ նա, և ընկալեաւ 'ի նմա-
» նէ՝ բնակեաց լինքն և իւրքն՝ հանդերձ իւրա-
» քանչիւր կալուածովք, առանց կասկածանաց»:
Եւ միւս պատմիչն (Յովհ. կաթ.) «զնաց 'ի կեանս
» խառնեաւ՝ առիւ աշխարհին իւրոյ փրկութեան,
» գնաց ընդ առաջ նորա բազում ընծայիւք և պա-
» տարագօք. և առընկալեաւ 'ի նմանէ պատուա-

» սիրաբար... բազում իմաստութեամբ զատղատ
» և զանոսկի միտս նորա յինքն հանգուցեալ վրա-
» տահէ »: Բուզա լսեալ խոստմանն հանգիստ Թո-
ղուց զՍմբատ. բայց միայն տեղեկութիւն կ'առ-
նուր անկէ իր երթալու տեղերուն և անձանց վը-
րայօք. և երբեմն հետը կու տանէր զինա, Թէ ոչ
պատերազմելու՝ գոնէ Թշնամիները յորդորելու
՝ի հնազանդութիւն, կամ գործը շուտով վերջա-
ցընելու համար: Սմբատ այս գժուար և փափուկ
առԹին մէջ լրտես որջափ որ պարտք հայրենեաց
և պարտք հպատակութեան միաբան պատուե-
րեն. և հաւանօրէն իր հեռացած առեն՝ առը
Թողած էր զՍչոտ. որ ջնիշուխը այս առեն ուրիշ
առը, ինչպէս յիշուին իր հայրն և եղբայրն՝ Ա-
ղուանից պատերազմին առեն: Հապա նորէն հար-
կաւոր կու սեպեմ դառնալ այն պատերազմին և
յիշել ախտժեմի գիպուած մ'այլ: Երբ Բուզա
ջարտաջար զարնուած յԱպուսմուսէէ՝ յուսահա-
տեալ փախուեր էր վրանին մէջ, և ասան օր քովը
մնրդ չէր մտեցընել, միայն Սմբատ սպարապետն
համարձակեցաւ նեղս մտնելու և բանաւոր ձեռ-
քէն բռնելու, յիշեցընելով անոր որ պատերազմի
մէջ յաղԹուելն չէ ամօԹ, այլ վհատիլն: Բուզա
Թէ անկէ Թէ ամիրապետէն նոր հասած պա-
տուէրով և զօրքերովն քաջալերուած՝ երես այն
մեծ յարձակմանը Քիչ ետրան վրայ, Թէ և
ձախողեցաւ: Ա յս միջոցիս կու յիշուի Աշոտոյ
եղբայրն Մուշեղ, որմէ յետոյ մը վրայ կեցած
կու գիտէր այն ահաւոր պատերազմը. և երբ յան-
կարծ լսեց հազարաւոր փողոց և եղջերաց շըր-
չեն, և բազմաբիւր զօրաց արաբացի կոկորդաց
աղխազուր ալաղակն, իբր 250,000 [1] ապառաժէն

1 Պատմիչն տեղ մը յիշէ որ Բուզա իր բանակին մէջ
500 հոգւոյ մէկ դրօշակիր մը դրեր էր, և այս պատերազ-

մարդկան և երիվարաց փայլմունքն, վապքն, վէր վար շարժիլն, երկու կողմն յուսատրաբար կամ յուսահատաբար կանչուըռտուելն, վարքն վէր մեքենայով նետուած նետեր, սէգեր, գունտեր, պարսեր, վէրքն վար սոհած թափած քարեր, նետեր նիզակներ, և այն գրեթէ չբացատրելի խառնուրդը, զարնուածքը, անտակ երկնքի մը տակ սաստկաձայն օրոտմունքը, և անձնատ հեղեղի մը եռալ զեռալը, խնձքն գլխէն թռաւ, սոսկումն և յափշտակութիւն զինքն վերացուցին, կ'ըսէ պատմիչն, մինչև յահաւոր հանդէս գալըսեանն Քրիստոսի՝ դատել զաշխարհ՝ ի վախճան ժամանակի. և քանի որ միտքն այն յափշտակութեան և եռանդեան մէջ էր՝ սաստուածաբեալ մարգարէի կամ նեղշնչեալ բանաստեղծի պէս՝ (ինչպէս որ արդէն վարժ էր բանահիւսութեան), սկսաւ յանպատրաստից ստեղծել երգել ոտանաւոր չափով հինգ տունն արտաւոյէ երգ կամ շարական մը, որ կոչ սկսէր,

Անգթասէրն սկսան սրտի նայեցոյ անձն իմ.

զոր, գիտեմ դուռ այլ, Հայկակ, աւելն ախորժով ուզես կարդալ, քան այն պատերազմին ջուկը լսել. — ո՛հ, լինչ լսեմ, Թերևս այս երգս այլ մեր կորուսեալ Շապուհ պատմչին հետ գտուի. հիմայ ուզեմք չուզեմք սկսալ և գոհանալ այս մեկ տողով, այս փշրանքով, լինչպէս որ մեր ուրիշ շատ հին ցանկալեաց այլ հազիւ մեկ տողնին մեկ փշրնիկն ունինք՝ մնացորդք ժամանակաց խառնակութեան, հնութեան կամ անհոգութեան:...

Ուխտ մէջ 1000 դրօշակիր կու յիշէ. այս հաշուով 500,000 կ'ելլար զօրքն. բայց որավհետև ինքնին հոս 200,000 էն աւելի էր կ'ըսէ, մենք Ագաթանգեղի բանակն այլ աւելցընելով՝ Թերևս աւելի չդրինք 250,000ը:

Բայց դու անցուդարձը զայս այլ նշանէ, որ գրականութիւնն այս տաճն այս Բագրատունեաց տունին մէջ ծաղկած է եղեր և պահուած, հաւասար զինաշարժութեան:

Ան պատերազմին և Բուղայի գործոց վերջը ու գարձը՝ առաջ յիշեցի. հարկ է հիմայ ձամբեն դնել զնա՝ ու գառնաւիք յԱշոտ. բայց ցաւալի հարկ մ՚այլ կայ. պէտք է որ այն ձամբուն վրայ տեսնեմք նաև զՀայրն Աշոտոյ, զՀայրն Հայոց, զՎեծոգին Սմբատ. ոյոյ մեծ արդիւնքն այլ յառաջ յիշեցի. ինքզինք զոհելով՝ հայրենիքը մեծ սպառնալիքէ և կատարածէ ազատելն, այնպիսի ժամու, և ըստ անուանն (Գագիկ-Բուղա) կատարած սեբ ցլուս մը եալչիւրնեալէ. որ և պատուէր առաջ սպարապետին՝ որ տուն Հոգոյ, սեղն իր արդին Աշոտը դնէ իբրև սեղական, և գայ իրեն, որ երթան ամիրապետին՝ արժանաւոր վարձքն առնուլ: Սմբատ Թեղևա կու գուշակէր ինչ վարձք ինչ վերջ ունենալը. բայց գոհ էր իր ըրած երախտեացն առ Հայրենիս. գոհ էր իր սեղ իր ամենևին նմանն և սիրելին Թոլոան. քաղաքական կողմանէ հոգ չունէր՝ Աշոտոյ պէս խոհեմ և կրտրիճ կորիւն մը դնելով իրեն փոխանորդ. ուզեց յապահովել հոգևորն այլ, զոր միշտ կու մտածէր յԱստուծոյ և իր հայրերէն ժառանգած բարեպաշտութեամբը. զոր և ժառանգեցուց իր զաւակացն, ոչ պակաս քան զքաջութիւն և զիմաստ: Արդ որովհետև նոյն տաճն կաթուղիկոսն վախճանած էր և աթոռը պարապ մնացած աշխարհին չխոթութեան պատճառաւ, Սմբատ այն նեղ ժամանակին կարելոյն չափ եկեղեցականները ժողովեց իր իշխանանիստ քաղաքաւանը, յԵրազգաւոր, և առեին յամառ անձ մը չգտանելով առնոց մէջ՝ ընտրել տուաւ արժանաւոր աշխարհականի կամ գեռ կարգ չառած անձ մը, որ էր Զաք-

էիս, Կոտայից գաւառին Զադ գեղջն, որ է ամօտ Երևան քաղաքի, և հիմա Երանոս այլ կ'ըսուի: Ինչուան այս աստեն պատմութիւն քան չի լիշեր այս անձին վրայ, բայց գործն կու վկայէ որ ոչ միայն արքուն վարուց ունէր, այլ և ընորհք ուսուցչութե այն բարձր աստիճանին համար՝ յոր ամբարձաւ, նոյն օրը ձեռնադրուելով 'ի կիսատարկաւագութենէ մինչեւ 'ի կաթուղիկոսութիւն, և նստաւ յաթոռ Ս. Լուսաւորչին (854). իսկ գիտութենն այլ վկայ են իր գրուածքն՝ մեծ ոճոյ և ազագ շաբաթուան աւուրց վրայ, 15 ձառ, որչափ որ ինձի ծանօթ է. որոց մէջ բաց 'ի վարդապետական վեհութենէ, ազգային աւանդութիւնք և ոճոյ բարձրութիւնք այլ կան: Ամբաստ՝ աշխարհին հետ զինքն այլ յանձնեց նորընտիր հայրապետին ազօթից. և անշուշտ շատ սրտառուչ եղաւ հրաժարականն՝ երբ մեկ կողմէն կաթուղիկոսն իր գաւազանն առած, մեկայլ կողմէն Աշոտ՝ հօրը սպարապետութեան տուրը առած, շուարեր էին այս շուտ և անկարծական փոփոխութենէ վրայ, մինչդեռ նոյն անշփոթ շուտուն հետ վարուելու Թէ և քաւական խոհեմութիւն ունէր Աշոտ, բայց Պաղատատի լուրերն

## Ը

Ոչ միայն ցաւալի այլ և շատ զգուշալի և դժուարին էր Աշոտոյ վիճակն. Բուղա քոլորովին ազատ Թուխը էր գինա, բայց Հայոց ոստիկան մ'այլ և իբրև լուռես մը գրեր էր պիտակիմ. ուրուն հետ վարուելու Թէ և քաւական խոհեմութիւն ունէր Աշոտ, բայց Պաղատատի լուրերն

զինքը կու խոռվէին. իշխանաց քանատարկուԹիւնն, իր հօրն այլ անոնց հետ, և հաւատքն ուրացու-Թեան վախն: Իր մեկ սխալ կամ յանդուգն քայլն կրնար հօրը կեանց վնաս հասցընել. մանաւանդ երբ ուրիշ իշխանք ուրացուԹեամբ յետ գարձան (857-8), և ոմանք հոն նահատակուեցան, և մըն-նաց 'ի բանտի միայն Սմբատ, որուն գրեԹէ ինքն-իշխանուԹեան պատիւ խոստացած էր Բուղա խալխպային կողմանէ. խակ սա՝ անոր հաւատար-մուԹեան փոխարէն՝ Աստուծոյ անհաւատարիմ ըլլալ կու պահանջէր 'ի Սմբատայ. և զի նա ճըշ-մարիտ մեծահաւատ և ուժգին էր, ոչ բռնաւորն կրնար յաղԹել, ոչ Սմբատայ կապանքը կու քա-կուէին: Աչառ սրբազան ջանք և աղաչանք ըրաւ առ Ջախլ, յայտնի չէ. բայց այնչափ հաւատարմու-Թիւն ցըլցուց, որ ոչ կրնն և ոչ հօրը վայ կրցան կասկած ու մեղադրուԹիւն մ'ընել. ԹէպԷտ ինչ-պէս հօրն, այսպէս այլ կրնն երբեմն ծանր ծանր և անախորժ հարկեր կու դնէր այս հաւատար-մուԹիւնս. և շատ հեղ ծանրուԹիւն առաջքն այլ՝ իր համազգիքն կ'ըլլային, ապստամբուԹեամբ և անհնազանդուԹեամբ. պէտք էր կամ նուա-ճել զանոնք, կամ անոնց պէս ապստամբ և յան-յաւոր երևիլ, և անկէց այլ աւելի՝ մուռացօղ կար-ծուիլ հօրը կապանաց և բանտին:

Ա յսպիսի տուիճ մ'եղաւ Գրիգոր Մամիկոնէից տէրն, որ ուրիշ գլխաւոր իշխանաց հետ գերուած և բանտարկուած էր 'ի Բաբելոն, բայց յաջողու-Թիւն մը գտնելով՝ փախաւ անկէ և Թշնամեաց միջէն անցնելով՝ եկաւ իր երկիրը, 'ի Բագրեւանդ և անկէ այլ ամուր տեղ մը գտնելու պատրաս-տուած առեն՝ յետ եօԹն աւուրց մեռաւ: Ե-ւէն ընկնող արտաքսցի ոտիկանն պատուիրեր էր Աշտաց՝ որ ուր այլ ըլլայ՝ երԹայ բռնէ զԳրի-գոր. Աշտա լսելով անոր մահը՝ գլուխը հանել

տուաւ և ղրկեց բռնաւորին, ըսելով որ փախչե-
լու տաճն բռնուած է: Ոսոխիանն ուրախացաւ,
խաղխափն՝ ի վարձ հաւատարմութեան Աչոտոյ՝
երեն պարգևեց Գրիգորի երկիրը (Բագրեւանդ),
և իբր 30,000 ֆրանգ ոսկի վրան:

Ասոր նման դիպուած մ՚ալ եղաւ Արծրու-
նեաց իշխանաց հակառակութեան պատճառա-
ւոր (ինչպէս առաջ յիշեցի) Գուրգէն իշխանին
ազատօրէն կու տիրէր. բայց երբ գարձաւ միւս
Գուրգէն եղբայրն Աչոտոյ՝ բուն տիրոջ Արծրու-
նեաց, և ատոր որդին Գրիգոր Դերենիկ (858),
մէջերնին չփոթութիւն ծագեցաւ. զոր և չաւել
ցընելու համար՝ առաջին Գուրգէնն թողուց իր
երկիրը և ցուռնաց կոմսը անցնիլ ուզեց. եկաւ
հինչուան Յէրզնուամ, որոյ արուարձան քաղաք-
ապետքն Բիւրի և Զըքըրի՝ բանեցին զնա և Աչոտոյ
խաւրեցին. Աչոտ շատ գժտուցաւ՝ այնպիսի
կարիճ և զգօն մարդ մը անարգ վրէժխնդրութիւ
մատնելու. բայց քանի որ հօրը կտպանքն կու
ուզէր՝ իր սիրտն ուրիշ կու կատկըպէր: Իրեն
յանձնուածին կատն այլ չկրցաւ քակել, այլ
յանձնեց Թխլիզի քաղաքապետին, որ այլապէս
էր. նա փորձեց և չկրցաւ հաւանեցընել զԳուր-
գէն յուրացութիւն, ապա կամ կատի վրայ ա-
ւելցընելով՝ ղրկեց զնա ի Բաբերդն. ուր նոյնպէս
հաւատաւ ձևալով իր հաւատոց վրայ՝ դրուեցաւ
ի բանտ. բայց մէկ կամ երկու տարի վերջը յա-
ջողութեամբ պրծաւ, գարձաւ իր երկիրը: Ար-
ծրունեաց պատմչան (որդին Աչոտոյ) Դերենիկ՝
որ գէթ 14 կամ 15 ամեայ պատանի մ՚էր, և իբրև
հօրը տեղակալ կու նաէր խալիփային հրամա-
նաւն, երբ իմացաւ Գուրգենի գառնալը՝ վախնա-
լով որ ջելալ Թէ տիրէ երկրին, աւելի իր հաս-
կանալ տալով քան խոհական իմաստակութեամբ՝
յանկարծ վրան վազեց, բայց վռնտուեցաւ քոչ

ու փորձ ընկնանէն: Դարձեալ յանկարծակի յարձակեցաւ Դերենիկ, Գուրգէն արդէն հիւանդ ըլլալով ձիէն ընկնալով բանուեցաւ, և բանուեցաւ (՝ի Հադամակերտ, ընկանանիկաս Սրծրունեաց). բանտապանն քակեց և ազատեց զԳուրգէն, և գիշերանց բերաւ մուտ ցնա Դերենիկայ քնարան սենեակը. Գուրգէն արդէն վրէժխնդրութեան պատճառ կրնար ունենալ, որովհետև Դերենիկայ պատճառ սպաներ էր իր հայրը. սակայն իր սիրտն շատ մեծ էր՝ այսպէս գողտրիկ անիտհեմ ատլայ մը սպաննելու համար. և մանաւանդ ասկնուական տղայ մը՝ թէ և Թշնամի, ան, բնութեան խորհրդոցը մէջ՝ միշտ տղայ միշտ վըեարձան է. Գուրգէն՝ ընկերքա և տուրը անոր գլխուն վրայ վերուցեր էր, մեկայլ ձեռքն այլ սակրին և դանակին վրայ, սակայն չկրցաւ արցունքը բռնել՝ սիրոյ և տաեղութեան կսուքին մէջ, լալով կանչեց. «Դերենիկ, որդեակ իմ Դերենիկ, » ձնա բարով, այսուհետև համարձակ սիրէ եր. » կրնա. եա կ'երթամ՝ի Յունաստան»: Դերենիկ զարհուրած վեր ընկաւ, երազն պէս և երազէ աղաւոր տեսարանը տեսաւ, իր բանտեալը տեսաւ երամեակ գլխուն վրայ կեցած. «Ա՛հ, հայրս, ինայէ ինձի», կանչեց, և լեզուն բռնուեցաւ: Գուրգենի բաւական էր եղած. արիւնէն աւելի էր արտասունքի վէրքն. նոյն արտասունքը չորցած՝ մուխեցաւ եւաւ ծածկուեցաւ տեղ մը, ինչուան որ յարմար առիթ գտնէ վրէժխնդրելու Յունաց երկիրը, ուր որ շատոնց միտք ունէր երթալ: — բանական չէր այս արտասուքը, այս Թատերական տարտնս. հպարտ էր որ նոր դիպուածներ այլ նոր տեսարաններ աւելցընեն: — Իր պահպանած տեղն (Երանգանիգեղին) վանաց տէրտէրչ քոմիս էր, որ հիւրասիրութեամբ՝ մատնեց զնա առ Դերենիկ, և առ Թերևս աւելի վախով

քան տեբլութեամբ՝ նորէն ամուր տեղ մը պահել տուաւ զԳուրգէն, և պատուիրեց այլ որ նեզուն չտան:

Ա.յս առենները մեր Աշոտ զբաղած էր իրեն աւելի մօտ Հայոց, Վրաց և Աղուանից իշխանները հնազանդեցընելու և ամիրապետին հպատակ պահելու. այս դիպուածիս չկրցաւ հասնիլ յաւաջ քան զկաթուղիկոսն Զաքարիա. որ երբ լսեց Գուրգենի մեծասրտութիւնն և Դերենիկայ փոքրոտութիւնն՝ քանի մը եպիսկոպոս հետն առած եկաւ աղաչեց մանկահասակ իշխանորդւոյն՝ որ արձակէ իրեն կենաց խնայողը. պատանին այլ մեկնեն հաւանեցաւ, արձակեց զԳուրգէն. մեկ տեղ գաշինք դրին, և գարձուց անոր Հայրենի ժառանգութիւնը, որ էր Մարդաստան գաւառը, Նախիջևանի մօտերն, և սիրով բաժնուեցան: Գուրգէն այլ անկասկած ըլլալով՝ի Դերենիկայ՝ սկսաւ վախնալ յԱշոտոյ. վասն զի իբրև ապստամբ յամիրապետաց մեկ մը բռնուած և անոր ձեռքը տրուած, հնարայ որ նորէն փախչելով քանտէն եկեր էր իր տեղը, ՚ի հարկէ աւելի յանցաւոր կու սեպուէր, և աւելի պարտք կար Աշոտոյ՝ անոր վրայ աչք ունենալու: Ասոր համար Գուրգէն հանգիստ չէր կենար տեղ մը, այլ աւելի Տարօնոյ կողմերը կու պտըտէր, ուր մայրենի ազգականները ունէր. և հոն էր՝ երբ Աշոտ խոպտացընելով զվերուին Հայա՝ յանկարծ եկաւ այս կողմերս, Վանայ գաւառը. Դերենիկ վախնալով դիմացն ելաւ. Աշոտ քիչ մ՚աւելի խրատել կամ վախցընել ուզելով, հրամեց որ արգելած պահեն զնա Վանայ բերդը, ուր ինքն այլ եկաւ: Գուրգէն հոս այլ առաքինի մեծանձնութիւն մը բանեցուց՝ իր մերձաւորին վրայ, բայց Թերևս ուրիշ կերպ մ՚այլ ընդդէմ Աշոտոյ. 400 կարիճ ժողովեց և յանկարծակի շտապելով եկաւ ոչ հետու՚ի Վանայ՝ Նարեկայ մօտերը նոր-

*գինւոյ լսուած գեղը. և գեղապան խաւրեց Աշտոյ մուքը խնամալու, և խմացընելու՝ որ եթէ գՈՒերենիկ պատժել և գերի տանիլ ուզէր՝ ինքն անոր ազատութեան համար պիտի պատերազմէր, (մուքը գրեթէ էր գիշերանց Աշտոյ վրայ ընկնիլ). իսկ եթէ խրատուելու համար էր ըրածն, տուր ապահովական ձամբայ մը կ'երթայ կ'ըսէր, եթէ հաճիս, քեզի փեսայացընել գՈՒերենիկ, որ հաւատարիմ և հնազանդ մնայ քեզի մինչև վերջ օր: Աշտոյ մուքն այլ այս էր. սիրով հնազանդեցընել զպատանին, որ նոր կարգուած էր, բայց նոր այլ այլի մնացած էր մատուցիչ հարսին: Այս առթով երեք իշխանքն այլ աւելի բարեկամացան. Աշտ առաջ գՈՒերենիկ հետը տարաւ՝ Բագարան՝ աւանն Շերակայ, և հոն իր զաւկին պէս պահելով վերջ տուին մը, յետոյ մեծահանդէս հարսանիք ըրաւ, և իր սկրոն Սոփի դասրիկը պատկեց անոր հետ (862). ասկից ծնան երեք անուանի իշխանքն Աշտ-Սարգիս, Խաչիկ-Գագիկ և Գուրգէն. որոցմէ Գագիկ Արծրունեաց առաջին Թագաւոր եղաւ և իր ցեղին ամենէն մեծապօծ և հռչակաւոր անձն:*

*Այս առեններս ԳՈՒերենիկայ հայրն՝ Աշտ սկրն Արծրունեաց այլ գարձաւ, և իր իշխանութիւնը ժառանգեց. նոյնպէս իր երկրին խոստովանող եպիսկոպոսն այլ Յովհաննէս, և անոր ընկերն Գրիգոր քոր քահանայն, և ուրիշ իշխանք այլ գարձան. մնայն Արծրունեաց որդեսէր մայրն, սիկին Հռիփսիմէ՝ Բաբեղոնի արգելանաց և տաք օգուն չդիմանալով՝ մեռաւ, և հոն օտարութեան մէջ Թաղուեցաւ: Նոյնպէս այլ մեր Աշտոյ հայրն՝ բագրատ երախան Սմբատ, իշխանակցաց դառնալէն ետև՝ ինքն որ ամենուն առաջնորդն էր՝ ամենէն վերջին եղաւ, և ամենէն աւելի նեղութեամբ քանտի մէջ մեռաւ: Ետու հետ հրապոյրը լսեց, միշտ արհամարհեց, և ուրիշներուն աշխատհական էրջանկա-*

թիւնը տեսանելով անտրտունջ, անկէ եւս մին
լսեն անանց երկայնութեանը կը փափաքէր, որ
և չուշացաւ. ասան ամիսներէն եւս[1] վախ-
ճանեցաւ աքսորանաց և արգելանաց մէջ, և թա-
ղուեցաւ Դանիէլի մարգարէին անուամբ ձանձ-
ցուած գերեզմանատեղին. Թողլով հայրենեաց
պատմութեան մէջ պատուելի անուն մը, եկեղե-
ցւոյ մէջ աւելի պատուելի խոստովանող անունը և
յիշատակն ընդ արդարոց, զոր Հայոգիր նշանա-
կէ 'ի 25 մեհեկի (3 մարտի):

Աշոտ երկրի վայ տխուր բայց յերկինս ու-
րախ բոլոր գաւառ, ունենալու նախ հայր մը, և
յետոյ (55 տարի վերջը) արդի մը խոստովանող կո-
չուած, և երկուքն այլ համանուն Սմբատ. եա-
քինն իր պապան միայն համբերութեամբ երկա-
րած խոտովանութիւնը՝ արեանն այլ կատարեց
ուինքեց, ինքն այլ արբազան նահատակաց կարգն
անցնելով, (Յայտնուածոյ) Հայոգրին մէջ ա-
հեկէ ինն (ապրիլի 15) բանեց. իսկ ինքն Աշոտ
այլ թէ ոչ առեւնական խոստովանութեամբ՝ այլ
յայտնի բարեպաշտ կենաց և մահուանն համար՝
արժանի սեպուեցաւ հօրը և արդեան հաւատա-
րեալ եկեղեցւոյ մէջ փառաւք, որով՝ քան զնուա
գերազանցեց յերկրի:

[1] Սմբատայ վախճանած տարին ըստ ոմանց կ'երևի 859, և ըստ այլոց 861. Յայտնուածոյք 10 տարի կ'ըսեն իր գերութիւնը, բայց այս գերութիւնս Բուղային գալէն կու սկսին պատմիչք, որ է 852. այս հաշուով կրնայ 10 տարի ըսուիլ:

## Թ

Ամբատայ ապեր թախտ կոչեանտպեան Բուզան՝ երբ
մէ ապերթիսէն պատիժն առաւ. նոյն ինքն Չափր
խալիֆայն իսաբեց զնա իբրև կոտակալ՝ ի Խո-
րասան, և զայլ պատուէր տուաւ ու սպաննե-
ցին. իսկ ինքն ամենայն չարեաց առիթն այլ, ինչ-
պէս առաջ յիշեցինք, իր որդիէն սպանուեցաւ
(861). այս Հայրապետին այլ (Մոզդանէր)
իսլամէն տանջուած քանի մը տարի ետև մեռաւ.
աեղն անցաւ (862) իր հօրեղբօր որդին Մոզդա-
յին-Պիլլահ, որ իբրև փոխարէն Ամբատայ ան-
պարտ մնհատան և Աշոտոյ զրկանաց, անուանեց
զաս Իշխան Իշխանաց, ոչ միայն Հայոց, այլև Վրաց
և Աղուանից. թէ և սա արդէն իբրև անուն վե-
րակացու և նախիշխան ձանչցուած էր՝ իր հօրը
պանդխտութեան տարին սկսեալ. և այս տա-
րին (855) կոնդանակուբ՝ տարեգիրս սկիզբն
իր իշխանութեան և Բագրատունեաց պետակա-
նութեան. որ և նշանական հանդիսմամբ (Քրիս-
տոսի ծննդեան տոյպ տարին հաշուելով) Աբ-
ջահունեաց Թագաւորութեան սկսանելոն հա-
զարամեակն էր. իսկ այն Թագաւորութիւ վերջա-
նալէն ետև՝ 428 Թուին Քրիստոսի՝ նոյնպէս 428
տարի էր: Բայց այս պատուոյ հաստելոն բուն
առիթն էր Աշոտոյ խոհեմութեամբ և աչալրջու-
թեամբ կառավարութիւնն. հաստատմութիւն՝
ռահվիրանց և ամիրապետին վստահութիւնը շա-
հեր էր, յորդորանօք և առատաձեռնութեամբ՝
ազգային իշխանաց սիրտը. հաստատակաց բարին
գիտելով՝ անձնական զրկմունք կամ արհամար-
հանք բանի առիթ չդնելն՝ զինքն այլ աւելի սիրելի
ընելն. զոր և սկսանուեան Յովհ. կաթողիկոս
պատկառ կու բացատրէ. «Յորժամ փոխանակ

» Ամբատայ հօր իւրոյ պայազատէր զապարտապե-
» տութիւն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զինա-
» նախագուշնից վեհագոյն ճանաչիւր. վասն զի
» ընկալեալ զմեծարանս՝ ի քաց արհամարհէր
» զանարգանս, և միշտ ի հրահանգս բարւոյ կըր-
» թութեան զինքն վարժէր, և բարի ազդուճն իւ-
» րոյ օգտոյն տայր. ընդ ամենեսեան սէր աներտ,
» և ոչ ի հակառակութիւնս ինչ կամ ի կռիւս
» ընդ Թշնամիան մաքառեալ, քան թէ բարե-
» պեաց բանիւք և բարի օճանաւ՝ զնոսա ածել
» յուղղութիւն և ի կամս իւր. իսկ զպայքարանս
» անոսի չահոյց ինսա իւր վարկեալ՝ և առատա-
» ձեռն առ ամենեսեան գտեալ, յինքն զբազմաց
» մեռս յանդուցանէր սիրալիր սրտիւ. որպէս զի
» յայսմ սակի ամենեքեան իսկ նմա հաճեալ հա-
» ւանեալ էին... և ամենեքեան գաշինս ընդ նմա
» դնէին, որպէս արդարև ընդ Թագաւորական
» զարմի »: Խալիփային դահնէն Աշոտոյ իշխանու-
Թեան զգեստը տուաւ (862) Ալի-իպն-Եահեա
Էլ-Էրմանի կոչուած տասիկանն, որ բուն Արզնի և
Նիրկեւրատոյ կուսակալ էր, և կու պատրաստուէր
երթալ ընդդէմ Յունաց. ինչպէս գնաց այլ՝ և պա-
տերազմի մէջ մեռաւ:

Իշխանապետութեան հետ Աշոտոյ յանձնե-
ցաւ աւերկ ծանր և հոգալի պաշտօն մը, որ ին-
չուան այն տաեն քրիստոնէից էր տրուած. այս-
ինքն է Հայաստանի հարկահանութիւնն. հարկե-
րը ժողովել և խալիփային դուռը խաբրել, կամ
յանձնել ի ձեռս տասիկանի մը՝ որ դեռ կուներա-
ւէր ի Դուին, իբրև երեսփոխան և վերադիտող
մը ամիրապետին կողմանէ, առանց խառնուելու
նեղքին կառավարութեան: Ի՞նչ և ո՞րչափ էր
Հայոց հարկն. մեր պատմիչք տրոշակի կ'ըսեն
60,000 դահեկան (տահի), որ է իբր 750,000 Ֆր.
բայց տասիկոյ Ա. Ամբատայ՝ Աշոտոյ որդւոյն տա-

նին համարը է, երբ Վասպուրական և ուրիշ մեծ նահանգներ զատուբեր էին իրմէ, և իր ամիսոփ իշխանութեան տուրքն էր այդ. իսկ անկէ առաջ, Արաբացի պատմիչ մը կու լինչէ որ թէ Բագրատունեաց իշխանութեան (Շիրակայ), թէ Վասպուրականի, թէ Սիւնեաց, և թէ արաբացի ամիրայից իշխած երկիրներուն, որ են Կարնին, Դուբին, Արձնէշ, Խլաթ, Խարզան, Պէրզէնա (?), որ մէկ անուամբ Հայաստան կոչուէին, միագումար հարկն էր իբրև 2,500,000 ֆրանգ. ակէ զատ էր Տարօնոյ երկրին հարկն 60,000 կամ աւելի, Արզնի և Մոկաց հարկն՝ որ Հայաստանի և Տարօնոյ հարկէն աւելի էր, Ամդայ հարկն՝ որ Հայաստանի հարկին կիսուն չափ էր. Եփրատայ կողմերուն հարկն այլ զատ կու լինուի. և բոլորն մէկէն գումարն 10 միլիոն ֆրանգի կու մօտենայ: Արաբացի պատմիչն կամ վիճակագիրն այս և ուրիշ շատ աշխարհաց մէջ միայն լուն Հայաստանին համար կ'ըսէ, թէ այս աշխարհս կամ վիճակ արծաթով կու վճարէ հարկը. արծաթ ըսելով զուտ արծաթ կ'իմանայ, թէ ոսկի (ոսկի և արծաթ). — կարծեմ առաջինն. վասն զի այս ժամանակէն դար մը առաջ Հայաստանի մէջ առատ և զուտ արծաթահանք գտուած էին, խալխափայ մոլորած առեն, հաւանական է որ այն արծաթէն կու տրուէր հարկը, գոնէ առեն մը: — Հարկին չափը հարկահանաց և անուեասբանից թողլով, արծաթահանքն այլ երկրաբանից քննութեան, գտանք Իշխանատեան Հայոց:

Աշոտ բարձրադոյն պատուոյ հանելով իր առաջին իշխանութիւնը, այսինքն ապարատեսութիւնը՝ տուաւ իրմէ վերջը եղող եղբօրը, որ էր Աբաս, «այր քաջ, անձնեայ և թիկնաւէտ, ազոյգանձն և գեղեցիկ հասակաւ, կորովի և յաղագս պատերազմունս. որ և աջակցեաւ նմա

» եղբօր իւրում՝ Աշոտոյ՝ զամենեսեան հնազան-
» դէր ընդ լծով ծառայութեան. 'ի բազում կող-
» մանս բազում անգամ արութիւն ցուցեալ, և
» հռչակաւոր և հոյակապ 'ի մէջ բազմաց ե-
» լեալ [1]»: Սպարապետութիւնն ինչպէս ար-
դեամբ՝ այսպէս և պատուով առնէին էր 'ի Հայս
այն առեն՝ յետ նախիշխանին. իսկ երբ իշխանա-
պետն Թագաւոր եղաւ՝ իր և սպարապետին մէջ
նոր պատիւ կամ աթոռ մ' եղաւ իշխանաց իշխանն.
սակէ զատ և վար կարծուի Տէրանց-փէր պատիւ
և աթոռն. իսկ քիչ առեն վերջ՝ առնցմէ այլ
վեր և անմիջապէս Թագաւորէն եաև գրուեցաւ
Ընէրէզ-ափսայ պատիւն, որ երբեմն Թագաւորին
ժառանգն կ'ըլլար, երբեմն մեծ երկրի մը նահա-
պետն.— ուրիշ մեծ պատիւ և աթոռ մ' այլ հաս-
տատեցաւ Մարզպան Հայոց կոչմամբ, որուն իշխա-
նութիւնն կամ պաշտօնն շատ որոշ չինշանակուիր.
(յայտնի է որ Վաղանեանց տիրապետութեան
առեն մարզպանաց նման չէր, վասն զի անոնք
հնամենուան ոստիկանաց պաշտօնը կու վարէին,
և երբեմն միանգամայն իշխանապետ և հարկահան
էին. գուցէ Բագրատունեաց մարզպանն՝ հարկա-
ժողովն ըլլայ, կամ տահմանապահն): Այս պա-
տիւներէս ոմանք, և ուրիշ շատեր այլ, Ա Մեծ.
ոտյ առեն որոշուեցան, և ոմանք անկէ ետքը.
իսկ իր հօրը Աշոտոյ կարճ Թագաւորութեան ա-
առեն՝ ոմանք միայն, ուսկից անշուշտ իր որդւոյն
այլ մաան հաներ էր:

Եւ էին (յիշեալ) որդիքն Աշոտոյ՝ Սմբատ Ա,
իր յաջորդ Թագաւորն, Գուրգէն, Սահակ, Շապուհ.
իսկ 'ի դաւերացն յիշուին, մէկ մը՝ կիներ Գուրգ-
ենայ իշխանորդւոյն Վրաց. Երկրորդ, նախա-
գրեալն Սոյէ՝ տիկին Արծրունեաց, երրորդ Մա-

[1] Յովհ. կաթ.:

ըէտ՝ Սիմեոնաց տիկին, կին Վատակայ՝ որ մահա-
նաւանքն կամ՝ փողոքչական կոչմունքն Գոբռոս կ'ը-
սուէր. զոր և Աշտա երբ իշխանապետութեան
հասաւ՝ հաւանութեամբ ամիրապետին հաստա-
տեց՝ ի տէրութեան Տայրենեացն. կամ որոշ ը-
սելով Սևանայ ծովուն բոլորտիքը եւած Գեղա-
մայ գաւառներուն. վասն զի բուն Հարաւային
Սիւնիք (որոյ գլխաւոր գաւառքն էին Վայոց ձոր
և Բաղք) զատ և աւելի մեծապատիւ իշխան մ'ու-
նէին, որ և բուն Սիւնեաց պէր կամ գահերէց
իշխան կ'ըսուէր. և այս առեն իշխողն այլ Վա-
ստակ մ'էր, Իշխանիկ մականուանեալ. մեկայլքն՝
Սիսականք կ'անուանէին երբեմն տէրունդք Սիսա-
կայ՝ ի Թուանոյ Հայկայ, ևս և Հայկազնի. Աւրա-
թացիք Սիսեանն կոչեն զառնիք, իսկ զբուն Սիւ-
նիս՝ երեից գլխաւոր գաւառին Վայոց ձոր անու-
նը ծռելով՝ Վայջոր կոչեն: Այս առենուան և քա-
նի մը յաջորդ դարուց պատմութիւնը և անձինքը
որոշելու համար՝ հարկաւոր է այս զանազանու-
թիւնը գիտնալ[1], և մանաւանդ մականուններըը ո-
րոշել. զոր եթանի Թէ պատմիչք այլ միշտ ա-
նուանց քով նշանակած ըլլային, վասն զի անուա-
նակից իշխանք շատ կան, ինչպէս այս երկու մեծ
Վատակ իշխանքս. որոց մէկն փեսայ Աշտոյ,
միւսն այլ Թէ և ոչ խնամի, այլ նոյնպէս կուսպա-
տուէր և կուս պատկառէր յիշխանապետէն. «յա-
» էտ խնամութեամբ և հեզահամբոյր հանդար-
» տութեամբ և հաւանութեամբ մեծաւ հնազան-
» դէր Աշտոյ իշխանին իշխանաց, և խրատու նո-
» րա զոնին մատուցանէր խնամով, ևբրև զօրէնս
» միշտ ի սրտի իւրում պահելով. և ի ձեռն այ-

1 Պատմիչք մեր երբեմն այսպէս կուզանազանեն, եր-
բեմն խառն կամ շփոթ կը յիշեն. Զամչեան պատմա-
հայրն այլ մեր հոս դրածին հակառակ՝ զՑեղ Գաբռուռին՝
Սիւնի կոչէ, զԻշխանիկն՝ Սիսական:

» Ոորիկ յաւէտ իմն ընդարձակապոյն զառն աէ-
» րութեան իւրոյ յարդարէր՝ ի լոյրը բարեմաան
» լրութենա. և կայր բազում խաղաղութեամբ
» ըստ սովին հանդիսի բարեպաշտութեան »:
— Իսկ Գաբրուան Վասակ փեսայն Աշոտոյ՝ կարճ
օրեայ մեռաւ, զոր կարիճ Թոլլով, Գրիգոր-
Սուփան՝ իր յաջորդը, Աշոտ, Սահակ և Վասիլ
կամ Վասակ. որք միշտ պատերնուն հնազանդ
եղան, և մօրերնուն վրայ մեծ սէր և խնամք ցու-
ցին՝ Յուսիայ հալածանաց առեն. բարեպաշտու-
թեամբ և շինութեամբ այլ անուանի եղան, ինչ-
պէս իրենց մայրն այլ Մարիամ: *

* Աշոտոյ իշխանապետութե տարին հեռաւոր
աշխարհի մը մէջ այլ իշխանապետ մը անուանե-
ցաւ, և նոր տէրութիւն մը կանգնեց, որ հազա-
րամեայ տևողութեամբ և տարածութեամբ հա-
սաւ Աշոտոյ տիրած տերերուն այլ տիրեց. Րի-
րիկ Վարդիացին Շուաեան եղերքներէն եկաւ Պալ-
գիկ ծովուն արևելեան կողմը, ուր դարերէ վեր
քնակէին Սլաւեանք. որք նեղեալ՝ ի Փիւնեան ազ-
գաց՝ յօգնութիւն կանչեցին զնա. Րիրիկ եկաւ այս
տեղս (862) Նովկորոտի քով, և յետոյ՝ ի նոյն
ինչ՝ ի քաղաքն դրաւ իր իշխանապետութե աթոռը.
և այսպէս եղաւ սկիզբն լայնածաւալ ու մեծա-
գոր տէրութեան Ռուսաց, որ և յետ հազարա-
մեայ կենացն դեռ երիտասարդութեան ուժոյ
մէջ կ'երևի. մինչդեռ իր ծնած կամ ձևացած ա-
տեն՝ Աշոտոյ ազգն արդէն ծերացեալ էր. Րի-
րիկայ ժառանգորդն երկրիս ծայրերէն կու մօտե-
նայ՝ ի կենդրոնն, իր հարատագոյն երկիրն հիմա
գրեթէ Հայաստանն է. Աշոտոյ ժառանգորդն իր
կեդրոնական կողմերէն կու սփռի ինչուան Նով-
կորոտին անդին, և իր հիւսիսագոյն գաղթականքն
գտան՝ ի մայրաքաղաքին Ռուսաց (՝ի Բեզ-
պուրկ):...

Ժ

Իշխանապետութեան առաջին տարին՝ Աշոտ իր աթոռանիստ Շիրակաւանին քով զօրահանդէս մ՚ըլլաս իրենութիւն և հանդերձ իրեն հաւան և հլու իշխանաց և ազնուականաց զօրաց. իսկ անհաւան հնազանդեցողաց (կովկասեանց) դէմ՝ կռուպատրաստութիւն յարձակելու: Մինչ դեռ հոս բանակած էր, Կ. Պօլսոյ բռնացեալ պատրիարքին՝ Փոտայ՝ նուիրակն եկաւ, թուղթ մը տուաւ առ իշխանապետն, և ընծայ՝ մանո՛ւկ տղայ Քրիստափոր անուն Քրիստոսի. զոր մեծ հաճութեամբ և հաւատով ընդունեցաւ Աշոտ, իբրև պատկ իր բարձրացեալ գլխոյն, յառաջ քան զթագն Թագաւորական, և միշտ հետը տանէր ուր որ երթար: Ահա թղթով յորդորէր Փոտ զԱշոտ՝ ընդհանրական եկեղեցւոյ հետ միաբանիլը անկասկած հաստատուել՝ յորմէ որդի սիեզերական ժողովն ընդունելով. որոյ համար Զաքարիայ կաթուղիկոսին այլ առաջուց գրեր էր, և ըստ իւրոյ նորա խաբեր Նիկիոյ մետրապօլիտը՝ վահան կամ Յովհան, իբրև երեսփոխան. որպէս զի բերան՝ ի բերան խօսելով՝ այս Հայոց և Յունաց մէջ հաստատութեան խնդիրը լաւ պարզէ և իմացընէ. ինքն այլ իր թղթին մէջ կու յիշէր այն ժողովքին համար եղածներն՝ ի Հայս և՝ ի Յոյն: Իշխանապետն և կաթուղիկոսն հրամեցին ժողովք ընել եկեղեցականաց և իշխանաց՝ ի Շիրակաւան. որոց հետ գտուեցաւ և մեծանուն տարկ սարկաւագապետն Նանա, որ երբեմն՝ ի խնդրոյ Բագարատայ իշխանապետի գրեր էր Յովհաննու աեւտրանի մեհնութիւն մը՝ Ս. Հարց տարբերէն գրած կամ թարգմանուած գրքերէն հաւաքելով, և յետոյ տրաքերէն թարգմանելով. վասն

զի անշուշտ այս լեզուն ծանօթ և ընտանի էր Բագրատայ. ոյոյ գերուելեան և քանտարկուելէ առեն՝ Նանա այլ քանտեցաւ ՚ի Զափրայ, և յետ խոստովանական համբերուելեան և նեղուելեանց՝ ազատեցաւ. իսկ իր գիրքն ընկաւ Սմբատայ (սպասպատպետին) ձեռքը, որ և հայերէն Թարգմանել տուաւ. յետոյ մերս Աշոտ այս գիրքը Թողուց իր բարեպաշտ դստեր Մարեմայ՝ աւիկնոջ Սիւնեաց, որ նորէն Թարգմանել կամ հայերէն շարադրուելիւնը կոկել տուաւ. որով մեր այս թագուհ մատենագրուելեանց կարգն անցաւ. և թէ այս. քանիս համար հարկ սեպեցի յիշել հոս, թէ առենին և ժողովքին անձինքը լաւ ճանչնալու:

Արաբացւոց քանակալուելէ առեն գրեթէ դարու կէս միջոց ժամանակի՝ Հայաստան նշանաւոր եկեղեցական ժողով մը չէր եղած. յետ ժողովոյ Յովհաննու Օձնեցւոյն (722-4) այս առաջինն էր (862), ուր Վահանայ մեծապօղտին խոհական, երկար և պարզ մեկնաբանուելիւնքն, Աշոտոյ և Զաքարիայի ուղղասէր և խաղաղասէր ոգիքն՝ միաբանելով, ժողովն այլ հաւանեցաւ և ընդունեցաւ Փոտայ առաջարկուելիւնը. որով Հայք աւելի մեծարեցան ՚ի կայսերաց; և առաւել իրենց իշխանուելեան նեղքեւ եղողք: Բայց գտուեցան և անհաւանք, ինչպէս Սահակ Մռուտ, որ և Ապիկուրէշ մականուանեալ, եպիսկոպոս Տայոյ յԱշունք[1], որ Յունաց ձեռքն էր այն առեն, անկէ հալածուած եկաւ Աշոտոյ քով, իբրև ժողովին պատճառը քննելու համար. և անոր հակառակ մօք Թուղթ մը գրեց առ Փոտ, իբրև ՚ի դիմաց Աշոտոյ, ինչպէս կ՚ըսեն իրեն համախոհքն, և ինչպէս կու կարդան այն ինքնակամ Թղթին օ-

1 Անձանօթ, եթէ չէ Իշխան մեծ առանն Տայոց, կամ Իշուք Թորթումայ:

10249926



բինակաց մէջ. որուն Թեբրևս միայն սկիզբն Աշո-
ոյ գրածն կամ գրել տուածն ըլլայ. « Ֆահա-
» նայապետի զգօնացելոյ, պարկեշտի և առաքի-
» նասիրի որ՝ի Քրիստոս վարուք, Փոտ վերադի-
» տող մեծ քաղաքիս Նոր-Հռոմայ պատրիարգ.
» Աշոտ իշխանաց իշխան Հայոց Մեծաց: Զգիր
» հանձարեղ իմաստասիրութեանդ ձերոյ, ով ա-
» ուսածասիրելդ, ընթերցայ, և յոյժ ուրախու-
» թեամբ բարեբանեցի զերկնաւորն ի Քրիստոս,
» զփրկիչն մեր և զկեցուցիչ, յաւէտ կենդանու-
» թեամբ զարգուելիդ ձեր տեսանելով պաշտ-
» պանեալ. այլ և զնախնականդ աս մխիթարիս զսի-
» րոյն կատակցութեանս, զոյս ներքոտական բա-
» նիս յիշատակեալ էիք: Շնորհ բազում ունիմ
» և կալայց Սրբութեդ», և այլն: Աշոտոյ հարա-
զատ նամակ մը կայ աս Փոտ Համառօտ, յորում
շնորհակալ կ'ըլլայ գրկած խաչափայտին մասին
համար, և աս կայսրն հաւատարիմ ըլլալուն վը-
րայ, աս որ յորդորեր էր Փոտ. Թէ և աստր Թղթին
մէջ այս նիւթիս վրայօք ուրիշ բան չեմք գտներ
բայց այս խօսքս. « Նախ յԱստուծոյ՝ պահպա-
» նական շնորհիւն ամրացեալ՝ի Թշնամեաց, և
» յորոգայթից պահպանեալ պատահմանցն. զինի
» և յոլիմոդոսաց[1] սուրբ Թագաւորացն, զերկա-
» քանչիւրեան ժառանգելով, զայժմուս և զհան-
» դերձեալն:. Առաքեցաք քաջատոհմութեան
» և մեծանձնութեանդ քո՝ յիշատակ օրհնութե-
» ի պաշտպանեալ աստուածընկալ պատուա-
» կան խաչէս »:

Իմ գտած Աշոտոյ պատասխանն և նամակն
այս է. « Յաւէտ հեշտութեամբ ընկալայ, ով
» պատուական գլուխ և հայր սուրբ, զառ՝ի
» քէն գրեալդ. անխտիրեալ կալ մնալ մեզ՝ի

1 Ասկինքն՝ ուղղափառ:

» ապաստարական հնազանդութեան տուրբ և ա-
» տուածապարգև թագաւորութեանդ, զոր ա-
» տուածային գրութեանցն՝ որ մեզ աւանդեցաւ.
» յորմէ ոչ երբեք խոտորեալ, քան եթէ միշտ՝ ի
» նոյն խոկալով հնազանդութեան և ապաստա-
» րութեան խորհուրդս. ցանկ ապաւէրով ազդե-
» ցեալ ինչ՝ ի մեզ հրամանի ինքնակալ թագաւո-
» րութեանդ, զորս անուամբ և առանց հնչ-
» գալոյ զփոյթ յօժարութեանն արդիւնաւորիմք,
» խորհրդով և երկիւղիւ, վերնական շնորհացն
» ազդեցութեամբ: Ահա և զքոյդ պատուական
» սիրելութեանդ՝ անընդմիջաբար՝ ի խորհուրդս
» իմ յաւէտաբար կրեմ զսիրոյն կապակցութեն,
» ըստ արժանաւոր քոյդ մեծութեան, և պար-
» կեշտ և նազելի և մաքուր վարուց. ըստ որում
» հայցեմ՝ ի նուիրական և մշտահոյց յընդունակ
» քո ապօթս և զմեզ յիշատակել. հայցելով յա-
» ւէնական Աստուծոյ, զի և՝ ի մեզ կանխեացէ զա-
» ռատապարգև շնորհացն իւրոց զօրութեամբ:
» Եւ խաղաղութեան Աստուծոյ վերահովանա-
» ցի ձերում արքութեանդ, պահպանելով ան-
» վրդով յամենայնի զքոյդ արժանաւոր և պար-
» կեշտ գլխաւորութեանդ: Օրհնութեանն՝ զոր
» առաքեալ էք յաստուածընկալ և յամենա-
» յաղթ նշանէդ, խոնարհ երկրպագութեան մա-
» տուցի. և շնորհակալութեան, յաւէտ միւս ևս
» վայելչական ողջոյնիս»: Ահա վերջի խօսքս կ՚ի-
մացընէ որ իսչափայէն զատ վայելուչ ողջոյն
մ՚այլ խաւրեր էր Փոտ, որ Թէրևս շնորհաւորու-
թիւն ըլլայ Աշոտոյ իշխանապետութե համար:

Ահաչափ բաւական սեպե հիմայ, Հայկակ, այս
խնդրոյս և դիպուածոյս վրայ. և եթէ աւելի ա-
զեա, հարցուր մեր նոր պատմահօր (Զամչեան),
որ և կու յիշէ այդ թղթագիր Սահակայ և Աշո-
տոյ անուամբ հարցմունք և պատասխանիք, ՚ի

10249926



Հարկէ նոյնպիսի ինդրոց վրայ, քայց չինծու և
Ասքէն կարկըտած: Իսկ ես յիշեմ տալ մը Յա-
յտաբերն Գլխատոսի, որոյ սկիզբն է.

Ընեսաբ Ձայնեալ զուարթնոյն ըզյարու-
թիւն խաչելոյն,
Զոր պատեալ ըզվիմովն եւ զկափարիչ
գերեզմանոյն.
Եր տուրը կատաբքըն խուճապեալ, եւ վար-
չամանն ալաղակէր,
Ես յարեաւ. պատուեն զայս ամենայն տես-
զերայց:

Ինչպէս կու տեսնես տողագլուխ տառէն կազմեն Ասլուա, և շարունակելով բոլոր տաղն կազմէ Աղաչ Ընագաւրայ Ընագաւոր Սահակ. կրնայ կարծուիլ թէ այս Մուսա Սահակս երգած ըլլայ Աշոտոյ Թագաւորած առեն և շոլոքորթուելեամբ Թագաւորաց Թագաւոր անուանած. բայց գուցէ անծանօթ Սահակ մ'այլ ըլլայ՝ անոր Թուրան ժամանակ՝ (ի Աշոտոյ Երկաթի) որ Շահանշահ ըսուեցաւ, այսինքն Թագաւորաց Թագաւոր, որովհետև իր առեն (30 տարի յետ Մեծին Աշոտոյ) ուրիշ ազգակից և անհմանակից Թագաւորք այլ բուսան: Փոտ ինչպէս Աշոտոյ՝ այսպէս Զաքարիայի այլ պատճառ եղաւ Թղթակցութեան և Ցունաց մօտենալու. կաթուղիկոսն ուրիշ եկեղեցական ինդիրներ այլ ըրաւ Վահան մեծրապօղտին հետ, և նոր ու հին տեղեկութիւնները խառնեց իր գրած Ճառերուն մէջ:

10249926



## Ժ-Ա.

Ժողովքին յաջորդ տարին (863) մեծ բնական դիպուած մը պատահեցաւ ի Հայս, որ թէ իշխանապետին և թէ քահանայապետին գուբեը և իննամքը շարժեց: Այս դարուս (թ) գրեթէ բոլոր վերջին կիսուն ատեպ երկրաշարժեր եղան աւելեք, Կ. Պօլսէն սկսեալ ինչուան ի Հնդկաստան, մեծ վնասներով. շատ անգամ այլ հանդիպեցաւ ի Հայաստան, ուրուն լեռներն և հրաբղխի կազմուածքն գեռնաժաժի ահեղ թատր կ'ըլլան. այս միջոցիս մանաւոր թատր և ողբական թատր եղաւ Դուին քաղաքն իր սահմաններով: Այս քաղաքս յետ մահուան մեծին Տրդատայ, ի կէս դարուս, կանգնեցաւ Հայոց հին մայրաքաղաքին՝ Արտաշատայ քով, տափակ բլրի մը վրայ, որ կ'ենթակի թէ մարած հրաբղխի կատայ մ'է. 500 տարի ի վեր էր որ Հայաստանի առաջին քաղաք կու ձանաչուէր, և յետ մեր վերջին Արշակունի Թագաւորաց՝ աթոռ եղաւ Պարսիկ մարզպանաց և յետոյ արաբացի ամիրայից, և այնպէս էր գեռ այս յիշած տարին այլ, և անկէ այլ եռև գրեթէ դար մը և աւելի այլազգեաց ձեռքն մնաց: Մեծ մայրաքաղաքի մը շատ յատկութիւններ ունէր. բազմամարդութիւն, հարստութիւն, շինութիւն, շայլութիւն, և այլն. անոր համար պատմիչք ժամանակին՝ եղած վտանգը քաղաքացւոց մեղաց պատուհաս կու սեպեն, որոց մէջ թէ քրիստոնեայք թէ այլազգիք շատուր էին. և յիրաւի զարմանալի էր այս տարին, (30 տարուան միջոց) երեք մեծ ժաժ կու յիշեն պատմիչք, երեքն այլ ի Դուին հանդիպած, մէկմէկէ ատոիկ և ահեղ. առաջինն եղաւ այս Թուին (863) մեծ

պահոց մէջ[1], և շատ շէնք փլան քաղքին ամեն կողմն այլ, հանդերձ մատամբ պարսպաց քաղաքին. և որ աւելի կակծալին է 12,000 հոգի փլատակաց տակ կորաւ. մնացեալ բազմութիւնն սարսափած տուներէն փախան, և ուրիշ ծածք չգտնողք՝ հրապարակ և բաց տեղեր կենային. և գիշերն այլ գետ չմեռ ըլլալով, և սաստիկ չմեռ, շատերն ցրտէն վնասուելոյն, ինչուան ոմանք սառելով կամ ձեռքերնին և ոտուընին կորսընցնելով: Աւելի վախ տուողն այլ ժաժին նոր սպառնալիքն էր, վասն զի իրեք ամիս առեն առեն կ'երերար գետնին: Ասոր համար Զաքարիա կաթուղիկոս ազգիս աղօթք հրատարակեց հաւատացելոց, ինչպէս նին աղօթականաց գլուխ կենալով. և իր բարեպաշտութեան պատուղ սեպուեցաւ սասանութենէ գադրիլն: Բայց ետքս հինգ տարի ետև (867-8)[2] նորէն ժաժ եղաւ և գրեթէ ամբողջ տարի մը քշեց, երբեմն աւելի երբեմն պակաս ինաս ընելով. սակայն բոլոր կորուստն մէկ տեղ բերելով տակաւին մի մը կունշանակէ պատմիչ մը, 120,000 ոգի փլատակաց և պատառմանց մէջ փճացած. եթէ գրչաց մէջ սխալ չկայ, որ բացարձակ կուգրեն, « Խորասուզեաց յանդունդս երբև երկոտասան » բիւր մարդկան. ահա խոտոր նմանութենէն առի « մարդ »: — Բայց առկէ աչեղ և մեծ սեպուած է 25 տարի ետև հանդիպածն (893) Աշոտոյ մահուանէն քանի մը տարի վերջը. վասն զի յանկարծակի և գիշեր աւեն եղաւ, և այնպէս սաստիկ՝ որ քաղաքին մեծ մասն կործանեցաւ, և

1 Փոթրիկ լաթանոցն կ'ըսեն Առտիկ պատմիչն. բայց չեմ գիտեր առաջինն չարաթն է պահոց, թէ ուրիշ չարաթ մը:

2 Կամ երկու տարի այլ ուշ. վասն զի ի ձեռագիրս թիւն տարբեր է, ոմանք ունին ՅԺԶ (867-8) ոմանք ՅԺԸ (868-9):

70,000 ոգի մէկ ցնցմամբ ընկան անկանգնելի. որ ոչ միայն մարմնաւորը կենաց՝ այլ և հոգւոց մահան մեծ վախ տուաւ. վասն զի շատերն շփոթեցան թէ Աստուծոյ նախախնամութիւնն բոլորովին հեռացեր է անոնցմէ. որոնց սիրտը և հոգին բժշկելու՝ միայն հնարաւոր գըտաւեցաւ Սևան կղզւոյ վանահայր մեծ և գիտնական Ճգնաւորն Մաշտոց, որ այն աստէն՝ ի Հայաստան առաջին անուանն էր սրբութեամբ և կրօնասիրութեամբ, և ամենուն ծանօթ. որով և յաթոռ կաթուղիկոսութեան հրաւիրեցաւ (897): Թէ ժամանակիս ամենէն նշանաւոր անձանց մէկն ըլլալուն, և թէ Աշտոյ հետ այլ ծանօթութիւնն ունենալուն՝ հարկաւոր և ախորժելի է հիմայ թողուլ զԴուին կիսաւեր կիսականգնուն, և Սևանայ մենաւորը նկատել:

Մաշտոց, որոյ մկրտութեան անունն Թուխ Սահականոս, Աշտէն իբրև 14 տարի վերջ յաշխարհ եկած է (833-4) քահանայական ազնիւ ցեղէ մը, յեղխվարդ գեօղ Ախրատատայ, Ապայէրան ստորոտը. ուր առաջին տարիներն անցուց իր հօր՝ Գրիգոր քահանային խնամոց և զգաստութեան տակ. որ և այն առեն իբրև բանաքարոյ ոստիկանաց նեղութենէն զզուած, Թողուց հայրենիքը և եկաւ Գեղամայ ծովուն հարաւակողմը Սոթք գաւառին մէջ բնակեցաւ, և բարեպաշտութեամբ կու կրթէր զաւակները. որոնցմէ ըզՄաշտոց՝ երբ չափահաս եղաւ՝ դրաւ՝ ի կրթութիւն և՝ ի կարգ քահանայութեան՝ ի վանքն Մաքենոց, որ Գեղամայ և Սոթից գաւառին միջոց ծովուն մօտ՝ սարատափ տեղ մը շինուած է, և հիմայ Գըլըգիւէյէ կ'ըսուի. իսկ այն առեն այն կողմերուն, և Թերևս բոլոր Հայոց վանքերուն մէջ նախապատիւ էր, իր վանձանց խստակրօն վարուք և գիտնականութեամբ. որոց պատճառ

եղած էր իմաստուն հայրն Սողոմոն, զոր մը և աւելի առաջ։ Ա յս վանքս որ քանի մը Սողոմոնները մենաստան, Սահմանոս Սիւնեցւոյն վարժարան, Վահանայ Գոլթնացւոյն օթևան եղած էր, Մաշտոցի այլ մատենագրական եղած. Թէպէտ և քիչ առաջ Բաբանայ բանուածքեամբ ապրուած էր, և միանձնունքն ցրուըտած, բայց Աշոտոյ փեսային՝ Վասակ՝ նորէն նորոգել տուեր էր (յամի 851), և կրօնաւորքն ժողովեր էին, որոց հիմնակուսան առեն առաջնորդն էր Սահմանոս անուամբ մէկն. որ գասախարակեց զՄաշտոց, և քահանայ ձեռնադրել տուաւ Սիւնեաց եպիսկոպոսին (Դաւթի)։ Մաշտոց հոգևոր և գրաւոր կրթութեամբ հոն կատարուելով, և աւելի առանձնական ճգնական կեանց փափագելով, Թոլուց արդէն բաւական խատակրօն (Մաքենոցաց) վանքը, և Արտաւազդայ-ապարանք ըսուած տեղը անապատատուն ճգնաւորաց մէջ գնաց։ Քիչ առեն էն անկէ այլ եղաւ, և եկաւ՝ այն տարին յորում Աղուանից իշխանապետութեան հաստատ (862), ինքն այլ մտաւ՝ի Սևան, յամայի և միայնուկ կղզին Գեղամայ ծովուն. և քան զնա զարմանալի սիրութեան կամ հաստատակամութեան մը հաստատեց, որ և յետ վերցուելու Աշոտոյ սերութեան և ցեղին, և յետ հազար տարւոյ՝ դեռ ինչուան հիմայ այլ կու դիմանայ։ Ա յս հաստատակամութիւնն էր խատակրօն ճգնաւորաց միաբանութիւն մը. վանք մը, որ թէ և այս հազարամեկնա մէջ միշտ չմնաց առաջին վայելման մէջ՝ի սրբութեան և՝ի գիտնականութեան միաբանից, և զանազան դիպուածներէ անցաւ, ՝ի վերայ այսր ամենայնի գրեթէ ամենէն հին մնացած և բնական վանքն է մեր աշխարհին մէջ, ՝ի բայց առեալ քանի մը մեծ ուխտատեղի և եպիսկոպոսական աթոռներ (ինչպէս յերկկերն Մշոյ)։

Լեռնեւրով շրջապատած և ընդարձակ ծովակի մը մէջ մեկ հատիկ կղզի մը, որ իր բնագիրը բարձրութեամբն (մեծ ծովուն երեսէն 6000 ոտքէն աւելի վեր ըլլալով) տարւոյն քանի մը ամիսը բոլորովին ասոնց ապխտակ անապատ կու դառնայ: Ի՛նչ յարմար առանձնութեան և մտածութեան տեղ. Թերևս աւելի այլ կ'ըլլար, եթէ կղզին քիչ մ'այլ աւելի ծովակին մէջտեղուանքն ըլլար. բայց անոր մեկ ծայրն է ցամաքին մօտ. այնչափ որ բարձր կանչելով ձայնն կու հասնի և կու լսուի. բայց ով որ աղաղակ չխնդրեր, նա և ոչ կու լսէ: Մեր աշխարհին ամեն մեծ ծովակներն այլ այսպէս մենացեալ կղզեվանքեր ունին, որք հին և հեթանոսութեան ատեն այլ չատ ծոց նուիրեալ տեղիք էին, և երբեմն նաև ամբոր և ապաստանի տեղ կամ բերդ: Այսպէս էր և Սևան. ուր, կ'աւանդեն, թէ Ս. Լուսաւորիչն կործանելով կուռց մեհեանը, և տեղւոյն լուսնթիւնը տեսնելով՝ ըսած ըլլայ, Այո է վեն, այսինքն վանքի յարմար տեղ, և անկէ ելած ըլլայ Սէոան անունն. բայց պէտք է որ անկէ հին ըլլայ այդ անունդ: Մեհենին տեղ Լուսաւորիչ ապտի մատուռ մը շինեց, կ'ըսեն, յանուն Ս. Յարութեան, որոյ և կործանած պատերուն մնացորդն կարծուի թէ ինչուան հիմայ կ'երևի. իսկ ուրիշ հին շինուածոց մնացորդքն այլ ջրին տակ երբեմն կ'երևին. ըսել է որ ջուրն բարձրացեր է. և կարծուին մնացորդք այն ամրոցին՝ ուր Ը դարու մէջ քանի մը հեղ ամրացան Հայք Արաբացւոց ապստամբութեան ատեն. բայց վերջապէս Արաբացիք մտան հոն և աւերեցին. թէպէտ և անկէ վերջն այլ շատ հեղ նոյնպէս ամրութեան և ապաւինի տեղ եղաւ կղզին: Իսկ Մաշտոցի հոն քաշուած ատեն՝ անշէն և երեսք թողած տեղ մը կ'երևի, Սիսական իշխանաց տէրութեան տակ: Իրեն ու-

զածն այլ այսպիսի ամայի մոռացեալ տեղ մ'էր, ուր Ձմեռուան սառամանեաց և գարնան սքանչելի ծաղկազարդութեան մէջ՝ տան տարիէ աւելի միայնակ Աստուծոյ հետ կենակցէր: Բայց անկարելի եղաւ մարդկանց ծանօթութենէն և մեծարանքէն ազատիլ. շնորհալի վարքն, խօսքն, գիտութիւնն՝ իր անունը հռչակեցին. այն կողմերուն տիկինն՝ նախայիշեալն Մարիամ, դուստր մեր Աշոտոյ, ծովուն եզերքը նորաշէն եկեղեցեօք կու զարդարէր. և կ'լսեն թէ իր վաղամեռ ընկերն՝ Վասակ՝ կտակաւ պատուիրեր էր իրեն որ 40 եկեղեցի շինէ իր հոգւոյն յիշատակին. հետայ բարեպաշտ տիկինն լսելով Մաշտոցի համբաւը և Սեւանայ միայնութիւնը, ուզեց երկուքն այլ տեսնել և հոն այլ եկեղեցի շինել: Մաշտոց՝ այն տեղը Ձգնաւորանոց սեպելով՝ էր հաւանիր որ կին մարդ մտնէ. բայց յետոյ, կ'լսեն, տեսիլք տեսնելով և Աստուծոյ կամքն իմանալով՝ թոյլ տուաւ, որ գայ Մարիամ և ընտրէ տեղ, ուր երկու եկեղեցի շինել տայ, մէկն յանուն Ս. Առաքելոց, մէկայլն Ս. Աստուածածնի. երկուքն այլ կանգնած յամին 874. որք յետոյ աստէն աստէն նորոգուելով գեռ նոյն դիրքով և մեծութեամբ կանգուն և չէն են, և Հայաստանի հին եկեղեցեաց մէջ յիշուին: Կղզւոյն արեւելակողմը՝ քարոտ և գժուարին, միանգամայն և ցամաքէն ամենէն հեռու տեղը՝ երկու քարուկիր խցիկներ կան, որ Մաղթողը կ'լսուին, և Մաշտոցի առանձին Ճգնարանքն Հանաչուին. ուր, թողլով այդ զինքը՝ իր աշակերտօքն, քանի մը տարի վերջը նորէն դառնանք բարեւելու Աշոտոյ հետ. հիմայ պէտք է ասոր հետ ըլլալ:

10249926



## ԺԲ

**Ժամին տալին՝ կամ եղած չափոթուքիւնը ի-**
**րեն օգնական առնելով, կամ իր երկրին աւերա-**
**ծը ուրիշ երկրի աւարով լեցընել ուզելով, Ջա-**
**հապ՝ Սևադայի որդին (զոր Աշոտոյ պապուն ա-**
**ռեն յիշեցի) որ Դուռնայ կողմերուն կ'իշխէր, յան-**
**կարծ գօրքերը ժողովեց, Աշոտոյ բուն տիրուքե**
**և ժառանգութեան մէջ մտաւ, Արշարունեաց**
**կամ Երասխաձոր գաւառը. և այս գեղոյս հա-**
**րաւային կողմը անցնելով բանակեցաւ: Աշոտ իր**
**նոր սպարապետին, (որ էր իր երիտասարդ եղ-**
**բայրն Աբաս) յանձնեց բոլոր իր ձեռքին տակ ե-**
**ղած գօրքը. Աբաս ժողովելով իրեններն այլ, գու-**
**մարեց 40,000 կտրիճ և շատ արիւն տեսած գօրք.**
**զորոնք պատրաստելով Կաղզուանայ քովերը,**
**Ջահապայ չկարծած տեղն վրան հասաւ, և ա-**
**նոր բոլոր բանակը ցիրուցան ըրաւ. ոմանք սրի**
**տակ ընկան, ոմանք ջրին մէջ՝ գետէն անցնելու**
**աճապարելով, քիչերն կրցան փախչիլ, որոնց մէջ**
**Ջահապ այլ 16 մարդով հազիւ կրցաւ ազատիլ**
**և ամօթով դառնալ: Իր բանակած և յաղթուած**
**տեղն՝ ի յիշատակ 40,000 զօրացն Հայոց՝ Քառա-**
**սունք կոչուեցաւ. Կաղզուանէն քիչ հեռու, բայց**
**Երասխայ մէկայլ (հիւսիսային) կողմը հիմայ կու**
**նշանակուի Քէօս անուն գեղ մը, (թուի թէ նոյնն**
**է, անունն քիչ մը կարճցած. իսկ գեղն՝ որ այն**
**տեղուանք ընթացքը շատ փոխած է, կ'երևի թէ**
**հազար տարուան շարժմամբ քիչ մ'այլ աւելի**
**դէպ ի հարաւ իջեր է. բայց ուրիշ տեղ մ'այլ**
**կու նշանակուի դէպ յարևելք և գետեզերքը Քո-**
**բոնան անուամբ. այս երկուքէն մէրն է Աբասայ**
**յաղթութեան տեղն. – երբ յայն կողմերը յայց**
**եղնիք, ջանանք առաջելու:**

Աշոտ այս դիպուածին մէջ ամիրապետութեն նկատեալ ամենևին հոգ չունէր. որովհետև Զահապ ոչ ամիրապետին համօք տէրեր էր, և ոչ այլ իրաւունք մ'ունէր. ուրեմն այս գործով ոչ միայն իր իրաւունքը և ազգը պաշտպանեց, այլ և ուժը բաւական ցրցուց ընդհակայ ամիրայից և ազգաց այլ, որք երկար առեն հանդարտ և ամբած կեցան, իրենց այլ դիմացինին այլ չափը ճանչնալով:

Տան տարուց չափ պատմութիւնն նոր դէպք մը չի յիշէր. յայտնի է որ խաղաղութեան տարիներ էին (863-873), Աշոտ քաջութեան և խոհեմութեան պատուղ. միանգամայն և աշխարհաշինութեան տարիներ. թէ ինքն Աշոտ, թէ եղբայրքն և թէ փեսայքն՝ այս միջոցիս շատ շէնքեր շինեցին և նորոգեցին: Ժամանակն դարձեալ անոնցմէ շատը ջնջեց, մանաւանդ քաղաքական շինուածներ. իսկ եկեղեցեաց մէկ մասն դեռ կեցած է, քիչ կամ շատ խախտած և նորոգուած, և ասկէ հազար տարի առաջ հայկական ճարտարապետութեան օրինակ մը կրնայ ըլլալ:

Այս խաղաղութեան և շինութեան միջոց կաթուղիկոսն այլ իրեն վայելուչ շինութիւններ և կարգաւորութիւններն ըրաւ. ինքն այլ քահանայապետական իշխանութիւնը պայծառացուց և պատկառելի ըրաւ այլազգեաց անգամ. այնպէս որ երբ այցելութեան գնաց առ Յիսէ որդի Շէխեայ (873), (որ ամիրապետէն կոչնակալ ղրկուած էր Ատրպատականէն, միանգամայն և Հայոց այլ վերաւեսուչ), ասիկան յետ մեծարանօք ընդունելու զՔաքրիա՝ երթալու առեն իր հանդիսի դրօշներէն (ալամ) մէկն ընծայ տուաւ, և իշխանութիւն այլ՝ որ վան խաչ կանգնէ և միշտ իր առջևէն տանի ուր որ երթայ հանդիսով: Այսպէսի բան դուցէ

իրմէ առաջ եղած չէր։ Նոյն մարդասիրութիւնը ցցուց Աշոտոյ այլ, մանաւանդ թէ իբրև ընկեր գործակից առաւ զանիկա։

Ահա առեննեցւոց Վասպուրականի մէջ նորէն չփոթութիւն ծագեցաւ. Աշոտ տէրն Արծրունեաց՝ իր որդւոյն Դերենկան ըրածին պէս ուզեց գարձեալ զրկել զԳուրգէն (որոյ վրայ երկար խօսեցայ), անոր Անձաւացեաց երկրէն. թէ ոչ բոլորը՝ գոնէ զկէսը կ'ուզէր առնուլ և իր որդւոյն տալ. յանկարծ զօրօք կոխեց Գուրգենայ երկիրը, և պատգամ խաւրեց որ եթէ չուզէր պատերազմ՝ թողու երկրին կէսը։ Գուրգէն անիրաւութեան դէմ իրաւամբ պատասխան տուաւ. Չիս իմ հայրենի երկրէս դուրս հանեցիք, Աստուած ինծի ուրիշ տեղ մը տուաւ, զայս այլ կ'ուզէք յափշտակել. մինչ մինչ դո՞ք պիտի տիրէք երկրի. Աստուած այս բանիս դատաստանը պիտի տեսնէ։ Եւ առանց առեն կորանցընելու՝ իր եղբօրորդւոյն (Գրիգորի) ձեռքը քանի մը հարիւր կրաչներու գունդ մը տուաւ. զոր իմանալով Աշոտ՝ արհամարհեց և անհոգ կեցաւ. բայց անոնք գիշերանց ընկան Արծրունեաց բանակին վրայ և չփոթելով յրուեցին, հանդերձ անոնց իշխանաւն. որ այս ամօթալի փախստեան փոխարէն, կամ վնէժը պահանջելու համար՝ 5,000 հեծեալ ժողվեց իր և ջրջակայ երկիրներէն, մեր իշխանապետին որդին Սահակն այլ գլուխ զօրաց դրաւ, (որ կ'երևի թէ իր քրոջ և քեռւոն քով էր նոյն առեն)։ առանց եւան գացին պաշարեցին Կանգռուար բերդը, ուր ամրացեր էր Գուրգէն, և երկու ամիս աշխատելով՝ քան չկրցան ընել։ Սահակ՝ իր հօրը խաղաղասէր ոգին բանեցուց, թերևս անկէ պատուէր այլ առնելով, և միջնորդ եղաւ խաղաղութեան. զօրքերը արձակեցին, Գուրգէն և Աշոտ արծրունի եկան զիրար տեսնելու, հաշտութեան ուխտ դրին և սիրով բաժնուեցան։

Աւծրուհին այս գործը Թողլով՝ ուրիշի մը ձեռք զարկաւ, որ Թէ և աւելի իրաւացի՝ այլ նոյնպէս դժուար և անյաջող. Վանայ երկրին հիւսիսակողմեան կայ երկիրն Ասկոյ, որ Վասպուրականէն գաւառ մ՚էր, բայց հարիւր տարիէ աւելի էր որ ապստաման մը Ո-ըմանիկ կամ Էօրմէնիկ ըսուած կու տիրէր անոր. և այս առենս անիրաւութեամբ՝ Աշոտոյ գլխաւոր իշխաններէն մէկը սպաներ էր (Ռոսատոմ Վարաժնունի). ոյոյ արեան վրէժը պահանջելու և իր հին հայրենեաց ժառանգութիւնը ամբողջացընելու համար՝ Աշոտ և իր որդին Դերենիկ, (երկուքն այլ տաքգլուխ) եկան ապստամբեցին Ասկոյ քեռորդը, որ ամրութեամբ շատ ապահան և անառիկ Ճանաչուէր. այնպէս այլ մնաց հիմայ: Հոն բան չկարենալով առնել, եկան Աւծրուհանց տէրն և որդին երեսից սովորական յանդգնութեբ՝ քեռորդին պաշարումը Թողլով, 2,000 ձիաւորով 12,000աց դէմ ելան. խոհեմ իշխան մը՝ Վահան՝ ցուցընելով յոյսին վտանգը կու խրատէր զԱշոտ որ չետ քաշուի. և հազիւ կրցաւ նոյն իսկ Ցիսէի իշխանաց մէկուն հետ միաբանած՝ իսօք հասկըցընել Աշոտոյ և չետ դարձընել. Ցիսէ եկաւ մտաւ՚ի Վան. ուր Դերենիկ՝ Աշոտոյ որդին, և Գագիկ՝ Վահանայ որդին, աղաչաւոր եկան առ կողմնակալն, պատանդ տուին, խոստացան հարկերն այլ տալու, և խաղաղութեամբ դարձուցին զՑիսէ: — Ա.յս դիպուածէս քիչ վերջը մեռաւ Աշոտ (874) և տեղն անցաւ իր գործակից որդին Գր. Դերենիկ՝ մեծին Աշոտոյ փեսային:

10249926



## ԺԴ

Իսկ Յիսէ կոլմնականըն այս կոլմերէն եընելով գնաց Հայ-Ալուանից երկիրը, ի Պարտաւ մայրաքաղաքն, որ Իւնայ պէս արտքացի ասիկանի մը աթոռ էր. հոն իբրև իրեն փոխանորդ Թուլուց եմինի Արաբ մը Մուհամմէտ Էպիւլվէֆա անուն, զոր պատմիչք մեր անուանեն Եմեմիկ կամ Համանիկ Մահմէդ որդի Ապվլխայ կամ Ապվլխայ: Սա Յիսէի հեռանալէն ետև տեղացի իշխանաց հետ միաբանելով՝ գլուխ քաշեց զինքը հաստատելէն. Յիսէ իմաց առաւ մեր իշխանապետին, և միաբան եկան ապստամբին վրայ ու պաշարեցին Պարտաւ քաղաքը. ժամանակին յարմար չըլլալով յետ դարձան, և նորէն եկան. և Թէպէտ 13 ամիս այն կողմերը կեցան, բայց չկըրցան առնուլ քաղաքը. Յիսէ կուփուեցար իր տեղը և իր գործոցը դառնալու. Աչոտ այլ պարզ անոր օգնելու և ամիրապետին հաւատարիմ ըլլալու համար եկած էր, քան Թէ ինքնակամ Պարտաւայ բռնաւորին հետ կռուելու. սակայն այս բանս բաւական առիթ եղաւ իր և անոր մէջ Թշնամութիւն ձգելու: Արդ երբ Յիսէ բոլորովին հեռացաւ, Եմէնիկն համարձակութիւն գտաւ վրէժը պահանջելու. երես երեսի գալ, զօրքով Աչոտոյ դէմ ելնել չէր համարձակեր. աւելի անաչխատ և սոխպոլական կերպ մը գտաւ զԱչոտ իր ձեռքին տակ ձգելու, եԹէ Աչոտ այլ իրմէ աւելի խորագէտ և հնարագէտ չըլլար:

Մուհամմէտ Թուլի Թլէթի վրայ դեսպան դեսպանի վրայ կու խաբէր Հայոց իշխանաց՝ որ զինքն ընդունին իրենց երկրին տակին, շատ գիւրութեամբ խոստանալով. անոնք Աչոտոյ հետ միաբան՝ իմանալով իրարմանկութիւնը՝ իրմէ առաջ

մարդ խաբեցին առ ամիրապետն, և ասիկան
խնդրեցին զԱհմատ Իպն-Խալէտ (Ահմաթ որդի
Հալթի, կամ Համադա՝ ըստ պատմչաց մերոց)
որ առաջ այլ քիչ մ'առեն Բուղայի երթալէն
վերջը ասիկան եղած էր'ի Հայս (856)։ Ամիրա-
պետն հաւանեցաւ Հայոց խնդրոյն. Ահմատ փոխ-
թացաւ իր հին աթոռը. և երբ Ատրեատանէն
մտաւ'ի Դաւուսն (մօտ'ի Բաղէշ) որ շատոնց
արաբացի իշխողաց աթոռ մ'եղած էր, բոլոր մեր-
ձակայ երկիրներուս իշխանքն ընդ առաջ եկան, ո-
րոց մէջ էր Գր. Դեւրենիկ Արծրունեաց տէրն,
Աշոտ կիւրապաղատ (որդին Բագարատայ) տէր
Տարօնոյ։ Մեր իշխանապետն այլ իր կողմանէ
խաբեց իր Շապուհ եղբայրը. ամենքն այլ ըն-
ծաներէն զատ, հեռաւորներն զօրք այլ առած էին,
որ հանդիսով տանին նատեցընեն զնա'ի Դուին։
Ատոնց հետ եկեր էր նաև Մանազկերտի կողմե-
րուն իշխող արաբացին Էպիւբ-Ֆէրա (Ապլբաս),
և ուրիշ այլազգի իշխանք։ Եմինիկին կողմանէ
այլ մարդ կամ Թուխթ կար, որ իր տիրը չմոռնա-
լով գրպանէ բոլոր կրօնակիցները և զնոյն ինքն
Ահմատ՝ Հայերը բոլորովին նուաճելու։ Նորըն-
կիր ասիկան ապերախտութեամբ հաւանեցաւ
քանատրկութեան, և գրեց առ. Եմինիկն՝ որ զօրք
պատրաստէ և իբրև իրեն Թշնամի ձևացած գայ
'ի Հայաստան, երբ ինքն Հայոց իշխանները 'ի
Դուին ժողովէ՝ հարկերը պահանջելու համար.
և այսպէս երկու կողմէն զանոնք մէջ փակելով՝
ուզածնին ընեն։ Զգաստ Աշոտ որ Եմինիկին ինչ
ոգւոյ և կրից տէր ըլլալը լաւ գիտէր, և այն այլ
ապգեաց հաւատարմութեան չափն այլ, ամեն
գլխաւոր ձամբու անցքերու վրայ ծածուկ լըր-
տեանք գրեր էր. և Թէպէտ իր Թշնամիքն այլ
ծածուկ հնարքներ կու բանեցընէին, և նամակ-
ները էկածուած բաներու մէջ կարելով կու

խաւրէին, քայց իր աչալուրջ լրտեսներէն տմենքն այլ չազատեցան. Թուղթ և Թղթատար քառնուեցան: Աշոտ առանց ձայնձնելու՝ Թղթատարները յորգեան դրաւ, Թղթերն այլ քովը պահեց. և ոտիկանին քով եղած իշխանաց լմացուց որ ըզգուշանան. անոնք այլ մէկիկ մէկիկ զօրքերնին հեռացուցին փախան, իրենց տեղը դարձան: Ահմատ յուղարկաւոր չգտաւեցաւ՝ քան էպիւզ Ֆէրսի զօրագնդէն, որոցմով կուրագլուխ եկաւ մտաւ՝ի Դուին: Իշխանապետն այլ ընծաներով գնաց՝ի պատիւ անոր, միանգամայն և՝ի փորձել. և լմացաւ որ Եմինիկէն աւելի լցուեր է նախով, և մեծ մեծ կու բլուդէ. առ ժամ մը լուեց Աշոտ իբրև չիմանալով միտքը, ինչուան որ ապերախտին սպառնալիքն սկսան աւելի յայտնի ըլլալ: Ան առեն ինքն այլ անվախ և սիրաբար հրամմեց գաւեղ գնա, որ իբրև վերակացու եր եկեր Հայոց, և խարդախ գաւազանով կ'ըլլար:

Հանդիսական օր մը երբ առաւօտուն Ահմատ հանդիսի ելած իշխանական վրանին առակ գուռ զացեալ կեցեր էր մեծամեծաց շնորհաւորութիւնը ընդունելու, և անհամբեր կու սպասէր Հայոց իշխանաց իշխանին այցելութեանը, յանկարծ տեսաւ որ անոր եղբայրն է ներա մտնողն, Աբաս սպարապետն. և յիրաւի սպարապետի յանդգնութեամբ, սպառազինութեամբ, կայտառ և ահարկու կերպարանօք. որուն անսովոր և զինեալ այցելութեան վրայ զարմացած՝ քարկանալու աստեն չունաց. վասն զի իմացուեցաւ որ գուռն այլ զինուորաց պատրաստութիւն կայ. ականջներն ցցուեցան, լսեց զինուց և վահանաց շփահիւնը, ձիոց ոտնաձայնը և խրխինջը. վախն առաւ սիրտը, և գրեթէ մեքենաբար երկընցուց ձեռքը առ Աբաս՝ որ Թուղթ մը կու տար երեն:.. Ի՞նչ ցուրտ զարմանք, ի՞նչ գունաթափութիւն, ի՞նչ

գոլ եկաւ վրան, երբոր առեւտուր իր իսկ մասնաւորութեան թուղթը՝ զոր գրեր էր առ Եմինիկն՝ ընդդէմ Հայոց։։ Աչուքներն սթափեցան, գոլորշիով կարծէր թէ Աբաս թուղթը թողլով՝ թուրը պատի իջեցնէ չարութիւն գլխուն վրայ։ Բայց տպարապետն անոր ձեռքէն քաշելով, և մահուան վախէն վատահացընելով՝ հանեց վրանէն դուրս, ուր ջրի մը պատրաստուած էր. հեծցուց վրան, և ցուցընելով հարաւային ճամբան, գնա, ըսաւ, գլուխդ քեզի պարգեւ. բայց մէկ մ'այլ մի դառնար։ Ջորին սկսաւ հալածական տանիլ իր տիրոջ անհաւատարիմը և մեր հայրենեաց դաւաճանը. մինչեւ նա իջաւ եւրազէ եւրազ, ափշութենէ ափշութիւն, վախէ վախ կու տեաներ՝ որ իր հետ բերած զօրաց գունդն այլ՝ զինաթափ եղած՝ ի զօրացն Հայոց՝ մերկ սկսոր միայն իրենց բերած բաներովը և ձիերովը դէպ ի Մանազկերտ ճամբայ կու դրուէին, ուսկից որ եկեր էին։ Իսկ զինքն Ահմատ դէպ ի վաստուրական դարձուցին. ուր աշխոյժն Շապուհ՝ իշխանապետին որդին՝ պահապան գնդով մը քշելով զնա տարաւ մինչև ի սահմանածայրն Հայաստանի, և Ատրեւտանի անապատը հանելով՝ դարձաւ առ հայրն։ — Ահմատայ գալուն և երթալուն տարին որոշ նշանակուած չեն, բայց կ'երևին յաման 877-880։

## ԺԴ

Ա.յս դիպուածէն քիչ մ'առաջ՝ մեր այս պատմական Թաւոերէն նշանաւոր անձ մը պակսեցաւ. ի վերջ 875 տարւոյ Զաքարիա կաթուղիկոսն վախճանեցաւ, իր հայրապետութեան քսան երկրորդ տարին, սատիճանին յարմար վարքով և փառքով. և իրեն տեղ ընտրեցաւ ի սկիզբն յաջորդ տարւոյն (876, յունուարի 13ին) Գէորգ Բ,

արժանաւոր անձն, ծննդեամբ 'ի Գաւառի գիւղա-
քաղաքէ. որ և իր երկու նախորդաց չափ (Յով-
հաննու Ե, և Զաքարիայի) 22 տարի քահանա-
յապետեց, և անոնց պէս արթնութեամբ աշխա-
տեցաւ Թէ եկեղեցւոյն վրայ, և Թէ աշխարհին
քաղաքական հանդարտութեանը. օգնելով Աշո-
տոյ և միշնորդ ըլլալով իշխանաց հաշտութեան:
Ժամանակն և պաշտօնն իրեն այլ բերին վշտալի և
սև օրեր. ինչպէս, ոմանց իշխանաց և եկեղեցակա-
նաց հակառակութիւնք, — Սիւնեաց տապատակու-
Թիւնն 'ի Հայս, որոյ ձեռք ընկաւ ինքն այլ, —
Գոնայ եաքին մեծ ժաժն, և ամենէն առաջ մեծ
Տափրաշամ մը (876). զոր յիշող ժամանակագիրն
(Ասողիկ) կ'ըսէ, «մահն ահագին համաշխարհա-
կան» , և ուրիշ տեղեկութիւն չիտար: Բայց ու-
նեցաւ այլ պայծառ և ուրախալից օրեր. ինչպէս,
նոյն իշխանաց հաւանութիւնն և հաշտութիւնն,
Աշոտոյ Թագաւորութեան Տանիէլն, և անկէ ա-
ռաջ՝ Աղուանից կաթուղիկոսաց և Սիւնեաց մե-
ծապատիւ հաւանութիւնն և հպատակութիւնն
իրեն լուսաւորչական աԹոռոյն, ուսկից որ պատ-
ճառս մը բաժնուեր էին, և իւրարմէ ձեռնադրու-
Թիւն կ'առնուին (Աղուանք և Սիւնիք): Հիմա-
կուան հաշտութեանս փառքն մեր իշխանապետին
կու վայլէ. վասն զի ինքն եղաւ միջնորդ, հաւա-
նեցուց զիշխանս Աղուանից որ իրենց անձնակամ
կաթուղիկոսն օրինաւոր ձեռնադրութիւն առնու
'ի Գէորգայ կաթուղիկոսէ (877). այս առթիւ
բարեկարգութեան ժողով մ'այլ եղաւ, և Գէորգ
կանոնները դրաւ Հայոց և Աղուանից աԹոռոց յա-
րաբերութեան վրայօք:

Գէորգայ կաթուղիկոսութենէն քանի մը տա-
րի ետև՝ իր նախորդին բարեկամն Փոտ՝ դարձաւ
աքսորէն և յաջորդեց զինգնաւիոս, ինչպէս որ 'ի
սկզբան այլ յիշեցինք, Հանգերձ պատճառաւն.

որ է Վասիլ կայսեր վրայ ստեղծած հաձոյական գուշակութիւնն. որով համար կայսրն, կ'ըսեն ոմանք, զրկեց զեսպան մ'առ Աշոտ՝ իրմէ Թագ խնդրելու: Յոյնք չեն յիշեր այս բանս, զոր եթէ ատոյգ այլ գիտնային՝ Թերևս իրենց պատիւ չէին կարծեր. մեր ժամանակակից պատմիչք այլ չեն պատմեր, այլ եռքէն եկողք. մեզի շատ անծանօան էերևիր՝ ժամանակին և անձանց պարագաներըը գիտելով. մանաւանդ որ պատմիչք կու յիշեն Վասլի զրկած զեսպանը և շատ ընծաներն առ Աշոտ. զոր ոմանք կու գրեն՝ Թէ Աշոտոյ Թագաւորելէն եաև զրկեց հանդերձ Թագիւ 'ի պատիւ նորա. բայց այս յայտնի սխալ է. վասն զի Վասիլ կայսր մեռաւ. յօգոստոսի (կամ այլ առաջ) 886 տարւոյն, Աշոտ Թագաւորեց յետ տարիւլի յայլորդ տարւոյն. ապա ուրեմն Վասլի զեսպանն խաբրուած է մինչդեռ Աշոտ ամիրապետէն Թագաւած չէր: Կրնանք կարծել՝ Թէ Վասիլ իր կողմանէ կանխած՝ անոր գլխու զարդ կամ պատկ խաբրած ըլլայ, ուրիշ զարդերու և ընծաներու հետ. բայց այս ամեն բանն այլ կ'իմացընեն՝ որ հարկաւոր և մեծ բան մ'ուներ Վասիլ Աշոտոյ հետ. և յարմար է ըսել, Թէ առանց շատ ձայն հանելու՝ կամ գինքը կամ իրեններըը հաձեցընելու համար՝ ուզեց Աշոտէն Արշակունեաց Թագը, ինքն այլ անոր խաբրեց բիւզանդական պատկը: Ժամանակակից մեծ պատմիչն Յովհ. կաթողիկոս՝ որոշակի Թագ չի յիշեր, բայց կերպով մը Թագաւորակից կ'անուանէ. « Մեծ կայսրն Յունաց Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղալու» Թեան և նուաճութեան և սիրոյ հաստատեր » ընդ արքային մերոյ Աշոտոյ, որպէս սիրելի գնա » անուանելով, և հաղորդակից կացուցանելով » յաթենայն Թագաւորութիւնս Թագաւորութե » իւրոյ »: Այս խօսքերս կու ցուցընեն Վասլի

10249926



կողմանէ զինջտուԹիւն մը, որ առանց մեծ պատ-
ճառի մը չէր ըլլար. զնոյն հաստատէ և ուրիշ ժա-
մանակակից մ՚այլ՝ նոյն իսկ դեսպանին ծանօԹ,
(և է պատմիչն գիւտի նշխարաց Ս. Լուսաւորչին
՝ի Կոստանդնուպօլիս). որ դիտամամբ, կամ իբրև
իր նպատակէն դուրս՝ չի յիշեր դեսպանուԹեան
պատճառը: Կարդանք այս հեղինակին գրուածքին
սկիզբը, որ մեր Աշոտոյ պատմուԹեան այլ շա-
րունակուԹիւն ըլլայ: « Ի ժամանակին՝ յորում
« Հայոց Թուականն երեքհարիւր քսան և եօԹն
» էր, (878-9) առաքեալ լինի նեղբինի ոմն, ա-
» նուն նորա Նիկոդեմոս, (զոր յետագայ պատ-
» միչք մեր կոչեն Նիկեա), ՚ի վաղէ կայսերէն
» Յունաց հրեշտակուԹեամբ՝ առ Աշոտ իշխա-
» նաց իշխան ՚ի Հայս, հանդերձ պատուոյ ընծա-
» յիւք և վայելչական պարգեւօք ազգի ազգի՝ բե-
» րեալ ՚ի Թագաւորէն. և հանդիպեալ լինի իշ-
» խանացն իշխանին ՚ի գաւառին Արշարունեաց՝
» ՚ի Զարեհաւան գեղջ. և կացուցեալ առաջի նո-
» ր զընծայն յայնքանոյ մեծէ արքայէն, պատ-
» մէ միանգամայն և զհրամայեալն ցանս՝ հանձա-
» րեալ և ախորժելիս. զոր ընկալեալ իշխանացն
» իշխանին զյունական[1] պարգևան՝ զակնախոհուԹեան
» և զերևելիսն, մեծարէր և զառաքեալ նեղբինին՝
» իբրև զմտերիմ ստացաւոր Թագաւորին. վասն
» զի էր այրն այն խոհեմագոյն և հանճարեղ և
» հաւատարիմ Թագաւորին »: ԴեսպանուԹեան
գործը լմընցնելէն ետև՝ Նիկեա պատմեց Աշոտոյ,
Թէ առենօք էր ՚ի ծառայուԹեան էր իր անուա-
նակից մեծ իշխան նեղբինապետի մը, Միքայէլի
կայսերուԹեան առեն, որ (ի՚երևի Թէ էր Նիկե-
ոսան Օրիւփաս, այս երկու անուանքս այլ յի-
շուած ՚ի Յունաց՝ յիսուն տարիէ աւելի միջոց,

1 Ուրիշ Օր. գյոճհոփան:

(827-881), իբրև ծուխապետ կայսերաց և շատ գործոց մէջ մտած. որ ինչպէս մեր հեղինակին յիշէց), առաջ Միքէլի ծառայութեան մէջ էր, և անոր մահուան վրէժը կ'ուզէր առնուլ 'ի Վասիլէ. բայց Վասիլ ճարտարութեամբ որսաց զնա: Ա սիկայ ընդօծին մանչիկ մ'ունէր Սկլաւոն ազգաւ, որ անբժշկելի հիւանդութիւն մ'ունեցաւ, կամ գիւահարութիւն. օր մը մեծ իշխանն այն, և այս Սկլաւիկ պատանին ու մեր դեսպանն մէկ տեղ գացեր էին աղօթելու 'ի Ս. Երրորդութեան եկեղեցին ('ի Կ.Պօլիս). հոն պատին տակ մարմարիոնէ հին գերեզման մը կար արծաթապատ, զոր գիտէին պահարան սրբոց մարմնոց, բայց որուն ըլլալն չէին գիտեր: Աղօթից առեն յանկարծ պատանւոյն վրայ այլայլութիւն եկաւ, և դիւահարի պէս սկսաւ կանչել. Ո՛վ մեծդ Գրիգոր, ո՛վ Ս. Հռիփսիմէ, Ս. Գայիանէ, ինչո՞ւ եկեր էք 'ի Հայոց երկրէն, և դուք այլ Սարգիս և Բաքոս, զնա հալածելու համար: Ա յս ըսելով ընկաւ պատանին, փսխեց, ու քիչ առեն խելքն վրան գալով՝ ընկաւ տիրոջն ոտքը և լաւ. Հոս եղած սրբոց զօրութեամբ ես հիւանդութենէս ազատեցայ: Շուտ մը ձայն տուին քահանայից, որ եկան մատքրեցին գեաւիւրը. յետոյ աւազաքրէցն հրամայեց կայսեր՝ գերեզմանին բանալիքն բերաւ, որ շատոնց պաշտօնը չընելուն համար՝ չկրցաւ հին մայ այլ ընել. իշխանն կոտրեց կղպանքը, բացինք և գտանք չորս ոսկան. երեքն արծաթէ արձաններ էին, չորրորդն մարմարէ անուռկ մը, որոց իւրաքանչիւրին քով գրուած այլ կար. այս մարմարին մէջ էր Ս. Գրիգորի Լուսաւորչի նշխարքն, որոյ ոսկորներն հակայի ոսկերաց պէս մեծամեծ էին. արծաթէ արձանաց մէջ այլ վերոյիշեալ սրբոց նշխարքն կային, և գեռ ուրիշ նշխարք այլ՝ որոց անունն նշանակած չէր: Թագուհին Թէո-

դրա, կայսրն Միքայէլ և Փոտ պատրիարքն քաղմուԹեամբ ժողովրդեան եկան յԵրկրպագուԹիւն, և պատուով դրին նշխարքն ՚ի վայելուչ տեղ: Ա յս դիպուածս հանդիպեցաւ մեծ պահոց հինգերորդ շաբաԹուն և նոյն օրը տարեկան ոճն հատատեցին. ինչպէս որ հիմայ Աշոտ այլ լսեցուց իմացուց Գէորգայ կաԹուղիկոսի, և հատատեցին մեծ պահոց հինգերորդ շաբաԹ օրը ոճնել այս յիշատակը, որ հիմայ Լուսաւորչի Մուան ՚ի վիրապն կ՚անուանի: — Աշոտ ղրկեց դեսպան՝ նին՝ որ այս դիպուածը տեղն ՚ի տեղն իրեն գրէ. Նիկեա այլ երբ դարձաւ իր տեղը՝ նորէն սուր գեըով գրեց և խաւրեց Աշոտոյ, որ աղէկ հայերէն գրեըու համար տուաւ «առ ժամանակին կա» ցեալ վարդապետն Հայոց, զոր յետոյ նշանակեցից » զանունն», և նա այլ Թարգմանեց դեսպանին գրածը, քիչ մը գովեստ աւելցընելով ՚ի պատիւ Ս. Լուսաւորչին, և յաւելաբան մ՚այլ: — Իսկ այս ժամանակիս վարդապետան մը էր. խոստացեալ անունն յետոյ յիշուած չէ. գուցէ մեծանուն Մաշտոց վարդապետ ըլլայ, կամ Թէ ինքն իսկ կաԹուղիկոսն Գէորգ, վասն զի միայն սուրբ անունն յետոյ յիշուած է ՚ի պատմուԹեանն, և Թերևս վարդապետ ըսելով կ՚ենանայ զհայրապետն:

Աշոտ զդեսպանը պատուեցին եւս՝ կայսեր ուզածն այլ խաւրեց անոր ձեռքով, հանդերձ ծանր ծանր ընծաներով, և «տասն հազար արծաԹ » (6-6500? Ֆրանգ) ընծայ նորաշէն եկեղեցւոյն». զոր չանուանէր յիշող պատմիչն, բայց Թուի Թէ ըլլայ Ս. Մէփսէ եկեղեցին՝ վասպուրի ծովեզերքը, զոր պատրիարքն Իգնատիոս նոր ըմբնցուցեր էր (878), և դեռ չէր օծած, և երեք տարի վերջը Փոտ պատրիարքն նաւակատիքն ըրաւ (881): Իսկ Նիկեայէ բերած ընծայից մէջ կուս յիշուի և խա-

*ջուխտական մասն, որ յետոյ Հռոմայէն տուբէ Նշան ըսուելցաւ, այդ անուամբ վանքը պահուելով, որ է՛ի տահմանս Լօռի քաղաքի Տաշըրց (կամ Սօմխէթի). ուր կ՛աւանդեն ոմանք, Թէ Վասիլ առնուամբ յոյն իշխան մը Յովհան Իմաստասիրին առեն՝ քարայրի մը մէջ առանձնացաւ՛ի ձգնութիւն, և անոր համար Հռոմայէց ըսուելցաւ առեղն. իսկ խաչն՝ Հայոց պահանջատիրած շատ խաչէց մէկն եղաւ, և զանազան հրաշքն յիշուին:*

## ԺԵ

*Անմէտ կամ Մուհամմէտ սահիկանը վռնտելէն ետև՝ Աշոտ անոր թողած խառնակութիւնները սկսաւ շտկել և անոր կուսակիցներն այլ զապել. և նախ հիւսիսային ու վրաց կողմերը գնաց. ուր, պիտանալու է, որ այս Անմատին նախնիքն ամիրայութեամբ կ՛իշխէին Տփխիսի կողմերը, և առեն մը ըոլոր Վրաց կուսակալ էին. իր հայրն Խալիլ կամ Խալիտ՝ յետ երկայն առեն տիրելու և քանի մ՛անգամ չեռանալու կամ հալածուելու՝ այն կողմերը մեռեր էր պատերազմի մէջ. և տեղը տիրացեր էր Սահակ Իշն-Իսմայէլ, զոր սպաննեց Բուղա՝ երբ առաջ զՏփխիս, ինչպէս՛ի սկզբան յիշեցի. և նորէն իշխանութիւնը տուաւ Խալիտայ որդուն՝ այս յիշեալ Անմէտին. բայց քիչ առենէն սա իշխանութենէ փոխուելով՝ Տփխիսի տիրացաւ Կապէտ կամ Կապտ-ը անուն մէկ մը, զոր պատմիչն Վրաց՝ Թէ այս Սահակայ ազգական առնուանէ և Թէ Աշոտոյ, իբր Թէ տասը հօրաքեորդին ըլլայ: Անմէտ երկրորդ անգամ տահիկանութեան առեն՝ չանաց իր հօրը մահուան վրէժը պահանջել, և ուզածին պէս ձեռք խառնել Վրաց և Գուգարաց իշխանութեանց մէջ. բայց երկար ժամանակ չգտաւ: Իր հալածուելէն ետև՝ կա-*

լոց այլ սկսաւ ինքնիշխանաբար վարել և հակառակել, ոչ միայն Վրաց՝ այլ և մեր իշխանութեան. Աշոտ անդր այլ վտան գնաց (880), և օգնեաւ Թեոդոս Գորգանոյ իր հօրաքեռւորն՝ դնել զնա պատերազմի մէջ, Կուր գետոյն եղերքները, և խաբեց Յունաց երկիրը. անշուշտ Վասլի հետ նոր ըրած դաշնադրութեանը վրայ վստահանալով: Տփխիսը յանձնեց հաւանօրէն Դաւթի՝ եղբօրորդւոյն Գորգանոյ, և ատոր բաժնէն առաւ Աշոտ գաւառը, որ անմիջապէս սահմանակից է դրեթէ մեան էր իր բնիկ երկրին՝ Շիրակայ: Այս Գորգան քիչ առենէն Թողուց իր իշխանութիւնը և կրօնաւորեցաւ. տեղն անցաւ որդին՝ Նարսեհ, որ խռովարար իշխանասիրութիւն սպանանեց զԴաւիթ (881), և շատ չիոթութեանց պատճառ եղաւ. որոյ համար յետ ժամանակի դարձեալ պէտք եղաւ Աշոտոյ գալ և կարգի դնել այս կողմերս: Ան առեն այս Վրաց և Վրահայոց երկիրները շորս հինգ բաժին էին, իրարաքանչիւր առանձին իշխանաց ձեռք, որք ամենքն այլ իրարու ազգակից էին 'ի նոյն Բագրատունեաց ցեղէ. գլխաւորն էր Վրաց իշխանն (կամ Քարթլի կուրապալատն), յետոյ Գուգարաց իշխանն, Սամցխէի (Ախալցխէի) իշխանն, և Արտանուջոյ իշխանն. ատոնք ամենքն այլ Սիւնեաց և Վասպուրականի իշխանաց նման՝ Աշոտոյ իշխանապետութիւնը կու ճանչնային, և ատոնց չեզած առեն՝ անոր կու յանձնէին իրենց երկրին հարկերը: Անոնց երկրին արևմտեան հիւսիսային կողմն էր Աբխազաց կամ Եգերաց Թագաւորն, որ անկախ էր, և Վրաց տիրել ուզելով՝ խռովութեան պատճառ կ'ըլլար:

Աշոտ խաղաղութեամբ դառնալով 'ի Վրաց՝ Տաշրաց գաւառէն անցաւ եկաւ Գեղամայ ծովուն ծայրը, Սևան կղզւոյն դիմաց՝ Բանակա-

տեղ ըսուած տեղը, և հոն քանակէեցաւ: Յարմար առիթ էր հոս տեսաւորութեան Աշտոյ և Մաշտոցի, այս երկու մեծանշան անձանց, որք համբաւ բոլոր աշխարհին ծանօթք՝ զկրսր այլ ճանչնալ փափագէին: Աշտա կ'ուզէր տեսանել այն արբանկրօն և գիտուն միայնակեացը, իր գաւեր (Մարիամայ) հիւրընկալը, որ առանց կրեն չափ աշխատելու՝ ընդարձակ երկրի մը մէկ կողմէն մէկ այլ կողմը երթալու, կղզեայ մը մէջ դադարմամբ՝ թէ երկինք կու վաստկէր թէ մարդկանց սիրտը: Իսկ Մաշտոց լսելով Աշտոյ գործքերը, միացուցած քաջութիւնը և արդարութիւնը, իր նպատակէն և իր ջանքէն շատ հեռու չէր դներ իշխանին աշխատանքը. կու փափագէր տեսանել այն աշխատանաց օյժ և փառք տուող խաչը, զոր Վասիլ կայսր ընծայ խաբեր էր իշխանին, և նա միշտ հետը կու տանէր: Տեսութենէն առեալ մեծ փափագմամբ փութացաւ Մաշտոց՝ երթալ կղզիէն, եկաւ'ի բանակատեղն. հանդիպեցան իրարու երկու ընտրհատորքն. Աշտա համբուրեց Մաշտոցի ըսատիայլ երեսը և աչքը. Մաշտոց այլ իշխանին խոնարհելով երկրպագեց անոր բազկաց և կրծոց զարդ խաչին. ուրախ դրաւ աչքերուն վրայ և համբուրելէ չէր դադրեր: Վասիլիոս իշխանն չէր կըրնար զրկել խաչաբարձը իր սիրածէն. կայսերական ոսկեկապ և մարգարտազարդ խաչը պարգևեց Ճգնաւորին՝ որ առնլի ուրախութեամբ իրեն համար ալօթէ. անոր միաբան վանականաց համար այլ պարգևեց՝ իբրև կաղուածք եկեղեցւոյն՝ չինգ գեղ, Յամափաբէդ՝ որ անվիճապէս ծովեզերքն է և Թուի մօտ բանակատեղին, Վարքեր (Ճրուճրա), Գոմաչոր, Բէրդե, Ո-ռէայ-պաֆ, որոց երեք առջինքն գեռնոյն անուամբ Ճանաչուին Վանայ դիմաց ծովեզերքը: Ասոնցմէ զատ այն ծովեզերքն էն եկող ճկանց մէկ մասը՝ որ արքունեաց կու

10249926



տրուէր հարկի առնլ՝ վանքին Թողուց. գարձեալ այգինեբր՝ Երևանու և Գառնոյ կոլմերը: Հաւանօրէն Աշոտ այլ մաս՝ ի կղզին՝ ի տեսութիւն նորաշէն եկեղեցեաց և վանացն, և իշխանական առատաձեռնութեամբ ու բարեպաշտութեամբ աւելի շէնցընելով զԱևան՝ գարձաւ իր երկիրը:

## ԺԶ

Իշխանապետեան իր ինամոց յանձնուած երկիրը. Ներսեն հիւսիսակողմը ապահովէլէն ետև՝ գարձաւ՝ ի հարաւակողմն, եմենիկեն գրգռեալ և Անմէտը գրգռոլ ամիրաներն այլ նուաճելու. որոց գլխաւորն էր Մելազկերտի կամ Ապահունեաց ամիրան Ապլաբաս Կայսիկ ցեղիս: Մեր պատմիչք այսպէս կ'անուանեն Արաբացի Քայս ցեղ մը և ցեղապետ մը, որ Աբդրահամայ որդւոյ Իսմայէլի զաւակներէն սերեալ կ'ըսուի. և Մահմետի ատեն կու յիշուի գիտնական մը այն ցեղէն Աաէմ Իպն-Քայս: Ը դարուն մէջ Արաբացւոց բռնատիրութեան առեն այս ցեղէն մեկն այլ բռնացաւ վանայ ծովուն բոլոր հիւսիսակողմը տարածեալ երկրին վրայ. մեկ կոլմէն (արևելքէն) ինչուան Աղու երկիրը վանայ մօտերը, մեկայլ կոլմէն (արևմուտքէն) ինչուան մեր Հայկայ նահապետական Հարք գաւառը. քիչ առենէն իշխանութիւնն յերկու բաժնուեցաւ. արևելեանն երեք գլխաւոր քաղաք և գաւառ ունէր, Խլաթ, Արճէշ և Բերկրի, հանդերձ Ամիւկ ամուր բերդաւն, որ (ետքին) յետոյ զատ իշխանակալութիւն մ'եղաւ. արևմտեանն այլ երեք գաւառ, Կորի, Հարք և Ապահունիք: Այս ետքինիս արևմտեան ծայրն և Հարքայ սահմանակից հին քաղաքաւան մը կար և կայ, Մանազկերտ, հիմայ Մելազկերտ, և աւելի առաջ Մանազկերտ կոչուած, և շինուած յորդւոյն

Հայկայ ՚ի Մանուաղայ. որով Թերևս Հայաստա-
նի և բոլոր աշխարհիս ամենէն հին մնացեալ քա-
ղաքաշէնն է, զոնէ ամենէն հիներէն մէկն. հոս
կուենատէր արևմտեան երկիրներուն կայսիկ ա-
միրան, և կոչուէր աէր Ասպահունեաց կամ Մա-
նազկերտոյ. Խլաթայ ու Ամկոյ իշխանէն աւելի
զօրաւոր, ու մերձակայ Հայոց այլ պատկառելի:
Բայց Աշոտոյ իշխանապետութիւնն անոր վրայ
այլ տարածուեցաւ, և անկէց այլ հարկ կ'առ-
նուր, ինչպէս յիշխանացն Հայոց: Ասյս բանս որ-
չափ այլ ծանր էր կայսկին՝ չէր հանարձակեր
Աշոտոյ հակառակելու. ինչուան որ Եմենիկն և
Ահմէտ իրեն յոյս տուին. քիչ մ'այլ մեր սահ-
մանակից իշխանքն պատճառ եղան զինքն ուռեց-
նելու. որով հարկը կարեց յԱշոտոյ: Իշխանա-
պետն այլ եկաւ զօրքով. Խլաթայ և Բերկրոյ
աէրն Ապլհէրթ՝ հպատակեցաւ և հաստատեցաւ
յիշխանութեանն. իսկ Ասպահունեաց աէրն Ա-
լաթառ՝ ամրացաւ ՚ի բերդն Մանազկերտոյ. Ա-
շոտ անոր մէկայլ երկիրները նուաճելով՝ բերդն
այլ պաշարեց. և մինչդեռ մօտ էր տիրելու՝ Արծ-
րունեաց երկրին շփոթութիւնները լսելով՝ փու-
թացաւ դէն դառնալու. հոս խաղաղութեամբ
վերջացնելով գործը, հաւանեցուց զանհաւան
Կայսիկն՝ իր չափին մէջ մնալ, և թղթով այլ պա-
շինք դնելով՝ հաստատեց զնա յիշխանութեանն,
և հարկերն առնելով գնաց:

Իսկ Արծրունեաց շփոթութիւնքն շատոնց սկը-
սեր էին, գրեթէ Ահմէտ ոստիկանին և Կայսկին
մէկտեղ եղած ատեն. որք երբ զաւուեցան, այս
եաքինիս խորամանկութեամբ՝ քանատրիու մար-
դիկ Արծրունեաց և Տարօնոյ իշխանաց մէջ կա-
կած և պատերազմ ձգեցին, մինչդեռ երկուքն
այլ Ապահունեաց երկիրն էին, ամիրային հրա-
էրուած, որպէս պատճառաւ: Նախ Արծրունեաց

իշխանն՝ Դերենիկ՝ անոր քովէն հեռացաւ, յե-
տոյ Տարօնոյ իշխանն Աշոտ Կուրապաղատ (որդի
Բագարատայ), զոր և խարդախութեամբ բռնել
տուաւ Դերենիկ, և իր երկրին մէջ բանտեց Սևան
լսուած ամուր բերդը, ու իր Հասանիկ քեռոր-
դւոյն պատուիրեց որ արձակ պահէ. և Աշոտոյ
տեղ դրաւ անոր եղբայրը՝ Դաւիթ արքայիկ կո-
չուածը, որ և իր քեռայրն էր. Ահմէտի այլ գրեց
ու հաստատեց զնա յիշխանութեան Տարօնոյ: —
Կուրապաղատան իմացուց իր վտանգը Գէորգայ
կաթուղիկոսի՝ որոյ սիրելի էր. և նա անձամբ ե-
կաւ աղաչեց Դերենիկայ, բայց սա յանձն չառաւ
ազատել զԱշոտ, և հոգևոր տէրն տրտմութեամբ
դարձաւ. իսկ մեր իշխանապետն այս առիթս
հիւսիսայնոց հետ զբաղած էր: Կուրապաղատին
ձարն հանելով՝ սկսաւ ընտանեբնալ իր բանտա-
պանին, այսինքն Հասանկան, որ դեռ 15 կամ 16
տարուան պատանի մ'էր, և տղու պէս խաբեց.
հաւատացուց թէ Դերենիկ քեզի դէմ այլ կու
մտածէ և զքեզ այլ պիտի բռնէ: Պատանին՝ իր
ամուր բերդին վրայ վստահացած՝ մտածեց իրեն
որսորդը որսալ. հիւանդ ձևացաւ, և աղաչանք
խաբեց Դերենիկայ՝ որ դայ զինքը տեսնէ. սա իբ-
րև օրհասական հիւանդի մը քով փութացաւ եր-
թալու, և առջի տեսութենէն եաւ՝ երբ գիշերը
քաշուեցաւ իրեն համար պատրաստուած տե-
նեակը, յանկարծ դուռը վար առին և ներս թա-
փեցան ջահաւոր և զինաւոր մարդիկ, բռնեցին
զինքը և ամրոցին ծայրը հանեցին բանտեցին, ու
զԱշոտ արձակեցին:

Ահա բանս լսեց մեր իշխանապետն երբ Մա-
նազկերտը պաշարած՝ մօտ էր առնուլ. և փու-
թացաւ ուրիշ իշխաններով Սևանայ բերդին քով՝
իր փեսային ազատելու. կաթուղիկոսն այլ եկաւ,
և երկուքն այլ յորդորելով և խրատելով զպա-

տանին Հաւանիկ՝ հաւանեցուցին. արձակեց զքեռին. և երեն ապահովութեան համար՝ պատանդ Թոլուցին քովը Դերենիկայ երկրորդ տղա հասակ որդին՝ Գագիկը, (յետոյ Արծրունեաց պիւցասզն): — Բայց Դերենիկ քիչ առենէն դրած դաշինքն ոտքի տակ առնելով լուեց զՀաւանիկ, քսանեց՝ ի Նկան բերդի, և անոր Սևան բերդին այլ տիրեց. սակայն իր աներէն ալն ածելով քիչ մ՝այլ ուրիշ վնաք ունենալով՝ արձակեց զՀասան:

Քիչ մ՝առեն հանդարտութիւն եղաւ (885-7) այս կողմերս այլ, ինչպէս ուրիշ ամեն Աշոտոյ իշխանապետութեան տակ եղած տերերն այլ. ուր՝ ինչպէս տեսանք, երեսուն տարին աւելի էր՝ որ Աշոտ անդադար անխոնջ տեղէ տեղ վազելով և հանելով՝ խռովութիւնները կու խաղաղէր, ալիքները կու ցածցնէր, և հանդարտաբեր հովս պէս կու փարէր գորգոտար ամենուն վրայ: Եկաւ ժամանակն՝ որ իր գրկած գգուած իշխանազունք այլ՝ երեից աչքերէն հայրապետը մեծարեն արժանաւոր սիրով և պատուով. որուն հաւանեցան ուրիշ իր ինամքը վայելել իշխանք այլ. ընախանձեցան և այլասղնք: Իսկ հաստատակաց հայրն կամ մայրն Հայաստան՝ հեծկլտած հառաչանքը լսեց, հանգչեցաւ: Սև սխրութեան քացած ու մաշած ձամբաներէն իջան ձերմակ ուրախութեան արտասունքներ. բարձրացաւ ձայն գոհութեան առ Աստուած. և թերևս ոչ այնքան Աշոտոյ գլուխը թագաւ փառազարդեալ տեսնելուն, որչափ այն թագը արդեամբք, երախտագիտութեամբ և սիրով կապուած և գրուած տեսնելուն համար:

10249926



# ԺԷ

Ա. յա եբախտագէտ և սիրոյ զգացմանց և գոր-
ծոց առաջնորդք եղան, ինչպէս որ կու վայելէր,
երկու Գրիգորքն, Սուփան Սիսական՝ Թուն մեր
Աշոտոյ, և Դեւրենիկ Արծրունի՝ փեսայ Աշոտոյ,
իրենց աշխոյժ և կայտառ զաւակօքն. որոց միա-
բանեցան՝ Վասակ Իշխանիկն՝ Սիւնեաց տէրն,
կաթուղիկոսն Գէորգ, և գրեթէ ամեն աշխար-
հատէր և գաւառատէր իշխանք և Թեմական է-
պիսկոպոսունք, հանդերձ վրաց և Գուգարաց
մեծամեծ իշխանօք, որոց շատն ինամի այլ էին
իշխանապետին, և բոլոր իր ազգակից և բարե-
կամ իշխանաւորք. որք ամենքն այլ Աշոտոյ պար-
տականք էին մէկ մէկ կամ շատ կերպով, անոր
33 տարուան սպարապետութեան և իշխանապե-
տութեան տաեն, մանաւանդ թէ հօրը գործա-
կցութենն այլ մէկ տեղ սեպելով՝ իր 50 ամեայ
աշխատանաց, գործոցը, խնամոցը և փառացը՝
պարտականք էին: Անոնց հաւատար ազգային զօ-
րագունդն այլ, որ այնքան տարիներ միշտ փառօք
և քաջ անուամբ հայկական դրօշը կրեր տարեր
էր զանազան կողմեր, և այլ աւելի բարձրացը-
նելու կուստպատեր: — Թերևս տունցմէ այլ ա-
ւելի՝ ռամիկ ժողովուրդն, խոնարհ և ակար սե-
պուածքն, որք իբրև զհայր ճանչնային և սիրէին
զբարերարն Աշոտ. և աւելի համարձակ առ Ա-
տուած աչքերնին վերցուցած՝ իրենց բարերարին
բարիք և փառք մաղթէին, քան Թերևս իշխանքն՝
ամիրապետէն խնդրէին, որ այնուհետև փոխա-
նակ օտար ոստիկանի՝ իրենց համազգին իրենց
ընտրէ անկախ գլուխ, ուղղակի հարկատու իրեն
(ամիրապետին): Աշոտոյ իշխանութեան տակ
որդէն ոչ միայն իրենք ելլանիկ եղած էին, այլ

10249926



և խալխփայք գանգատ մը չունէին այնչափ երկար տաեն, մինչդեռ օտար ոտիկանաց տակ անդադար չփոթութեքն կ'եղլէր, արիւն կ'ըլլար, երկիր կ'աւերուէր, գանձերն կու պակսէին: Ամիրապահան՝ Մոթամէտ-Պիլլահ՝ որ 17 տարի էր իշխանութեան տաեն, և նոյնչափ այլ էր հինգ նախորդաց տաեն՝ վկայ էր նախարարաց նուիրակին ըսածներուն, և Աչոտոյ հաւատարմութեան և արդեանց դէմ կենալու քան չունէր, և ոչ ոք այլ կըրցաւ նախանձորդ կամ հակառակը ընել. մէկ կողմանէ այլ տեսնելով որ արդէն իր կրօնակից-քն իրմէ կ'ապատամբէին, նոր նոր աէրութիւններ կու կանգնեն, յօժար սրտիւ հաւանեցաւ Հայոց խըն-դրուածին: Եւ որովհետև տունք հին տաեն ի-ենց ազգապահը միշտ Թագաւոր կու ձանչնային, անուանեց հիմայ անոնց իշխանապետը Աշոտ Ող-գաոը Հայոց, վասն Թոլլով Վրաց կողմի վերա-տեսչութիւնն այլ: Եւ ոչ միայն անուանը խաբէց՝ այլ և Թագ և ամենայն Թագաւորական նշաններ և զարդեր, հանդերձ ծանր ծանր արուեստից ընծաներով և ընտիր արաբիկ ձիերով. զորոնք առնել տուաւ Յիսէի՝ Շէխէյ որդւոյ, Ամդայ կոչնապետին, որ իր կողմանէ տանի տայ և Թագաւորեցնէ զԱշոտ. գիտեալով որ տարի խոհեմութիւնն շատոնց զՅիսէ բարեկամ էր ըրեր իրեն: Եւ յիրաւի Յիսէ աննախանձ զուարթութեամբ գնաց պատուեց և պատկեց իր հին բարեկամ և նիզակակիցը. ինքն այլ անկէ պատուխ դանելով՝ դարձաւ իր տեղը: — Աշխարհական ախրապետն Թագը ընդունելէն ետև՝ կու մնար որ իր հայրենիքն և իր եկեղեցին այլ զինքը պահեն:

Ո՞ր քաղաք, որ եկեղեցի էր այդեօք ուր պատկեցաւ Հայոց նոր Թագաւորն. Երազդաւիք եթէ Դուին. — կ'երևի Թէ այս չեմնա, որ 500 տարիէ վեր Հայաստանի մայրաքաղաք Հանա-

ջուէր, և մարզպանաց ու ասիկանաց աթոռ էր. գեռ հոն էր Հայոց հայրապետանոցն այլ. և գեռ կանգուն էր Ս. Գրիգորի հոյակապ կաթուղիկէն (շինեալ Գ. Ներսէս կաթուղիկոսէ), որ յետ վեց եօթն տարւոյ պիտի կործանէր, և գուցէ կու սպասէր այս հանդիսիս այլ. որուն համար շատ նեղ և շատ սղտիկ կու գար, բայց գոնէ բազմաւական՝ իշխանազանց և եպիսկոպոսաց և բազմաթիւ բաղդատորաց: Այս եկեղեցիս չէր, բայց հաւանօրէն այս տեղս էր, ուր մեր հայրապետաց վեհարանն՝ մեծն Սահակ՝ օրհներ օծեր էր Արշակունեաց վերջին թագաւորը, զԺբայդն Արտաշէս. անշուշտ առաջին անգամն էր որ Հայոց սրբազան լեզուաւ և գրով թագաւորօրհնէք եղաւ. և ափսո՛ս, առաջինն՝ վերջին այլ եղաւ... Արտաշիսի օծմանէն մինչև յԱշոտ գրեթէ 470 տարի անցեր էր. սա կանգնեց անոր կորացեալ գլուխը, և Սահակայ թագաւորաշնորհ շունչը՝ քառասուն կաթուղիկոսաց շրթունքէն սահելով՝ Գէորգայ բարեբաղդ բերանը լչաւ, իր քահանայապետութեան ձէ տարին. «Կոչեցաւ ապա » անդ մեծ հայրապետն Գէորգ, և զհոգևոր օրհ» նութեանցն գովութիւնս աստուածայինա՛ւ վե» րայ կատարեալ, փոխանակ օծման արուսակի » խալոյն՝ պսակէ զնա թագաւոր՛ն վերայ Աշքա» նազեան ազին»: Ի՞նչ կարգաւ, ինչ ձեւիւ, ինչ աղօթքով կամ օրհնութեամբ եղաւ այս պսակադրութիւնը Ս. Սահակայ շարադրած և հին Հայոց ձևով և գոչմամբ էր այս թագօրհնէքս, եթէ Գէորգ կաթուղիկոս նոր շարադրեց, կամ թէ ցուցից կայսերաց ձևին հետևեցան. — ասոնք՝ Հայկակ, քեզ այլ, ինձ այլ փափաքելի են՛ի յայտնութիւն: Մեր յետին Կիւրիկեցի թագաւորաց օծման գեղեցիկ հանդէսն և կարգն՝ հանգերձ օրհնութեամբքն, անծանօթ չէ մեզի. ան-

կէ զաս հանդիպած եմ ուրիշ Թագաւոր-օրհնէքի մ՚այլ, աւելի կարճ և անզարդ, որ և աւելի հին կ՚երևի, և ոչ անյարմար այս դիպուածիս. կարծեմ քեզի այլ անհաճոյ չըլլար լսելու այս կարգը և ալօթքները: Փութայ ուրեմն՝ ի Դուին, իսառնուե այն բաղդաւորաց հետ՝ որ եկեղեցւոյն մէջ տեղ գան Հայոց Թագաւորութեան նորոգութիւնը տեսնելու, և անհամբեր աչք՝ ի խորանն կուսական նորընծայիր Թագաւորին՝ որ դեռ էրևիր, այլ գահն դրուած է, և ջուրս դին շաղուած Աշուոյ պայծառ եղբարքն, որդիքն և թոռունքն, երեանիս ջափ, Թերևս և իր աւիւնն դրաւելքն հանդերձ հեզանազ օրհորդովք, իր ամեն ազգատոհմն և ինամիք, և ամենայն իշխանք Հայոց և շաքի՚ն Վրաց և յԱղուանից, նաև ամիրայք և դրացիք, և գաղք քահանայութեան՝ ի հայրապետէն մինչև ի գպիրս: Արդէն ճրագունք վառեալք, կանթեղք և ջահք փայլատակէն, և արծաթ և ոսկի քուրվաւաց և խնկանոցաց անուշահոտ ծուխն Թեթև ամպերով կուբարձրանայ. մեծ ակնակալութեամբ սրտեր կուՊնդան. ծանման շչնկոց մը կուլսուի, երեկոյեան հովուն խաղալերուն պէս լռութիւն մը կուտիրէ. գաղաձեալ մեծ աղաղակ մը կուփրթի... Աշո՜... Աշո՜. սո՛ւրբ Թագաւոր... կեցցէ՛, կեցցէ՛, կուհնչէ հազար օրհնեալ բերան, բիւր կորովաշունչ կոկորդ հայկական. և խորանին ամպացեալ ծխոց խնկոց եռևէն, ինչպէս ամպոց վերևէն Մասեաց գագաթն, կ՚երևի բարձր վեհմաշուրթ զուարթահայեաց արծաթափայլ գլուխ մը... մեծն Աշոտ...: Թոզ ծափեն գոփեն ձայնեն ցնծան սիրուն կորինճքն: « Եւ զգեցուցանեն զԹագաւորա-
» կան զհանդերձան. ուրոյն զքղամիդն և զԹագն
» դնեն՝ ի վերայ սուրբ սեղանոյն արծաթէ սկը-
» տեղք: Ասելով սաղմոս՝ ի Թիւ. Լուր Տէր ալո-

» Թէց խոց. և Ո յոտսոյ ՚ի Տէր. Խոտովան ե-
» ղէց քեզ սէր: Եւ եղանէ հայրապետեան և կայ
» առաջի սրբոյ սեղանոյն, կալով զՏեա նորա
» որ պատկերոյն է զնա: Եւ յետ սաղմոսին սար-
» կաւագն քարոզէ սահելով. Խնդրեացուք Հաւա-
» տով. և եպիսկոպոսն ասէ զաղօթս. Որ Թագա-
» ւորդ ես Թագաւորաց Քրիստոս, և սէր սե-
» րանց, արարիչ ամենայն արարածոց, փրկիչ
» աշխարհի, տուր մեզ զինդրուածս մեր, և կա-
» տարեա ՚ի բարի զաղօթս մեր՝ զոր մատուցա-
» նեմք քեզ առաջի սրբոյ սեղանոյս. զի Հատա-
» տեն և անշարժ պահեացես զուխտս սրբոյ ե-
» կեղեցւոյս, տալով զսա (զԱիշտա) մեզ՝ զոր ընտ-
» րեցեր և կոչեցեր վէրսին ՚ի Ներգաորդութիւն, ի
» վերակացութիւն պանս Թորգոմոյ, առ ՚ի հովուել
» իննամով, և պահեա ՚ի Թշնամեաց. զի զկաթո-
» ղիկէ եկեղեցի բարձրացուցեալ և պատկեալ
» փառօք նորոգ պահեացէ. և զեղբեր հաւատոյս
» մերոյ անսասանելի և անշարժ ուղղութեամբ
» և արդարութեամբ վարեցէ ընդ երկայն ա-
» տեան. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուա-
» ծածնիդ. զի դու ես փրկութեն մեր և ապաւէն
» և օգնական. և քեզ վայելէ փառք իշխանութե»:
« Եւ ապա ասէն կցորդ. Որպէս յետ աստուա-
» ծատէր Թագաւորին, և այլն: — Եւ ևս խաղա-
» ղութեան. և այլն: Եպիսկոպոսն, Օրհնութիւն
» և փառք, և այլն: Եւ եպիսկոպոսն առեալ զա-
» ջոյ ձեռանէ նորա և դարձուցանէ զերեսն Թա-
» գաւորին առ ժողովուրդն, ՚ի ծունկն անկեալ.
» և ասէն քահանայքն միաբան բարձր ձայնիւ ե-
» րգս. Աստուածածայն և երկնաւոր շնորհ՝ ՚ե-
» կաւ ՚ի վերայ (Աիշտայ), կոչեն յանթառ Թա-
» գաւորութեան տանն Թորգոմայ, օծանել զսա
» նմանութեան Կոստանդիանոսի մեծ Թագաւո-
» րին»: — Եւ ասացեն, Երկայն երկայն. ամէն:

« Եւ ապա դարձուցանէ 'ի սեղանն. և այս կա-
» նոն կատարի. Սաղմոս կցորդ, ի, Թագաւոր
» յուսացաւ 'ի Տէր: Պօղոսի առաք. 'ի Տիմոթ.
» Ա. Թղթ. ընթերց. (բ. 1-7). Եւ արդ աղաչեմ,
» և այլն: Յովհան. առաք. յԱ. կաթուղ. Թղթ.
» ընթերց. (բ. 20-27). Եւ դուք օծութիւն ու-
» նիք, և այլն: — Ալէլուիա, ալէլուիա. Լուսյկ
» քեզ Տէր յաւուր անձկութեան, և այլն: Նուրբ
» աւետարանն ըստ Ղուկասու (ժթ. 12-28).
» Ասէ Յիսուս, այր ոմն ազնուական, և այլն: —
» Եւ սարկաւագն քարոզէ, խնդրեացուք Տա-
» ւել: Եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէր Ա-
» ուսած մեր, որ Թագաւորդ ես Թագաւորաց,
» որ 'ի ձեռն Սամուէլի մարգարէին ընտրեցեր
» զԴաւիթ զի զԻսրայէլ. դու և այժմ,
» Տէր, լուր ապաչեանաց մերոց անարժանիցս, և
» նայեաց 'ի սրբոյ բնակութենէդ քումմէ յերկ-
» նից 'ի հաւատարմական ծառայս քո (Անշուա),
» զոր ընտրեցեր և հաճեցար յաւրուցանել Թա-
» գաւոր 'ի վերայ ազգի քո սրբոյ, զոր փրկեցեր
» պատուական արեամբ Միածնի Որդւոյ քո.
» օծանել զսա արժանաւորեա իւղով յնծութեաւ.
» զգեցո սմա զօրութիւն 'ի բարձանց. դիցես 'ի
» վերայ գլխոյ սորա պսակ 'ի քարէ պատու-
» կանէ. շնորհեա սմա զերկայնութիւն աւուրց.
» տուր այլոյ սորա յաղթանակ փրկութեաւ. հաս-
» տատեա զսա յաթոռ արդարութեան. շրջա-
» փակեա զսա վինու սուրբ Հոգւոյդ: Հնազան-
» դեցո սմա զամենայն բարբարոսական ազգս:
» Սերմանեա 'ի սիրտ սորա զերկիւղ քո և զյոյս
» զօթիւն կենսակցական: Հաստատեա զսա ան-
» բիծ հաւատով. և 'ի վեր երևեցո սմա զօրու-
» թիւն քո. պահեա 'ի պահպանութիւն սրբոյ
» քո կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ՝ ուր-

» զափառ գաւանութեամբ. զի գաւեցի զԺողո-
» վուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո ի-
» րաւամբք. կեցուսցէ զորդիս անանկաց. և ժա-
» ռանգորդ լիցի սրբութեանդ: Ֆանզի քո է
» զօրութիւն և փառք, յաւիտեանս. ամէն.
» Ապա առնու եպիսկոպոսն պղպմէն 'ի ւեղա-
» նոյն, և պէնէլանն. և տայէ քահանայիցն զի արկ-
» ցեն գնովաւ. և 'ի շուրջ առնուլն նորա զայն՝
» եպիսկոպոսն ասէ. Խաղաղութիւն ամենեցուն.
» և դնէ զայն 'ի վերայ գլխոյ Թագաւորին և ասէ.
» Ֆեզ միայնոյ Թագաւորիդ յաւիտենից՝ որ 'ի
» վերայ երկրի զԹագաւորութիւն տուր հաստա-
» տեցեր, որ խոնարհեցոյց զպարանոց իւր ընդ
» մեզ. և արդ մեք ծառայք քո խնդրեմք 'ի քէն՝
» Ամուսած ամենայնի, պահեա զսա ընդ հովա-
» նեաւ քով այլովդ, և զօրացո զսուրբ Թագաւո-
» րութիւն, զհաճոյս քո առնել յամենայն ժամ.
» ծագեա յաւուրս սուրբ Թագաւորութիւն, զա-
» մեմ խաղաղութիւն ժողովրդեան. հանդար-
» տութեամբ սուրբ՝ խաղաղական ապահովական
» կենցաղաւ բնակեսցուք ամենայն բարեպաշ-
» տութեամբ. զի դու ես Թագաւոր խաղաղու-
» Թեան, Ֆրիստոս Ամուսած մեր. և քեզ վայելէ
» փառք, իշխանութիւն. և այլն:
» Ապա առնու հայրապետն զմեռոնն, և օծա-
» նէ զգագաթն և զձնկատն, ասելով. Օրհնեսցի,
» օծցի և սրբեսցի Թագաւորս այս՝ յանուն Հօր
» և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ զայս երիցս
» ասէ եպիսկոպոսն: Ժողովուրդքն ասեն, ամէն:
» Եւ ապա ասէ. Տէր, կեցո՛ զԹագաւորն և լսէ
» մեզ: Ապա առնու եպիսկոպոսն երկոքին ձե-
» ռքն զԹագն 'ի սեղանոյն, և պատկէ զնա և ա-
» ռէ. Օրհնեսցի, օծցի և սրբեսցի Թագս և Թա-
» գաւորս այս, յանուն Հօր, և այլն: Եւ ժողո-
» վուրդն զնոյն ասեն. Տէր կեցո՛ զԹագաւորն և

» լուր մեզ: Եւ ասէ, Օրհնութիւն և փառք. և
» այլն:
» Եւ նոյն ժամուն մուանեն 'ի Հաշու ժամն, և
» պատարագ մատչի. և զԹագաւորն ոտանէն 'ի
» սեղանն. 'ի ձախակողմն կանգնեացի. և յետ պա-
» տարագին հաղորդեն զԹագաւորն. և պատա-
» րագին գիրքն զԹագաւորացն կարդան:
» Բայց Թագաւորն զդուշ կացցէ յամենայն
» Հանապարհն Աստուծոյ, երկիւղիւ և սրբու-
» Թեամբ »:

Կըրնանք արդեօք հիմայ սրբազան պատկառանօք, հոս յարմարցընել գերագոյն Երգոց խօսքը և փոխանակելով ընդ Սողոմոնի՝ ըսել. « Ելէ՛ք և
» հայեցարուք, դուստերք Սիոնի, յարքայ
» Աշոտ, 'ի պսակն՝ որով պսակեաց զնա մայր
» իւր, յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր
» ուրախութեան սրտի իւրոյ »: Կրնանք արդեօք նոյնպէս շարունակել. « Ահա գահոյք Աշո-
» ոյ. վաթսուն հազար ոտատազինք շուրջ վնո-
» վաւ 'ի քաջացն Թորգոմազանց. ամենեքեան
» սուսերաւորք և ազեղնաւորք՝ հմուտք պատե-
» րազմի, այր իւրաքանչիւր սուր յազդէր յար-
» հաւրաց գիշերոյ », և կապարճք 'ի Թիկունս վառեալք 'ի ձառագայթից տուընջեան: Կրնանք պարձեալ աւելցընել յարմարցընել, մեր պատմըչին խօսքէն խրախոյս առած, Թէ և « Գահոյ-
» ակ արար իւր սղքայ Աշոտ 'ի փայտից Բա-
» սենոյ [1] ». և այլն. վասն զի ինչպէս յամենայնի վայելուչ և բարեկարգ էր Աշոտ, Թագաւորու-Թիւնն այլ արժանապէս վայելչացուց մեր նախնի Թագաւորաց և ազգին պերճասիրութեան համեմատ. « Այնուհետև բազում և երևելի կարգս

1 Բաւանիի դաշտն Ախթայ անուանեցաւ հին աւուն. բայց լեռներն ինչուան հիմայ անտառուտ են:

» յօրինէր յաշխարհի սէրուեթեան իւրոյ, և՛ըսէ
» Յովհ. կաթուղ., յօրինուածս սանց, ապգայ,
» քալաքայ, չինից, դասատէրսայ, և հարթ
» հաւասար ընդ իւրաքանչիւրոցն կատարէր
» կարգս լեռնականաց և չերմահովիտ բարեխառն
» դաշտականաց. և զամենայն տափարակ տեղիս՝
» ագարակս և գոմս դնէր, և զմարմանդա՝ յայ-
» գիս և՛ի բուրաստանս պարտէզս. և զամենայն
» ինչ զոր ինչ օրէն է թագաւորութեան և որ
» ինչ՝ ի թագաւորութեան և որ շուրջ զթագա-
» ւորութեամբ՝ ոչ ինչ խմիք կատեցուցանէր. և
» գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զա-
» մենայն թագաւորութիս գտանիւր»: Իր փառ-
քէն աւելի ազգին օգուտը փնտռելը՝ հայրն էր
ամենուն. բայց ազգն զինքը պատուեց, ինքն այլ
իր փառքովն զազգը աւելի պատուեց, նոքին-
լով այս ամեն վայելչութիւն և փառքը՝ ոչ էր ան-
ձին հաճոյից և փափկութեան, այլ՛ի պերճու-
թիւն թագաւորին և ազգին Հայոց. սոսկ բար-
ձրացուցին զինքն իբրև զարեւ՛ի վերոյ հայրե-
նեաց, պէտք էր որ ինքն այլ ճառագայթէ ոմանց
վրայ զուարթ և պայծառ լուսով:

Այս լայս, այս փառքս ծագեցաւ յամին 887,
գալնանային կամ ամառնային եղանակին, յո-
րում այրարատեան հովուաց և բլրոց գեղեցկու-
թեան խառնուեցաւ Հայոց համաշխարհական ու-
րախութեան հանդէսն. որ արդարև շատ մեծա-
փայլ և պայծառ եղաւ բոլոր իշխանազանց և ե-
կեղեցւոյ գլխաւորաց ու բազմախումբ ժողովըր-
դեան ներկայութեամբ և պատրաստութեամբք.
բայց պայծառութենէն շատ աւելի այլ արուա-
ճալժ էր: Վասն զի այն առն մեծապանծ երեսից
էրա հինգ հարիւր տարի առաջ նախնիքը և անոց
փառաւոր օրէնքը աւելի լաւ կու ճանչնային՝ քան
մենք մեզմէ առջի էրա հինգ դարերը. — անոնք

դեռ նախարարաց, ազատաց և քաջաց սերունդք և տոհմք էին, և դեռ իրենց տիրապետութեան նախահարց պատակերանեղուն մէջ բնակէին. անոնց յիշատակները կու սեանէին, արձանագրութիւնները կարդային, ազգաբանութիւններն գիտէին. անոնց գործածած անօթները և զէնքերը դեռ պատէին իրենց մէջ. դեռ նոյն Հայկազանց և Արշակունեաց գեռները կու կոխէին, և նոյն օդը ծծէին. — անոնք դեռ հարազատ հայախօսք էին. — Թէ և բազմավէր բազմասպի՝ Հայաստանեայց մարմինն դեռ ամբողջ էր. գլուխն չէր երևէր, բայց երբ սիրան դեռ կ'առնուր կու տար, այնպէս մի մարմնոյ մը՝ գժուար չէր գլուխը գտնել կանգնել, որ հինգդարեան հարուածներով կորացեր սեսերէն վար կախուեր էր դէպ 'ի կուրծքն. և երբ ամենայն անդամոց մէջ բարեխառն չերմութիւնն ծաւալեցաւ ու սիրտն մեծապէս թնդաց, Ճառագայթապարդ գլուխն այլ դարձեալ բարձրացաւ, դարձեալ եղաւ Հայաստան հանուր հիւսիսային վիհագոյն. Կ.Պօլսոյ ու Բալատայ, (այն միայն երկու սիեզերական աթոռոց) մէջ՝ մէկ Թագաւորական գահ մ'այլ կանգնեցաւ. մինչդեռ այնքան մեծ տարածութեան մէջ ամեն գահ կործանած մնացին. և այս առաջին կանգնող գահն ու Թագն՝ եղաւ Հայոցն: Անգամ մ'այլ Հայք իրենց հին հատակակից առչև յառաջադէմ գտուեցան. անգամ մ'այլ Կովկասեանց ետևն յԱպատաժն Արաքսիա, Պոնտոսէն ինչուան 'ի ծովէն Պարսից՝ ամենայն հին և նոր ժողովուրդք ողջունեցին զԱյրարատ Թագակապ՝ 'ի Բագրատունին Մէծն Աշոտ:

Ի սկզբան վարուցս Աշոտոյ ըսի և դարձեալ կ'ըսեմ, շատ քիչ կարիճ և առաքինի մարդ գըտուած է՝ որ այսքան արդեամբք ծանրացեալ և հատակաւ հատուցեալ՝ հրաւիրեալ ըլլայ 'ի

10249926



թագաւորութիւն. ոչ մեր ազգին պատմութիւնն, և ոչ Թերևս օտարաց յայտ՝ Աշոտոյ Ֆամեմատ մը գանեն. և եթէ արքական զարմանք մը բերէ պատճառ այն՝ ի գլուխ 12 տարեկան Սոլոմոնի, սքանչացան և սիրելի սիրանք ըլլայ ինձ և քեզ, Հայկակ, նագա այս ոսկի խառնեալ յարծաթ աչխատրեթէ 70ամեան գլխոյ ալքային Աշոտոյ: Կարծեմ ոչ ոք յաննախանձ զգաստից, ուր ազգէ այլ ըլլայ, կըլնայ ուրանալ մեր Բագրատունեաց փառքը, և մեզի ընկած պարծանքը:

Ահա յիշատակիս հետ անգամ մ'այլ յիշենք այս հայրենեաց հօր երախտապէտ որդւոց մեծագով և ազնուախոհ մտածութիւնը, որ անոր բազմաժամեայ անձնանուէր խնամոց արտաքին ցոյց փոխարինի տալ մտածեցին և յաջողեցան՝ զԹագն Հայոց միապետութեան. և Թերևս յետ աւուրց Ս. Տրդատայ՝ այս առաջին անգամ միտերթ և միաբերան իշխանք զանազան աշխարհաց և գաւառաց Հայոց՝ կանչեցին և գրեցին Աստուածաշունչ կամ Աստուածապահ Նագատոր ՌԸ. և նա գրեց իր հրովարտակաց և պարգևագրաց տակ ոսկի կընքոյն զոր՝ Աչոտ Բագրատունի Նագատոր Հայոց[1]: Բայց աւելի քան զայս ոսկի կնիքներն և պատկներն, աւելի քան Ցունաց կայսրէն ղրկած Թագն և երեքկրկին ոսկեկնիքն[2], աւելի քան զայն հա-

1 Ցանուն Աշոտոյ գրուածք դեռ ծանօթ չէ մեզի, բայց կան մնան դեռ իր որդւոյն Սմբատայ ատորագրութիւնն այս օրինակաւ դրոշմած յամի 906. և մեծամեծ իշխանաց Սիւնեաց և Արծրունեաց ատորագրութիւնքն՝ կոչելով զնա Նոտատոր ՌԸ:

2 Վասն զի կայսրն բաց յամիրապետէն ուրիշ ամենայն արևմտեան և արևելեան Թագաւորաց և իշխանաց և սքանչացան Հայրապետին՝ միակ կամ կրկին ոսկի դրամաչափ կնքով կու խաւրէր Թուղթ. միայն մեր Թագաւորաց՝ ասոնցմէ մեծ եռապատիկ կնիք կու դնէր:

*րուստ ընծանեւրն՝ զոր Թագաւորն ընդունեցաւ, և զոր կրկնապատիկ տուաւ և զկեց մերձաւորաց և հեռաւորաց, աւելի քան զնշխանաց և ժողովրդոց իրեն ցուցած մեծարանքն և հպատակութիւնն, աւելի քան զգօրաց զինաշարժութիւնն, ռամկաց հանդէսն, աւելի քան զպատերազմական, քաղաքական և եկեղեցական փոխոց և երաժշտութեանց ձայնակցութիւնն, — քան զայս ամենքն աւելի հաճոյական էր տեսանել զԱշոտ յաղթութեան Շիրակաւանի, 'ի մէջ բազմաերանդ ընտանեացն, եղբարց, որդւոց և թոռանց, փեսայից և հարսանց, հին Հայկազանց և Եբրայեցւոց ջոջգլուխնահապետի մը պէս. տեսանել զարի ալեքսն Աշոտ 'ի գահաւորակի նստած, որոյ ախնք արծաթիք, կոնքն ոսկի, ձեռնն ծիրանի և մէջ նորա ականակապ, տարածեալ սէրն (բանուածք բազմականին) 'ի գաւերացն Թորգոմայ. — տեսանել այն հայրական և որդեկան գորովն ու խանդաղատանքը, կորիճներուն թափ թափ և շուտ շուտ շարժիլը, փափուկներուն հեզիկ նազելը. և այդ կայտառ ու պայծառ թևթեւանման թոռնիկներուն վեր վեր ցատքտելն, պատուն վիզը պլլելն, ու թեթև թաթիկներով՝ թագին գեղ իրենց անծանօթ ծանրութիւնը կշռելը, և մատիկնին մէկ մը անոր զարդերուն մէջ մէկ մը անկէ փայլուն աչեաց մէջ խաղցընելն: Ատուածածաւէր և ընտանեսէր տանուտէր նահապետ մը Թագաւորական փառաք պերճացեալ, արդարև այս է գոհարակապ ոսկի մատանին: Երանի՛... այնպիսի մատանին 'ի մատն հագնողին՝ թէ պագնողին:*

10249926



# ԺԲ

Աչոտ չոլս տարեաց չափ[1] միայն թագով փա-
ռաւորեցաւ կամ փառաւորեց զՀայաստան. թե-
րևս այսչափ կարճ ժամանակին և վթարմանց շա-
տութիւնն բաւական չէր նորահաստատ թագա-
ւորութեան և նորին միագլխեալ ազգին ամեն
հարկաւոր կարգերը դնելու և հաստատելու. սա-
կայն Աչոտ ոչ միայն զկարեւորին ըրաւ, այլ և շա-
տանց անկարեւորին այլ: Մնացեալ պատմչաց կարճ
լիշատակներն մեզի կ'իմացընեն, որ բոլոր ժա-
մանակն անցուց, մեկ մը թագաւորավայել կար-
գօք և շինութեամբք, ինչպէս քիչ մ'առաջ իմա-
ցուց մեզի Յովհ. կաթողիկոս. և ուրիշ մ'այլ[2]
կ'ըսէ. «Փափկացեալ և յոլփացեալ ուրախու-
» թեամբ... քաջավայելչագոյնս զթագաւորու-
» թեանն կատարելագործեալ զժամանակին».
Մեկ մ'այլ՝ արժանապէս 'ի շնորհակալութեան
առուածային խնամոց՝ որ այս յաջողութիւնը
տուաւ իրեն և ազգին Հայոց. սրբազան տաճար-
ներ կանգնելով անոր, ինչպէս վկայէ իր վարքը
համառօտողաց մեկն[3]. «Պատեալ նա յերկուց
» թագաւորացն՝ եղև ճոխ թագաւոր. և արար
» խաղաղութիւն և շինութիւն աշխարհին Հայոց. շի-
» նեաց և բազում էկեղեցիս փառաւորս»: Որչափ
մարդկան առջև բարձրացաւ և տիրացաւ, այն-
չափ աւելի զինքը խոնարհեցուց և ծառայեցուց

1 Թէ և ոմանք 'ի պատմչաց հինգ տարի կ'ըսեն թա-
գաւորութեանն, այլ սխալ է. բայց եթէ Քրիստոսի
թուականաւ 887էն սկսելով 891ի սկիզբն այլ հաշուեն,
հինգ տարի կ'ըլլայ կտորներով, բայց ամբողջ և ոչ չորս
տարի:

2 Թովմա Արծրունի:

3 Յայսմաւուրք:

Աստուծոյ՝ զգաստ և խոհեմ Թագաւորն. որ գիտէր իւրաքանչիւրին իրեն վայելածը տալ, թէ Աստուծոյ, թէ մարդկան և թէ իր անձին և աստիճանին: — Երրորդ ընելիքն կամ գործն այլ էր՝ իր հին կամ սովորական զբաղմունքն. այսինքն արհեստաւորութեամբ գիտել բոլոր իր իշխանութեան և պաշտպանութեան տակ եղած աշխարհաց և գաւառաց հանդարտութիւնը, ևնոյնպէս կամ զօրք կամ անձամբ՝ կարգի և խաղաղութեան բերել խռովարարները և գրգռարարները. և յայտ՝ ոչ Թագին նայելով և ոչ ծերութեան, իր ապարատ եղած տարիներուն պէս՝ ինչուան մահուն տարին այլ անդադար գործելու, շարժելու, տեղ տեղ փոխադրելու երթալու գալու հետ էր. իբրև երիտասարդ նահատակ ամեն վտանգի մէջ յառաջադէմ վազելով և միշտ յաղթող կամ փրկող դառնալով: Գառաւն տարի ոչ ոք կրցաւ պլուխ քաշել կամ ապստամբել իր ամենահաս երթութենէն, և ոչ ոք վտանգիլ՝ իրեն ապաւինողներէն. միայն մահն կրցաւ զինքը դադրեցընել, այն այլ դարձեալ ձմեռու վրայ հանդիպեցաւ, անոր քարեկարգիչ արշաւանաց մէջ: Որոնք որ հանկրցան խաղաղութեան օգուտը՝ անոնց վրայ կակուղ բազկաւ երկընցուց Թագաւորական գաւազանը. իսկ որոնք գէտ խռովութիւն կամ բռնութիւն սիրէին, իմացուց անոնց որ գաւազանին հետ գէտ զէնք այլ կրնայ վերցընել իր քաջակորով ձեռքն. որոյ համար համառօտ գրութեամբ վկայէ ժամանակակիցն (Թովմաս), Թէ մինչև՝ ի մահն՝ « Զէտն նորա յամենեսեան, և ամենեցուն » ձեռք՝ ի նա »:

Ահա եռքի տարիներուս մէջ յիշուած գլխաւոր գիպուածքն և գործք Աշոտոյ՝ եղան մէկ մը հիւսիսային և կովկասեան կողմերը, մէկ մ՝այլ իր անհանգարտ Արծրունի փեսային հոգերը. որ վեր-

ջապէս իր անխոհեմ շարժմանց զոհ եղաւ։ Ձար-
տարութիւն մը այս ձկնարտուքինը կուխտաւանի
ծանր և զգուշաբան կաթուղիկոս պատմիչն. «Գրի-
» գոր՝ որ Դերենիկն անուանէր, և էր նա այր
» սէգ և զգաստ և սօս՝ի գնացս ոսկց, և զօրա-
» ւոր արդեամբք և բանիւ. և անօրինէր միշտ յա-
» մենայն բարեձևութիւնս բերել։ Եւ վասն զի
» փեսայացեալ էր նա Աշոտոյ..., սակս այնորիկ
» հայրախնամ կամօք և խոհական սիրելու-
» թեամբ միշտ խրատս բարեաց նմա մատուցա-
» նէր ոտոյ. և յ՝ակզբան անդ ընկալեալ հնօր և
» զգօն մտօք՝ հաւանէր ընդունել, և յոտին զբո-
» ւր Թշնամիս՝ի սադրելոյ կացուցանէր, և խա-
» ղաղութեան և շինութեան պարապեալ՝ յապա-
» հով՝ի բնակութեան իւրեանց պատրաստէր
» զհայրենի սէրութիւնն իւր՝ի բոլոր հինից։ Բայց
» յետոյ՝ի կամս անձին զինչպիտութեան բերեալ,
» ոչ անսայր բանի խրատուս աներոյ իւրոյ, որ-
» պէս յերեւին և յետանդն. և չէիներ նմա այն
» յաջողութիւնն ինչ՝ի բարութիւնս»։

Ոչ թէ միայն բարոյ յաջողութեան արգել եղաւ Դերենկայ կամապաշտ զինչպիտութիւնն, այլ և չարի պատճառ և անդարման չարի։ Վերն յիշեցինք իր քեռորդին Հասանիկը բռնելը և արձակելը. երկուքն այլ խարդախ ճամբաներ գացին, երբեմն իրարու դէմ, երբեմն իրարու կողմ. այս անգամ այլ (Աշոտոյ Թագաւորութենէն քանի մ՝ամիս ետքը) Դերենիկ արձակեց վշտանիկ, որ անոր ձեռքով ուրիշ մը բռնէ։ Այս որան էր Գագիկ Ապուսմրուեան ըսուածն, որդի Վահանայ, մեծապատիւ արծրունի իշխան մը, որ հետ իր հօրն և Դերենկայ և անոր հօրն՝ Բու-
զայէն բռնուած և գերի գացած էր, և խնամի էր իր մօրը, որով և Թագաւորին. հիմայ Դերենիկ ատոր վրայ կասկածելով Թէ Աշոտ կուրապաղա-

10249926



ան (Տարօնոյ) համախոհ էր, խոստացաւ Հաւանկայ՝ իր Սևան բերդը և երկիրները յետ դարձընել, եթէ բառնէ և իւրեն բերէ զԴատիկ. վասն զի սա կասկածելով իրմէ՝ ամրացեր էր ՚ի ձորհոռիկ բերդի, կոլոզաւոց աշխարհին կողմերը: Հաւանան իբրև փախատական ՚ի քեռւոյն՝ գնաց և խաբեց զԴատիկ, և հոս այլ իր առջի հնարքը բանեցընելով, կեղծ հիւանդութիւնը, ապահովցուց իր հիւրընկալը. և անոր քնացած առեն՝ բառնեց և երկաթի շղթաներով բերաւ առ Դերենիկ. սա այլ խաբեց ՚ի վան, պահել ՚ի բերդին. իր տիկնոջն այլ յանձնեց, (որ այն առեն ՚ի վան էր), զգուշանալ որ չփախչի բանտեաէն: Այս բանս ՚ի հարկէ մեր Թագաւորին անհաճոյ էր. բայց ոհաճութիւնն առնլի պրպռել կու չանար այն ախալել Եմէնիին, որ նախ զԴերենիկ հրապուրեց ինքն իր գլխուն գործելու և աներոյը չհարկնելու, և զԱպլխատ կայսրին այլ նորէն շարժել ուզեց, նոյնպէս զուրիշներն այլ. յետոյ խորամանկութեամբ մէկ կողմէն առ Աշոտ պրեց Դերենիկայ վրայօք՝ որպէս թէ ապստամբօրէն ուզածը կ'ընէ և կ'արհամարհէ զԹագաւորը. մէկ այլ կողմէն ձայն հանել տուաւ թէ Աշոտ Թագաւոր Դերենիկայ նեղացեր է և կ'ուզէ քանել զինա:

Դերենիկ զամէնքն այլ արհամարհելով՝ աշնան վերջերը (887) եկաւ երթալու ՚ի Մառական աւանն, որ Երասխ գետոյ մօտերն է, վասպուրականի աշխարհին հիւսիսային կողմերը, ձորաշ գաւառին մէջ, և հին առենէն ՚ի վեր՝ այն աշխարհին առաջոյ ձմերանոցն էր, խորագիր և տաքուկ տեղ մ'ըլլալով: Շիտակ և մեծ ձամբով երթալու համար ափտք էր անցնիլ Հերայ գաւառէն. այս երկիրս որ հիմայ Խոյ կ'ըսուի և Պարսից իշխանութեան տակ է, հին առեն մեր Պարսկահայոց առաջին գաւառն էր, բայց աշխարհագրական դրութ

10249926



աւելի վաստուրականի մաս կըրնար ըլլալ, և այնպէս այլ եզած էր. այս պատմութեան առեն և աւելի առաջ՝ արաբացի կողմնակալ մը կոչուէր Ասիր հոս, բայց Ապահունեաց և Խլաթայ իշխանաց պէս՝ Աշոտոյ իշխանութեան տակ. երկրին մերձաւորութեամբն՝ կերպով մը Դերենիկ այլ իրաւունք ունէր անոր վրայ: Կողմնակալն՝ որ Ապլ-փէրա անուանէր՝ գիտնալով անոր միտքը, միանգամայն վախնալով՝ ի Թագաւորէն, երկոքին այլ հպատակութիւն և բարեկամութիւն կոչցընէր. իսկ հինոյ անշուշտ Եմէնիկէն սիրտ առած՝ խարդախութեամբ անզգամացաւ: Իր վրայ այլ կասկածոտք կային, և իմացուցին Դերենիկայ որ զգոյշ կենայ Ջամբեան. ոմանք այլ կ'ըսէին որ Թագաւորն պիտի բանէ զինքը. այս բանէս կըրնար ապահով ըլլալ, բայց ոչ նոյնպէս այլազգիէն: Դերենիկ տովրակեան յանդգնութեամբն յառաջ անցաւ, մտաւ Հերայ (Խոյ) գեղեցիկ դաշտավայրը և ինչաւ՝ ի գեղն Փեռոտակ, քաղաքին մօտ: Քաղաքապետան իր պատրաստութիւնները տեսնելէն ետև՝ հրաւիրեց զԴերենիկ՝ ի քաղաքն. նա յանձն չառաւ հոն երթալու, բայց միայն Ջամբուն վրայ տեսնուելու. և երբ ինքն երկրորդ օրն որսի ելեր էր, քովիններն նորէն ազդեցին իրեն որ հեռանայ անկէ. նորէն չլսեց: Մէկ մ'այլ իմաց տուին որ Ապլփէրա կու գայ զինքը բարևելու. Դերենիկ տեսաւ անոր Թիկնապահ զօրաց գունդն՝ որ իբրև՝ ի պատիւ իրեն դիմաց գային. մտրակեց, և «Ձեմս առեալ սիգաքայլ երիվարսն՝ եհաս... » միայն և առանձինն՝ ի յառուսամէջ տեղւոյ». այնպէս տեղ մը որ երկու կողմէն այգիներ էին, մէջէն յորդատահ առու մը կ'անցնէր, և ոչ ոք կու հասնար ձախէն անկէց անցնիլ. միայն Դերենիկ մէկ մ'այլ մտրակեց զձին և ձգեց ջուրը. ցատքեց այն դին. մէկէն հոն շարուած այլազգի

զօրքն երկու բաժնուելով Թոլոսցին որ մէջերնէն անցնի կարևէն. նա անխոհեմաբար վինակ յառաջէց, Ապլխէրա այլ դիմացն ելաւ, « և գերկուս » զպարանոցաւն արկեալ՝ տայ զյուդայեանն համ » բոյր» : Ահն առեն զօրքն եռևէն պատեցին զնա. ոմանք ձիուն սանձը քաշեցին, ոմանք վրայի սուրը բունեցին, ուրիշներն այլ սրով և նիզակաւ կռնակէն զարկին, վար ձգեցին. ինկնալու առեն ամենցած աչուընեն ոլորմուկ կետ դարձուց՝ օգնական պաշտպան փնտռելու. բայց իրեններն ջրին այն դին էին, և շփոթելով ու վախնալով փախան. միայն Ամատունեաց ցեղին գլխաւոր իշխանն սիրտախրուքեամբ բունուեցաւ: Գալաքին Հայ վաճառականքն գնեցին Դերբենկայ մարմինը, և իշխանաց պատուով պատեցին. այն տեղն եպիսկոպոսան Դաւիթ այլ արժանաւոր յուղարկաւորութիւն ըրաւ, և Թաղեց եկեղեցւոյն մէջ. ինչուան որ կետ ժամանակի՝ մեռելոյն անդրանիկն եկաւ առաւ հօրը մարմինը և տարաւ հանգչեցուց Արծրունեաց հին քնարանը, 'ի վանքն Խաչէն՝ որ 'ի Հատամակերտ Աղբակայ: Բոլոր վաս պռաբական աշխարհն տան ամիս սուգ ըրաւ Դերբենկայ վրայ, որ իբրև 40 ամեայ էր մեռած առեն. խակ իւր անդրանիկն՝ հազիւ տասնամեայ:

Աշոտ Թագաւոր, որ այս միջոցիս Կովկասեանց հոգով զբաղած էր՝ խաւրեց իր ժիր նուիրակ Շապուհ որդին, որ իր համանուն Թոռը զԱշոտ զանդրանիկն Դերբենկան՝ ժառանգեցընէ հօրը աԹոռոյն, և անոր մայրն այլ քաջալերէ, (Սոփի տիկինը) որ երկանը մահուան վրայ շատ սրտակոտրեր էր. և հիմայ եղբայրը տեսնելով և զանդրանիկն այլ Արծրունեաց տէր դրուած՝ քաջալերեցաւ. սկսաւ ոչ միայն մօր պէս՝ այլ և Թագուհոյ պէս խնամել որդիքը և գաշխարհը. հարցուց հօրը՝ Սպասպրուանին վրայ, և պատուէր ա-

ւաս որ արձրկէ ոճ սկրսվ պատուէ, և որգւոցը ինամակալ կարգէ, ինչուան որ չափահաս ըլլան, և կարենան ինքնիրենոնուն կառավարել: Յաջորդ տարւոյն (888) եաքերը Աշոտ Թագաւոր՝ Վրաց գործերը չափած ըլլալով, անձամբ եկաւ 'ի Վաղարշապատ, դուստրը (Սոփի) և Թոռնեերը մխիթարելու հայրաբար. միանգամայն և ինամակալ Թագաւորի պէս նորէն հանդիսիս հաստատեց զԱշոտ Թոռը 'ի տէրութեան Արծրունեաց. ա նոր երկու եղբարցն այլ պատշաճ պատիւներ և իշխանութիւններ տուաւ. նոյնպէս զԱպուսմրուսան այլ հաստատեց անոնց ինամակալութեե և պաշտպանութեան մէջ, կառավարութիւնն այլ յանձնելով Սոփի տիկնոջ, և ամեն բան կարգի դնելով դարձաւ իր տեղը:

Կովկասեանց կամ Վրաց շինութեան պատճառն՝ մէկ մ'էր այն Ներսեհն՝ զոր նախ յիշեցինք. մէկ մ'այլ Սիխազաց Թագաւորք՝ որ իրարմէ կու յափշտակէին Թագը: Այսպիսի էր և Յովհաննէս Թագաւորն, որ զրկելով զԲագրատ՝ զորդի Դեմետրի Թագաւորին, իր որդին Աւրներսեհը Թագաւոր դրաւ մահուան տեղը (879). Բագրատ փախաւ 'ի Կ.Պօլիս, և քանի մը տարին գտնալով՝ իր կուսակցաց օգնութե ապատնեց զԱւրներսեհ և տեղն անցաւ (887). անոր այրին այլ առաւ 'ի կնութիւն, որ էր քոյր Ներսեհի. և զոս այլ կանչեց 'ի Յունաստանէ, և բաւական զօրք տալով՝ անոր ուղարկին պէս Թողուց որ կռիւ Վրաց երկիրը և խլէ անոր երիտասարդ իշխողէն, որ էր անուանին Աւրներսեհ (որդի Դաւթի), և իր հայրենիքը ժառանգեր էր մեր Աշոտոյ ինամակալութեամբ. մինչդեռ սա այս միջոցիս նոր Թագաւորեր և քաղաքական կարգադրութեանց զբաղեր էր: Աւրներսեհ իրեն օգնական գտաւ զԽաչարիա, նախահայր մեծ

և անուանի տոհմին Ռամսեքեանց, որ Թուրքաց գաւառին կոստրէր. և գԳոռգին՝ Տայոց մէկ մասին տիրող կոբրատպատան. մեր Թագաւորն այլ օգնական գունդ մը խաբեց. որուք Ամրներ աեհ սիրտ առաւ իր հակառակորդին՝ Ներսեհի՝ դէմ ելլելու. Ախալցխէի կողմերը, կոր պետ այն եզերքը հանդիպեցան իրարու, և սաստիկ պատերազմ եղաւ. որովհետև Ներսեհի և Ախ խազաց հետ միացեր էին Ալանք կամ Օսք այլ բայց վերջապէս անոնք յաղթուեցան, Ներսեհ քառնուեցաւ և ապանուեցաւ (888) յԱթինծա աւանի (յարևելակողմն Ախալցխէի):

Ամէն վերջը կ'երևի թէ Աշոտ Թագաւոր անձամբ եկաւ այս կողմերս և օրինաւոր իշխանաց յանձնեց. անկէ մնալով Կովկասայ լերանց մէջ՝ նուաձեց Վրաց Թշնամիները և Ներսեհի նախկին հակիցները, գԱլանս և ուրիշ լեռնաբնակ ցեղեր. որոց համար կ'ըսէ կաթուղիկոս պատմիչն. «Զեռն » գՀիւսիսական կողմանէն արևելք, 'ի ծովէրս » մեծի լերինն Կովկասու, որ'ի հովիտս և'ի գաշտս » երկայնագոգս բնակեալ էին ազգք, ընդ իւրեաւ » հնազանդեցուցանէր»: Մեր օրերս անգամ » յայտնի է, Թէ ուրչափ այժ և խելք պէտք էր Կովկասեան այն բնաւարիւսիպ լերանց ազատ որդիքը անձնելու կամ ապատահուԹենէ դադրեցընելու:

Աշոտ իր խնամոց յանձնուած երկրին հիւսիսակողման մեջաեղութիւնը հանդարտեցընելէն ետև ուզեցաւ երկու ծայրերն այլ նուաձել, որ կերաև՝ մը սեբեի գժուար էին: Վասն զի արևելեան կողմը կ'իշխէին Ռսխացիք, որ են հին Հայոց 15 աշխարհաց մէկն, Ալուանից, Վրաց և Կովկասեանց սահմանակից. որոց նման իրենց երկիրն այլ լեռնոտ և ամուր ըլլալով, հոս կարիք եղաւ և անկիրթ իշխանք իրենց ազատութիւնը պահած

էին Հայոց քահանութեան առեն այլ: Ասոնց մեծ իշխանն էր Սաւփանոս կոն՝ որ եկաւ առ Բուղա, և նահատակուեցաւ ՚ի Բաբելոն: Ա յս կողմերուս հին Հայկազանց ժամանակէն տէրտէր Սեւուկ նահապետին անուամբ, այս առեններս այլ Սնորդէի անուամբ ծանօթ և ահարկու էին մերձաւորաց և Արաբացւոց, իրենց չինած կըտրուկ սրոնին: Հիմայ Աշոտ «զերուզակուտ մարդ» դիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ » նուաճէր, ՚ի բաց ՚ի նոցանէ հերքելով զաւա» զականութիւնն մարդապետութեան, և իբրև օրի» նաւուրս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջ» նորդս և իշխանս նոցա կացուցանէր »:

Իակ արեւմտեան սահմանածայրն էր՝ Ախուա» զաց երկիրն կամ Եգերաց, որոց Թագաւորն՝ սահմանակից տէրտէրաց մէջ ամենէն զօրաւորն էր, ինչպէս առաջ այլ յիշեցի, միանգամայն և ինքնագլուխ Թագաւոր ճանչցուած. հիմայ Բագարատ Ներսեհի կողմը բռնելով՝ Հայոց այլ Թշնամացեր էր. բայց նախ անոնց զէնքովը յաղԹուելով, յետոյ Աշոտոյ մարդասիրութենէն, խոնարհեցաւ ՚ի հաշտութիւն և ՚ի գաշնակցուԹիւն, որդիաբար մեծարելու իրմէ մեծ Թագաւորը. ինչպէս վկայէ և վերոյիշեալ պատմիչն մեր. « Այլ և զԹագաւորն Լօ Եգերացւոց ՚ի սէր » միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս » նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդութե» սակի գոլով՝ մեծարմաբար պարտավճար միշտ » նմա ՚ի ծառայութիւն բերէր »:

Ա յս գժուարին գործերը յաջողութեամբ լըմընցնելէն ետև էր որ Աշոտ Թագաւոր գնաց ՚ի Վասպուրական, իր Թոռանց ժառանգութիւնը և իշխանութիւնը կարգի դնելու: Նոյնպիսի կարգաւորութիւն մ՚այլ ըրաւ Սիւնեաց երկրին մէջ. վասն զի գրեթէ նոյն առեն մեռաւ Վասակ Իշ-

Իսանիկ՝ երկրին մեծ իշխանն. Աշոտ՝ անուն եղբայրը և իր անուանակից Աշոտը հաստատեց ՚ի նահապետութիւն Սիւնեաց. և երկուքին որդւոց ժառանգութիւնները այլ որոշեց: Ահա Աշոտս այլ իր եղբօրը (Վասակայ) պէս հզօր և հաւատարիմ եւս մեր Թագաւորին, և յետոյ ատոր որդւոյն՝ Սմբատայ: — Իսկ մեկայլ Սիսական Վասակն՝ փեսայն Թագաւորին՝ շատոնց մեռեր էր երիտասարդ հասակաւ, և այրիացեալ տիկինն Մարիամ՝ երեք կտրիճ որդւովքն՝ Սևադայ ծովուն եւ զեղբը կու շէնցրներ վանքերով և եկեղեցիներով, թէ հօրն ատեն և թէ իր եղբօրը՝ Սմբատայ՝ Թագաւորութեան ժամանակ:

Իսկ մեր Թագաւորին միւս դուստրն Սոփի՝ այրին Դեւընկան՝ իրեն պէս երկարակեաց չեղաւ. երկանն չարաչար և ցաւագին մահն անբժշկելի վէրք բացեր էր սրտին մէջ. քանի ամէն (889) « և » ինքն Սոփի անհամեմատն ՚ի կանայս՝ ըստ նմա- » նութեան ամուսնատէր տատրակի հրաժարեալ » յամենայն վայելչութեանց կենցաղականացս, » խանդակաթ լինելով, ոչ ժուժեալ սրտին նե- » ղութեան ... փոխի յաշխարհէս. խաղաղու- » թեամբ ննջեալ ընդ հայրս իւր. Թողեալ զման- » կտնան տղայս և անկատարս հասակաւ». որք մեծ ցաւով և ափով տարին մարմինը հանգուցին Դեւընկայ քով: Շահատէր իշխանք և զօրաւորք կու փափագէին խաբել որբացեալ իշխանորդիքը, « այլ ոչ իշխէին յերկիւղէ մեծին Աշոտոյ Թա- » գաւորին Հայոց [1]». որ իր կորեան Թոռները առաջուընէ աւելի հայրաբար ինամեց, ինչպէս իր քնիկ իշխանական աշխարհն և ուրիշ պաշտպանեալ աշխարհներն այլ շէնցընելով, դեռ տարի ու կէս, մինչև իր վախճանն. որ կենացն համեմատ եղաւ արժանաւոր և փառաւոր:

1 Թովմա Արծրունի:

10249926



## ԺԹ

Աշոտոյ հին նախահաւն և նախօրինակն Իշխան Նուեհեան, առաջին տէրը և ծնեզլի Թագաւորն Դաւիթ մարգարէ, մարդուս կենաց կարողութեամբ վայելելի տարիքի չափն լսաւ 70 տարի. ինքն այլ նոյն տարին չանցաւ. իր առաջին քրիստոնեայ արքայից Թագաւորն պայազատն՝ Աշոտ այլ գրեթէ նոյն չափանը լրացաւ և կնքեց, 71 տարին. 'ի վերջ 890 Թուականին Քրիստոսի, կամ Թեւրևս 'ի 1 փետրուարի 891ին. վասն զի այս օրուանս կու գտանիցի տարեգրի 20ն (յորում անոր յիշատակն դրուած է) 81թ Թուականին Հայոց, յորում մահն նշանակի: — Թէպէտ և կենաց վերջին երկու տարիներուն մանաւանդ դիպուած մը չհպատմուիր, բայց՝ ինչպէս նախ յիշեցինք՝ Աշոտ անդադար էր հարկաւոր գործոց մէջ, որոց հաղորդ և ընկեր էին ջոջ կարիճ, քաջահաս և բարեկիրթ որդիքն: Անդրանիկ Սմբատն, զոր Իշխանաց.Իշխան անուաներ էր, այն զօրօք Գուգարաց կողմերն էր, գարձեալ Վրահայոց մէջ ծագած շփոթութեան մը խաղաղցնելու, կամ ապստամբները նուաճելու համար, ինչպէս կ'ըսէ ժամանակակից Ցովհ. կաթողիկոս, և ուրիշ քան չաւելցներ. իսկ Վրաց պատմիչն յիշէ, որ նոյն տաճն Գուրգէն կուրապալատ՝ մեր Թագաւորին քեռայրն՝ իր Տայոց Իշխանութեամբ նիատը և Արտանուջ մեծ քաղաքը Թողլով, գնաց բնակելու Շաւշէթի և Արտահանու կողմերը, (որ Գուգարաց արևմտեան գաւառներն են, և) որոց վերայ առաջ ուրիշ Իշխան կար, և շատոնց Վրաց Իշխանութեան պաշտպանութեան տակ ընկած էին: Հետոյ այս քանս տհաճութեան և կռուի պատճառ եղաւ Աշոտոյ հետ՝ Վրաց գըլ-

*Խաւարին և Գաբրիէլի մէջ. ինչպէս պատերազմի Ելան Աւետարանչաց դաշտին մէջ. Գաբրիէլն յաղթեաց և վիրաւորեցաւ. և վերջը նոյն վիրաց ցաւով մեռաւ (891): Թուի թէ այս կամ ասկէ ազատձառած գիւղացածէն համար էր հոն գիրք մը Սմբատ. մինչդեռ հայրն գուցէ ուրիշ գործ մը շահելու համար ձմեռ առեն Ճամբայ ելեր էր իր քնաշխարհին մէջ, երբ վրան ծանր հիւանդութիւն եկաւ. և չկարենալով աւելի առաջ երթալ կամ յետ դառնալ, դադրեցաւ 'ի Քարապատ ըսուած ապառաժոտ բարձրահայեաց տրտուտի տեղ մը. որուն աշխարհագրական դիրքն անծանօթ է ինծի, և կարծեմ յԱխլրատաց գաւառէ:*

*Այն Քարապատ գահաւանդն ելաւ Աշոտ կէս նաց ապառիչ սահմանաքարն. և անոր բարձրութենէն դարձուց աչուըները յետս՝ իր ետեւանալոց կեանց ընթացիկ վրայ, և 'ի վեր՝ հանդերձեալ կենաց անապատութեան վրայ: Մարդոյ, և մեծիշխան մարդոյ արժանավայել էր կարած ընթացքն, կըրնար անվախ նայիլ և ըսել. « Զբնութեան կատարեցի ». հայրենեաց, եկեղեցւոյ և ընկերակցաց համար էին իր երկայն աշխատանքներն և մրցանքն. կըրնար այլ ևս ըսել, « Զբարւոք պատերազմն պատերազմեցայ ». բարեաւէր և քաջահաւատ հոգին կըրնար յուսալ արդարութեան երկնաւոր պսակին, անկէ՝ որ հոս տուաւ իրեն երկրաւոր պսակը. զոր հիմայ վար դնելով ընդ մէջ հանդերձեալ կենաց արշալոյսին և մահուան տուժերուն, հաւատարիմ քրիստոնէի զգաստութեամբ պատրաստեց զհոգին այն մեծ փոփոխութեան: Մինչդեռ որդիքն և սիրելիքն իրեն առողջութեան և հանգստեան խնամք կուտ մատակարարէին, ինքն ամենէն քաջահոգ՝ բերել տուաւ զքահանայապետեան Հայոց, և միջնորդ կեցոյց վերջին անգամ ընդ Աստուած և ընդ ինքն-*

վեմ գլուխն՝ անթափ խոնարհեցաւ խորին խոստովանութեամբ մարդկային բնութեան և մահացու սկզբութեանը, և ընդունեցաւ Աստուծոյ օծելոյն ձեռքէն և բերանէն զկնիք և զաւետիս թողութեան և հաշտութեան. ընդունեցաւ մարդացեալ Անմահին երկրպագելի և փրկարար մարմին և արիւնը. գոհացաւ զԱստուծոյ՝ որ առաւել քան զթագն և զծիրանին՝ արժանացուց զինքն այս սուրբ և և աննման խորհրդոց, զոր ոչ ձանչցան և ոչ ճանաչեն կարծեցեալ գիտունք աշխարհի և փեսրապլուխ փիլիսոփոսք:

Որդւոց և մերձաւորաց ժառանգութենէն աւելի իր պաշտած հեզ Քրիստոսին ժառանգակից-ներըը հոգաց, — աղքատներըը և կարօտեաներըը. ոչ միայն դեռ շունչն վրան եղած աստեն բաժնել որևաւ լեցուն գանձեր ոսկւոյ և արծաթոյ, այլ և յանձնեց կաթուղիկոսին շատ սատակ և ըռզակ, ոչխարաց և նախրաց բազմութիւն, ձի և գրաստ, որ առաստապէս բաշխէ եկեղեցեաց և վանորէից և որուս որ արժան համարի, և ամեն տեղ իր հոգւոյն համար աղօթք և պատարագ ընել տայ: — Հոգւոյն պէտքն լաւ հոգալով, զաւակաց և պաշտօնեացն այլ հարկաւոր իրաւ և պատուերներն տալով, աւելի սքանչելի օրինակաւն քան վեմական խօսքովն, իբրև ամեն բան Թուով և կարգով շարելով և շարժելով, ինչպէս որ բոլոր կենաց գործերն այլ կարգաւորներ էր, իբրև յետոյն կանոնաւոր և սահմանեալ գործ մը՝ կատարեց անշփոթ զգաստութեամբ և վայելչութեամբ զմեռնիլն այլ... զոր գրեթէ ամենայն պատմիչք իւր զգացմամբ կ'իմացընեն. « Եւ այսպէս ապա » զպիտաւորեալ պէտս արտաքնոցս (տասնուա- » ծըս՝) 'ի մանկտութիւն նորոգման նեղբին մար- » գոյն անտեսաբար կենացուցանէր: Յետ որոյ

» բարեաց՝ հանգեաւ ՚ի Քրիստոս[1] » : — « Յետ
» զամենայն ինչ ըստ Աստուածոյ հաստատեալ՝
» փոխի ՚ի կարգ տուրբ Թագաւորաց[2] » : — « Վի
» եր այր քաջըր և հեզ և անարատ[3] » : — Սկսա-
» րեալ վախճանեցաւ աստուածպաշտութեամբ
» և ի հաւատով... և փոխեցաւ յանունց Թագա-
» ւորութենեն երկնից.[4] » : — Փոխի յաշխարհէս
» ՚ի բարիսք ծերութեան... քաջավայելչապոյնս
» զթագաւորութեանն կատարելագործեալ ժա-
» մանակն[5] » :

Մեծին Աշոտոյ (որ հիմայ ոմանց առիւծ մը կ՚երևէր ՚ի քուն ծանրութեան, ոմանց սիրելի և ալևոր հայր մը ընտանեաց մէջ նահապետօրէն վախճանած, ոմանց դեռ Թագաւոր ՚ի մտածման հարկաւոր խորհրդոց, և ամենայն խոհական ձանչցողաց՝ արդարակորով և մաքրակենցաղ մարդ մը վախճանեալ արքութեամբ) մեծահան-դէս եղաւ և յուղարկաւորութիւնն. ինչպէս մեր հին Թագաւորաց մէջ յիշուի միայն Տրդատայ և Ի Արտաշէսի: Երախտապէտ ազգին և հպատակք՝ ուզեցին անոր արժանեաց և պատուոյն համեմատել նաև սգոյ հանդէսն և կազմուածքն. « ոսկէ-
» հուռ հանդերձիւք և ոսկեզօծ վառիւք զգա-
» գաղան զարդարեալ». զոր Քարսպատէն վերու-
ցին տարին ՚ի Բագարան, որ Թագաւորանիստ քաղաք էր եղած, միանգամայն և յետին հան-գըստարան ոմանց ՚ի Բագրատունի Թագաւորաց, և նախ մեր Աշոտոյ, որ հաւանօրէն առաջուց հոն պատրաստեր էր իրեն հանգստեան մատուռն և քնարանը: Բոլոր ձամբան այս երկու յիշեալ տե-ղեաց մէջ (որուն երկայնութիւնը չեմք գիտեր),

1 Յհ. կաթ:
2 Սամ. Անեցի:
3 Ասողիկ:
4 Յայտնութիւնք:
5 Թոմ. Արծր:

հանդիսաբար յուլարկաւորութեն եղաւ. Գէորգ կաթուղիկոս՝ եկեղեցական դասակցութեամբ և պաշտօնէիւք և հոգևոր երգօք՝ առջևէն երթալով. « և խոստք զօրաց զինուք և զարդուք, ընտրա- » նօք և նշանակօք շուրջ պաշտպանեալք ». իսկ պատգաց եաևէն և անմիջապէս մօտէն՝ կ'երթային երկու ազգականք՝ երեք Թագաւորազունքն, Շապուհ, Սահակ և Դաւիթ, (վասն զի երէցն Սմբատ չկրցաւ հասնիլ 'ի Գուգարաց կողմէն), և Թագաւորին մերձաւոր ազգականքն և բարեկամք և պաշտօնեայք. ասոնցմէ վերջը, ըստ հին սովորութեան Հայոց, ազատը և ազատագունը և ղեկերդակք, Թալգմանք և վկայք քաղաքական և բնական պատ ցաւոց ընտանեացն, հայրենեացն և բոլոր պաշտպանեալ ազգաց. և այլ եաևանց « բազմութիւն » ռամկացն և անուանեցից »: Յետին հանդէսներն այլ կատարելով 'ի Բագարան, « ապա կազմեալ » տապան Թագաւորական՝ եդին զնա 'ի քնարա- » նի հարց իւրոց »: Իսկ յիշատակը՝ ինչպէս 'ի սկզբան պատմութեանն ըսի, առաւածընաիրը արքոց հետ խառնեցին յեկեղեցիս Հայաստանեայց, 'ի պատիւ նորա և 'ի փառս ամենախնամին Աստուծոյ:

## Ի.

Աշոտոյ հանգստարանին և յիշատակին մնաք բարով ջրասած, Թեպետ յետին բարև մ՝ այլ տալ վայելէ անոնց՝ որ իր պատմութեան և գործոց մէջ ստէպ կամ մեծապէս հանդիսացան. արդէն կենաց օրէնքն՝ անոնց մէկ մասը յառաջ քան զԱշոտ վերացեր ծածկեր էր աչխարհքիս աեսանելոյն. — Վասիլ կայսրն հինգ տարի առաջ մեռեր էր, և որդին Լևոն իմաստասէրը Թագակցեր Աշո-

տոյ. – բազմափորձանք պատերխարքն Փոտ գրե-
Թէ Աշոտոյ հետ կատարեց կեանքը, (891): Ա-
շոտէն ընտրեալ և զԱշոտ Թագաւոր օրհնոլ կա-
Թուղիկոսն Գէորգ, անոր անդրանիկ Սմբատն
այլ օրհնեց, և անոր հետ տատապեցաւ Աբբին
բռնաւոր կուսակալին ատպատակութեանց պատճն,
ինչուան կապուեցաւ և բանտեցաւ և ազատեցաւ
միջնորդութեամբ Համամոյ՝ Ամուանից իշխանա-
պետին, որ և իբրև զատ ազգի գլուխ՝ յետ Բագ-
րատունեաց՝ առաջին Թագաւոր եղաւ. Գէորգ
եօթն տարի յետ Աշոտոյ վախճանեցաւ (897):
Տեղը դրեթէ հարկ էր որ դրուի աշխարհածանօթ
և մեծահռչակ Ճգնաւորն Սևանոյ և ծանօթն Ա-
շոտոյ՝ Մաշտոց, որ և իր անուանակից և գործակից
(Ս. Մեսրովպայ-Մաշտոցի) նման՝ միայն վեց
եօթն ամիս Հայոց հայրապետական աթոռը նըս-
տելով մեռաւ նոյն տարին (897). և յաջորդ ու-
նեցաւ իր ազգական և աշակերտը՝ Յովհաննէս Պաք-
դէնը, որ մեր այս պատմութեան այլ գլխաւոր
պղբերոց մէկն է:

Իսկ յիշխանաց և՝ ի մերձաւորաց Աշոտոյ՝ իր
եղբայրն Սպարապետն Աբբաս նախ քիչ մը դժուա-
րացաւ եղբօրորդւոյն հնազանդելու, և հակառա-
կեցաւ Թէ՛ անոր և Թէ Վրաց կուրապաղատին՝
Աարոնեսեհի. յետոյ քիչ մ՝ այլ իր կալուած-
նեն ընդարձակելով Վանանդայ և Գուգարաց
կողմերը՝ հանդարտեցաւ. և ինչպէս կ՚երևի՝ քիչ
տարիէ վախճանեցաւ: Իսկ Աարոնեսեհ Վրաց
համար եղաւ ինչ որ Հայոց՝ իր քաջերարն մեծն
Աշոտ, ինքն այլ Թագաւորական պատուոյ հասաւ,
և երկայն տաեն խնամելով իր աշխարհը չէնցուց և
զօրացուց:

Աշոտոյ Թոռներէն, Սևադան իշխանքն՝ ինչպէս
իրեն՝ նոյնպէս և Սմբատայ միշտ հաւատարիմ և
հլու եղան, և տարը պէս շատ նեղութիւն քաշե-

ցին Աֆքինի և մանաւանդ անոր եղբօր Եուսուֆի բռնաբար ապստամբութեանց առեն. իրենց քա-
րեպաշտ և սիրելի մայրը, Մարիամ տիկինը՝ ի-
րենց աշխարհին խնամակալ և պաշտելի անձի պէս
հետերնին տանելով տեղէ տեղ բերդէ բերդ, և
այն տարագիր մեղապարտութեանց մէջ մեռնելէն
ետև այլ, նոյնպէս մարմինը հետերնին տարին,
ինչուան որ բռնաւորն կորաւ, երկիրն խաղաղե-
ցաւ, և դարձան, ու Մարեմայ մարմինը հանգ-
չեցուցին անոր ձեռակերտ եկեղեցւոյ մը մէջ: —
Արծրունի Թոռունքն Աշոտոյ՝ իրենց հօր (Դե-
րենիկան) պէս վառվռուն և անհանգարտ էրան.
բայց անդրանիկն Աշոտ աւելի հաւատարիմ եղաւ
Սմբատայ, և երիտասարդ վախճանեցաւ (29 տա-
րուան), յաջորդն՝ իր եղբայրն Գագիկ՝ Արծրու-
նեաց աշխարհաշէնն և փառաւորիչ դիւցազն կու
ձանաչուի՝ բայց իր երկիրը ապահովելու համար՝
Ծուսփայ (Եուսուֆ) հետ առանձին դաշինք դնե-
լով և անկէ թագ առնելով, իր քեռիէն (Սմբա-
տայ) զատուեցաւ, և ատով մեղադրելի է: Միայն
հոս յիշենք որ Սմբատայ պատերազմին առեն ընդ
Ահմատայ որդւոյ Յիսէի՝ վատութիւն և մանուա-
թիւն ընող ու թագաւորին յաղթուելու պատ-
ճառ եղող Գագիկն՝ սա չէ, այլ Ապուսմրուանն,
որ շատ անգամ յիշուեցաւ պատմութեանս մէջ.
և որ այս յիշեալ դիպուածէն քիչ վերջը՝ սպա-
նուեցաւ, որովհետև Արծրունեաց իշխանութիւ-
նը կ'ուզէր ձեռք առնուլ:

Աշոտոյ որդիքներէն, Սահակ՝ իրմէ վերջը չի
յիշուիր. Շապուհ՝ Հայոց սպարապետ եղաւ և
Տերանց տէր. շատ հինութիւններ ըրաւ իր սիրելի
քրոջ՝ Մարիամայ՝ երկիրներուն սահմանները.
բայց ինքն այլ միւս եղբայրն այլ Դաւիթ՝ գե-
տրիքներին հատած մեռան և շատ սուգ պատճա-
ռեցին Սմբատայ:

Սա 24 տարի Թագաւորեց՝ հօրը չատ կատարե-
լութիւններն ունենալով և անոր արժանի պայա-
զատ ըլլալով. բայց անոր նահապետական հեզի-
նակութիւնը չէր կրնար ունենալ իր պաշտպա-
նութեան տակ եղած իշխանաց վրայ, որք Աշո-
տոյ որդիք սեպուէին, իսկ իրեն՝ եղբարք հաւա-
սարք. և քիչ մ' իրենք իրենցմէ, քիչ մ'այլ 'ի
Ցուսափայ և յօտարաց գրգռեալ՝ սկսան հեռանալ
միութենէն, իւրաքանչիւր իր երկիրը կամ գլուխը
հոգալով: Ասով Սմբատայ ամեն ջանքն չյաջողե-
ցան, և վերջապէս յետ շատ առաքինի գործոց և
աշխատանաց, իր խորամանկ երդմնազանց ան-
գութ թշնամւոյն՝ Ցուսափայ՝ անճնաւորեր եղաւ.
պերազոյն առաքինութեամբ, իր հպատակները
ազատելու համար, և անկէց այլ պերազոյն առա-
քինութեամբ մը մարտիրոսական քառնելի տան-
ջանաց համբերութեամբ՝ արեամբ նահատակուե-
ցաւ 'ի վերայ հայրենեացն և տուրբ հաւատոցն
(914). և իր պատուն նման Թոռոփանող, և այլ
փառաւոր անուամբ և իրօք Նահապետ կոչուեցաւ,
և նշանագրեցաւ 'ի Ցայսմաւուրս և 'ի Հայագիրն՝
յոլթ մայիսի:

Աբասիանց հայր և որդի Մեծն Աբբա, այս-
պէս տպրեցաւ, գերազանց քան զանունք և քան
զչատս յիշխանաց և Թագաւորաց՝ մեծագործու-
թեամբ, քաջութեամբ, բարեպաշտութեամբ,
խոհեմութեամբ, միանգամայն և յաջողութեամբ
և փառօք և սիրով ժամանակակցացն և ապագա-
յից: Աբասպէս գիտցաւ յարմարել խլճին, պատ-
ուոյ, ժամանակին և հայրենեաց և ընկերաց օգ-
տին: Աբասպէս ազգայարոյց և ազգակեցոյց անձն
եղաւ, արժանի երախտապիտութեան, զարմա-
նաց և փառաց՝ աւելի քան մինչև հիմայ իրեն
ընծայուածն. արժանի Հայոց նախաշարւ անուանց
դասակցութեան, արժանի դիւցամեծար դրուա-
տեաց և կրկնափայլ անմահութեան:

Ո՛րչափ եղջանիկ և նախանձելի ալիսի գրեմ զքեզ, Հայկակ, եթէ օր մը կամ գիշեր մը, պայծառ արեւ մը կամ տխրահառաչ լուսին մը լուսանան քեզի՛ ի Բագարան, Ախուրեան գետոյն պլտոր ալուսկից և անարձագանգ կարկաջանաց քով. այն համամփիւռ ջուրդ ու բուրդ քարուցքը աւերակաց վրայ, որունք միչօրէ առեն անգամ սեւ ու սուգ կ'երևին, մեծ հնոցէ մը խանգրած մոտած աղիւաններու նման. որոց դիմաց քանի մը ժամ հեռու Անի՝ Թագաւորաց քաղաքն՝ դեռ պարիսպներով և եկեղեցեօքն կխսականգուն կայ.— Բագարան՝ երբեմն չաստուածոց բնակարան, յե՜ տոյ Բագրատունեաց արքայարան և քնարան՝ գեռնի հաւասար է. քարերն աւազ ու մոխիր դարձած, մանրած Թոռմած. միայն բերդի նշանակ մը կ'երևի քիչ մը բարձր, ծեր ու մէջքը կոր ցացեալ պահապանի նման մաշած աշտարակով մը. չորս հինգ եկեղեցեաց պատերու մասունք կան քովերը, մէկ երկու արձանագիր, որոց հնագոյնն իսկ մեր Աշոտի մահուանէն դար մը վերջը փորագրած է. եկեղեցեաց մէկին մէջ գերեզման մը կայ, զոր Ս. Գէորգի նշխարաց հանգստարան կ'ըսեն մօտաբնակ ժողովուրդն, և ուխտի կ'երթան ու խնդրուածքնին կ'ընդունին. բայց մեկայց քովայլ կան հնացեալ տեղ գերեզմաններ, միակ կանգուն չէնք Բագարանի, ոյք և ծածկեն զմեծագոյնն աւերակաց, զանցեալ ազգս մեր նախահարց: Ան սնացեալ չորսմց մէկը կ'ուզեմ որ հանքարեւս, վրան գանելով և չորս դի քարէ քար Թուփէ Թուփ ալիքէ ալիք հնչեցընելով զանունն ՄԵԾՆ ԱՇՈՏ ԹԱԳԱՒՈՐ:

10249926

# ԺԲ

## ԱԲԳԱՐ ԴՊԻՐ

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Եթէ մատծութիւնը բերնով բացատրելն, այս-
ինքն խօսիլն, աստուածաստուր և բնաձիր պարգև
մը ջրլլար մարդուս, անշուշտ զայն հնարող և ա-
ւանդող մարդն՝ գերագոյն մարդ պէտք էր ա-
պուիլ, և յաւիտեան ազգաց և ժամանակաց պաշ-
տելի և պատուելի ըլլալ: Անկէ եաև պատուելի
և երախտաբելի համարելու է գիտցքը մնայուն ըն-
լը՝ նիւթական կերպով մը, որ է գէրն. և երա-
ւանք այլ մեծ և աստուածական պաշտօն ընծա-
յած են նախնիք իւրաքանչիւր ազգաց՝ իրենց մէջ
գիր և դպրութիւն հնարողաց. որպիսի էր կամ
կու կարծուի մեր հին նախնեաց մէջ՝ Տէր՝ հայրն
և աստուած դպրութեանց, որ Յունաց և Եգիպ-
տացւոց Եռամեծ Հերմեսի հաւատարի և համե-
մատի. իսկ քրիստոնէութեան առեն մեր նոր
գրոց հեղինակին՝ Ս. Մեսրովպ ամենուն յայտնի
է թէ ինչպէս երախտագիտութեամբ և փառօք
ձանչցուած և պաշտուած է յազգէս՝ յեկեղեցիս
և յուսումնարանս: — Եւ եթէ յետ այս մեծար-
ելոն գրագիտ մարդկան՝ պատուոյ և երախտեաց
կարգը՝ մեկու մը տալու ենք, անշուշտ այն մեկն
է՝ գրութիւնը շուտ և շատ ծաւալել հնարողն,*

որ է Տպագէն: Ահա այլ յայտ է, թէ Եւրոպացիք՝ յառաջադէմքն՝ ի գրականութեան, ինչ պատիւ և շնորհակալութիւն կ'ընծայեն Կուդդէմ պէրկի, որ իրենց մէջ համարուի հեղինակ տպագրութեան, Թէպէտ և Չինք յամենայնի հնագանդք (և շատ բանի մէջ իրաւամբ), այս գիւտս այլ իրենց սեփականեն. բայց ընդհանուր աշխարհս ջրաս դալը է՝ որ այս մեծ պարգեւս կուվայելէ, Սդրազպուրկի գերմանացւոյ մը երկայնամիտ հանճարովը:

Մեր Հայոց Կուդդէմպէրկին ով եղած է, այսինքն առաջին անգամ հայերէն գրեր ձուլող ձեւող և գիրք տպող, գեռ ոչ բոլորովին բացայայտ լինդիր մ' է. զոր արդէն լսած ես[1], Հայկակ, և գիտես որամբողջ հայերէն գիրք տպագրելէն առաջ՝ քանի մը եւրոպէացի բանասէրաց գրոց մէջ ծղ դարուն կիսէն առաջ ալ երևցած են հայերէն այբուբենք կամ քանի մ' երես բան, որ միայն նախընծայ անհարթ փորձ մը կրնան սեպուիլ տպագրութեան. իսկ ամբողջ տպագրեալ հայերէն գիրք մը, Թուի Թէ Կուդդէմպէրկի գիւտէն հազիւ դար մը ետև եղած է, Թէպէտ և գեռ անծանօթ է տպագրութեան տարին և տեղն և հրատարակողը:

Տեսած եմ գիրք մը, որուն համար Թէ և չեմ կրնար ըսել բացարձակ առաջին տպագրութիւն, այլ ծանօթ տպագրութենց նկատմամբ կրնայ ըսուիլ առաջին, կամ ամենէն հին ծանուցեալ տպագիրք, երեք դարէ աւելի հին. որոյ տպագրութեան տեղւոյն և անձին չյիշատակուիլն (գանէ հինայ գտուած օրինակաց մէջ) գուցէ խորհրդով և զգուշութեամբ եղած ըլլայ. որով հետև առաջնութեան և հնութեան, նաև հրատարակման անարժան գիրք մ'է, և ձախ ձեռքի

1 Բազմավէպ 1850 ամին, երես 230:

մը չօրհնած ընծայ կրնայ սեպուիլ. գիշերուան ձնումնդ քան տուընջեան. և եթէ ներելի է մեր հեթանոս հարց կամ Պարսից լեզուովը խօսիլ, խաւարասէր Ահրմէն մ'է որ կ'աճապարէ'ի գուրս գալ նախ քան զանուշահոտն և լուսաւոր Որմիզդ, որպէս զի յափշտակէ մըտաց վրայ տիրապետուելիքը. սակայն լոյսն և բարին թէ և քիչ մը յետոյ գան՝ կու յաղթէ չարին և խաւարին[1]:

Արդ մեզի ծանօթ և հաստատակօրէն հաչակեալ առաջին հայերէն լուսաշնորհ և լուսածնունդ տպագրութիւնն՝ եղած է յամի 1565, ամբողջ երեքհարիւրամեան շրջան մ'առաջ, որով և չորրորդ գարագլուխն է այս տարիս[2], արժանի յիշատակաց և ծնելի (գոնէ) վասն տպագրաց ազգիս, քան սովորութեան եւրոպեայց, որք չեն զանց առնուր իրենց պատմական, կրօնական և ուսումնական երևելի յիշատակաց դարադարձը ծնանիմելը:

Եղեն ասկէ 300 տարի առաջ, մանեանք մօք ԺԶ դարուն կէսը, քննենք զերեսս աշխարհի և զնորս հայրենեաց մերոց: — Ի՞նչ նորութիւն և

1 Այս գիրքս է Ահրմէն՝ կիսէն աւելին, միւս մասն Բժշկարան. թէ զարդագլուխ թէ հաստարակ գրերուն ձևն, թէ ձեռքով գրուած քանի մը բառերն՝ ցուցընեն հնութիւնը. զոր և աւելի հաստատէ անվարժ ձեռքի գրուած մ'ալ իմ օրինակիս մէջ. «'ի ՌԻՎԼԻՆ ՌԱ», որ է 1552. 13 տարի յառաջ քան զԱգգարեան տպագրութիւնն: Գիրքն 24 թերթ է ութածալ, 16 հարիւրորդաչափ երկայնութեամբ, և միայն թերթից թիւն ունի հայերէն այբբենով և ոչ իւրաքանչիւր երեսաց. վերջին իջին վրայ տպագրած է ըստ հին եւրոպական տպագրոց Ա, Բ, և այլն, մինչև ԻԴ, և կարմրագիծ լատինատառ նշանակ մը որ կ'երևի տպագրատանը, և կըրնայ կարծուիլ որ գիրքն տպուած ըլլայ ինչուան ԺԵ գարուն վերջերը:

2 1865:

սկիզբն նորութեանց Եվրոպիա. ինչ յուզմունք, այլայլութիւնք, յեղափոխութիւնք, վէճք, քննութիւնք, ժոդովք, կռիւք, միաբանութիւնք և հերձուածք՝ վան հաւատոց, նորաշանդ վարդապետութեանց, և բողոքարկու պահանջմանց: Պատմագէտ, փիլիսոփայ և աստուածագէտ ակռք է ըլլալ չափով մը, այս մեծ՝ և Եվրոպայի համար հանրական կերպարանափոխութիւնը և ծովածաւալ ծածանումը նկատելու համար. — տեսարան մը՝ որ Թերևս նմանը չէ ունեցած կրթուած և զարգացած ազգաց մէջ. որոյ վերջին պատկերը կ'ըլլայ Եկեղեցւոյ տիեզերական վերջին սինհոդոսը (Տրիդենտեան):

Պահ մը գիտելով զայս, դառնանք յարևելս, 'ի մայրն արևելեայ աշխարհաց, 'ի բուն մեր հայրենիս՝ 'ի Հայաստան...: Ի՞նչ խորութիւն խաւարի և լռութեան. ինչպէս անհնար եղեր է այն ընդարձակ և բազմաբնակ աշխարհն, որ խակզբան բոլոր երկրիս վրայ առաջին նշանն էր, և երկար և կերպակերպ յեղափոխութեամբք գրեթէ բոլոր հին և միջին ժամանակաց մէջ պատմաբնութեան մատդրութիւնը կրնար գրաւել, նաև իրեն պատերազմաց և արեանց առատութեամբ բացուած աաեանն. երբ դեռ դիականց և աճերակաց մէջ ալ գտուէին և փայլէին քիչ կամ շատ կենդանի նըշխարք Հայութեան. շունչ մը հայ հոգւոյ, փայլ մը հայ հանճարոյ, գործ մը հայ ձեռին:... Իակ հիմայ այս (ԺԶ) դարուս մէջ՝ յետ արիւնակոխ աճերասփիւռ արշաւանաց Լինկթիմուրի, և պատերազմաց Շահռուհի, Ագ և Գարա-Գոյունլուս առմից, յետ սիրապետութեան Շահ Իսմայէլի 'ի Պարսս, և Օսմանեանց զօրանալով յարևմտից յարևելս աշխարհակալելու, — հիմայ՝ ձեռ և քիչ մը հանդարտ էր Հայոց երկիրն 'ի վերովմանց կռուոյ և հակառակութեան, սակայն ազգին ինք-

նակացուԹիւնն պրեԹէ լսապատ ընկած կամ ձըն-
շուած, դանդաղամած անշարժուԹեան մէջ էր:

Թերևս ՀայուԹեան հիպագոյն գարն է ԺԵ-ԺԶ դարուց միջոցն. ոչ եկեղեցական յիշատակելի գէպք մը (յետ վոխադրուԹեան կամ բաժանման կաԹողիկոսական աԹոռոյ՝ ի Սիս և Էջմիածին), ոչ ազգային քաղաքական երևոյԹ մը. և ոչ այլ նշոյլք բանասիրուԹեան կամ գրականուԹեան, որ Թերևս քան զայլ նշանս՝ երկարատև և յայտնագոյն ցոյց է կենդանուԹեան մեր ազգին: Այո, մատենագրուԹեան մատամբ այլ, ոլչափ որ ծանօԹ է ընծել, մեր ազգային ժամանակին է այս. յետ գեղեցիկ փորձոյ և ջանից մեր գրասիրաց ԺԴ դարուն, (որ Թերևս հարատապոյն է քան զամենայն գարս գրականուԹեան մերոյ, եԹէ ոչ և ընարեալագոյն որպէս իրմէ առջինը՝ ԺԲ), դեռ ԺԴ դարուն մէջ այլ գտանէին հեռևողք նոցա, որոց գրուածքն ցուցընեն հայկական խակուԹիւն մը. և դեռ ԺԵ գարն ալ մինչև՝ ի կէտն ուն քանի մը Գրիգոր և Առաքել, Թումայս մը, Մկըրտիչ Նաղաշ մը, ԱմիրատվանԹ մը, որք քիչ շատ ջանացած են առաջին գարուց հայ քերդողուԹե, պատմուԹեան և բնագիտուԹեան մուզայից պարտէզները մշակել կիսահարԹ գլխով մը: Իսկ առնոնցմէ եաև յիշեալ գարուս մէջ՝ և ոչ անոնց հասատրոյ մը կ'երևի, և ոչ հայերէն գրական լեզուի յառաջդիմուԹիւն, և ոչ անոր մշակուԹիւն գրելով ու կարդալով. որոց գիւրուԹեան հնարքներն այլ նուազեր էին յետ աւերմանց և աւարմանց վերոյիշեալ բռնաւորաց:

ԳրեԹէ նորանշան գործ մը կամ անձ մը ակնոյ էր այս ինամը գտնելու և մեծագոյն ինամով պահելու զՀայս. և եԹէ գտուէր այսպիսի մէկն, կարծեմ անտարակոյս և անդանդաղ՝ մեզի այլ ակնոյ էր ճանչնալ զինա մեծ և յաւերժայիշա-

10249926



տակ բարերար մ'ազգային. մէկ մը յայն ընտրեալ անձանց, որոց անուններն արժան է որ Հայկական երախտեաց տաճարին մէջ առաջին տողին վրայ գրուին:

Ելնէ, երևցնէ արդեօք այսպիսի անձ մը. պարգևեցնէ Հայաստանի այսպիսի այցելու մը. այնպիսի ճարտարապետ և հանճարաշնար մը, 'ի միջոց ժամանակին՝ որ յետ վարժապետացն Սիւնեաց վանորէից և նախ քան զՄխիթար Սեբաստացին: — Այնքան թանձր է ժամանակին մըթութիւնն կամ լուսթիւնն, որ այս քանս այլ ընդհատ և ընդ աղօտ կ'երևի. սակայն հետզհետէ այսչափս այլ բաւական է ճանչնալու որ յիրաւի եղած է Հայոց ցանկալի այցելութիւն մը, Տոքթիւնեան, և երևցեր է ատոր համար եռանդուն, հնարագէտ, անձնանուէր բարերար մը, ԱՐԳԱՐ ԴՊԻՐ:

Այս գիւտին կամ բարեացնախաշարժ սկզբնաւորութիւնն ինչպէս եղած ըլլալն այլ մեզի դեռ յայտնի չէ. բայց խորհրդաւոր և ոչ աննշան կերպ մը կ'երևի: Ի կէս ԺԶ դարու (յամի 1549) Ստեփաննոս Սալմաստցի կաթուղիկոս՝ կոչ գայ 'ի Հռոմ՝, (մին յառաջին կաթուղիկոսաց Էջմիածնի՝ որ յետ Ս. Լուսաւորչին գայ այս կաթուղիկէ եկեղեցւոյ աթոռը). մեծ մտերմութիւն կոչ ցուցնէ և կոչ տեսնէ հոն, և զնոյն կոչ հաւատաէ իր ընտրած աթոռակցին՝ Մկրտչէլի. իբրև ժառանգութիւն մը թողլով ատոր՝ յայրարդութեան հետ՝ զնոյն մտերմութիւն. զոր և սա կ'ուզէ արծարծել յետ ատան և աւելի տարիներու, երբ ժամանակին դիպուածներէն ստիպուած, վարշապատու աթոռը թողեր, եկեր նստեր էր 'ի Փոքր Ասիա, 'ի հռչակաւոր Սեբաստիա. հոն,

1 Պայնալտի, ԺԴ, 374:

ուր իրմէ 300 տարի առաջ մեծանուն Պեւտրա Գեւտպալմն նստաւ և հանգեաւ:

Քաղցր է ինձ այս քաղաքիս յիշատակն. որ հին աւեն ի Հայոց մայրաքաղաք ըլլալէն, և երբեմն (՝ի ժա դարու) Ռատանի և Վանայ տէր Սրբոյն Թադեւոսէ աթոռ ըլլալէն աւելի մեծ, (թէ և ոչ ըստ արժանւոյն հռչակեալ՝) յիշատակներ և երախտիք ունի առ ազգս, կամ մասնաւոր նախախնամութեան ձիրքեր, զոր յարմար է հարևանցի յիշել այս առթով: Քրիստոնէութեան առաջին հալածանաց դարուց մէջ շատ տուրք նահատակներ ընծայեց Սեբաստիա, որոց անշուշտ մէկ մասն այլ Հայազգի էին. շատ օտար տեղացի առաքինիք այլ՝ հոս (իբրև յիշխանական քաղաք Հռոմայեցւոց) դատուեցան և նահատակեցան: — Ո՞վ կրնայ Սեբաստիոյ առնան հետ չըյիշել Քառասուն Մանկունքն, «որք »՝ի Սեբաստիոյ ծովուն զծովածուփ կենցաղոյս »լուծին զվտանգ [1] »: Երբ հալածանքն՝ դեռ ընդհանուր եկեղեցւոյ համար չդադրած՝ ՝ի Հայաստան, Գր. Լուսաւորչի մը սիեզերական նահատակութեամբ և Տրդատայ մը համաշխարհական հաւատովն ՝ի Քրիստոս, մեր առաջին հայրապետն ՝ի Կեսարիոյ տուրք օծութեամբ դառնալուն առեն, «մնայր ժամանակս ինչ ՝ի »Սեբաստիա, հաւաքել զդասս կրօնաւորացն [2] »: Կրնամք ըսել թէ նորընծայ քրիստոնէահաւատ Հայութեան առաջին դաստիարակաց մեծ մասն՝ ՝ի Սեբաստիոյ ընծայեցան. և չեմ անիրաւիր ըսելու այլ թէ թերևս անկէ 1500 տարի ետև, յետին քաջանշան քարերար և նորագիչ մը հոգևոր և մտաւոր հանճարոյ ազգիս՝ ՝ի նոյն ՝ի Սեբաստիոյ ծագեցաւ, Մխիթար Աբբայն: Ահա Սեբաս-

1 Շարականն:

2 Ջեռնոմ:

սակայ էրկու մեծաձիր լուսաւորիչ և լուսանորոգ հրեշտակութեանց մէջ, իրաւացի կու համարիմ գասել զՀեղինեան հայ տպագրութեան՝ Աբգար. որ թէ և հայրենեօք մերձաւոր մեծ քաղքէ մ՚էր, յԵդոկիոյ (Թօքատ), այլ ասկէ (՚ի Սեբաստիոյ) եկաւ՚ի հրեշտակութիւն, և իր յիշատակաց դրոծը կատարեց: Եթէ Եդոկիացիք ուզեն վիճիլ այս պարծանաց համար՝ ես հաճութեամբ հաւանիմ այդպիսի վիճի մը:

Աբգար դպիր իր քաղաքին մէջ առաջուց այլ վկայուած էր խելօքն և ճարտարութեամբ, և անկէ այլ առաջ ազնուական ծննդեամբն. թէ և վաղուց վերցուած էր Հայոց պայազատական ցեղակարգութիւնն, բայց դեռ հիմակուընէ աւելի գաուէին և ճանչուէին հին պայազատաց շառաւեղքն: Աբգարու ծնունդն մեզմէ երեք և կէս դարու չափ կը յառաջէ. իսկ անկէ վեր մինչև՚ի վերջին Թագաժառանգ Կիւրիկեան իշխանազանց՝ հազիւ դար և կէս է. անշուշտ այն առեն, այսինքն՚ի կէս ԺԶ դարու դեռ յայտնապէս առնուէին մեր յեաին Թագաւորական հարստութեան ցրուեալ և ցանեալ շառաւեղքն, ոչ միայն՚ի Կիւրիկիա, այլ Թերևա այլ աւելի յօտար հայաբնակ քաղաքներ. առանցմէ մէկն էր մեր Աբգարն այլ. Թէպէտ և ՚ի ձըղէ առաջ եկած ըլլալն չէ յայտ: Իր ազնիւ և առհմիկ մարդ ըլլալն՝ արդէն կու վըկայէ Միքայէլ կաթողիկոս իր Թղթոնէն. բայց անկէ աւելին կու գանեմք իր որդւոյն վրայ եղած յիշատակօքն, որ և լրեն ուղեկից և գործակից էր. և անուանքն իսկ յայտնէր մեծատոհմութիւնը, Սուլթանշահ կոչուելով. զոր և Լատինացիք Թուի Թէ՚ի նոյն նշանակ կոչեցին Մարգանդոնիոյ (Մարկոս-Անտոնիոս): Գոնէ առտմայրն, Աբգարու կինն, պէտք էր Թագաւորական շառաւիղէ ըլլալ. վասն զի Մալաքիա Դպիր ժամանակագիր

կ'լսէ ատր Տամար, « իբր (որդւոյն) Թագաւորիմ
» Անտոնինոս Սուլթանչա ատրկաւագին» : Եւ յա-
մին 1583 Հռոմայ մէջ գտուսղ Հայկազունք՝ նոյն
Սուլթանչային առաջնորդութեամբ, որ իրենց իշ-
խան կամ վերակացու անուանեալ էր՛ի Պապէն,
և Յովհ. Տէրընցի տպագրող երկուսն ձեռնարկու-
թեամբ՝ առ Դաւիթ պատրիարք Երուսաղէմի
գրած Թղթերնուն մէջ՝ կ'անուանեն զնա՝ « Մեր
» Հայոց իշխանն արքաւորդին՛ի Հոյոյ (Հայկ) ազ-
» րան Սուլտանչան » .. և դարձեալ, « ալքատզնին
» պարոն Սուլտանչ(ահ)ին » : — Ինչ ատրն վերջը
(1600) Տէր Բարթուղիմէոս վարդապետ մը որ
հոն՛ի Հռոմ Հայոց եկեղեցւոյն հովուապետ
գրուեր էր, զինքն կ'անուանէ՛ի յիշատակարանս՝
Աբգարայ տզգէն, և մեր Լևոն Ե Թագաւորին մէկ
գտուած պարգևագրին վաւերականութիւնը վե-
կայեալով կու գրէ նեղքևը. « Ես Տէր Բարդուղի-
» մէոս Աբիւրայի, այս Թագաւորին աներմանէ, հաստա-
» տեմ զոր գրեալ է » : — Աւելի որոշ կու գրէ ու-
րիշ ժամանակագիր մը անցեալ դարուն, նոր ա-
նուն մ'այլ յայտնելով Աբգարու. « Պարոն Սէ-
» ֆէր Աբգարենց, ի զարմէ Թագաւորացն Հայոց,
» եկեալ ի Հռոմ զեպան Հայաստանեայց [1] »,
և այլն : Արդ ասոնք կարծեմ բաւական ցուցը-
նեն թէ Կիւրիկիոյ Ռուբինեան Թագաւորաց ցե-
ղէն լինած էր Աբգարեան տոհմը, ուսկից էր մեր
Դպիրն, և Սուլթանչահ և Տէր Բարդուղիմէոսն.
իսկ՛ի Հայկայ անուանեն զպայազատան՝ գուցէ
ամէն հայ Թագաւոր Հայկայ յաջորդ սեպուեալն
է : — Եթէ ցեղին ազնուականութիւնն աւելորդ
է, կամ մանաւանդ փառք մը չաւելցներ բարքով
աննշան մարդու մը, արդէն գործովը նշանաւոր
եղողին՝ կըրնայ նոր և աւելի փայլք տալ. ուրեմն

1 Ստեփանոս Ռօշքեան՛ի Լեհս :

10249926



թէ ասոր համար հարկ էր մեզի զայս գիտնալ, թէ մեր ազգային պատմութեանց տեղեկութեան համար: Գանք հիմայ Աբգարոս ուրիշ առաւելութեանց վրայ:

Ինքն գինքն Դոկէր կ'անուանէ, որ թէ եկեղեցական կարգի փոքր աստիճաններէր ունենալն կրնայ յայտնել, և թէ գրոց և գրչութեան աշակերտութենէ. բայց կ'երևի թէ աւելի ճարտարութեան արուեստից եաւէ էր՝ քան պարզ գրականութեան. սակայն յամենայնի ճարտար ճարպիկ մարդ մը ճանաչուած: Աբգարոս յաջողութեանց ինքնին վերակայ է Մխիթարէ կաթուղիկոս առ Պետրոս Դ գրած թղթերուն, որոց մէկին միայն լատիներէն հատած է մեր ձեռքը: Ցետ հաստատելու իր նուիրակին պատուաւորը և պատուարժան անձն ըլլալը, կ'իմացնէ նաև անոր կերպ կերպ ճարտարութեանները ալ. և նախ հնարագիտութիւնն՝ ի գրել և կարդալ ծածուկ. և խորհրդաբար գրուածներ, ինչպէս էր ինքնին կաթուղիկոսին առջի գրածն ալ և ուրիշ գրելիքն ալ, զոր բաց յԱբգարոս չէր կրնար ուրիշ մը կարդալ: Դարձեալ կ'իմացնէ՝ որ յերկուց ձեռաց ալ հաւասար յաջողէր Աբգար, ինչ որ աջովը կրնար՝ զնոյն նաև ձախովն կարող էր ընել: Ուրիշ աւելի բարձրագոյն յաջողութեան և ճարտարութեան մ'ալ վկայէ կաթուղիկոսն, որ ինծմէ ալ բարձր կամ անհասկնալի ինչ առ ժամս [1]: Այս թուղթս գրած է Մխիթէր կաթուղիկոս յամին 1563, (ապրիլ 1) յիշեցընելու և տատգելու համար որ անկէ առաջ նախընթաց տարին (1562 մայիսի 20) երկու երկար գիր գրեր և յանձներ էր առ Աբգար, գլուխ գնելով զնա իր պատգամաւորաց առ

1 Այսպէս կ'ըսե՝ ի լատիներէն թղթին. Scit superiora elementa prisca, nisi tantum ipse, qui ea etiam docebit.

Ս. Պապն. մէկ Թուղթն ընծայական կամ յանձնարարականն էր նոյն Աբգարոս համար առ Պապն, որոյ ձեռքով ընծայ կու խաբէր առ քահանայապետն՝ օրհնեալ մեռոն անուշահոտ, Թանկ խաչ մը և նշխարք սրբոց. իսկ միւս Թուղթն որ բուն այս դեսպանութեան նպատակն պիտի յայտներ, դեռ յերևան չէ ելած: Բայց անտարակոյս է որ մասամբ հաւատոյ դաւանութեան և միաբանութեան վերայօք էր. մանաւանդ որ այն տարինեերը Տրիտենդեան տիեզերական ժողովը կ'ըլլար, անհաւանական չէ որ Հայաստան ալ հեռուստ հմաձայնած ըլլայ ընդհանրական եկեղեցւոյ հետ՝ այս անգամ այլ: Թղթոյն մէկ նպատակն այլ՝ (որ առ այժմ հոս մեզի աւելի հետաքննելի է) Թուխ Թէ այն գործոյն համար էր, որոյ ձեռք զարկաւ Աբգար, և որոյ համար այսօր այլ մեզմէ կու հարցակուի:

Արդ այս Թղթերով և ընծաներով, հետն առած իր Սուրգանշահ որդին, Աղեքսանդր անուամբ քահանայ մը, և Թերևս ուրիշ անձեր այլ, ելաւ Աբգար՝ ի Սեբաստիոյ երթալ՝ ի Հռոմ. ուր շատուշ հասաւ, յամին 1564. որ Թուխ Թէ ոչ միայն Ճամբու արգելանաց համար ըլլայ, որովհետև կաթուղիկոսն լուր և պատասխան ջառնըլով՝ վերոյիշեալ գիրն այլ գրեր և հասուցեր էր առ Պապն (1563). այլ գուցէ Աբգար լսեր էր Սրբազանին մեծ և կարեւոր գործակիցը, որ ամենայն ջանքով և շուտով յառաջ տանելով կ'ուզէր ինքեան Տրիդենեան յերկարեալ ժողովը, ինչպէս որ յաջողեցաւ այլ ընելու, և մեծ գոհութեամբ հանգչելով յաթոռն սուրբ՝ կ'ըսէր. Արդ արձակեա Տէր զծառայս քո: Բայց գործ մ'այլ կայ եղեր իրեն տեսնելու՝ վեր հայրենեաց նկատմամբ. և այս էր գործն Աբգարոս:

Հասաւ առ՝ ի Հռոմ յամին 1564, և մնաց

առ Պիոս դ. բերած Թղթերն և ընծայքը. և իմաց որ կաթոլիկոսն նոր Թուղթ այլ գրեր է, յորում գարձեալ ի՛ պղաչէ զՍ. Պասին՝ որ մեծա րանօք ընդունի զԱբգար և դեսպանօրէն պատ ուէ զինա. ցուցընել ասլով անոր՝ ինչ որ սրբու Թեանց և արուեստից հրաշալի տեսնելիք կան՝ ի Հռոմ, և յետոյ պապական Թղթով և նուիրա կով յետ դարձընէ: Անշուշտ այս խնդիրքս գոհ արար կերպով կատարեցան: Պիոս հաճութիւ ընդունելով Միքայելի առաջին Թուղթը, և իբրև յաւելուած մը սեպելով իր եկեղեցւոյ պայծա ռուԹեան աչխատանաց և փափագին, աւելի եր կար և պարզ դաւանուԹիւն մ՚ուղեց յԱբգա րայ՝ Հայոց եկեղեցւոյն վարդապետուԹեան վե րայօք: Աբգար կատարեց Պապին խնդիրը՝ իր Ճանչցածը բացատրելով չափաւորապէս: Այս բանիս համար անկէ ետև եղածը Թուղթ պրպը տել մեր եկեղեցական պատմուԹեան, որ մուԹ ինացած է այս տեղ. բայց այսչափս հարկ է ըսել, որ տարւոյ մը չափ Աբգարու մնալովը՝ ի Հռոմ՝ երկու կողմանէ այլ քննուԹիւն և հաւանուԹիւն եղած պիտի ըլլայ. ոյովհետև Աբգար ընտանու Թեամբ խնդիրքներ ըրած և առած է՝ ի Պապէն, ինչպէս ինքնին նշան կու տայ իր առաջին տպած գրոց մէջ. և զի իր Գրատիպ ոչըն, ինչպէս ինքն կ՚անուանէ, հոն Թողուց որ տովքն լաւ իտալ և լատին լեզու, և որ 20 տարի վերջն այլ չիշուի հոն՝ ի Հռոմ. ուր և արդէն հոն գտուած Հայոց՝ վերակացու և խչնան գրուեցաւ՝ ի յաջորդաց Պիոսի, ընդունելով ազգին չամար սեփական հիւ րատուն մը, և եկեղեցի մը՝ Ս. Մարիամ Եգիպտա ցոյ, փոխանակ հին տան և եկեղեցւոյն (Ս. Աս պուածածին և Ս. Լուսաւորիչ) որ մեզմէ վեց գար այլ յառաջ յիշուին՝ ի Հռոմ՝ մօտ՝ ի մեծն եկե ղեցեաց՝ ՚ի Ս. Պետրոս:

Հոգևորական գործը լմընցընելով, կամ անոր հետ մեկտեղ՝ սկսաւ Աբգար իր մեծահռչակ ուսումնական գործը, այսինքն է հայերէն տպագրութիւնը: Ա յս լուսաւոր ծննդեան երկունքն կամ խորհրդածութիւնն՝ արդեօք Աբգար իր հայրենի երկրէն և կաթողիկոսին հաւանութեամբ հնոտը քերեր էր, թէ 'ի Հռոմ գալով միտքն արծարծեցաւ, մեզի յայտնի ըսած չէ. բայց ինչպէս առաջ այլ ըսի՝ կ'երևի թէ արդէն այս փափագովս եկած էր Աբգար 'ի Հռոմ, և թերևս կաթողիկոսին ալթին խօսքերն՝ ատոր այլ ակնարկեն: Իսկ այս ամենայնի է որ ծանօթ հայ տպագրութեան երկունքն եղաւ 'ի Հռոմ, ծնունդն 'ի Վենետիկ: Հայն իր լուսաւոր կենաց նախնական և գլխաւոր օժանդակները՝ միշտ մեծ և հրաշալի կերպով մ'ընդունած կարծէ և պարծի. այսպէս՝ սուրբ հաւատքը, տումարը և գիրը. այսպէս այլ իր պատգրութենէն նախախնամական և արբատական կերպարանք մը կ'առնու Աբգարու ձեռքով կամ ձարտարութեամբ. որ յիրաւի արժանի է մտածդրութեան անունց՝ որ պատմութեան, և մանաւանդ մտաւոր պատմութեան մէջ՝ աստուածայն են այլ կու տեանէն նախացուցակ:

Կարդայ մեր առաջին ծանօթ տպագրեալ գրոց (Սաղմոսին) առաջին յիշատակը. «Ի Թվականիս Հայոց ՌԺԴ (1565) ամին ես Թոխաթցի Աբգար » Դպիրս, խնդրեցի զայս նոր գիրս 'ի Հռոմ 'ի Պետ» րոս (Պիոս) փապուն. և երես հրամանն չինելու. » բարեխաւսութեամբ այս կարտինալացս և այս » եպիսկոպոսիս. և իմ գրայմիտ Սուլտանչա որ» դուս»: Յիշած կարտինալներն են երեք, և եպիսկոպոս մը, որոց կերպարանքն և անունն ձևաց ցուցեր է փորագրեալ փոքր պատկերի մը մէջ գլխին մէկ կէս երեսին վրայ, որոյ տակն այլ տպագրած է յիշատակարանը. պատկերին մէջ տե-

ը բազմեցընելով զՊիոս Դ եռակարգեան խոսրո-
վը. ձախ ձեռքը պետրոսեան բանալիքն, աջովն
այլ օրհնելով նորընծայ հայ գրերը՝ զոր Աբգար
՚ի ծունկ իջած ներկայացընէ Պապին. և որպէն
Սուրբն օրհնութիւն և հրաման մացընելու և ծա-
ւալելու ՚ի Հայս՝ այս մատաքացութեան կարևոր
հնարքը: Այն կէս թաթախած փոքրիկ, խոշորա-
գիծ պատկերին մէջ այնչափ քան և իմաստ գո-
վանդակեն՝ յիրաւի ցուցընէ Աբգարոս գովեալ
հնարագիտութիւնը և մեծցընող ու փառաւորող
ձեռքն ու միտքն.—ինչո՞ւ չըսենք թէ նաև սիրան
ու հոգին:

Պատկերին ցուցած եօթն անձանց մէջ՝ յետ
Աբգարոսի և որդւոյն՝ մեզի և հատարտկաց հա-
մար նշանաւոր անձն՝ ՚ի հարկէ հոն բազմեալն և
գլխաւորն եկեղեցւոյ՝ Պիտան է, որ իր կենաց և
շատոնց բաղձալի ու մեծ ու դժար գործը դեռ
նոր վճարած (Տրիդ. ժողովը), և իր անմահու-
թեան յիշատակին նախափայլ ձառագայթներո-
վը՝ մնացած քանի մ՚ամանակեան կենաց նշոյլը ծած-
կելու միջոցին մէջ՝ այս մեր հայերէն տպագրու-
թեան սկզբնաւորութիւնը օրհնելով կամ արքա-
զանելով՝ յիրաւի կ՚առնու և կու տայ վսեմական
կերպ և իմաստ մը: — Ոչ պակաս վեհ և աւելի
սիրելի է հատարտկաց՝ մեկ ուրիշ անձ մ՚այլ՝ կար-
ծեցեալ ականջաւոր անմիջապէս Պապին քովէն կե-
ցած. որ և նոյն իսկ արքազանին քեռորդին էր,
դեռ ան առեն 26 տարուան, բայց արդէն արքե-
պիսկոպոս Մելանու, և ծերանաւոր պալատան
Հռոմայ, ազնուականն ծննդեամբ և ազնուագոյնն
մտհուանքս Ս. Կարոլոս Պորրոմէոս. որ դեռ արր-
բութեանը պէս՝ բազմակերպ մարդասէր բարե-
բարութեամբքն՝ ծանօթ և հռչակեալ է ընդ ա-
մենայն Իտալիա և բոլոր բարեպաշտ Եւրոպէ:

Ա յսպիսի անձի մը՝ մեր հայերէն տպագրութեան երբև պաշտպան կամ կնքահայր գտուելն, կու չիշեցնէ՝ ինչպէս ինծի՝ անշուշտ քեզ այլ, Հայկակ, Խօսնակին եվեղեցւոյ կամ անոր նման անձի մը չիշատակը՝ մեր հայերէն գրոց կամ Թարգմանութեան գիւտին նկատմամբ։ — Ի մեծ գրատան Մխլանու կայ օրինակ մը մեր տպագրոց անպրանկին՝ Աբգարու սաղմոսին, որ և մի միայն հոն գտուի (ըստ իմ գիտութեանս)։ և այն օրինակին է՝ զոր անշուշտ մեր Աբգարն ընծայեր է առ տուրք Ծիրանաւորն, և նա այլ Թողեր է գրատանը։ — եւ ապացոյց ցանկալի չիշատակ և գըրքոյկ, որ կրնայ կենդանի արձան մը սեպուիլ այս բանծներուս աբգարեան նորընծայ տպագրութեան վայօք, և պաշտելի նշխար մը այն գործոյն, զոր ոչ միայն Աբգար՝ այլ և նախախնամութիւնն, (հոս պէտք է զայս խոստովանիլ), արդարև կերպով մը սրբազանել ուզեր են։

Աբգար այսչափով գոհ չըլլալով՝ ի՛ուզէ աւելի փառաւորութիւն մ՚այլ ընծայել իր հայկական տպագրութեան ծագման. ոչ միայն եվեղեցական այլ և քաղաքական հովանաւորութիւն մը կու ձգէ վրան. — ժամանակին նշանաւոր և յարևելս ծանօթագոյն եղած տէրութեան մը պաշտպանութեան տակ, Վենետկոյ հասարակապետութեան։ Վերոյիշեալ պատկերին դիմաց՝ նոյն չափով՝ կու ներկայացընէ ուրիշ մը. հանդիսական դահլիճ մը, Վենետկոյ պաշտպան և. նշան Ս. Մարկոսեան ոսկեթեւ առիւծն՝ վերակարդեալ ՚ի վերայ արքունի դահոյն, ուր քազմի այն առեներան դուքսն Հերոնիմոս՝ իր հանդիսի հպարտատիպն. երկու կողմն իրեք իրեք առեներակալ նաւին իրենց լայն լծոնկներով պատած, որպէս Թէ կարևոր հանդիսը մ՚ընեն նաւախառնութեամբ մ՚արձակելու և իրենց առիւծագլուխ դրօշները Թռցընելու Յունիսականի կամ

Աղբիսականի կղզւոյ մը վրայ... բայց մեր Ճարտարապետ Աբգար՝ անունց մոռադրութիւնը կու գայլճնէ իր նորաձոյլ հայկական տառից վրայ։— Կու ներկայանայ գահուն աստիճանաց վրայ, ինքն այլ իր ըսյն վերարկուաւն, զնոյն խնդիրն ընելովինչ որ ըրաւ Պապին։ Ծերուն և մօրուա-նի աւետնակալաց և դքսին ծովային աչքերն՝ սուր սուր կու սեւեռին Աբգարէն աւելի (որոյ աղջն և ձևն շատոնց իրենց ծանօթ էն), անոր ցուցած և անծանօթ գծած ձևերուն վրայ, և թերևս կարծեն թէ անունք նոր մոգական բանալիք մ՝այլ ըլ-լան իրենց՝ արևելքի Ճամբաներն աւելի բանալու։ Ա յս պատկերին ներքև կու գրէ Աբգար. « Եւ ե-» կեալ ի գեղեցիկ նաւայհանկի(ս)ա մայրայքա-» ղաքն, որ կոչի Վանատիկ, ’ի թագաւորութեանն » Երեքեմն Թուձին։ Եւ շինեցաք զայս նոր գիրս, » և զաս փոքր Մեկնիչս սաղմոսաց»։ Հոս այլ տարբերն Թուականն նշանակելով դքսին պա-տուհանդանին վրայ, այսպէս M. D. L. X. V. որ է 1565։ — Ասով յայտնի կ՝ընէ Աբգար, որ ’ի Հռոմ երկնեալ հայկական տառերը՝ ձուլեց ծնաւ ’ի Վենետիկ. և մեկէն ձեռք զարկաւ անոնց նախ-ընծայ գործածութեամբ՝ բազմացընելու այն գիրքը, որ և կ՝ըսուի թէ նախ քան զայլ տարբ Գիրս հայերէն թարգմանուած է, Սաղմոսը. զոր թերևս վերնագրացը համար՝ Մեկնիչ սաղմոսաց կ՝ա-նուանէ։

Ցետ այս անդրանիկ տպագրութեան ուրիշ գրոց ծնունդք այլ եղան ’ի Վենետիկ.— չեմ գի-տեր. հաւանական է որ Աբգար ուրախութեամբ լցուած իր փորձին և յաջողութեանը վրայ, իբր յաղթանակաւ և աւարաւ նաւեց փութացաւ ’ի մեծ քաղաքն (Կ. Պօլիս), որ այն առենէն մինչև հինայ ազգերնուս մեծագոյն բարգաւաճանաց ժո-ղովարանն և կեդրոնն եղած է. ուր և բոլոր Օս-

10249926



մանեան տէրութեան մէջ ազգը ներկայացընող կու ձանաչուէր՝ հիմկու պէս՝ Պատրիարքն Հայոց։ Ատոր այլ ներկայացուց Աբգար, յառաջ քան թէ կաթուղիկոսին, իր գիւտը և անոր երախայրիքը. և շուտով տպագրատուն մը հաստատելով, և անշուշտ առաջին տպագրատուն Կոստանդնու և Օսմանեան տիեզերական մայրաքաղաքին մէջ՝ տպագրեց յամի 1567, գրականութեան առաջին հարկաւոր գիրքը, Փէտրանոսկին. որոյ համար կ'ըսէ մեր յեսին դարուց ժամանակագիրն (Մաղաքիա) այլ մեծաբանութեամբ և այլաբանութեամբ. « Ի հայրապետութեանն Հայոց » տէր Մինքայէլի Ի՛Ա ամի կաթուղիկոսութեանն, » Ի՛ մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, յերկրորդ » ամի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան » Սէլիմի, և Ի՛ չորրորդ ամի պատրիարգութեան » տէր Յակոբ բաբունապետի Կոստանդնուպօլ » սոյ, առ ոտս Յովհաննէս եպիսկոպոսին, ընդ հո- » վանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց, » եղև սպառմէայ, այսինքն պառաւ գիր. և տպեցաւ » ֆոթը փերաիանոսկին տղայոց, ձեռամբ անարժան » կնքապիր դպրի և մերս Յոհաննու »։ Հոս քնիկ անունը լսելով կ'ուզենք դպիր կ'անուանէ զԱբգար, գուցէ այսպէս կոչելով մեր հիմայ պապազը ըսածը. իսկ Յոհաննու անուամբ, որ Մովսէս մարգարէին աներոջ անունն է, կ'ուզէ նշանակել, թէ անոր պէս այլ Աբգար ձամբայ ելլցուց իր ազգին գլխաւորին՝ զազգը դիւրաւ կառավարելու համ դատելու։—Բայց հետևեալ տարին՝ աւելի պարզ և յայտնի կու խօսի տարեգիրն. « Ռ·ԺԷ (1568-9) » Ի՛ Կոստանդնուպօլիս նոր տառաքայ գիր սահ- » մանեցին, Ի՛ հայրապետութեան տեառն Մի- » քայէլին Էջմիածնի, և Ի՛ պատրիարգութեան » Կոստանդնուպօլսոյ տէր Յակոբին, ընդ հովա- » նեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն. ձեռամբ

» Խորվիրապցի Աստուածատուր Աբեղային, արհեստագործ
» ծուխեամբ Աբգար պոլսին, և իւր Աստուածնունա
» Սուլթանշա սարկաւագին, որոյ գրովքն տպեալ
» Տօնացոյցս յառաջ քերին »: Այս տօնացոյցս ես
չեմ տեսեր, բայց ձեռքս հասեր են անոր ընդե-
րակից և ժամանակակից ուրիշ եկեղեցական գըր-
քեր, մասամբք, այսինքն ժամագիրք, Պսալտեր-
նոցդ, Մաշտոց. որոց սկիզբն և վերջն պակաս,
բայց գիշերային ժամու վերնագրէն յառաջ ե-
րեսի մը սկիզբը յայտնապէս կայ. (տպա) «գրե-
» ցաւ Աղաւթ մատուցս Թվին. ՌԺԷ տպրիլ. ԻԷ».
որ է 1569ին տպրիլը:

Սաղմոս, Տօնացոյց, Ժամագիրք, Պատարա-
գամատոյց, Մաշտոց, կու պահանջեն զԱստուա-
ծանն այլ, որոյ անդրանիկ աբգարեան տպագրու-
Թիւն դեռ յայտնուած կամ յիշուած չէ. բայց
գրեթէ անտարակոյս կ'երևի, լեցընելու եկեղե-
ցական գրոց առաջին դասը: ՔերականուԹիւնն
այլ հինն և սկիզբն կ'ըլլայ մեր նախնեաց խրա-
տական և գիտնական գրոց, միանգամայն և դըպ-
րոցական գրոց. որոց կարգը կամ ծնունդը փնտը-
ռել, Թէ դժար և Թէ աւելորդ կու սեպեմ հոս:
Բաւական ըլլայ քեզ, Հայկակ, ճանչնալն զԱբ-
գար՝ ինչպէս հեղինակ հայերէն տպագրուԹեան,
նոյնպէս այլ սկզբնաւոր հրատարակման Թէ հո-
գևոր Թէ մտաւոր գրոց մերոց: Այսչափս այլ՝
որ Թերևս Աբգարոս վաստակոց մէկ փոքր մասն
է, շատ ըլլայ մեզի իր մեծ մտածուԹիւնը, աշխա-
տանքը, ջանքը, փորձը և յաջողուԹիւնը յաղԹող
և փառաւոր ցուցընելու: Եւ եԹէ մեր նախ յի-
շեալ մԹին ժամանակաց լռուԹիւնն կու ծածկէ
մեզմէ իր վաստակոց ուրիշ մեծ կամ փոքր մա-
սերն այլ, կամ իր ծովայածուկ և նոր կղզին գտնող
նաւորդի մը պէս յաղԹականէրպ դարձն յետ բաղ-
մաւեայ պանդխտուԹեանն՝ առ կաԹուղիկոսն Մի

քայէլ և՝ ի հայրենիս նուր, կամ իր վերջին կե-
նաց դիպուածքը, (որոյ առջինէն՝ կամ քոլորէն
այլ հազիւ վեց կամ եօթն տարուց յիշատակ
միայն աւանդեր է, (գոնէ իմ հիմայ գտածս).—
այսչափս, կ'ըսեմ, առ այժմ բաւական սեպեմք
Հանդիսքերու զԱբգար տպէր՝ մեր ազգային բարե-
րաց և մեծագործաց և մեծ շնորհահալէաց ար-
ժանաւորաց՝ մէկ մը:

Թողունք հիմայ մեր բազմացեալ տպագրողաց
և տպագրատեառց մասց և սրտին զգացման՝
հաչակելու զյիշատակ նրբենց առաջնորդին, ի
Զորդորդ տարամտի տպագրութեան Հայոց. մեր կոլմէն
փափագելով որ այսպիսի ջանքով, հանդիսաւո-
րութեամբ և արքայնութեամբ մը սկսեալ կամ
շնորհեալ արուեստն՝ առ ազգս մեր, հիմայ յա-
ճախութեամբ գրոց և տարից և մամլոց՝ էանար-
գուն խորհ ծննդեամբք. այսինքն հրատարակու-
թեամբ այնպիսի գրուածոց՝ որ կրնան քաջքաջել
և վճռացընել աչխարհքիս հնագոյն ազգի մը պատ-
կառելի նահապետական պատուոյ քօղը, որ և
ազգիս պանծալի և աղնուագոյն մնացեալ շնոր-
հաց մէկն է:

10249926

10249926

# Ց Ա Ն Կ


Ա. Նախաբան առ Հայկակ . . . . . 1
Բ. Բնախոսութիւն Հայ. աշխարհի . . 21
Գ. Հայկայ ջոջեան . . . . . 76
Դ. Յանուարի 6 'ի Հայ. . . . . 105
Ե. Զապել . . . . . 120
Զ. Գերեդարձ Գ Լեւոնի . . . . . 162
Է. Սկիզբն տարւոյ և մարդկութեան 'ի
Հայս. . . . . 183
Ը. Բագրեւանդայ կռիւն . . . . . 197
Թ. Ս. Թէոդորոս Սալխունի . . . . 216
Ժ. Կարմիրն վարդան . . . . . 239
ԺԱ. Սահեանոս Սիւնեցի և Սահակդուխտ 270
ԺԲ. Տօնք նաւասարդի . . . . . 293
ԺԳ. Ս. Սահակ Պարթեւ . . . . . 311
ԺԴ. Հոգեփայլ սոյլք հայոց . . . . 353
ԺԵ. Շուշան–Վարդենի , . . . . . 373
ԺԶ. Աչառ ա. և Հայաստան հազար տարի
առաջ . . . . . 403
ԺԷ. Աբգար գալիր. հայ տպագրութիւն . 518

10249926



10249926

10249926

10249926

Schv



10249920